

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ.Մ.

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
2021

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՀՀ ԿԳՄՍ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ
УНИВЕРСИТЕТ ИМ. Х.АБОВЯНА

НАУЧНАЯ ЛАБОРАТОРИЯ ЛИНГВИСТИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

ХАЧАТРЯН Л.М.

УЧЕБНЫЙ СЛОВАРЬ ЛИНГВИСТИЧЕСКИХ ТЕРМИНОВ

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО "ТИТУТЮН" НАН РА
2021

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ.Մ.

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2021

ՀՏԴ 81'374
ԳՄԴ 81-4
Խ 282

Տպագրվում է Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակության է երաշխավորել Խ.Աբովյանի անվ.
ՀՊՄՀ Գիտահետազոտական կենտրոնը

Գիտական խմբագիր՝
բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Դ.Ս. Գյուրջինյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել՝
բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսորներ
Վաղարշակ Մադոյան և Սերգո Հայրապետյան

Խաչատրյան Լ.Մ.

Խ 282 Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան/ – Եր.: ՀՀ
ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021, 446 էջ:

Բառարանում տրվում է լեզվաբանական տերմինների բացատրությունը՝
թեմատիկ (փնջային) եղանակով. յուրաքանչյուր տերմին մեկնաբանվում է բովան-
դակային համակողմանի ընդգրկումով, որ բառարանին հաղորդում է ուսումնական
ձեռնարկի արժեք: Բառարանում լեզվաբանական տերմինները տրվում են ըստ
բնագավառների՝ լեզու, հնչյունական համակարգ, բառագիտություն, բառարանա-
գիտություն, քերականական կառուցվածք, քերականական իմաստ և քերակա-
նական կարգ, լեզվի տեսություն, լեզվաբանական մեթոդներ, լեզվաբանական տի-
պաբանություն, լեզուների ցեղակցություն և ծագումնաբանական դասակարգում:

Վերջում տրվում է լեզվաբանական տերմինների ցանկը:

Բառարանը կարող է օգտակար լինել հումանիտար ֆակուլտետների ուսա-
նողներին, բուհական համակարգի մասնագետներին, լեզվաբաններին և, առհա-
սարակ, բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են լեզվի և լեզվաբանության հարցերով:

ՀՏԴ 81'374
ԳՄԴ 81-4

ISBN 978-5-8080-1461-9
© Խաչատրյան Լ. Մ., 2021

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Ընդհանուր լեզվաբանության տերմինները կազմում են համանուն գիտակարգի տեսության առանցքը և կրում են ընդհանրական բնույթ. դրանք չեն վերաբերում որևէ առանձին լեզվի, այլ բնորոշ են բոլոր լեզուներին:

Լեզվաբանական տերմինները ներկայացնելու տարբեր սկզբունքներ կան. մենք նախընտրել ենք դրանք մեկնաբանել ուսումնական բառարանի սկզբունքով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն ուղղված է ուսանողությանը, և անհրաժեշտ է տերմինները մատուցել դաս-դասախոսության կառուցվածքով, որպեսզի ուսանողը համակողմանի պատկերացում կազմի լեզվաբանական տվյալ տերմինի թեմատիկ դաշտի վերաբերյալ:

Լեզվաբանական տերմինները համակողմանի բացատրության են արժանացել ինչպես ժուսական և եվրոպական, այնպես էլ հայկական բառարանագրության ավանդույթներում: Լեզվաբանական տերմինների գիտական բացատրությունը պայմանավորված է համապատասխան գիտական ուսումնասիրությունների և ձեռնարկների առկայությամբ, որոնք վերաբերում են, մասնավորապես, բառագիտությանը:

Լեզվաբանական տերմինների բառագիտական մեկնություններ հայ իրականության մեջ կատարել են դեռևս 5-րդ դարում Հունաբան դպրոցի ներկայացուցիչները [երբ թարգմանում և մեկնում էին Դ.Թրակացու «Քերականական արվեստ» աշխատանքը (Դավիթ, Մովսես Քերդոդ, Անանուն և հետագայի մեկնիչներ)], Մխիթարյան Միաբանության հայրերը (Մխ. Սեբաստացի, Ա.Բագրատունի, Ա.Այտընյան, Վրթ. Չալըխյան, Մ.Չամչյան և ուրիշներ), հետագայում՝ Մ.Աբեղյանը, Ա.Ղարիբյանը, Էդ.Աղայանը և ուրիշներ:

Հայ իրականության մեջ լեզվաբանական տերմինների կարգավորման և համակարգայնացման գործով զբաղվել են՝ Հ.Պետրոսյանը, Ս.Գալստյանը, Թ.Ղարազյուլյանը¹, Ա.Նազարյանը², Հ., Պետրոսյանը³, Ֆ.Խլղաթյանը⁴, Լ.Մ. Խաչատրյանը և Մ.Վ.Միրումյանը⁵ և ուրիշներ:

Ռուսական իրականության մեջ այս հարցում զգալի աշխատանք է կատարվել. լեզվաբանական տերմինների մեկնաբանություններ են կատարել Ֆ.Պ. Պոլիկարպովը, Վ.Կ. Տրետիակովը, Ա.Ք. Վոստոկովը, Ի.Ի. Սրեգ-

¹ Հ.Պետրոսյան, Ս.Գալստյան, Թ.Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975:

² Ա.Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Ե., 1993:

³ Հ. Հ., Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

⁴ Ֆ.Խլղաթյան, Ոճաբանական բառարան, Ե., 2000:

⁵ Լ.Մ.Խաչատրյան, Մ.Վ.Միրումյան, Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան, Ե., 2020:

ննակին, Ֆ.Ի. Բուսլաենը, Ա.Ի. Սոբոլևսկին, Ֆ.Ֆ. Ֆորտունատովը, Ա.Ա. Շախմատովը, Վ.Լ. Շչերբան, Ն.Ս. Տրուբեցկոյը, Գ.Օ. Վինոկուրը, Ե.Ֆ. Կարսկին և այլ գիտնականներ⁶:

Լեզվաբանական տերմինաբանության մշակման գործում զգալի ավանդ ունեն ռուս և եվրոպացի լեզվաբանները՝ *Марузо Ж.*, Словарь лингвистических терминов /перевод с франц. Н. Д. Андреева, под ред. А. А. Реформатского. – М., 1960, *Ахманова О. С.*, Словарь лингвистических терминов. – М., 1969, *Розенталь Д. Э.*, *Теленкова М. А.*, Справочник лингвистических терминов. – М., 1972, Энциклопедический словарь юного филолога / состав. М. В. Панов. – М., 1984, *Розенталь Д. Э.*, Словарь-справочник лингвистических терминов /Д.Э. Розенталь, М. А. Теленкова. – М., 2001, Большой энциклопедический словарь /гл. ред. А. М. Прохоров.- М., СПб., 2001, Стилистический энциклопедический словарь русского языка /под ред. М. Н. Кожинной. – М., 2003, *Стариченок В. Д.*, Большой лингвистический словарь. – Ростов-на-Дону, 2008, *Матвеева Т. В.*, Полный словарь лингвистических терминов. – Ростов-на-Дону, 2010, *Богатырева И. И.*, *Волошина О. А.*, Словарь школьных лингвистических терминов. – М., 2012.

Հստ այդմ՝ ներկա բառարանը կազմելուց առաջ ձեռքի տակ ունեցել ենք բառարանագրական զգալի ժառանգություն, որ մեծապես օգնել է համակարգված ձևով ներկայացնելու ընդհանուր լեզվաբանական տերմինահամակարգը: Պետք է խոստովանել, սակայն, որ մեր կազմած բառարանը զգալիորեն տարբերվում է նախորդներից՝ իր առաջադիր խնդիրներով ու նպատակով: Մենք ծրագրել ենք կազմել ընդհանուր լեզվաբանական տերմինների *ուսումնական բառարան*, որպեսզի ուսանողների սեղանին դրվի ընդհանուր լեզվաբանության յուրահատուկ ձեռնարկ, որտեղ տերմինները տրվում են ըստ լեզվաբանության ուսումնասիրության բաժինների և ենթաբաժինների:

Ի՞նչ պահանջներ են ներկայացվում լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանին:

- Բառարանի տերմիններն ընտրված են ըստ լեզվի կառուցվածքային մակարդակների և ըստ նրանց տերմինային բնույթի: Յուրաքանչյուր մակարդակի տերմինները ներկայացնում են որոշակի միկրոհամակարգեր, որոնք իրենց հերթին ամբողջացնում են տվյալ բնագավառի (լեզվական մակարդակի) տերմինահամակարգը:

- Լեզվաբանական տերմինների բառարանին ներկայացվող առաջնահերթ պահանջներից են մասնագիտական տերմինների ընտրությունն ու առանձնացումը. այլ կերպ ասած՝ առաջնահերթություն է համարվում լեզվաբանական տերմինների առանձնացումը կամ *տերմինարանի ստեղծումը*:

⁶ См. у Лингвистический энциклопедический словарь (гл. ред. В. Н. Ярцева. – М., 1990) աշխատության համապատասխան բառահոդվածները:

• Բառարանը կազմված է *թեմատիկ-իմաստային* կամ *փնջային սկզբունքով*, բառահոդվածները տրվում են ոչ թե այբբենական կարգով, այլ հասկացական կարգերով, որ պայմանավորված է բառախմբերի իմաստային (բովանդակային) ընդհանրության և մերձավորության գործոններով: Նկատենք՝ բառահոդվածների մատուցման փնջային սկզբունքը գործադրում են հասկացական (կամ թեզաուրուս) բառարաններ կազմելիս:

• Տերմինի իմաստի բացատրությունը բառարանի առաջնահերթ խնդիրն է, որ նախատեսում է բացահայտել տերմինների հասկացական նշանակությունները և դրանք մեկնաբանել առանձին-առանձին: Բառարանում գերազանցապես կիրառվել է տերմինների բացատրության *իմաստաբանական* կամ *նկարագրական սահմանումը*. այս եղանակը վեր է հանում տերմինային հասկացության բովանդակությունն ու ծավալը, ինչպես նաև ցույց է տալիս տերմինի և լեզվական հասկացության կապը:

• Թեև բառարանն ընդգրկում է ընդհանուր լեզվաբանական տերմինները, և լեզվական իրողությունների համար օրինակներ են բերվում տարբեր լեզուներից, այնուամենայնիվ լեզվական տարբեր իրականությունները մեկնաբանելիս նախապատվությունը տրվում է հայերենին, քանի որ բառարանը նախատեսված է հայ ուսանողների համար:

Ի՛նչ սկզբունքներով է կազմվել լեզվաբանական տերմինների սույն բառարանը:

Նախ՝ բուհական ծրագրերին համապատասխան որոշարկվել են լեզվաբանության բաժինները (թեև այս հարցում կան տարակարծություններ): Մենք կողմնորոշվել ենք այն հանգամանքով, թե ո՞ր բաժիններն են նպաստում լեզվաբանական գիտության վերաբերյալ համակողմանի գիտելիքներ ձեռք բերելուն և միաժամանակ ինչքանո՞վ են դրանք օգնում հայագիտական առարկաները յուրացնելուն:

Ըստ այդ սկզբունքի՝ մենք առանձնացրել ենք լեզվաբանական գիտության հետևյալ բաժինները՝

1. *Լեզու* - Մեկնաբանվում են այն տերմինները, որոնք վերաբերում են լեզվի էության, ծագման և բազմազանության տեսություններին, ինչպես՝ դիցաբանական և աստվածաշնչյան, աշխատանքային ճիշերի, բնաձայնական, հասարակական դաշինքի, ձայնարկությունների, բնագիտական, հասարակական գործոնի և այլն: Մեկնաբանվում են լեզվի և մտածողության հարաբերությանը, լեզվի գործառույթներին, լեզվի տարբերակներին, լեզվական ոճերին առնչվող տերմինները և այլն: Բացատրվում են լեզվի հետ առնչվող այնպիսի իրողություններ, ինչպիսին են՝ լեզվամտածողություն, աշխարհի լեզվական քարտեզ, լեզվի փիլիսոփայություն, լեզվաքաղաքականություն, լեզվակրթություն, լեզվական ճաշակ, լեզվական անհատ, լեզվագործածություն, լեզվախառնություն, լեզվավիճակ, լեզվական միջավայր և այլն:

Այնուհետև տրվում են՝

Լեզվի տարբերակները՝ իրենց տերմինային շրջապատով՝ տեղական (տարածքային) տարբերակներ. բարբառ, խոսվածք, հասարակական տարբերակներ. ժարգոն, արգո, մասնագիտական լեզու, սլենգ, խոսակցական և գրական տարբերակներ և այլն:

Լեզվի տիպերն ըստ գործածության - կենդանի և մեռած լեզուներ, ծիսական լեզուներ, ազգամիջյան լեզուներ, միջազգային լեզուներ, արհեստական լեզուներ, բնական լեզու, նախալեզու, տոհմային լեզու, ցեղային լեզու, էթնիկական լեզու, միջցեղային լեզու, միջէթնիկական լեզու, փոխատու լեզու, փոխառու լեզու, միջնորդ լեզու, պետական լեզու, աշխատանքային լեզու, տոտալիտար լեզու, շարժումների լեզու, միայնակ լեզուներ, վանկային լեզուներ և այլն:

2. Հնչյունական համակարգ - Մեկնաբանվում են հնչույթ-հնչյունաբանական մակարդակի միավորներն ու նրանց տերմինները՝ հնչյուն և հնչույթ, հնչյունական օրենք, հնչյունական լծորդություն, հնչյունատարբերակիչ նշաններ, հնչյունական շղթա, հնչյունի դիրք, հնչյունների ակուստիկա, հնչյունի բարձրություն, հնչյունի ուժգնություն, հնչյունի տևականություն, հնչյունի հնչեղություն, հնչյունի լարվածություն, հնչյունի երանգ, հնչյունների գործառնությունները, հնչույթային հակադրություն, հնչարտաբերություն և այլն: Այնուհետև տրվում են լեզվի հնչյունների դասակարգման տերմինները՝ բաղաձայնների դասակարգումն ըստ ձայնի և աղմուկի, ըստ արտաբերման եղանակի, ըստ արտաբերման տեղի. վանկ, շեշտ, հնչյունափոխություն՝ *դիրքային և շեշտափոխական* (առնմանում, տարնմանում, ներդաշնակում, ամփոփում, համաբանություն, դրափոխություն, ձայնդարձ և հերթագայություն, աճական և այլն), *ընդհանուր - պատմական* տեսակներով:

Գրաբարության տերմիններ՝ գիր, այբուբեն՝ մեսրոպյան այբուբենը, հայկական գրատեսակները՝ գրչագիր, երկաթագիր, բոլորագիծ, բոլորագիր, նոտրգիր, շղագիր, զարդագիր, փակագիր: Մեկնաբանվում են գրադարձությունը, տառադարձությունը և այլն:

3. Բառագիտություն - Մեկնաբանվում են բառագիտության ոլորտի տերմինները՝ բառ, բառիմաստ՝ միջբառությային և ներբառությային առումներով, իմաստափոխություն, բառիմաստի ընդլայնում, բառիմաստի նեղացում, բառիմաստի անցում (շրջում), իմաստների փոխհաջորդում, սրբանացում, ապասրբանացում և այլն:

Այս բաժնում մեկնաբանվում են լեզվի բառային կազմի տերմինները, նրա շերտերը՝ համահայերենյան, գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային, արևմտահայերեն, ժողովրդական և այլն:

Փոխառյալ բառաշերտը՝ անմիջական և միջնորդավորված փոխառություններ տեսակներով: Հնաբանությունները՝ (հնաբառեր և պատմաբառեր),

նորաբանությունները՝ բառային, իմաստային, ընդհանրացող և անհատական տեսակներով և այլն:

Մեկնաբանվում են տերմինի հասկացական նշանակությունը, դարձվածքները, պատճենումները՝ բառակազմական, կիսապատճենումներ և իմաստային պատճենումներ տեսակներով: Այս բաժնում տրվում են նաև բառակազմության տերմինները՝ ձևույթ, արմատ, ածանց, բառակազմական փունջ, բառակազմական բուն, բառակազմական քայլ, բառակազմական նշանակություն, բառակազմական կաղապարներ՝ բարդություն, ածանցում և այլն: Մեկնաբանվում են ձևաբանական կաղապարները՝ գոյականի հոլովական և բայի խոնարհման հարացույցների առումներով:

4. Բառարանագիտություն - Մեկնաբանվում են բառարանագիտության և բառարանագրության ոլորտի տերմիններն իրենց տերմինային շրջապատով: Տրվում են բառարանների տեսակները՝ *հանրագիտական և լեզվաբանական բառարաններ*: Բացատրվում են բանասիրական բառարանների տեսակները՝ ընդհանուր բառարաններ, մասնագիտական, ճյուղային, բարբառային, ստուգաբանական, բացատրական, թարգմանական (երկլեզվյան, բազմալեզվյան բառարան), համեմատական- գուգադրական և այլն:

Բառարանների տեսակները ներկայացնելիս յուրաքանչյուր տեսակի համար բերվում են գլխաբառերի բառարանային մշակումների օրինակներ, որոնք որոշակի գաղափար են տալիս տվյալ տեսակի բառարանի մասին:

5. Լեզվի քերականական կառուցվածքը - Տրվում են ձևաբանության և շարահյուսության մակարդակի տերմինները՝ *բառածն* (համադրական և վերլուծական), *հարացույց* (ձևաբանական, լրիվ, ոչ լրիվ, հավելավոր, հնչույթաբանական, բառակազմական, բառիմաստային և շարահյուսական):

Մեկնաբանվում են նյութական բովանդակություն ունեցող և սպասարկու խոսքի մասերի տերմինները, ձևաբանական կաղապարները, ինչպես նաև շարահյուսական մակարդակի տերմինները՝ բառակապակցությունը, նախադասությունը (պարզ և բարդ, միակազմ և երկկազմ տեսակներով), ստորադասական կապակցության տեսակները (համաձայնություն, խնդրառություն, առդրություն և ներառում): Տրվում են շարահյուսական կառույցների տերմինները՝ դերբայական դարձված, շարույթ, շարակարգ, պարբերություն, պարբերույթ, մեկնաբանվում են փոխակերպման ոլորտի տերմինները և այլն:

Այս բաժնում մեկնաբանվում են խոսքիմասային տեղաշարժերի տերմինները՝ միջխոսքիմասային և ներխոսքիմասային առումներով, խոսքիմասային փոխանցման աստիճանները և խոսքիմասային տարաբաժանությունը՝ բառերի երկարժեք և եռարժեք համատեղումներով: Տրվում են նաև փոխակերպման ոլորտի տերմինները:

6. Քերականական իմաստ և քերականական կարգ - Մեկնաբանվում են հետևյալ տերմինները՝ քերականական իմաստ և ձև, քերականական

իմաստների արտահայտման միջոցները (մասնիկավորում, կրկնություն, ներքին թեքում, տարահիմքություն, շարադասություն) և այլն, ինչպես նաև լեզվի ձևաբանական (բառափոխական և դասակարգողական) և շարահյուսական կարգերը, անվանական քերականական սեռը և այլն: Տրվում են թվի, հոլովի, առկայացման, եղանակի, ժամանակի, դեմքի, սեռի, կերպի քերականական կարգերը՝ իրենց տերմինային շրջապատով:

7. Լեզվաբանություն - Այս բաժնում մեկնաբանվում են լեզվաբանության նոր և նորագույն ուղղությունների տերմինները՝ լեզվաաշխարհագրություն, լեզվաքարտեզագրություն, լեզվաապագայագիտություն, լեզվաազգագրություն, լեզվավիճակագրություն, էկոլեզվաբանություն, լեզվաերկրագիտություն, հոգելեզվաբանություն, մաթեմատիկական լեզվաբանություն, լեզվամշակութաբանություն, հաղորդակցական լեզվաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, համակարգչային լեզվաբանություն, քաղաքական լեզվաբանություն, հանրալեզվաբանություն, կիրառական լեզվաբանություն, հարալեզվաբանություն, տեքստի լեզվաբանություն, կորպուսային լեզվաբանություն և այլն: Լեզվի տեսության տերմիններն իրենց տերմինային շրջապատով՝ նշանագիտություն, լեզվական համակարգ և նորմ, լեզու և հասարակություն, լեզու և պատմություն, լեզվական կտրվածքներ (համաժամանակյա և տարժամանակյա), լեզվի զարգացման օրենքներ (ներքին և արտաքին), լեզվի զարգացման պատճառներ և այլն:

8. Լեզվաբանական մեթոդներ - Այս բաժնում մեկնաբանվում են լեզվաբանական հետազոտության մեթոդների տերմինները՝ արտաքին և ներքին մեկնաբանության եղանակներով. համեմատական-պատմական մեթոդ (իմաստակիր միավորների ծագումնաբանական նույնության սահմանում, հնագույն ձևերի վերականգնում, բացարձակ և հարաբերական ժամանակագրություն, ստուգաբանական վերլուծություն), պատմահամեմատական մեթոդ (ներքին վերականգնում և ժամանակագրություն, պատմական նույնության և տարբերության սահմանում, տիպաբանական բնութագրի սահմանում, բարբառագրություն, պատմամշակութային մեկնաբանություն, տեքստագիտություն), համեմատական-զուգադրական մեթոդ (զուգադրական հիմունքի սահմանում, զուգադրական մեկնաբանություն, տիպաբանական բնութագրություն), կառուցվածքային կամ նկարագրական մեթոդ (արտաքին մեկնաբանության եղանակներ, ներքին մեկնաբանության եղանակներ՝ դիրքային եղանակ, վիճակագրական եղանակ, գործիքային եղանակներ, լեզվաբանական հետազոտության ավտոմատացում և այլն):

9. Լեզվաբանական տիպաբանություն - Այս բաժնում տրվում են տիպաբանության պատմական և համաժամանակյա բնութագրերը, ձևաբանական տիպաբանության ոլորտի տերմինները, ինչպես նաև լեզուների ձևաբանական տիպերը՝ թեքական, կցական, անջատական, բազմահամադրական և այլն: Բնութագրվում են շարահյուսական տիպաբանության ոլորտի

տերմինները, էրգատիվ և անվանական կառուցվածքի նախադասությունները և այլն:

10. *Լեզուների ցեղակցություն և ծագումնաբանական դասակարգում* -

Այս բաժնում տրվում են լեզուների ցեղակցության տերմինները. Լեզվաընտանիք, լեզվամիություն, լեզվախումբ, լեզվաճյուղ, դուստր լեզուներ, այնուհետև լեզվաընտանիքները, նրանց խմբերը, լեզվաճյուղերը և նրանց լեզուները՝ համապատասխան բացատրություններով՝ հնդեվրոպական, Մերձավոր արևելքի հնագույն լեզուներ, կովկասյան լեզուներ, ուրալյան, ալթայյան, հնասիական, չին-տիբեթական, ավստրոասիական, դրավիդյան, ավստրոնեզիական և պապուա-նյու ամերիկյան (հնդկացիական), աֆրոասիական լեզուներ, նոստրատիկ լեզուներ և այլն):

Ընդհանուր լեզվաբանության բաժինները, անշուշտ, ավելի լայն ընդգրկում ունեն. դրանք պարունակում են զգալի քանակությամբ տերմիններ՝ համապատասխան բառահոդվածներով, սակայն մենք նկատի ենք ունեցել լեզվաբանական գիտության այն բաժինների շրջանակները, որոնք բավարարում են բուհական կրթության ծրագրային պահանջները: Մեր կազմած բառարանում կան նաև ենթաբաժիններ, որոնք համապատասխան տերմինային շրջապատով կարող են առանձին դիտարկվել, ինչպես, *խոսքի մասերի համակարգը, բառակազմություն, նշանագիտություն, լեզվի զարգացման օրենքներն ու պատճառները* և այլն:

Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ ներկա բառարանից դուրս են թողնվել որոշ բաժիններ (ոճաբանություն, ուղղագրություն, ուղղախոսություն, կետադրություն և այլն), քանի որ 2020թ. մեր հրատարակած «Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարանում» (համահեղինակ՝ Մ.Վ. Միրումյան) այդ բաժինների տերմիններն ամբողջովին ընդգրկվել են: Մեր մոտեցումը պայմանավորված է անհարկի կրկնումից խուսափելու միտումով: Մյուս կողմից՝ բառարանից դուրս են մնացել *լեզվաբանական ավանդական ուսմունքների տերմինները*. դրանք կարող են առանձին ուսումնասիրության առարկա դառնալ, որին կանդրադառնանք հաջորդիվ:

Սույն բառարանի նպատակն է՝ համակարգել ժամանակակից դպրոցական և բուհական դասընթացներում գործածվող լեզվաբանական տերմինները, տալ դրանց նկարագրությունն ու մեկնաբանությունը, որ կարող է դառնալ հանրամատչելի ուղեցույց՝ լեզու և լեզվաբանություն ուսումնասիրողների կամ իրենց լեզվաբանական գիտելիքները խորացնողների համար: Բառարանը համակարգում է լեզվաբանական եզրույթները, մեկնաբանում նրանց հասկացական նշանակությունները, որոնք վերաբերում են լեզվի և լեզվաբանության այս կամ այն բնագավառին և հանդես են գալիս որպես նրանց կառուցվածքային և գործառական տարրերի հասկացական նշաններ:

Լեզվաբանական սույն բառարանը կարելի է գործածել ինչպես լեզուն ընդհանրապես ուսումնասիրելիս, այնպես էլ լեզվաբանության այս կամ այն բաժինն ուսումնասիրելու նպատակով: Լեզուն ամբողջությամբ ուսումնասիրելիս բառարանով կարելի է պատկերացում կազմել լեզվի հատկանիշների, նրա կառուցվածքային մակարդակների վերաբերյալ, սովորել նրանց միավորների ներքին կապերի բնույթն ինչպես միևնույն համակարգի, այնպես էլ ենթահամակարգի ներսում: Լեզվաբանության բաժիններն ուսումնասիրելիս կարելի է պատկերացում կազմել աշխարհի լեզուների, նրանց դասակարգման մեթոդների ու եղանակների, լեզուների տիպաբանական և ծագումնաբանական խմբերի (լեզվաընտանիքների) և հարակից այլ հարցերի մասին:

Բառարանը կարելի է գործածել լեզվաբանական և հայագիտական առարկաների ուսուցման բուհական պրակտիկայում՝ լեզվի և լեզվաբանության յուրաքանչյուր բաժին ուսումնասիրելիս՝ հետևելով տվյալ բաժնի տերմինային շրջապատի բառահոդվածներին, որի ընթացքում կարելի է խորացնել հայագիտական և լեզվաբանական բնագավառների գիտելիքները բառարանում տրված տերմինների բացատրություններով:

Բառարանի հեղինակը շնորհակալություն է հայտնում Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին՝ համալսարանում գիտական բարենպաստ մթնոլորտ ապահովելու և Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի գործունեությանն աջակցություն ցուցաբերելու համար: Հեղինակը շնորհակալական խոսք է հղում Գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր Կամո Վարդանյանին՝ բառարանի քննարկումը կազմակերպելու և դրական կարծիքով տպագրության երաշխավորելու համար:

Բառարանի հեղինակը շնորհակալական խոսք է ուղղում պրոֆեսորներ Վաղարշակ Մադոյանին և Սերգո Հայրապետյանին՝ բառարանին տված դրական գնահատականի համար:

Հեղինակը առանձնակի շնորհակալություն է հայտնում բառարանի խմբագիր, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Գյուրջինյանին, որի մասնագիտական խորհուրդները մեծապես նպաստել են տերմինացանկի համալրմանն ու բառահոդվածների լրամշակմանն աշխատանքներին:

Հեղինակը պատրաստակամ է սիրով ընդունելու աշխատանքի բարեփոխմանն ուղղված ցանկացած ողջամիտ առաջարկություն:

ՀԵՂԻՆԱԿ
Երևան, 2021

1. ԼԵԶՈՒ

ԼԵԶՈՒ – Մտքերը, հույզերը, ապրումները, կամքը և այլ իրավիճակներ բառերի միջոցով արտահայտելու համակարգ, որին բնորոշ է հնչյունային թաղանթ և քերականական կառուցվածք, որ ծառայում է հանրության անդամների համար որպես հաղորդակցման հիմնական գործիք: Լեզուն սերտորեն կապված է հասարակական մտածողության և հասարակության առաջընթացի հետ և, ըստ այդմ, համարվում է *հասարակական երևույթ*:

Լեզուն *կառուցվածք* է, որ բաղկացած է երեք հիմնական բաղադրիչներից՝ հնչյունական համակարգից, բառային կազմից և քերականական կառուցվածքից: Լեզվի կառուցվածքը բաժանվում է մակարդակների, որոնցից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ մակարդակային միավորներ: Լեզվի մակարդակները՝ *հնչյունային, ձևային, բառային, ձևաբանական և շարահյուսական*, գտնվում են փոխադարձ կապերի մեջ և լեզվական համակարգում դասավորված են կազմահարկային ձևով՝ ստորինից վերն գնացող հերթականությամբ: Լեզվի համակարգը կարելի է ներկայացնել շուրջ տված բուրգի տեսքով, որի ստորին մակարդակը հնչյունայինն է, վերջինը՝ շարահյուսականը: Յուրաքանչյուր նախորդ մակարդակ ծառայում է հաջորդ մակարդակի կազմավորմանը. յուրաքանչյուր մակարդակային միավոր իրացվում է հաջորդ մակարդակում: Հնչյունային մակարդակի միավորներն իրացվում են ձևային մակարդակում՝ դառնալով ձևայինների կազմիչ տարրեր, ձևային մակարդակի միավորներն իրացվում են բառային մակարդակում՝ ծառայելով բառակազմական գործընթացին, բառային մակարդակի միավորներն իրացվում են ձևաբանական մակարդակում՝ դառնալով բառաձևեր, ձևաբանական մակարդակի միավորներն իրացվում են շարահյուսական մակարդակում՝ կազմելով բառակապակցություններ և նախադասություններ:

Լեզվական համակարգում առանձնացնում են նաև *միջմակարդակային իրողություններ*, որոնցից յուրաքանչյուրը գտնվում է երկու մակարդակների միջև, ինչպես՝ *ձևային-ձևաբանական* (հնչյունային և ձևային մակարդակների միջև), *բառակազմական* (ձևային և բառային մակարդակների միջև), *դարձվածաբանական* (բառային և շարահյուսական մակարդակների միջև):

Լեզվի մակարդակային միավորներն օժտված են *քերականական իմաստներ* արտահայտելու հատկանիշներով, որոնք ապահովում են բառերի միջև առկա քերականական հարաբերությունները, ձևավորում ամփոփ միտք, որ արտահայտվում է *նախադասության կադապարով*: Նախադասությունը լեզվական համակարգի, նրա միավորների փոխհամագործակցության հետևանքն է և համարվում է լեզվական *լիանշան*: Իր այդ հատկանիշով լեզուն դիտվում է իբրև *նշանային համակարգ*: Լեզվի մեջ տար-

բերակում են *մասնակի նշան* (ձևույթ), *կիսանշան* (բառ) և *լիանշան* (նախադասություն) հասկացությունները, որոնք համարվում են լեզվական իմաստակիր միավորներ:

Լեզուն ինքնին վերացական սխեմա է, որ իր արտահայտությունն է գտնում խոսքի մեջ. խոսքը լեզվի իրացման դաշտն է: Լեզվի և խոսքի հակադրությունից կարելի եզրակացնել, որ լեզուն ընդհանուր է, խոսքը՝ անհատական. լեզուն պատկանում է հանրությանը, խոսքը՝ անհատին: Լեզուն և խոսքը անբաժան են, ինչպես անբաժան են անհատը և հասարակությունը: Հասարակությունից դուրս անհատ գոյություն չունի, և հասարակությունից դուրս անհատը չի կարող լեզու ունենալ (լեզու ձեռք բերել):

Յուրաքանչյուր *լեզվական համակարգի* ուղեկցում է *լեզվական նորմը*. Վերջինս ցույց է տալիս լեզվի կառուցվածքային միավորների իրացման հնարավորությունները որոշակի պատմական կտրվածքի շրջանակներում: Լեզվական համակարգը և նորմը գտնվում են հակասության մեջ, որ հնարավորություն է ընձեռում լեզվական տարբերակների առաջացմանը:

Լեզուն, կապված լինելով հանրության կենսագործունեության հետ, հասարակության առաջընթացի հետ փոփոխվում է, որ արձանագրվում է լեզվական համակարգում ընթացող քանակական և որակական փոփոխությունների ձևով: Լեզվական միավորների քանակական փոփոխությունները հիմք են հանդիսանում որակական փոփոխությունների, որի հետևանքով տեղի է ունենում *լեզվական գոյավիճակների հերթազայություն*: Մյուս կողմից՝ լեզուն կարող է անհետանալ հասարակության անհետացման հետ միաժամանակ՝ դառնալով մեռած լեզու:

Միևնույն հանրության կենսագործունեության բոլոր ոլորտներում, ինչպես նաև աշխարհագրական տարածքներում լեզուն միանշանակ գործածություն չունի. դրա հետևանքով ի հայտ են գալիս *լեզվական տարբերակները*, որոնք բաշխվում են ըստ ոլորտների՝ հասարակական, տարածքային և գործառական: Լեզուն սպասարկում է որոշակի հանրության և այդպիսով այն չի կարող այլ հանրությունների սպասարկել, թեև որոշակի պայմաններում լեզուն ի վիճակի է դառնալ բազմազգ հանրությունների հաղորդակցման գործիք, երբ այն ձեռք է բերում *ազգամիջյան կամ միջազգային լեզվի կարգավիճակ*: Ելնելով բնական լեզվի գործածության սահմանափակ շրջանակներից (որ այն իրացվում է մեկ հանրության ներսում), նրա գործածության շրջանակներն ընդլայնելու նպատակով երբեմն ստեղծվում են *արհեստական լեզուներ*, որոնք սովորաբար երկար կյանք չեն ունենում և ժամանակի մեջ անհետանում են:

Լեզուները սովորաբար մեկուսի չեն լինում, քանի որ մեկուսի չեն լինում նաև լեզվակիր հանրությունները: Դրանով են պայմանավորված *լեզվական շփումները*, որոնք կարող են առաջ բերել լեզվական փոխներթափանցումներ՝ փոխառություններ և բառային պատճենումներ:

Լեզուն կարող է *ցեղակցական ընդհանրություններ* ունենալ այլ լեզուների հետ և նրանց հետ միասին մտնել որևէ լեզվաընտանիքի մեջ: Լեզուները կարող են *ծագումնաբանական ընդհանրություններ չունենալ*, սակայն որոշակի սկզբունքով կարող են խմբավորվել որևէ լեզվական տիպի շրջանակներում:

Լեզուն որևէ հանրության ներսում սոսկ հաղորդակցության միջոց չէ. այն ունի որոշակի գործառնություններ, որոնք ապահովում են մարդկության ստեղծած փորձը *կուտակելու և այն հաջորդ սերնդին փոխանցելու համար*:

Լեզուն ազգային գոյաբանական համակարգի բանաձևն է, ազգային մտածողության ծածկագիրը, ազգային հարատևության վկայագիրը:

ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ – Մարդկային լեզուն, գիտակցությունը և մտածողությունը սերտորեն կապված են միմյանց հետ: Գիտակցությունն արտաքին աշխարհի առարկաների ու նրանց հատկանիշների արտացոլման բարձրագույն ձևն է, մտածողությունը գիտակցության գործունեությունն է: Ընդունված է գիտակցությունը համարել մարդու նյարդաուղեղային համակարգի՝ իրականության արտացոլման ամբողջ գործընթացը, իսկ մտածողությունը՝ իրականության արտացոլման ձևերը՝ հասկացության, դատողության և մտահանգման միջոցով:

Ինչպիսի՞ն է լեզվի դերը մտածողության նկատմամբ:

1. Լեզուն ձևավորում է մտքերը: Մտածողությունը՝ որպես գիտակցության մեջ իրականության ընդհանրական արտացոլման գործունեություն, մշտապես հենվում է բառերի և նախադասության բազայի վրա:

2. Մտքեր ձևավորելով՝ լեզուն հաղորդում է ինֆորմացիա, այսինքն՝ հնարավոր է դարձնում «մտքերի փոխանակումը»:

3. Լեզուն մտածողության արդյունքների պահպանման ու փոխանցման միջոցն է: Լեզվական արտահայտության բառական և քերականական միավորները՝ նրանց միջև եղած բազմազան կապերով, կանոնավորում են ծավալվող մտքերը և դառնում են նրանց դրսևորման յուրահատուկ կադապարները:

Լեզվի և մտածողության կապը փոխադարձ է. մտածողությունն իր հերթին լեզվի նկատմամբ ունի որոշակի գործառնություններ:

1. Մտածողությունն ապահովում է լեզվական միավորների գործառնությունը որպես նշաններ:

2. Մտածողությունը բառաքերականական նշանակությունների համակարգի զարգացման գլխավոր միջոցն է: Լեզվական միավորների տարժամանակյա փոփոխությունները առաջին հերթին դիտվում են իբրև մտածողական գործունեության հետևանք:

3. Մտածողությունը ծառայում է իբրև լեզվական միավորների ընտրության միջոց՝ միաժամանակ կանոնավորելով խոսքի կառուցման գործընթացը:

Լեզվի և մտածողության փոխադարձ կապերով է պայմանավորված *լեզվամտածողություն*՝ որպես մտածողության ձևավորման ու արտահայտման միջոցների ամբողջություն, որ արտացոլում է արտաքին աշխարհի առարկաներն ու երևույթները, նրանց բնորոշ կապերը, որոնք մարդկային գիտակցության մեջ վերացարկվում և վերածվում են լեզվական կադապաների: Լեզվամտածողությունը արտաքին աշխարհի կադապարավորումն է մարդու գիտակցության մեջ, որ պայմանավորված է տվյալ լեզվի քերականական կառուցվածքով: Լեզվամտածողությունը ներառում է նաև հասկացություններ կազմելու այն յուրահատկությունները, որոնք պայմանավորված են լեզվի առանձնահատկություններով: Աշխարհի բոլոր լեզուներն արտացոլում են մեզանից դուրս գտնվող օբյեկտիվ իրականությունը, սակայն յուրաքանչյուր լեզու այն արտացոլում է յուրովի՝ պայմանավորված այդ լեզվի հնչյունական համակարգի, բառային կազմի և քերականական կառուցվածքի յուրահատկություններով: Լեզվամտածողությունը հանգում է լեզվական-նյութական այն ձևերի ամբողջությանը, որոնցով արտահայտվում են լեզվակիր տվյալ հանրության կամ նրա յուրաքանչյուր առանձին անհատի մտածողական գործընթացները: Յուրաքանչյուր հասարակության լեզվամտածողությունը պայմանավորված է տվյալ լեզվի քերականական կառուցվածքով. լեզվամտածողությունը ձևավորում է անհատի (լայն առումով՝ հասարակության) լեզվական աշխարհայացքը:

Մտածողության բոլոր բարձրագույն մակարդակները կախված են լեզվից: Այս դիտարկումը բխում է լեզվի և մտածողության փոխհարաբերության համատեքստում լեզվի առաջնային դերից: Այս տեսությունն է ընկած Սեպիր-Ուորֆի վարկածի հիմքում, որի համաձայն՝ մտածողությունը կախված է լեզվից և պայմանավորված է լեզվով. այլ կերպ ասած՝ մարդկանց մտածողությունը, աշխարհայացքը և վարքականոնը պայմանավորված են լեզվի բովանդակությամբ, նրա կառուցվածքով ու բնույթով:

Եթե ընդունենք մտածողության առաջնահերթ գործառույթն առանձին լեզվի դեպքում, մյուս կողմից՝ եթե ընդունենք լեզվի կառուցվածքով մտածողության կառուցվածքը որոշելու սկզբունքը, ապա կարող ենք ասել, որ, օրինակ, հին հայերենի կառուցվածքի՝ մասնավորապես նախադասության գծային կադապարի քննությունը ցույց է տալիս, որ գործ ունենք մտածողության որակական այնպիսի դրսևորումների հետ, որ պայմանավորված է հին հայերենի՝ տվյալ դեպքում գրաբարի քերականական կառուցվածքով:

ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ – Որևէ լեզվակիր հանրության գիտակցության մեջ պատմականորեն կայունացած լեզվական համակարգ և

այդ համակարգում օբյեկտիվ իրականության արտացոլման հնարավորություններ ու արտացոլման կադապարներ, որոնց միջոցով դրսևորվում են լեզվակիրների վերաբերմունքը օբյեկտիվ ռեալության առարկաների, երևույթների և նրանց հատկանիշների վերաբերյալ: Այն հանրությունները, որոնք տարածքով, մշակույթով և պատմական շփումներով ընդհանրություն ունեն, նրանց լեզվական քարտեզները տիպաբանորեն ունեն ընդհանուր գծեր: Եվ ընդհակառակը, տարածքով, մշակույթով և պատմական շփումներով մեկուսացած լեզվակիր հանրությունների լեզվական քարտեզները տիպաբանորեն տարբեր են և ունեն էական տարբերություններ՝ օբյեկտիվ իրականության լեզվական կադապարավորման տեսանկյունից: Տարբեր լեզուների լեզվական քարտեզների առանձնահատկությունը դրսևորվում է բառային և քերականական մակարդակներում: Տարբերությունները կարող են դրսևորվել էթիկայի կադապարներում, հասարակական կարծրատիպերում, բառակազմական կադապարներում, բառերի կապակցելիական հնարավորություններում, շարահյուսական կապակցություններում, շարադասական կադապարներում, փոխաբերական կառույցներում, բառերի իմաստային - թեմատիկ խմբերում, բառերի բազմիմաստության դաշտում, բառային կազմի համարժեքության շրջանակներում և այլն: Լեզվաքերականական բոլոր միջոցների ամբողջությունը ստեղծում է լեզվական աշխարհայացքի որոշակի համակարգ, յուրահատուկ հավաքական փիլիսոփայական մտածողություն կոնցերտ, որ բնորոշ է լեզվակիր հանրություններից յուրաքանչյուրին: Լեզվափիլիսոփայական այդ համակարգը ներկայանում է որպես օբյեկտիվ իրականության հայելային (մեխանիկական) արտացոլում և պրիզմա, որով հնարավոր է դառնում մեկնաբանելու օբյեկտիվ իրականությունը՝ լեզվակիր հանրության աշխարհայացքին համապատասխան:

Յուրաքանչյուր ոք արտաքին աշխարհն ընկալում է յուրովի՝ իր զգայարանների և գիտակցության միջոցով, բայց և այդ ընթացքում օգտագործում է հասարակության կուտակած փորձը: Այդ ճանապարհին անհատը ձեռք է բերում տվյալ հասարակությանը հատուկ կոնցեպտուալ կարծրատիպերի համակարգ՝ ամրակայված ավանդույթի ուժով, որին հատուկ են հասարակության մտածողության նորմերը, գնահատման չափանիշները և վարքականոնի դրսևորումները: Ամեն մի անհատի համար հասարակության կուտակած փորձի յուրացումը բերում է աշխարհի միանման քարտեզի ձևավորման: Մյուս կողմից՝ աշխարհի քարտեզը արտացոլվում է տվյալ հանրության լեզվի բովանդակային պլանի մեջ, որի վերլուծությունն օգնում է հասկանալու, թե ինչով են միմյանցից զանազանվում ազգային մշակույթները, ինչպե՞ս են միմյանց լրացնում համաաշխարհային մշակույթների համատեքստում, և ինչպե՞ս են նրանց արժեքները փոխներթափանցում այլալեզու մշակույթային տարածքներ:

ԼԵԶՎԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ – Լեզվաբանության բաժին, որ ուսումնասիրում է մտածական երևույթների լեզվական արտահայտության կադապարները, լեզվի, մտածողության և գիտակցության փոխարաբերության խնդիրները, լեզվի և խոսքի ընդհանուր փիլիսոփայական հիմքերը, լեզվի էության և բնույթի խնդիրները, լեզվի և հասարակության փոխադարձ կապի հարցերը և այլն:

ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - Վերաբերում է պետությանը, կուսակցությանը կամ կուսակցություններին, հասարակական խմբավորումներին: Այն ուղղված է փոփոխելու կամ պահպանելու գոյություն ունեցող լեզուների կամ նրանց ենթահամակարգերի գործառույթների բաշխումը՝ նոր (կամ պահպանված) լեզվական նորմերը կենդանի լեզու ներառելու համար: Հետևում է ազդագրերի լեզվին, մամուլի և ռադիոհեռուստատեսային հաղորդումների լեզվադրակին, ուղղագրական նորմերի պահպանմանը, փոխառությունների կանոնարկմանն ու գործածության ոլորտների հստակեցմանը:

Լեզվաքաղաքականությունը հետևում է պետական գործիչների լեզվական վարքականոնին և արտացոլում է ժամանակի պետական գաղափարախոսության ուղղվածությունը:

Լեզվաքաղաքականության իրականացման հարցում մեծ է լեզվաբան-մասնագետների և լեզվի ուսուցիչների դերը, որոնց մասնագիտական ջանքերն ուղղված են գրական լեզվի դիրքերի ամրապնդմանը, արևելահայերենի և արևմտահայերենի հնարավոր մերձեցմանը, գրական լեզվի պատմության ուսումնասիրմանը, հայերենի և այլ լեզուների համեմատական ուսումնասիրություններին՝ ի շահ հայերենի դիրքերի ամրապնդման: Լեզվաքաղաքականությունը հետևում է լեզվի անաղարտությանը, բարբառային բառերի անհարկի ներթափանցումների կանխարգելմանը, լեզուն անհարկի փոխառություններից մաքրելուն, լեզվի վրա հասարակական տարբերակների ազդեցության նվազեցմանը: Լեզվաքաղաքականությունը հետևում է պետական հիմնարկներում և բուժհաստատություններում գրագրությունները գրական հայերենով արձանագրելուն, ազդագրերի, մամուլի լեզվին և այլն:

Լեզվաքաղաքականությամբ զբաղվում է տվյալ պետության օրենսդիր մարմիններից մեկը՝ Լեզվի կոմիտեն:

ԼԵԶՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ - Երկրորդ կամ օտար լեզու սովորելու գործընթացն է, որ իրականացվում է կամ որպես հանրակրթական դպրոցի առարկա, կամ էլ որպես մասնագիտացված լեզվական դպրոցի առարկա:

Լեզվի ուսուցման ոլորտում կան երկու հիմնական ճյուղեր՝ գործնական և տեսական, և այս երկուսը ունեցել են լիովին անջատ պատմություն, և որոնցից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում մյուսից առաջ է անցել: Գործնական ճյուղի կողմնակից հետազոտողների շարքում են Օ.Ջեսպեր-

սենը և Լեոնարդ Բլումֆիլդը, ովքեր աջակցում են քերականական և այլ կադապարների ընդօրինակմանն ու կրկնությանը: Տեսական ճյուղի կողմնակիցներն են Ֆրանսուա Գուանը, Բերլիցը և Էմիլի դե Սաուզը, որոնց՝ լեզու սովորելու վերաբերյալ ռացիոնալիստական տեսությունները համընկնում են Նոամ Չոմսկիի և այլոց լեզվագիտական աշխատանքների հետ: Սա նպաստել է լեզվի ուսուցման ավելի շատ մեթոդների ստեղծմանը: Այս մեթոդներով սովորողները կարողանում են որևէ լեզվով արտահայտել իմաստալից և քերականորեն ճիշտ ձևավորված միտք: Սա գալիս է այն ռացիոնալ դիրքորոշումից, որ մարդը ծնվել է մտածելու համար, և լեզվի կիրառումը բնորոշ է միայն մարդուն:

ԼԵԶՎԱԿԱՆ ՃԱՇԱԿ – Խոսքի մշակույթի կարգ, լեզվի գործածության դեպքում նախապատվություն ու գնահատական, որ համապատասխանում է դարաշրջանի ոգուն: Արժեքային համակարգում լեզվական ճաշակը անհատապես դրսևորվում է անձի գաղափարական, հոգեբանական, գեղագիտական վարքագծում՝ համապատասխանելով նրա դաստիարակության, կրթության և ստեղծագործական ունակությունների մակարդակին: Լավ լեզվական ճաշակը որոշվում է այն բանով, որ այն անհատապես համապատասխանում է ընտրված լեզվական փաստերի (խոսքային, բնագրային) օբյեկտիվ գեղագիտական և էթիկական արժեքներին:

Լեզվական ճաշակը հիմնվում է լեզվական հոտառության՝ այն չձևավորված գնահատականների վրա, որոնք հանդուրժում է անհատը լեզվական բնագավառում, և որոնց մեջ արտացոլվում են (նրանցում) գոյություն ունեցող հասարակական խոսքային իդեալները: Լեզվական հոտառությունն ու լեզվական ճաշակը հենվում են ժողովրդի ազգային մշակութային հիշողության վրա՝ ժողովրդի հոգևոր մշակույթում ստեղծելով լեզվական փաստերի օբյեկտիվ արժեքների բազա: Միևնույն ժամանակ նրանք հասարակականորեն պայմանավորված են, ունեն որոշակի պատմական հիմքեր և խոսքային գործածության բնագավառում բնութագրվում են ազատականության կարգավիճակով:

Լեզվական ճաշակն ամենից վաղ դրսևորվում է լեզվի ոճագիտական համակարգում, որ ընդունում կամ չի ընդունում լեզվական միջոցների ոճաբանական շերտերը, օրինակ՝ գրքային բառաշերտում՝ խոր զգացմունքային երանգի բառերի առկայություն, գոեհկաբանություններ կամ ցածր ոճի լեզվական միջոցներ, նոր փոխառություններ կամ սահմանափակ գործածության այլ միջոցներ և այլն:

ԼԵԶՎԱԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ – Որևէ լեզվի գործադրությունը խոսողության և գրավոր հաղորդակցության մեջ, որ տեղի է ունենում տվյալ լեզվակիր հանրության ինչպես պետական տարածքում, այնպես էլ այլ երկր-

ներում, որտեղ գործում են նույն լեզվակիրների համայնքներ: Օրինակ, հայերեն լեզվագործածությունը թե՛ գրավոր և թե՛ բանավոր տարբերակներով իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում, միաժամանակ հայերեն լեզվագործածությունը նույն ձևաչափերով իրականացվում է նաև Սփյուռքի հայկական համայնքներում (ղայրոցներում, կրթական այլ հաստատություններում, լրագրության ոլորտում, կրոնական կենտրոններում և այլն): Այն երկրներում, որտեղ գործածվում են երկու կամ երեք լեզուներ, լեզվագործածությունն իրականացվում է այդ լեզուներով, ինչպես Ֆինլանդիայում (ֆիններեն, գերմաներեն), Շվեյցարիայում (ֆրանսերեն, գերմաներեն, ռետոռոմաներեն) և այլն:

Լեզվագործածություն կարող են ունենալ նաև հարաբերական մեծած լեզուները, որոնք, որպես պաշտամունքային լեզուներ, հանդես են գալիս եկեղեցական արարողությունների ժամանակ (ինչպես լատիներենը՝ կաթոլիկ եկեղեցիներում, տիբեթերենը՝ լամայական տաճարներում, ղպտիերենը՝ քրիստոնյա եգիպտացիների եկեղեցիներում): Մեծած լեզուների լեզվագործածություն է համարվում այն հանգամանքը, երբ դրանք հանդես են գալիս իբրև գիտության և գրականության լեզուներ (օրինակ՝ սանսկրիտը հին և միջին դարերում, գրաբարը՝ միջին հայերենի շրջանում և 17-19-րդ դարերում, մասնավորապես Մխիթարյան Միաբանությունում):

ԼԵԶՎԱԽԱՌՆՈՒԹՅՈՒՆ – Մի լեզվի մեջ այլ լեզուների բառեր կամ արտահայտություններ խառնելը և գործածելը: Լեզվախառնությունը հետևանք է լեզվական շփումների, որոնց հետևանքով տեղի են ունենում փոխառություններ, լեզուների խաչավորում և խառը լեզուների առաջացում: Լեզվական շփումների այս երեք կարգի հետևանքները լեզվախառնության հիմք են դառնում (տե՛ս «Լեզվական շփումներ» բառահոդվածը):

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Լեզվի գոյության բոլոր ձևերի ամբողջություն, որպես լեզուների, տարածքների ընդհանուր բարբառային միավորների, տարածական և հասարակական տարբերակների հանրագումար: ԼԻ սպասարկում է որոշակի էթնիկական հասարակության, նրա անդամներին միմյանց հետ հաղորդակցվելու կամ որոշակի տարածքում միավորվելու նպատակով:

ԼԵԶՎԱՎԻՃԱԿ – Լեզվավիճակը յուրաքանչյուր լեզվի համաժամանակյա կտրվածքի լեզվաբերականական համակարգն է, նրա կառուցվածքային տարրերի (մակարդակային միավորների) ամբողջությունը, որ իրացվում է խոսքային մակարդակում կամ գրավոր տեքստերում: Որևէ լեզվի գոյության ձևերի ամբողջությունն է՝ նրա հասարակական և տարածքային փոխհարաբերությունների, ինչպես նաև գործառական փոխազդեցու-

թյունների համատեքստում՝ որոշակի աշխարհագրական տարածքում կամ վարչաքաղաքական կազմավորումներում: Լեզվավիճակը սովորաբար ուսումնասիրվում է հանրալեզվաբանության շրջանակներում: Լեզվավիճակի հատկանիշներն են համարվում քանակական, որակական և գնահատողական չափանիշները:

Քանակական չափանիշներ են համարվում՝ ա) տվյալ լեզվավիճակի դարձվածքների քանակը, բ) յուրաքանչյուր դարձվածքով խոսողների թվաքանակը՝ տվյալ տարածքի բնակչության ընդհանուր թվաքանակի համապատասխան, գ) հաղորդակցական ոլորտների քանակը, որ պայմանավորված է յուրաքանչյուր դարձվածքով, դ) դոմինանտ դարձվածքների գործառական քանակը և այլն:

Որակական չափանիշ են համարվում՝ ա) գործառական դարձվածքների լեզվաբանական բնութագրերը, բ) դարձվածքների կառուցվածքային-ծագումնաբանական հարաբերությունները միմյանց նկատմամբ, գ) դարձվածքների գործառական միանշանակությունն ու բազմանշանակությունը, դ) դոմինանտ դարձվածքների բնութագրերը և այլն:

Գնահատողական չափանիշ են համարվում՝ ա) դարձվածքների ներքին և արտաքին հատկանիշները, բ) բնիկ և ուրիշ լեզվակիրների գնահատականը հաղորդակցական դարձվածքների պիտանելությանը՝ նրանց գեղագիտական և մշակութային դիտանկյունների համատեքստում:

Լեզվավիճակը պատմականորեն կարող է փոփոխության ենթարկվել՝ քանակական կուտակումներից որակականի անցնելու ուղիով. այդ ճանապարհով տեղի է ունենում լեզվական վիճակների հերթագայություն, որ ընդունված է անվանել տարժամանակյա փոփոխություններ: Լեզվական վիճակները (գոյավիճակները) միմյանցից տարբերվում են որակական չափանիշներով: Յուրաքանչյուր լեզվի պատմության ընթացքում կարելի է ցույց տալ նրա զարգացման լեզվավիճակները, որոնց հերթագայությունը կազմում է նրա տարժամանակյա պատմությունը: Օրինակ, հին լատիներենի լեզվավիճակներն ըստ ժամանակագրական կտրվածքների. 1. *Արխաիկ շրջան*, որով պահպանվել են մ.թ.ա. 6-4-րդ դարերի արձանագրություններ, հին օրենքների և սրբազան հիմների հատվածներ: 2. *Միջդասական շրջան* (3-2-րդ դարեր, մ.թ.ա.), գրական լեզվի ձևավորման շրջանն է, որի հիմքում ընկած է Հռոմի բարբառը, պահպանվել են Պլավտուսի, Տերենտիուսի կատակերգությունները, Կատոն Ավագ տրակտատները: 3. *Դասական շրջան* (1-ին դար, մ.թ.ա.), ներկայանում է հարուստ բառապաշարով, գիտական, փիլիսոփայական, քաղաքական, տեխնիկական տերմինաբանությամբ, քերականական կուռ կառուցվածքով: Բարձր մակարդակի է հասնում գեղարվեստական գրականությունը (Ցիցերոն, Հուլիոս Կեսար, Մալլուստինոս, Վերգիլիոս, Հորացիոս, Օվիդիոս): 4. *Հետդասական շրջան* (1-ին դար, մ.թ.), վերջնականապես ձևավորվեցին գրական լեզվի հնչյունական և ձևաբանական նորմե-

րը, սահմանվեցին ուղղագրության կանոնները: 5. *Ուշ լատիներենի շրջան* (2-6-րդ դ.դ.), առաջանում է խզում գրական և խոսակցական տարբերակների միջև:

Լատիներենի հինգ շրջաններից յուրաքանչյուրը համարվում է առանձին *լեզվավիճակ* կամ *գոյավիճակ*:

ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ – Բնական լեզվի պայմանների ամբողջություն, որի շրջանակներում ընթանում է լեզվակիր հանրության գործունեությունը՝ ընդհանրապես, լեզվական անհատինը՝ մասնավորապես: Անհատի լեզվական միջավայրը ձևավորվում է ընթերցանության և տարատեսակ բնագրերի ընկալման շրջանակներում (հեռուստախոսք, ազդագրեր, թատրոն, կինո), ինչպես նաև հաղորդակցական միջավայրում: Լեզվական միջավայրը ուղիղ և անմիջական ազդեցություն ունի անհատի խոսքային վարքականոնի վրա, նրան մղում է որոշակի եզրակացությունների հաղորդակցման թեմաների շուրջ և նպաստում համընդհանուր խոսքային կանոնների և ձևերի (վարքականոնի) յուրացմանը:

ԼԵԶՎԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ - Լեզուների ծագման տեսությունները լեզուների առաջացման և լեզուների բազմազանության հիմքում դնում են աստվածաշնչյան, դիցաբանական և բանահյուսական պատկերացումները, ինչպես նաև բնագիտական, հոգեբանական և հասարակական գործոնները:

ԴԻՅԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Լեզվի ծագման գերբնական պատկերացումներն արտացոլվել են հնագույն դիցաբանական պատկերացումներում և Աստվածաշնչում:

Հին հույների դիցաբանական պատկերացումներում լեզվի ծագման և լեզուների բազմազանության հարցերը վերագրվում են աստվածներին: Ըստ նրանց դիցաբանական զրույցների՝ մարդիկ նախապես միայն մեկ լեզուն ունեին: Հետագայում բանագնացության աստված Հերմեսը մարդկությանը բաժանում է առանձին ժողովուրդների և նրանց համար առանձին լեզուներ սահմանում (Գ.Ջահուկյան):

Լեզվի ծագման աստվածաշնչյան տեսությունը կապված է հրեաների նախնական ըմբռնումների հետ: Մակայն այդ հարցը Աստվածաշնչում միանշանակ լուծում չի ստացել. լեզվի ծագումը կապվում է մեկ՝ Աստծո, մեկ՝ Ադամի անվան հետ:

Հին Կտակարանի «Ծննդոց գրքում» նկարագրվում է, որ Աստված նախնական քառսի մեջ կարգ հաստատելուց, ցամաքն ու ջուրը և ցերեկն ու գիշերը անջատելուց հետո սրանց անուններ է տվել. «Եւ կոչեաց Աստուած զլոյսն Տիւ, եւ զխաւարն կոչեաց Գիշեր. Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն,

օր մի: Եւ կոչեաց Աստուած զհաստատութիւն Երկին...: Եւ կոչեաց Աստուած զցամաքն Երկիր, եւ զծողովս ջուրցն կոչեաց Ծովս» (Ծննդ., Ա. 5-10):

«Ծննդոց գրքի» մեկ այլ գլխում կենդանիներին ոչ թե Աստված է անուններ տալիս, այլ Ադամը. «Եւ ստեղծ էւս Տէր Աստուած զամենայն զազանս վայրի եւ զամենայն թռչունս երկնից. Եւ ած զնոսա առ Ադամ տեսանել զինչ կոչեսցէ զնոսա. եւ ամենայն շնչոց կենդանւոյ զինչ եւ անուանեաց Ադամ անուանս ամենայն անասնոց, եւ ամենայն թռչնոց երկնից, եւ ամենայն զազանաց վայրի...» (Ծննդ., Բ. 19-20): Կամ՝ «Եւ ասէ Ադամ, Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց եւ մարմին ի մարմնոյ իմմէ. Սա կոչեսցի Կին...» (Ծննդ., Բ. 23):

Դիցաբանական պատմություններում լեզվի ծագման հարցերը դիտարկվում են լեզուների բազմազանության հարցերի համատեքստում: Այդ կարգի մեկնաբանության օրինակ կարող է ծառայել Աստվածաշնչում զետեղված *Բաբելոնյան աշտարակաշինության* առասպելը, որի տարբեր պատմմաներ տարածված են այլ ժողովուրդների բանահյուսական ավանդույթներում: Աստվածաշնչում այդ առասպելը նկարագրված է «Ծննդոց գրքում».

«Եւ էր ամենայն երկիր լեզու մի, եւ բարբառ մի ամենեցուն: Եւ եղև ի խաղալն նոցա յարեւելից՝ գտին դաշտ մի յերկրին Սենաար, եւ բնակեցան անդ: Եւ ասեն այր ցընկեր իւր. Եկա՛յք արկցուք աղիւս, եւ թրծեսցուք զայն հրով: Եւ եղև նոցա աղիւսն ի տեղի քարի, եւ կուպր ի տեղի շաղախոյ: Եւ ասեն. Եկա՛յք շինեսցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ լինիցի զլուին մինչեւ յերկինս. Եւ արասցուք մեզ անուն առաջ քան զսփռել ի վերայ երեսաց ամենայն երկրի: Եւ էջ Տէր տեսանել զքաղաքն եւ զաշտարակն զոր շինէին որդիք մարդկան. Եւ ասէ Տէր. Ահա ազգ մի եւ լեզու մի ամենեցուն, եւ զայդ սկսան գործել, եւ արդ ոչինչ պակասէ ի նոցանէ, զամենայն զոր ինչ յօժարեսցին գործել. Եկա՛յք իջցուք եւ խառնակեսցուք անդ զլեզուս նոցա, զի մի՛ լսիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ: Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, եւ դադարեցին ի շինելոյ զքաղաքն եւ զաշտարակն: Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա *Խառնակություն*, զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի, եւ անտի ցրուեաց զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի» (Ծննդ., ԺԱ, 1-9):

Սենաարի աշտարակաշինությունը վերաբերում է Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի ժամանակաշրջանին: Այդ առասպելից լեզուներին անցել են *Բաբելոնյան ժխոր*, *բաբելոնյան խառնակություն*, *բաբելոնյան աշտարակաշինություն* թևավոր խոսքերը:

ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ – Լեզուների ծագման հարցերը եղել են որոշ ցեղերի և ազգերի բանահյուսական մշակումների առարկա:

Հնդկացիական սենեկա ցեղի բանահյուսական պատումներում (Նյու Յորքի նահանգ) կա հետևյալ դրվագը: Ի սկզբանե բոլոր մարդիկ ապրում էին հաշտ ու խաղաղ և խոսում էին միմյանց հասկանալի լեզվով: Մի գյուղում, որը գետը բաժանում էր երկու մասի, ապրում էր պայծառատես մի կին՝ Գողայստ անունով. նա ուներ սպիտակ մի շուն, որ համարվում էր սրբազան արարած: Գետի ձախ ափից մարդիկ հաճախ էին գալիս աջ ափ՝ խորհուրդներ հարցնելու Գողայստից և տեսնելու սրբազան շանը: Այնուհետև նրանք ցանկանում են շանը տանել մյուս ափ: Աջափնյա բնակիչները չեն հանդուրժում դա, և անախորժությունը վերածվում է պատերազմի: Գողայստն իր հավատարիմ մարդկանցով լքում է բնակավայրը: Նրա համար կառուցում են երկու նավակ, որոնք միացած են լինում կամրջակով, որի վրա նստում է Գողայստն, իսկ համախոհները երկշաք նավակներով ուղեկցում են պայծառատեսին: Ամեն ինչ հարթ է ընթանում, մինչև հասնում են մի վայր, որտեղ գետը ճյուղավորվում է: Աջ շարքի թիավարները ձգտում են ընթանալ գետի աջ հոսանքով, ձախ շարքի թիավարները՝ ձախ հոսանքով: Գողայստն վեճը լուծել չի կարողանում. թիավարները բաժանվում են երկու մասի՝ թիավարելով աջ և ձախ հոսանքներով: Գողայստի նավակի թիավարները նույնպես թիավարում են տարբեր կողմեր, նավակի կամրջակը ջարդվում է, և Գողայստն, ընկնելով գետը, խեղդվում է: Երբ մարդիկ դա տեսնում են, փորձում են հասկանալ ինչ կատարվեց, սակայն պարզվում է՝ միմյանց չեն հասկանում: Յուրաքանչյուրը հանկարծ սկսում է արտաբերել բառեր, որոնք անհասկանալի են թվում մյուսներին: Դրանից հետո թիավարները շարունակում են իրենց ուղին՝ իրենց հետ տանելով իրենց «նոր լեզուները»:

Ահա թե ինչպես ծագեցին աշխարհի բազմաթիվ լեզուները, - ասում է հնդկացիական ավանդությունը:

Հստոնական բանահյուսության մեջ լեզվի ծագումը վերագրվում է իմաստուն մի ծերունու: Նա ջրով լի կաթսան դնում է կրակի վրա, ջուրը եռում է և սկսում է զանազան ձայներ արձակել՝ *բլդբլդալ, թշշալ, խշշալ, սուլել* և այլ: Մինչ այդ ծերունին հրավեր է ուղարկում և իր մոտ է կանչում տարբեր ցեղերի ներկայացուցիչների: Ամենից շուտ հասնում են Հստոնացիները, և ծերունին նրանց սովորեցնում է իր լեզուն: Մյուս ժողովուրդներն ստանում են ջրի այս կամ այն ձայնը հիշեցնող որևէ լեզու (Հ. Շտայնթալ):

Ավստրալիական բանահյուսության մեջ լեզուների ծագման վերաբերյալ մի ավանդություն կա, ըստ որի՝ մարդկային ցեղերն իրենց լեզուներն ստացել են Վուրուրի կնոջ դիակն ուտելու հետևանքով. ընդ որում՝ լեզուների զարգացածության աստիճանը որոշվում է ըստ այն բանի, թե մարմնի ո՞ր մասն են կերել ցեղերը: Ամենաորոշակի լեզու ունեն հարավային ցեղերը, որոնք առաջինն են վրա հասել և կերել միսը, արևելյան ցեղերը կերել են փորոտիքի վերին մասը և ավելի քիչ որոշակի լեզու ստացել, վերջում եկել են

հյուսիսային ցեղերը, որոնք կերել են դիակի մնացորդները, հետևաբար նրանք խոսում են շատ ավելի քիչ որոշակի լեզվով (Հ. Շտայնթալ):

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ - Լեզվի բնորոշման վերաբերյալ լեզվաբանության մեջ կան տարբեր տեսակետներ: 19-րդ դարի սկզբներին, երբ ձևավորվեց պատմահամեմատական լեզվաբանությունը, գիտության մեջ տարածում գտավ այն տեսակետը, թե լեզուն բնական երևույթ է, որ նման է բնական օրգանիզմի, որն ունի ծնունդ, զարգացում, քայքայում և մահ: Այս տեսակետը կոչվեց բնագիտական (Ավգուստ Շլայխեր): Այնուհետև լեզուն դիտվեց կենդանի օրգանիզմի անհրաժեշտ ֆունկցիա. սա էլ կոչվեց բիոլոգիական կամ կենսաբանական տեսակետ (Մաքս Մյուլեր): Փաստորեն, լեզուն դիտվեց այնպիսի երևույթ, որ հատուկ է կենդանի օրգանիզմներին, այդ թվում նաև մարդուն: Կենդանի օրգանիզմներին բնորոշ հատկանիշներն են տեսնելը, լսելը, շարժվելը, սնվելը, շնչելը և այլն. այդ կարգի մեկ այլ հատկանիշ էր դիտվում նաև լեզուն: Այս տեսությունը աստիճանաբար հերքվեց, որովհետև եթե լեզուն կենսաբանական երևույթ լիներ, ապա երեխան իր օրգանական կառուցվածքի, արյան բաղադրության և կենսաբանական մյուս հատկանիշների հետ պետք է ժառանգեր նաև լեզու: Երեխան ծնողներից կենսաբանական ձևով չի ժառանգում լեզուն, այլ այն ձեռք է բերում համապատասխան միջավայրում գտնվելու, իր տեսակի հետ շփվելու և խոսողական գործունեության մեջ գտնվելու ընթացքում, որոնք լեզու ձեռք բերելու կարևորագույն նախադրյալներ են: Լեզուն ձեռք է բերվում որոշակի տարիքում, մինևույն լեզվով խոսող մարդկանց շրջապատում: Եթե երեխան փոքր տարիքում շրջապատից մեկուսանա, ապա նա կարող է մեծանալ իբրև ոչ խոսող մարդ (ինչպես՝ Մաուգլիի և Տարզանի օրինակը): Հետևաբար լեզուն կենսաբանորեն ժառանգվող երևույթ չէ:

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՃԻՉԵՐԻ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – Այս տեսությունն առաջ են քաշել գոեհիկ մատերիալիստներ Լ.Նուարեն և Կ.Բյուխերը: Համաձայն այդ տեսության՝ լեզուն (բառերը՝ մասնավորապես) ծագել են աշխատանքի ընթացքում, որ ուղեկցվել է որոշակի «ճիչերով». այդ ճիչերից նախապես առաջացել են բայերը, որոնք համապատասխանել են գործողությանը՝ աշխատանքին: Գիտականորեն ապացուցվել է այդ «տեսության» սնանկությունը, քանի որ աշխատանքի ընթացքում արտաբերված ճիչերը բնագրական են և գիտակցության հետ կապ չունեն. դրանք պարզապես արտաբերվել են (ինչպես նաև արտաբերվում են) ծանր աշխատանք կատարելիս: Մյուս կողմից՝ հնարավոր չէ դիտարկել այն վարկածը, որ բայը՝ որպես առարկայի գործողության հատկանիշի գիտակցում և ըմբռնում, առաջացել է ավելի վաղ, քան գոյականը՝ որպես բուն առարկայի գիտակցում և ըմբռնում:

ԲՆԱԶԱՅՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – Մ.թ.ա V-IV դարերում հին հույն փիլիսոփաները (Դեմոկրիտ, Պլատոն) այն տեսակետն են առաջ քաշել, որ լեզուն (մասնավորապես՝ լեզվի բառերը) առաջացել են բնության ձայները նմանակելուց: Այլ կերպ ասած՝ դեռևս լեզու և լեզվագիտակցություն չունեցող մարդ-արարածը, լսելով բնության ձայները՝ թռչունների ծվվոցն ու դայլայլը, գետերի կարկայունն ու ջրվեժների շառաչունը, որոշ կենդանիների ֆշշոցն ու գոչունը, նրանց նմանությամբ ստեղծել է բառեր և դրանք իմաստավորել է որպես լեզվական միավորներ: Ըստ հույն իմաստասերների՝ այս ճանապարհով է ստեղծվել լեզուն:

Այս տեսությունը, որ լայնորեն տարածված է արևմտաեվրոպական լեզվաբանության մեջ, գիտականորեն ժխտվում է, քանի որ լեզուն չի կարող ծագել բնաձայնական բառերի սոսկական վերարտադրումից:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ - 17-18-րդ դարերում Ֆրանսիական լուսավորիչները, տնտեսագետներն ու քաղաքագետները (Ժան Ժակ Ռուսո, Դենի Դիդրո, Սեն Սիմոն, Ադամ Սմիթ) առաջ քաշեցին մի տեսություն, համաձայն որի մի խումբ մարդիկ, հասարակական դաշինք կազմելով, պայմանավորվել են լեզու ստեղծել և այն մատուցել շրջապատի մարդկանց: Այս տեսությունը, անշուշտ, արժանացավ նախորդների բախտին՝ մերժվելով գիտական հիմնավորումով. պարզվում է՝ դեռևս լեզու չունեցող (լեզու չիմացող) մարդիկ ի վիճակի են հասարակությանը «լեզու սովորեցնել»:

ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – Լեզվի ծագման տեսությունների շարքում առանձնանում է «ձայնարկությունների տեսությունը», որ առաջ են քաշել հելլենիզմի դարաշրջանի հույն փիլիսոփաները, մասնավորապես Էպիկուրյան դպրոցի ներկայացուցիչները (մ.թ.ա. IV-III դդ.), որ հետագայում արժանացավ հոգեբանական ուղղության ներկայացուցիչների (Հայման Շտայնթալ) և ֆրանսիական լուսավորիչների (Ժ.Ժ.Ռուսո, Դ.Դիդրո) պաշտպանությանը: Ըստ այդ տեսության՝ մարդկային լեզուն ծագել է նախամարդու բնագդական զգայական ճիչերից՝ ձայնարկություններից. ձայնարկությունները նախապես արտահայտել են նախամարդու հոգեկան, զգացական ապրումները, այնուհետև «դարձել են» նրանց անունները:

Այս տեսությունը, որ մոտ է լեզվի ծագման բնաձայնական վարկածին, նույնպես մերժվեց գիտական այն հիմնավորմամբ, որ ձայնարկությունները չեն կարող արտահայտել արտաքին աշխարհի առարկաների, երևույթների և նրանց հատկանիշների հարաբերությունները, որոնք դրսևորվում են լեզվի բառային կազմի և քերականական կարգերի միջոցով: Զայնարկությունները լեզվի բառային կազմում փոքր տոկոս են կազմում և սոսկ զգացական ճիչեր են:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ - Գիտականորեն ապացուցված է, որ լեզուն հատուկ է մարդկային հասարակությանը, հետևաբար այն հասարակական երևույթ է: Որպես այդպիսին, այն սպասարկում է հասարակությանը և հատուկ է կենդանական աշխարհի մարդ տեսակին՝ մարդուն: Կենդանական աշխարհում հաղորդակցման այլ միջոցներ կան, ինչպես թռչունների, կապիկների, դելֆինների միջև փոխանակվող ճիչերը, որոնք, թերևս, միայն նրանց են հասկանալի, սակայն դա դեռ լեզու համարել չենք կարող: Լեզուն կապ ունի մտածողության և բանականության հետ, որոնցով օժտված է մարդը, կենդանական աշխարհի մնացած տեսակները խոսող չեն, իսկ մարդը խոսող արարած է. վերջինիս հատուկ է մտածողությունը, բանականությունը, խոսելը, գիտակցված աշխատանք կատարելը և այլն:

Որպես հասարակական երևույթ՝ ինչպիսի՛ն է լեզվի և հասարակության կապը: Բնական է այդ կապը, թե՛ պատմական կամ պայմանական:

Լեզվաբանությունը, ելնելով պատմական և հասարակական որոշակի տվյալներից, ընդունում է, որ այդ կապը ոչ թե բնական, այլ պատմական է: Պատմության ընթացքում բազմաթիվ ցեղեր կորցրել են իրենց լեզուն և ընդունել նվաճող ժողովրդի լեզուն. օրինակ՝ Եվրոպայի արևմտյան մասում (այժմյան Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում) մ.թ.ա. առաջին հազարամյակում ապրում էին բազմաթիվ բնիկ ժողովուրդներ (գալլեր, լուզիտանական ցեղեր, իբերներ), որոնք, մ.թ.ա. առաջին դարում ընկնելով Հռոմեական կայսրության իշխանության տակ, կորցրին իրենց լեզուները և ընդունեցին լատիներենը՝ որպես հաղորդակցման միջոց: Լատիներենի հիման վրա հետագայում առաջացան ֆրանսերենը, իսպաներենը, պորտուգալերենը և այլն: Նմանապես՝ հայ ժողովրդի կազմավորման ընթացքում Հայաստանում ապրող բազմաթիվ ցեղեր, որոնք ունեին իրենց լեզուները, ձուլվեցին հայերի մեջ, յուրացրին հայերենը, հայացան և կորցրին իրենց լեզուները:

Ըստ այդմ, լեզվի և ցեղի, լեզվի ու նրանով խոսող հանրության կապը պատմական կապ է, ստեղծվել է պատմականորեն և կարող է խզվել դարձյալ պատմականորեն, պատմահասարակական պայմանների թելադրանքով:

ԼԵԶՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ – Լեզվի գործառույթները պայմանավորված են ինչպես նրա առանձին միավորների գործառական դերով, այնպես էլ ամբողջ լեզվի կիրառական ոլորտներով: Լեզվի առանձին միավորների գործառություն ասելով նկատի են առնվում խոսքի կառուցման ժամանակ նրանց հարացուցային և շարակարգային հարաբերությունների իրացումները: Իրականում խոսքային շղթայի ծավալման ամեն մի աստիճանում լեզուն իրացնում է իր հարացուցային տարբերակներից մեկնումեկը՝ խոս-

քում այն ընդգրկելով նույն կամ ուրիշ հարացույցի անդամների հետ համագործ կամ անհամագործ կապերի ոլորտ:

Ամբողջ լեզվի գործառույթները շատ են, առավել կարևորներից են՝ հաղորդակցման, արտահայտչական, ճանաչողական, կուտակողական, մուտքի կառուցողական գործառույթները և այլն:

1. **Հաղորդակցական (կոմունիկատիվ)** գործառույթը լեզվի առաջնային գործառույթներից է: Լեզուն, որպես մարդկային հանրության հաղորդակցման կարևորագույն միջոց, սերտորեն կապված է այդ հանրության կենսագործունեության տարբեր ոլորտների, նրա պատմության ու մշակույթի և հասարակական այլ հաստատությունների հետ (գիտակցություն, մտածողություն, կրոն, փիլիսոփայություն և այլն): Մարդկային հանրության մեջ հաղորդակցման զանազան միջոցներ կան, ինչպես, օրինակ, շարժումների լեզուն, ձեռք լեզուն, լուսային, ձայնային ազդանշանները, դրոշակները, հրթիռները, փարոսի լույսը և այլն: Թվարկված միջոցները, սակայն, մարդկային հանրության ներսում ունեն սոսկ լրացուցիչ, օժանդակ դեր: Հաղորդակցման զանազան նշանային համակարգերի շարքում առանձնանում է մարդկային լեզուն, որ նրա հաղորդակցման հիմնական միջոցն է: Հաղորդակցումը մարդկանց միջև տեղեկատվության փոխանակումն է այս կամ այն նպատակով: Հաղորդակցումն իրականանում է երկու կամ ավելի անձանց հաղորդակցական գործունեության հետևանքով որոշակի իրադրության պայմաններում: Մարդիկ միմյանց հետ հաղորդակցվելով, փոխանակում են իրենց մտքերը, կամքը, տրամադրությունն ու հույզերը, զգացմունքներն ու հոգեկան ապրումները, ներգործում են միմյանց վրա և հասնում ընդհանուր փոխըմբռնման: Լեզուն մարդկանց հնարավորություն է տալիս միմյանց հասկանալու և համատեղ աշխատանք կատարելու մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում: Լեզուն եղել և մնում է այն կարևոր գործոններից մեկը, որ ապահովում է հասարակության գոյությունն ու նպաստում նրա զարգացմանը: Մարդկային գործունեության տարբեր ոլորտներում լեզվի հաղորդակցական դերի իրացումը որոշում է լեզվի հասարակական գործառույթի սահմանները (միջազգային և ազգամիջյան հաղորդակցման լեզուներ, ազգի և ժողովրդի լեզուներ՝ ներառյալ նրանց հասարակական և տարածքային տարբերակները և այլն):

2. **Լեզվի արտահայտչական (էքսպրեսիվ)** գործառույթն այն է, որ նա հանդես է գալիս իբրև մտքերի արտահայտման միջոց: Արտահայտչական գործառույթը դիտվում է որպես արտահայտության և հաղորդման բովանդակություն, զգացմունքների և հույզերի միասնություն, որպես խոսողի կամքի արտահայտություն: Դա լեզվի այն ունակությունն է, որ խոսքի մեջ հանդես է գալիս որպես խոսողի զգացմունքների, հույզերի, ցանկությունների արտահայտության միջոց: Դա կատարվում է զգացական բառերի (ձայնարկություններ, վերաբերականներ), քերականական ձևերի (գրաբարյան հոլովման

կամ խոնարհման ձևեր), բառակազմական ձևույթների (փաղաքշական ածանց ունեցող բառեր), ոճական հնարների (աստիճանավորում, չափազանցություն և այլն), հնչերանգի միջոցով (բարձրացող հնչերանգ, անավարտ հնչերանգ և այլն): Լեզվական տարրերի այս հատկությունը նկատի առնելով՝ երբեմն տարբերակում են էքսպրեսիվ բառապաշար, էքսպրեսիվ ածանց, էքսպրեսիվ արտասանություն և այլ կարգի հասկացություններ:

3. Լեզվի ճանաչողական (կոգնիտիվ) գործառույթը կապվում է գիտակցության գործունեության արտահայտման հետ: Լեզուն հանդես է գալիս իբրև նյութական աշխարհի առարկաների ու երևույթների և նրանց հատկանիշների մոդել: Այնքանով որ լեզուն մարդու գիտակցության պրակտիկ, գործնական դրսևորումն է, իսկ ճանաչողությունը՝ արտաքին աշխարհի արտացոլման գործընթացը, հենց այդ պատճառով էլ լեզուն չի կարող չարտացոլել առարկայական աշխարհը: Ըմբռնել լեզվի արտացոլման գործառույթները արտաքին աշխարհի առարկաների, երևույթների և նրանց հատկանիշների նկատմամբ՝ նշանակում է հասկանալ, թե ինչպես է այդ աշխարհը արտացոլվում և կադապարվում լեզվի կառուցվածքների, այլ կերպ՝ լեզվական նշանների միջոցով: Օրինակ, բոլոր լեզուներում գոյականը հարաբերակցվում է արտաքին աշխարհի առարկայնության, բայր՝ ընթացայնության կարգերին (կատեգորիաներին), նույն լեզուներում ածականն ու մակբայը հարաբերակցում են արտաքին աշխարհի հատկանշայնության կարգին, թվականները՝ քանակայնության կարգին և այլն: Նախադասության անդամներից ենթական ու խնդիրը կադապարում են առարկաներ, ստորոգյալն ու որոշիչը ըմբռնվում են իբրև ժամանակային և արտաժամանակային հատկանիշների կադապարներ և այլն: Լեզվի գործառույթների ուսումնասիրությունը պետք է բացահայտի՝ ինչպես և ինչպիսի ճշգրտությամբ է լեզվական կառուցվածքը կադապարում առարկայական աշխարհի կառուցվածքը, այդ առումով ինչպիսի նմանություններ և տարբերություններ են ցուցաբերում տարբեր լեզուները՝ իրենց պատմական զարգացման տարբեր աստիճաններում:

4. Կուտակողական (ակումուլատիվ) գործառույթն այն է, որ լեզուն կուտակում է հասարակության պատմական փորձն ու իմացությունը, գիտության տարբեր բնագավառների նվաճումները և դրանք հաղորդում սերնդից սերունդ: Լեզվի այս գործառույթը մեծապես նպաստում է հասարակության առաջընթացին. դրա միջոցով հասարակությունը իրազեկ է դառնում նախորդ սերնդի նվաճումներին գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ և յուրացնելով այդ փորձն ու կուտակած գիտելիքները՝ շարունակում է բացահայտել բնության և հասարակության մեջ եղած առարկաների ու երևույթների ներքին կապերը: Եթե լեզուն կուտակողական գործառույթ չունենար, ապա ամեն նոր սերունդ ամեն ինչ պետք է սկսեր նորից, և, բնականաբար, մարդկային հասարակությունը զարգացում չէր ապրի:

5. **Կառուցողական (կոնստրուկտիվ) գործառույթը** լեզվի կարևոր հատկանիշներից է: Լեզուն իր այս գործառույթն իրականացնում է իբրև մտքերի ձևավորման միջոց: Լեզուն մտածողության հիմնական միջոցն է, որն ապահովում է մտքերի նյութական ձևավորումն ու տեղեկատվության փոխանակումը հանրության անդամների միջև: Մտածողությունը, բացառությամբ իր պրակտիկ-գործառական դերի, բնութագրվում է հոգեկան, հոգեբանական դերով, մինչդեռ լեզուն դիտվում է նյութական, ֆիզիկական երևույթ: Լեզուն և մտածողությունը գտնվում են անխզելի կապի մեջ. լեզուն մտածողության առարկայական-նյութական հիմքն է, մտքերի ձևավորման միջոցը, մտքերի կաղապարման նյութական կողմը: Լեզուն և մտածողությունը մասնակի դեպքերում համընկնում են, երբ լեզուն հանդես է գալիս իբրև մտքի անմիջական իրացում՝ արտահայտելով, որպես կանոն, արդեն ձևավորված միտք:

Լեզուն մտքերի կառուցմանը, ձևավորմանը մասնակցում է իր նյութական միավորումների և նրանց շարակարգային հնարավորությունների միջոցով, առավելապես լեզվական-քերականական իմաստների և նրանց արտահայտման քերականական ձևերի միջոցով:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ – Ըստ այդ սկզբունքի՝ լեզուները բաժանվում են երկու խմբի՝ կենդանի և մեռած լեզուների:

ԿԵՆԴԱՆԻ և ՄԵՌԱԾ ԼԵԶՈՒՆԵՐ - Աշխարհում կա շուրջ 5000 լեզու (դրանց հստակ թիվը հնարավոր չէ որոշել, որովհետև առանձին լեզուների և նրանց բարբառների միջև եղած տարբերությունները պայմանական են): Այդ լեզուների մի մասը կենդանի է և հաղորդակցական դեր է կատարում, մի մասն էլ գործածությունից դուրս է եկել. վերջիններս դիտվում են մեռած լեզուներ:

Կենդանի են համարվում այն լեզուները, որոնք ծառայում են տվյալ հասարակության հաղորդակցմանը՝ գրավոր թե՛ բանավոր ձևով: Այդպիսիք են ներկայումս գործածվող բազմաթիվ լեզուներ, ինչպես՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, ճապոներեն, չինարեն, հունարեն, պորտուգալերեն, արաբերեն, բենգալերեն, ֆիններեն և այլն:

Մեռած են համարվում այն լեզուները, որոնք դադարել են այս կամ այն հանրության համար հաղորդակցման միջոց լինելուց: Դրանց մասին մենք պատկերացում ենք կազմում գրավոր տեքստերի միջոցով, այդպիսի մեռած լեզուներ են հին հունարենը, հին հայերենը (գրաբարը), էտրուսկերենը, հին սլավոներենը, աքքադերենը, բաբելերենը, շումերերենը, թրակերենը, սկյութերենը և այլն: Մեռած լեզուները բաժանվում են երկու խմբի՝ բուն մեռած լեզուներ և հարաբերականորեն մեռած լեզուներ:

- **Բացարձակ մեռած լեզու** – Բացարձակ մեռած են համարվում այն լեզուները, որոնց կրող հանրությունը պատմականորեն ասպարեզից դուրս է եկել. այժմ չկան թե՛ այդ ժողովուրդները (բաբելացիներ, սկյութներ, շումերներ, աքքադացիներ, էտրուսկներ և այլն), թե՛ նրանց լեզուները (բաբելերեն, սկյութերեն, շումերերեն, աքքադերեն, էտրուսկերեն և այլն):

- **Հարաբերականորեն մեռած լեզու** - Հարաբերականորեն մեռած դիտվում են այն լեզուները, որոնց կրող հանրությունը կա, սակայն նրա լեզուն ժամանակի ընթացքում վերափոխվել է, ձեռք բերել նոր որակ, որ զգալիորեն տարբերվում է նախորդ վիճակից: Հարաբերական մեռած լեզու է գրաբարը, որը մեսրոպյան շրջանում ծառայում էր Մեծ և Փոքր Հայքի բնակչությանը՝ որպես հաղորդակցման միջոց: Գրաբարը 12-րդ դարից դուրս եկավ գործածությունից, նրան փոխարինեց միջին հայերենը: Գրաբարը, սակայն, մնաց իբրև գրավոր լեզու, իբրև եկեղեցու լեզու. հաղորդակցման առումով այն այլևս մեռած լեզու է: Հարաբերականորեն մեռած լեզու է, որովհետև այժմ այն հաղորդակցման միջոց չէ, թեպետ գրաբարը գործառվում է եկեղեցական արարողությունների ժամանակ:

ԾԻՍԱԿԱՆ ԼԵԶՈՒ - Մեռած լեզուները՝ որպես ծիսական-պաշտամունքային լեզուներ, երբեմն պահպանվում են կենդանի գործածության ձևով հազարավոր տարիների ընթացքում, ինչպես՝ դպտիերենը՝ իբրև քրիստոնյա եգիպտացիների կրոնական արարողությունների լեզու, լատիներենը՝ կաթոլիկ եկեղեցու, տիբեթերենը՝ լամայական եկեղեցիներում և այլն: Մեռած լեզուները հազվադեպ միաժամանակ կատարում են երկակի գործառույթ՝ հանդես գալով մի կողմից՝ իբրև քրմական, կաստայական դասի պաշտամունքային լեզու, մյուս կողմից՝ իբրև գրական-գեղարվեստական լեզու, ինչպիսին եղել է Հնդկաստանում սանսկրիտը հին և միջին դարերում:

Ծիսական լեզուները հատուկ են հասարակությունից մեկուսացած կրոնա-քրմական դասին. այն արտահայտվում է հասարակությանն անհասկանալի բառապաշարի առկայությամբ:

ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԼԵԶՈՒ - Աշխարհի լեզուներից մոտ երեք հարյուրն ունի գրային համակարգ և ծառայում է իբրև մասսայական հաղորդակցման միջոց, շուրջ երկու հարյուրը սպասարկում է մեկ միլիոն և ավելի բնակչություն ունեցող երկրների: Պետք է ընդգծել, որ տվյալ լեզվով խոսող մարդկանց և տվյալ ազգության ներկայացուցիչների քանակը չի համապատասխանում. դա վերաբերում է մասնավորապես անգլերենին, իսպաներենին և արաբերենին:

Սովորաբար յուրաքանչյուր լեզու՝ իբրև հաղորդակցման կարևորագույն միջոց, սպասարկում է էթնիկական որևէ հանրության: Այդպիսի ֆունկցիա ունեն՝ հայերենը՝ հայերի համար, ռուսերենը՝ ռուսների համար, անգլ-

լերենը՝ անգլիացիների համար և այլն: Սակայն տվյալ հանրությանը սպասարկող լեզուն իր բուն գործառնությունից բացի կարող է ձեռք բերել նաև լրացուցիչ, ոչ պակաս կարևոր գործառնություն: Դա այն է, որ որոշակի հանրության լեզու կարող է սպասարկել էթնիկապես տարբեր այլ հանրության: Լեզվի հասարակական-ընդհանրական դերն աճում է այն դեպքում, երբ այն ձեռք է բերում գրավոր-գրական լեզվի կարգավիճակ: Նրա տարածումն սկսում է իրականանալ ոչ միայն անմիջական հաղորդակցական կարիքների պահանջով (հիմնականում՝ առևտրական, տնտեսական, քաղաքական շփումների ճանապարհով), այլև մշակութային կապերի ընդլայնման միջոցով (գրականություն, ռադիո, հեռուստատեսություն և այլն): Լեզվի տարածվածության շրջանակների ընդլայնումը հանգեցնում է այն բանին, որ այն սկսում է կատարել լրացուցիչ գործառնություն՝ դուրս գալով էթնիկական մեկ հանրություն սպասարկելու շրջանակներից: Այդպես առաջ են գալիս ազգամիջյան հաղորդակցության և միջազգային (համաշխարհային) լեզուներ, որոնք կատարում են միջնորդ լեզվի դեր:

Ազգամիջյան է համարվում այն լեզուն, որը աշխարհագրական որոշակի տարածքում ծառայում է իբրև հաղորդակցման միջոց տարբեր ազգերի, ազգությունների և էթնիկական խմբերի համար: Աշխարհագրական միևնույն տարածք ասելով՝ նկատի ունենք այն հանգամանքը, որ որոշ ժողովուրդներ կարող են ապրել մի տարածքում և լինել հարևաններ: Ազգամիջյան լեզուների կարիքն առաջ է գալիս ժողովուրդների մշտական շփումների հետևանքով, հատկապես երբ ձևավորվում են բազմազգ պետություններ: Ազգամիջյան լեզվի կարգավիճակ ունի ռուսերենը, որով հաղորդակցվում են նախկին Խորհրդային Միության տարածքում ապրող 100-ից ավելի ազգեր: Հայերենը ազգամիջյան լեզվի դեր է կատարում Հայաստանում ապրող հայերի, հույների, հրեաների, եզդիների, ասորիների և այլոց համար, վրացերենը՝ Վրաստանում՝ վրացիների, հայերի, օսերի, աբխազների, հույների և ուրիշների համար, ուզբեկերենը՝ Ուզբեկստանում՝ ուզբեկների, ույղուրների, թաթարների, կարակալպականների, կիրգիզների, թուրքմենների, թաջիկների և ուրիշ ժողովուրդների համար: Ազգամիջյան լեզուն կարող է աշխարհագրական ավելի մեծ տարածքներ ընդգրկել՝ դուրս գալով մեկ երկրի սահմաններից. այդպիսի լեզու է անգլերենը, որը ծառայում է ոչ միայն Մեծ Բրիտանիայում, այլև Կանադայում, ԱՄՆ-ում ապրող հանրություններին: Իսպաներենն սպասարկում է Լատինական Ամերիկայի երկրների գերակշիռ մասի հանրություններին: Մուսուլմանական աշխարհում ազգամիջյան լեզվի դեր կատարում է արաբերենը և այլն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ - Ազգամիջյան լեզուներից պետք է տարբերել միջազգային լեզուները: Հին աշխարհում և միջին դարերում միջազգային լեզուներն ունեցել են տարածաշրջանային բնույթ (նրանց գործածությունը

սահմանափակվել է որևէ տարածքով, և գործածել են հասարակական որոշակի խմբեր), ունեցել են գործառական նեղ ոլորտ (հաճախ կիրառվել են գրավոր հաղորդակցման համար) և այլն: Հին Հնդկաստանում և բուդդայական երկրներում միջազգային լեզվի դեր է կատարել սանսկրիտը, Հին Արևելքի ժողովուրդների համար՝ չինարենը, Առաջավոր Ասիայի երկրներում տարբեր դարաշրջաններում գործածվել են շումերերենը և աքքադերենը: Հելլենական աշխարհում ընդհանուր լեզու էր հունարենը, Հռոմեական կայսրության տարալեզու երկրներում ընդհանուր լեզու էր լատիներենը: Միջնադարյան Եվրոպայում հին հունարենն ու լատիներենը կատարում էին միջազգային լեզուների դեր: Միջին դարերում Մերձավոր Արևելքում միջազգային լեզուների դեր են կատարել արաբերենը և պարսկերենը, սլավոնական երկրներում՝ հին սլավոներենը: Միջազգային լեզվի հավակնող լեզուն որոշվում է արտալեզվական (քաղաքական, տնտեսական, մշակութային) և լեզվական գործոններով (լեզվի գործառական ենթահամակարգերի զարգացածություն, ճյուղային տերմինաբանության առկայություն և այլն): 18-րդ դարից սկսած՝ միջազգային լեզուների գործառույթ են ձեռք բերում ֆրանսերենը, անգլերենը և գերմաներենը, 20-րդ դարում՝ ռուսերենը: Համաշխարհային լեզուների համար բնութագրական է նրանց դերի իրավական ամրակայումը, որպես «պաշտոնական» կամ «աշխատանքային լեզուներ» ընդունվելը միջազգային կազմակերպությունների կողմից (ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ): Այսպես, խոշորագույն միջազգային կառույցում՝ ՄԱԿ-ում, պաշտոնական կամ աշխատանքային լեզուներ են համարվում վեցը՝ անգլերեն, իսպաներեն, ռուսերեն, ֆրանսերեն (հնդեվրոպական լեզվաընտանիք), արաբերեն (սեմական լեզվաընտանիք), չինարեն (չին-տիբեթական լեզվաընտանիք): Այդ լեզուներն ընդգրկված են աշխարհի գրեթե բոլոր երկրների հանրակրթական դպրոցների և համալսարանների ուսումնական ծրագրերում և ուսուցանվում են որպես օտար լեզուներ:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ - Լեզուները լինում են բնական և արհեստական: Բնական լեզուները պատմականորեն ձևավորված լեզուներ են, որոնք ստեղծվել են տվյալ տարածքում ապրող ժողովուրդների կողմից և սպասարկում են նրանց: Արհեստական լեզուները նշանային համակարգեր են, որոնք ստեղծվում են այնպիսի բնագավառներում գործածվելու համար, որտեղ բնական լեզուների գործածումն անհնարին է կամ քիչ արդյունավետ: Արհեստական լեզուները տարբերակվում են ըստ մասնագիտացման, ըստ նպատակի և ըստ բնական լեզուների հետ ունեցած նմանության աստիճանների:

Ոչ մասնագիտական արհեստական լեզուներն ունեն ընդհանրական գործառույթ, բնական լեզուների նկատմամբ բնորոշվում են ամենասերտ մո-

տիկությամբ, հատուկ ստեղծվում են միջազգային հաղորդակցման նպատակով:

Միջազգային արհեստական լեզուները պայմանական լեզվական համակարգեր են. դրանք ստեղծվում են առանձին անհատների կողմից: Արհեստական լեզուների հարցը մարդկանց մտահոգել է շատ վաղուց: Դեռևս անտիկ շրջանում (մ.թ.ա. 3-2-րդ դդ.) հին հունարենի բազայի վրա արհեստական լեզու է մշակել Ալեքսանդրիայի դպրոցի նշանավոր քերական Արիստարքոսը (Դիոնիսիոս Թրակացու ուսուցիչը): Խաչակրաց արշավանքների ժամանակ աբբայուհի Հիլդարգիսը փորձել է ստեղծել արհեստական լեզու, որով պետք է հաղորդակցվեին եվրոպական պետությունների բանակները, որոնք գնում էին Երուսաղեմ՝ տիրոջ աճյունը փրկելու: Հիլդարգիսի ձեռնարկումը անհաջողության մատնվեց: Արհեստական լեզվի յուրացումը կապված է որոշակի լեզվահիմնադրության մակարդակի հետ, և զինվորների շրջանում այն հաջողություն չէր կարող ունենալ:

Արհեստական լեզուների մշակման հարցը առավել հրատապ դարձավ 17-րդ դարում, երբ աստիճանաբար սահմանափակվեցին լատիներենի գործառության շրջանակները. 1629 թ. Ռ.Դեկարտը մշակեց արհեստական լեզուների նախագծման տեսության հիմունքները: Արհեստական լեզու է ստեղծել հայագրի Պոդոս Թընկերը. այդ լեզուն, սակայն, երկար կյանք չունեցավ:

19-20-րդ դարերում ստեղծվեցին այդպիսի լեզուների հարյուրավոր նախագծեր, սակայն նրանցից քչերը իրական կյանք ունեցան:

- **Վոլապյուկ** - 19-րդ դարում առաջին արհեստական լեզուն, որը դարձավ բանավոր և գրավոր հաղորդակցման համեմատաբար տարածված միջոց, վոլապյուկն էր (ստեղծել է Բ.Մ.Շլայերը, 1879 թ., Գերմանիա): Այն պատկանում է արհեստական լեզուների խառը տեսակին. բնական լեզուների բառերը (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, լատիներեն և այլն) ձևափոխվում են և առաջին հայացքից դառնում անճանաչելի, օրինակ, անգլ. world > vol - աշխարհ, speak > pük- խոսել, լեզու (այստեղից էլ՝ volapük -վոլապյուկ *համաշխարհային լեզու* անվանումը):

- **Էսպերանտո** - Արհեստական լեզուների հաղորդակցական դերի ընդլայնման շրջանն սկսվում է «*Էսպերանտո*» լեզվով: Այն 1887թ. ստեղծել է լեհական հրեա Զամենհոֆը: Էսպերանտո նշանակում է հույս ունենալ (այսինքն՝ հույսի լեզու): Այդ լեզուն լայն տարածում ունեցավ Բուլղարիայում, Վիետնամում, Ճապոնիայում, Լեհաստանում, Սկանդինավյան երկրներում, Անգլիայում, Ռումինիայում, Չեխոսլովակիայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և Հայաստանում:

Արմատները վերցված են հնդեվրոպական լեզուներից. aktiva - ակտիվ, armi - զինել, bufedo - բուֆետ, citi - ցիտել, epoka - դարաշրջան, fero - երկաթ, floro - ծաղիկ, homo - մարդ, teatro - թատրոն, pano - հաց, rivero - գետ, tablo -

սեդան և այլն: Խոսքի մասերը ճանաչվում են ձևակազմական ցուցիչներով. եթե բառը վերջանում է օ ձայնավորով, այն գոյական է (patro - հայր, felico - երջանկություն), a ձայնավորով՝ ածական է (patra - հայրական, felica - երջանիկ), e ձայնավորով՝ մակբայ է (patre - հայրաբար, felice - երջանկորեն) և այլն:

Քերականական սեռի կարգ չկա, թեք հոլովի մեկ պարզ ձև գոյություն ունի՝ հայցական հոլով, որի ցուցիչն է -ն, մնացած հոլովների իմաստները դրսևորվում են նախդիրներով. de՝ սեռական հոլովի ցուցիչ, per՝ գործիականի, և այլն: Օրինակ, Mi skribas leteron al mian fraton - Ես նամակ եմ գրում իմ եղբայրներին:

Բառերի ձևափոխությունն ու բառակազմությունը իրականանում են կցականության սկզբունքով՝ ածանցների կամ մասնիկների միջոցով (-ar-. arbo - ծառ > arbaro անտառ, vagono - վագոն > vagonaro - գնացք, -in-. filo - տղա > filino - աղջիկ, patro - հայր > patrino - մայր, mal-. (հականիշ ածանց). bone - լավ > malbone - վատ):

Բացառություն են կազմում թվականներն ու անձնական դերանունները. unu-1, du-2, tri- 3, kvar- 4, kvin- 5, ses- 6, sep- 7, ok- 8, nay - 9, dek- 10, cent- 100, mil- 1000 և այլն, mi -ես, ci- դու, li- նա, si - նա, (իգ. սեռ), ge -նա (չեզոք սեռ), ni - մենք, vi- դուք, ili- նրանք:

Բայական անդեմ և հարացուցային ձևերը նույնպես դրսևորվում են ցուցիչներով. -i (labori - աշխատել, legi - կարդալ), -u՝ հրամայական եղանակ (legu՝ - կարդա՛, li skribu՝ leteron - թող նա նամակ գրի), -us՝ ստորադասական եղանակ (Mi legus, se mi havus tempon - Ես կկարդայի, եթե ժամանակ ունենայի), բայի ժամանակային ձևերը կազմվում են -as, -is, -os մասնիկներով (laboras - աշխատում եմ, laboris - աշխատել եմ, laboros - աշխատելու եմ): Բայի դեմքը և թիվը կազմվում են վերլուծական ձևով. խոնարհված ձևերին ավելանում են անձնական դերանուններ. mi legas - կարդում եմ, ci legas - կարդում եմ, li (si, ge) legas - կարդում է (Վ.Ի. Կոդուխով) :

-Ալգոլ - 1960 թ. Փարիզում միջազգային գիտաժողովն ընդունեց *ալգոլ* արհեստական լեզուն: *Ալգոլ* անվանումը հապավումն է Algorithmic language բառակապակցության. ալգորիթմ նշանակում է «առաջադրանքի լուծման քայլերի հաջորդականություն»: Ալգոլը կազմված է լատինական տառերից, արաբական թվային համակարգից, ճշգրիտ նշաններից (սիմվոլներ, գործողության նշաններ, անջատման և միացման նշաններ, փակագծեր և այլն), աղյուսակներից, որոշակի քանակով սպասարկու բառերից (անգլերեն):

Արհեստական լեզուները, թեև կառուցված են տրամաբանական սկզբունքով, այնուամենայնիվ երկար կյանք չունեն. նրանք չեն կարող կատարել մարդկային բնական լեզվին հատուկ բազմագործառույթ դերը. նրանց դերը միայն հաղորդակցման օժանդակ լեզվամիջոց լինելն է:

ԲՆԱԿԱՆ ԼԵԶՈՒ – Բնական լեզվի ծագումն ու գոյությունը անքակտելիորեն կապված են մարդ արարծի՝ homo sapiens-ի առաջացման հետ:

Լեզու տերմինն ունի միայնց փոխկապակցված երկու նշանակություն. ա) ընդհանրապես լեզու՝ որպես որոշակի նշանային համակարգ և բ) կոնկրետ լեզու՝ որպես էթնոսի, ժողովրդի, ազգի հաղորդակցության գործիք, որ իրացվում է որոշակի հանրության կողմից, որոշակի ժամանակահատվածում և որոշակի տարածքում: Առաջին նշանակությամբ՝ լեզուն վերացական պատկերացում է տալիս մարդկային լեզվի վերաբերյալ, երկրորդ նշանակությամբ՝ լեզուն իրացվում է որպես լեզվի բազմաթիվ դրսևորումներից մեկը:

Բնական լեզուն (ի հակադրություն արհեստական և կենդանական լեզուների) հատուկ է որոշակի հանրության, որ օժտված է որոշակի լեզվամտածողությամբ, և ծառայում է նրան որպես կենդանի հաղորդակցության գործիք: Մադկային բանականության զարգացման որոշակի փուլում գիտակցությունը ստեղծել, ձևավորել է որոշակի լեզվամտածողական կադապարներ, որոնք արտացոլում են օբյեկտիվ ռեալության իրերը, երևույթներն ու նրանց հատկանիշները: Բնական լեզվի կադապարները *լեզվական նշաններն են*, որոնք, տարաբնույթ դրսևորումներով հանդերձ, ներկայանում են իբրև համակարգ՝ լեզվական համակարգ: Որոշակի լեզվի բնորոշ է որոշակի նշանային համակարգ. այդ նշանները տարբեր լեզուներում տարբեր են, քանի որ յուրաքանչյուր լեզու ունի իր նշանային համակարգը: *Բնական լեզվի նշանները* սահմանափակվում են գործածողների քանակով և կիրառության տարածքով. որևէ լեզվի նշաններ անհասկանալի են այլ նշաններ գործածող լեզվակիրների. հետևաբար կարելի է ասել՝ բնական լեզվի նշանները պայմանական են և արհեստական: Մինչդեռ *բնական նշանները* հասկանալի են համայն մարդկությանը՝ անկախ նրանց *լեզվական նշանային* համակարգերից, ինչպես՝ *արևը* (որպես լույսի աղբյուր), *ջրվեժը* (որպես բարձունքից թավոդ ջրի շառաչուն հոսանք), *անձրևը* (որպես ջրի կաթիլների տեսքով տեղումների տեսակ), *ձյունը* (որպես որպես ձմեռ եղանակի դրսևորում) և այլն: Ինչպես նշեցինք, յուրաքանչյուր լեզվի նշաններ (բառեր, բառակապակցություններ, նախադասություններ) հասկանալի են միայն տվյալ լեզվակիր հանրությանը, քանի որ լեզվական նշանների ձևն ու բովանդակությունը (ճանաչողական, հաղորդակցական, արտահայտման և այլ գործառնություններով), ընդհանրացնում են հասարակական և անհատական փորձի արդյունքները և դրանք ժառանգաբար հաղորդում սերնդից սերունդ:

Բնական համարվող բոլոր լեզուների իմաստակիր ձևությունները՝ արտահայտության և բովանդակության պլաններով հանդերձ, նախապես եղել են *պայմանական անվանումներ*, որոնց բովանդակային կողմը ժամանակի

ընթացքում կայունացել է՝ հիմքում ունենալով տվյալ հանրության կենսափորձը՝ արտացոլված լեզվի մեջ:

Բնական լեզուն կողմնորոշված ձևով պահպանում է տեղեկությունն ու այն հաղորդում, փոխանցում հաջորդ սերունդներին. դա բնական լեզվի ժառանգականության գործառույթն է: Բնական լեզվի ժառանգականությունն արտացոլված է հանրության գիտակցության ծածկագրերում, որոնք բացահայտվում են գիտակցության աստիճանական ձևավորման հետ միաժամանակ. դա *գենային ինժեներիայի* ուսումնասիրության առարկան է: Բնական լեզուն գաղտնագրված ծածկագիր է, որ բացահայտվում է, ինչպես նշեցինք, գիտակցության ձևավորման հետ: Բնական լեզվի ծածկագրի առավելությունն այն է, որ այդ ծածկագիրը լիովին բացվում և դրսևորվում է տվյալ լեզուն կրող հանրության սերնդի գիտակցության մեջ: Փորձով ապացուցված է, որ գենային-լեզվական որոշակի ծածկագիր կրող երեխան այլ լեզվական միջավայրում լիովին չի կարող իր ընդունակությունները դրսևորել, քանի որ այլ է նրա լեզվական ծածկագրի քարտեզը: Հետևաբար, բնական լեզուն որոշակի լեզվական ծածկագիր ունեցող հանրության գիտակցության արտացոլումն է՝ համապատասխան լեզվական կադապարներով: Բնական լեզուները, ինչպես բնական կենդանի օրգանիզմները, ենթարկվում են բնական օրգանիզմների զարգացման օրինաչափություններին. լեզվի զարգացման օրենքներն ունեն օբյեկտիվ բնույթ և գործում են հանրության կամքից անկախ, թեև լեզվի զարգացման մեջ հանրության գործոնը կարևոր դեր ունի: Հանրության զարգացման մակարդակը պայմանավորում է նաև լեզվի զարգացման մակարդակը՝ մասնավորապես բառային կազմի հարստացման հարցում: Թեև բնական լեզուն ընդհանուր է նրանով խոսող հանրության համար, այնուամենայնիվ ունի տարբերակներ, որոնք սպասարկում են որևէ տարածքի բնակչության (տարածքային տարբերակներ), հասարակական որևէ խմբավորման (հասարակական տարբերակներ), գործառական որևէ ոլորտի (գործառական տարբերակներ) և այլն: (Տե՛ս **Լեզու և հասարակություն** բառահոդվածը):

Բնական լեզուները ապրում են լեզվական միավորների փոփոխության գործընթաց, որ արձանագրվում է ինչպես քանակական կուտակումների, այնպես էլ որակական փոփոխությունների ձևով: Լեզվի ընդերքում արձանագրվող որակական փոփոխությունները հանգեցնում են լեզվական գոյավիճակների հերթագայության, որով պայմանավորված են լեզվական գոյավիճակների սահմանները: Օրինակ, հայերենի զարգացման գոյավիճակները՝ գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար, հետևանք են լեզվական համակարգում արձանագրված որակական փոփոխությունների: Բնական լեզվի զարգացումն անընդհատ շարունակվող գործընթաց է. զարգացած լեզուն բնորոշվում է պարզ լեզվական ձևերի առկայությամբ, պարզ քերական-

նական կառուցվածքով, որոնք բավարարում են քաղաքակրթության արդի մակարդակի հաղորդակցական պահանջները:

Բնական լեզուներն ուղեկցում են դրանք կրող հանրությանը նրա պատմական գոյության ողջ ընթացքում, թեև, ինչպես նշել ենք, կարող են ենթարկվել որակական փոփոխությունների՝ չդադարելով ծառայել նրանց իբրև հաղորդակցության կենդանի գործիք: Բնական լեզուները կարող են նաև անհետանալ ասպարեզից և դադարել հաղորդակցության միջոց լինելուց, եթե պատմության երեսից վերանում, անհետանում է նրանով խոսող հանրությունը: Այդպես անհետացել են բաբելացիները, աքքադացիները, շումերները և, բնականաբար, վերացել են նաև նրանց լեզուները՝ բաբելերենը, աքքադերենը, շումերերենը և այլն:

ՏՈՀՄԱՅԻՆ ԼԵԶՈՒ- Այն սպասարկում է որոշակի տարածքում ապրող հասարակական միավորի՝ տոհմի: Հատուկ է եղել տոհմատիրական հասարակարգին, որի ժամանակ յուրաքանչյուր տոհմային միավոր ունեցել է իր սեփական լեզուն՝ հասկանալի միայն տվյալ տոհմի անդամներին: Տոհմային լեզուն պարզունակ լեզու է՝ ցածր հասարակական կյանքով ապրող միավորի լեզու, աղքատ բառային կազմով և քերականական կառուցվածքով:

ՑԵՂԱՅԻՆ ԼԵԶՈՒ- Տոհմից ցեղի անցնելու ընթացքում ձևավորվում և առանձնանում են ցեղային լեզուները, որոնք այս դեպքում սպասարկում են տվյալ ցեղի անդամներին և մնում են դարձյալ մեկուսի ու առանձնացած մյուս ցեղային լեզուներից: Ցեղերի զարգացման վաղ շրջանի ազգագրական օրինակներ են եղել ավստրալիական բնիկները, ավելի ուշ շրջանում՝ Հյուսիսամերիկյան հնդկացիական ցեղերը. վերջիններիս ցեղախմբերի լեզուներից են *ապաչի, նավահո, մեսկալերո, հիկարիլլա* և այլն (Արիզոնա, Օկլահոմա, Նյու Մեքսիկո նահանգներում): Զիլիի հնդկացիական ցեղերի լեզուներն են՝ տուպի-գուարանի, այմարա, արաուկանյան, Պերուի և Կոլումբիայի հնդկացիների լեզուները՝ արավակյան, պանո և այլն:

Ցեղային լեզուներն առավել տարածված են օվկիանոսային կղզիներում, որոնց անջրպետված են միմյանցից, իսկ նրանց բնակիչները կտրված են քաղաքակիրթ հանրություններից, հետևաբար այդ կարգի լեզուները մնում են պարզունակ մակարդակի վրա՝ զրկված զարգացման հեռանկարից:

ԷԹՆԻԿԱԿԱՆ ԼԵԶՈՒ – Այդ կարգի լեզուները սպասարկում են էթնիկական որևէ խմբի և, որպես առանձին լեզուներ, հաղորդակցական գործիք են դառնում տվյալ էթնիկական միավորի (հանրության) համար: Էթնիկական լեզուները ձևավորվում են տվյալ էթնոսի ձևավորմանը զուգընթաց և էթնոսի հասարակական-քաղաքական կյանքում կարևոր դեր

ստանձնում՝ ոչ միայն որպես հաղորդակցման միջոց, այլև վարչա-կառավարական ապարատի պաշտոնական լեզու: Օրինակ, հայկական էթնոսի կազմավորման հիմքում ընկած է *հայասա* էթնիկական միավորի լեզուն, որ էթնոսի զարգացման աստիճաններով վերակազմավորվելով՝ հասել է զարգացման բարձր մակարդակի:

ՄԻՋՑԵՂԱՅԻՆ ԼԵԶՈՒ – Այդ կարգի լեզուները գործածվում են բազմացել հասարակությունների միջավայրում: Այդպիսի հասարակություններում ուժեղ ցեղի լեզուն դառնում է մյուս ցեղային լեզուների նկատմամբ իշխող և գործածվում է որպես միջցեղային հաղորդակցման գործիք:

ՄԻՋԷԹՆԻԿԱԿԱՆ ԼԵԶՈՒ - Միջէթնիկական լեզուները սպասարկում են էթնիկական այնպիսի հանրության, որ սովորաբար միատարր չի լինում, քանի որ էթնոսն ինքնին, ըստ էության, միատարր չի լինում, հետևաբար միջէթնիկական լեզուները յուրահատուկ «ազգամիջյան» լեզվի դեր են կատարում: Էթնոսը ձևավորված կայուն հասարակական միություն է, որ միահյուսում է ցեղի, ժողովրդի և ազգի հատկանիշներ: *Էթնիկական հանրություն* եզրույթը մոտ է *ժողովուրդ* հասկացությանը. երբեմն այն նշանակում է տարբեր *ժողովուրդների միություն*: Գոյություն ունեն *էթնոլեզվաբանական խմբեր*, օրինակ՝ ռուսները, ուկրաինացիները և լեհերը միասին կազմում են Սլավոնական էթնիկական միությունը, որի ներսում միջէթնիկական լեզվի դեր է կատարում *ռուսերենը*: Կամ՝ Դադստանում խոսում են քառասունից ավելի լեզուներով, սակայն որոշ էթնիկական միավորների համար միջէթնիկական լեզվի դեր է կատարում *ավարերենը*:

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ԼԵԶՈՒ	Տե՛ս Լեզվի տարբերակներն ըստ գործածության բառահոդվածը:
---	--

ՓՈԽԱՏՈՒ ԼԵԶՈՒ – Փոխատու համարվում են այն լեզուները, որոնց բառային կազմի որոշ միավորներ անցնում են այլ լեզուների՝ պայմանավորված գրական-մշակութային, տնտեսական, քաղաքական, ռազմական, դիվանագիտական և այլ խողովակներով: Փոխատու լեզվին անցած լեզվական միավորները համարվում են փոխառյալ բառեր: Փոխառյալ բառերը հայերենում զգալի տոկոս են կազմում. հայերենի բառային կազմի հարստացման հարցում փոխատու լեզուներ են համարվում իրանական լեզուները, արաբերենը, հունարենը և եվրոպական լեզուները:

Հմմտ. *իրանական*՝ հրեշտակ, հրաման, հրապարակ, հրավեր, հրաժեշտ, պատգամ, պատասխան, պատմուճան, պատգարակ, պատնեշ, պատուհաս, պատկեր, պարեգոտ, պարտեզ, պարս, պարզ, պարսիկ, պարկեշտ, բանակ, նիզակ, աշխարհ, իշխան և այլն,

- *ասորական*՝ արեղա, ծով, սատանա, քահանա, քարոզ, քուրմ, խանութ, շղթա, կաթսա, ծնծղա, մանանա և այլն,

- *հունական*՝ ադամանդ, ամբիոն, ափսե, բաղանիք, բեմ, բյուրեղ, դափնի, հոետոր, մանյակ, մեղեդի, նեկտար, սաղմոս, կանթեղ, կրկես, հերետիկոս, մարտիրոս, եկեղեցի, մյուռոն, եպիսկոպոս, սիմֆոնիա, կաթողիկոս, մաթեմատիկոս և այլն,

- *արաբական*՝ ատլաս, բալասան, թաս, խումար, խսիր, կավատ, կողպեք, հաշիշ, սնդուկ, նոպա, գազար, քիմիա և այլն,

- *ֆրանսերեն* - գունդստար, մարաջախտ, մարկիզ, պատրոն, վերնիսած, էրմիտաժ, գարաժ, բալետ, սկանդալ, ռեստորան, պարտեր, ժելե, էսքիզ և այլն,

- *իտալերեն* - բարոկկո, պապարացցի, կոնսերվատորիա, կվարտետ, կապիտան, դուետ,

- *գերմաներեն* - մաուզեր, կրախ, կայզեր, ռենտգեն, տուրնիր, բալետ-մայստեր, գրոսմայստեր, կարատ,

- *անգլերեն* - մետրո, լաուրեատ, սիմվոլ, սլենգ, սլայդ, սկաներ, սպիդ, ռեյտինգ, դերբի,

- *լատիներեն* - կարդինալ, ռեկտոր, պունկցիա, ինֆարկտ, իյուզիա, վիրուս, գեներալ, գեներալիսիմուս, հունվար, փետրվար, մարտ... դեկտեմբեր և այլն:

ՓՈԽԱՌՈՒ ԼԵՁՈՒ – Փոխառու են համարվում այն լեզուները, որոնք որևէ այլ լեզվից փոխ են առնում բառեր (կամ բառակազմական կաղապարներ): Փոխառու լեզուներն անմիջական հարաբերության մեջ են գտնվում փոխատու լեզուների հետ. փոխատու լեզվի բառային միավորներն անցնում են փոխառու լեզվին: Այսպես, եվրոպական բոլոր լեզուներում ամսանունները լատինական փոխառություններ են (հնչյունական որոշակի փոփոխություններով): Հմմտ. հունվար – январь - January, փետրվար – феврал - February, մարտ – март - March..., հոկտեմբեր – октябрь – October, նոյեմբեր – ноябрь – November, դեկտեմբեր – декабрь – December: Տվյալ դեպքում, ամսանունների փոխառության պարագային, հայերենը, ռուսերենը և անգլերենը համարվում են փոխառու լեզուներ:

Լեզվաբանական գրականության մեջ *փոխատու լեզու* բաղադրյալ եզրությին համարժեք է *լեզու-աղբյուր* հասկացությունը, որ նշանակում է այնպիսի լեզու, որից իրականացվում է թարգմանություն որևէ այլ լեզվի (օրինակ՝ Դ.Թրակացու «Արվեստ քերականության» աշխատության հայերեն թարգմանության *աղբյուր լեզու* է հին հունարենը):

ՄԻՋՆՈՐ ԼԵՁՈՒ - Միջնորդ լեզուները տարբեր կարգի մեկնաբանություններ ունեն:

1. Միջնորդ լեզուները ծառայում են մեկ լեզվի բառային միավորների փոխանցմանը մեկ այլ լեզվի. այսինքն՝ մեկ լեզու բառային փոխառություն է կատարում երկրորդ լեզվից մեկ այլ՝ երրորդ լեզվի միջոցով:

Այսպես, ռուսերենի միջոցով հայերենին են անցել նոր և նորագույն փոխառություններ *լատիներենից*՝ ատեստատ, ակվարիում, աբիտուրիենտ, աբսուրդ, անգինա, դոմինո, ասիստենտ, դոցենտ, գեներալիսսիմուս, գեներալ, ինֆարկտ, մայոր, մաքսիմում, մինիմում, լաբորանտ, օպտիմիստ, դուետ, կվարտետ, կվինտետ, ռադիո, *հունարենից*՝ աթեիստ, ատոմ, բազիս, դրամա, լիրիկա, դիպլոմ, եպիսկոպոս, միկրոսկոպ, մակրոսկոպ, տելեսկոպ, դիագնոզ, դիագնոստիկա, պրոգնոզ, դեկան, կոսմետիկա, ֆանտազիա, թերմոս, մորֆի, հարմոնիա, ուտոպիա, քրեստոմատիա, *ֆրանսերենից*՝ ավանգարդ, բյուրո, բալետ, շանտաժ, գարաժ, տաքսի, պարտիզան, մարկիզ, վերնիսաժ, էտյուդ, ժեստ, կասկադ, ավանտյուրա, շովինիստ, վամպիր, պիժոն, կասկադ, էրմիտաժ, *անգլերենից*՝ դերբի, բասկետբոլ, բոյկոտ, թենիս, հումոր, չեմպիոն, ռեկորդ, տրամվայ, մետրո, ֆուտբոլ, սպորտ, սպորտսմեն, բիզնես, լորդ, կարդինալ, ջենտլմեն, փիար, *գերմաներենից*՝ այսբերգ, բունկեր, գրոս-մայստեր, լոգունգ, շտրիխ, վագոն, ցայտնոտ, ցինկ, վանդալ, կանցլեր, վունդերքինդ, տուրնիր, մելիսիր, *իտալերենից*՝ պապարացցի, բարոկկո, կատակոմբա, կոնսերվատորիա, կոնտոլ (գոնդոլ) և այլն:

Փոխառությունները, «հանգրվանելով» միջնորդ լեզվում, կարող են ենթարկվել նրա հնչյունական ազդեցությանը: Օրինակ՝ արաբերեն *բուրջ*, *ջունդի*, *թաջ* բառերը ենթարկվել են պարսկերենի հնչյունական օրենքներին՝ հայերենին անցնելով *բուրգ*, *թագ*, *գոհար* ձևով:

2. Միջնորդ են համարվում նաև այն լեզուները, որոնք սպասարկում են աշխարհագրական միևնույն տարածքում ապրող տարբեր լեզվակիր հանրությունների՝ որպես հաղորդակցման միջոց: Այդպիսի դեր ունեն *ազգամիջյան լեզուները* (լատիներենը՝ Հռոմեական կայսրության ներքո գտնվող տարբեր ժողովուրդներին մ.թ.ա. 1-ին դարում, ռուսերենը՝ նախկին ԽՍՀՄ-ի տարածքի ժողովուրդներին, արաբերենը՝ մահմեդական աշխարհի տարբեր հանրություններին), *միջազգային լեզուները*՝ անկախ աշխարհագրական տարածքներից (անգլերեն, իսպաներեն, ռուսերեն, ֆրանսերեն և այլն):

3. Միջնորդ լեզուները ծառայում են իբրև թարգմանության լեզու՝ մի լեզվի բնագիրը երրորդ լեզվին փոխանցելու համար: Օրինակ՝ Գ. Մարկետը «Հարյուր տարվա մենություն» վեպը գրել է իսպաներենով, Ռ.Հովսեփյանն այն հայերեն է թարգմանել ռուսերենից. հետևաբար ռուսերենը, տվյալ դեպքում, համարվում է միջնորդ լեզու: Այս մարզում միջնորդ լեզուն մեկ այլ գործառույթ էլ ունի. հնարավոր է միջնորդ լեզվի օգնությամբ վերականգնել մայր լեզվի կորած բնագիրը: Հին հուներեն որոշ փիլիսոփայական գործեր, որոնք ժամանակին թարգմանվել են հին հայերենով, ժամանակի ընթացքում

կորել են, և այդ բնագրերը հունարեն են թարգմանել հին հայերենի միջոցով՝ վերականգնելով մայր լեզվի բնագիրը: Հին հունարեն – հին հայերեն – հունարեն թարգմանական շղթայում հին հայերենը համարվում է միջնորդ լեզու: Նույնը վերաբերում է Աստվածաշնչի թարգմանության լեզվին, եթե այն չի թարգմանվել հին հունարեն, ասորերեն կամ եբրայերեն բնագրերից, այլ թարգմանության լեզու է եղել ժամանակակից եվրոպական լեզուներից որևէ մեկը:

4. Միջնորդ լեզուն կարող է ծառայել իբրև ուսուցման լեզու, երբ, օրինակ, ոչ հայախոս ուսանողներին հայերեն են սովորեցնում ռուսերենով կամ անգլերենով:

5. Միջնորդ լեզուն կարող է հանդես իբրև գիտության լեզու, ինչպես լատիներենը բժշկության բնագավառում՝ որպես դեղատոմսերի գրության կամ գիտաժողովների աշխատանքային լեզու: Միջնորդ լեզվով կարելի է ներկայացնել որևէ այլ լեզվի քերականություն՝ անկախ հեղինակի լեզվական պատկանելությունից: Այդպես Յոհան Շրյոդերը և Հակոբ Վիլտոր 18-րդ դարում հին հայերենի քերականությունը Եվրոպայի գիտական հանրությանը ներկայացրել են լատիներենով:

ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ – Տվյալ երկրի, պետության սահմաններում ճանաչում գտած և պաշտոնապես ընդունված լեզուն է, որ սպասարկում է տվյալ տարածքում ապրող հանրությանը և պետական կառավարման մարմիններին: Պետական լեզուն պարտադիր է ոչ միայն տվյալ երկրի ազգային մեծամասնության համար, այլև այդ պետության մեջ ապրող ազգային փոքրամասնությունների համար: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում պետական լեզու է համարվում *հայերենը*, որ պարտադիր հաղորդակցական լեզու է Հայաստանում ապրող հայության համար, միաժամանակ հայերենը պետական լեզու է նաև Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների՝ հրեական, գերմանական, եզդիական, հունական, ասորական և այլ համայքների համար, թեև դրանցից յուրաքանչյուրն ունի իր ազգային լեզուն: Պետական լեզվի կարգավիճակն ամրագրվում է տվյալ պետության սահմանադրությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼԵԶՈՒ– Այն առանձնացվում է գործառական հիմունքով, որ իբրև հաղորդակցության գործիք կիրառում են տարբեր լեզվակիր միավորումներ: Աշխատանքային լեզուն պարտադիր ընդունվում կամ ճանաչում է ստանում միջազգային կազմակերպություններում: Օրինակ, ՄԱԿ-ի անդամ պետությունների համաժողովներում աշխատանքային լեզուներ են համարվում անգլերենը, իսպաներենը, ռուսերենը, ֆրանսերենը, չինարենը, արաբերենը, որոնք այլ կերպ կոչվում են նաև *միջազգային լեզուներ*: (Տե՛ս *Միջազգային լեզուներ* բառահոդվածը):

Աշխատանքային լեզուներ կարող են ընտրվել միջազգային գիտաժողովների և կոնֆերանսների ժամանակ, երբ տվյալ ֆորումին մասնակից անդամներից մեկի կամ երկուսի լեզուն ընտրվում են որպես ընդհանուր հաղորդակցության միջոց:

ՏՈՏԱԼԻՏԱՐ ԼԵԶՈՒ – Տոտալիտար (փակ) հասարակության գաղափարախոսական կորպուս, որ դիտարկվում է որպես ամբողջական լեզվամշակութային երևույթ: Տոտալիտար լեզուն ըմբռնվում է որպես տոտալիտար հասարակական կացութաձևի քաղաքական դիրքերից մտածված ազդեցությունն ազգային լեզվի բառիմաստաբանական մակարդակի վրա, որ սահմանում է տոտալիտար գաղափարախոսության վերահսկողություն՝ թափանցելով կյանքի բոլոր ոլորտներն ու բնագավառները: 20-րդ դարի առաջին կեսին խորհրդային երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, տոտալիտար լեզու ձևավորվեց ստալինյան դարաշրջանում:

Տոտալիտար լեզուն ընդհանուր գծերով կյանքի բոլոր ոլորտների քաղաքականացումն է, այն հաղորդակցման ընդունված ոճ է, առանձին գաղափարների և անհատի պաշտամունք, կոլեկտիվ հայացքների առաջնություն, տարածության նեղացում կամ սահմանափակում, սոցիալիզմի թշնամիների դեմ պայքարի պաթոս, ժողովրդի թշնամիների որս և այլն: Տոտալիտար լեզվի միավորներ են համարվում՝ *գաղափարանիշ բառերը* (սովետիզմ, կոմունիզմ), *այդ բնույթի կայուն կապակցությունները* (ժողովրդի թշնամի, ժողովուրդների հայր, ժողովրդական զանգվածներ, սոցիալիստական աշխատանքի հարվածային), *կոչերը* (Հնգամյակը երեք տարում: Մաքրել երկիրը ժողովրդի թշնամիներից), ամբողջական *բնագրերը* (օրինակ՝ Ն. Ջարյանի «Հացավան» վեպը, Մ.Շոլոխովի «Հերկած խոպան» վեպը), *ժանրերն և կոմունիստական իրադարձությունները* (արտադրական բնույթի վեպեր, կուսկազմակերպության և բյուրոյի նիստեր) և այլն:

Տոտալիտար լեզուն համարվում է իր ժամանակի մշակույթի հզոր շերտ, տոտալիտարիզմի գաղափարախոսության լեզվական պատճեն, որ տիրապետել էր շատերի գիտակցությանը, և որը, մյուս կողմից, տեղ չէր գտել շատերի գիտակցության մեջ:

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՈՒ - Օժանդակ լեզու, որ այլ կերպ կոչվում է նաև *նշանների* կամ *ժեստերի լեզու*. գործածվում է որպես հաղորդակցության լրացուցիչ միջոց, ունի որոշակի բաղադրիչներ, որոնք մտնում են հարալեզվական միջոցների շարքը: Շարժումների լեզուն պայմանական նշանների համակարգ է, որ գործածվում է հնչյունական լեզվի փոխարեն, երբեմն էլ՝ նրա հետ միասին:

Նշանների լեզուն գործածվում է՝ ելնելով տարբեր պահանջներից.

Խուլ ու համրերի համար գործածվում է *տեսողական նշանների* լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց. այդ լեզվի նշանային համակարգի բաղադրիչներ են համարվում՝ դիմախաղը, մարմնի տարբեր մասերի շարժումները (գլխի՝ ձեռքերի շարժումները, թևերի տարածումը, ձեռքի մատերի զանազան շարժումները, աչքերի խաղը և այլն):

Մարմնի միևնույն մասի տարատեսակ շարժումները կարող են տարբեր իմաստներ արտահայտել. օրինակ՝ *ձեռքի* համապատասխան շարժումները կարող են նշանակել՝ 1. մոտ կանչել, 2. հեռացնել, 3. մի բան հարցնել, 4. թեականություն արտահայտել, 5. սպառնալ, 6. կասեցնել և այլն: Մարմնի մասերի զուգակցված շարժումները կարող են մեկից ավելի իմաստներ արտահայտել, օրինակ՝ *ձեռքը գլխի հետ*՝ 1. սրտաբաց դիմավորել, 2. գլխում բան չլինել, 3. գլխում անսպառ պաշար լինել և այլն:

Տեսողական նշանների որոշ բաղադրիչներ գործածական են նաև հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում, ինչպես՝ ծովագնացության մեջ, օդանավակայաններում, երկաթուղային կայարաններում կամ պատերազմական իրավիճակներում՝ *դրոշակների լեզուն*, երաժշտական խմբավարների և ճանապարհային ուսուցիկների ձեռքում՝ կարգավորող *փայտիկների լեզուն* և այլն:

Հարալեզվական այս միավորները համարվում են ոչ բանավոր հաղորդակցության բաղադրիչներ և դիտվում են իբրև լրացուցիչ տեղեկության աղբյուր բանավոր հաղորդակցության ֆոնին:

Ժամանակին Ն.Մառը առաջ էր քաշել *ձեռք լեզվի* գաղափարը՝ որպես լեզվական հաղորդակցության նախնական փուլի դրսևորում: *Ձեռք լեզվի* գաղափարը լիովին բավարարում է շարժումների լեզվի պահանջները:

ՄԻԱՅՆԱԿ ԼԵԶՈՒ – Միայնակ կամ մեկուսի են համարվում այն լեզուները, որոնք որևէ հատկանիշով չեն բավարարում լեզուների ծագմանաբանական դասակարգման չափանիշներին և դուրս են մնում լեզվաընտանիքներից:

Միայնակ լեզուները հարևան լեզուներից անջրպետված են լինում որոշակի տարածությամբ և շփումներ չունեն այլ լեզուների հետ: Օրինակ, ԱՄՆ-ի Մեծ հարթավայրը (պրերիան) բաժանում է արևելքի անտառներում բնակվող հնդկացիներին նրանցից, ովքեր բնակվում են հարավ-արևմուտքում: Այդ պատճառով էլ արևելքի հնդկացիների *իրոկեզյան լեզուն* ամեննին նման չէ հարավային հնդկացիների *հոպի լեզվին*: Եվ դա բնական է. սակայն այդ նույնը չի կարելի ասել հնդկացիական *զունի լեզվի* մասին, որով խոսող հնդկացիները անհաղթահարելի խոչընդոտներ չունեն *հոպի լեզվով* խոսող հնդկացիների հետ: Հնդկացիական այդ երկու ցեղերի բնակավայրերը միմյանցից անջրպետված են ոչ ընդարձակ բաց տարածությամբ. Անուամենայնիվ *զունի լեզուն* համարվում է միայնակ լեզու:

Աշխարհի հազարավոր լեզուների շարքում միայնակ լեզուներ են համարվում՝ *այնու լեզուն, ճապոներենը, կորեերենը, քասկերենը* (կենդանի լեզուներ) և *վերջիկերենը, ուրարտերենը, էլամերենը, էտրուսկերենը* (մեռած լեզուներ):

ՎԱՆԿԱՅԻՆ ԼԵԶՈՒ - Լեզուներ, որոնց հնչյունական համակարգում հիմնական միավոր է համարվում վանկը: Այդպիսի համակարգեր ունեն չինարենը, Հարավ-արևմտյան Ասիայի լեզուները: Վանկային լեզուներում վանկերն ունեն պարզ կառուցվածք: Վանկի հնչյունների առավելագույն կազմը ներկայանում է *քաղաձայն + (քաղաձայնական խումբ) + կիսաձայն հնչյուն (ձայնորդ) + ձայնավոր + պայթական* բաղադրիչներով: Այդպիսի լեզուներում, որպես կանոն, ձևայինների և վանկերի սահմանները համընկնում են, այդ պատճառով ձևային նշանակիչը հնչյունաբանորեն չի կարող վանկից կարճ լինել, մյուս կողմից՝ վանկի սահմանները չեն կարող գերազանցել ձևային սահմաններին: Հմմտ. հետևյալ հատկանունների վանկա-ձևային սահմանները. *Կուն Ֆու Յու, Կիմ Չեն Ըն, Հո Շի Մին, Մա Յու Մո Տո, Հա Ջի Վոն* և այլն:

Վանկի ներսում հնարավոր չէ առանձնացնել ձևային սահմանը, և վանկը, որպես նվազագույն միավոր, անհրաժեշտ է ձևային(ներ)ը կազմավորելու համար: Այդ գործոնով պայմանավորված՝ վանկը դառնում է ձևային գույքավորող հնչյունական միավոր: Միաժամանակ, վանկի ներսում առկա է ձևաբանական (ոչ ձևային) սահման. վանկի ներսում կարելի է ցույց տալ ձևաբանական հերթագայություններ, ածանցներ՝ փոփոխական բաղադրիչներով, մասնակի կրկնություններ և այլն: Օրինակ, բիրմայերեն՝ *pji* - լրիվ լինել, *p'ji* - լրանալ, ամբողջանալ (ձևաբանական հերթագայություն), վիետնամերեն՝ *sách* - գիրք, *sách siêc* - գրքույկ, *bát* - գավաթ, *bát biêc* - գավաթիկ (ածանց՝ սկզբնական բաղաձայնի փոփոխությամբ): Այս հանգամանքը հնարավորություն է տալիս վանկի կառուցվածքում առանձնացնել երկու հիմնական բաղադրիչ՝ *վանկի սկիզբ* (սկզբնական բաղաձայն, երբեմն՝ ձայնորդների խումբ) և *ավարտ* (վանկի մնացած ամբողջ մասը): Վանկային լեզուներում վանկի ավարտը սովորաբար ունենում է տարբերակներ, ինչպես նաև տևականություն՝ անկախ վանկի հնչյունական կառուցվածքից: Ավարտի բարդ կառուցվածքի դեպքում առանձնացնում են ավելի փոքր մակարդակի միավորներ և այլն: (Ըստ ՄԾԸ - ի):

Վանկային լեզուների մեջ առանձնանում են այն լեզուները, որոնց գրային համակարգում յուրաքանչյուր վանկ ունի իրեն հատուկ գրային նշան (կամ տառ): Այդպիսի լեզու է Հյուսիսամերիկյան հնդկացիական *չե-րոկի ցեղի լեզուն* (Օկլահոմա նահանգ): Հնդկացի *Սեքվոյան* 1829-1830 թթ. չերոկի ցեղի լեզվի համար ստեղծում է այբուբեն, որտեղ լեզվի յուրաքանչյուր վանկի հատկացնում է մեկ գրանշան: Գրության այդ համակարգը

ծառայում է ոչ միայն չերոկի ցեղին, այլև հարևան հնդկացիական չոկտավների և կրիկների ցեղերին՝ որպես այբուբեն:

Չերոկի ցեղի վանկային այբուբենը բաղկացած է 85 գրանշաններից, Սեքվոյայի կազմած այբուբենում վանկանշանները բաժանված են սյունակների, որոնք վերջանում են ձայնավորներով, մեկ շարք՝ ձայնորդով, ինչպես

da, ka, ha, la, ma, na, hna, qua, sa, ta... (a),

re, ge, he, le, me, ne, que, se, te... (e),

ti, gi, hi, li, mi, ni, qui, si, ti... (i),

oso, go, lo, lo, mo, no, quo, so, do... (o),

iv, gv, hv, lv, nv, quv, sv, dv... (v):

Զարմանալին այն է, որ Սեքվոյան, այս այբուբենը կազմելիս, չի օգտվել անգլերենից. նա անգլերեն գրել և կարդալ չգիտեր: Համոզված կարելի է ասել, որ նա ճապոներեն էլ չգիտեր, թեև նրա կազմած այբուբենը համապատասխանում է ճապոներենի վանկանիշների արտասանության սկզբունքին: հմմտ. ճապոն. na, ta, sa, ka (a), no, to, so, ko (o), nu, tu, su, ku (u), ni, ti, si, ki (i), ne, te, se, ke (e) և այլն:

ԼԵԶՎԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ - Լեզուն միասնական է և ընդհանուր հասարակության բոլոր անդամների համար, սակայն այդ ընդհանրությունը չպետք է հասկանալ բացարձակ ձևով, որովհետև միևնույն ժողովրդի լեզվագործածությունը այդ ժողովրդի տարբեր տարածքներում տարբեր է, ինչպես նաև միևնույն տարածքում ապրող մարդիկ խոսում են տարբեր կերպ և տարբեր չափով են օգտվում մայրենի լեզվից. անգամ նույն հասարակության մեջ հասարակական տարբեր խմբեր տարբեր կերպ են գործածում լեզուն, որի հետևանքով ստեղծվում են լեզվական տարբերակներ: Այդ տարբերակները միմյանցից տարբերվում են հնչյունական համակարգով, բառային կազմով և քերականական կառուցվածքով: Այս հանգամանքը նկատի առնելով՝ առանձնացվում են լեզվի հետևյալ տարբերակները՝ տեղական, հասարակական (կամ սոցիալական), գործառական (կամ ֆունկցիոնալ):

ՏԵՂԱԿԱՆ ԿԱՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ (ԲԱՐԲԱՌՆԵՐ) - Լեզվի տարածքային կամ տերիտորիալ տարբերակը կոչվում է բարբառ: Բարբառը համաժողովրդական լեզվի ճյուղավորումն է, այն սպասարկում է հասարակության որոշակի հատվածի, որ ապրում է աշխարհագրական որոշակի տարածքում: Յուրաքանչյուր բարբառ համընդհանուր (գրական) լեզվի տարածքային այլ տարբերակների հետ ունենում է ընդգծված ընդհանրություններ, մասնավորապես բառային կազմի, մասամբ էլ քերականական կառուցվածքի. բարբառները միաժամանակ ունեն ակնհայտ տարբերություններ, որոնք դրսևորվում են նրանց գրեթե բոլոր մակարդակներում:

Միևնույն բարբառային տարածքում կարող են լինել հնչյունական համակարգի, բառային կազմի և քերականական կառուցվածքի մասնակի տարբերություններ, որոնց հիման վրա առանձնանում են խոսվածքները: Օրինակ, Արարատյան բառի տարածքում հանդիպում են Գավառի, Մարտունու, Սևանի, Հրազդանի խոսվածքները և այլն, որոնք առավելապես բնորոշ են գյուղական վայրերին:

Իրենց կազմավորման շրջանում բարբառների ճակատագիրը տարբեր է լինում: Մի կողմից, նրանք ձևափոխվելով պահպանվում են իբրև միևնույն լեզվի տարածքային տարբերակներ, մյուս կողմից հանդես է գալիս միջբարբառային հաղորդակցական մի ընդհանուր լեզու, որը համաժողովրդական կամ գրական լեզվի դեր է կատարում: Այս դեպքում այս կամ այն բարբառը կարող է գրական լեզվի հիմք դառնալ: Օրինակ, լատիներենը, որ դարձավ Հռոմի, հետագայում Հռոմեական կայսրության լեզու, ձևավորվել է Իտալիայի մի նահանգի (Լացիումի) բարբառի հիման վրա, իտալերենի հիմքում ընկած է ֆլորենտական բարբառը, հունարենի հիմքում՝ կոյնե ընդհանուր լեզուն, վրացերենի հիմքում՝ քարթվելական բարբառը, թաթարերենի հիմքում՝ Կազանի բարբառը և այլն: Արարատյան բարբառը դարձել է արևելահայ գրական լեզվի հիմքը, Պոլսի բարբառը՝ արևմտահայ գրական լեզվի հիմքը և այլն:

Հայերենն ունի բազմաթիվ բարբառներ, դրանցից են՝ Արարատյան, Ագուլիսի, Ամասիայի, Անտիոքի, Արաբկիրի, Արեշի, Բեյլանի, Բուրդուրի, Գորիսի, Եդեսիայի, Երզնկայի, Զեյթունի, Զմյուռնիայի, Թբիլիսիի, Խարբերդի, Խոտորջրի, Կարնո, Կարճնանի, Կեսարիայի, Կիլիկիայի, Համշենի, Ղարաբաղի, Մոկսի, Մանազկերտի, Մարաղայի, Մեղրու, Մարաշի, Նոր Զուղայի, Նոր Նախիջևանի, Շապին - Գարահիսարի, Պոլսի, Սասունի, Մեքաստիայի, Սվեդիայի, Վանի, Տարոնի, Տիգրանակերտի, Տրապիզոնի և այլն: Այս բարբառների մի մասը մահացել է:

Նշվեց, որ բարբառներն ունեն բառային կազմի ընդհանրություն: Գրեթե բոլոր բարբառները ժառանգել են համընդհանուր (գրական) լեզվի բառապաշարը, սակայն տարբեր է այդ բառերի արտասանության հնչյունական ձևավորումը: Հմմտ. ականջ բառի հնչյունական տարբերակները. անգաճ (Մոկս, Վան), ակոնճ (Խարբերդ, Ուրմիա), անգուճ (Ակն), անգոճ (Ղարաբաղ), անգանջ (Նոր Զուղա, Շամախի), հանգաճ (Մուշ), օնգոճ (Նոր Բայազետ, Ալաշկերտ), ակոնջ, անջակ (Կիլիկիա, Զեյթուն) և այլն:

Բոլոր բարբառներին հատուկ են լեզվի քերականական կարգերը, սակայն տարբեր են այդ կարգերի արտահայտման քերականական միջոցները: Այսպես, ներկա ժամանակը որոշ բարբառներում կազմվում է *-ու՛մ* մասնիկով (գրում եմ, խաղում եմ. Ագուլիս, Թբիլիսի, Զուղա և այլն), որոշ բարբառներում *կը* մասնիկով (կը գրեմ, կը խաղամ. Կ.Պոլիս, Կարին, Մուշ, Վան, Կիլիկիա) և այլն:

Մեկ այլ տեսանկյունով, բարբառների առանձնացման ընթացքում անհրաժեշտ է դառնում հաշվի առնել ոչ միայն լեզվական տեղանքը, այլև հոգևոր-նյութական մշակույթի տարրերը, պատմամշակութային ավանդույթները, ազգային ինքնագիտակցությունը և այլն: Տարածքային բարբառները բնորոշվում են կա՛մ որպես միևնույն տարածքի վրա պատմականորեն ապրող և ազգագրական ինքնատիպությամբ բնութագրվող մարդկանց հաղորդակցման միջոցներ, կա՛մ որպես լեզվական և ազգագրական առումով առանձնացված միավորներ, որոնք քարտեզի վրա տեղայնացվում են լեզվական և ազգագրական նույն սահմաններում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ - Լեզուն ունի իր հասարակական տարբերակները, որոնք այս կամ այն խավին, սոցիալական խմբին բնորոշ յուրահատուկ արտահայտություններ են: Դրանք կապված են հասարակական տարբեր խմբերի լեզվագործածության, հատկապես բառագործածության հետ: Տարածքային և հասարակական տարբերակներն ունեն մի շարք տարբերություններ:

1. Լեզվի տարածքային տարբերակները ավելի շատ են, քան սոցիալականը:

2. Սոցիալական տարբերակները չունեն բնորոշ հնչյունական յուրահատկություններ, ամբողջական բառային կազմ և քերականական կառուցվածք: Դրանք աչքի են ընկնում մի խումբ բառերի իմաստային յուրահատուկ գործածությամբ:

3. Եթե տարածքային տարբերակները հատուկ են տվյալ տարածքում ապրող բոլոր մարդկանց, ապա հասարակական տարբերակները ծառայում են որոշակի խավերի, հասարակական նեղ խմբերի:

4. Տարածքային տարբերակները ժամանակի ընթացքում կարող են առանձնանալ մայր լեզվից և վերածվել ինքնուրույն լեզվի, կարող են հիմք դառնալ տվյալ լեզվի գրական տարբերակի համար (ինչպիսի դեր կատարել են Արարատյան և Պոլսի բարբառները), մինչդեռ սոցիալական տարբերակներն այդպիսի դեր չունեն:

5. Լեզվի հասարակական տարբերակները առաջանում են հասարակության տարբեր խավերի կամ խմբերի ներսում. որոշ չափով այդ խավերի լեզուն տարբերակում ընդհանուր լեզվից: Այդ մեծ մասամբ տարբերությունները վերաբերում են բառապաշարին, դարձվածքներին, առանձնահատուկ արտահայտություններին:

Հասարակական տարբերակներ են մասնագիտական լեզուները, ինչպես՝ բժիշկների, ուսուցիչների, զինվորականների, իրավաբանների, արհեստավորների, վարորդների լեզուն: Սոցիալական տարբերակներից են *ժարգոնները, ծածկալեզուները (արգո), մասնագիտական կամ պրոֆեսիոնալ լեզուները, սլենգները* և այլն:

ԺԱՐԳՈՆ - Սա սոցիալական նեղ խմբի անդամների լեզուն է. այդ խմբի անդամները սովորաբար կապված են լինում համատեղ շահերով, սոցիալական դրությամբ, տարիքով, սովորույթներով և զբաղմունքով: Ի տարբերություն պրոֆեսիոնալ լեզվի՝ Ժարգոնի մեջ գործածվում է այն, ինչ ընդհանուր լեզվի մեջ կա, սակայն, որպես կանոն, կիրառվում է փոփոխված, աղավաղված ձևով:

Գոյություն ունեն *մասնագիտական ժարգոններ* (դերասանների, դերձակների, նավաստիների, մարզիկների, վարորդների, երաժիշտների, մատուցողների), *ուսանողական՝ երիտասարդական՝ խաղամոլների՝ ձկնորսների՝ ծխողների ժարգոններ* և այլն:

Մասնագիտական ժարգոնները շատ չեն տարբերվում պրոֆեսիոնալիզմներից:

Դրանցից են՝ тачка (ավտոմեքենա), шеф (տաքսու վարորդ), запаска (պահեստային անվադող), змейка (ինքնաթիռը վարելու բարձր արվեստ), салабон (նորակոչիկ), дед (վաղուց ծառայող զինվորական), черпак (խոհարար) և այլն:

Առանձնապես լայն գործածություն ունեն *երիտասարդական ժարգոնները*, որոնք վերաբերում են ամենատարբեր բնագավառների, ինչպես՝

пэрэнти (ծնողներ), дирик (տնօրեն), шкаф (մեծամարմին մարդ), помидор (ոստիկան), чердак (զուլի), рубильник (քիթ), колеса (կոշիկ), матеша (հանրահաշիվ), центрифуга (ֆիզիկայի ուսուցչուհի), принц (մեկ միավոր անբավարար), столкнуть (քննություն հանձնել), рыгаловка (վատ ճաշարան), кабак (ռեստորան), керогаз (համակարգիչ), монстр (հիշողության մոդուլ՝ համակարգիչում), *քաշվել* (քննությունից ձախողվել) և այլն:

Ժարգոնային որոշ արտահայտություններ ձեռք են բերել դարձվածային նշանակություն, ինչպես՝ *տանիք դառնալ* (անօրինական որևէ ձեռնարկ հովանավորել՝ հարկերից խուսափելով), *փուռը տալ* (անելանելի վիճակի առաջ կանգնեցնել), *մեկի վրա բռնկա (տակառ) գլորել* (չարախոսելով մեկին վտանգի ենթարկել) և այլն:

ԱՐԳՈ - Ժարգոնի տարատեսակ է, որտեղ բառերը գործածվում են ոչ իրենց սովորական իմաստներով. այն գործածում են քրեածին տարրերը և հասարակությունից մեկուսացած խմբավորումները (գողեր, թափառաշրջիկներ, դրամանենգներ, հանցագործներ և այլն): *Արգո* տերմինը երբեմն գործածվում է *Ժարգոն, սլենգ, հասարակաբանություն, ցածր կարգի բառապաշար* իմաստներով:

Արգոն ստեղծվում և գործածվում է քրեածին տարրերի և որոշակի մասնագիտության տեր մարդկանց խմբերի կողմից, որոնք հասարակության անդամների համար այն դարձնում են անհասկանալի՝ իրենց հակաօրի-

նական գործունեությունը թաքցնելու նպատակով: Դա հասարակության կողմից մերժված խմբերի (գողերի) լեզուն է, որը կոչվում է «գողական ժարգոն»: Այն ստեղծվել է ռուսերենի բառերի իմաստների վերաձևակերպման, ինչպես նաև անհատական բառաստեղծման հետևանքով (քանի որ «գողական աշխարհը» ձևավորվել է Ռուսաստանում, և «օրենքով գողերը» հաղորդակցվում էին միայն ռուսերենով): Այդ ժարգոնի բառերն աչքի են ընկնում անսովոր՝ միայն գործածողներին հասկանալի իմաստներով, ինչպես՝ аквариум - կալանախուց, бабки - փող, беда - դանակ, бей в верхний потолок - խուզարկիր պիջակի վերևի գրպանները, блатной шарик – արև, бомбить - թալանել, божья трава - թմրանյութ, заштамповать - աղջկա հետ զագում գրանցվել, наколка - օրլետ, որտեղից կարելի է գողություն կատարել, теплица - սավան, трудило - թարգմանիչ, прокол – մարդ, стучач (մատնիչ), академия (բանտ), лафа (հաջողություն), вербух (աչք), векчело (մարդ), ширмач (գրպանահատ), чиновник (բանտախցի հավաքարար), авторитет (հանցագործ), мочить (սպանել), вязать (բանտարկել) և այլն:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ - Սա տարբեր մասնագիտության տեր մարդկանց լեզվագործածությունն է (բժիշկների, ուսուցիչների, վարորդների, հանքափորների, դերասանների, նավաստիների, հյուսների, դարբինների և այլն):

Այդ բառերն արտահայտում են հատուկ հասկացություններ, արտադրության գործիքներ, զանազան գործընթացներ, ինչպես՝ баранка (դեկ), дворник (մեքենայի ապակու մաքրիչ), кирпич (մուտքն արգելող նշան), *молот* *վառել* (շարժիչը խափանման եզրին գտնվել), *կայծ փախցնել* (այրում՝ բռնկում տեղի չունենալ) – վարորդների խոսքում, вилка, трыба (կենդանու պոչ) – որսորդների խոսքում, фуганок (ռանդայի տեսակ) – հյուսների խոսքում, наигрыш (դերասանի ազատ վարքագիծը բեմում) – թատրոնի բնագավառում և այլն: Այդ կարգի բառերը կոչվում են *պրոֆեսիոնալիզմներ*:

ՍԼԵՆԳ - Լեզվի հասարակական տարբերակ է, որ գործածվում է որպես հաղորդակցման միջոց որոշակի մասնագիտության տեր մարդկանց, հասարակական շերտերի, հասարակությունից մեկուսացած խմբերի, ինչպես նաև անընդունելի երիտասարդական խմբերի միջև (ռոկերներ (սպորտ.), հիպիներ, ֆուտբոլային ֆանատներ, համակարգչային խաղերի մասնակիցներ և այլն):

Սլենգը սերտ կապված է ժարգոնի, արգոյի, հասարակաբանության և լեզվի այլ տարբերակների հետ. նրանցից կատարում է բառային փոխառություններ, հարմարեցնում իր կարիքներին և վերիմաստավորում այս կամ այն ուղղությամբ, ինչպես՝ крыша (պաշտպանություն), доска (համակարգչի ստեղնաշար), перец (տղա), грузить (շատախոսել) և այլն: Սլենգային որոշ

միավորներ անցել են անգլերենից, ինչպես՝ баксы (դոլար), ҕирла (աղջիկ) և այլն:

Մշենգ եզրույթը հաճախ գործածվում է որպես *ժարգոնին* հոմանիշ հասկացություն:

Լեզվի հասարակական տարբերակման հարցերն ուսումնասիրում է հանրալեզվաբանությունը:

ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

Լեզվի գործառական տարբերակները պայմանավորված են լեզվի գործածության ոլորտներով, այսինքն՝ այն բանով, թե լեզուն հասարակական կյանքի ո՞ր բնագավառում և ի՞նչ նպատակներով է գործածվում: Այդ տեսակետից առաջին հերթին իրարից որոշակիորեն տարբերվում են խոսակցական և գրական տարբերակները:

ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ - Խոսակցական լեզուն հանրության առօրյա հաղորդակցման պահանջին ծառայող լեզուն է: Խոսակցական լեզուն լայն առումով հանրության համար հասկանալի, հաղորդակցման լեզուն է, ինչպես հին հայերենը՝ 5-րդ դարի հայերի համար, արդի հայերենը, ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը, չինարենը՝ համապատասխանաբար հայերի, ռուսների, անգլիացիների, ֆրանսիացիների, չինացիների համար և այլն: Խոսակցական լեզուն նեղ առումով առօրյա լեզուն է, որի մեջ օգտագործվում են ինչպես գրական լեզվի, այնպես էլ բարբառների ամենաբազմազան իրողություններ: Գրի առնվելով՝ խոսակցական լեզուն դառնում է գրային կամ գրավոր լեզու: Գրի ստեղծումով հիմք է դրվում նաև գրականության, իսկ գրականությունը քերականական կանոնների ճշգրիտ գործադրության, լեզվի մշակման ու կատարելագործման պահանջ է ստեղծում: Ժամանակի ընթացքում գրային լեզուն զգալիորեն տարբերվում է խոսակցական լեզվից իր կանոնավորությամբ, մշակվածությամբ ու ոճական առանձնահատկություններով:

Ժամանակի ընթացքում տվյալ հասարակության մեջ ստեղծվում է այնպիսի վիճակ, երբ նույն ժողովուրդն ունենում է ըստ էության խոսակցական լեզվի երկու տարբերակ՝ ժողովրդախոսակցական և գրական: Հասարակության զարգացման որոշակի էտապում աստիճանաբար ծագում և գործառում է գրական լեզուն:

ԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ - Գրական լեզու է կոչվում տվյալ հանրության կողմից ընդունված գրային համակարգով բոլոր կարգի գրավոր վավերագրերում գործառող լեզուն:

Գրական լեզուն համաժողովրդական լեզվի հիման վրա մշակված, նորմավորված գրավոր (գրի առնված) լեզուն է: Այդ լեզուն հանդես է գալիս

այն պահից, երբ բանավոր (խոսակցական) լեզուն գրական մշակման է ենթարկվում: Գրական լեզվի գրային արտահայտությունը նրա էական հատկանիշն է: Սակայն չի կարելի նույնացնել *գրավոր լեզու* և *գրական լեզու* հասկացությունները. առաջին՝ ոչ բոլոր գրավոր լեզուներն են գրական լեզու, երկրորդ՝ գրական լեզուն հանդես է գալիս ոչ միայն գրավոր, այլև բանավոր (խոսակցական) ձևով: Հետևաբար գոյություն ունի գրական լեզվի երկու տարբերակ: Գրական լեզուն գործառույթ է մի դեպքում՝ գրավոր ձևով (գեղարվեստական գրականություն, գիտական հետազոտություններ, թերթեր և ամսագրեր), մյուս դեպքում՝ բանավոր ձևով (պետական և հասարակական կազմակերպություններ, դպրոց, թատրոն, ռադիո, հեռուստատեսություն և այլն): Գրական լեզուն գործածում են նաև ընտանեկան-կենցաղային հաղորդակցման ընթացքում և այլն:

Գրական լեզուն, փաստորեն, գրական մշակման ենթարկված ու գրականության մեջ դրսևորվող լեզվի գոյաձև է և, որպես լեզվի բարձրագույն ձև, բնութագրվում է բառային կազմի հարստությամբ, քերականական կառուցվածքի կանոնավորությամբ (այդ թվում՝ ուղղագրական և կետադրական կանոններով), զարգացած ոճական համակարգով: Գրական լեզուն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

ա) բազմագործառություն. այսինքն՝ այն գործածվում է խոսքային բոլոր ոլորտներում և ներուսակ է արտահայտելու մարդկության կուտակած ամբողջ իմացությունը, որ վերաբերում է նրա գործունեության բոլոր բնագավառներին,

բ) նորմայի պարտադրականություն, որպես օրինակելի ձև բոլորի համար, ովքեր այն տիրապետում և գործածում են՝ անկախ հասարակական, մասնագիտական և տարածքային պատկանելությունից,

գ) ոճական հարստություն, որ հիմնված է միևնույն նշանակության արտահայտման տարբերակների առկայության վրա և պայմանավորված է հատուկ նշանակությունների արտահայտման միջոցներով, որոնք տեղայնացված են միայն որոշակի խոսքային իրադրության շրջանակներում:

Աշխարհի լեզուների զգալի մասը գրական է, ըստ այդմ էլ կոչվում են՝ գրական հայերեն (արևելահայ գրական լեզու, արևմտահայ գրական լեզու), գրական ռուսերեն, գրական գերմաներեն, գրական արաբերեն, գրական պարսկերեն և այլն:

ԼԵԶՎԱԿԱՆ ՈՃԵՐ - Գրական լեզվի կարևոր հատկանիշներից են լեզվական ոճերը: Դրանք այն տարբերացումներն են, որոնք կապված են հասարակական կյանքի այս կամ այն բնագավառի և գործառական այլ ոլորտների հետ: Ըստ այդմ էլ զանազանում են՝ *առօրյա-խոսակցական, վարչա-գործարարական, գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական ոճեր* հասկացությունները:

Սրանցից յուրաքանչյուրին բնորոշ են որոշակի հատկություններ:

ա) **Առօրյա-խոսակցական ոճ** - Բնորոշ է առօրյա բանավոր հաղորդակցմանը, որ սովորաբար տեղի է ունենում ընտանիքի անդամների, բարեկամների, աշխատանքային ընկերների միջև և դրսևորվում է հիմնականում երկխոսության ձևով: Այս ոճին հատուկ են հուզականությունն ու պատկերավորությունը, արտահայտչականությունն ու անմիջականությունը, հաճախակի գործածվում են հարցուպատասխանական կաղապարներ ու բացականչական նախադասություններ, ձայնարկություններ ու վերաբերականներ և այլն:

բ) **Վարչա-գործառական ոճ** - Բնորոշ է պետական-վարչական մարմինների հաղորդակցման ոլորտին, դրսևորվում է պաշտոնական գրագրությունների տեքստերում, զուրկ է հուզականությունից և պատկերավորությունից, բառերը գործածվում են ուղղակի իմաստով, խոսքը հակիրճ է, ձևակերպումները՝ ճիշտ, բացակայում են բացականչական նախադասությունները և ձայնարկությունները, պարտադիր է քերականական կանոնավորությունը: Այս ոճատեսակի մասնավոր դրսևորումներից են գործարարական ոճը, գրասենյակային ոճը, պաշտոնական ոճը:

գ) **Գիտական ոճ** - Բնորոշ է գիտական գրականությանը, դասախոսություններին, գիտական զեկուցումներին ու բանավեճերին, քննադատական գրականությանը: Հարուստ է գիտատեխնիկական, մասնագիտական տերմինաբանությամբ, դատողական բնույթի բառերով, շաղկապներով: Գրեթե բացառվում են հուզարտահայտչական տարրերն ու միջոցները: Սահմանումները, բնութագրումները և ձևակերպումները միտում են ճշգրտության: Այս ոճատեսակի դրսևորումներից են գիտահանրամատչելի ոճը, պրոֆեսիոնալ (մասնագիտական) ոճը:

դ) **Հրապարակախոսական ոճ** - Համատեղում է գիտական ու գեղարվեստական ոճերի առանձնահատկությունները. նպատակն է ներագրել, ներգործել ընթերցողի, ունկնդրի ոչ միայն մտքի, դատողության, այլև կամքի, զգացմունքների, երևակայության վրա՝ մղելով նրան ցանկալի գործողության: Հարուստ է հուզարտահայտչական և պատկերավորման միջոցներով: Հարակից դրսևորումներից է ճարտասանական ոճը:

ե) **Գեղարվեստական ոճ** - Բնորոշ է գեղարվեստական գրականությանը (արձակին, չափածոյին), բանահյուսական պատումներին: Նրան հատուկ են պատկերավորությունը (մակդիր, փոխաբերություն, համեմատություն, շրջասություն, չափազանցություն...), արտահայտչականությունը (գրադարձ, առձայնայթ, բաղաձայնայթ), ըստ անհրաժեշտության կարող է ընդգրկել նախորդ բոլոր ոճերի տարրերը: Նրա մասնավոր դրսևորումներից է բանաստեղծական ոճը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
Խաչատրյան Լ.Ս., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:
Бенвенист Э., Общая лингвистика.-М.: Прогресс, 1974.
Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.
Будагов Р. А., Введение в науку о языке.-М.: Добросвет - 2000, 2002.
Звегницев В. А., Теоретическая и прикладная лингвистика. -М.: Просвещение, 1968.
Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
Кубрякова Е. С., Мельников Г. П. О понятиях языковой системы и структуры языка //Общее языкознание (Внутренняя языка). -М.: Наука,1972.- С. 8-116.
Лингвистический энциклопедический словарь, М., 1990.
Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.
Пищальникова В.А., Сонин А.Г., Общее языкознание, М., 2017.
Реформатский А. А., Введение в языковедение.-М.: Аспект-пресс, 1996.
Соломоник А., Язык и знаковая система, М., 1992.
Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.
Франклин Фолсом, Книга о языке, М., 1974.
Широков О.С., Введение в языкознание, М., 1985.
Bernd Heine and Tania Kuteva, Language Contact and Grammatical Change, Cambridge University Press, 2005.
Joan Bybee, Frequency of Use and the Organization of Language, Oxford University Press, 2007.
Joan Bybee, Language, Usage and Cognition, Cambridge University Press, 2010.
Motives for Language Change /edited by Raymond Hickey/, Cambridge University Press, 2004.

2. ՀԱՅՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Լեզվաբանությունը բացահայտում է լեզվի կառուցվածքային մակարդակները, առաջին հերթին որպես հնչյունների ամբողջություն և համակարգ, երկրորդ՝ ձևայինների ամբողջություն և համակարգ, երրորդ՝ բառերի ամբողջություն և համակարգ, չորրորդ՝ խոսքի մասերի ամբողջություն և համակարգ, հինգերորդ՝ բառակապակցության և նախադասության տեսակների ամբողջություն ու համակարգ:

ՀԱՅՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Այլ անվանումով կոչվում է *ֆոնետիկա* (հունարեն *Ֆոնե* նշանակում է ձայն, հնչյուն): Հնչյունաբանությունն ուսումնասիրում է լեզվի հնչյունական համակարգը. լեզվի արտաքին հնչյունական կողմը, հնչյունները, բառի և խոսքի շղթայի մեջ նրանց կապակցման կանոնները, հնչյունական օրենքները, հնչյունների փոփոխությունը: Բացի լեզվի հնչյուններից այն ուսումնասիրում է նաև վանկը, շեշտը, հնչերանգը և գրաբանության հարցերը (գիր, գրադարձություն, տառադարձություն, ուղղագրություն և այլն):

Ըստ նյութի ընդգրկման և հետազոտական ասպեկտների՝ տարբերակում են *ընդհանուր և մասնավոր, նկարագրական (համաժամանակյա), պատմական (տարժամանակյա) և պատմահամեմատական և փորձառական հնչյունաբանություն* ենթաբաժինները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - ուսումնասիրում է աշխարհի տարբեր լեզուների խոսքային ապարատի կառուցվածքը, հնչյունների ձևավորման միջոցներն ու նրանց բնութագիրը և մշակում է մարդկային խոսքի հնչման ընդհանուր կանոնները (ձայնավորների ու բաղաձայնների էությունն ու նրանց դասակարգման սկզբունքները, հնչյունափոխության դրսևորումները, վանկի կառուցման հնարավորությունը, խոսքային հոսքի անդամատման սկզբունքները, շեշտի տեսակները, հնչերանգի արտահայտման միջոցները, հնչյունային գրի տեսակները և այլն):

ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՅՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - ուսումնասիրում է մեկ առանձին լեզվի հնչյունական համակարգի համալիր հարցերը:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ (ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ) ՀԱՅՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Ուսումնասիրում է լեզվի որոշակի գոյավիճակի հնչյունական համակարգը՝ դուրս չգալով տվյալ լեզվափուլի շրջանակներից, զանց առնելով այդ համակարգի պատմական փոփոխությունները հաջորդ գոյավիճակներում: Օրինակ, նկարագրական հնչյունաբանությունը կարող է տալ հին հայերենի հնչյունական համակարգի ստատիկ նկարագրությունը. համակարգում ար-

ձանագրվող փոփոխությունները, ձայնավորների և բաղաձայնների շարքերը, երկբարբառների ու եռաբարբառների ընդհանուր բնութագիրը, փակ վանկում վերջիններիս հնչարտաբերական դրսևորումները, շեշտափոխական կամ փոխազդեցական հնչյունափոխության դրսևորումները և այլն:

ՊԱՏՄԱԿԱՆ (ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ) ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Ուսումնասիրում է լեզվի հնչյունական համակարգի կրած պատմական փոփոխությունները, որոնք արձանագրվել են լեզվի զարգացման տարբեր գոյավիճակներում. ձայնավորների և բաղաձայնների կրած պատմական փոփոխությունները, երկբարբառների պարզեցման իրողությունները, հնչյունների առաջացման իրողությունները մի լեզվի ազդեցության հետևանքով (օրինակ, հին հայերենի *ջ* հնչյունի առաջացումը արաբերենի ազդեցությամբ) և այլն:

ՊԱՏՄԱՀԱՄԵՄՍԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Ուսումնասիրում է ցեղակից լեզուների հնչյունական համակարգերի համապատասխանության ու անհամապատասխանության հարցերը. ձայնավորների, բաղաձայնների, երկբարբառների և եռաբարբառների քանակը համեմատվող լեզուներում, նախալեզվի և ցեղակից լեզուների արմատների հնչյունական համապատասխանությունը, որ էական նշանակություն ունի ստուգաբանության բնագավառում [հմտ, K-S. հնխ. *k' erdi, լատ. c*ord. սեռ. h. c*ordis, հուն. kordia, հայ. սիրտ, W-G. գերմ. Wasser, անգլ. Water, ռուս. вода, հայ. գետ (ջուր)] և այլն:

ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - զբաղվում է լեզվի հնչյունական համակարգի ուսումնասիրությամբ՝ կիրառելով մասնագիտական մեթոդներ և օգտագործելով լաբորատոր զանազան միջոցներ (օսցիլլոգրավ, սպեկտրոգրավ և սինթեզատոր):

ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Լեզվաբանության բաժին, որ ուսումնասիրում է լեզվի հնչյունային համակարգը՝ նրա միավորների գործառական դերի տեսանկյունից: Հնչյոթների գործառական դերն այն է, որ նրանք ծառայում են լեզվական միավորների իմաստների տարբերակմանը: (Տե՛ս *Հնչույթային հակադրություն* բառահոդվածը): Դրանով իսկ հնչույթաբանությունը տարբերվում է հնչյունաբանությունից, որ ուսումնասիրում է խոսքի ակուստիկական-արտաբերական և ֆիզիկական հատկանիշները: Ուսումնասիրելով լեզվական միևնույն իրողությունը տարբեր հայեցակետերով՝ հնչյունաբանությունն ու հնչույթաբանությունը (գործառական հնչույթաբանությունը) համատեղ ձևավորում են միասնական գիտակարգ լեզվի հնչյունական համակարգի վերաբերյալ: Գործառական հնչույթաբանությունից բացի առանձնացնում են նաև բառային հնչույթաբանություն բա-

Ժինը, որ ուսումնասիրում է հնչույթների դերը ձևային կազմակերպության գործընթացում և գործում է միջմակարդակային՝ ձևային-հնչույթաբանական մակարդակի տարածքում:

Հնչույթաբանությունը, որպես առանձին գիտակարգ, ձևավորվել է Ռուսաստանում՝ 19-րդ դարի վերջին քառորդում. նրա հիմնադիրն է Բոդուեն դե Կուրտենեն, որ առաջ քաշեց հնչույթի գաղափարը՝ այն հակադրելով հնչյունին, և սահմանազատեց հնչույթի հնչյունային (հնչական) տարբերակները միմյանցից (և հնչույթից): Նրա աշակերտներից Լ.Շչերբան խորացրեց հնչույթաբանության տեսությունը՝ բացահայտելով հնչույթի իմաստատարբերակիչ (իմաստազատիչ) դերը, արտաբերման հնարավոր տարբերակները և խոսքի անդամատումն ըստ հնչույթների:

Հնչույթաբանության ուսումնասիրության հարցերը լայն ընդգրկում ունեն, և այդ ճանապարհին ձևավորվեցին որոշակի ուղղություններ, որոնցից առաջատար դեր ունեն Մոսկվայի, Պետերբուրգի և Պրահայի հնչույթաբանական դպրոցները (Տե՛ս համապատասխան բառահոդվածները): Մոսկվայի և Պետերբուրգի դպրոցները միմյանցից տարբերվում են ձևային և նրա հնչյունական թաղանթի հարաբերակցության գնահատման սկզբունքով, (նույնություն կամ տարբերություն), իսկ Պրահայի դպրոցը առաջնային էր համարում հակադրվող հնչույթների մանրագնին բնութագրումն ու նրանց իմաստատարբերակիչ հատկանիշների բացահայտումը:

ՀՆՉՑՈՒՆ և ՀՆՉՈՒՅԹ - Լեզվաբանության մեջ հնչյուն և հնչույթ հասկացությունները տարբերակվում են մասնագիտական տեսանկյունից: Հնչույթը պատկանում է լեզվին՝ որպես հնչյունական համակարգի միավոր, իսկ հնչյունը՝ խոսքին՝ որպես արտասանական միավոր: Մենք ավելի շուտ ճանաչում ենք լեզվի հնչյունները:

Լեզվի նվազագույն միավորները, որոնք հասարակայնորեն գիտակցված են, պատմականորեն արժեքավորված, ընդհանուր են տվյալ լեզվով խոսող հանրության համար և գուրկ են նյութական բովանդակությունից, կոչվում են հնչույթ, իսկ նրա արտաբերման զանազան դրսևորումները՝ հնչյուն: Այսպես, անգլերենում *a* և *i* հնչույթները, որպես նվազագույն միավորներ, պատկանում են լեզվին, սակայն խոսքում կարող են զանազան հնչումներ ունենալ և հանդես գալ հնչյունական տարբերակներով: Հմմտ. *a-table* (է), *ball* (օ), *language* (է, ի), *manuscript* (ա), *angry* (է), այդպես նաև՝ *i-girl* (ը), *information* (ի), *icon* (այ) և այլն:

Արևելահայերենի հնչյունական համակարգին հատուկ է *բ* հնչույթը, որը բառի տարբեր դիրքերում ունի տարբեր հնչումներ, օրինակ՝ բարդի (բ), նրբորեն (փ), *դ* հնչույթը՝ դարձ (դ), արդար (թ) և այլն: Այսպիսով, հնչույթի տարբեր հնչումները (հնչական տարբերակները) կոչվում են հնչյուններ:

Հնչույթը լեզվի հնչյունական համակարգի հիմնական միավորն է, նվագագույն միավորը, որ նպաստում է բառի և ձևույթի իմաստների տարբերակմանը:

Լեզվի բոլոր ձայնային միավորները հնչույթներ չեն. այդպիսին են միայն նրանք, որոնք բնութագրական են տվյալ լեզվին և ընդունակ են տարբերակելու բառի և ձևույթի իմաստները:

ՀՆՅՈՒՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ - Միևնույն նախնական հնչյունի փոփոխությունն է որոշակի ուղղությամբ, որ գործում է որոշակի ժամանակահատվածում և որոշակի տարածքում: Այն դրսևորվում է պատմականորեն և արտացոլում է ինչպես միևնույն լեզվի (նրա միջփուլային, գրական լեզվի ու բարբառների), այնպես էլ տվյալ լեզվի ու ցեղակից լեզուների և լեզվամիությունների հնչյունական համապատասխանությունները:

Հնչյունական օրենքը կարող է գործել լեզվի այս կամ այն փուլում, հատուկ լինել միայն նրան: Այսպես, կան հնչյունական օրենքներ, որոնք գործում են միայն *գրաբարում*: Այդպիսին է բայի ստորադասական եղանակի երկրորդ ապառնի ժամանակի բայաձևերում ց+ց աֆֆրիկատներից մեկի տարրալուծումը, ինչպես՝ շարժեցցե - շարժեսցե, խաղացցե - խաղասցե, բազմեցցի - բազմեսցի և այլն: Կամ՝ $n > p$ հերթագայությունը գոյականի հոլովման համակարգում (երբ n ձայնորդը հեռանում է ն-ից). եղեռն - եղերան, ամառն - ամարան, լեռն - լերին, մատուռն - մատրան և այլն: Գրաբարին է հատուկ երկբարբառների պարզեցման օրենքը, ինչպես՝ աւր (օր), պաշտաւն (պաշտօն), ծանաւթ (ծանօթ), շարժեաց - շարժեցի, սիրեաց - սիրեցի, մատեան - մատենի - մատենիւ -մատենից և այլն:

Ժամանակակից հայերենում գործում են մի շարք հնչյունական օրենքներ, որոնք հատուկ են միայն լեզվի այդ շրջանին: Այդպիսին են որոշ ձայնավորների փոփոխությունները, ինչպես՝ ի>յ. որդի - որդյակ, աղավնի - աղավնյակ, ի>ու. գինի - գինու, ոսկի - ոսկու, ի+ա>ե. պատանի-ական>պատանեկան, ընտանի-ական>ընտանեկան, երկհնչյունների պարզեցման դեպքերը. արյուն - արենակից, բույր - բուրավետ, մատյան - մատենագիր և այլն:

Կան հնչյունական օրենքներ, որոնք հատուկ են լեզվի *զարգացման բոլոր փուլերին*: Այդպիսին է, օրինակ, գործիական հոլովում բ հոլովակերտից առաջ ն > մ մասնակի առնմանությունը. հմմտ. ատամանք - ատամամք, անկեանք - անկեամք, քաջութեանք - քաջութեամք, տխրությանք - տխրությամք, ուրախությանք-ուրախությամք և այլն, կամ՝ ի > ը հնչյունափոխությունը (փակ վան-կում). միրգ - մրգաւետ, Վիրք - Վրաց, գիր - գրել, խինդ-խնդալ, կամ՝ ի > օ (զրո). վերին - վերնոյ, մարմին - մարմնոյ, վերին - վերնատուն, մարմին - մարմնական և այլն:

Որոշ հնչյունական օրենքներ գործում են *գրական լեզվում և նրա բարբառներում*, ինչպես՝ $h > խ$ հնչյունական փոփոխությունը: Հմմտ. հաց $>$ խաց, հավ $>$ խավ, հարս $>$ խարս (Վան, Մարաղա, Խոյ, Բայազետ), $p > պ$. բերան – պերան (Մոկս, Շամախի, Սեբաստիա, Վան), բամբակ – պեմբակ (Ղարաբաղ), $p > փ$. բերան-փերան (Տիգրանակերտ), բամբակ – փանպակ (Պարտիզակ) և այլն: Այդպես նաև $u > o$ փոփոխությունը գործում է Ագուլիսի, Համշենի, Ակնա, Կիլիկիայի և այլ տարածքներում:

Հնչյունական օրենք է *Աճառյանի օրենքը*, որ մշակվել է Վանի բարբառի հնչյունական համակարգի օրինաչափության հիման վրա. համաձայն որի՝ Վանի բարբառում *au* ձայնավորը, գտնվելով գրաբարի թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, հաստատուն դառնում է *ü*, հմմտ. բան – պան, բարի – պարի, իսկ նույն հնչյունը խուլերից առաջացած խուլի մոտ դառնում է *u*:

Որոշակի (մեկ) լեզվին հատուկ հնչյունական օրենքը համարվում է գործառական օրենք, որը որոշում է, ուղղորդում այս կամ այն հնչյունական գործընթացը (փոփոխությունը):

Ազգակից լեզուների հնչյունական օրենքը համարվում է լեզվի պատմական զարգացման օրենք, որ բացահայտում է որոշակի հնչյունական գործընթացների առաջացման պատճառներն ու հիմքերը: Այսպես, համընդհանուր սլավոնական լեզվում գործել է *բաց վանկի օրենքը*. համաձայն դրա՝ վանկը կառուցվում է բարձրացող հնչերանգի սկզբունքով: Բաց վանկի օրենքով է պայմանավորված իջնող երկբարբառների պարզեցումը, ռնգային ձայնավորների առաջացումը և այլն:

Հնչյունական օրենք է *Գրիմի օրենքը*, որ վերաբերում է հնդեվրոպական լեզուների և գերմաներենի բաղաձայնների կանոնավոր համապատասխանությանը, այն ձևակերպվում է որպես գերմաներենի *առաջին բաղաձայնական համակարգի տեղաշարժի օրենք*: Դրա մի դրսևորումն այն է, որ հնդեվրոպական ձայնեղ պայթականները (b, g, d) գերմանական լեզուներում դարձել են խուլեր (p, k, t), հմմտ. լիտվ. bala – անգլ. pool, ռուս. едять – շվեդ. äta, լատ. ego – նիդերլանդ. ik, հնդեվրոպական շնչեղ ձայնեղները (b^h, g^h, d^h) գերմաներենում դարձել են ձայնեղներ (b, g, d), հմմտ. սանսկր. bharami – իսլանդ. bera, սանսկր. madhyas – գոթ. midjis, սանսկր. stighnomia – գերմ. steigen և այլն:

Հնչյունական օրենքով են պայմանավորված ազգակից լեզուներում առկա հնչյունական համապատասխանությունները: Հմմտ. $q > ծ$. լատ. genus (ծնունդ, սերունդ), հուն. genos (ցեղ, սերունդ) $>$ հայ. ծին. $\eta > տ$. հուն. domos, լատ. domus, ռուս. домъ $>$ հայ. տուն. $\psi > գ$. լատ. video, գերմ. Wissen (գիտենալ), ռուս. ведать (գիտենալ) $>$ հայ. գէտ (գիտ-են-ալ). $ay > հ$. սանսկր. Pitar, լատ. phater, հուն. fater (ph-f) $>$ հայ. հայր և այլն:

Թեև հնչյունական օրենքները կայուն են և ունեն ընդհանրական բնույթ, այնուամենայնիվ դրանք ժամանակային ու տարածական սահմանափակվածություն ունեն: Որոշելով տվյալ հնչյունական օրենքի գործունեության ժամանակը՝ կարելի է սահմանել տվյալ հնչյունական փոփոխությունների համեմատական ժամանակագրությունը և որոշել զանազան բառերի ու քերականական ձևերի առաջացման ժամանակն ու ուղիները:

Այսպես, լատ. *c*ord. սեռ. հ. c*ordis* > հայ. սիրտ, ռուս. *сердце* բառերի համեմատությունը ցույց է տալիս, որ լատիներեն > հայերեն - ռուսերեն միջլեզվային տարածքում գործել է *k > s* հնչյունական օրենքը: Հայերենում և ռուսերենում, սակայն, կան լատիներենից (և հունարենից) փոխառյալ որոշ բառեր, որոնցում չի գործում *k > s* հնչյունական օրենքը. դա նշանակում է, որ այդ բառերի փոխառության ժամանակ տվյալ հնչյունական օրենքն արդեն դադարել էր գործելուց: Հմմտ. լատ. *circus* > ռուս. *цирк*, հայ. *կրկես*, լատ. *circulus* > ռուս. *циркуль*, հայ. *կարկին* (շրջան), *Canis* (*dies canicularies* - Սիրիուսի օրեր.) > ռուս. *каникулы* (Սիրիուս աստղի երևալու ժամանակը՝ տոթ օրեր, երբ Հռոմում աշխատանքները դադարեցնում և արձակուրդ էին գնում):

Ցեղակից լեզուների ծագումնաբանական ընդհանրությունները ցույց են տալիս, որ ժամանակին ցեղակից լեզուներում կենսունակ է եղել Վ > Գ հնչյունական օրենքը, հայերենում առկա են դրա արտացոլումները, ինչպես՝ սանսկ. *Veda*, զենդ. *Vaeda*, լատ. *video*, գերմ. *Wissen* (գիտենալ), ռուս. *ведать* (գիտենալ) > հայ. *գէտ* (գիտ-են-ալ): Սակայն երբ այդ օրենքը դադարեց գործելուց, հին հնդկերեն *veda* բառը հայերենին անցավ առանց հնչյունական որևէ փոփոխության. հմմտ. *Ռիգ-վեդա*, *Մամա-վեդա*, *Յաջուր-վեդա*, *Աթարվա-վեդա* և այլն:

Այսպիսով, հնչյունական օրենքները սահմանափակվում են որոշակի ժամանակով, հնչյունական միջավայրով ու տարածվածության լեզվական արեալով: Հնչյունական օրենքների բացահայտումն ու նրանց ճշգրիտ որոշումը կարևոր նշանակություն ունեն լեզվաբանության համար. բառերի ու քերականական միավորների պատմական ձևափոխությունները հիմնականում հնչյունական օրենքների հետևանք են:

ՀԼՁՅՈՒՆԱԿԱՆ ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆ – Այն երևույթն է, երբ կանոնավոր կերպով հնչյունները միմյանց փոխարինում են՝ դառնալով լծորդակից: Օրինակ, զրաբարում *ռ* ձայնորդը, *ն* ձայնորդից հետևանալով, արմատի կամ հիմքի տարբերակներում դառնում է *ր*, հմմտ. *եղենն* - *եղերական*, *դառնալ* - *դարձ(եալ)*, *լեռն* - *լերինք*, *ամառն* - *ամարան* և այլն: Լծորդակից հնչյունները կարող են ստեղծել ձևաբանական զուգաձևություններ. ինչպես՝ *ճեմիմ* // *ճեմեմ*, *մոլորիմ* // *մոլորեմ*, *սխալիմ* // *սխալեմ* (ի // ե), *արգելուլ* // *արգելել*, *զենուլ* // *զենել*, *կիզուլ* // *կիզել* (ու // ե) և այլն:

Ըստ գործառական արժեքի՝ տարբերակում են լծորդությունների երկու տեսակ՝ ազատ և հերթագայական: Ազատ լծորդության դեպքում լծորդակից հնչյունները ազատորեն փոխարինում են միմյանց՝ ստեղծելով արմատի տարբերակներ, ինչպես՝ *վ//գ - արել//արեգ, կով // կոգի, ապահով // անհոգ, դ/լ - ադի //անալի, դամբար //լամբար, մառախուղ// մառախլապատ, ջիլ //ջիդ* և այլն:

Հերթագայական լծորդության դեպքում լծորդ հնչյուններից յուրաքանչ-յուրը հանդես է գալիս միայն տվյալ (իրեն բնորոշ) դիրքում: Օրինակ, գրաբարի *ոյ* երկբարբառը անշեշտ դիրքում վերածվում է պարզ ձայնավորի՝ *բոյր - բուր-ել, յոյն //յուն-ական, գոյն //գուն-ատ* (ոյ // ու), *եայ* եռաբարբառը՝ է երկբարբառի, ինչպես՝ *քրիստոնեայ // քրիստոնե-ի // ի քրիստոնե-է* (եայ // է), *է* երկբարբառը՝ ի ձայնավորի, ինչպես՝ *սեր //սիր-ոյ, հանդես // հանդիս-ի, կես - կիս - ոյ (է// ի) և այլն:* Ըստ այդմ՝ *ոյ // ու, եայ // է, է // ի* հերթագայական լծորդակիցներ են:

ՀԼՅՈՒՆԱՏԱՐԲԵՐԱԿԻԶ ՆՇԱՆ – Սովորաբար լեզուներում հնչյուններն ավելի շատ են քան տառանշանները, հետևաբար որոշակի դեպքերում նույն տառանշանով այլ հնչյուն կամ նույն հնչյունի արտաբերական այլ երանգ արտահայտելու համար գործածվում են հատուկ հնչյունատարբերակիչ նշաններ (դիակրիտիկներ): Մի դեպքում դրանք կիրառվում են բարբառագրության ոլորտում՝ բարբառային բառերի արտաբերությունը (հնչումը) ներկայացնելու համար: Բարբառային նյութի գրառման համար գործածվում են լրացուցիչ նշաններ, որոնք ցույց են տալիս՝ հնչյունների շնչեղությունը (թ’), երկարությունը (ա:), կիսակարճությունը (ի.), քմայնացումը (կ’), կատկայնացումը (լ/) և այլն:

Բարբառագրության մեջ գործածվում են նաև այբուբենի տառերը՝ փոքր տառաչափով՝ ցույց տալու բաղաձայնների ձայնեղացումը (բ^h, գ^h, դ^h) կամ քմայնացումը (գ^l, կ^l, ք^l) և այլն: Դիակրիտիկները կիրառվում են նաև գրական լեզվի բառերի հնչյունային տարբերակներն արտահայտելու նպատակով: Այս դեպքում դիակրիտիկը չի փոխում տառանշանի հնչույթային արժեքը, այլ ստեղծում է միևնույն հնչույթի հնչյունային տարբերակներ:

Նախ՝ դիակրիտիկները հստակորեն տարբերակում են լեզվի երկար և կարճ ձայնավորները, ինչպես՝ երկար ձայնավորներ- *ā, ē, ī, ō, ū, ŷ*, կարճ ձայնավորներ- *ă, ě, ĭ, ǒ, ů, ȳ* (տե՛ս **Երկար և կարճ ձայնավորներ** բառահոդվածը):

Եվրոպական լեզուներում դիակրիտիկներ կրում են ձայնավորները, հմմտ. հուն. *α - ά (αῖσα, άγη), ε - έ (εῖς, έχάς), η- ή (ήγεμω, ήβη)*, գերմ. *a - á- ä (ánhalten, bedónken, anhänglich), u - ü (aufgeben, anknüpfen), o-ö (franko, anknöpfen), e -é (belét), ֆրանս. e (maire) - é (grillé) - è (grève) - ë (canoë) - ê (tête), a (plan) - â (théâtre), u (plus) - ù (où) - û (flûte), i (il) - î (gîte) - ĩ (maïs), c*

(carte) - ç (hameçon), o (ongle) - ô (icône), ɾɪ. ɪ - ʏ (играть - краткий), e - ë (бер, актёр) և այլն:

Երկրորդ դեպքում դիակրիտիկները, դրվելով որոշակի հնչյունային արժեքով տառանշանի վրա, դառնում են այլ հնչյունի արտահայտիչ նշան. այլ կերպ ասած՝ դիակրիտիկ կրող տառը վերածվում է այլ տառանշանի, հնչյունային այլ արժեքով: Պարսկերենում դիակրիտիկները փոխում են ձայնավորի հնչյունային արժեքը, հմմտ. ۱- e , انتخاب (entexāb) , ۱- o , افتادن (oftādan) , ۱- a , اهملت (ahamiyat), արաբերենում դիակրիտիկների գործածությունը հաճախադեպ է, որ պայմանավորված է հնչույթների քանակով, դրանք հիմնականում դրվում են բաղաձայնների վրա՝ նրանց հաղորդելով հնչյունային նոր արժեք, հմմտ.

ح - h, ج - j, خ - x , ر - r, ز - z, ش - s, س - sh,
ب - b, پ - p, ت - t, ث - s:

Դիակրիտիկների գործածությունը մեկ անգամ ևս հաստատում է այն դրույթը, որ լեզուներում հնչույթներն ավելի շատ են, քան նրանց գծային նշանները:

ՀԱՅՅՈՒՆԱԿԱՆ ՇՂԹԱ –Հնչյունական շարք (հնչյունաշարք), որ ներառում է բառի ակուստիկական պլանի բաղադրիչ հնչյունների ամբողջությունը, իսկ կապակցված խոսքի մեջ՝ նախադասության հնչերանգն ապահովող հնչյունների ամբողջությունը՝ որոշակի հատույթների առանձնացումով: Հնչյունական շղթան արտասանական շղթան ապահովող տարրերի (բաղադրիչների) ամբողջություն է, որ իր հերթին բաղկացած է որոշակի միավորներից: Խոսքի ակուստիկական պլանում հնչյունական շղթայի բաղադրիչներ (միավորներ) են համարվում հնչյունական խմբերը, շեշտային առանձին հատվածները, վանկերը, երկհնչյունները (երկբարբառներ ու եռաբարբառներ) և առանձին հնչյունները:

Հնչյունական (կամ արտաշնչական) խմբերի սահմաններն իրար հաջորդող այն երկու դադարներն են, որոնք պայմանավորված են օդի (հոսանքի) ներշնչմամբ: *Շեշտային առանձին հատվածները* կարող են ընդգրկել մեկից ավելի բառային միավորներ կամ բառակապակցություններ և կազմել առանձին շեշտային խումբ: *Վանկերը* պարտադիր ձայնավոր հնչյունի (հազվադեպ՝ ձայնորդի) և նրան հարակից բաղաձայնի կամ բաղաձայնների միաձույլ ամբողջություն է, որ արտաբերվում է օդի մեկ մղումով՝ բնորոշվելով հնչեղության մաքսիմումով: *Երկհնչյունները* վանկարար դեր ունեն և սովորաբար հանդես են գալիս փակ վանկում՝ դառնալով վանկարար հնչյուն և դիտվելով վանկի գագաթ: *Առանձին հնչյունները* միայնակ հանդես գալ չեն կարող (բացառությամբ արմատական է ձայնավորի) և իրացվում են որոշակի հնչյունական միջավայրում. դրանց որակական

հատկանիշները պայմանավորված են հնչյունական շղթայի մեջ գրաված դիրքով և նախորդող կամ հաջորդող հնչյունների փոխադարձ կապերով:

ՀՆՉՅՈՒՆԻ ԴԻՐՔ – Կապակցված խոսքի կամ բառի ակուստիկական պլանում հնչյունի գրաված դիրքն է: Տարբերակում են մեկուսացած է կապակցված հնչյունադիրք հասկացությունները: Հնչյունական շղթայում կապակցված դիրքում գտնվող հնչյունը բնութագրվում է երկու հատկանիշով՝ ուժեղ հնչյունադիրքով և թույլ (հնչյունադիրքով):

Ուժեղ հնչյունադիրքում գտնվող հնչյունը (չեղած կամ եղած հնչյունների հետ) ստեղծում է առավելագույն իմաստատարբերակիչ հակադրություններ, ինչպես՝ հայր – այր, աշուն – շուն, գերել – կերել – քերել, դաս – տաս – թաս, դեր – տեր – թեր և այլն:

Թույլ հնչյունադիրքում գտնվող հնչյունը հնչյունաշղթայում վերածվում է հնչույթի տարբերակի կամ փոփոխակի, ինչպես՝ *կատու* և *կյանք* բառերում ունենք երկու *կ* հնչյուններ, որոնցից երկրորդն առաջինից տարբերվում է քմային հատկանիշով, սակայն նոր հնչյունի չի վերածվում. հնչյունաշղթայում իր գրաված դիրքի պատճառով այն համարվում է *կ* հնչյունի տարբերակ: Այսպիսի դեպքերում, երբ տեղի է ունենում հնչույթային դիրքի չեզոքացում, հնչյունը գտնվում է *չեզոք հնչյունադիրքում*:

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ – Լեզվաբանությունը, նկատի առնելով հնչյունների և հնչյունական այլ միավորների որոշ կարևոր կողմեր, առանձնացնում է հնչյունաբանության երեք կարևոր բնագավառներ, որոնք դառնում են առանձնահատուկ ուսումնասիրության առարկաներ: Այդ բնագավառներն են՝ *հնչյունների ակուստիկա* (ձայնագիտություն), *հնչյունների ֆիզիոլոգիա* (բնախոսություն կամ հնչյունախոսություն) և *հնչույթաբանություն* (ֆոնոլոգիա. ուսումնասիրում է լեզվի հնչյունների գործառնությունները լեզվի համակարգում):

ՀՆՉՅՈՒՆԻ ԱԿՈՒՍՏԻԿԱ – Ուսումնասիրում է հնչյունների ձայնատատանողական շարժումների տեսակն ու բարձրությունը, ուժը, տեմբրը, տևականությունը, հնչեղությունը, լարվածությունը և այլն:

Տատանողական շարժումների բնույթով պայմանավորված՝ հնչյունները բաժանվում են երաժշտական (տոնային) և ոչ երաժշտական (ադմկային) տեսակների: Տոնայնությունն առաջանում է ձայնալարերի պարբերական տատանումներից, ադմուկն առաջանում է արտասանական օրգանների (օրինակ՝ շրթունքների) ոչ պարբերական տատանումներից: Ըստ այդմ, ձայնավորները կազմված են ձայնից և ադմուկից, բաղաձայնները՝ միայն ադմուկից:

ՀԱՅՅՈՒՆԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ - Որոշվում է տատանումների (հնչյունի հաճախականությունների) քանակով, մասամբ նաև ուժգնությամբ ու տեմբրով: Ընդ որում՝ ինչքան բարձր է հաճախականությունների թիվը ժամանակի տվյալ միավորի ընթացքում, այնքան բարձր է նաև հնչյունի բարձրությունը: Հնչյունի բարձրությունը պայմանավորված է նաև ձայնալարերի երկարությամբ և պրկվածությամբ: Հնչյունի բարձրությունը չափվում է հերցով. ինչքան շատ են հերցերը վայրկյանի ընթացքում, այնքան բարձր է հնչյունը: Մարդկային ականջն ունակ է լսելու 16-20.000 հերց հաճախականության ձայներ (հնչյուններ), քանի որ հոդաբաշխ հնչյունները կազմավորվում են այդ դիապազոնում (ուլտրաձայները և ինֆրաձայները մարդ արարածը չի կարող ընկալել այն դեպքում, երբ այդ հաճախականության ձայները (հնչյունները) հասու են շներին, աղվեսներին՝ չղջիկներին և դելֆիններին):

ՀԱՅՅՈՒՆԻ ՈՒԺԳՆՈՒԹՅՈՒՆ - Որոշվում է հնչյունի տատանումների ամպլիտուդայով՝ ձայնի ալիքի վերին ու ստորին կետերի միջև ընկած տարածության մեծությամբ: Ինչքան մեծ է ամպլիտուդան, այնքան ցայտուն է հնչյունի ուժգնությունը, միաժամանակ, ինչքան փոքր է ամպլիտուդան, այնքան նվազ է հնչյունի ուժգնությունը: Մյուս կողմից պետք է նկատի ունենալ, որ հնչյունի ամպլիտուդայի մեծությունը կախված է արտամղվող կամ ներշնչվող օդի հոսանքի ճնշման աստիճանից:

ՀԱՅՅՈՒՆԻ ՏԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (երկարություն կամ ամանակ) - Նրա հնչման տևողությունն է՝ նրան հատուկ տատանումների քանակով: Հնչյունի տևականությունը որոշվում է այն ժամանակային միավորի՝ ժամանակահատվածի մեջ, որի ընթացքում արտաբերվում է հնչյունը հնչյունական շղթայում: Հնչյունների տևականության տարբերությունը ժամանակային միավորների քանակի մեջ է, որ պահանջվում է հնչյունի արտաբերման համար:

Հնչյունի տևականությունը կախված է խոսքի տեմպից: Ինչքան տեմպն արագ է, այնքան նվազ է հնչյունի տևողությունը և հակառակը: Հնչյունի տևողությունը շատ կարճ է. այն տատանվում է 20-220 միկրովայրկյանի միջակայքում:

Հնչյունի տևողությունը խոսքի շղթայում պայմանավորված է նաև հնչյունի գրաված դիրքով. օրինակ, ձայնավոր հնչյունը ձայնավորից առաջ կարճ է հնչում, հմմտ. *հրենայ*, *աստուած*, *միայն*, *առիստ*, *էական*, *էություն*, *հեքիաթ*, *Մարիետա*, *сообщение*, *карьера*, *имеет*, *западноевропейский* և այլն:

Որոշակի դեպքերում բաղաձայն հնչյունների տևողությունը կարող է իմատատարբերակիչ դեր ունենալ, ինչպես՝ *քնել* – *քննել*, *աբա* – *աբբա*, անգլերենում այդպիսի դեր ունեն ձայնավորները՝

shep (fip) (նավ) - sheep (fi:p) (ոչխար)

seek /i:/ - sick /ɪ/

peach /i:/ - pitch /ɪ/

feel /i:/ - fill /ɪ/

sheet /i:/ - sh*t /ɪ/

least /i:/ - list /ɪ/

Luke /u:/ - look /ʊ/

caught /ɑ:/ - cot /ɑ/

fool /u:/ - full /ʊ/

pool /u:/ - pull /ʊ/

two /u:/ - to /ʊ/

Ըստ հնչյունի արտաբերման տևականության գործընթացի՝ լեզունե-
րում տարբերակում են *երկար և կարճ հնչյուններ* միավորները (տե՛ս **Երկար
և կարճ ձայնավորներ** բառահոդվածը):

ՀՆՁՅՈՒՆԻ ՀՆՁԵՂՈՒԹՅՈՒՆ - Առաջանում է այն դեպքում, երբ
բերանի խոռոչ ներխուժած ձայնային ալիքներն արգելքների չեն հանդիպում,
չեն խաթարվում և հնչում են որպես երաժշտական ձայն՝ ձայնավոր հնչյուն:

ՀՆՁՅՈՒՆԻ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ – Հնչյունների կազմավորման ու
արտասանության համար ստեղծվող պատնեշի ամրության աստիճանն է, որ
հաղթահարվում է արտասանության ընթացքում:

ՀՆՁՅՈՒՆԻ ԵՐԱՆԳ (ՏԵՄԲՐ) – Հնչյունի արտաբերման առանձ-
նահատկություն, որ համարվում է նրա հնչարտաբերական (ակուստիկա-
կան) բնութագրերից: Հնչյունի երանգը (տեմբրը) կախված է հիմնական
տոնի, օբերտոնի և ադմուկի ու արձագանքարանային տոների հարաբերակ-
ցությունից: Հնչյունի տեմբրի շնորհիվ հնարավոր է լինում տարբերակել
նույն բարձրությունը, ուժգնությունը, երկարությունն ունեցող ձայները
(հնչյունները) տարբեր մարդկանց խոսքի ընթացքում. հնչյունի տեմբրի
շնորհիվ մենք ճանաչում ենք մեզ ծանոթ մարդու ձայնը՝ առանց նրան
տեսնելու (մանավանդ հեռախոսով հաղորդակցվելիս): Հնչյունի երանգի մի-
ջոցով կարելի է գանազանել երաժշտական միևնույն նոտաները երաժշտա-
կան տարբեր գործիքների կատարմամբ (օրինակ՝ առաջին օկտավայի *դո*
հնչյունը՝ ջութակի, դաշնամուրի, ակորդեոնի, երգեհոնի և փողային գոր-
ծիքների կատարմամբ):

ՀԱՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԸՆԿԱԼՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ - Լեզվի հնչյունները, ընկալվելով լսողական գործարաններով, դառնում են գիտակցված իրողություններ. խոսողների լեզվական գիտակցության մեջ ամրակայվում են այդ հնչյունների պատկերները կամ նրանց ընդհանուր պատկերացումները: Լեզվում բազմաթիվ ձայնային միավորներ կան, որոնք ընկալվում են միայն հատուկ սարքավորումների միջոցով, դրանցից, սակայն, հնչյուններ են համարվում միայն նրանք, որոնք հասնում են ընկալվելու աստիճանի և մարդու գիտակցության մեջ համապատասխանում են իրենց հնչյունային պատկերացումներին:

ՆՇԱՆԱԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ - Հնչույթները միմյանցից տարբերվում են ոչ միայն հնչարտաբերական հատկանիշներով, այլև այն բանով, որ ընդունակ են տարբերակելու ձևույթներն ու բառերը՝ մասնակցելով նրանց կազմավորմանը: Նման դերով հնչույթները դառնում են բառի կամ ձևույթի կառուցվածքային նշաններ. հմմտ. *գառ* և *տառ* բառերը, որոնք տարբերակվում են առաջին բաղաձայնով, իսկ *գեր* և *գիր* բառերը տարբերակվում են ձայնավորով: Բառերը տարբերակվում են միմյանցից ոչ թե տարբեր հնչյուններից կազմված լինելու շնորհիվ, այլ նրանով, որ արտահայտում են տարբեր նշանակություններ (այդ պատճառով էլ *նուտ*, *նուս*, *նուգ* հնչյունախմբերը չեն համարվում հայոց լեզվի բառեր, թեև նրանք կազմված են հայերենի հնչյուններով): Բառիմաստի և նրա հնչյունական թաղանթի սկզբունքային անհամապատասխանությունը հստակ երևում է բազմիմաստ, հոմանիշ և համանուն բառերի դեպքում:

ԻՄԱՍՏԱՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ - Հնչույթները իմաստագուրկ միավորներ են, իմաստ չունեն (նկատի չունենք մեկ հնչույթից կազմված բառերը, ինչպես՝ է), նրանք ծառայում են իմաստների տարբերակմանը: Այդ դերը հնչույթների իմաստազատիչ կամ իմաստատարբերակիչ գործառնություն է: Իմաստների տարբերակումն իրականացվում է հակադրությունների միջոցով:

ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱԿԱՂԻՈՒԹՅՈՒՆ - Լեզվական տարբեր միավորների միջև այնպիսի հակադրություն է, որի ժամանակ հնչյունները, տարբերվելով իրենց որակներով, միաժամանակ ձևավորում են տարբեր բառային իմաստներ: Հակադրվող հնչյունները միմյանցից տարբերվում են առնվազն մեկ հատկանիշով: Այսպես՝ *քար* և *կար* բառերի *ք* և *կ* հնչյունները միմյանցից տարբերվում են միայն մեկ հատկանիշով. առաջինը շնչեղ բաղաձայն է, երկրորդը՝ խուլ (ոչ շնչեղ): Այս բառերը միմյանց հակադրելու

դեպքում կունենանք միակ հատկանիշի՝ *շնչեղության - ոչ շնչեղության հակադրություն*: Եվ որովհետև այդ հատկանիշով տարբերակվում են այդ բառերը, ապա շնչեղություն - ոչ շնչեղություն հատկանիշը տարբերակիչ հատկանիշ է:

Սովորաբար հնչույթային հակադրությունը լինում է երկու կարգի. առաջին միմյանց հակադրվում են եղած հնչյունները: Հմմտ. հայերեն. գուր-սուր, փող-փոխ, վարգ(ել)-վարկ-վարք, դաս-տաս-թաս և այլն, ռուս. обить-убить, тема-рема, плавать-плакать, рубль-дубль, անգլ. letter-better (նամակ-ավելի լավ), surch-church (փնտրել-եկեղեցի), cry-try (բղավել-փորձել), toy-boy (խաղալիք-տղա) և այլն:

Երկրորդ դեպքում բառի որևէ հնչյուն հակադրվում է մեկ այլ բառի կազմում չեղած հնչյունին, և ըստ այդմ տարբերակվում են այդ բառերի իմաստները: Օրինակ՝ անուշ - նուշ (ա - թ), նուշ - ուշ (ն - թ), քայլ - այլ (ք - թ), հայր - այր (հ - թ), ռուս. эталон - талон, обить - бить, бокс - бок, անգլ. fair-air (հիանալի - օդ), box - ox (տուփ-ցուլ) և այլն:

Հնչյունային հակադրությունը կարող է գործել նախադասության կառուցվածքում՝ հանդես գալով յուրաքանչյուր հաջորդ բառի արտահայտության պլանում, հմմտ. լատ. Amicus cognoscitur *amore more ore re*.

ՀՆՉԱՐՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ – Խոսքային գործարանների (լեզու, քիմք, ձայնալարեր, շրթունքներ, ատամնաշար և այլն) աշխատանքը որոշակի հաջորդականությամբ, նրանց աշխատանքի ամբողջությունը՝ որոշակի հնչյուններ ձևավորելու նպատակով: Տարբերակում են հնչարտաբերության երեք փուլ՝ մուտք, պահք և դարձք (կամ ելք):

Մուտքի փուլում արտասանական գործարանները չեզոք վիճակից նախապատրաստվում են տվյալ հնչյունի արտաբերությանը, **պահքի փուլում** արտասանական գործարանները որոշակի դիրք են գրավում՝ տվյալ հնչյունն արտաբերելու համար, **դարձքի փուլում** արտասանական գործարանները տվյալ հնչյունն արտաբերելուց հետո վերադառնում են ելման (չեզոք) դիրքին:

Ըստ արտասանական գործարանների տեղայնացման և ռնգային արձագանքարանի դիրքի՝ տարբերակում են *բերանային* և *ռնգային (հնչ)արտաբերություն* հասկացությունները:

Ըստ այն հանգամանքի, թե արտասանական գործարաններով որոշակի ի՛նչ հնչյուն է արտաբերվում, թե նրան լրացուցիչ ի՛նչ երանգներ են հաղորդվում, տարբերակում են *հիմնական* և *լրացուցիչ արտաբերություն* հասկացությունները:

Հիմնական արտաբերությամբ ստեղծվում է տվյալ հնչյունի (ձայնավոր կամ բաղաձայն, երկբարբառ կամ եռաբարբառ) որակային և քանակային հիմնական բնութագիրը: Այդ դեպքում հնչյունը բնութագրվում է ըստ ձայն և

աղմուկի հարաբերության, ըստ արտաբերման տեղի, ըստ արտաբերման եղանակի, ըստ կազմության և այլն: Լրացուցիչ արտաբերությամբ հնչյունին հաղորդվում է արտասանական որևէ երանգ՝ *քմայնացում, շրթնայնացում, ռնգայնացում, շնչեղացում* և այլն:

Ելնելով այն հանգամանքից, որ բաղաձայն հնչյունների արտաբերությունը տեղայնացված է, կարող ենք բնութարգել այդ հնչյունների արտաբերական գործարանների դիրքը՝ բերանի խոռոչի որոշակի հատվածում, ինչպես նաև ցույց տալ արտաբերական գործարանների աշխատանքը՝ տվյալ հնչյունի կազմավորման ընթացքում: Այսպես, *տ* հնչյունի արտաբերությունն ընդգրկում է շրթունքների հպումը (միմյանց), լեզվի առաջնային պատի (մեջքի) փափուկ մասի հպումը վերին ատամնաշարին (կոշտ քիմքին) և լեզվի ու քիմքի անջատումը, որտեղից դուրս է մղվում օդի հոսանքը՝ ձևավորելով տվյալ հնչյունը: *Ա* ձայնավորի արտաբերության ժամանակ ներքին ծնոտը ցած է իջնում, շրթունքները պասսիվ դիրք են գրավում, բերանը նկատելիորեն բացվում է, լեզուն հարթ դիրք է գրավում և չի բարձրանում դեպի քիմք, փափուկ քիմքը բարձրանում է և փակում օդի հոսքը դեպի քիթ, ձայնալարերը սեղմված են և թրթռում են:

Հայերենի ձայնավոր հնչյունների արտաբերության դեպքում կարևոր դեր ունեն լեզուն և շրթունքները: Լեզվի համապատասխան դիրքով ձևավորվում են առաջնալեզվային, միջնալեզվային և հետնալեզվային ձայնավորները, շրթունքների համապատասխան դիրքով արտաբերվում են շրթնայնացված և ոչ շրթնայնացված (բաց կամ անտարբեր) ձայնավորները:

Հայերենի բաղաձայն հնչյունների արտաբերության դեպքում կարևորվում են արտասանական գրեթե բոլոր գործարանները, որոնք ապահովում են դրանց հնչարտաբերությունը:

ՀՆՉԱՐՏԱԲԵՐԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ – Այլ կերպ կոչվում է նաև *արտասանական բազա*: Որոշակի հնչյունների արտաբերման այն ունակությունն է, որ պայմանավորված է տվյալ լեզուն կրող հանրության կազմախոսական յուրահատկություններով: Որևէ լեզվի հնչյունների արտաբերումը այլ լեզվակիր անհատների (հանրության) համար որոշակի դժվարություն է հարուցում՝ պայմանավորված արտասանական օրգանների (գործարանների) ինքնատիպությամբ: Օրինակ, գերմաներենի *բ* հնչյունը հատուկ է գերմանախոս հանրությանը (*Kampf* – պայքար, *Pferd* – ձի, *Pfandhaus* – գրավատուն, *Pfennig* – մանրադրամ): Անգլերենի *th* բարդ հնչյունը (*this* – այս, *thought* – միտք, *theatre* – թատրոն) դժվար արտասանելի է հայախոս հանրության համար. այն համապատասխանում է անգլիախոս հանրության հնչարտաբերական ունակությանը: Արաբերենում առկա է կոկորդային խուլ հպական, որ արտաբերվում է խիտ (փակ, հոծ) ձայնալարերի միջոցով. օդի հոսանքը դուրս է գալիս մեկ կտրուկ հրումով՝ առաջացնելով թույլ աղմուկ:

այդպիսին է «ա՛յն» հնչյունի արտաբերումը, որ համապատասխանում է արաբախոս հանրության հնչարտաբերությանը: Ռուսերենի *ю, я, ѣ, и, ё* և այլ հնչյունների արտաբերությունը համապատասխանում է ռուսախոս հանրության հնչարտաբերական ունակությանը, հայերենի *յ, թ, թ, ճ, ծ, ճ* հնչյունները դժվար արտասանելի են ռուսախոս հանրության համար, քանի որ այդ հնչյունները համապատասխանում են հայախոս հանրության հնչարտաբերական ունակությանը և այլն:

ՀԱՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ – Հնչյունները դասակարգվում են երկու խմբի՝ ձայնավորների և բաղաձայնների: Ձայնավորների համակարգը կազմում է վոկալիզմ, բաղաձայնների համակարգը՝ կոնսոնանտիզմ: Ձայնավոր հնչյունները կազմված են միայն ձայնից, նրանց կազմավորմանն ու արտաբերմանը մասնակցում է արտասանական ապարատն ամբողջությամբ, այսինքն՝ նրանց կազմավորումը տեղայնացած չէ:

Բաղաձայն են այն հնչյունները, որոնց մեջ զգալիորեն առկա է աղմուկը (ձայնի գոյությանը զուգընթաց կամ ձայնից զուրկ), և որոնց կազմավորումը տեղայնացած է:

Ձայնավորներն արտաբերվում են երաժշտական ձայնով, նրանց կազմավորման ժամանակ բերանի խոռոչում արգելքներ չեն առաջանում: Այդ հնչյունների արտաբերումն ուղեկցվում է ֆիզիկական որոշակի հատկանիշներով. բարձրություն, սրություն, տեմբր, երաժշտականություն, տևողություն: Բաղաձայններն արտաբերվում են աղմուկով, նրանք արտասանվում են՝ որոշակի արգելքներ հաղթահարելով: Նրանց կազմավորումը տեղայնացած է (ի տարբերություն ձայնավորների), դրանք միաժամանակ ցուցաբերում են այլ հատկանիշներ և խմբի ներսում դասակարգվում են ենթատեսակների՝ ըստ կազմավորման տեղի, ձայնի և աղմուկի հարաբերության, արտաբերման եղանակի, կազմության և այլն:

Ձայնավորներն ունեն մեկ կարևոր դեր. դա նրանց վանկարար դերն է: Ձայնավորը կազմում է վանկի գագաթը, իսկ բաղաձայնն ուղեկցում է ձայնավորին:

Ունենալով տարբերակիչ նշված հատկանիշները՝ այս երկու խմբերն ունեն նաև ընդհանուր բնութագրող երկույթներ: Դրանց արտաբերմանը այս կամ այն չափով մասնակցում են թոքերը, կոկորդը, բերանի խոռոչը, քիմքը, ատամները, շրթունքները և հիմնականում լեզուն:

ՁԱՅՆԱՎՈՐ ՀԱՅՈՒՆՆԵՐ - Ձայնավոր են այն հնչյունները, որոնք կազմված են միայն ձայնից և արտասանվում են առանց արգելքների: Նրանց կազմավորումը տեղայնացած չէ, և ունեն վանկարար դեր: Բոլոր ձայնավորներն էլ ունեն այս հատկանիշները, սակայն որոշ հիմունքներով դրանք էլ իրենց հերթին դասակարգվում են ենթատեսակների:

Ձայնավորների դասակարգման ժամանակ հաշվի են առնում լեզվի դիրքը և բարձրացումը, ինչպես նաև շրթունքների աշխատանքը և այլ հատկանիշներ:

ԼԵԶՎԻ ԴԻՐՔ - Նկատի է առնվում լեզվի այն մասը, որ բարձրանում է վեր տվյալ ձայնավորի ձևավորման համար. տարբերակվում է լեզվի երեք դիրք, համապատասխանաբար ձայնավորների երեք տեսակ՝ առաջնային, միջին և հետին: Ըստ լեզվի դիրքի՝ ձայնավորները լինում են. *առաջնային շարքի*՝ ի, է (ե), *միջին շարքի*՝ ը, *հետին շարքի*՝ ու, օ (ո), ա:

ԼԵԶՎԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ - Նկատի է առնվում տվյալ ձայնավորի ձևավորման դեպքում լեզվի բարձրացման աստիճանը: Սովորաբար տարբերակվում են բարձրացման երեք աստիճան՝ վերին, միջին, ստորին: Ըստ լեզվի բարձրացման աստիճանի՝ ձայնավորները լինում են. *ստորին բարձրացման*՝ ա, *միջին բարձրացման*՝ է (ե), ը, օ (ո), *վերին բարձրացման*՝ ի, ու:

ՇՐԹՈՒՆՔՆԵՐԻ ԴԻՐՔ - Շրթունքները ձայնավորների արտաբերմանը մասնակցում են երկու դիրքով՝ *բաց* (չեզոք) և *կլորացած*: Որոշ ձայնավորների արտաբերման ժամանակ վերին և ստորին շրթունքները բացված դիրքում են լինում, իսկ որոշ հնչյունների արտաբերման ժամանակ մասնակիորեն ձգվում են առաջ և կլորացած դիրք ընդունում: Ըստ այդմ էլ տարբերակվում են շրթնայնացած և ոչ շրթնայնացած ձայնավորներ: *Շրթնայնացած* են օ, ու, *ոչ շրթնայնացած*՝ ա, է (ե), ի, ը ձայնավորները:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇԱՐՔԻ ՁԱՅՆԱՎՈՐ - Առաջնային շարքի ձայնավորները լինում են ոչ շրթնայնացած և շրթնայնացած: Ոչ շրթնայնացած ձայնավորներն ըստ լեզվի բարձրացման աստիճանի լինում են ստորին, միջին և վերին բարձրացման: Ստորին բարձրացման են *ա*՝ և *օ*՝ ձայնավորները, որոնք լինում են փակ և բաց: Փակ ձայնավոր է արտասանվում անգլերեն *bed* «մահճակալ», իսկ բացը անգլ. *man* «մարդ» բառերում: Միջին բարձրացման է *e* (փակ և բաց) ձայնավորը, ռուս. *сели* «նստեցին», գերմ. *See* «ծով», անգլ. *play* «խաղ» (փակ ձայնավոր): Վերին բարձրացման է *i* (փակ և բաց) ձայնավորը: Առաջնային շարքի շրթնայնացած ձայնավորները դարձյալ լինում են ստորին, միջին և վերին բարձրացման: Ստորին բարձրացման ձայնավորներն են *ä*՝ և *ö*՝: Միջին բարձրացման է *ö* ձայնավորը, հմմտ. գերմ. *schön* «գեղեցիկ», *Mörser* «հրահանգ», վերին բարձրացման է *ü* – ն. հմմտ. գերմ. *Übung* «վարժություն», *Mühle* «ջրաղաց» և այլն:

ՄԻՋԻՆ ՇԱՐՔԻ ՁԱՅՆԱՎՈՐ - Միջին շարքի ոչ շրթնայնացած ձայնավորներն են. ստորին բարձրացմանը՝ *ə*՝ կամ *a*՝, որոնք հնչում են անգլ.

thirst (բաց) «ծարավ» և law (փակ) «օրենք» բառերում. միջին բարձրացմանը՝ ջ, որ հնչում է հայ. ընտանի, մարդը և այլ բառերում, վերին բարձրացմանը՝ չ, որ ունենք ռուս. сын բառում:

Միջին շարքի շրթնայնացած ձայնավորներն ը-ի հնչման տարատեսակներն են. ստորին բարձրացմանը՝ a^օ կամ ջ^օ, միջին բարձրացմանը՝ ջօ, վերին բարձրացմանը՝ չ^օ:

ՀԵՏԻՆ ՇԱՐՔԻ ՁԱՅՆԱՎՈՐ - Հետին շարքի ձայնավորները լինում են շրթնայնացած և ոչ շրթնայնացած: Ոչ շրթնայնացած ձայնավորներն ա հնչյունի տարատեսակներն են. դրանք հնչումով շատ մոտ են միմյանց. լինում են բաց և փակ, ինչպես նաև ըստ լեզվի բարձրացման աստիճանի՝ ստորին (a¹), միջին (a²) և վերին (a³) բարձրացման: Հետին շարքի շրթնայնացած ձայնավորներն են. ստորին բարձրացմանը՝ a^օ (փակը՝ a^{օ1}, բացը՝ a^{օ2} կամ a^{օ3}), միջին բարձրացմանը՝ o (փակը՝ o¹, բացը՝ o²), վերին բարձրացմանը՝ u (փակը՝ u¹, բացը՝ u²):

ԵՐԿԱՐ ԵՎ ԿԱՐՃ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ – Որոշ լեզուների հնչյունական համակարգերում տարբերակում են *ձայնավորների երկար և կարճ* տեսակներ: Այդ ձայնավորների որակով է պայմանավորված վանկի արտասանությունը: Հին հունարենում, լատիներենում, պարսկերենում այդ կարգի ձայնավորները հստակ տարբերակվում են բառերի արտասանական հատույթներում: Ձայնավորների երկար և կարճ արտաբերումները գրության համակարգում արտահայտվում են դիակրիտիկների միջոցով: Այսպես, լատիներենի կարճ ձայնավորներն են՝ ā, ē, ī, ō, ū, ŷ, երկար ձայնավորներն են՝ ā, ē, ī, ō, ū, ŷ:

Լատիներենում բաց վանկը, որ պարունակում է երկար ձայնավոր, համարվում է երկար (վանկ), իսկ կարճ ձայնավոր պարունակող վանկը՝ կարճ, հմմտ. Eū - rō - pā. կազմված է երկու երկար (Eū - rō) և մեկ կարճ վանկից (pā):

Երկար և կարճ ձայնավորները կարող են քերականական արժեք արտահայտել: Այսպես, լատիներենում երկրորդ և երրորդ խոնարհման բայերի անորոշ դերբայը ձևավորվում է համապատասխանաբար ē (երկար) և ē (կարճ) ձայնավորներով: Հմմտ. երկրորդ խոնարհում. habē - re (ունենալ), respondē-re (պատասխանել), ridē - re (ծիծաղել), memoria tenē - re (հիշել), երրորդ խոնարհում. legē - re (կարդալ), scribē - re (գրել), tegē - re (թաքցնել, ծածկել) և այլն:

Պարսկերենի ձայնավորները՝ a, i, u, e, o, բնութագրվում են ըստ որակական և քանակական հատկանիշների: Քանակական բնութագրման ժամանակ հաշվի է առնվում ձայնավորների տևականությունը՝ կարճ և երկար: Ընդ որում՝ a ձայնավորն ունի երկու տարբերակ՝ երկար ā. (āftāb

(آفتاب) - արև, deraz (دراز) - երկար, kutāh (کوتاه) - կարճ և *կարճ* ֆ. (afsus (افسوس) - ավստասանք, angošt (انگشت) - մատ, ahamiyat (اهمیت) - կարևորություն):

Մնացած ձայնավորները հստակ բաժանվում են երկար և կարճ տեսակների. *երկար ձայնավորներն են՝* i – ijād (ایجاد) - ստեղծում, ifā (ایفا) - կատարում, irād (ایراد) - թերություն, նկատողություն, u – duxtan (دوختن) - կարել, bustan (بوستان) - այգի, foruxtan (فروختن) - վաճառել: *Կարճ ձայնավորներն են՝* e - ebtēkār (ابتکار) - նախաձեռնություն, enqelāb (انقلاب) - հեղափոխություն, ehtiyāj (احتیاج) - կարիք, o – oftādan (افتادن) - ընկնել, otobus (اتوبوس) - ավտոբուս, o'zr (عذر) - ներողություն:

Անգլերենում երկար և կարճ ձայնավորներն իմաստազատիչ դեր ունեն արտասանական պլանում, հմմտ. peach /i:/ - pitch /ɪ/ դեղձ – ուժգնություն, բարձրություն, feel /i:/ - fill /ɪ/. զգալ - լցնել, լրացնել, least /i:/ - list /ɪ/. նվազագույնը – ցուցակ, Luke /u:/ - look /ʊ/. Ղուկաս – հայացք, fool /u:/ - full /ʊ/. հիմար - լի, լցված, pool /u:/ - pull /ʊ/. լողավազան - քաշել, ձգել, two /u:/ - to /ʊ/. երկու – դեպի և այլն:

Երկար ձայնավորների արտասանական-ձայնային տևողությունն ավելի մեծ է, քան կարճ ձայնավորներինը:

ԲԱՂԱՉԱՅՆ ՀՆՅՈՒՆՆԵՐ - Բաղաձայն հնչյունները արտաբերվում են աղմուկով, նրանց արտաբերման ժամանակ բերանի խոռոչում արգելքներ են առաջանում, նրանց կազմավորումը, ինչպես նշվել է, տեղայնացած է, և գործառնապես չունեն վանկարար դեր: Բաղաձայնների դասակարգման համար հիմնական հատկանիշներ են համարվում ձայնի և աղմուկի հարաբերությունը, արտաբերության եղանակը և արտաբերման տեղը:

ԲԱՂԱՉԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱԲԵՐՈՒՄՆ ԸՍՏ ՁԱՅՆԻ ԵՎ ԱՂՄՈՒԿԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ – Բաղաձայնների արտաբերման ժամանակ ձայնալարերը թրթռում են, ձայն է առաջանում, որը, բերանի խոռոչում արգելքների հանդիպելով, հաղթահարում է դրանք՝ առաջացնելով աղմուկ:

Ըստ այդմ, բաղաձայնները դասակարգվում են քառաշարք, եռաշարք և երկշարք սկզբունքով:

Քառաշարք բաղաձայններն են.

Շնչեղ ձայնեղ	Չայնեղ	Խուլ	Շնչեղ խուլ
բ ^հ	բ	պ	փ
գ ^հ	գ	կ	ք
դ ^հ	դ	տ	թ
ձ ^հ	ձ	ծ	ց
ջ ^հ	ջ	ճ	չ

Գրաբարում և արդի գրական հայերենում շնչեղ ձայնեղներ գոյություն չունեն. դրանք պահպանվել են հայերենի մի շարք բարբառներում, հմմտ. բիերան, գիարի, դիուռ (Արարատ, Կարին, Ջուղա և այլն):

Եռաշարք բաղաձայններն են.

Ձայնեղ	Խուլ	Շնչեղ խուլ
բ	պ	փ
գ	կ	ք
դ	տ	թ
ձ	ծ	ց
ջ	ճ	չ

Եռաշարք բաղաձայններ ունի ժամանակակից հայերենը:

Երկշարք բաղաձայններ. դրանք չունեն շնչեղ ձայնեղ և շնչեղ խուլ շարքերը:

Ձայնեղ	Խուլ
զ	ւ
ժ	շ
ղ	խ
վ	ֆ
(h)	հ

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԱՐՏԱԲԵՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ

- Արտաբերման եղանակով առանձնացվում են բաղաձայնների արտաբերման երկու տեսակ՝ փակվածքային և նեղվածքային: Փակվածքային եղանակով արտաբերվում են հպական որակի բաղաձայններ, նեղվածքային եղանակով՝ շփական որակի:

ՀՊԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆ - Արտասանության ժամանակ բերանի խոռոչի տարբեր մասերում արտասանական գործարանները հպվում են միմյանց, որի հետևանքով առաջանում են փակվածքներ: Օդի հոսանքի ճնշմամբ այդ փակվածքները բացվում են, և առաջանում են փակվածքային հնչյուններ: Երբ փակվածքը բացվում է, առաջանում է նաև պայթյուն: Այդ հնչյունները կոչվում են նաև պայթականներ՝ բ^h, բ, պ, փ, գ^h, գ, կ, ք, դ^h, դ, տ, թ:

ՇՓԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆ - Սրանք բերանի խոռոչում առաջանում են նեղվածքների հաղթահարման ճանապարհով: Արտասանական օրգանները մոտենում են միմյանց, չեն հպվում իրար, առաջանում է նեղվածք, և օդի հոսանքը ձայնի հետ կամ առանց ձայնի այդ նեղվածքով դուրս է գալիս, շփվում է օրգանների պատերին, ուժեղացնում է աղմուկը, և առաջանում են

շփական հնչյունները՝ դ, խ, ժ, շ, գ, ս, վ, ֆ: Ընդ որում շփական հնչյունների մեջ տարբերակում են նաև սուլական (գ, ս) և շչական տեսակները (ժ, շ):

ՀՊԱՇՓԱԿԱՆ - Ձևավորվում են արտաբերական հպական և շփական որակներով. դրանց արտաբերությունն սկսվում է փակվածքով, որին հաջորդում է ոչ թե պայթյունը, ինչպես *բ* կամ *տ* հնչյունների ձևավորման դեպքում, այլ հավաճքի շփական հաղթահարումով. այդ հնչյունների մուտքը պայթական է, դարձքը՝ շփական:

Դրանք են՝

$$\mathfrak{Q}^h = \eta^h + q$$

$$\mathfrak{Q} = \eta + q$$

$$\mathfrak{O} = \text{տ} + \text{ս}$$

$$\mathfrak{S} = \text{թ} + \text{ս}$$

$$\mathfrak{Q}^h = \eta^h + \mathfrak{d}$$

$$\mathfrak{Q} = \eta + \mathfrak{d}$$

$$\mathfrak{X} = \text{տ} + \mathfrak{z}$$

$$\mathfrak{Z} = \text{թ} + \mathfrak{z}$$

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ԱՐՏԱԲԵՐՄԱՆ ՏԵՂԻ – Բաղաձայնների մանրամասն դասակարգումը կատարվում է խոսողության գործարանների և արտաբերության տեղի հիման վրա՝ նկատի առնելով այն տեղը, որին մոտենում է խոսողության ակտիվ գործարանը՝ ստեղծելով փակվածք կամ նեղվածք, որն էլ հաղթահարվում է օդի հոսանքի միջոցով՝ առաջացնելով աղմուկ: Այդպիսի գործարաններ են շրթունքները, լեզուն և կոկորդը. հետևաբար բաղաձայնները բաժանվում են շրթնային, լեզվային և կոկորդային տեսակների, որոնք իրենց հերթին ունեն ենթատեսակներ:

ՇՐԹՆԱՅԻՆ – Ստորաբաժանվում են հետևյալ խմբերի՝

ա) *երկշրթնային*, երբ բաղաձայնն արտասանվում է երկու շրթունքների հպումով՝ քհ, բ, պ, փ, մ, ւ (w. անգլ.),

բ) *շրթնատամնային*, երբ բաղաձայնն արտասանվում է ստորին շրթունքի և վերին ատամնաշարի շփումով՝ վ, ֆ:

ԼԵԶՎԱՅԻՆ - Ունի իր ենթատեսակները՝ առաջնալեզվային, միջնալեզվային, հետնալեզվային:

ԱՌԱՋՆԱԼԵԶՎԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆ - Ունեն իրենց ենթատեսակները.

ա) *լեզվատամնային*, երբ լեզվի առջևի ծայրը դիպչում է միաժամանակ ատամնաշարին և վերին լնդերքին՝ դ^հ, դ, տ, թ, ձ^հ, ձ, ծ, ց,

բ) *լեզվաքմային կամ լնդերքային*, երբ լեզվի առջևի ծայրը դիպչում է վերին լնդերքին՝ ն, ո, բ, լ, դ ,

գ) *առաջնահետնալեզվային*. դրանք բարդ բաղաձայններն են, որոնց տարրերն արտասանվում են լեզվի երկու կենտրոնով (առջևի և հետին մասերով). ջհ, ջ, ճ, չ,

դ) *ատամնային*, երբ բաղաձայնն արտասանվում է երկու ատամնաշարի շփմամբ՝ գ, ս, ժ, շ,

ե) *միջատամնալեզվային*, երբ բաղաձայնի արտասանության ժամանակ լեզուն գտնվում է երկու ատամնաշարերի միջև. այդպիսի բաղաձայն ունի անգլերենը՝ th [θ]:

ՄԻՋՆԱԼԵԶՎԱՅԻՆ ԲԱՂԱԶԱՅՆ - Բաղաձայնի արտասանության ժամանակ հաղթահարվում է լեզվի միջին մասի և քիմքի միջև ստեղծված նեղվածքը կամ փակվածքը, դրանք են՝ գ', գ'հ, կ', ք', յ, ն (սանսկրիտ):

ՀԵՏՆԱԼԵԶՎԱՅԻՆ ԲԱՂԱԶԱՅՆ - Բաղաձայնի արտասանության ժամանակ լեզվի հետին մասը բարձրանում, մոտենում կամ հպվում է վերջնաքիմքին. գհ, գ, կ, ք, դ, խ, ղ (գրաբ.), ղ (անգլ.):

ԿՈԿՈՐԴԱՅԻՆ - Այդպիսին է *հ* շփական հնչյունը. տարբերակում են խուլ շփական՝ *հ*, և ձայնեղ շփական՝ *հ'*: Արաբերենում առկա է ինքնուրույն կոկորդային բաղաձայն, որ կոչվում է *համզա*:

Այսպիսով, բաղաձայնների հնչարտաբերական հիմնական հատկանիշներն են *արտաբերության եղանակը, հնչարտաբերության տեղը և ձայնի ու աղմուկի հարաբերությունը*, որոնց հիման վրա դասակարգվում են այդ հնչյունները:

ՁԱՅՆՈՐԴ ՀՆՁՅՈՒՆ – Լեզուներում կան որոշ հնչյուններ, որոնց ակուստիկական պլանում հավասարապես իշխում են թե՛ ձայնը, թե՛ աղմուկը: Ձայնորդներն են՝ լ, մ, ն, ր, ռ, յ, լ: Ըստ հնչարտաբերական հատկանիշների՝ դրանք լինում են՝ ռնգային (մ, ն), կոդքային (լ), թրթռացող (ր, ռ. ընդ որում ր-ն համարվում է միաթրթիռ, ռ-ն՝ բազմաթրթիռ) և կիսաձայն (յ): Որոշ լեզուներում ձայնորդներն ունեն վանկակազմիչ դեր (Տե՛ս *Վանկ* բառահոդվածը):

ԵՐԿԲԱՐԲԱՌ - Երկու ձայնավոր հնչյունների կամ ձայնավորի ու ձայնորդի միացությունը մեկ վանկում, որտեղ դրանցից մեկը հանդես է գալիս իբրև վանկարար հնչյուն՝ դառնալով վանկի գազաթ: Երկբարբառների հնչյունական առանձնահատկությունն այն է, որ հանդես են գալիս միևնույն վանկում և դիտվում են իբրև անտրոհելի հնչյունակապակցություն: Երկբարբառները հանդես են գալիս փակ վանկում և ունեն երկու գրային նշան: Երկբարբառները սովորաբար ունեն գրության և հնչման տարբերություններ: Օրինակ, գրբ. *աւ* (օ) – ծնաւո, պաշտաւն, *իւ* (յու) – առիւծ, կորիւն, *էւ* (յու) – ալեւր, հարեւր, *ոյ* (ույ) – քոյր, համբոյր, *էաւ* (յա) – մատեան, դղեակ և այլն: Դրանք հատուկ են հին հայերենին, լատիներենին, անգլերենին, գերմա-

ներենին, ֆրանսերենին, իսպաներենին և այլ լեզուների, հմմտ. լատ. *au* - aurum, causa, *ae* - linguae, praesēns, *eu* - Eurōpa, eurinus, *oe* - amoeba, coena, *ui* - sanguis, գերմ. *ei* - ein, eu - *Eu*-le, *au* - Auf-gabe, անգլ. *ou* - mouse, cuprous, *ua* - language, *io* - curiosity, excursion, *eu* - eucalipty, ֆրանս. *au* - mausolée, *ou* - coutelas, ourson, *ui* - produit, *ai* - militaire, claire, *eu* - feux, lumineux, signaux և այլն:

Ըստ վանկարար հնչյունի դիրքի երկբարբառները լինում են երկու տեսակ՝ *իջնող*, երբ վանկարար է դիտվում առաջին բաղադրիչը (գրբ. ոյ - թոյն) և *բարձրացող*, երբ վանկարար բաղադրիչը երկրորդն է (գրբ. եա - սենեակ):

Գրական ռուսերենում երկբարբառներ չկան. դրանք հանդիպում են հյուսիսռուսական խոսվածքներում (кюон, кюзн, куйн և այլն):

ԵՌԱԲԱՐԲԱՌ - Երեք հնչյունների (ձայնավորների և ձայնորդների) միացություն մեկ վանկում, որտեղ այդ հնչյուններից երկուսը հանդես են գալիս իբրև ոչ վանկարարներ. հմմտ. գրբ. *եսու* (յօ) - ընտանեալ, այգեալք, *եսայ* (յայ) - քաղեայք (աստղագուշակներ), *իայ* - միայն, *ւոյ* (վույ) - տարւոյն (տարվա), կենդանւոյն (ողջ-ողջ) և այլն:

Ֆրանս. *que* - artistique, , critique, producique, *eau* -peau, taureau, *ieu* - banlieusard, *eau* - couteau և այլն:

Գրաբարի եռաբարբառները, ըստ վանկարար հնչյունի դիրքի, *բարձրացող* - *իջնող* են. վանկարար հնչյունը գտնվում է ոչ վանկարարների միջև (եաւ, եայ, իայ, տյ):

ՇԵՇՏ - Բառի կազմում հնչյունի կամ վանկի արտաբերության ընդգծումը, ինչպես նաև ամբողջական բառի արտաբերության առանձնացումը խոսքային տակտի կամ արտահայտության պլանում, որ կատարվում է մկանային լարվածության և օդի հոսանքի ուժեղացման միջոցով կամ ձայնի տոնի բարձրացումով:

Պայմանավորված լեզվական այս կամ այն միավորի (հնչյունի, վանկի, բառի) առանձնացման միջոցներով՝ տարբերակում են շեշտի հետևյալ տեսակները՝ ա) *ուժային* (շեշտված վանկն առանձնանում է մկանային լարվածության ուժեղացումով, օդի հոսանքի արտամղման ուժով. բնորոշ է հայերենին, ռուսերենին, անգլերենին, գերմաներենին, լեհերենին, չեխերենին և այլ լեզուների), բ) *երաժշտական* (շեշտված վանկն առանձնանում է ձայն տոնի բարձրությամբ. բնորոշ է պարսկերեն, չինարեն, ճապոներեն, կորեերեն և այլ լեզուների), գ) *քանակային* (շեշտված վանկն առանձնանում է հնչման տևողությամբ. բնորոշ է նոր հունարենին):

Ըստ շեշտվող միավորի առանձնացման՝ տարբերակում են շեշտի *բանային*, *դարձույթային* (*ֆրազային*) և *տրամաբանական* տեսակները:

- **Միատոն շեշտ** - Բնութագրվում է ձայնային միևնույն բարձրությամբ. նրան հատուկ է ուժգնության փոփոխությունն ու վանկարար հնչյունի տևականությունը: Լեզուների մեծ մասին (շուրջ 90 տոկոս) հատուկ է միատոն շեշտը: Արտահայտվում է օդի հոսանքի առավել ուժեղ արտամղումով և, հետևաբար, հնչյունաշարքի որևէ հնչյունի առավել ուժգին արտասանությամբ՝ մյուսների համեմատությամբ:

- **Բազմատոն (երաժշտական) շեշտ** - Բնութագրվում է ձայնի տոնայնության բարձրության փոփոխությամբ, *երաժշտականությամբ*: Երաժշտական շեշտը սահմանափակ չափերով գործածում են գրեթե բոլոր լեզուները՝ հարցում, զարմանք, հիացում արտահայտող բառերի համար. *մի թե, ինչպե՞ս, իսկպե՞ս, իրա՞վ* և այլն:

- **Բառային շեշտ** - Բառի կառուցվածքում որևէ ձայնավորի կամ վանկի առանձնացումն է: Ըստ ձայնային հնչարտաբերական հատկանիշի՝ լինում է *միատոն* (արտաշնչական) և *բազմատոն* (երաժշտական):

- **Դարձությային շեշտ** - Արտաբերման ընթացքում առանձնացվում է իմաստային տեսակետից էական խոսքային տակտը: Արձակ և չափածո խոսքում դարձությային շեշտ սովորաբար կրում է վերջին տակտը: Հմմտ. Ինչքան որ հուր կամ իմ սրտում // *բոլորը քե՛զ (ԵՉ)*:

- **Տրամաբանական շեշտ** - Էապես տարբերվում է բառային շեշտից. այն կատարում է հնչարտաբերական և իմաստային-շարահյուսական գործառույթ՝ միավորելով բառերը տվյալ արտահայտության մեջ: Եթե բառային շեշտն ընկնում է բառի մեջ որևէ *վանկի վրա*, ապա տրամաբանական շեշտն ընկնում է նախադասության մեջ որևէ *բառի վրա* և իմաստային որոշ երանգ հաղորդում նախադասությանը: Օրինակ. *Արոնյա՛նը* հաղթեց շախմատային մրցաշարում: Արոնյանը *հաղթե՛ց* շախմատային մրցաշարում: Արոնյանը *հաղթեց շախմատայի՛ն* մրցաշարում: Տրամաբանական շեշտը կապված է հնչերանգի հետ և համարվում է նրա բաղադրիչներից մեկը:

Ըստ շեշտված վանկի դիրքի՝ առանձնացնում են շեշտի ազատ և կայուն տեսակները:

- **Ազատ շեշտ** - Որոշակի դեպքում լեզվի բառերը և նրա հարացույցներն ամբողջովին ունենում են փոփոխական (շարժուն) շեշտ: Ռուսերենում շեշտն ազատ բնույթի է. այն կարող է ընկնել բառի ցանկացած վանկի վրա. *песня, верность* (առաջին վանկ), *подводный, пробирка* (երկրորդ վանկ), *деловой, молоко* (երրորդ վանկ), *средневековой, красноречивый* (չորրորդ վանկ), *среднеевропейский* (հինգերորդ վանկ) և այլն:

Ռուսերենում (և այլ լեզուներում) ազատ շեշտի յուրահատկությունն այն է, որ այն շարժական է. միևնույն բառի տարբեր հարացուցային ձևերում այն կարող է տեղափոխվել մի վանկից մյուսի վրա, ինչպես՝ *до́м – дома́, го́род – города́, четы́ре – четырё́х* և այլն:

Նմանօրինակ շեշտը, ինչպես հնչույթները, ունենում են (բառական և քերականական) իմաստատարբերակիչ դեր. հմմտ. *բազմակնություն*՝ն (մատանու՝ բազում ակներ ունենալը) – *բազմակ(ը)նություն* (բազմում կանայք ունենալը), *դո՛ւրս գալ* (դուրս գնալ) – *դուր(ը)ս գալ* (դուր գալ), ռուս. за́мок (դղյակ) – замо́к (կողպեք), воды́ (սեռ. հ., եզ. թվ.) – во́ды (ուղղ. հ., հոգն. թվ.), му́ка (տառապանք) – мука́ (ալյուր), тра́вы – (ուղղ. հոլով, հոգն. թիվ) – травы́ (սեռական հոլ., եզակի թիվ), наре́зать (կատարյալի կերպ)– нареза́ть (անկատար կերպ) և այլն:

- **Կայուն շեշտ** - Այսպիսի շեշտի դիրքը (տեղը) անփոփոխ է. գերմաներենում, չեխերենում, հունգարերենում, լատիշերենում շեշտը դրվում է առաջին վանկի վրա, լեհերենում, մալայերենում՝ նախավերջին վանկի վրա, ֆրանսերենում, հայերենում՝ վերջին վանկի վրա: Որոշ լեզուներում կայուն շեշտը միշտ նույն վանկի վրա է մնում՝ անկախ բառի բառակազմական ծավալումից. հմմտ. գերմ. Wíssen (գիտելիք) – Wíssenschaft (գիտություն) – Wíssenschaftler (գիտնական) – Wi's-senschaftlerin (կին գիտնական) և այլն:

Հայերենում թեև շեշտը վերջնաթեր վանկի վրա է դրվում, այնուհանդերձ հանդիպում է առաջին կամ երկրորդ վանկերում: Այդ կարգի բառերի շեշտը պատմականորեն կայունացել է որոշակի վանկում և ժամանակակից հայերենում ժառանգաբար պահպանվել է, հմմտ. *զո՛ւնե, այս՛ պես, նո՛ւյնպես, ահա՛ վասիկ, գրե՛թե, իհա՛րկե* և այլն:

Կայուն շեշտը բառի կառուցվածքում մնում է միշտ որոշակի դիրքում. օրինակ, բառի վերջին վանկում՝ անկախ բառի բառակազմական ծավալումներից, այս դեպքում այն կարող է փոխել իր տեղը և տեղաշարժվել դեպի աջ. հմմտ. հայերեն. *մա՛րդ –մարդկայի՛ն – մարդկայնություն՛ն, մի՛տք – մտավո՛ր – մտավորակա՛ն – մտավորականություն՛ն* և այլն: Այսպիսի շեշտը կոչվում է *կայուն-շարժական*:

- **Հիմնական և երկրորդական շեշտ** - Բարդ բառերը կարող են ստանալ երկու շեշտ՝ *հիմնական և երկրորդական* (լրացուցիչ): Հիմնական շեշտը բնորոշվում է ուժով, բարձրությամբ և հնչեղությամբ, երկրորդականը՝ թույլ ուժով, ունի նվազ բարձրություն և հնչեղություն և սովորաբար ընկնում է բառի առաջին մասի վրա, հմմտ. պա՛մմահամեմատակա՛ն, ռու՛ս-ճապոնակա՛ն, ча́сте ре́чный, ле́чик-истреби́тель և այլն:

- **Անշեշտություն** - Խոսքի շղթայում հանդիպում են բառեր, որոնք շեշտ չեն ստանում, ինչպես՝ դերանունները, կապերը, հոդերը, որոշ բառ-մասնիկներ և այլն: Անշեշտ բառերը լինում են նախահար և վերջահար:

- **Նախահար անշեշտ բառեր** - Մեծ մասամբ միավանկ են, կորցնում են շեշտը և հնչերանգով հարում են հաջորդ (լիիմաստ) բառին, հմմտ. *իմ՛քեռի՛ն, երկու՛ օ՛ր, դեպի՛ լուսի՛ն, վասն՛ Վարդանա՛յ, յաղագս՛ Արշակա՛յ* և այլն:

- **Վերջահար անշեշտ բառեր** - Խոսքում կան անշեշտ բառեր էլ, որոնք շարադասորեն հաջորդում են լիիմաստ բառերին, նրանց հետ կազմում են

հնչերանգային հարադրություն, դրանք, սովորաբար, լինում են բառ-մասնիկներ, где-то, поди-ка, сделал бы, такой бы: Երբեմն վերջահար անշեշտ դերով հանդես են գալիս նյութական խոսքի մասերը, ինչպես՝ ա՛յր *ւհ*, ա՛յր *մն*, նի՛ւթ *ինչ*, մագաղա՛թ *իմն*, քե՛զ *պէս*, եւ՛էз *вести*, за՛ город, и՛з города, по՛ небу և այլն:

ՎԱՆԿ - Արտասանական շղթայի հատված, ձայնավոր կամ ձայնավորի ու բաղաձայն(ներ)ի միակցություն, երկբարբառ կամ եռաբարբառ, որոնք արտասանական մեկ միասնություն են կազմում և հնչյունաշարքի նմանատիպ հատվածներից բաժանվում են արտասանական դադարով:

Հնչյունաշղթայում վանկն իրացվում է ոչ թե որպես բաղադրիչ հնչյունների հետևողական հաջորդողականություն, այլ որպես ամբողջական հնչարտաբերական համալիր, որ արտաբերվում է մկանների ուղղված նյարդաֆիզիոլոգիական մեկ հրահանգով: Արտաբերվող օդուծի դիմադրության տեսակետից՝ վանկը նվազագույն հնչյունական հատված է, որն օժտված է օդային հոսանքի (ալիքի) բարձրացումով և իջեցումով: Վանկի արտաբերության պլանում օդային հոսանքը համապատասխանում է հնչյունների (ձայնային) ճնշման աղեղի բարձրացման ու իջեցման տոներին:

Վանկ կազմելու համար անհրաժեշտ է առավել հնչեղություն և նվազագույն լարվածություն ունեցող հնչյուն (վանկի գագաթ): **Վանկի գագաթ** կարող է լինել ձայնավորը (ե-ա-կան, ա-րագ, ու-րախ...), երկհնչյունը (ա-ռիծ, յոյն, մա-տեան, պաշ-տան, հայր, այս-պես, վարդա-բույր, ար-յուն, մարդա-բոյ..., լատ. au-rum, Eu-ropa, Ae-gyptus, Oe-dipus, գերմ. ein, Eu-le, Auf-gabe...), եռաբարբառը (այգ-ւոյն, քաւ-դեայք, միայն): Որոշ լեզուներում (սերբերեն, չեխերեն և այլն) վանկարար հնչյուն կարող են դառնալ ձայնորդները, ինչպես՝ սերբերեն՝ *srб* (սերբ), *sr-че* (սիրտ), չեխերեն՝ *v|k* (գայլ), *křk* (պարանոց), *s|n-че* (արև) և այլն:

Բառերը, ըստ վանկերի քանակի, լինում են **միավանկ** (տուն, ծառ, ձեռք, ես, դու, շուտ, ուշ, լավ, վեց, յոթ, գալ, տալ...) և **բազմավանկ** (բանակ, պատուհան, կապույտ, կախարդական, արագընթաց, ընթերցել, արտասանել, շուտափույթ...): Լեզուներում շատ են բազմավանկ բառերը: Ըստ վանկերի քանակի բառերը լինում են նաև մեկնկեսավանկանի. կես վանկը գաղտնավանկն է (մկրատ, գրիչ, գնդակ, վագր, կայսր, անգղ...):

ԳԱՂՏՆԱՎԱՆԿ - Արտասանվող բայց չգրվող Ը ձանավորով ձևավորված վանկն, որ հանդիպում է *բառասկզբում*. տ(ը)ր-ցակ, հ(ը)ր-կեզ, խ(ը)ն-դիր, *բառամիջում*. անդ(ը)ն-դախոր, խորհ(ը)ր-դավոր, *բառավերջում*. արաքայադուս- տ(ը)ր, կիսաթան – ձ(ը)ր և այլն:

Տողադարձի դեպքում գործում է վանկատման կանոնը. գաղտնավանկ Ը ձայնավորը վերականգնվում է (տե՛ս **Գաղտնավանկի** օրինակները):

Պայմանավորված վանկի վերջի և սկզբի հնչյունի բնույթով՝ տարբերակվում են վանկի հետևյալ տեսակները.

- *բաց վանկ*, եթե վանկը կազմվում է միայն վանկաբար հնչյունից կամ վերջանում է ձայնավորով, օրինակ՝ *ե - կե - դե - ցի, ա - թե - նա*,

- *փակ վանկ*, եթե վանկը վերջանում է բաղաձայնով. օրինակ՝ *ար - դուկ, վեր - ջին, ար - դյունք*,

- *սքողված*, եթե վանկն սկսվում է բաղաձայնով. *մե - քե- նա, գե- դե - ցիկ*,

- *ոչ սքողված*, եթե վանկն սկսվում է ձայնավորով. *էջք, ուլ, ու-րախ* և այլն:

Վանկերը միմյանցից բաժանելու գործընթացը կոչվում է վանկատում:

Վանկատումը կատարվում է որոշակի կանոններով.

ա) երկու ձայնավորների միջև եղած մեկ բաղաձայնը վանկ է կազմում հաջորդող ձայնավորի հետ. ա-նիվ, դա-սա-րան, հա-նե-լուկ, օ-րա-ցույց,

բ) ձայնավորների միջև եղած բաղաձայններից վերջինը վանկ է կազմում հաջորդող ձայնավորի հետ, օրինակ՝ կար-դալ, ալ-յուր, երկ-նել, զարթ-նել,

գ) բաղաձայնին հաջորդող Յ կիսաձայնը վանկաբաժանման ժամանակ դրսևորում է երկակի դեր. հաջորդ վանկ անցնում է կա՛մ միայնակ, կա՛մ նախորդող բաղաձայնի հետ. լռութ-յուն // լուր-թյուն, գոչ-յուն // գո-չյուն, դոփ-յուն // դո-փյուն, աղբ-յուր // աղ-բյուր,

դ) միմյանց հաջորդող երկու ձայնավորները բաշխվում են տարբեր վանկերի միջև. է-ակ, է-ու-թյուն, մի-մի-այն, լի-ու-թյուն, Մա-նե-ի, թի-ակ և այլն:

Վանկի տեսակներից է *հարաբերականորեն փակ վանկը*. դա փակ վանկն է, որ կարող է բացվել, երբ ստանում է բառակազմական կամ քերականական ձևայիններ, ինչպես՝ օր և օ - րեր, ըն- կեր և ըն-կե - րական, ու - րախ և ու - րա -խություն և այլն:

Որպես հնչյունական միավոր՝ վանկը տարբեր լեզուներում բնութագրվում է տարբեր հատկանիշներով: Որոշ լեզուներում վանկի կառուցվածքը սահմանափակ դրսևորում ունի. օրինակ, արաբերենում ընդունված է միայն *բաղաձայն + ձայնավոր* և *բաղաձայն + ձայնավոր + բաղաձայն* վանկակառուցվածքը: Դադստանի լեզուներում բառի վերջին վանկը ձևավորվում է *ձայնորդ + բաղաձայն* կառուցվածքով, իսկ որոշ լեզուներում վանկի կառուցվածքում առկա է հնչյունների բաշխումնային սահմանափակություն. գերմաներենում շնչեղ բաղաձայնները վանկի վերջում չեն հանդիպում, մինչդեռ շվեդերենում կարճ ձայնավորներին հաջորդում են երկար բաղաձայնները, իսկ երկար ձայնավորներին՝ կարճ բաղաձայնները: Որոշ լեզուներում շեշտի դիրքը կախված է վանկերի քանակից. լատիներենում շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա, եթե այն պարունակում է երկար

ձայնավոր կամ վերջանում է բաղաձայնով, մնացած դեպքերում՝ վերջից երկրորդ վանկի վրա: Որոշ լեզուներում առկա է վանկի առոգանության՝ տոնի և տեմբրի ներդաշնակում, ինչպես սլավոնական լեզուներում է դիտվում վանկային ներդաշնակում՝ *փափկություն-կոշտություն* կտրվածքով և այլն:

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ - Լեզուն մեկընդմիջ տրված անփոփոխ երևույթ չէ, այն փոփոխվում, զարգանում և կատարելագործվում է հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց: Փոփոխությունները լեզվի մեջ տեղի են ունենում նրա տարբեր մակարդակներում՝ հնչյունական, բառային և քերականական:

Խոսքաշարում հնչյունները (հատկապես ձայնավորները) այլ հատկանիշներ են ի հայտ բերում, քան խոսքաշարից դուրս: Լեզվի հնչյունները, խոսքի շղթայում միմյանց հետ կապակցություն կազմելով և ստեղծելով հնչերանգային ամբողջություն, հաճախ ենթարկվում են այլ հնչյունների ազդեցությանը և զրկվում իրենց էական հատկանիշներից: Հնչյունները, գործածվելով վանկի, բառի և դարձույթների կազմում, կարող են փոխազդել միմյանց վրա, փոխել միմյանց որակը՝ առաջացնելով հնչյունների տարբերակներ և հնչյունական փոփոխություններ: Խոսքի շղթայում հնչյունների կրած ձևափոխությունները դիտվում են հնչյունական (ձայնային) գործընթացներ: Այդպիսի գործընթացներ տեղի են ունենում կից հնչյունների արտաբերական փոխազդեցության հետևանքով, որ պայմանավորված է բառի մեջ տվյալ հնչյունի (հնչյունների) գրաված դիրքով: Հնչյունական այդ կարգի գործընթացները կոչվում են հնչյունափոխություն:

Հնչյունափոխությունը լեզվական համընդհանուր երևույթ է, բնորոշ աշխարհի բոլոր լեզուներին: Հնչյունական գործընթացների մեջ ամենից առաջ պետք է նկատի ունենալ լեզվի հնչյունային համակարգում կատարվող տարժամանակյա փոփոխությունները, որոնք տեղի են ունենում նախ քանական, ապա որական փոփոխությունների ուղիով: Ժամանակի ընթացքում որոշ հնչյուններ կարող են դուրս գալ հնչյունական համակարգից, կարող են ավելանալ նոր հնչյուններ, նոր որակի հնչույթներ: Օրինակ, գրաբարում եղել է աւ երկբարբառը, ժամանակի ընթացքում, սակայն, այդ երկբարբառը դուրս է եկել լեզվի հնչյունական համակարգից, նրան փոխարինել է օ ձայնավորը՝ մտնելով հայերենի այբուբենի մեջ (աւձ – օձ, պաշտաւն – պաշտօն, խելաւք– խելօք): Կամ գրաբարում գործածվելիս է եղել լ (վյուն) հնչյունը. դրանով կազմված բառեր շատ կան, բայց աստիճանաբար այդ հնչույթը մեր լեզվի համակարգից դուրս է եկել. դրան փոխարինել է վ հնչյունը (հմմտ. հաւասար – հավասար, նաւ – նավ, հովիւ – հովիվ): Հին հայերենում կոշտ ու փափուկ բաղաձայնների հնչույթային տարբերակում է

եղել՝ 1//η (ադ-անալի, ջիդ-ջիլ, նշոյլ-շոդ), ժամանակի ընթացքում այդ տարբերակումը վերացել է:

Հնչյունափոխությունն ասելով՝ նկատի են առնում բառերի, նրանց արմատների, քերականական ձևերի մեջ տարբեր պատճառներով տեղի ունեցող հնչյունական փոփոխությունները. հմմտ. տո՛ւն – տոնա՛կ, տան, ի՛ղձ – ըղձա՛լ, արքայ – արքա, պատասխանի տալ – պատասխան տալ, սիրեցցե՛ – սիրեցե՛, քաջութեանք – քաջութեամբ, ագանել – հագանել, տեսանել – տեսնել, *собо́р* – *соб-ра́ние*, *друг- друзья* – *дружба*, *пехота* – *пешком*, *река* – *речка* և այլն:

Այս փոփոխությունները կատարվում են տարբեր պատճառներով և ունեն տարբեր բացատրություններ: Ինչպես երևում է բերված օրինակներից, հնչյունական փոփոխությունները միատեսակ և նույնական չեն իրենց բնույթով. դրանք տարբեր դրսևորումներ և տարբեր պատճառներ ունեն:

Լեզվաբանությունն այդ փոփոխությունները բաժանում է երկու կարգի՝ դիրքային (փոխազդեցական) և ընդհանուր – պատմական:

ԴԻՐՔԱՅԻՆ ԵՎ ՇԵՇՏԱՓՈԽԱԿԱՆ ՀԼՉՑՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ – Դիրքային է այն հնչյունափոխությունը, որ կատարվում է բառի և նրա քերականական ձևի մեջ հնչյունի գրաված դիրքի պատճառով:

Սա այն հնչյունափոխությունն է, երբ բառի և քերականական ձևի մեջ այս կամ այն հնչյունը փոփոխություններ է կրում իր ունեցած դիրքի պատճառով: Սովորաբար հնչյունները փոփոխության են ենթարկվում թույլ արտասանական դիրքում, իսկ լիահունչ արտասանական դիրքում նրանք կայուն են, ինչպես ձայնավորները շեշտակիր վանկում: Բաղաձայնները, որոնք շեշտ չեն կրում, դիրքային հնչյունափոխության են ենթարկվում մեծ մասամբ բառերի վերջում: Ժամանակի ընթացքում նրանք ընկնում են, որովհետև արտասանական տեսակետից բառերի վերջում թույլ դիրք է ստացվում. արտասանական ապարատը խոսքի մեջ՝ բառերի վերջում, նախապատրաստվում է միջբառային դադարի, որից հետո հաջորդ բառը պետք է արտասանվի:

Դիրքային հնչյունափոխությունը շեշտի դիրքից է կախված, դրա համար էլ անվանվում է **շեշտափոխական հնչյունափոխություն**, այսինքն՝ հնչյունափոխություն կախված շեշտի փոփոխության հետ: Սա շատ բնորոշ է հայերենին, գործում է հնուց ի վեր. օրինակ՝ հանդէ՛ս – հանդիսաւո՛ր, առո՛ւ – առվի՛, է ջք – իջանէ՛լ, բո՛ւյր – բուրավետ և այլն:

Այս կարգի փոփոխության են ենթարկվում հայերենի բոլոր ձայնավորներն ու երկհնչյունները: Հմմտ. ա > Օ (գրո). ցամա՛ք – ցամքե՛լ, կռճա՛կ – կռճկե՛լ, ո > Օ. որկո՛ր – որկրամո՛լ, ոսկո՛ր – ոսկրա՛խտ, ե > ի. սե՛ր – սիրո՛, տե՛ր – տիրակա՛ն, ի > ը. ի՛նձ – ընձո՛ւղտ, ի՛նչք – ընչաքա՛ղց, ի > ը. մի՛տք – մտավո՛ր, գի՛ն – գնե՛լ, ի > յ. որդի՛ – որդյա՛կ, աղավնի՛ – աղավնյա՛կ, ու > ը.

մո'ւթ – մթնե'լ, գո'ւթ – գթառա'տ, ու > Ø. գիտո'ւն – գիտնակա'ն, բագո'ւմ – բագմակի', ու > վ. կատո'ւ – կատվաձա'գ, ձո'ւ – ձվաձն', ույ > Ø. սառո'ւյց – սառցակալե'լ, ույ > ը. քո'ւյր – քրո'ջ, բո'ւյն – բնավե'ր, ույ > ու. գո'ւյն – գունա'տ, ողջո'ւյն – ողջունե'լ, յու > Ø. արյո'ւն – արնանե'րկ, յու > ը. ձյո'ւն – ձնհա'լ, յու > ե. միությո'ւն – միութենակա'ն, արյո'ւն – արենակի'ց, յա > ե. գործունյա' – գոծունեություն'ն, պատանյա'կ – պատանեկություն'ն և այլն:

Գրաբարում շեշտափոխական հնչյունափոխության են ենթարկվում եա, ոյ, իւ երկբարբառները և եայ, իայ եռաբարբառները, ինչպես՝ եա > ե. այծեա'մն – այծեմա'ն, կեա'նք – կենա'ց, ոյ > ու. բո'յս – բուսանե'լ, լո'յս – լուսաւո'ր, եայ > է. պաշտօնեա'յ – պաշտօնե'ի, պաշտօնեա'յք – պաշտօնե'ից, իայ > է. միա'յն – մենակեա'ց – մենաստա'ն – մենակո'իւ – մենամարտի'կ և այլն:

Բառերի, նրանց քերականական ձևերի մեջ հաճախ լինում են հնչյունական փոփոխություններ, որոնք, ինչպես ասվեց, պայմանավորված են միմյանց վրա հնչյունների ունեցած ազդեցությամբ: Դա փոխազդեցական հնչյունափոխություն է, որ, անշուշտ, մեծ չափով դիրքային հնչյունափոխության հետ է կապվում, բայց հնչյունափոխության հիմնական պատճառը որոշակի դիրքերում հնչյունների ազդեցությունն է՝ որակական առումով: Փոխազդեցական հնչյունափոխություն է լինում սահմանափակ բառերի մեջ հնչյունների որակական հատկանիշների փոխադարձ ազդեցությամբ, ասենք ձայնեղ բաղաձայնները խուլ բաղաձայնների մոտ ընկնելիս խլանում են, օր. վազք (ս), կողք (խ) և այլն:

Փոխազդեցական հնչյունափոխությունն ունի իր տեսակները:

ԱՌՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՍՄԻՄԻԼՅԱՑԻԱ) - Այն երևույթն է, երբ բառի կամ նրա քերականական ձևի մեջ հնչյուններից մեկի ազդեցությամբ մեկ ուրիշ հնչյուն փոխվում է՝ նմանվելով ազդող հնչյունին՝ լրիվ կամ մասնակիորեն: Այստեղից էլ ունենում ենք լիակատար և ոչ լիակատար առնմանություն:

Լիակատար առնմանության դեպքում ազդող և ազդվող հնչյունները նույնանում են. օրինակ՝ $q + nj\theta + կալ > զուժկալ > ժուժկալ$ ($q < \theta = \theta - \theta$), պրս. $panj$ (հինգ) > հայ բրբ. փանչ > չանչ (ձեռքը բացած՝ հինգ մատները պարզած վիճակով. հմմտ. չանչել, չանչ անել). $\psi < \chi = \chi - \chi$, մատներ – մաններ ($տ < ն = ն$), մատնիք – մաննիք ($տ < ն = ն$), ռուս. $без + сильный > бессильный$, $без + смертник > бессмертник$, $без + совестный > бессовестный$, $без + след/ный/ > бесследный$ / $з < с = сс/$, լատ. $amicus$ (ընկեր). $in - amicis > inimicus$ (ոչ ընկեր, թշնամի), ($i > a = ii$), $facile$ (հեշտ), $dis + facile > difficile$ (ոչ հեշտ, դժվար). ($s < f = ff$), $ad + simulo > assimulo$ (նմանեցնում եմ) - $assimulatio$ (ասսիմիլյացիա). ($d < s = ss$), $ad + littere$ (տառամերձ, տառին կից) > $alliteratio$ (ալիտերացիա). ($d < l = ll$), $ad + gregatum$ (միացում, համակցում) > $aggregatum$ ($d < g = gg$), լեհերենում՝

Քրիշտոֆ > Քշիշտոֆ (p<2=2-2): Թաթարերենում՝ стакан - лар > стаканнар (բաժակներ), урман - лар > урманнар (անտառներ). н > p = нн:), հմմտ. արաբ. l ձայնորդի առնմանությունը հետևյալ բառերում. al – surat > as-surat, al-din > ad- din, al-rahmat > ar-rahmat և այլն:

Ոչ լիակատար առնմանության դեպքում նմանությունը լինում է մասնակի. ազդվող հնչյունը ձեռք է բերում ազդող հնչյունի որևէ հատկանիշ՝ նրան նմանվելով կա մ արտաբերման տեղով, կա մ արտաբերման եղանակով, կա մ այլ հատկանիշով:

Օրինակ, ծանաչ բառից ունենք ճանաչել. չ-ի ազդեցությամբ ծ> ճ (ճ, չ. լեզվաքմային, շփական), արեան+բ > արեամբ, քաջութեան+բ > քաջութեամբ (ն<բ. ըստ արտաբերման տեղի. մ-բ՝ երկշրթնային), փողովակ (փող, փողք, փողոց) > խողովակ (փ<ղ. ըստ արտաբերման եղանակի. դ-խ՝ շփական):

Նմանապես շնչեղ խուլ հնչյունների (փ, ք, թ) ազդեցությամբ ձայնեղ հնչյունները խլանում են, հմմտ. գքողել > սքողել, գփոփել>սփոփել, գթափ-(վ)ել>սթափվել և այլն (տեղի է ունել q>u հնչյունափոխություն):

Ըստ ուժեղ հնչյունի ազդման ուղղության՝ առնմանությունը լինում է առաջընթաց և հետընթաց. i> a (inimicus) առնմանությունն առաջընթաց բնույթի է, q<θ (ծուժկալ) առնմանությունը՝ հետընթաց:

ՏԱՐԼՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ԴԻՄԻՄԻԼՅԱՑԻԱ) - Սա առնմանության հակառակ երևույթն է: Սա այն հնչյունափոխությունն է, երբ բառի մեջ նույնական հնչյուններն ազդում են միմյանց վրա, և դրանցից մեկը փոխվում է իր որակական հատկանիշներով, հեռանում, տարբերվում մյուսից: Այդ երևույթը գործում է ոչ նմանաձայնական կրկնավոր բառերի հնչյունական կառուցվածքում: Օրինակ, բառ + բառ արմատների կրկնությամբ պետք է լինե՞ր բառբառ, բայց մեկ ո-ն հնչյունափոխվել և վերածվել է ր-ի. այդպես նաև՝ գրգիռ, սարսուռ, մրմուռ, կարկառ, թրթիռ և այլն: Հմմտ. նաև՝ վրաց. ր + ր = ր > լ. Գրիգոր > Գրիգորի, ռուս. вельблюд > верблюд (л + л = л > р) և այլն:

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒՄ - Առնմանության մի տեսակն է ձայնավորների ներդաշնակումը, որը հատուկ է ալթայյան (թյուրքական և ուգրաֆիննական) լեզուներին. այն հենվում է այդ լեզուներին հատուկ երկու առանձնահատկությունների վրա: Առաջին առանձնահատկությունն այն է, որ այդ լեզուներում բառերն սկսվում են արմատներով, իսկ մասնիկները (ածանցներ, վերջավորություններ) հաջորդում են միմյանց. քերականական մասնիկի ձայնավորը այդ դեպքում հարմարեցվում է հիմքի կամ բառարմատի ձայնավորին, ներդաշնակում նրա հետ: Թուրքերենում՝ baš (գլուխ) - baš-lar (գլուխներ), adam (մարդ) - adam-lar (մարդիկ), oda (սենյակ) - oda-lar (սենյակներ) - odalar-dan (սենյակներից), ev (տուն) - evler (տներ), թաթարերեն՝ škaf (պահարան) - škaf-lar (պահարաններ) - škaf-lar-ga (պահարաններին):

Ձայնավորների ներդաշնակությունը պայմանավորված է հնչյունի լարվածությամբ: Հմմտ. *ռ* ձայնավորի ներդաշնակորումը հայ բարբառներում. կճուճ-կուճուճ, այգուց-ուգուց, ջուր-ջուրուտ, պռունկ-պուռունկ, ճնճղուկ-ճունջուղ (Մարաղա), ձուկն-ձուկուն (Կարճևան), ուղեղ-ուղուղ, եղունգն-ուղունգ (Բուրդուր), կկու-գուգուք (Կեսարիա), թթու-թութու (Պոլիս), ուղիղ-ուղուրթ (Մոկս) և այլն: Մյուս ձայնավորները քիչ հաճախականություն ունեն. հմմտ. (Բ). բլիթ-բիլիթ, բրինձ-բիրինձ (Կաքավաբերդ), չամիչ - չիմիչ (Կարճեվան), (Օ). խելօք-խօլօք (Բուրդուր), անոթի-օնօթի (Համշեն), (Ա). ճերմակ-ճարմակ (Ջուղա), երագ-արագ (Ագուլիս) և այլն:

Որոշ բարբառներում սեռական հոլովի ցուցիչը կամ որոշյալ ու անորոշ հոդերը համապատասխանում են բառի վերջնականի ձայնավորին: Հմմտ. Մարաղայի բարբառում. Անդուն-Անդունու, Հարթին-Հարթինի, Նարգյիզ-Նարգյիզի, Միսակ-Միսակա և այլն (սեռական հոլով), Կիլիկիայի բարբառի Մարաշի ենթաբարբառում. ախշինի (աղջիկը), մուգու (մուկը), խիւղի (խոտը), ախշին մի (աղջիկ մը), մուգ մու (մուկ մը) և այլն:

Ներդաշնակության հետքեր կարելի է ցույց տալ նաև գրաբարում՝ պայմանավորված ու և ի ձայնավորների ազդեցությամբ, ինչպես՝ թումբ-թմբունք, շուրթն - շրթունք, խուփն-խփունք, եղունգն-եղնգունք, քիրտն-քրտինք, կիզուլ - կիզ-ու-ցում, բազմիմ-բազմ-ի-ցիմ, խօսիմ - խօս-ի-ցիմ և այլն:

ԱՍՓՈՓՈՒՄ - եզրույթն այստեղ նշանակում է համառոտում, հնչյունակազմի կամ քերականական ձևերի կրճատում, օտար տերմինով հապլոլոգիա: Սա այն հնչյունափոխությունն է, երբ բառի մեջ իրար հաջորդող նման հնչյուններից մեկը կամ հնչյունախումբը հետագայում ընկնում են, բայց բառի քերականական իմաստը պահպանվում է. օրինակ. աշխարհա+հայացք > աշխարհայացք, պատանեկական > պատանեկան, հասարակարգ > հասարակարգ, կեղծ +ծամ = կեղծամ, տավար + արած - տավարած, մեքենա + ա + բար - մեքենաբար, ռուս. минерало+логия - минералогия (հանքաբանություն), знаме-но + носец - знаменосец (դրոշակակիր) և այլն: Արդի հայերենի պատճառական բայաձևերը կազմվում են ցոյական հիմքից -ցն ածանցի միջոցով. բայակազմության ժամանակ իրար հանդիպում են հիմքի և ածանցի ց+ց աֆրիկատները, որոնցից մեկը ամփոփման օրենքի համաձայն ընկնում է. հմմտ. բազմեց+ցնել - բազմեցնել, խաղաց+ցնել - խաղացնել, հնչեց +ցնել - հնչեցնել և այլն:

ՀԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Համաբանության ժամանակ նկատի են առնվում հնչյունական այն փոփոխությունները, որոնք տեղի են ունենում տվյալ բառի կամ քերականական ձևի հետ ավելի հաճախ գործածվող մեկ ուրիշ բառի ազդեցությամբ. այն կատարվում է գործածությամբ հարաբե-

րակցվող որևէ բառի հնչյունական կազմի, կադապարի, հնչյունափոխական այս կամ այն երևույթի, միտումի, օրինաչափության հետևողությամբ: Օրինակ՝ *յոթանասուն* բառի ազդեցությամբ *ութսունը* դառնում է *ութանասուն*, *հոկտեմբեր* բառի մ-ն ներմուծված է (հմմտ. october, октябрь) *սեպտեմբեր*, *նոյեմբեր*, *դեկտեմբեր* բառերի նմանակությամբ. *դեկտեմբեր* բառում կատարվել է տ-ի հավելում *սեպտեմբեր*, *հոկտեմբեր* բառերի հետևողությամբ (հմմտ. december, декабрь), *փետրվար* բառի ազդեցությամբ *հունվար* բառը դառնում է *հունրվար* (հնչյունի հավելում), *հոկտեմբեր*-ի ազդեցությամբ՝ *սեպտեմբեր* > *սեկտեմբեր* (պ>կ), բարձր-ի ազդեցությամբ՝ *ցած* > *ցածր* (հնչյունի հավելում), հմմտ. նաև՝ *կանաց* > *կանանց* (արանց-ի նմանակությամբ, հնչյունի հավելում), բրբ. յեղ > յեղըր (մեղր - ի առնչությամբ), հմմտ. յեղըր-մեղըր (հնչյունի հավելում) և այլն: Այդպես լատ. quattuor (չորս) բառի ազդեցությամբ *pinque (հինգ) նախնական ձևը դարձել է quinque (qu > p > qu), կամ levis (թեթև) բառի ազդեցությամբ gravis (ծանր) բառը միջին իտալերենում դարձել է grevis (e > a > e) և այլն:

Համաբանությունը կարևոր դեր ունի հնչյունական օրենքների կազմավորման մեջ. եթե որևէ հնչյունադիրքում կատարվել է այս կամ այն հնչյունափոխությունը, համաբանական միտումը այն դարձնում է ընդհանրական՝ նման բոլոր դիրքերում:

ԴՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ - Բառերի մեջ տեղի են ունենում նաև յուրահատուկ հնչյունական փոփոխություններ, և շատ հաճախ դժվար է բացատրել, թե ինչից են դրանք առաջանում: Այդպիսի փոփոխություններից է դրափոխությունը. դա այն հնչյունափոխությունն է, երբ բառի հնչյունականում որոշ հնչյուններ իրենց դիրքերը փոխում են: Այն ավելի շատ բնորոշ է խոսակցական լեզվին, բանավոր խոսքին: Հմմտ. անալի (ոչ աղի) ձևից ստացվել է ալանի ձևը, այդ ձևից էլ՝ ալնի (ոչ աղի):

Դրափոխությունը լայն տարածում ունի հատկապես բարբառներում, ինչպես՝ սովորել > սօրվիլ (Շամախի), ականջ > անգօճ, անգուճ (Կարճևան), անգաջ (Պօլիս), թոնիր > թօրօն, փետուր > թեփուր, լուալ > վըլալ (Մալաթիա), դատարկ > տեռտակ (Կարճևան), թարդակ (Մալաթիա), կամուրջ > կարմունջ, լվաքք > վըլաքք, աշխատել > ախշատել (Արարատյան), արմուկն > արմունգ (Ղարաբաղ) և այլն:

Դրափոխության հետևանքով առաջացած բառերը կարող են մտնել լեզվի մեջ իբրև ինքնուրույն միավորներ, ինչպես՝ ձգել > զգել, խստոր > սխտոր, կրուկն > կրունկ, կապերտ > կարպետ և այլն:

Յուրահատուկ հնչյունափոխական իրողություններ են **հնչյունների պարզեցումը և բարդացումը**: Հնչյունների պարզեցումը կամ տարրալուծումն այն երևույթն է, երբ պայթաշփական հնչյունները, միմյանց վրա ազդելով, վերածվում են կամ շփական, կամ հպական հնչյունի: Այսպես, ծանաչ

բառից ունենք ճանոթ. չ –ն տարրալուծվել է թ և շ հնչյունների, մնացել է թ տարրը (գործել է նաև ա>ո ձայնդարձը), աստծու բառաձևից ունենք աստու ձևը. ծ հնչյունը տարրալուծվել է (ծ = տ + ս). մնացել է ս տարրը: Հմմտ. նաև՝ ծածանել > տատանել- սասանել, արած - արոտ, պիղծ-պղտ(որ) և այլն:

Հնչյունների փոփոխության մի տեսակ է հնչյունների միացումը: Բառի մեջ իրար հաջորդող որոշ հնչյուններ միանալով վերափոխվում են ուրիշ հնչյունի, օրինակ՝ սեպուհ + ական = սեփական (պ+հ=փ), թշվառ > չվառ (թ+շ> չ), արտասունք > արսսունք > արթսունք > արցունք (տ>թ+ս=ց) և այլն: Հմմտ. նաև ռուս. братский - брацкий, վրաց. at' (տասն) + sam (երեք) + meti (հավելյալ). t' + s = c.(ծ). cameti (տասներեք) և այլն:

ՉԱՅՆԴԱՐԶ ԵՎ ՀԵՐԹԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ - Լեզվաբանության մեջ այդ երևույթը արժեքավորվում է տարբեր մոտեցմամբ. այն ունի թե՛ բառակազմական, թե՛ քերականական (ձևաբանական) նշանակություն: Որոշ լեզվաբաններ ձայնդարձը համարում են հնչյունափոխություն, որն ունի զուտ արմատաստեղծման (բառակազմական) դեր. միևնույն հնչյունախմբում ձայնավորի կամ երկբարբառի փոփոխությունը մեկ ուրիշ ձայնավորի, եթե առաջ է բերում նոր արմատ, կոչվում է ձայնդարձ: Օրինակ, այդպես է ընդունվում հայերենի հնագույն ժամանակաշրջանում, արմատաստեղծման շրջանում, որոշ արմատների գոյացումը արմատի ձայնավորի փոփոխմամբ՝ ձայնդարձով, ինչպես՝ քեր արմատից (հմմտ. քերական) ունենք քերել բառը (հմմտ. քերթողահայր, քերթողական արվեստ՝ թ աճականով), ե > ո ձայնդարձով՝ քորել, կեռ > կոր և այլն: Այդպես նաև՝ սուն (սուն-ունդ) > սան (սան-իկ՝ հոգևոր սնունդ ստացող), դեղ > դաղձ (ձ աճականով), չոր > չիր, կտոր > կոտոր > կտուր (հմմտ. կտոր-կտոր անել, ճյուղակոտոր, շնչակտուր): Ռուսերենում կան *бр* (*братъ* – վերցնել) - *бор* (*сборник* – ժողովածու) - *бер* (*беру* - վերցնում եմ) - *бир* (*собирать* – հավաքել) տարբերակները, որտեղ առկա է քառաստիճան ձայնդարձ – (զրո), ы, е, и: Ձայնդարձը քերականական նշանակություն ունի, օրինակ, գոյականի հոլովման համակարգում. հմմտ. տուն > տան, շուն > շան և այլն:

Բաղաձայնների հնչյունական փոփոխությունները համարվում են հերթագայություն, որ նույնպես ունի թե՛ բառակազմական, թե՛ քերականական արժեք: Օրինակ, ռուսերենում նոր բառեր կազմելիս արմատների մեջ կարող է բաղաձայնի փոփոխություն առաջանալ, ինչպես՝ *г – з – ж . друг > друзья > дружба, к – ц – ч. река > рецкий /Москворецкий/ > речной, лик > лицо > личный*: Հետևյալ հերթագայությունն ունի քերականական արժեք. *г – ч – ж. лег (պառկեց) > лечь (պառկել) > лежать (պառկել)* և այլն: Նմանապես հայերենի բանալ - բաց, թանալ - թաց, դառնալ - դարձ, առնել - արար, հառնել - հար (եաւ) և այլ կազմություններում հերթագայությունը (ն>ց, ո>ր) ունի

հիմքակազմիչ դեր (ն, ո բաղաձայնները ձևավորում են առաջին հիմքը, ր, ց բաղաձայնները՝ երկրորդ):

Քերականական բնույթի հերթագայությունը կոչվում է նաև **պատմական**. այն պայմանավորված չէ ժամանակակից հնչյունական գործընթացներով: Այսպես, (с > ш) писать > пишущ հերթագայությունը ծառայում է իբրև քերականական իմաստի արտահայտման միջոց, քանի որ այն ձևավորում է ներկա ժամանակի (առաջին) հիմքը: Պատմական հերթագայությունն այդ պատճառով անվանում են նաև ձևաբանական:

ՀԱՅՑՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄ – Լեզվի տարժամանակյա կտրվածքում բառի հնչյունական կազմում կարող են տեղի ունենալ հնչյունների անկման կամ հավելման դեպքեր:

Հնչյունաանկումը սովորաբար տեղի է ունենում բառերի վերջում, որ պայմանավորված է հիմնականում շեշտի թուլացման գործոնով: Հնչյունաանկում տեղի է ունեցել այն բառերի արտահայտության պլանում, որոնք գրաբարում վերջանում են Ա կամ Ո ձայնավորներով և փակվում են Յ ձայնորդով: Ժամանակի ընթացքում Յ ձայնորդն ընկել է բառի հնչյունակազմից, ինչպես՝ *արաքայ > արքա, շղթայ > շղթա, երեկոյ > երեկո, կռածոյ > կռածո* և այլն, քանի որ *այ, ոյ* հնչյունակապակցությունները բառավերջում չունեն երկբարբառային հնչում, և ձայնավորներն արտաբերվում են ուժեղ շեշտով:

Բառավերջում տեղի է ունեցել նաև Ի ձայնավորի անկում, ինչպես՝ *հիւսիսի > հյուսիս, արծուի > արծիվ, կարասի > կարաս, պատասխանի տալ > պատասխան տալ, տեղի > տեղ* և այլն: Հազվադեպ, որոշ արտահայտություններում Ի ձայնավորը բառավերջում պահպանվում է (կամ վերականգնվում է), հմմտ. *տեղի տալ, կահ-կարասի* և այլն:

Բառերի վերջում հնչյունաանկման օրինակներ են տալիս *ձուկն, մուկն, հարսն, մատն, լեռնն, անձն, մասն* և այլ բառեր, որոնք հին հայերենում սովորական ձևեր են: Ն ձայնորդը թույլ դիրքում գտնվելու պատճառով ժամանակի ընթացքում ընկել է, և այդ բառերը մենք ժառանգել ենք *ձուկ, մուկ, հարս ...* ձևերով:

Հնչյունաանկման իրողություն կարելի է ցույց տալ նաև կրկնավոր բարդությունների արտահայտության պլանում. ընդ որում՝ հնչյունաանկում տեղի է ունենում բարդության տարբեր վանկում:

Անկում առաջին վանկում. *թաղ* («խիտ, կուռ, սեղմ») արմատից – *թաթաղուն, թաւ* («սուզել, թաթախել») արմատից – *թաթաւել, սան* («տատանվել») արմատից – *սասանել, բախ* («հարված, զարկ») արմատից – *բաբախել. է կոր* (կեր-ա-կուր) արմատից – *որկոր, փռիս* արմատից – *փռիքիս* և այլն:

Անկում երկրորդ վանկում. *հեղ(ույ)* արմատից («թափել, լցնել, հոսել») > (հեղհեղ) > հեղեղ, *խաղ* («հանդարտ, հանգիստ. մեղմ») արմատից –

խաղաղ. հեծ («հառաչանք, ախ քաշելը») արմատից -*հեծեծ, յոպ* («թռչունի հանած ձայն») արմատից – *յոպոպ* և այլն:

Հնչյունաանկում կարող է տեղի ունենալ բարդության *առաջին և երկրորդ վանկերում*: Հմմտ. *գուձ* («անշուք, նվաստ, փոքր, փուչ») արմատից - *գուձգուձ, խուլ* («լսելու հատկությունից զուրկ, չլսող, լուռ անխոս») արմատից - խլխլել («խուլ ձևանալ, չլսելու տալ, անտեսել»), *ձիզ* («պիրկ, ամուր, պինդ. երկար. նյարդ. նետ») արմատից - *ձգձգիլ* («այս ու այն կողմ քաշել ձգել, քաշքշել») և այլն:

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ - Հայերենում ձայնավորից առաջ որոշ հնչյուններ ավելացել են. դրանք մակաբույծ հնչյուններ են, որոնք ստուգաբանական, բառակազմական, քերականական կամ իմաստաբանական հիմնավորվածություն չունեն: Հմմտ. *ոզի – հոզի, աճառ – հաճառ, ազանել – հազանել* և այլն: Հնչյունի հավելում կարող է լինել փոխառյալ բառերում, հմմտ. պրս. *րանգ – երանգ*, կամ՝ *ռեուզ – առիւծ, րեզոյ – երեկոյ* և այլն: Հնչյունի հավելման օրինակ է Յ ձայնակապի հայտնությունը երկու ձայնավորների միջև, ինչպես՝ *խաղա-յ-ի, Մարտ-յ-ի* և այլն: Արտասանական պլանում Ը ձայնավորի հավելում է նկատվում սկ, ստ, սպ, զգ, զբ, շտ, շպ հնչյունակապակցություններով սկսվող բառերում՝ *(ը)սկսել, (ը)ստանել, (ը)սրասալ, (ը)զգալ* և այլն:

ԱՃԱԿԱՆ – Բառի արմատին կամ հիմքին ավելացող հնչյունական միավոր, որ ստեղծում է արմատի հնչյունական տարբերակներ՝ առանց իմաստային փոփոխություն առաջացնելու:

Աճականները, ավելանալով արմատին, կարող են ստեղծել արմատի տարբերակ, որ առանձին վերցրած՝ կարող է դիտվել արմատական բառ, հմմտ. *քերել և քեր-ծ-ել, ցայել և ցայ-տ-ել*: Արմատատարբերակներ կարող են ձևավորվել նույն արմատի տարբեր աճականներով, ինչպես՝ *քեր-ծ-ել և քեր-թ-ել, լպիր-շ և լպիր-ծ(ուն), ծուն-ր և ծուն-կ, խար-շ-ել և խար-կ-ել*: Ինչպես նկատելի է, այս արմատատարբերակներն իմաստային մերձավորություն են ցուցաբերում և դիտվում են հոմանիշներ: Կարող են հանդիպել արմատի տարբերակներ, որոնց իմաստային մերձավորության կապը ժամանակի ընթացքում խզվել է, ուստի նրանք դիտվում են անկախ բառական միավորներ, ինչպես՝ *թր-ջ-ել և թուր-մ, աղ-տ և աբ-բ, մո-շ և մո-ռ, գին-ձ և գին-դ* և այլն:

Աճականը կարող է հանդես գալ արմատին ձուլված, որ վկայում է նրա գործածության ժամանակագրության մասին. այդպիսի աճականները գործառվել են նախագրային հայերենում, ինչպես՝ *դեղ – դաղ-ձ, ոստ-դ, եզեր-տ, բող-կ, աղ-ծ, գաղ-տ, ստեր-ջ, քաղ-ց* և այլն:

Աճականները կարող են ստեղծել արմատի եռաշարք տարբերակներ, որ պայմանավորված է նախկին աճական հնչյունների հերթագայության

գործոնով, ինչպես՝ *աղբ – աղծ – աղտ, լպիր2 – լպիրծ – լպիրտ, կայծ – կայթ – կայտ, մոշ – մոռ – մոր, խանդ – խանձ – խանծ* և այլն: Երբեմն այդ շարքը կարող է ընդարձակվել, ինչպես՝ *քերծել – քերթել – քերբել – քարբ – քուրձ – քուրջ* և այլն:

Որոշ դեպքերում աճականը լրացուցիչ քերականական դեր ունի, երբ ավելանում բայահիմքին՝ իբրև վանկային նախահավելված, հմմտ. գրբ. անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում ի հայտ եկող *Ե* կամ *Է* նախահավելվածները. *բեր – եբեր, տես – ետես, սպան – եսպան, առ – էառ, անց – էանց, ած – էած* և այլն: Այս երևույթը կոչվում է վանկային աճեցում (*augmentum sillabicum*):

Բայահիմքին ավելացող աճականները կարող են առանձին բառ(եր) ձևավորել. այդպիսի բառերի իմաստային մերձավորությունը կարելի է բացահայտել բառակազմական ստուգաբանության միջոցով, հմմտ. *լսեմ – լու* (երկրորդ հիմք), որից համապատասխան աճականներով կազմվել են՝ *լուռ, լուր* բառերը և *լուս* կախյալ արմատը, որոնք իրենց հերթին սերող հիմք են դառնում բառակազմական մակարդակում, ինչպես՝ *լռել, լռակյաց, լրաբեր, ականջալուր, լսել, լսարան* և այլն:

Բառի արտահայտության պլանում աճական հնչյունների առկայությունը, որպես երևույթ, կարելի է համարել պատմական հնչյունափոխության դրսևորում և այն դիտել *հնչյունների հավելման* իրողության մի տեսակ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ - Ճիշտ է, դիրքային և փոխադեցական հնչյունափոխական երևույթները լեզվի մեջ տեղի են ունենում պատմականորեն, ինչպես, օրինակ, առնմանությունը, տարնմանությունը, դրափոխությունը և այլն, սակայն պատմական հնչյունափոխություն բաղադրյալ տերմինով առանձնացվում են հնչյունափոխական այն իրողությունները, որոնք նույնպես կատարվում են լեզվի պատմության տևական ժամանակահատվածում, միայն թե այն տարբերությամբ, որ ոչ թե սահմանափակ օրինակներով են արտահայտվում, այլ օրինաչափորեն և որոշակի կանոնով հանդես են գալիս բառերի կամ քերականական ձևերի ամբողջական շարքերում: Դրանք ընդգրկում են նույն կամ նման հնարավոր բոլոր դեպքերը՝ դրանով իսկ արտացոլելով լեզվի հնչյունական կազմի պատմական զարգացման համապատկերը: Բառի կամ արմատի մեջ ինչ-ինչ պատճառներով լինում է փոփոխություն, այնուհետև այդ բառի նմանությամբ աստիճանաբար այդ փոփոխությունը կատարվում է նաև այն բառերում, որոնց հնչյունական կազմի մեջ կա ընդհանրություն:

Պատմական հնչյունափոխության յուրահատկությունն այն է, որ նրա դրդապատճառները միշտ բացատրելի չեն. այս հնչյունափոխությունը օրինաչափորեն ընդգրկում է բառերի ամբողջական շարքեր, և դա էլ սրա յուրահատկություններից մեկն է:

Հայերենում պատմական հնչյունափոխության ենթարկվել են ձայնավորները, բաղաձայնները, երկբարբառներն ու եռաբարբառները:

ա) **ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԼՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ** - Ձայնավորների ընդհանուր պատմական հնչյունափոխությունը գործել է հայերենի այն բոլոր բառերում, որոնք սկսվում էին *o* (*ո*) ձայնավորով: Օ ձայնավորից առաջ աստիճանաբար մեր լեզվում ավելացել է վ բաղաձայնը, օրինակ՝ *օսկի* - *ոսկի*, *օսկոր* - *ոսկոր*: Որոշ բառերում պահպանվել է *o* արտասանությունը, գրաբարում՝ *ո* գիրը. հմմտ. *ով*, *ովասիս*, *ովկիանոս*, *ովսաննայ*: Հայերենի *ե* ձայնավորը, որ արտասանվել է *է*, նմանապես ժամանակի ընթացքում (բառասկզբում) աստիճանաբար փոխվել է *յ* երկհնչյունի. այլ կերպ ասած՝ է - ով սկսվող բառերի սկզբում աստիճանաբար առաջանում է *յ* կիսաձայնը, ինչպես՝ *երեխա* (*էրեխա*) > *յերեխա*, *երես* (*էրես*) > *յերես*, *երեկ* (*էրեկ*) > *յերեկ*, *էս* (*էս*) > *յէս* և այլն:

բ) **ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀԼՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ** - Ընդհանուր պատմական հնչյունափոխության են ենթարկվել հայերենի *ձայնեղ բաղաձայնները*՝ որոշակի դիրքերում, բառերի կամ արմատների վերջում (ը ձայնորդից հետո) դրանք խուլ բաղաձայնի են վերածվել՝ *երբ* (*երփ*), *երգ* (*երք*), *միրգ* (*միրք*), *գարդ* (*գարթ*), *արջ* (*արչ*), *վերջ* (*վերչ*), *բարձ* (*բարց*), *վարձ* (*վարց*): Ձայնեղների խլացում է տեղի ունեցել ձայնավորից հետո՝ *աջ* (*աչ*), *մեջ* (*մեչ*), *իջնել* (*իչնել*), *օձ* (*օց*), *օգնել* (*օքնել*):

գ) **ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՌԱՄԿՋԲՈՒՄ ԵՎ ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ** - Պատմական հնչյունափոխություն կարող է լինել *բառի սկզբում*: Այսպես, հին հայերենում փոխառյալ բառերում *ֆ* հնչյունը գրվել է *փ* և *հ* տառերով: Հունարենից փոխառյալ բառերի *ֆ* հնչյունի դիմաց հայերենում գրվել է *Փ*, օրինակ՝ *ֆիլիսոֆոս* - *փիլիսոփա*, *դաֆնե* - *դափնի*, իսկ իրանական լեզուներից փոխառյալ բառերի *ֆ* հնչյունը, որ հանդիպում է բացառապես բառասկզբում, հայերենում չի գրվել, ինչպես՝ *ֆրաման* - *րաման*, *ֆարիշտե* - *րեշտակ*, *ֆրապադակ* - *րապարակ* և այլն: Ինչպես նկատելի է, *Բ* ձայնորդից առաջ հնչում է *Հ* (հագագը), որը հետագայում կայունացել է, և փոխառյալ բառերն ստացել են *հրաման*, *հրեշտակ*, *հրապարակ* գրությունը:

Ձայնավորից առաջ կատարվել է *յ* > *հ* հնչյունափոխություն՝ *յանձին* - *հանձին*, *յօզուտ* - *հօզուտ*, *յանուն* - *հանուն*, *յոյն* - *հույն*, *յոյժ* - *հույժ* և այլն:

Բառավերջում պատմականորեն տեղի է ունեցել *հնչյունի անկում* (*Տե՛ս Հնչյունների անկում* և *Հնչյունների հավելում* բառահոդվածները):

դ) **ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԵՎ ԵՌԱԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԼՁՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ** - Շեշտից անկախ, պատմականորեն հնչյունափոխվում են

գրաբարյան *այ, աւ, եւ, եա* երկբարբառները: *Աւ* երկբարբառը դարձել է *օ*, ինչպէս՝ *կարաւտ – կարօտ, ծնաւդ – ծնօդ, իւ//եւ > յու՝ քիւր//բէւր – բյուր, աղբիւր//աղբէւր – աղբյուր, ոյ > ույ՝ ողջոյն – ողջույն, գոյն – գույն, եա > յա՝ սենեակ – սենյակ, մատեան – մատյան* և այլն: *Եաւ* եռաբարբառը արտասանվում է *յո*, ինչպէս՝ *ընտանեալք – ընտանյոք, այգեալք – այգյոք, եայ եռաբարբառը՝ յայ՝ պաշտոնեալք – պաշտոնյալք, ւոյ > վույ՝ այգւոյն – այգվոյն, որդւոյն – որդվոյն* և այլն:

Հնչյունափոխական այս դրսևորումները՝ փոխազդեցական (դիրքային) և պատմական, իրարից անկախ գործընթացներ չեն: Այսպէս, դիրքային կամ փոխազդեցական հնչյունափոխության որոշ տեսակներ, ինչպէս *առնմանությունը, տարնմանությունը, ներդաշնակումը, համաբանությունը* և այլն, համաժամանակյա իրողություններ չեն, հնչյունական այդ փոփոխությունները տեղի են ունեցել պատմականորեն, հետևաբար դրանք պատմական իրողություններ են: Մյուս կողմից՝ պատմական հնչյունափոխության այնպիսի դրսևորումներ, ինչպիսին են *հնչյունների անկումը, հալվելումը, երկբարբառների պարզեցումը* և այլն, գործնականում պայմանավորված են բառի մեջ հնչյունների կամ երկբարբառների գրաված դիրքով. հետևաբար պատմական համարվող հնչյունափոխության այդ դրսևորումները միաժամանակ դիրքային կամ փոխազդեցական իրողություններ են:

Ըստ այդմ, լեզվական համակարգի կառուցվածքային միավորների փոփոխությունները միմյանցից անկախ գործընթացներ չեն. դրանք համարվում են մեկ միասնական գործընթացի տարբեր օղակներ, որոնք փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով:

ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Ուսումնասիրում է գրի, այբուբենի, գրադարձության, տառադարձության և այլ կարգի հարցեր:

ԳԻՐ - Ժամանակակից ժողովուրդների մեծ մասի լեզուն հանդես է գալիս երկու ձևով՝ հնչյունային և գրային: Հնչյունային լեզվով հաղորդակցումը կատարվում է անմիջականորեն, ուղղակի կերպով և ընկալվում է լսողական գործարանով: Գրային լեզվով հաղորդումը և ընկալումը կատարվում են անուղղակի կերպով, տեսողական նշանների և զգայարանների միջնորդությամբ:

Հնչյունային խոսքի համեմատությամբ գրային խոսքը համարվում է հաղորդակցման ածանցյալ միջոց: Գրային լեզուն հիմնված է գծագրական տեսողական նշանների վրա, հետևաբար, գիր կոչվում է լեզվական հաղորդակցման համար օգտագործվող գծագրական-տեսողական նշանների համակարգը: Գիրն ունի իր պատմությունը՝ ծագումը, զարգացումը և տարատեսակները: Գրի ծագումը կապվում է պետությունների ծագման հետ: Պետական կառավարման համակարգում անհրաժեշտություն է առաջանում

հրովարտականներ, օրենքներ և հրամաններ գրել, միջպետական հարաբերություններ կարգավորել: Հնագույն պետություններից են Հին Եգիպտոսը, Հին Չինաստանը, Հին Հնդկաստանը, որտեղ էլ մեզանից 8-10 հազար տարի առաջ առաջացել է գիրը:

Ժամանակակից գրի տեսակները ծագել են նախնական գրատեսակի տևական կատարելագործման ճանապարհով: Մարդու հիշողության մեջ նախապես հեշտությամբ մտապահվել են բնության առարկաները (որպես բնական նշանների ամբողջություն). այդպիսին են նաև որսորդության նախագուշակական նշանները, մարդկանց և կենդանիների հետքերը կարդալու ունակությունը և այլն: Նախնական, տարրական „գրային“, հաղորդակցման ժամանակ որոշակի առարկաներ սկսում են կատարել նշանների դեր: Հայտնի է, որ խաղաղության նշանը հին ցեղախմբերի համար եղել է *ծխամորձը*, որը հերթով ծխում էին թշնամական ցեղերի առաջնորդները՝ *ի նշան խաղաղության*: Սլավոնական ցեղերի մեջ որպես բարեկամության և սրտաբաց հյուրընկալության նշան եղել և մինչ այժմ պահպանվում է հյուրին *աղ ու հաց մատուցելը*:

Այն հանգամանքը, որ առարկաները կարող էին հասկացություններ արտահայտել և դառնալ նրանց նշանները, նպաստում է առարկայական „գրի“, առաջացմանը, ինչպիսին են *վամպում և կիպու գրատեսակները*, որոնք գործածել են ամերիկյան հնդկացիական ցեղերը:

Վամպումը դրսևորվում էր խեցիի ուլունքների միջոցով, որ գործածում էին իրոկեզիական ցեղերը: Առանձնապես կարևորվում էր նրանց *գունային – նշանային իմաստը*. սպիտակ *գույնը* խաղաղության, առողջության և հաջողության նշան էր, *սև ուլունքները* գուժում էին առաջնորդի մահը, *կարմիր ուլունքները* ազդարարում էին պատերազմի մասին:

Կիպուն ինկերի *հանգուցային* գրատեսակն էր: Յուրաքանչյուր կիպու կազմված էր հիմնական պարանից, որի վրա անում էին հանգույցներ և հյուսում ցանցեր՝ ծոպերի տեսքով: Տարբեր գույնի հանգույցներն ու ցանցերը և նրանց տարբեր դասավորությունն արտահայտում էին պայմանական իմաստներ և ծառայում էին որպես նշաններ՝ ծառայողական և տնտեսական հանձնարարությունները հիշելու համար:

Գրաբանության պատմությունն առանձնացնում է գրի զարգացման հետևյալ շրջանները:

ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Գրային հաղորդակցման նախնական ձևը պատկերագրությունն է (պիկտոգրաֆիա): Մարդը տարբեր առարկաների վրա պարզապես նկարում է այն, ինչ ցանկանում է հաղորդել մյուսներին: Դրանք առարկաների իրական պատկերներն են, որոնց միջոցով հաղորդվում է հենց այդ առարկայի հետ կապված որևէ իրողություն: Որպեսզի արտահայտեին «մարդ» հասկացությունը, անհրաժեշտ է լինում *մարդ* նկարել:

Որպեսզի հնարավոր լինի արտահայտել «Ես գնացի որսի» նախադասությունը, նկարում են *մարդ, անտառ* և *զագաններ*:

Հայկական լեռնաշխարհում պատկերագրության հնագույն նմուշներ են *ժայռապատկերները*, որոնք վերաբերում են մ.թ.ա. 7-2-րդ հազարամյակներին: Դրանք հայտնաբերվել են Արագածի, Գեղամա լեռների, Սյունիքի Ուղտասարի լանջերին և վերաբերում են տարբեր բնագավառների՝ երկրագործություն (արոր), ռազմական գործ (երկանիվ և քառանիվ կառքեր), որսորդություն (նետ ու աղեղ), երկնային ուժեր (տիեզերական մարմիններ): Ժայռապատկերներն արտացոլում են համապատասխան դարաշրջանի մարդու պատկերացումները նյութական և հոգևոր կյանքի վերաբերյալ: Պատկերագրությունը հնարավոր է դարձնում հաղորդակցումը երկու տարբեր ցեղերի միջև, որոնք միմյանց լեզու չեն հասկանում: Այն իբրև հաղորդման միջոց, սահմանափակ է, քանի որ չի կարող արտահայտել վերացական հասկացություններ:

ԳԱՂԱՓԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Գրային հաղորդակցման ընթացքում իրական առարկաների պատկերներին զուգընթաց աստիճանաբար սկսեցին օգտագործել այնպիսի պայմանական պատկերներ, որոնք արտահայտում էին գործողություններ, դեպքեր, երևույթներ ու վերացական հասկացություններ: Պատկերագրության մեջ հանդես են գալիս նոր տարրեր՝ գաղափարագրեր (իդեոգրամմաներ), որոնք արդեն զանազան գաղափարներ արտահայտելու նշաններ են: Ի վերջո նախնական պատկերագրերը վերածվում են գաղափարագրերի՝ զրկվելով իրենց երբեմնի առարկայական նշանակություններից: Գաղափարագրերը ծագել են այն ժամանակ, երբ առաջացել են պետությունները, որոնց համար գիրն անհրաժեշտություն էր՝ պետական, եկեղեցական տնտեսությունը կառավարելու, հաշվառումներ կատարելու, ինչպես նաև օրենքներ և պաշտամունքային տեքստեր գրելու համար: Գաղափարագրության լավագույն օրինակն է չինական գիրը՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակում: Չինարենում գործածվում էին շուրջ 40 հազար նշաններ, որոնցից առավել գործածական էին 4-5 հազարը: Այժմ գրային այդ համակարգը պարզեցվել է, գործածական են մոտ 8 հարյուրը: Գաղափարագրություն ունեցել են նաև եգիպտացիները, շումերները, հաթերը, ացտեկները և այլն: Գաղափարագրերը լայն տարածում են ստանում հանրահաշվական հասկացությունների և թվերի գրառման ընթացքում, որն էլ հանգեցնում է թվային համակարգի և գիտական բանաձևերի առաջացմանը մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի և այլ բնագավառներում:

Գաղափարագրության տարբեր նմուշներ այժմ գործածական են մեզանում, ինչպես՝ փողոցային երթևեկության և ճանապարհային տեղեկատվական նշանները, կրծքանշանները, խորհրդանշանները և այլն:

ՀԱՅՑՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Հնչյունային գիրը (ֆոնոգրաֆիա) ծագել է աստիճանաբար. այն նախապես ունեցել է վանկագրության կամ վանկային գրային համակարգ, որն արտահայտվել է մ.թ.ա. 10-6-րդ դդ. Ասորաբաբելական սեպագիր արձանագրություններում: Վանկային (բաղաձայնահնչյունային) գրային համակարգ ունեն հնդկական գիրը (դեվանագարի), արաբերենը, ճապոներենը (կանա), կորեական գիրը (կումուն) և այլն:

Ի տարբերություն պատկերագրության և գաղափարագրության՝ հնչյունագրության համակարգում տառերը չունեն առարկայական-հասկացական նշանակություններ: Տառի «նշանակությունն» այն է, որ նա արտահայտում է բառի այս կամ այն հնչյունը կամ վանկը, որն անպայման պետք է արտաբերել, որպեսզի արտահայտվի բառը կամ նրա մի մասը:

Հնչյունային (կամ տառահնչյունային) գրային համակարգում յուրաքանչյուր հնչյուն ունի իր համապատասխան գծային նշանը (տառը): Այդպիսի համակարգ ունեն լատիներենը, հայերենը, ռուսերենը, անգլերենը, ֆրանսերենը, իսպաներենը և ժամանակակից բազմաթիվ այլ լեզուներ:

ՎԱՆԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ – Գրության տեսակ (եղանակ), որի դեպքում բառի կազմում վանկերն արտահայտվում են առանձին նշաններով՝ վանկանշաններով. յուրաքանչյուր առանձին վանկ արտահայտվում է առանձին նշանով: Վանկագրությունը զարգացել է գաղափարագրության հիման վրա. ժամանակի ընթացքում գաղափարագրերը վերածվել են առանձին նշանների՝ արտահայտելով վանկի հասկացություն: Վանկագրությունն առավել մատչելի գրության եղանակ է, քան գաղափարագրությունը, և այն գործածել են սեպագիր արձանագրություններ կազմելիս. դրանք հանդիպում են նաև եգիպտական, իսթական և կրետական հիերոգլիֆներում (մեհենական գրություններում): Հին իրանական և կիպրոսյան գրային համակարգերն ունեցել են վանկագրության եղանակ, և նրանց, ինչպես նաև Հին Հնդկաստանի ու արևելյան որոշ ժողովուրդների գրավոր հուշարձաններում լայնորեն գործածվել են վանկագրության նշանները: Գրային համակարգերի զարգացմանը զուգընթաց՝ վանկագրությունը հիմք է հանդիսացել փյունիկյան, սեմական և այլ լեզուների հնչյունական գրի առաջացման համար:

Վանկագրությունն ընկած է վանկային լեզուների գրային համակարգերի հիմքում:

ԱՅԲՈՒԲԵՆ –Որևէ լեզվի տառերի ամբողջությունն է՝ ընդունված դասավորությամբ: Ստեղծվել է հնչյունային գրի երևան գալով. հնչյունային գրի նախնական տարբերակը տալիս է սեմական այբուբենը, որի տառերի անունները նշանակում են այն առարկաները, որոնց պատկերն են եղել ի սկզբանե, ինչպես՝ *ալեֆ* (եզ), *բեթ* (տուն), *գիմել* (ուղտ), *դալեթ* (դուռ) և այլն: Սեմական տառերի ծագումը կապվում է եգիպտական հիերոգլիֆների կամ

կրետական գաղափարագրերի հետ, որոնք շատ նմանություններ ունեն տառային գրի հետ: Մեմական լեզուների արմատները բաղկացած են բաղաձայններից, ձայնավորներն ունեն քերականական ու բառակազմական իմաստներ: Այդ գրի դժվարությունները վերացնելու համար ստեղծվում են հատուկ ցուցիչներ՝ ձայնավորները նշանակելու համար: Մեմական գիրն այժմ էլ գործածական է արաբերեն, պարսկերեն և այլ լեզուների համար: Այդ գրի հնագույն գործածողներն են եղել մոավները (9-րդ դար, մ.թ.ա.), արամեացիները (8-րդ դար, մ.թ.ա.), փյունիկեցիները (7-րդ դար, մ.թ.ա.): Փյունիկյան այբուբենն անցել է հին հույներին, որոնցից էլ՝ եվրոպական ժողովուրդներին:

Մ.թ.ա. 5-4-րդ դարերում *արևելահունական* գրատեսակից զարգացավ դասական հունական, այնուհետև բյուզանդական գիրը. նրանից են ծագել նաև դպտիական (քրիստոնյա եգիպտացիների), հին գոթական և սլավոնական գիրը՝ Կիրիլ-Մեթոդյան այբուբենը (10-րդ դար):

Արևմտահունական գրատեսակի հիման վրա ձևավորվեցին իտալական, այդ թվում նաև էտրուսկյան այբուբենները (մ.թ.ա. 7-րդ դար), էտրուսկյան գրատեսակից ծագել է լատինական գիրը (մ.թ.ա. 6-րդ դար), նրանից է նաև հին գերմանական այբուբենը (մ.թ. 3-դ դար):

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ – Հին այբուբեններից է հայկականը՝ Մեսրոպյան այբուբենը (մ.թ. 5-րդ դար): Հայկական գիրը իր ստեղծողի անունով կոչվում է *մեսրոպյան գիր* (նաև մեսրոպյան այբուբեն), *մաշտոցյան գիր* (նաև մաշտոցյան այբուբեն): Այբուբենում կա 36 տառ, որոնցից յուրաքանչյուրն ունի գծանշանային որոշակի կառուցվածք, որի հիմքում ընկած է օտարագիր կամ հայագիր որևէ նախատիպ: Հայկական գիրը ժամանակի առաջադեմ գրատեսակներից մեկն է, ունի մի շարք առավելություններ, որոնք հիմք են դարձել նրա 1500-ամյա երկարակեցության համար:

Այն բնորոշվում է հետևյալ հատկանիշներով.

ա) յուրաքանչյուր հնչյուն ունի իր գծային նշանը, յուրաքանչյուր գծային նշան համապատասխանում է որևէ հնչյունի. այդ հարաբերակցությունն անխախտ է, և բառի ցանկացած դիրքում միևնույն գծային նշանը յուրաքանչյուր հնչյունի արտահայտությունն է,

բ) ի տարբերություն ժամանակի զարգացած սեմական գրերի, որոնք բաղաձայնային գրային համակարգ ունեն, հայկական գիրը գրանշաններ ուներ նաև ձայնավորների համար,

գ) սեմական գրային համակարգում գործում էին հատուկ տարրորոշիչներ (դիակրիտիկներ), որոնք, դրվելով գրանշանի տարբեր դիրքերում (վերևում կամ ներքևում), փոխում էին գրանշանի հնչյունական արժեքը. մեսրոպյան այբուբենում այդպիսի տարբերակիչ նշաններ չկան,

դ) Մեսրոպյան այբուբենում բացակայում են բաղադրյալ տառերը, տառակցումները: Միակ բացառությունը *ռ* ձայնավորն է,

ե) Մեսրոպյան այբուբենում տառերն ունեն թվային արժեքը. այն դասավորված է չորս իննյակով (շարքով), որոնք համապատասխանաբար արտահայտում են հետևյալ թվային արժեքները՝ միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ և հազարավորներ,

զ) մեսրոպյան գիրն ունի աջընթաց ուղղություն, որը դյուրացնում է գրելու գործողությունը. սեմական գրային համակարգն ունի ձախընթաց ուղղվածություն,

է) Մեսրոպ Մաշտոցն ուսումնասիրել է հայերենի և նրա բարբառների հնչյունական համակարգը, առանձնացրել հնչույթները և տառանշաններ ստեղծել ընդհանրական հնչույթների համար այնպես, որ այդ գրանշաններն ի գործու լինեն արտահայտելու հայերենով հնչող բոլոր բառերը,

ը) մեսրոպյան այբուբենը դարերի ընթացքում ենթարկվել է մասնակի փոփոխությունների. ներմուծվել են *օ* և *ֆ* գրերը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏԵՍԱԿՆԵՐ – Հայերենագիտության մեջ տարբերակում են հայկական հետևյալ գրատեսակները.

- **Գրչագիր.** հին հայկական գրատեսակ, որ գործել է մինչև 12-րդ դարը, պահպանվել է որպես վերնագրային գրատեսակ:

- **Երկաթագիր.** գործածվել է 5-12-րդ դդ., գրում էին մագաղաթի վրա՝ կա՛մ երկաթ գրիչով, կա՛մ երկաթի ժանգից պատրաստված թանաքով: Ունեցել է տարբերակներ՝ 9-րդ դարից՝ *միջին երկաթագիր*, հետո՝ *փոքր երկաթագիր*. տառերը մի քիչ կարճացրած ու փոքրացած, ուղղաձիգ ու լայն ձև ունեին:

- **Բոլորագիծ.** տառերը համեմատաբար խոշոր են, գրանշաններն ունեն հավասար բարձրություն:

- **Բոլորագիր.** գործածվել է 12-րդ դարից. ստեղծվել է տառերի ավելի կարճացմամբ ու փոքրացմամբ: XVI դարից դարձել է հայ տպագրության գիրը՝ Կիլիկյան և Արևելյան տարբերակներով:

- **Նոտրագիր.** ձևավորվել է բոլորագրի հիման վրա. արտագրության համար տառերն ավելի են պարզեցվում՝ տալով նոր տեսակ: Նոտրագիրը դիտվում է իբրև դպիրների, գրագիրների գիր. հայտնի է 13-րդ դարից, ընկած է ձեռագիր տարբերակների հիմքում, որից էլ ստեղծվել են ժամանակակից ձեռագրի տեսակները:

- **Շղագիր.** ծագել է բոլորագրից, լայն գործածություն է ստացել 19-րդ դարում: Տառերն ունեին շեղ դիրք և գրվում էին կապակցված, անկյունները միանում էին մագանման գծիկներով: Դրանից է սերում *շղագիր*՝ *շեղագիր* կամ *շղատառ*՝ *շեղատառ* տպագիր տառատեսակը:

- **Զարդագիր** կամ **դրվագագիր**. տառատեսակը աչքի է ընկնում գեղարվեստական ձևավորմամբ: Ըստ տառանշանի պատկերի՝ միջնադարում տարբերակում էին մի շարք տեսակներ՝ *ծաղկագիր* (ծաղկի պատկերով), *թռչնագիր* (թռչնի պատկերով), *վիշապագիր* (վիշապների կամ առասպելական կենդանիների պատկերներով), *մարդագիր* (մարդու պատկերով), *գազանագիր* կամ *կենդանագիր* (տարբեր կենդանիների պատկերներով) և այլն: Զարդագիր տառատեսակը կապվում է մանրանկարչության զարգացման հետ:

- **Փակագիր**. կապգրի տեսակ է, գործածվել է վիմագրական արձանագրություններում՝ մասնավորաբար հատկանունները գրելու համար. բառի մեջ տառերը համակցվում են սկզբնատառի կամ որևէ այլ տառի բաղադրիչի հետ:

ԳՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ (ՏՐԱՆՍԼԻՏԵՐԱՅԻՄ) - Գրադարձությունը որևէ լեզվի այբուբենով գրված բառերի փոխադրումն է այլ լեզվի գրային համակարգի. այն անհրաժեշտ է փոխառյալ և պատճենված բառերը, ինչպես նաև հատուկ անուններն ու աշխարհագրական անվանումները, մասնագիտական հասկացությունները գրելու համար:

Գրադարձության ժամանակ բառերը ենթարկվում են տվյալ (ընդունող) լեզվի հնչարտաբերական օրինաչափություններին և գրային համակարգին. տվյալ դեպքում կարող են առաջանալ գրային և արտասանական որոշակի անհամապատասխանություններ: Հմմտ. հուն. *demokratia*, ֆրանս. *demokratie*, անգլ. *democracy*, չեխ. *demokracie*, ռուս. *демократия*, հայ. *Դեմոկրատիա* և այլն :

Հինգերորդ դարում հունարենից փոխառյալ բառերը գրադարձելիս *ֆ* հնչյունի դիմաց հայերենում գրվեց *փ* (հայերենում չկային *ֆ* հնչյունն ու համապատասխան տառանշանը). *ֆիլոսոֆոս* - *փիլիսոփա*, *ալֆավիտ* - *ալփաբետ*, *ֆալանգ* - *փաղանգ*, *դաֆնե* - *դափնի* և այլն: Իրանական փոխառությունների մեջ *ֆ* հնչյունը, որ բացառապես հանդիպում է բառասկզբում, չի հնչել և չի գրվել. դրանք փոխառվել են բանավոր ճանապարհով. *ֆ* հնչյունի փոխարեն հնչել է *հր* հնչյունակապակցությունը, և փոխառյալ բառերը գրադարձվել են *հրաման*, *հրեշտակ*, *հրապարակ* գրությամբ:

Հատուկ անունների գրադարձության ժամանակ կարելի է հենվել ինչպես դրանց գրության, այնպես էլ արտասանության վրա, հմմտ. անգլ. *Iraq*, գերմ. *Irak*, ռուս. *Ирак*, հայ. *Իրաք* և այլն:

Սակայն դրանցից միայն մեկին (գրությանը կամ արտասանությանը) նախապատվություն տալը կարող է հանգեցնել գրադարձվող բառի աղճատմանը: Այսպես, եթե միայն գրությանը ուշադրություն դարձնենք, ապա անգլիացի դրամատուրգի անունը՝ *Shakespeare*, ռուսերեն կգրվեր և կհնչեր **Шакеспее**, հայերեն՝ *Շակեսպեարե* և ոչ թե՝ *Շեքսպիր*: Կամ ֆրանսիացի

հանրագետ և մտածող Diderot-ի անունը կգրվի Дидерот, հայերեն՝ *Դիդերոթ* և ոչ թե՝ *Դիդրո*: *Շեքսպիր* և *Դիդրո* գրությունները պայմանավորված են դրանց մայրենի լեզվի և միջնորդ լեզվի տառագրության և արտասանության օրենքներով. առաջինն անգլերենում հնչում է՝ *Շեքսպիր*, երկրորդը ֆրանսերենում՝ *Դիդրո* (ֆրանսերենում բառավերջի տ-ն չի կարդացվում, որոշակի դեպքերում չի կարդացվում նաև e-ն):

Հատուկ անունների գրադարձման ժամանակ որոշ անուններ կարող են զուգաձևություն ունենալ, ինչպես՝ լատ. Cicero - Կիկերոն - Ցիցերոն, լատ. Circa - Կիրկե - Ցիրցե և այլն: Հատուկ անունները տարբեր լեզուներում կարող են տարբեր գրադարձություն ունենալ, որ պայմանավորված է տվյալ լեզվի հնչյունական օրենքով. հնչյունական փոփոխության ուղղությամբ՝ Terentius – Теренций – Տերենս:

Փոխառության ժամանակ պետք է հաշվի առնել փոխատու լեզվի գրաֆիկական, հնչյունական և քերականական առանձնահատկությունները: Այդ դեպքում փոխառյալ բառերի գրադարձությունը և արտասանությունը համեմատաբար հարազատ կմնան մայր լեզվի գրությանն ու արտասանությանը: Հմմտ. հուն. Atene, ֆրանս. Athene, անգլ. Athens, սերբ. Атина, ռուս. Афины, հայ. Աթենք, լատ. Roma, անգլ. Rome, ռուս. Рим, հայ. Հռոմ և այլն:

Քերականական օրենքներով են պայմանավորված գրադարձվող բառերի հոգնակի թվի պահպանումը՝ *Նիդեռլանդներ*, *Կարպատներ*, *Հիմալայներ*, *Ալպեր* և այլն:

Աշխարհագրական բաղադրյալ անունների պատճենման ժամանակ հաճախ հատուկ անունը գրադարձվում է, իսկ նրա լրացումները թարգմանվում են, ինչպես՝ Северная Корея - Հյուսիսային Կորեա, Южная Корея - Հարավային Կորեա, Средняя Азия - Միջին Ասիա և այլն:

ՏԱՌԱՐԱՐՁՈՒԹՅՈՒՆ (ՏՐԱՆՍԿՐԻՊՏԻԱ) - Տառադարձությունը լեզվի գրառման յուրահատուկ միջոց է՝ գիտական-լեզվաբանական նպատակներով: Այն օգտագործվում է որևէ լեզվի, բարբառի կամ անհատական խոսքի ճիշտ փոխանցման համար: Տառադարձությունը որևէ լեզվի այբուբենի վերածումն է ընդհանուր, հանրահայտ այբուբենի. տառադարձության համար գործածվող այբուբենի տառերն ու նշանների համակարգը ընդհանուր են բոլոր լեզուների համար: Ընդհանրապես կարդալու և գրելու կանոնները չեն համընկնում: Առանձնապես շատ են պայմանական գրությունները (գրելաձևերը) անգլերենի ուղղագրության մեջ, և դա ստեղծում է անհրաժեշտություն՝ (ոչ միայն) բառարաններում բառերի ուղղագրական գրառումից հետո տալու նրանց արտաբերությունը: Դրա համար գործածում են ՄՀԸ (Միջազգային հնչյունաբանական ընկերություն) այբուբենը, որ ստեղծվել է լատինական այբուբենի հիման վրա: Այն ներառում է նաև լրացուցիչ տառեր, տարորոշիչներ. վերջիններս դրվում են տառերի վրա

(վերնից, ներքևից, աջ և ձախ կողմերից): Այդ այբուբենով գրառում են հնչյունի կամ ձևային արտասանական հատկանիշները, օրինակ՝ անգլերեն. beautiful ('bjʊ:təfʊl) - գեղեցիկ, door ('dɔ:) - դուռ, (door-step ('dɔ:step) – դռան շեմ, large (la:dʒ)-ընդարձակ, language ('læŋgwɪdʒ) - լեզու, new (nju:) – նոր, ռուս. счастье (ш'ас'т'յь), будит (б'уйт), так сказать(та'скас'ть), весть о пожаре (в'е'с'т' л плжа'р'и), на друдой день (нъдругоі д'е'н') և այլն:

Հայերենի գիտական տառադարձության համար ընդունված է Հ. Հյուբշմանի կազմած այբուբենը, որ վերամշակել է Է. Բենվենիստը:

Հայերեն տառերը

Գիտական տառադարձությունը

ա	a
բ	b
գ	g
դ	d
ե	e
զ	z
է	e
ը	ə
թ	t' (th)
ժ	ž
ի	i
լ	l
խ	x
ծ	c
կ	k
հ	h
ձ	j
ղ	γ
ճ	č
մ	m
յ	y
ն	n
շ	š
ո	o (vo)
չ	č'
պ	p
ջ	ǰ
ռ	ř
ս	s
վ	v

տ	t
ր	r
ց	c՝
ւ (վյուն)	w
ու	u
փ	p՝ (ph)
ք	k՝ (kh)
և	ēw
օ	ō
ֆ	f

Հնչյունական տառադարձության էական հատկանիշն այն է, որ այբուբենի տառերը՝ իբրև տառադարձության նշաններ, այդ համակարգում հանդես են գալիս միայն մեկ հնչյունային արժեքով: Եթե այբուբենի տառերը (այբուբենի համակարգում) կարող են արտահայտել մեկից ավելի հնչյունային արժեքներ (հնչյունային տարբերակներ), ապա տառադարձության նշաններից յուրաքանչյուրը բոլոր դեպքերում արտահայտում է միայն մեկ հնչյունային արժեք (եթե տարրորոշիչ նշան չունի, հմմտ. ա - a, բ - b, ծ - c և ճ - č, չ - č՝, ց - c՝ և այլն):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աղայան Է.Բ., Նախամաշտոցյան հայ գրի և գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Ե. 1977:
- Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
- Աճառյան Հր., Հայոց գրերը, Ե., 1984 (Վիեննա, 1928):
- Առաքելյան Վ. Դ., Խաչատրյան Ա.Հ., Էլոյան Ս. Ա., Հայոց լեզու, հ. 1, Ե., 1979:
- Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1983:
- Խաչատրյան Լ. Ս., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
- Խաչատրյան Լ.Ս., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:
- Յոզեֆ Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը և Մ. Մաշտոցի կենսագրությունը. «Մեսրոպ Մաշտոց» (հոդվածների ժողովածու), ՀՍՍՀ ԳԱ, Ե., 1962:
- Միրումյան Մ.Վ., Հայոց լեզու. Տեսական և գործնական դասընթաց (Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), Ե., 2012:
- Ջահուկյան Գ. Բ., Աղայան Է. Բ. և ուրիշներ, Հայոց լեզու, 1-ին մաս, Ե., 1980:
- Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999:
- Սուքիասյան Հ.Վ., Աճականը հայերենում, Ե., 2016:
- Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.

- Внутренняя форма слова // Лингвистический энциклопедический словарь
/Под ред. В. Н. Ярцевой.-М.: Советская энциклопедия, 1990.
- Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
- Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.
- Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.
- Телия В. Н., Русская фразеология: Семантический и
лингвокультурологический аспекты. - М.: Языки русской культуры, 1996.
- Широков О.С., Введение в языкознание, М., 1985.

3. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լեզվի բառային կազմը, նրա կրած փոփոխությունները և խոսքաշարում բառերի դրսևորած իմաստներն ուսումնասիրող գիտությունը կոչվում է բառագիտություն: Բառագիտության հիմնական միավորը բառն է: Բառը գիտականորեն բնութագրելու համար պետք է հաշվի առնել նրա կարևորագույն հատկանիշները և սահմանել բառը:

ԲԱՌ – որպես լեզվական միավոր՝ բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

ա) լեզվի ձևաիմաստային միավոր է՝ ի տարբերություն հնչույթների և վանկերի, բ) օժտված է կապակցունակությամբ. մասնակցում է նախադասությունների կառուցմանը, գ) անընդմիջարկելի է, դ) ունի ինքնուրույն կիրառություն, ե) ունի բառային շեշտ:

Բառը **ձևաիմաստային միավոր** է, ունի իր որոշակի ձևը և իմաստը կամ իմաստները: Բառի ձև ասելով՝ հասկանում ենք նրա հնչյունակազմը, արտաքին նյութական ձևավորումը, որը բանավոր խոսքում բնորոշվում է հնչյունական կապակցությամբ, իսկ գրավոր խոսքում՝ տառանիշների որոշակի դասավորությամբ, օրինակ՝ *սեղան* բառի արտաքին նյութական կողմը հնչյուններին համապատասխանող գրանշանների դասավորությունն է: Բառի ձևը որոշակի է: Բավական է փոխել բառի հնչյունների դասավորությունը, և բառը կդադարի այդպիսին լինելուց (հմմտ. *սեղան* և *դեսան*) կամ էլ որոշակի դեպքերում կդառնա բառական այլ միավոր և կունենա բառական այլ արժեք (հմմտ. մասուր-սուրմա, շուն-նուշ): Բառը կարող է հնչյունական փոփոխության ենթարկվել, ընդ որում՝ տարբեր պատճառներով: Քանի դեռ հնչյունական փոփոխված ձևով նույն բառի բառական իմաստներն ընկալվում են, գործ ունենք նույն բառի հետ՝ *տուն, տան, տնից, տներ*:

Բառերը կարող են հանդես գալ **ձևային տարբերակներով**, այսինքն՝ փոփոխվում է բառի ձևը, բայց ոչ իմաստը՝ մայրաքաղաք – քաղաքամայր, գլուխը բաց – գլխաբաց, քիթը բարձր – բարձրաքիթ, չար լեզու – չարալեզու: Բառի ձևի և իմաստի կապը պայմանական է: Պարզ բառի իմաստի և ձևի միջև պատճառաբանվածություն չկա, բաղադրյալ բառերի դեպքում բառային իմաստները պատճառաբանված են: Այդ կարգի բառերի ձևի ու իմաստի միջև որոշակի պատճառակցական կապ գոյություն ունի: Առանձին վերցրած *խորան* և *արդ* բառերն իմաստաբանորեն իրենց ձևի հետ կապ չունեն. *խորան*՝ նախնական իմաստով՝ «վրան», այնուհետև «եկեղեցական փոքրիկ սենյակ բեմի երկու կողմերում», *արդ*՝ «ձև» (եվրոպական art-ist. հմմտ. գ-արդ, գ-արդ-արանք, արդ-ու-գ-արդ, արդ-ուկ և այլն), մինչդեռ այդ արմատներից բաղադրված *խորանարդ* բառը իմաստաբանորեն պատճառաբանվում է, որ բխում է նրա բաղադրիչների իմաստներից՝ «խորանի՝ սենյակի ձև ունեցող. վեցանիստ մարմին» (սենյակը վեց նիստ ունի):

Բառի կարևոր հատկանիշներից է **կապակցելիությունը**. դա այն հատկանիշն է, որով բառը, իր նմանների հետ միանալով, կապակցություն կամ խոսք է կազմում: Բառերի կապակցությունը հայերենում իրականացվում է համաձայնության, խնդրառության և առդրության միջոցով:

Կապակցական դերով բառերը հանդես են գալիս շարահյուսական մակարդակում՝ ինքնուրույն գործածությամբ: Բառերով մենք նախադասություններ ենք ձևավորում, և նախադասությունների մեջ յուրաքանչյուր բառ ինքնակա գոյություն ունի, դրանք գրվում են միմյանցից անջատ, արտաբերվում են առանձին և ընկալվում են իբրև առանձին միավոր (խոսքի շղթայում՝ ոչ միշտ): Լեզվի կառուցվածքի մեջ բառը ինքնակա միավոր է իբրև բառային մակարդակի միավոր:

Բառի կարևոր հատկանիշներից մեկն էլ այն է, որ այն **անընդմիջարկելի է**: Բառերը քերականական տարբեր իմաստներ արտահայտելու համար ենթարկվում են փոփոխությունների, ստանում են զանազան մասնիկներ, վերջավորություններ, զանազան ածանցներ, սակայն նրանց բառական կառուցվածքը չի փոխվում, նրանց հիմնական իմաստակիր միավորը՝ արմատը, մնում է անխաթար, նրանք չեն միջարկվում այլ ձևույթներով:

Բառերն ունեն **ինքնուրույն կիրառություն**: Կապակցական դերով նրանք շարահյուսական մակարդակում հանդես են գալիս ինքնուրույն գործածությամբ: Բառերով նախադասություններ են ձևավորվում, և նախադասությունների մեջ յուրաքանչյուր բառ կարող է դառնալ նախադասության անդամ, այլ կերպ ասած՝ նախադասության շրջանակներում բառերին հատուկ է որոշակի պաշտոն: Նրանք գրվում են միմյանցից անջատ, արտաբերվում են առանձին և ընկալվում են իբրև առանձին միավոր:

Բառի էական հատկանիշներից մեկն է **բառային շեշտը**: Բառային շեշտը բառի անբաժան հատկանիշներից է. այն ակուստիկական-ձայնային իրողություն է, որ առանձնացնում է բառի վանկերից մեկը և նրան է ենթարկում մնացած անշեշտ վանկերը: Ըստ այդմ, բառի շեշտված վանկը անշեշտ վանկերից տարբերվում է ուժով, տևողությամբ, վանկարար ձայնավորի որակով և այլն:

Հետևաբար, բառը՝ իբրև լեզվական միավոր, բնութագրելու համար պետք է նկատի առնել վերոնշյալ հատկանիշները: Ըստ այդ հատկանիշների էլ լեզվաբանական գիտությունը տալիս է բառի համեմատաբար ամբողջական սահմանումը. «Բառը լեզվի նվազագույն իմաստակիր միավորն է, որն ազատորեն վերարտադրվում է խոսքի մեջ հաղորդակցական միավորներ կառուցելու համար»:

ԲԱՌԻ ՆԵՐՔԻՆ ՁԵՎ - Բառի ներքին ձևը բացահայտում է առարկայի ինչ-որ հատկանիշ, որի հիման վրա տեղի է ունեցել բառանվանումը: Առար-

կայի պատկերացումը, սակայն, նրա անվանման մեջ արտացոլվում է միակողմանիորեն, քանի որ առարկան անվանման մեջ ներկայացվում է միայն մեկ հատկանիշով: Այնքանով որ բառի ներքին ձևը մատնանշում է առարկայի կամ հասկացության միայն մեկ հատկանիշը, հետևաբար միևնույն առարկան, միևնույն հասկացությունը կարող են ունենալ մեկից ավելի անվանումներ. այդպես առաջանում են հոմանիշ բառերը:

Բառերի նախնական իմաստը կոչվում է բնիմաստ (էտիմոն): Բնիմաստը հայտնաբերվում է ստուգաբանության միջոցով: Ստուգաբանությունը պատմահամեմատական մեթոդի եղանակներից է, որ զբաղվում է լեզվական միավորների ծագման, նախնական իմաստի և նրանց ձևափոխությունների լուսաբանությամբ:

Օրինակ՝ ստուգաբանորեն ապացուցվել է, որ *առիւծ* բառը ծագում է հ.-ե. *reug- «մոնչալ» արմատից, որ հայերեն տվել է ռեւծ. իսկ ա նախահավելվածով՝ առեւծ: *Բագում* բառը ծագում է հ.-ե. *bhog'hú- ձևից՝ շատ, խոշոր, շատ ամուր՝ նշանակությամբ: *Բռնոր* բառը ծագում է հնիս. *bhel-, *bhol- արմատից՝ -որ մասնիկով (հիմնական նշանակությունն է «ուռչել», որից առաջացել են «բարձրանալ» և «գնդաձև կերպարանք առնել», ապա «մեծ, խոշոր, հաստ» նշանակությունները): *Դարբին* բառը ծագում է հ.-ե. *dhabhro- նախաձևից՝ -ին մասնիկով. *պարզ արմատն է dhabh-* «հորինել, գեղեցիկ կերպով հարմարել» և այլն:

Սովորաբար բառի ներքին ձևը և նրա բառական նշանակությունը չեն համընկնում. բնիմաստի պատմական զարգացման ընթացքում միևնույն բնիմաստից կարող են առաջանալ տարբեր բառեր: *Մարդ* բառի ներքին ձևը հանգում է հ.-ե. *mer արմատին. այն ա//ե ձայնդարձով ծագել է mar տարբերակից՝ դ աճականով. նշանակում է «մահկանացու»: Mar տարբերակի բնիմաստից զարգացել են մեռ և մահ արմատների բառական նշանակությունները (հմմտ. мер-т-в-ѣй «մեռած, մեռյալ», մեռ-ան-ել, մահ-ան-ալ): Հայերենի *անհոգ*, *ապահով*, *հեւալ*, *հիւանդ* բառերի բնիմաստը հանգում է *հոգ(u)* ներքին ձևին, հմմտ. *անհոգ* (հոգս չունեցող), *ապահով* (զ/վ հերթագայությամբ՝ հոգսերից ազատված), *հեւալ* (ո//ե ձայնդարձով՝ հոգս ունենալ), *հիւանդ* (ո//ի ձայնդարձով՝ որևէ տեղում հոգս ունեցող): Կամ ռուսերենի крыло և крыша գոյականները պատճառաբանվում են крыть բառի ընդհանուր բայիմաստով:

Բառի ներքին ձևը տվյալ բառի իմաստային կառուցվածքում պահպանվում է նրա կազմավորման ժամանակ: Բառիմաստի պատմական փոփոխությունների ընթացքում տեղի է ունենում իմաստային կառուցվածքի պարզեցում, որի հետևանքով անհետանում է բառերի ներքին ձևը, և այդ կարգի բառերը դառնում են իմաստով չպատճառաբանված: Բառի ներքին ձևի կորուստը կապված է բառի ձևաբանական կառուցվածքի, նրա հնչյունակազմի և իմաստի փոփոխությունների հետ: Օրինակ, *հլու*, *հմուտ*, *հզոր* բառերը

կորցրել են իրենց ներքին ձևը, քանի որ լեզվից անհետացել է *հու* արմատը՝ «լավ» նշանակությամբ. հմմտ. *հուլու* «լավ լսող», *հումուտ* «լավ մտնող», *հուզոր* «լավ զորեղ՝ ուժեղ» և այլն: *Նշույլ*, *նստել* բառերի ներքին ձևի կորուստը պայմանավորված է այն բանով, որ գործածությունից դուրս է եկել *նի*- ածանցը. հմմտ. *նի-ստ-ել* (*ստ* արմատի համար հմմտ. լատ. *sed-*, *sid-* անգլ. *sit*, գերմ. *set*, ռուս. *сид-еть*), նի-շոյլ (լ/ղ հերթագայությամբ՝ *շող*) և այլն:

Բառերի ներքին ձևերի կորստյան պատճառ են դառնում ինչպես նրանց ստուգաբանական և քերականական իմաստների մթագնումը, այնպես էլ փոխառումը:

Ստուգաբանական իմաստի մթագնում է կոչվում բառերի նշանակության և բառակազմական կառուցվածքի այն փոփոխությունը, որ խզում է առաջ բերում բառերի նախնական նշանակության և նրանցով կազմված նոր բառերի իմաստների միջև:

Այսպես, հայերենում *կրունկ* և *կուռն* բառերը ստուգաբանորեն ծագել են ընդհանուր *կուր* արմատից, որ ունեցել է «շեղ, թեք, կեռ» իմաստները: Արմատի ստուգաբանական նշանակությունը մթագնել է, և նրանից առաջացած *կրունկ* և *կուռն* բառերի ներքին ձևերն անհետացել են դրանց իմաստային կառուցվածքից:

Այդպիսի խզում կարող է առաջ բերել նաև բառերի քերականական իմաստի մթագնումը: Այսպես, հայերենի մի շարք կազմություններում *կալ* բաղադրիչի քերականական իմաստը մթագնել է, և այդ բառերի ներքին ձևն ու իմաստային պատճառաբանվածությունը հնարավոր է վերականգնել միայն տարժամանակյա հետազոտության եղանակով: Հմմտ. կալանել, կալանավոր, կալանատուն և աշխարհակալ, կուսակալ, կողմնակալ բառերը: *Կալ* բաղադրիչը գրաբարի *ունիմ* «բռնել, պատել, ունենալ, համարել» անկանոն բայի երկրորդ հիմքն է (հմմտ. Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ. Երկունքը ծովում բռնել էր (պատել էր) նաև կարմիր եղեգնիկին: Որսորդն կալաւ կաքաւ մի և կամէր գենուլ. Որսորդը բռնեց մի կաքավ և կամենում էր մորթել): Իմաստային այս բացահայտումով է միայն հնարավոր վերականգնել վերոբերյալ բառերի ներքին ձևն ու իմաստային պատճառաբանվածությունը, ինչպես կալանավոր - բռնավոր, աշխարհակալ – աշխարհի չորս կողմերը բռնող՝ աշխարհին տիրող և այլն:

Բառերի ներքին ձևը կարելի է բացահայտել փոխառյալ հատուկ անուններում: Հմմտ. հայերենին անցած հետևյալ փոխառյալ անվանումները. Զենդերեն՝ Վահե (լավագույն), Սուրեն (գորավար), Վազգեն (գորտ), Արշակ (արջ), Գուրգեն (գայլի ձագ), հունարեն՝ Հովհաննես (լուսավորյալ), Գրիգոր (արթուն, զգոն), Ալեքսանդր (առնական), Վասիլ (թագավոր), Նիկիտա (հաղթող), Պետրոս (քար), Թեոդոր (աստծո պարգև), Հեղինե (ջահ), լատիներեն՝ Ռեգինա (թագուհի), Ֆելիքս (երջանիկ), Վալենտին (ամենակարող), Վիկտոր

(հաղթող), Օգոստոս (սրբազան), Մարինե (ծովային), սլավոնական՝ Վլադիմիր (աշխարհակալ), Վերա (հավատ), Նադեժդա (հույս), Լյուբով (սեր) և այլն:

Այսպիսով, բառի բնիմաստը բառի այն իմաստային հիմքն է կամ նախնական իմաստը, որ այժմ մեծ մասամբ հայտնի չէ, մթագնել, կորել է և հայտնաբերվում է միայն ստուգաբանության միջոցով, մինչդեռ (բաղադրյալ) բառի ներքին ձևն ինքնին բացահայտվում է բառի բաղադրիչների իմաստներով:

ԲԱՌԻՄԱՍՏ - Բառերի իմաստները տիպաբանորեն նույնը չեն. դրանք տարբերակվում են ըստ այն բանի, թե լեզվի ո՞ր մակարդակների կազմությանն են մասնակցում: Դրանով էլ պայմանավորված՝ լեզվաբանությունը տարբերակում է բառերի բառային, բառակազմական, քերականական (ձևաբանական և շարահյուսական) և ոճական իմաստներ:

Բառագիտությունն ուսումնասիրում է լեզվի բառային իմաստները: Բառային իմաստները, ըստ բառի նկատմամբ ունեցած հարաբերության, որոշակի են և անհատական. յուրաքանչյուր իմաստ պատկանում է որոշակի բառի, այդպիսով բառերը տարբերակվում են միմյանցից իրենց բառական իմաստներով, հմմտ. *խոսել, խաղալ, անձրև, քամի, քաղաք, գյուղ, ճանապարհ, մարդ, անտառ* և այլն: Սակայն բառական իմաստները, ըստ առարկայի նկատմամբ ունեցած հարաբերության, համընդհանուր են: Օրինակ, *ծառ, հեռախոս, գիրք* բառերը վերաբերում են ոչ թե որոշակի ծառի, հեռախոսի կամ գրքի, այլ դրանցից յուրաքանչյուրը վերաբերում է ցանկացած ծառի, ցանկացած հեռախոսի, ցանկացած գրքի:

Բառական իմաստների զանազան դասակարգումներ կան, որոնք հենվում են տարբեր սկզբունքների վրա: Կարևորվում է բառերի իմաստների դասակարգումն ըստ այն հարաբերությունների, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ բառերի ներսում (ներբառային իմաստներ), մյուս կողմից՝ բառերի միջև (միջբառային իմաստներ):

Ա. ՆԵՐԲԱՌՈՒՅԹԱՅԻՆ ԻՄԱՍՏՆԵՐ - Բառերի ներսում դիտարկվող իմաստային հարաբերությունները ներբառային իրողություններ են. միևնույն բառի իմաստային կառուցվածքում կարող են լինել մեկ կամ մի քանի բառական իմաստներ, ըստ այդմ բառերը լինում են մենիմաստ և բազմիմաստ:

Մենիմաստ են հիմնականում հասկացությունները, մասնագիտական տերմինները (եզրույթները), դերանունները, թվականները, օրինակ՝ *շոգենավ, գոյական, ածական, թվական, հոլով, եռացատկ, երիկամ, կտցար, էս, դու, նա, քսան, հիսուն* և այլն:

Բազմիմաստ բառերն արտահայտում են մեկից ավելի իմաստներ: Բազմիմաստությունը զարգանում է այն բանի հետևանքով, որ բառն արտահայտում է ոչ թե մեկ առարկա, մեկ հատկանիշ կամ մեկ գործողություն, այլ մի քանի առարկա, մի քանի հատկանիշ կամ մի քանի գործողություն: Բառը բազմիմաստություն է ձեռք բերում այն ժամանակ, երբ նրա տարբեր նշանակությունները համընդհանուր են դառնում բոլոր խոսողների համար և գրանցվում են բացատրական բառարաններում: Այսպես, *քիթ* բառն ունի անվանողական ուղղակի նշանակություն. «մարդու և կենդանիների հոտառության ու շնչառության գործարանի արտաքին մասը, որ գտնվում է մարդկանց դեմքի՝ կենդանիների դնչի վրա՝ բերանից վերև»: Այդ բառի իմաստային կառուցվածքը բարդ է, որն էլ պայմանավորում է նրա գործածությունը տարբեր իմաստներով, որոնց հետևանքով էլ այն դառնում է բազմիմաստ: Իր հիմնական նշանակության հիմքի վրա *քիթ* բառը ձեռք է բերել նաև «թռչունների կտուց» և «զանազան գործիքների սուր ծայրը» իմաստներ, վերջինն էլ մասնավորվում է բառի՝ *նավի քիթ, ինքնաթիռի քիթ, ավտոբուսի քիթ, տանկի քիթ, կռիվի քիթ, ցամաքի սրավուն՝ երկար ու նեղ շերտ* նոր նշանակությունները, որոնք էլ մտնում են տվյալ բառի իմաստային կառուցվածքի մեջ՝ իբրև բազմիմաստ նշանակություններ:

Ներբառային իրողություններ են ուղղակի և փոխաբերական իմաստները:

Բառերի ուղղակի իմաստը նրանց առաջնային նշանակությունն է, որն առարկան կամ երևույթն արտացոլում է ուղղակի կերպով՝ շրջանցելով նրա երկրորդական նշանակությունները. հմմտ. *գիրք, սեղան, դղյակ, պատանի, գորք, ծով, գետ* և այլն:

Բառերի փոխաբերական իմաստ է կոչվում այն բառական նշանակությունը, որը տվյալ բառն ստանում է փոխաբերական գործածությամբ:

Փոխաբերության տեսակներից են փոխանունությունը և համըմբոնումը:

ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ - Այն իրողությունն է, որի դեպքում հատկանշային իմաստ ունեցող բառերը հանդես են գալիս նաև առարկայական իմաստով: Այդ ներառումը կատարվում է հոդերի միջոցով: Դա բառակապակցության կրճատման երևույթն է: Օր. ծարավ մարդ > ծարավը, սոված մարդ > սովածը: Հմմտ. Սովածը հաց կտեսնի երագում, ծարավը՝ ջուր (առած):

Փոխանունությունը լեզվում ունի մի շարք դրսևորումներ.

1. Պարունակողը պարունակյալի փոխարեն:

Դահլիճը ծափահարում է: *Գյուղ* կանգնի, գերան կկոտրի:

2. Հեղինակը ստեղծագործության փոխարեն:

Ես *Նարեկացի* և *Շեքսպիր* հաճույքով եմ կարդում:

3. Նյութը նրանից պատրաստված առարկայի փոխարեն:

Ցուցահանդեսում գեղեցիկ *կտավներ* կային:

ՀԱՄԸՄԲՈՒՆՈՒՄ - Այն երևույթն է, որի դեպքում բառը փոխարինում է մեկ այլ բառի՝ արտահայտելով միայն նրա իմաստը. դա մեկ բառի գործածությունն է այլ բառի փոխարեն:

Համըմբոնումն ըստ քանակական հարաբերության ունի իր դրսևորումները:

1. Մասը ամբողջի փոխարեն:

Ագարակն ունի հարյուր թև թռչուն կամ հարյուր գլուխ եղջերավոր:

2. Ամբողջը մասի փոխարեն:

Ազնվական տոհմ ես դու:

3. Եզակին հոգնակիի կամ հավաքականի փոխարեն:

Ռուսը մեր բարեկամն է:

Բ. ՄԻՋԲԱՌՈՒՅԹԱՅԻՆ ԻՄԱՍՏՆԵՐ - Դիտարկվում են տարբեր բառերի կամ բառախմբերի միջև. նման դեպքերում իմաստային կապերը միավորում են մեկից ավելի բառեր: Միջբառային հարաբերություններ ունեցող բառերը դասակարգվում են *ըստ իմաստի և ձևի*: Բառերն ըստ իմաստի ու ձևի դասակարգվում են հոմանիշ, հականիշ, համանուն և հարանուն տեսակների:

ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ- Սրանք բառագույգեր կամ բառաշարքեր են, որոնք ըստ մերձավորության աստիճանի բաժանվում են երկու խմբի՝ *նույնանիշներ* և *համանիշներ*:

- **Նույնանիշ** - Իմաստով նույնական բառեր են: Սրանք իմաստով բացարձակապես համընկնում են, թեև ավելի քիչ են հանդիպում, քան համանիշները: Նույնանիշ բառերը միևնույն նշանակության կրողներն են. դրանք դիտվում են բառական տարբերակներ, ինչպես՝ *այտ - թուշ, կրունկ - զարշապար, արև - արեգակ*: Կան նաև թարգմանական նույնանիշներ, ինչպես՝ *բիռլոգ - կենսաբան, կարդիոլոգ - սրտաբան, փիլիսոփա - իմաստասեր, էլիտա - ընտրանի, ստիլ - ոճ, մետաֆորա - փոխաբերություն* և այլն:

- **Համանիշ** - Արտահայտում են իմաստով մոտ կամ մերձավոր նշանակություններ: Հաճախ կարող են իրար փոխարինել, հաճախ էլ տարբերակվում են գործառական դաշտով: Համանիշները դասակարգվում են ըստ խոսքի մասերի՝ նկատի ունենալով համանշային շարքի անդամների խոսքիմասային պատկանելությունը:

- *գոյականական համանիշներ*. տուն - բնակարան - կացարան, տիեզերագնաց - աստղանավորդ,

- *ածականական համանիշներ*. պարզ - հստակ - վճիտ - զուլալ - ջինջ - մաքուր, գեղեցիկ - սիրուն - չքնաղ - չնաշխարհիկ, հարուստ - ունևոր - մեծատուն և այլն,

- *բայական համանիշներ*. գնալ - երթալ - մեկնել, ասել - խոսել - պատմել, գրոհել - արշավել - հարձակվել, շինել - կառուցել - սարքել - արարել և այլն,

- *մակբայական համանիշներ*. արագ - շտապ - փութով - ճեպով, դանդաղ - կամաց, քաջաբար - արհաբար - խիզախաբար և այլն,

- *վերաբերական համանիշներ*. ոչ - չէ, երբեք - բնավ - ամենևին, դժբախտաբար - տարաբախտաբար - ցավոք և այլն:

Առանձնացնում են նաև հոմանիշների հետևյալ տեսակները՝ *հասկացական, ոճական-գործառական, հուզական-գնահատողական և համատեքստային*:

- *Հասկացական հոմանիշներ* - Սրանք վերաբերում են լեզվի միևնույն ոճին և տարբերվում են իմաստային նրբերանգներով. հատկանիշը ցույց են տալիս հասկացական տարբեր հիմունքներով, տարբեր տեսանկյուններից. ինչպես՝ *պատմել - ասել, հաղորդել - հայտնել - ծանուցել, ծառայություն - աշխատանք, դժվար - անտանելի, հեշտ - թեթև, ինքնուրույն - անկախ* և այլն:

- *Ոճական-գործառական հոմանիշներ* - Հանդես են գալիս լեզվի տարբեր ոճերում և լեզվի տարբերակներում, ինչպես՝ *ակն - աչք, խորշոմ - կնճիռ, ամուսնանալ - մարդու գնալ, պարել - կաքավել - պար գալ, պսակվել - նշանվել - ամուսնանալ* և այլն:

- *Հուզական-գնահատողական հոմանիշներ* - Սրանք արտահայտում են խոսողի վերաբերմունքը խոսքի առարկայի նկատմամբ. ունեն ոճական նրբիմաստներ. կարող են արտահայտել կա՛մ դրական, կա՛մ բացասական գնահատություն, հմմտ. *գեղեցիկ - սիրուն - գեղանի - չքնաղ և խմել - կոնծել - գլխին քաշել - լակել* և այլն:

- *Համատեքստային հոմանիշներ* - Սրանք այն բառերն են, որոնք հոմանշային կապեր են ձեռք բերում միայն որոշակի բնագրի շրջանակներում՝ փոխաբերական նշանակություններով արտահայտելով հոմանշային հարաբերություններ, ինչպես՝ *մահ - արյուն, կյանք - ազատություն, փրկվել - վերածնվել, բարձունք - հաղթանակ, գանձ - հանճար* և այլն:

Բազմիմաստ բառերի մերձավոր նշանակությունները միմյանց նկատմամբ դրսևորում են հոմանշային հարաբերություններ: Ինչպես՝ *փոքր - մանր, փոքր - քիչ, փոքր - կրտսեր, փոքր - թույլ, փոքր - աննշան* և այլն: Իմաստային այդ կապը գտնելու համար համեմատենք դրանց կապակցելիական հնարավորությունները. 1. *փոքր ձկներ - մանր ձկներ*, 2. *փոքր բազմություն - քիչ բազմություն*, 3. *փոքր զավակ - կրտսեր զավակ*, 4. *փոքր ցնցում - թույլ ցնցում*, 5. *փոքր հաջողություն - աննշան հաջողություն* և այլն:

ՀՈՄԱՆՇԱՅԻՆ ՇԱՐՔ - Հաճախ հոմանշային հարաբերություն կարող են արտահայտել երկուսից ավելի բառեր, որոնք կազմում են հոմանշային շարք:

Հոմանշային շարքի անդամներից առաջինը կոչվում է հենաբառ, այն ոճականորեն չեզոք է և հանդես է գալիս լեզվի տարբեր ոճերում, իսկ մնացած բառերը կարող են պատկանել միայն այս կամ այն ոճին. հմմտ. *խոսել* (գործածվում է տարբեր ոճերում) - պատմել (գեղ. ոճ)- զրուցել (առօրյա-խոսակց. ոճ) - զրույց անել (առօրյա-խոսակց. ոճ) և այլն:

Հոմանշային շարքի մեջ կարելի է ցույց տալ իմաստային աստիճանավորում. օրինակ՝ *զարմանալ - ապշել - քարանալ, ուրախանալ - ցնծալ - աշխարհով մեկ լինել* կամ *վախ - ահ - երկյուղ - սարսափ - սոսկում - զարհուրանք* և այլն:

Շարքի անդամներն ունեն կապակցելիական տարբերություններ. ունենալով իմաստային ընդհանրություն և պատկանելով միևնույն բառիմաստային դաշտին՝ շարքի անդամները, այնուամենայնիվ, ի հայտ են բերում կապակցելիական տարբերություններ՝ կապակցություն կազմելով տարբեր բառերի հետ: Այսպես, հոմանշային շարքի *պարզ - հստակ - զուլալ - մաքուր - ջինջ - վճիտ* անդամների մի մասը կարող է կապակցություն կազմել նույն բառի հետ, ինչպես՝ *պարզ ջուր, հստակ ջուր, մաքուր ջուր, զուլալ ջուր, վճիտ ջուր*, իսկ *ջինջ, պարզ, մաքուր, վճիտ* անդամները՝ *երկինք* գոյականի հետ, ինչպես՝ *ջինջ երկինք, պարզ երկինք, մաքուր երկինք, վճիտ երկինք*, բայց *հստակ* և *զուլալ* հոմանիշները նույն բառի հետ կապակցություն չեն կազմում. չի ասվում՝ *հստակ երկինք, զուլալ երկինք* և այլն:

ՀՈՄԱՆՇԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ – իմաստաբանական միևնույն մակարդակի կառույցներ են, որոնք համընկնում են իմաստային պլանով, սակայն տարբերվում են արտահայտության պլանով, իմաստային նրբերանգներով և ոճական ինքնատիպությամբ: Այդ կառույցների հոմանշային բաղադրիչներն արտահայտվում են հետևյալ կաղապարներով.

ա) *բաղադրություն – բառակապակցություն* – արծաթե ափսե – արծաթից պատրաստված ափսե, ծաղկավաճառ աղջիկ – ծաղիկ վաճառող աղջիկ, սևաչյա աղջիկ – սև աչքերով աղջիկ, ոսկեձուլ մատանի – ոսկուց ձուլված մատանի և այլն,

բ) *բառաձև - բառակապակցություն* – ցքադաքն – մինչև քաղաք, գտամբ – շուրջ տամբ, զԱրշակայ – յաղագս Արշակայ,

գ) *բառաձև – բառ.* – մոր սեր – մայրական սեր, անտառի բուրմունք – անտառային բուրմունք, ոսկուց մատանի – ոսկե (ոսկյա) մատանի, ձմեռվա եղանակ – ձմեռային եղանակ,

դ) *բառակապակցություն – նախադասություն* – Բարձր պարիսպներով շրջապատված (ամրոց) – (ամրոց), որ շրջապատված էր բարձր պարիսպ-

ներով, Մասիսը պատկերողի (կտավը) – (նրա կտավը), որ պատկերել էր Մասիսը և այլն,

ե) նախադասություն – նախադասություն – Ծնալ Որմիզդն ի ժամու իւրում – Ծնեալ Որմզդի ի ժամու իւրում: Լսարանում լռություն էր – Լսարանում անդորր էր տիրում: Կայծակները ճեղքում էին ամպերը – Կայծակները թրատում էին ամպերը,

զ) բարդություն – բառակապակցություն – նախադասություն – Նամակաբեր Տիգրանը եկավ – Նամակ բերող Տիգրանը եկավ – Տիգրանը, որ նամակ էր բերում, եկավ: Լրագրավաճառ Մանեն դուրս եկավ կրպակից – Լրագիր վաճառող Մանեն դուրս եկավ կրպակից – Մանեն, որ լրագիր էր վաճառում, դուրս եկավ կրպակից:

ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ– Բառագույգեր են, որոնք հակադրվում են բացառապես իմաստային յուրահատկություններով և տարբերակվում են հնչյունական կազմով: Սովորաբար դրանք արտահայտում են. *ա) որակ և ինքնատիպություն* (տաք – սառը, հաստ – բարակ, երկար – կարճ, քաղցր – դառը, համեղ – անհամ), *բ) հոգեկան ապրումներ, հոգեվիճակ* (ուրախանալ – տխրել, վիշտ – ծիծաղ, առողջ – հիվանդ, ծիծաղել – լացել, հաղթահարել – ընկճվել), *գ) գործողության հակադիր ուղղվածություն* (բացել – փակել, գնալ – գալ, ելնել – իջնել, տանել – բերել, գնել – վաճառել, ծնվել – մեռնել), *դ) բնության երևույթներ* (արևածագ – մայրամուտ, լուսանալ – մթնել, ծաղկել – չորանալ, սառնամանիք – տաքություն), *ե) ժամանակի և տարածության հասկացություններ* (առավոտ – երեկո, գիշեր – ցերեկ, վաղ – ուշ, այսօր – վաղը, հեռու – մոտիկ, վերև – ներքև, սկիզբ – վերջ, հյուսիս – հարավ, արևելք – արևմուտք), *զ) ինչ-որ բանի քանակ՝ չափ՝ ծավալ* (շատ – քիչ, մեծ – փոքր, մաքսիմում – մինիմում, բոլորը – ոչ ոք, ամեն մեկը – ոչ մեկը, ամեն ինչ – ոչինչ, լայն – նեղ, անսահման – սահմանափակ) և այլն:

Ըստ հականշություն արտահատելու եղանակի և միջոցների՝ հականիշները բաժանվում են երկու խմբի:

1. Հակադրական հականիշներ - Սրանք այն բառագույգերն են, որոնք հականշություն արտահայտում են արմատական իմաստների հակադրությամբ, օր.՝ *բարձր - ցածր, երկար - կարճ, հեռու - մոտիկ, լայն - նեղ, մեծ - փոքր, հաստ - բարակ:*

2. Ժխտական հականիշներ - Եթե հակադրական հականիշներն արտահայտում են իմաստների հակադրություն, ապա ժխտական հականիշների մի բաղադրիչը ժխտական ածանցի միջոցով ժխտում, բացառում է մյուսի իմաստը, օր.՝ *հասուն - տհաս, մարդկային - տմարդի, բախտավոր - անբախտ, համեղ - անհամ, թնավոր - անթն* և այլն:

Հականիշներ կարող են ունենալ բազմիմաստ բառերի ուղղակի և փոխաբերական իմաստները, որ պայմանավորված է նրանց տարբերակված

իմաստներով, օրինակ՝ *մութ* (ոչ լուսավոր) – *խավար, մութ* (տգետ, հետամնաց) – *բանիմաց, մութ* (գաղտնի) – *բացահայտ, ծանր* (զգալի կշիռ ունեցող) – *թեթև, ծանր* (դժվարամարս) – *դյուրամարս, ծանր* (ուժեղ) – *թույլ, ծանր* (տհաճ) – *ախորժեղի, ծանր* (վիրավորական) – *սրտամոտ, թթու* (թթվահամ) – *քաղցրահամ, թթու* (վշտացնող) – *քաղցր, թթու* (անբարեհամբույր) – *գրավիչ* և այլն:

ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ - Տարբեր իմաստներ արտահայտող բառեր են, որոնք արտաքին հնչյունական կազմով նույնն են: Օրինակ՝ *մարտ*¹ «ամսանուն» - *մարտ*² «կռիվ», *այր*¹ «տղամարդ» - *այր*² «քարանձավ», *հոտ*¹ «բույր» - *հոտ*² «ռչխարի խումբ», *անել*¹ «կատարել» - *անել*² «ելք չունեցող, անելանելի», *հարկ*¹ «կարիք, պետք» - *հարկ*² «շենքի բարձրություն» - *հարկ*³ «տուրք» և այլն:

Ըստ ձևական նույնության՝ համանունները լինում են *լիակատար* և *մասնակի*:

- **Լիակատար համանուններ** - Գրությամբ և արտասանությամբ նույնական են, ինչպես՝ *սեր*¹ «սիրո զգացմունք» - *սեր*² «կաթի սերուցք», *բազուկ*¹ «մարմնի մաս՝ թև» - *բազուկ*² «ճակնդեղ», *կետ*¹ «ծովային կենդանի» - *կետ*² «կետադրական նշան» և այլն:

- **Մասնակի համանուններ** - Նույնական են կա՛մ գրությամբ, կա՛մ արտասանությամբ (հնչյունաբանորեն): Գրությամբ նույնական համանունները կոչվում են *համագիր*, արտասանությամբ նույնական համանունները՝ *համահունչ*:

- **Համահունչ համանուններ** - Տարբերվելով գրությամբ՝ համընկնում են արտասանությամբ, ինչպես՝ *անող*¹ «օդագուրկ» - *անոթ*² «սրվակ», *որդ*¹ «ճիճու» - *որթ*² «խաղողի վազ», *թռչել* «ցատկել» - *թրջել* «հեղուկով պատել» և այլն:

- **Համագիր համանուններ** - Համընկնում են գրությամբ, բայց ունեն արտասանական տարբերություն, որ պայմանավորված է ինչպես հնչյունական կազմով, այնպես էլ բառի մեջ շեշտի գրաված դիրքով, ինչպես՝ *հորդ* «առատ, տեղատարափ» - *հորդ* (հորըդ՝ քո հորը), *դուրս գալ* «դուրս ելնել» - *դուր(ը)ս գալ* (իմ դուրը գալ) և այլն:

Համանունների դասակարգման ժամանակ հաշվի են առնում նրանց ծագումը և գույգի բաղադրիչների արտահայտության եղանակը: Ըստ ծագման՝ առանձնացնում են համանունների հետևյալ տեսակները.

- **Համածին համանուններ** - Ծագում են նույն արմատից: Այդպիսի արմատները նախապես ունեցել են մեկից ավելի իմաստներ, որոնք աստիճանաբար հեռացել են միմյանցից, և յուրաքանչյուր իմաստի համար առանձնացել են անկախ բառական միավորներ, որոնք միմյանց նկատմամբ կազմում են համանունական հակադրություն: Օրինակ՝ *սուր* բառն սկզբում

նշանակել է՝ 1. կտրող, 2. հատու, 3. սուր, 4. դաշույն, որից էլ ունենք *սուր՝* – «թուր, դաշույն» (գոյ.), *սուր՝* – «հատու, կտրող, ծակող» (ած.) համանունական գոյգը:

- **Տարածին համանուններ** - Իմաստների միջև ներքին կապ գոյություն չունի, դրանք սուսկ համընկնում են հնչյունական կազմով. հմմտ. *կույս՝* «աղջիկ, օրիորդ» - *կույս՝* «կողմ, ուղղություն», *դար՝* «ժամանակային տևողություն» - *դար՝* «բարձունք»:

Ըստ բաղադրիչների արտահայտման ձևի՝ համանունները լինում են՝

- **Բառական համանուններ** - Բաղադրիչներն անկախ բառեր են, օրինակ՝ *փող՝* «խողովակ» - *փող՝* «նվագարան» - *փող՝* «դրամ» - *փող՝* «կոկորդ» (հմմտ. փողկապ), *հոտ՝* «բույր» - *հոտ՝* «ոչխարների խումբ»:

- **Բառաբերականական համանուններ** - Բաղադրիչներից մեկը բառ է, մյուսը՝ որևէ բառի քերականական ձև, օրինակ՝ *անցավ՝* «առանց ցավի» - *անցավ՝* «անց կացավ (անցնել բայի անցյալ կատարյալը)», *վանեցի՝* «ծագումով Վանից» - *վանեցի՝* «վանել բայի անցյալ կատարյալը», *արի՝* «քաջ» - *արի՝* «գալ բայի հրամայականի ժողովրդական տարբերակը» և այլն:

- **Քերականական համանուններ** - Բաղադրիչները տարբեր բառերի քերականական ձևեր են: Օրինակ՝ *երգի՝* «երգ գոյականի սեռական հոլովը» - *երգի՝* «երգել բայի ըղձական եղանակի ապառնին», *ջրի՝* «ջուր գոյականի սեռական հոլովը» - *ջրի՝* «ջրել բայի ըղձական եղանակի ապառնին», *ջրեր՝* «ջուր բառի հոգնակի թիվը» - *ջրեր՝* «ջրել բայի ըղձական անցյալը», *գիշերում՝* «գիշերել բայի դերբայաձևը» - *գիշերում՝* «գիշեր գոյականի ներգոյական հոլովը» և այլն:

ՀԱՐԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ - Այն բառերն են, որոնք ձևով իրար մոտ լինելով՝ ունեն իմաստային որոշակի ընդհանրություն: Այդպիսի բառերը կոչվում են *հարանուններ*: Դրանցից են՝ *քննել* (հարցաքննել, ստուգել)- *քննարկել* (քննության առարկա դարձնել), *դիտել* (նայել, տեսնել)- *դիտարկել* (ուշադրության արժանացնել), *փորձել* (ստուգել, պարզել) - *փորձարկել* (գործնական եղանակով հաստատել մտահղացումը), *ցուցում* (խորհուրդ)- *ցուցմունք* (վկայություն), *վերաբերել* (հարաբերություն՝ կապ՝ առնչություն ունենալ) - *վերաբերվել* (որոշակի մոտեցում ցուցաբերել), *հանցանք* (անօրինական արարք)- *զանցանք* (խախտում) և այլն:

Ինչպես նկատելի է, հարանունական գոյգի բաղադրիչների տարբերակման հիմքում ընկած է երկու հատկանիշ՝ *իմաստը և ձևը*: Ըստ այդմ՝ հարանունները բաժանվում են երկու խմբի՝ իմաստային և ձևային հարանուններ:

Ա. Իմաստային հարանուններ - Դրանք կոչվում են նաև բուն հարանուններ, որոնց բաղադրիչները, արտաքին հնչյունական կազմով տարբե-

րակվելով հանդերձ, արտահայտում են իմաստով նույն կամ մոտ(իկ) հարաբերություններ:

Իմաստով նույն կամ մոտ(իկ) հարաբերություններ են արտահայտում համանունական հետևյալ զույգերը. *անձնանվեր - անձնվեր, աստղային - աստեղային, զվարճալի - զվարճալից, հոգնակիակերտ - հոգնակերտ, արտասուք - արցունք, խաբեություն - խաբեբայություն, զով - հով, գյուղացիություն - գյուղացություն* և այլն:

Իմաստով մոտ կամ մոտիկ հարաբերություններ են արտահայտում հետևյալ համանունական զույգերի բաղադրիչները. *արհեստ - արվեստ, բաժին - բաժանմունք, հանցանք - զանցանք, տեղի տալ - տեղիք տալ, վերաբերել - վերաբերվել, ցուցում - ցուցմունք, ուսում - ուսմունք, հասկացություն - հասկացողություն, զգացում - զգացմունք, կրկնություն - կրկնողություն, զգացում - զգացողություն* և այլն:

Բ. Ձևային հարանուններ - Այս կարգի հարանունական զույգերի բաղադրիչները իմաստային որևէ կապ չունեն և առնչակից են միայն արտաքին հնչյունական կազմով (ձևով). *հորթ* (կովի ձագ) – *հորդ* (առատ), *ամուլ* (գութանին լծված եզներից մեկը) – *ամուլ* (չբեր), *թոթովել* (անվարժ խոսել) – *թոթվել* (ուսերը ցնցել, ձեռքերը թափ տալ), *թռչել* (օդում սավառնել, ցատկել, ճախրել) – *թրջել* (մի բան հեղուկի մեջ թաթախել), *սպրդել* (աչքից վրիպել) – *սփրթնել* (գունատվել), *վարկ* (հեղինակություն) – *վարք* (ապրելակերպ), *բարկ* (տաք) – *բարք* (վարքագիծ), *կարգ* (դասավորություն) – *կառք* (ձիակառք), *մեղկ* (թուլամորթ) – *մեղք* (հանցանք, ոճիր) և այլն:

ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ - Ըստ իմաստային զարգացման արդյունքի՝ տարբերակում են բառիմաստի և բառի բովանդակության հետևյալ փոփոխությունները.

1. Բառիմաստի ընդլայնում,
2. Բառիմաստի նեղացում,
3. Բառիմաստի անցում կամ շրջում,
4. Իմաստների փոխհաջորդում:

ԲԱՌԻՄԱՍՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ - Սա այն երևույթն է, երբ ժամանակի ընթացքում բառի իմաստային կառուցվածքն ընդարձակվում է՝ ներառելով այլ իմաստ կամ իմաստներ. այդ դեպքում որոշ մենիմաստ բառեր կարող են դառնալ բազմիմաստ, որոշ բազմիմաստ բառեր էլ կարող են ընդարձակել իրենց իմաստային ծավալի շրջանակները: Օրինակ՝ *բուրռ* ֆրանսերենում նախապես նշանակել է «ուղտի կաշի», այնուհետև՝ «այն սեղանը, որի վրա գցել են այդ կաշին», այնուհետև՝ «այն մարդկանց խումբը, որը նստում էր այդ սեղանի շուրջը ժողովի»: *Տուն* նախապես նշանակել է «շինություն», այնուհետև՝ «առհասարակ շենք», որից էլ՝ «բնակելի տուն», դրանից էլ՝

«որնէ նպատակի ծառայող հաստատություն» (օրինակ՝ գրողների տուն, հանգստյան տուն), նշանակում է նաև «որնէ տեղ ընդհանրապես (մի բան պատրաստելու, վաճառելու և այլնի համար)», օրինակ՝ դեղատուն, գինետուն, ծննդատուն և այլն:

Բառիմաստի ընդլայնման հետևանքով գրաբարի մենիմաստ շատ բառեր արդի հայերենում դարձել են բազմիմաստ: Հմմտ. գրաբար. *ղիւսհար* - «սատանա ունեցող», արդի հայերեն. *ղիվահար* - 1. դևից զարկված, ընկնավոր, 2. այսահար, կատաղած, խելագար, 3. հախուռն, անխորհուրդ, խենթուխելառ գործող ու խոսող, 4. սարսափահար:

Բառիմաստի ընդլայնման երևույթ է *հատուկ անունների հասարակացումը*, օրինակ՝ *Շամպայն* տեղանունից է առաջացել խմիչքի *շամպայն* տեսակը: *Մեկենասը* Հին Հռոմում մեծահարուստ մարդ էր, որ հովանավորում էր արվեստի ու գիտության գործիչներին, ժամանակի ընթացքում այդ անունը ձեռք է բերել «հովանավոր» իմաստը և անցել հասարակ անունների շարքը: Այդպես նաև պատմական նշանավոր անձնավորության անունը կարող է վերածվել հասարակ անվան. *Կեսար* հատուկ անունից առաջացել է *կայսր* հասարակ անունը, *Յեզար* տարբերակից՝ ռուս. язь բառը, *Կարլոս Մեծի* անունից՝ ռուս. король բառը: Գյուտարարի անունը կարող է անցնել իր հայտնագործությանը՝ դառնալով այդ բնագավառի տերմին, ինչպես Կուլոն - *կուլոն*, Հերց - *հերց*, Ամպեր - *ամպեր*, Նյուտոն - *նյուտոն*, Օհմ - *օհմ*, Ռենտգեն - *ռենտգեն*, Մաուզեր - *մաուզեր*, Դիզել - *դիզել*, Կալաշնիկով - *կալաշնիկով* և այլն:

Բառիմաստի ընդլայնման դրսևորում է *ապաստրբայնացումը*. դա աստվածության, բարձրագույն էակների անվանումների հասարակացումն է: Այլ կերպ ասած՝ աստվածություն նշանակող անվանումները ընդլայնում են իրենց գործածության ոլորտը, հատուկ անունից վերածվում հասարակի, այսինքն՝ ապաստրբայնանում են: Պետք է հիշենք, որ բոլոր հատուկ անունները, հասարակ դառնալով, չեն ենթարկվում դեսակրալիզացիայի, քանի որ դրանցից բոլորը չէ, որ ունեն սրբազան նշանակություն: Առհասարակ բառի հատուկից հասարակի անցումը դիտվում է որպես բառիմաստի ընդլայնում: Վերջինիս օրինակ են հանդիսանում աստվածությունների անվանումները, որոնք, կորցնելով իրենց նախնական նշանակությունը, մասամբ վերածվում են ձայնարկության, օրինակ՝ ռուսերենում «боже», «господи», «ради бога», «бог знает (его, что)»: Վերջին օրինակում առկա է էլիպսիսի երևույթը, ինչը բառակապակցության մեջ բառի կրճատումն է՝ *Աստված գիտի (նրան, դա)*:

Ապաստրբայնացման օրինակ են տալիս մի շարք բառեր, որոնք այսպես ասած «խանգարում են» արժեքներին: Այդպես, գերմաներեն *Weib* (կին) բառը նախնական իմաստը չեզոք է եղել, բայց հետո, ձեռք բերելով կոպիտ ու վիրավորական իմաստ («баба»), սկսել է գործածվել միայն բացասական իմաստով, իսկ նախնական (կին) իմաստն անցել է *Frau* գոյականին: Այս

բառի ապաստարանացումը պատճառ է դարձել, որ փոփոխության ենթարկվի Մարիամ Աստվածածինն ուղղված լատինական աղոթքների հին գերմաներեն թարգմանությունը, և *Weib*-ը փոխարինվի *Frau*-ով: Դա հատկապես երևում է հանրահայտ Ave Maria աղոթքում(*unter den Weiben- unter der Frauen*):

Ապաստարանացման պատճառ կարող է դառնալ բառի «մաշվածությունը», ինչը առաջանում է առօրյա խոսքում վերջինիս հաճախակի կիրառության հետևանքով: Օրինակ՝ ռուսերենում «спасибо» (շնորհակալություն) բառը առաջացել է «спаси бог» (Փրկի՛ր, Աստվա՛ծ) կապակցությունից՝ զրկելով նրան սրբազան նշանակությունից: Անգլերենում «good-bye» (ցտեսություն) բառը առաջացել է «God be with you» (Աստված ձեզ հետ) կապակցությունից՝ կրկին ապաստարանացման միջոցով:

Պետք է նկատի ունենալ՝ որքան հաճախ է բառը խոսակցական լեզվում գործածվում, այնքան շուտ է այն կորցնում ստուգաբանական լրիվ իմաստը՝ հեռանալով նախնական նշանակությունից:

Ապաստարանացման են ենթարկվում հիմնականում կրոնական և դիցաբանական ոլորտի անվանումները: Այդպիսի օրինակները բազմազան են. բժշկության բնագավառում քնաբեր և ցավազրկող դեղն անվանել են *Մորփեոսի*՝ երազի և քաղցր քնի աստծո անունով (մորֆին): Իսկ Եթերը, որ, ըստ հունական դիցաբանության, օդի վերին ճաճանչափայլ շերտի Ջևսի նստավայրի անձնավորումն էր, այժմ ունի «ռադիո-հեռուստատեսային հաղորդումների տարածք» իմաստը: *Ջեփյուռը* հունական դիցաբանության մեջ *տաք*, *անձրևաբեր քամու* անձնավորումն էր, այժմ ընկալվում է որպես *մեղմ քամի*, ինչպես նաև տղամարդկանց վերնաշապիկ կարելու համար նախատեսված կտոր: Ապաստարանացման ճանապարհ է անցել նաև *Ատլասը*: Վերջինս համարվում էր տիտան, որը աստվածների դեմ պատերազմին մասնակցելու համար դատապարտվում է տանջանքի՝ ուսերին կրելով երկնակամարը: Հետագայում նրա անունով է կոչվել Ատլանտյան օվկիանոսը, Ատլանտիդա կղզին, ինչպես նաև ճարտարապետության մեջ մարդկային կազմվածքի ձևով այն սյուները, որոնք պահում են ծածկի հեծանները: 1595թ. ֆլամանդացի քարտեզագիր Մերկատորի որդիները տպագրում են հոր աշխատանքը՝ քարտեզների ժողովածուն՝ վրան դիցաբանական Ատլասի պատկերը: Սա էր պատճառը, որ քարտեզների ժողովածուներն ի սկզբանե անվանվեցին *ատլաս*: Հետագայում ոչ միայն աշխարհագրական, այլև կենսաբանական, բուսաբանական, ճարտարապետական, բարբառագիտական և շատ այլ տեսակների *ատլասներ* ստեղծվեցին:

ԲԱՌԻՄԱՍՏԻ ՆԵՂԱՅՈՒՄ - Սա լեզվական այն երևույթն է, երբ ժամանակի ընթացքում բառի նշանակություններն աստիճանաբար դուրս են գալիս, և տվյալ բառը ձեռք է բերում ավելի նեղ իմաստ կամ իմաստներ,

օրինակ՝ *քաջ* բառը գրաբարում նշանակել է 1. լավ, 2. ընտիր, գեղեցիկ, 3. կտրիճ, անվեհեր, համարձակ: Ժամանակակից հայերենում պահպանվել են նրա «կտրիճ, անվեհեր» իմաստները (նախնական «լավ» իմաստը պահպանվել է «քաջ գիտի» և «քաջ տեղյակ է» կապակցություններում): *Տարագ* գրաբարում նշանակել է 1. ձև, կերպ, եղանակ, 2. ճարտար՝ վարպետ հորինվածք՝ բանվածք, 3. պետք, պիտույք: Արդի հայերենում բառի իմաստը մասնավորվել է, և այն նշանակում է «հագուստ»: *Հալ* գրաբարում նշանակել է «ընդհանրապես թռչուն», այժմ նշանակում է միայն ընտանի մի տեսակի թռչուն՝ «հալ»:

Բառիմաստի նեղացումը կարող է հանգեցնել *բառիմաստի մասնագիտացման*, օրինակ՝ *հոլովել* նախապես նշանակել է «թավալվել, թեքվել»։ Ժամանակի ընթացքում այն վերածվել է եզրույթի՝ արտահայտելով «գոյական անունները ձևափոխության ենթարկել» իմաստը: *Հոգնակի* նշանակել է «բազմակի, շատ», այժմ ունի միայն «հոգնակի թիվ» իմաստը: *Բայ* գրաբարում *ասել*, *խոսել* բայի ներկա ժամանակի 3-րդ դեմքն է՝ *ասում է*: Դրանից առաջացել է *բայ* քերականական եզրույթը:

Բառիմաստի նեղացման դրսևորում է իմաստափոխության այն տեսակը, երբ *հասարակ անունները վերածվում են հատուկ անվան*, օրինակ՝ *վանք* «կրոնական միաբանություն, հաստատություն», որից էլ առաջացել է *Վանք* տեղանունը, նմանապես՝ բերդ - *Բերդ*, նորք (նորատունկ այգի) - *Նորք*, աշտարակ - *Աշտարակ*, լիճք (լճեր) - *Լիճք* և այլն: Այս ճանապարհով առաջացել են մի շարք համանուններ, ինչպես՝ նարգիզ - Նարգիզ, գոհար - Գոհար, նունուֆար - Նունուֆար և այլն:

Բառիմաստի նեղացման դրսևորում է *սրբայնացումը* (սակրալիզացիան): Ստուգաբանորեն բառը հանգում է լատիներեն *sacer* «սրբազան, Աստծուն վերաբերող» իմաստներով բառին և իր էությամբ նշանակում է *բարձրարժեք, հարգանքի արժանի*, ինչպես նաև *անեծքի տակ ընկած, որը վախ է առաջացնում*: Սրբայնացման ժամանակ որևէ բառ սովորական իմաստից ձեռք է բերում «սրբազան» նշանակություն. տեղի է ունենում *իմաստի մասնավորեցում*:

Սրբայնացումը կատարվում է տարբեր եղանակներով, այսպես՝

- Երբ արդեն գոյություն ունեցող սովորական բառին տալիս են «սրբազան» նշանակություն, օրինակ՝ *հայր, որդի, հոգի*: Այս դեպքում տեղի է ունենում բառիմաստի նեղացում, այսինքն՝ սկզբնական իմաստը մասնավորվում է նոր՝ «սրբազան» նշանակությամբ: Օրինակ՝ *տեք* բառի բառական իմաստը նեղացել. այսինքն՝ նրա նախնական իմաստը կորել է, և այժմ այն վերաբերում է միայն Աստծուն:

- Երբ նոր բառ են ստեղծում կրոնական նոր հասկացությունն արտահայտելու համար, օրինակ՝ *Աստվածամայր* բառը:

Բառի սրբայնացման թերևս ամենաարմատական հիմունքը *տաբուն* է: Տաբունները հանդիպում են աշխարհի բոլոր լեզուներում, բայց ավելի շատ դրանք տարածված են հնագույն ժողովուրդների մոտ: Իսկ ե՞րբ են մարդիկ օգտագործել տաբուններին «բնութագրող» բառեր.

- Մեծ տարածում ունեն Աստվածների, տիրակալների և այլ սրբազան անձանց անունների արգելքը. սովորական մահկանացուների կողմից սուրբ անունը արտաբերելը համարվում էր սրբապղծություն և ոտնձգություն «աստվածային» իշխանության նկատմամբ: Այդպիսի տաբուի հետևանք է *փարավոն* բառը, որը նշանակել է *մեծ տուն*, *պալատ*, քանի որ արգելված է եղել «Բարձրյալի» անունը տալ, դրա փոխարեն մարդիկ հաճախ գործածել են տեղանունը: Ավանդաբար հրեաները *Աստծո* (*Yahwe*) անվան փոխարեն արտաբերում էին «господь» (տեր), «небо» (երկինք) կամ «Имя» (անուն) բառերը: Այսպես՝ *my God // Goodness*, «*Боже мой*» և «*Աստված իմ*» արտահայտություններում ևս դրսևորվեց սրբայնացման երևույթը:

- Կար նաև մութ ուժերի անվանակոչման արգելք, որի փոխարեն գործածվում էին նկարագրական բառեր՝ ռուսերեն «*дьявол*» (հունարեն՝ *զրպարտող*, *բանսարկու*), «*сатана*» (եբրայերեն՝ *թշնամի*):

- Գոյություն ունեն նաև կենդանիների անվան արգելք. վախենում էին արտաբերել որսի կենդանու անունը, քանի որ այդ դեպքում կենդանին անկանխատեսելիորեն կարող էր հայտնվել, և որսորդները կդառնային վերջինիս զոհը: Այս պատճառով էլ հնդեվրոպական շատ լեզուներում *արջի* նախնական անունը չի պահպանվել. այն փոխարինվել է նկարագրական բառերով, ինչպես ռուսերենում «*медведь*» (*մեղր ուտող*), անգլերենում «*bear*» (*շագանակագույն*), գերմաներենում «*Bär*» (*դարչնագույն*): Այսպիսի եվֆեմիզմ է համարվում նաև ռուսերենում «*змея*» (օձ) բառը, որն առաջացել է «*земля*» (հող) բառից, քանի որ օձը հողից չի կտրվում, լատիներենում օձը «*serpens*»-ն է, որը առաջացել է «*serpo*» (սողալ) բառից:

ԲԱՌԻՄԱՍՏԻ ԱՆՅՈՒՄ ԿԱՄ ՇՐՋՈՒՄ - Սա իմաստափոխության այն դրսևորումն է, երբ առաջանում են բառի նախնական իմաստին հակադիր իմաստներ: Բառի նախնական և նոր իմաստները դիտվում են իմաստային հակադիր բևեռներ, օրինակ՝ *դեղ* նախապես նշանակել է «խոտ, բույս», ապա՝ «բուժական խոտ», նրանից էլ՝ «տարբերակված բուժական նյութ», դրանից էլ բարբառներում և ժողովրդական խոսվածքում առաջացել է «դեղ՝ թույն» իմաստը: *Ահագին* գրաբարում նշանակել է «սարսափազդու, ահարկու», այժմ՝ «մեծ», *պարապել*՝ գրաբարում՝ «անգործ մնալ», այժմ՝ «զբաղվել», *բացասել*՝ գրաբարում՝ «բացահայտ ասել», այժմ՝ «ժխտել», *նահատակ*՝ գրաբարում՝ «հերոս», այժմ՝ «զոհ» և այլն:

ԻՄԱՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱԶՈՐԴՈՒՄ - Սա բառի հին իմաստի կորուստն է և նոր իմաստի ձեռքբերումը. բառի նախկին իմաստի փոխարինումն է նոր՝ ուղղակի իմաստով, օրինակ՝ *սեղան* բառի «գոհարան, բազին» նախնական նշանակությունն անհետացել է, այժմ նրա ուղղակի իմաստն է «կահույքի մի տեսակ», «երկրաչափական մարմին»: *Ծախել* բառն «սպառել, ոչնչացնել» նախնական իմաստից անցել է «վաճառել» իմաստին: *Խաղալ-ը* «շարժվել, ընթանալ» նախնական իմաստից անցել է «խաղ անել» իմաստի: *Խնդրել-ը* «որոնել, փնտրել» նախնական իմաստից անցել է «ուզել, հայցել» իմաստի (նախնական իմաստը պահպանվել է *արկածախնդիր, շահախնդիր, մանրախնդիր, քինախնդիր, բծախնդիր* և այլ բառերում):

Բառիմաստի փոփոխությունների այս տեսակները միմյանցից մեկուսացած չեն, շատ հաճախ միևնույն բառի իմաստային կառուցվածքում դրանք զուգորդում են միմյանց, հանդես են գալիս միասնաբար՝ իբրև մեկ ընդհանուր իմաստափոխական գործընթացի դրսևորումներ:

ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄ - Յուրաքանչյուր լեզվի բառային կազմն ընդգրկում է տվյալ լեզվի մեջ գոյություն ունեցող բոլոր բառերը. սակայն այդ բոլոր բառերը նույն դերն ու նշանակությունը չունեն լեզվի համար: Կան բառեր, որոնք կենսականորեն անհրաժեշտ են տվյալ լեզվով խոսող հանրության բոլոր անդամների ամենօրյա հաղորդակցման համար, կան բառեր էլ, որոնք հասարակության ամենօրյա հաղորդակցության համար այդ կարգի անհրաժեշտություն չեն ներկայացնում:

Կենսական անհրաժեշտություն ունեն՝ *հաց, ջուր, ուտել, խմել, գնալ, գալ, քնել, տեսնել, սիրել, աշխատել, ապրել, հայր, մայր, տղա, աղջիկ, մեծ, փոքր, երկար, տուն, ընտանիք, քաղաք, երկիր, հող, դպրոց, ուսուցիչ* և այլն:

Կենսական անհրաժեշտություն չունեն՝ *վոլտ, ամպեր, ռենտգեն, էներգիա, եռանկյունի, ուղղանկյուն, մագնիսականություն, ստուգաբանություն, հոլովում, ածանց, արմատ, խոնարհում, բանաձև, ձուլածո, վսեմափայլ, պերճաշուք, հեղաձկուն, քնքշաշրշյուն, հոգեպարար, գերազնիվ, սիզաճեմ* և այլն:

Վերջիններս թեև մեծ կարևորություն ունեն գիտության, տեխնիկայի, գեղարվեստական գրականության համար, բայց դրանց չիմացությունը չի հանգեցնի հաղորդակցման խաթարմանը: Մինչդեռ առաջին շարքի բառերը խիստ անհրաժեշտ են հասարակության անդամների կենսագործունեությունն ապահովելու համար:

Փաստորեն լեզվի բառային կազմում գոյություն ունեն զգալի թվով բառեր, որոնք անհրաժեշտ են հասարակական հաղորդակցում իրականացնելու համար. դրանք ընդհանուր են տվյալ լեզվով խոսող հանրության բոլոր անդամների համար՝ անկախ նրանց սոցիալական պատկանելությունից, մասնագիտությունից, զբաղմունքից ու կրթությունից: Բառային կազմի այդ

հիմնական, կենսականորեն անհրաժեշտ պաշարը կոչվում է *հիմնական բառաֆոնդ*:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՖՈՆԴ - Լեզվի *հիմնական բառաֆոնդը* կայուն է, այն փոփոխությունների է ենթարկվում շատ ավելի դանդաղ, քան բառային կազմը:

Լեզվի հիմնական բառաֆոնդը բնութագրվում է հետևյալ գծերով.

1. Հիմնական բառաֆոնդը շատ ավելի փոքր քանակով բառեր է ընդգրկում, քան բառային կազմը. վերջինս լեզվի բոլոր բառերի ամբողջությունն է:

2. Հիմնական բառաֆոնդի մեջ մտնում են կենսականորեն անհրաժեշտ և ընդհանուր գործածություն ունեցող բառերը:

3. Հիմնական բառաֆոնդը փոխվում է դանդաղորեն, նրան հատուկ է դիմացկունությունը, քան բառակազմին ընդհանրապես:

4. Իր կենսունակությամբ և ընդհանրությամբ հիմնական բառաֆոնդը բառային կազմի հիմքն է: Հիմնական բառաֆոնդի մեջ մտնող բառերը շատ ավելի կենսունակ են և արտադրողական՝ նորանոր բառեր կազմելու տեսակետից:

ԻՄԱՍՏԱՅԻՆ-ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲԵՐ - Հիմնական բառաֆոնդի բառերը դասդասվում են ըստ իմաստային (թեմատիկ) մերձավորության, որոնցում ընդգրկված բառերը հիմնականում գործածական են եղել նաև լեզվի նախորդ գոյավիճակներում: Դրանք են՝

1. Ֆիզիկական աշխարհ. երկիր, գետին, լեռ, ջուր, անտառ, օդ, ամպ-րոպ, անձրև, սառն և այլն:

2. Մարդկություն. սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն. մարդ, այր, կին, ուսուր, դուստր, որդի, տղա, աղջիկ, սկեսրայր, սկեսուր, հարս, տալ, քենի և այլն:

3. Կենդանիներ և թռչուններ. կով, հորթ, երինջ, ձի, հավ, աքաղաղ, ձագ, շուն, գայլ, թիթեռ, արծիվ, անգղ, օձ, ոզնի և այլն:

4. Մարմնի մասեր. մարմին, գլուխ, ուս, քիթ, բերան, ձեռք, ոտք, մատ, ականջ, աչք, երես, սիրտ, ատամ և այլն:

5. Մարդուն բնորոշ ֆիզիկական գործողություններ. պառկել, քնել, գնալ, քայլել, ապրել, տեսնել, երգել, աշխատել, կառուցել, քանդել, նստել, բերել, տանել և այլն:

6. Ուտելիք, ըմպելիք. դրանց հետ կապված հասկացություններ. ուտել, խմել, եփել, հաց, միս, գինի, ցորեն, գարի, բրինձ և այլն:

7. Երկրագործություն, որսորդություն, ձկնորսություն. արոր, վարել, ցանել, հող, նետ, նիզակ, եղջերու, աղվես, արջ, ձուկ և այլն:

8. Հագուստ, զարդարանք. հագնել, զգեստ, վերարկու, գլխարկ, կոշիկ, գուլպա, ձեռնոց և այլն:

9. Քանակ, թիվ. ամբողջ, շատ, մեկից մինչև հարյուրը, առանձնապես մեկից մինչև տասը:

10. Ժամանակ. հին, ծեր, այժմ, միշտ, հաճախ, ստեպ, օր, գիշեր, ցերեկ, ամառ, աշուն, ձմեռ, գարուն և այլն:

11. Ռազմական գործ. մարտ, մարտնչել, մարտիկ, զենք, զինվել, պատերազմ, վահան, հարձակվել, նահանջել, ճակատամարտ և այլն:

12. Օրենք. իրավունք, իշխանություն. բողոք, մեղավոր, հանցանք, հանցավոր, արդար, դատարան, դատավոր, բանտ, բանտարկել, կալանք, թագավոր, թագուհի, պալատ, նախարար, մարզպետ և այլն:

13. Կրոն և հավատալիքներ. աստված, կրոն, հավատ, աղանդ, քրիստոնյա, հեթանոս, մահմեդական, մատուռ, եկեղեցի, զոհ, կտակարան, ավետարան, պատվիրան, կաթողիկոս, եպիսկոպոս և այլն:

14. Անձնական և ցուցական դերանուններ. ես, դու, նա, մենք, դուք, նրանք և այլն:

Բառային հիմնական ֆոնդի այս բառերը, որոնք մտնում են այս կամ այն իմաստային-թեմատիկ խմբի մեջ, հիմնականում հնագույն բառամթերքի միավորներ են, որ գործածվում են նաև նոր ժամանակաշրջանում:

ԲԱՌԱՅՅՆ ԿԱԶՄԻ ՇԵՐՏԵՐ - Լեզվի բառային կազմը բնութագրվում է ոչ միայն նրա մեջ մտնող բառերի քանակով, այլև որակով, նրա բառախմբերի տարատեսակությամբ, բառաշարքերով կամ բառաշերտերով: Բառագիտությունը՝ որպես լեզվի բառային կազմի և նրա զարգացման մասին գիտություն, զբաղվում է նաև այդ խմբերի, շարքերի կամ շերտերի ուսումնասիրությամբ, որոնցից պատմականորեն ձևավորվել է տվյալ լեզվի բառային կազմը: Հետևաբար բառագիտությունը բառային կազմի դասակարգումը կարող է կատարել պատմական և համաժամանակյա հայեցակետերով:

Պատմական մոտեցմամբ կատարվում է բառային կազմի ծագմանաբանական դասակարգում, քանի որ բառերի բոլոր խմբերը (շարքերը, շերտերը), որոնք հայտնի են լեզվաբանությանը, լեզվի մեջ հայտնվել են նրա զարգացման հետևանքով:

Բառաշերտը բառային կազմի այն մասն է, որը որոշակի հատկանիշով (բառամթերքով ու գործառությամբ) առանձնանում և ինքնուրույն խումբ է կազմում: Օրինակ, ընդհանուր հայերենի բառապաշարը դասդասվում է տարբեր շերտերի, ինչպես՝ հնդեվրոպական, գրաբարյան, միջինհայերենյան, արևմտահայերենյան, արևելահայերենյան, բարբառային, փոխառյալ և այլն: Ընդ որում՝ այդ բառաշերտերից յուրաքանչյուրը համապատասխան լեզվավիճակի համար համաժամանակյա կտրվածքով դիտվում է իբրև ընդհանուր բառապաշարի բաղադրիչ:

Լեզուների բառապաշարը պատմականորեն ձևավորվում է տարբեր ակունքներից. ըստ այդ մոտեցման՝ ժամանակակից արևելահայ գրական լեզվի մեջ զանազանում են վերը նշված բառաշերտերը:

Համահայերենյան բառաշերտի մեջ մտնում են այն բառերը, որոնք առկա են հայերենի բոլոր գոյավիճակներում, ինչպես՝ մարդ, հայր, մայր, քույր, եղբայր, հաց, ջուր, քար, փայտ, ծառ, գլուխ, աչք, տուն, օդ, ուտել, գալ, տանել, բերել, ես, դու, մեկ, երկու, աստղ, լուսին, մեծ, փոքր, լայն, կարճ, շուտ, արագ և այլն:

Գրաբարյան բառաշերտի մեջ մտնող բառերը տարբերակվում են՝ ա) գրաբարից եկող ընդհանուր գրական բառեր (ժառանգաբար անցած), ինչպես՝ ծաղկավառ, արյունարբու, շաղակրատել, վարդապետ, գեղմ, բազում, գույժ, էակ, քերական, փիլիսոփա, ամբիոն, ճաճանչ, եթեր, հոետոր, տենչ, մոլեգին, մրցանակ և այլն, բ) գրաբարից փոխառյալ բառաշերտ (ոչ ժառանգաբար, այլ գրողների կամ մտավորականների կողմից վերցվել են ուղղակի գրաբարից և գործածվել տարբեր հաճախականությամբ), ինչպես՝ կորուսիչ, հոգնաբեղուն, ծիծաղախիտ, քաղաքամայր, կորովամիտ, կույրզկուրայն, դաշխուրան, խոտաճարակ, գազանատեսակ և այլն, գ) գրաբարաբանություններ (ոչ միայն բառեր, այլև կապակցություններ, դարձվածքներ, քերականական ձևեր, ոճական արտահայտություններ և այլն), ինչպես՝ ի խորոց սրտի, ի միջի այլոց, ըստ այդմ, ընդ որում, համենայն դեպս, ի փառս, ի սրտե, երիցս նգովյալ, խնդրո առարկա, հականե-հանվանե, ակն ընդ ական՝ ատամն ընդ ատաման, ձայն բարբառո հանապատի, բերան ճշմարտության, չարության սերմ և այլն:

Միջինհայերենյան բառաշերտի մեջ մտնում են այն բառերը, որոնք փոխանցվել են լեզվի զարգացման միջինհայերենյան շրջանից: Դրանցից են՝ աղվեսագիրք, դատաստանագիրք, պարոն, մարաջախտ, կտրիճ, կանթ, կոթ, հենց, ճորտ, մասուր, մշուշ, պարոն, աղ ու հաց, ցույց տալ, անուն հանել, ահ ու դող, աջ ու ձախ, դեղ ու ճար, կերուխում, ուժ առնել, արաղ, դահեկան, չինար և այլն:

Բարբառային բառաշերտի մեջ մտնում են այն բառերը, որոնք արևելահայ գրական լեզու են թափանցել հայերենի տարբեր բարբառներից: Դրանցից են՝ չմուշկ, դահուկ, ելակ, տերություն, ջան, մարալ, մայթ, յոլա գնալ, քեֆ, դարդ անել, ալարել, աղցան, անկշտում, աչքածակ, ասուլիս, աքլոր, բարևագիր, գունդուկծիկ, դարուփոս, զարզանդ, թթվաշ, իրիկուն, իծաշարուկ, լեղաճաք, ծնկաչոք, հերթ, ճաքել, շորոր, ուսաշոր, չքվել, պոռնկ, սրտաբաց, տկլոր և այլն:

Արևմտահայերեն բառաշերտի մեջ մտնում են արևմտահայ գրական լեզվից արևելահայերենին անցածները, ինչպես՝ քով, լրագրող, զբոսաշրջիկ, լուլիկ, փառատոն, դափնեկիր, տնօրեն, հարկավ, ազատական, աղջնակ, գո-

ցել, դեղատուն, դարմանատուն, ետքը, երթալ, էրիկ, էրիկմարդ, համայնավար, համույթ, հոս, հոդ, հոն, մեծդի, քով և այլն:

Ժողովրդախոսակցական բառաշերտի մեջ մտնում են այն բառերն ու արտահայտությունները, որոնք բնորոշ են հիմնականում խոսակցական տարբերակին. դրանք մերժելի չեն գրական լեզվով խոսողների համար: Դրանցից են՝ հանաք, սևացնել, աչքածակ, գոռով, իրասածի, ման գալ, գլխի ընկնել, սուս անել, սիրտ տալ, փուլ գալ, ահ տալ, միտք անել, շուռ գալ, զրույց անել, մարդու տալ, մտահան անել, կրակի գին, մեկի հետ աղ ու հաց ուտել, բաց աչքով լուսացնել և այլն:

Փոխառյալ բառաշերտի մեջ մտնում են այն բառերը, որոնք փոխառված են այլ լեզուներից: Փոխառյալ բառերը հայերենում զգալի տոկոս են կազմում. հայերենը համեմատաբար հարուստ է իրանական, արաբական և հունական փոխառություններով: Հմտ. *իրանական*՝ հրեշտակ, հրաման, հրապարակ, հրաժեշտ, պատասխան, պատնեշ, պատկեր, պարտեզ, պարս, պարզ, պարսիկ, բանակ, իշխան և այլն, *ասորական*՝ աբեղա, ծով, սատանա, քահանա, քարոզ, քուրմ, խանութ, մանանա և այլն, *հունական*՝ ադամանդ, ամբիոն, ափսե, բաղնիք, բեմ, բյուրեղ, դափնի, հոետոր, մեղեդի, նեկտար, սաղմոս, հերետիկոս, մարտիրոս, եկեղեցի, մյուռոն, եպիսկոպոս, կաթողիկոս, մաթեմատիկոս և այլն, *արաբական*՝ ատլաս, բալասան, թաս, խումար, խսիր, կավատ, կողպել, հաշիշ, սնդուկ, նուպա, գազար, քիմիա և այլն, *վրացական*՝ թոկ, խագ, խիզան, ծես, ծիտ, ճաղ, մաշիկ և այլն, *ռուսական* (նաև ռուսերենի միջոցով այլ լեզուներից անցած)՝ ագրեսոր, ալբոմ, բազիս, բալոն, բանկ, բենզին, գրանիտ, դեկան, դիպլոմ, դիրեկտոր, դոցենտ, էսքիզ, էսսե, մետր, միլիոն, սցենար, սուբյեկտ, տուֆ, ֆուտբոլ և այլն:

Փոխառությունները լինում են *անմիջական և միջնորդավորված*:

Անմիջական փոխառություն են դիտվում այն բառերը, որոնք լեզուն վերցնում է մի այլ լեզվից անմիջականորեն: Այսպես՝ անմիջական փոխառություն են իրանական լեզուներից հայերենին անցած բազմաթիվ բառեր (դժոխք, բանակ, պարկեշտ, պատգամ, աշխարհ, մարզ, հրավեր, պարս, պարսիկ, բժիշկ, կոշկակար, ժամանակ և այլն), ինչպես նաև լատինական ամսանունները (հունվար, փետրվար, մարտ ... դեկտեմբեր) և այլն:

Միջնորդավորված փոխառությունները լեզվին անցնում են մեկ այլ լեզվի միջանկյալ օղակով: Այդ կարգի բառերը հայերենին անցել են հիմնականում ռուսերենի միջոցով. դրանք նոր և նորագույն փոխառություններն են, որոնք կազմում են բառապաշարի *միջազգային շերտը*:

Այդ բառերը սերում են տարբեր լեզուներից, ինչպես՝ *ատեստատ, ակվարիում, արհտուրիենտ, ասիստենտ, դոցենտ, գեներալիսսիմուս, գենե-րալ, ինֆարկտ, մայոր, մաքսիմում, մինիմում, լաբորանտ, կոլտուրա, հոնո-րար, քվորում, վիրուս, ռեքվիեմ, էքստենոն, կոռուպցիա, մագիստրոս* և այլն (լատիներեն), *աթեիստ, ատոմ, դրամա, լիրիկա, դիպլոմ, եպիսկոպոս, միկ-*

րոսկոպ, մակրոսկոպ, դիագնոզ, դիագնոստիկա, հորիզոն, քառու, ություն և այլն (հունարեն), *ավանգարդ, բյուրո, բալետ, տաքսի, պարտիզան, վերնիսաժ, էտյուդ, ժեստ, կասկադ, ավանտյուրա, շովինիստ, վամպիր, էրմիտաժ, գիլիոտին, զենիթ, ռենեսանս* և այլն (ֆրանսերեն), *դերբի, բասկետբոլ, բոյկոտ, թենիս, հումոր, միտինգ, ռեկորդ, տրամվայ, մետրո, ֆուտբոլ, սպորտ, բիզնես, կարդինալ, ջենտլմեն, փիար, լազեր, կոմպյուտեր* և այլն (անգլերեն), *այսբերգ, բունկեր, գրոսմայստեր, վագոն, ցայտնոտ, ցինկ, վանդալ, կանցլեր, վունդերքինդ, տուրնիր, բիֆշտեքս, համբուրգեր* և այլն (գերմաներեն), *պապարացի, բարոկկո, կատակոմբա, կոնսերվատորիա, կոնտոլ (գոնդոլ)* (իտալերեն) և այլն:

Փոխառությունները ժամանակի ընթացքում սերտաճում են փոխառու լեզվի բառային կազմին և ձեռք են բերում գործածական մեծ հաճախականություն:

Համաժամանակյա մոտեցումով առանձնացնում են լեզվի զարգացման տվյալ փուլում բառերի ունեցած այս կամ այն հատկանիշը և ըստ այդմ կատարում դասակարգումներ: Ըստ այդ չափանիշների՝ արդի գրական լեզվի բառապաշարը դասակարգվում է ըստ գործածականության, ըստ գործառության ոլորտների, ըստ լեզվառձական տարբերացումների և այլն (Տե՛ս **Լեզվական ոճեր** բառահոդվածը):

ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Առօրյա գործածությունից դուրս եկած, հնացած այն բառերն ու արտահայտությունները, որոնք լեզվում գործածվում են անհրաժեշտության դեպքում, ինչպես՝ *այրուձի* (հեծելագոր), *հանգույն* (նման), *մոգ* (քուրմ), *սեպուհ* (իշխան), *վաղվաղակի* (շուտով), *փաղանգ* (գորագունդ, ջոկատ) և այլն:

Հնաբանությունները բաժանվում են երկու խմբի՝ հնաբառեր և պատմաբառեր:

ՀՆԱԲԱՆ - Սրանք նշանակում են այնպիսի առարկաներ ու հասկացություններ, որոնք չեն հնացել, բայց որոնց արտահայտման համար ներկայումս գործածվում են այլ բառեր, ինչպես՝ *անսալ* - լսել, *գուր* - փոս, *փողոտել* - մորթոտել (կոկորդը կտրել), *վասն* - համար, մասին և այլն: Հնաբառերն ունեն տարբեր կարգի արտահայտություններ՝ *բառային-բառութային*. *Այրուձի* - հեծելագոր, *բառա-հնչյունային*. *արտոսր* - արտասուք, *երդումն* - երդում, *քերականական*. *Ծածկվեցավ* - ծածկվեց, *հրապարակավ* - հրապարակով, *ձեռամբ* - ձեռքով և այլն:

ՊԱՏՄԱԲԱՆ - Այն բառերն ու ձևերն են, որոնք իրենց նշանակված առարկաների, երևույթների, հասկացությունների հետ դուրս են եկել գործածությունից, ինչպես՝ *աշտե, վաղր, սակր* (զենքի տեսակներ), *բաբան, ժան-*

վար (գահավորակ ունեցող ձի՝ փիղ), *մոզպետ*, *սեպուհ*, *ճորտ*, *նրան* (դաշույն), *կոռ* (հարկի տեսակ), *լիկկայան* և այլն:

Հնաբանությունները խոսքում գործածվում են ոճավորման նկատառումներով, խոսքին վսեմություն, ճոխություն հաղորդելու, անցյալ դարաշրջանների կոլորիտ ստեղծելու, կերպարի անհատականացման և այլ նպատակներով: Հնաբանություններից մեծապես օգտվում են պատմավիպասանները, պատմական բնույթի դրամաներ, ողբերգություններ և պոեմներ գրողները:

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Լեզվի բառային կազմը սերտ կապի մեջ է գտնվում ինչպես հասարակական կյանքի տարբեր բնագավառների, այնպես էլ մարդկային գիտակցության տարբեր կողմերի հետ: Դրա հետևանքով էլ լեզվի բառային կազմն անընդհատ նորացվում է, համալրվում՝ բավարարելով կյանքի առաջադրած նորանոր պահանջները: Նորաբանություններն ստեղծվում, առաջ են գալիս լեզվի շարունակական զարգացման ընթացքում՝ անվանելով նոր առարկաներ ու հասկացություններ: Նորաբանություններն այնպիսի լեզվական միավորներ են, որոնք արտացոլում են թե՛ ժողովրդի հասարակական-տնտեսական, հոգևոր-մշակութային և թե՛ լեզվի կյանքում կատարվող զանազան փոփոխությունները, ինչպես՝ *ինքնաթիռ*, *սուզանավ*, *տիեզերագնաց*, *լուսնագնաց*, *աստղաթիռ*, *աստղանավորդ*, *լուսնեչք*, *ջրեչք* (որպես նոր հասկացությունների, առարկաների անվանումներ), *մրցույթ*, *տպաքանակ*, *ավտոտնակ*, *նախարար*, *տնօրեն*, *մեկնարկ* (մերժված, կիրառությունից դուրս եկած օտար բառերի փոխարեն): Տարբերակում են՝

- **Բառային նորաբանություն** - Սրանք անվանում են նոր առարկաներ, երևույթներ, հասկացություններ կամ հանդես են գալիս իբրև հին անվանումների փոխարինողներ, ինչպես՝ *ուղեծիր*, *գեղասահք*, *դիմորդ*, *նստացույց*, *ավտոշարայուն*, *տաքսի*, *մաֆիա*, *ռեզիոն* և այլն:

- **Բնաստային նորաբանություն** - Սրանք այն բառերն են, որոնք գործածվում են նոր, անցյալում չունեցած իմաստով կամ իմաստներով, ինչպես՝ *շրջան* (վարչատարածքային միավոր), *օղակ* (կազմակերպության փոքր միավոր), *արբանյակ* (դեպի տիեզերք ուղարկված սարք), *օդաչու* (օդանավ վարող անձ) և այլն:

- **Ընդհանրացող նորաբանություն** - Այն նոր բառերն են, որոնք խոսքում գործառական մեծ հաճախականություն ունեն և այդ պատճառով էլ անցնում են բառապաշարի գործուն շերտին՝ դադարելով (բառային և իմաստային) նորաբանություն լինելուց, ինչպես՝ *խաչմերուկ*, *հատույթ*, *շարժասանդուղք*, *վերելակ*, *շրջաբերական*, *երևակում*, *աստղագնաց*, *երեսապատել*, *ձայնադարան*, *տեսագրել*, *հեռուստալսարան*, *հեռուստակամուրջ*, *փայլաթիթեղ*, *դիպուկահար*, *տիեզերակայան* և այլն:

- **Անհատական նորաբանություն** - Սրանք կազմվել են առանձին հեղինակների կողմից և գործածվում են հատկապես գեղարվեստական խոսքում: Դրանցից են՝ *ամենագգաստ, անմահարձան, ծիծաղախիտ* (Գր.Նարեկացի), *սիրագուրկ, սիրառատ, վշտաձայն* (Հ.Թումանյան), *լուսակարկաչ, զվարթակարկաչ* (Վ.Տերյան), *հեզաճկուն, արնավառ* (Ե.Չարենց) և այլն:

Նորաբանությունները մեծ մասամբ գործածվում են գեղարվեստական և գիտական ոճերում: Գեղարվեստական ոճում դրանք կատարում են խոսքի ոճավորման և պատկերավորման միջոցի դեր, իսկ գիտական ոճում հանդես են գալիս իբրև գիտական նոր հասկացությունների արտահայտիչներ:

ՏԵՐՄԻՆ - Բառ է կամ բառակապակցություն, որն արտահայտում է տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային կյանքին, տեխնիկային և այլ բնագավառների բնորոշ հասկացություններ:

Բառապաշարում տերմինն առանձնանում է հետևյալ բնութագրական գծերով.

ա) այն հասկացության անուն է, բ) նրա իմաստը գիտականորեն սահմանելի է, գ) բովանդակային պլանը միշտ ձգտում է մենիմաստության (տերմինների մեծ մասը մենիմաստ է), դ) հիմնականում գոյականական արտահայտություն ունի, զ) զերծ է հուզական երանգավորումից:

Տերմիններն ամբողջանում են տերմինահամակարգերում: Տերմինների համակարգումը կատարվում է ըստ որոշակի բնագավառների, գիտակարգերի, մասնագիտությունների, գիտաճյուղերի, ինչպես նաև՝ դրանց ներսում:

Ըստ այդմ էլ զանազանում են տարբեր բնագավառների տերմիններ՝ *քաղաքական* (ընդդիմություն, քվե, կուսակցություն, քաղաքական դաշտ...), *տեխնիկական* (համակարգիչ, ալգորիթմ, բարձր տեխնոլոգիաներ, մեքենական թարգմանություն...), *մարզական* (պտտաձող, ծանրաձող, եռացատկ, մարաթոնյան վազք, գնդի հրում...), *հրապարակախոսական* (ազատություն, անկախություն, ազատ կամքի դրսևորում...), *մաթեմատիկական* (ինտեգրալ, ածանցյալ, քառակուսի արմատ, քառակուսի հավասարում...), *ֆիզիկայի* (ուժ, ամպեր, հերց, ազատ անկում, լույսի արագություն), *բժշկական* (բջիջ, հյուսվածք, վիրահատություն, նյարդաբորբ, կույր աղի...), *քիմիական* (ջրածին, ծծմբական թթու, վալենտականություն, քիմիական ռեակցիա...), *փիլիսոփայական* (մատերիալիզմ, իդեալիզմ, վերնաշենք, բազիս, բացասման բացասում, անհրաժեշտություն և պատահականություն, հեղափոխություն...), *պատմագիտական* (դասակարգ, հեղափոխություն, պրոլետարիատ, տնտեսական կացութաձև), *աշխարհագրական* (գուգահեռական, միջօրեական, հասարակած, հյուսիսային բևեռ, ժամային գոտի...), *գրականագիտական* (սյուժե, ֆաբուլա, էսսե, վեպ, տաղաչափություն, դրական հերոս...), *ոճագիտական* (նվագաբերություն, չափազանցություն, առձայնույթ, բաղաձայ-

նույթ...), *լեզվաբանական* (լեզվաբնականիք, գրաբանություն, մայր լեզու, պատմահամեմատական մեթոդ, հնչյունաբանություն, հնչյուն, վանկ, շնչեղ խուլ, բառագիտություն, ձևույթ, արմատ, ածանց, քերականություն, ձևաբանություն, գոյական, հոլովում, խոնարհում, դեմք, թիվ, խոսքի մաս, շարահյուսություն, ենթակա, ստորոգյալ, համաձայնություն, համադասություն, ստորադասություն, բարդ նախադասություն...) և այլն:

Տերմինաբանական այս համակարգերի միջև խիստ անջրպետ չկա. կան բազմաթիվ տերմիններ, որոնք գործածվում են մի քանի բնագավառներում: Օրինակ, *արմատ* տերմինը հանդես է գալիս տարբեր գիտություններում, ինչպես՝ լեզվաբանություն, բուսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիոլոգիա, բժշկություն): Ժամանակակից տերմինները քանակային գերակշռություն ունեն բառապաշարի չեզոք շերտի նկատմամբ: Տերմինների մի մասը սովորական բառային գործածություն ունի, ինչպես՝ *սիրտ, գլուխ, թև, ծառ, վարդ, ծաղիկ* և այլն, կան նաև այնպիսիները, որոնք հանդես են գալիս միայն տերմինային արժեքով, ինչպես՝ *հնչույթ, շարույթ, ձևույթ, ածանց, գոյական, ածական, ուղղական հոլով* և այլն:

Տերմինների համակարգայնացումը կատարվում է նաև *աստիճանակարգությամբ*: Օրինակ, լեզվաբանական տերմիններն իրենց տերմինահամակարգերում ներկայանում են մակրո- և միկրոհամակարգերով (մանրահամակարգերով)՝ վերից վար և վարից վեր: Հմտ. մարդկային լեզու – նոստրատիկ լեզուներ – հնդեվրոպական լեզվաբնականիք – առանձին լեզու – բարբառախումբ – բարբառ – ենթաբարբառ – խոսվածք (վայրընթաց ստորակարգություն) և ուղղական հոլով – հոլովում – գոյական – ձևաբանական տերմին – քերականական տերմին – լեզվաբանական տերմին (վերընթաց ստորակարգություն) և այլն:

ՊԱՏՃԵՆՈՒՄ - Այն բառերն են (կայուն բառակապակցությունը կամ դարձվածային միավորը), որոնք մի լեզվում կազմվում են այլ լեզվի համապատասխան լեզվական միավորի կադապարով: Առանձնացնում են պատճենումների հետևյալ տեսակները:

- **Բառակազմական (կառուցվածքային)** - Այս կարգի պատճենումները սովորաբար բարդություններ կամ ածանցավոր բառեր են, որոնց բաղադրիչները (ձևույթները) թարգմանվում են՝ հաշվի առնելով նրանց իմաստները: Այս ճանապարհով հայերենում առաջացել են բազմաթիվ բառեր, ինչպես՝ լատ. submarine - *ընդծովյա*, ռուս. самолёт - *ինքնաթիռ*, самосвал – ինքնաթափ, лыход- *լուսնագնաց* և այլն:

Զգալիորեն շատ են հունալատինական բառակազմական պատճենումները, որոնցով համալրվել են լեզվաբանական տերմինները, ինչպես՝ *lexema* - բառույթ, *morfema* - ձևույթ, *nominativus* - ուղղական, *genetivus* – սեռական, *dativus* - տրական, *pronomén* -դերանուն, *epirema* - մակրայ, *imperativ* – հրա-

մայական (եղանակ), *morphologya* - ձևաբանություն, *syntaxis* - շարահյուսություն և այլն:

Որոշ դեպքերում կարող են երկու տարբերակներն էլ գոյատևել, ինչպես՝ *polyglot*- բազմալեզու, *metonimia* - փոխանունություն, *metaphora* - փոխաբերություն, калька - պատճենում և այլն:

Կարող է տեղի ունենալ մասնակի պատճենում կամ կիսապատճենում:

Կիսապատճենում - Այդ դեպքում թարգմանվում է բաղադրիչներից մեկը, հմմտ. *biochimia* - բիոքիմիա - կենսաքիմիա, *hypertext*- տեքստ - գերտեքստ, кинозвезда - կինոաստղ, автостоянка - ավտոկանգարան և այլն:

Կիսապատճենում պետք է դիտել նաև որոշ ածանցավոր կազմությունների առաջացումը, երբ բառի կառուցվածքում միայն ածանցն է սեփական, իսկ բառի սերող հիմքը փոխառյալ է. այս դեպքում բառն ստեղծվում է բառակազմական մասնակի (ածանցների) փոխակերպմամբ, ինչպես՝ олимпийский - օլիմպիական, активизация - ակտիվացում, азотный - ազոտային, эвакуация - էվակուացում և այլն:

- **Իմաստային պատճենում** - Պատճենման այս տեսակը հենվում է օտար բառի իմաստային համապատասխանության սկզբունքի վրա, երբ որևէ լեզվի բառ փոխ է առնում օտարազգի բառի միայն իմաստը: Այս դեպքում բառն իր հնչյունական կազմով, բառաքերականական կառուցվածքով բնիկ լեզվական միավոր է, իսկ նրա մեկ կամ մեկից ավելի իմաստները «փոխառություն» են որևէ օտար լեզվից: Այսպես, հայերեն *խցանում* բառը պատճենել է ռուսերեն пробка բառի փոխաբերական իմաստը՝ նշանակելով «տրանսպորտային միջոցների կուտակում փողոցի բանուկ մասում»: Ռազմական ոլորտի լեզվում ռուսերեն волею բառի իմաստային պատճենմամբ ազատ բառն ստացել է նոր իմաստավորում՝ «թողնել», կամ դարձյալ ռուսերեն есть բառի իմաստային պատճենմամբ զինվորականների լեզվում գործածվում է *կա* բառը «լսում եմ» նոր իմաստով: Մեխ բառը ռուս. гвоздь բառի իմաստային պատճենմամբ ձեռք է բերել «հիմնական, էական» նշանակություն, մեխին խփել կապակցությունը՝ «բուն նյութը՝ ցավոտ խնդիրը շոշափել» նոր իմաստավորում և այլն:

ԴԱՐՉՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Բառի էական հատկանիշներից մեկը նրա կապակցելիությունն է, երբ նա քերականական այս կամ այն իմաստն արտահայտելու համար կապակցություն է կազմում այլ բառերի հետ: Այդպես երկու և ավելի լիիմաստ բառեր լեզվում կազմում են կապակցություններ, որոնք լինում են երկու կարգի՝ ազատ և կայուն:

- **Ազատ կապակցություն** - Սրանք ստեղծվում են խոսքի շղթայում՝ բառերի զանազան քերականական հարաբերություններն արտահայտելու նպատակով. դրանք լրացում-լրացյալի հարաբերությամբ կապված ստորադասական կառույցներ են: Օրինակ, ինչպիսի՝ կապակցություններ կարող է

կազմել *աչք* բառը: Ազատ կապակցություններում այն կարող է լինել թե՛ գերադաս, թե՛ ստորադաս անդամ, հմմտ. *կապույտ՝ սև՝ մեծ խոշոր՝ գեղեցիկ աչքեր* (գերադաս անդամ), մյուս կողմից՝ *աչքի բիր՝ բոլորակ՝ հատակ, աչքերից արցունք հոսել* (ստորադաս անդամ) և այլն: Այս բոլոր կապակցություններում *աչք* բառը հանդես է եկել ուղիղ իմաստով՝ կազմելով ազատ կապակցություններ:

- **Կայուն կապակցություն** - Բառերը փոխաբերական իմաստներով հանդես են գալիս նաև այնպիսի կապակցություններում, որոնք դիտվում են պատրաստի կառույցներ: Հմմտ. *(մեկի) աչքի լույսը լինել, (մեկի) աչքի փուշը լինել, (մեկի) վրա աչք ունենալ, (մեկի հանդեպ) աչքով աչք չունենալ, աչքի ընկնել, (մեկի) աչքից ընկնել, աչքով-ունքով հասկացնել, աչքը վրան պահել, աչքդ թեքեցիր՝ բանիդ տերը չես, աչքը ջուր դարձավ, աչքդ հանել եմ // հանել է, աչքերին սև ջուր իջնել, աչքին թոզ փչել, աչքերին փառ իջնել, (մեկի) աչքի մազը տեսնել* և այլն, և այլն: Այս կարգի կապակցությունները դարձվածքներ են:

ԴԱՐՉՎԱԾՔ - Սրանք կայուն կապակցություններ են, պատրաստի, վերարտադրելի կառույցներ՝ բաղադրիչ բառերի փոխաբերական իմաստներով, որոնց բաղադրիչների շարահյուսական կապերի բնույթը հաճախ մթազնաձև է լինում:

Դարձվածքները բառային միավորներ են, վերաիմաստավորված կառույցներ (ինչպես՝ *Հուդայի համբույր* - «մատնություն»), իմաստաբանորեն անտրոփելի են (հմմտ. *լեղին ջուր կտրել* - «սարսափել»), կարող են ձևականորեն համընկնել ազատ կապակցություններին (ինչպես՝ *ձեռքերը լվանալ* - «լվացվել», *ձեռքերը լվանալ* - «մի կողմ քաշվել»), իմաստաբանորեն հարաբերակցում են առանձին բառերի (*գլուխը կորցնել* - «շփոթվել», *գլխի ընկնել* - «հասկանալ»), ձևականորեն համընկնում են հարադրական բարդություններին (ինչպես՝ *գլուխ տանել, ոտքերն ընկնել, ձեռքից գալ*), բառակապակցություններին (*ծայրը ծայրին հասցնել // չհասցնել*) կամ նախադասություններին (*աստված չանի, խելքիդ ձյուն գա*) և այլն:

Դարձվածքները բաղադրիչների սերտության տարբեր աստիճաններ ունեն. հաճախ դարձվածքի իմաստը չի բխում բաղադրիչների ընդհանուր իմաստից (*գլուխ գալ* - ավարտվել, *գլուխ տանել* - ձանձրացնել, *գլխին նստել* - մեկի վրա իշխել), երբեմն դարձվածքի իմաստը որոշ չափով կարելի է բխեցնել բաղադրիչների փոխաբերական իմաստից (*վիզ ծռել* - մեկի առաջ ստորանալ, *ոտքերն ընկնել* - աղերսել, *աչքով անել* - մի բան ակնարկել), որոշ դարձվածքներ էլ իմաստային տեսակետից ոչ միայն տրոփելի են, այլև կազմված են ամբողջապես ազատ իմաստ ունեցող բառերից, որոնք պայմանավորում են դարձվածքների իմաստները. այդպիսին են՝ *առածները* (Երկաթը տաք-տաք կծեծեն), *սասցվածքները* (Քանի լեզու գիտես, այնքան

մարդ ես), *թնավոր խոսքերը* (Մահ իմացյալ անմահություն է: Ռուբիկոնն անցնել, ձայն բարբառո հանապատի) և այլն:

Դարձվածքի ձևաբանական արժեքը - Դարձվածքները դասակարգվում են նաև *ըստ խոսքիմասային արժեքի*. ըստ այդմ առանձնացվում են՝ *գոյականական* (աչքի փուշ, սև աղվես), *ածականական* (երեսը պինդ, թոկից փախած), *բայական* (խոսքը կտուրը գցել, օձի լեզու բանեցնել՝ թափել), *մակբայական* (ճակատի քրտինքով, կուլիսների հետևում), *եղանակավորող* (աստված արևդ պահի, աստված մեկդ հագար անի), *տարարժեք*. Արտահայտում են տարբեր խոսքիմասային արժեքներ. *խելքը քամուն տված* - 1. ցնորված, երևակայող - ած., 2. առօրյա կյանքից կտրված, թափառականի նման - մկբ., *գլուխը կախ* - 1. խոնարհ, հեզ - ած., 2. գլխահակ, ամոթահար - մկբ., *չոր գլուխ* - 1. ընտանիք չունեցող, դժբախտ անձ - գոյ., 2. համառ, կամակոր - ած. և մկբ. և այլն:

Դարձվածքի իմաստաբանությունը - Դարձվածքները, ինչպես բառերը, կարող են արտահայտել տարաբնույթ հարաբերություններ ինչպես կառույցի ներսում, այնպես էլ միմյանց նկատմամբ: Ըստ այդմ առանձնացվում են դարձվածքների հետևյալ տեսակները.

- *մենիմաստ. աչք դարձնել* - (նայել), *աչքը վրան պահել* - (ուշադիր լինել), *վիզը ծռել* - (մեկի առաջ ստորանալ), *գլուխ գալ* - (ավարտվել), *գլխին նստել* - (մեկի վրա իջնել), *գլուխը կախել* - (անհարմար զգալ),

- *բազմիմաստ. աչքից գցել* - 1. այլևս չսիրել, չհարգել, չհամակրել, 2. ատելի դարձնել, 3. ուշադրությունից վրիպել, *գլխի ընկնել* - 1. կռահել, 2. հասկանալ, 3. գուշակել, *բաց աչքով* - 1. աչքաբաց, ճարպիկ, 2. արթմնի, բացահայտ, 3. գիտակցաբար, ինքնակամ, 4. աշալուրջ, զգոն, *քամու բերանն ընկած* - 1. անկամ, կամագուրկ, 2. բախտի քմահաճույքին մատնված, *աղ ու հացով* - 1. հյուրասեր, բարեգործ, 2. աղ ու հացը ձեռքին՝ իբրև հավատարմության նշան՝ երդման ձև:

Դարձվածքի ձևաիմաստային խմբերը.

- *հոմանիշ. սիրտը ճաքել // արյունը ջուր դառնալ // սիրտը փորն ընկնել // լեղին ջուր կտրել // ոտքերը թուլանալ* - (սաստիկ վախենալ), *այն աշխարհը գնալ // այս աշխարհի հետ հաշիվները փակել // աշխարհին հրաժեշտ տալ* - (վախճանվել, մահանալ), *սիրտը շուռ գալ // սիրտը տրոփել, սիրտը այրվել // սիրտը մեկի համար դողալ, սիրտը ճաքել // սիրտը ջուր դառնալ* - (անհանգստանալ), *գառան մորթի հագած գալ // Քրիստոսի հոտի գալ // օձի (պոչ) կծած* - (խարդախ, խաբեբա), *օձի եղջյուր // օձի լեղի // օձի (արծվի, ծիծեռնակի, ծոռի) կաթ // օձի ձու // սև աղվես // սպիտակ ագռավ* - (հազվագյուտ բան),

- *հականիշ. քիթը բարձր* (հպարտ, հաղթական) - *գլուխը կախ* (ամոթահար, պարտված), *արյունը եռալ* (համարձակություն ձեռք բերել) - *արյունը (երակներում) սառչել* (վախենալ, երկյուղ ապրել), *գլուխը տաք* (տա-

քարյուն, բովվող) - *զլուխը սառը* (զգոն, կշռադատված), *կատու դառնալ* (վախենալ, կուչ գալ) - *առյուծ կտրել* (համարձակություն ձեռք բերել), *լեզուն կապ ընկնել* - (շփոթվել, լռել) - *լեզվի կապերն արձակ(վ)ել* - (շատախոսել, շաղակրատել), *կանաչ լույս վառել* (մեկի համար) - (հավանություն տալ, աջակցել) - *կարմիր քարտ ցույց տալ* - [արգելել, խափանել (մի գործ)] և այլն,

- *համանուն. մեկի հացը կտրել*¹ (մեկի հետ սեղան նստել) - *մեկի հացը կտրել*² (մեկին ապրուստի միջոցներից զրկել), *ձեռք քաշել*¹ (մի բանից հրաժարվել) - *ձեռք քաշել*² (ստորագրել), *ձեռք տալ* (ձեռնտու լինել) - *ձեռք տալ* - (աղջկան պատվագրկել) և այլն,

- *հարանուն. հոգի տալ* - (մեկին նվիրված լինել) - *հոգին տալ* (վախճանվել), *զլուխ պահել* (գործից խուսափել) - *զլուխը պահել* (ապրուստի միջոցներ հայթայթել), *սիրտ տալ* - (ոգևորել) - *սիրտը տալ* (ամուսնության առաջարկին համաձայնել), *ձեռք տալ* (ձեռնտու լինել) - *ձեռքը տալ* (աջակցել, համաձայնել):

Դարձվածքները, ինչպես բառերը, կարող են հանդես գալ տարբերակներով:

ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ - Դարձվածքները սովորաբար ունեն կայուն ձև, սակայն երբեմն նրանց կազմում որոշ բաղադրիչներ կարող են հանդես գալ տարբեր ձևերով, տարբերակներով կամ ունենալ քերականական տարբեր արտահայտություններ: Այսպես, դարձվածքի տարբերակներում բաղադրիչները կարող են պատկանել լեզվի *տարբեր գոյավիճակների (կամ տարբերակների)*, հմմտ. աստված *քեզ հետ* և աստված *ընդ քեզ, կյանքի ու մահվան* հարց և *կենաց-մահու* հարց, գլխին սառը ջուր *լցնել* և գլխին սառը ջուր *ածել*, աչքերին *փռշի* փչել և աչքերին *թոզ* փչել: Բաղադրիչները կարող են քերականական տարբեր արտահայտություններ ունենալ (*աչքը* փակել - *աչքերը* փակել, *հացը* կտրել - *հացից* կտրել, *գլխին* դնել - *գլխի վրա* դնել, բերանը *բացել* - բերանը *բաց անել*), տարբերակներում կարող են կամ-ընտրական բառեր լինել (գլխին ջուր *լցնել* - գլխին *սառը* ջուր *լցնել*, գլխին ավետարան կարդալ - *զայլի* գլխին ավետարան կարդալ) և այլն:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ - Նոր բառեր կազմելու եղանակների և միջոցների համակարգ է, որ հենվում է լեզվում գոյություն ունեցող բառակազմական կաղապարների վրա:

Բառակազմության հիմնական հասկացություններ են՝ բառակազմական հիմքը, արմատը, ածանցը և բառակազմական եղանակները. վերջինիս մեջ մտնում են ածանցումը, բառաբարդումը, հապավումը, կոնվերսիան և այլն:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏ - Սա վերաբերում է միատեսակ բառերի վերլուծության տարժամանակյա կտրվածքներին: Կան ընդհանուր երկրորդական ձևայիններով կազմված բառեր, որոնք լեզվի տարբեր գոյավիճակներում տարբեր մեկնաբանություն են ստանում, որ պայմանավորված է լեզվական միավորների վերախմաստավորման հանգամանքով: Լեզվի տարժամանակյա կտրվածքում մի շարք հոլովամասնիկներ և դերբայական վերջավորություններ այլևս չեն գիտակցվում իրենց քերականական նախկին արժեքով և հանդես են գալիս ածանցական դերով: Այսպես, *հայոց, պարսից, վրաց, կամաց, ձեռաց* և այլ բառերի *-ոց, -աց* մասնիկներն արդեն ածանցներ են, մինչդեռ գրաբարում դրանք հոլովամասնիկներ են (հոգնակի սեռականում), նմանապես՝ *խելոք, իրոք, կամոք* բառերում *-ոք* հնչյունախումբը հոլովամասնիկ է գրաբարում (հոգնակի գործիական՝ *աւք-օք-ոք*), *դարձյալ, հանգուցյալ, անցյալ, մեռյալ, սառուցյալ, անկյալ* բառերի *-յալ* մասնիկն արդեն ածանց է (գրաբարում անցյալ դերբայի վերջավորություն է՝ *-եալ*) և այլն: Այլ կերպ ասած՝ վերոբերյալ լեզվական միավորները գրաբարում բառաձևեր են (մասնիկների արտահայտած քերականական համապատասխան իմաստներով), իսկ ժամանակակից հայերենում՝ բառեր՝ բառակազմական համապատասխան ձևայիններով և նրանց բնորոշ բառակազմական նշանակություններով:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏ - Սա վերաբերում է այն բառերին, որոնք ժամանակակից հայերենում չեն տարրալուծվում, թեև կառուցվածքային առումով կազմված են մեկից ավելի ձևայիններից: Այդ կարգի բառերն ապրել են հիմնական ձևայինների իմաստների մթագնման և արմատների քարացման գործընթաց և այժմ հանդես են գալիս բառական մեկ միավորի արժեքով, ինչպես՝ *կարկառել, կաղկանձել, գրգիռ, մրմուռ, սարսափ, առասպել, նշույլ* և այլն: Այս կարգի բառերի ձևակազմական տարրերի առանձնացումը հնարավոր է միայն ստուգաբանական վերլուծությամբ: Այդ կարգի վերլուծության անփոխարինելի բանալի է Հր. Աճառյանի քառահատոր «Հայերեն արմատական բառարանը»:

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԻՄՔ - Բառի յուրաքանչյուր իմաստակիր հատվածն է, որ մնում է տվյալ բառակազմական մասնիկը կամ տարրն առանձնացնելուց հետո. հմմտ. *քաղաք* - ական, *տես* - ություն, ան - *հնազանդ* և այլն: Բառի իմաստակիր այդ հատվածը կարող է նույնպես բառակազմական ձևայիններ (ածանցներ) պարունակել, հմմտ. *քաղաքական* - ություն, *տեսալի* - որեն, ան - *կորուստ* և այլն: Բառակազմական հիմքը կարող է մեկից ավելի իմաստակիր միավորներ պարունակել, հմմտ. *բարեկամ* (բարի+ա+կամ) - ություն, *ձեռնարկ* (ձեռն+արկ(անել)- ում, ան - *բարեհունչ* (բարի+ա+հունչ) և այլն:

Ըստ այդմ, զանազանում են բառակազմական հիմքերի հետևյալ տեսակները՝

- **Պարզ հիմքեր** - Ունեն մեկ հիմնական ձևույթ, համընկնում են արմատի հետ և բառակազմական տեսակետից անտարրալուծելի են. դրանք ածանց են ստանում կա՛մ սկզբից, կա՛մ վերջից, հմմտ. *դժ-բախտ*, *արտագաղթ*, *ան-գույն*, *առ-երես*, *հակա-թույն* և *գիտ-ուն*, *բախտ-ավոր*, *փայտ-յա*, *լի-ություն* և այլն:

- **Բաղադրյալ հիմքեր** - Լինում են առնվազն երկձևույթ կազմություններ: Բաղադրյալ հիմք են կազմում այն իմաստակիր բաղադրիչները, որոնք առանձին բարդություն են. հմմտ. *հեռագրա*-սյուն (հիմքն է՝ *հեռագիր*, որովհետև լեզվում *գրասյուն* բարդություն չունենք): Ածանցական կազմություններում բաղադրյալ հիմք է *արմատ + ածանց* մասը (ան-*բնական*):

Բաղադրյալ հիմքերը լինում են երկու տեսակ՝

- **Սերող հիմք** - Սա բառի իմաստակիր այն մասն է, որին ավելանում է արմատ կամ ածանց. օրինակ՝ *գոյական* - ական, *մարդաբան* - ություն, *կամ* - ընտիր, *քարա* - շեն և այլն:

- **Բաղադրող հիմք** - Բառի այն մասն է, որ ավելանում է սերող հիմքին՝ ավարտելով բառակազմական քայլը. հիմքերի հաջորդականության մեջ միշտ վերջին բաղադրիչն է, ինչպես՝ *հաց + թուխ*, *ջր + կիր*, *գործ + ընկեր*, *գիշեր-ցերեկ*, *արագ-արագ*, *զուլս - բերել* և այլն:

Բաղադրյալ հիմքերն ունեն տարբերակներ:

- **Տիպաբանական տարբերակներ** - Դրանք կա՛մ գործուն, կա՛մ քարացած ձևեր են, հմմտ. *հայր-//հոր-* (*հայր-ապետ*, *հոր-եղբայր*) և *ձեռ-//ձեռն-//ձերք-* (*ձեռ-ագործ*, *ձեռն-արկ*, *ձերք-ակալել*):

- **Հնչյունական տարբերակներ** - Բնութագրվում են հնչյունական փոփոխություններով, ինչպես՝ *գետ//գիտ-* (*լեզվա-գետ*, *գիտ-աբառ*), *կին-//կն-* (*կին-արմատ*, *կն-ատյաց*) և այլն:

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՓՈԻՆՁ - Նույն արմատից կամ բառից սերում են բառակազմական շարքեր, որոնցից յուրաքանչյուրն ունի ընդհանուր հիմնական ձևույթ (ուղիղ կամ հնչյունափոխված տարբերակով): Այլ կերպ ասած՝ բառակազմական փնջի տակ տրվում են բոլոր այն բառերը, որոնց կազմում կա տվյալ հիմնական ձևույթը: Օրինակ՝ *տուն* հիմնական ձևույթի բառակազմական փունջն է՝ *տնակ*, *տնատեր*, *տնամերձ*, *տնօրհներ*, *տնտես*, *տնտեսություն*, *տնտեսվար*, *տնտեսական*, *տնային*, *տնական*, *տնայնագործ*, *տնայնագործական*, *տնայնագործություն*, *տնօրեն*, *տնօրինություն*, *տնօրենություն*, *տնօրինել*, *հացատուն*, *դեղատուն*, *փոստատուն*, *դարմանատուն*, *թոնրատուն*, *դեսպանատուն*, *գրատուն*, *գինետուն*, *մանկատուն* և այլն:

Բառակազմական փնջի սկզբունքով են կազմված Վլ.Դավի հանրահայտ քառահատոր բացատրական բառարանը՝ «Толковый словарь живого

великорусского языка” և Ս.Ա.Գալստյանի «Դպրոցական բառակազմական բառարանը»:

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲՈՒՆ - Բառակազմության ժամանակ կարելի է ստանալ սերման հարաբերությամբ կազմված բառախմբեր, որոնց ելակետային միավորը հիմնական ձևույթն է կամ արմատը: Արմատական բառերը հաճախ բառակազմությանը մասնակցում են հնչյունափոխված տարբերակով. արմատի հնչյունափոխված տարբերակը կոչվում է բառակազմական բուն: Օրինակ՝ *գիծ - գծ.* գծանկար, գծագիր, գծել, գծանիշ, գծային, *ջուր - ջր.* ջրել, ջրկիր, ջրային, ջրաներկ, ջրանկար, ջրասույզ, ջրահեղձ, *բազում - բազմ.* բազմակի, բազմաթիվ, բազմություն, բազմանդամ, բազմազան, *սեր - սիր.* սիրել, սիրատարփ, սիրահար, սիրատենչ, սիրառատ, սիրազեղ, սիրերգակ, սիրատոչոր, սիրակարոտ, սիրասուն և այլն:

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՔԱՅԼ - Նոր բառ կազմելու գործընթացում նոր բաղադրիչի հավելումն է ելակետային բաղադրիչի՝ սերող հիմքի վրա: Բառի կառուցվածքային պլանում վերջին բաղադրիչի ավելացումը համարվում է բառակազմական վերջին քայլը: Այսպես, *բուն* սերող հիմքից և *-ական* երկրորդական ձևույթից ածանցման կաղապարով կազմվել է *բնական* ածանցավոր բառը: Ստացված բառը կարող է դառնալ սերող հիմք բառակազմական այլ քայլի համար. հմմտ. *ան-բնական.* տվյալ դեպքում առկա է սերող հիմք՝ *բնական*, և բաղադրող մաս՝ *-ան*: Այս բառն առաջացել է բառակազմական մեկ քայլի հետևանքով՝ *ան+բնական*: Փորձենք *անբնական* բառից բառակազմական քայլով ստանալ այլ բառ, այսպես՝ *անբնականություն*, որտեղ առկա է *անբնական* սերող հիմքը և *-ություն* բաղադրող մասը: *Ան-բնականություն* բառի ստացման բառակազմական վերջին քայլը *-ություն* ածանցի ավելացումն է: Բոլոր դեպքերում ցանկացած բաղադրություն (բարդ կամ ածանցավոր բառ) կազմվում է բառակազմական մեկ քայլի միջոցով. այլ հարց է, որ նրա հիմքը (եթե բաղադրյալ է) կազմվել է բառակազմական այլ քայլով: Սա էլ իր հերթին նշանակում է, որ ցանկացած բաղադրություն անդամատվում է երկու անմիջական կազմիչների, որոնց միացումը (կցումը) կատարվում է բառակազմական մեկ քայլի միջոցով:

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ - Ածանցավոր բառի ընդհանուր կարգային նշանակություն, որ պայմանավորված է բառակազմական երկրորդական ձևույթի (նախաձանցի կամ վերջաձանցի) ածանցական նշանակությամբ: Այսպես, *-ավոր* ածանցը գոյականական նախատիպերից կազմում է ածականներ՝ «մի բան ունեցող» հատկանշային իմաստով. հմմտ. *աղեղնավոր, զրահավոր, սուսերավոր, նիզակավոր* և այլն: Կամ՝ *արտազնա, արտասահման, արտաբերել, արտաշնչել, արտահանել, արտահայտել* և այլ բառերի իմաստային կառուցվածքում «դուրս, դեպի դուրս, մի բանից դուրս»

իմաստները պայմանավորված են *արտա-* ածանցի բառակազմական նշանակությամբ:

ՁԵՎՈՒՅԹ - Լեզվի ձևաիմաստային միասնություն կազմող նվազագույն միավոր է, լեզվի հիմնական բաղադրիչներից մեկը, որ հաճախ բնութագրվում է որպես նվազագույն նշան, որը որոշակի հնչյունական ձևով արտահայտում է որոշակի բովանդակություն և այլևս չի տարրալուծվում ավելի պարզ իմաստակիր միավորների: Օրինակ, գյուղ-ից, գյուղ-ով, գյուղ-ում բառաձևերում *գյուղ* բառն արտահայտում է հիմնական՝ արմատական նշանակությունը, հետևաբար այն *հիմնական ձևույթ* է, իսկ -ից, -ով, -ում մասնիկները արմատին հաղորդում են քերականական զանազան նշանակություններ (հոլովական իմաստներ). դրանք երկրորդական՝ *բառահարաբերական ձևույթներ* են:

Ձևույթը կարող է հանդես գալ տարբերակներով: Օրինակ, *գյուղական* և *գեղջուկ* բառերում արմատը ներկայանում է *գյուղ* և *գեղջ* (*գյուղ* բառի գրբ. սեռական հոլով) տարբերակներով, իսկ *դառնալ* և *դարձյալ* բառերում արմատը ներկայանում է *դառն* և *դարձ* (*դառնալ* բայի գրբ. երկրորդ հիմք) ձևույթներով, որոնք արտահայտում են տվյալ բառերի հիմնական բառիմաստը և համարվում են հիմնական ձևույթներ: Այդ բառաձևերի -ական, -ուկ և -յալ ձևույթներն ունեն *բառակազմական նշանակություն*. դրանք երկրորդական *բառակազմական* ձևույթներ են, որոնք կազմել են նոր բառեր:

Ըստ այդմ, ձևույթները բառի մեջ իրենց կատարած դերով բաժանվում են երկու խմբի՝ *հիմնական և երկրորդական*: Հիմնական ձևույթ է համարվում *արմատը*, որ կրում է բառի իմաստային հիմնական բեռնվածությունը և արտահայտում է բառական իմաստ: Երկրորդական ձևույթների իմաստները համեմատաբար վերացարկված են. դրանք արտահայտում են կա՛մ բառակազմական (ածանցներ), կա՛մ քերականական-բառահարաբերական իմաստներ (հոլովման և խոնարհման վերջավորություններ, թվակազմական և դերբայական մասնիկներ, հոդեր և այլն):

Հիմնական ձևույթ - Արտահայտում է տվյալ բառի հարացուցային ձևերի հիմնական բառական նշանակությունը: Այսպես, *քաղաք* բառի բառակազմական հարացույցի անդամները՝ *քաղաք-ական*, *քաղաք-ային*, *քաղաք-ացի* և այլն, ընդհանուր են հիմնական ձևույթի բառական իմաստով: Կամ նույն բառի *քաղաք-ի*, *քաղաք-ից*, *քաղաք-ով*, *քաղաք-ում* հոլովական հարացույցի անդամները դարձյալ ընդհանուր են հիմնական ձևույթի արտահայտած ընդհանուր բառիմաստով և այլն: Հիմնական ձևույթները կարող են արտահայտել նաև չմասնավորված (չտարբերակված) բառիմաստներ, ինչպես՝ *իշխել*, *զոջալ*, *փրկանք* և այլ բառերի հիմնական ձևույթները՝ *իշխ-*, *զոջ-*, *փրկ-*: Մինչդեռ բառային մակարդակում դրանց իմաստները տարբերակված են: Հիմնական ձևույթների գործառական ոլորտը սահմանափակվում է բա-

ների շրջանակներում, բառերինը՝ բառակապակցության և նախադասության տիրույթներում: Ձևայինները կարող են ձևականորեն համընկնել բառին, երբ վերջինս արտահայտված է մեկ ձևայինով՝ **արմատով**: Դրանք կոչվում են *արմատական բառեր*, ինչպես՝ *ծառ*, *տուն*, *քաղաք*, *ձյուն*, *ամառ*, *մարդ*, *հայր* և այլն:

Ձուլված ձևային - Համընկնում է արմատահնչյունի ձայնդարձին՝ որպես քերականական իմաստի արտահայտման միջոց: Հմմտ. տուն - տան, հայր - հոր, գրք. սին - սեան, քոյր - քեռ - քորք, գիւղ - գեղջ և այլն:

Երկրորդական ձևային - Բառակազմության ոլորտում արտահայտում են ածանցային իմաստներ և կոչվում են *բառակազմական ձևայիններ*: (Տե՛ս **Ածանց** բառահոդվածը): Երկրորդական ձևայիններ են նաև քերականական մասնիկները (հոլովամասնիկներ, թվակերտ մասնիկներ, դերբայական վերջավորություններ, հոդեր և այլն), որոնք արտահայտում են քերականական իմաստներ և կոչվում են *բառահարաբերական ձևայիններ* (Տե՛ս **Մասնիկավորում** բառահոդվածը):

ԱՐՄԱՏ - Բառի նյութական-քերականական իմաստների կրողն է, նրա հիմնական մասը, որ իմաստի տեսակետից անփոփոխ է մնում բառակազմական քայլերի ընթացքում: Նախադասության ոլորտում կարող է համընկնել բառին, որն այս դեպքում կոչվում է արմատական բառ:

Ածանց արմատի բառ լինել չի կարող: Արմատն ունի իր հնչյունային կաղապարը (հնչյունակազմը): Բաղադրյալ բառի կազմում կարող են լինել մեկ և մեկից ավելի արմատներ, միահնչյուն (միահնչյուն) արմատներ թեև սակավ, բայց լինում են [է (կա, լինել), լատ. *i* (re) - գնալ. *e*(o) գնում եմ]: Հայերենում միաբաղաձայն արմատ չկա, կան արմատահնչյուններ, որոնք երբեմնի արմատի տարբերակներն են՝ դ - նել, տ - ալ. դրանց իմաստակիր տարբերակներն են՝ դի - ցուք, տու - ր և այլն:

Հիմնականում լինում են ձայնավորների և բաղաձայնների կապակցություններով ստեղծված արմատներ (աղ, ջուր, հաց, օդ, օձ, օր, երգ և այլն):

Ըստ խոսքիմասային արժեքի, զանազանում են՝

- **անվանական արմատ** - արմատի դերում հանդես են գալիս անուն խոսքի մասերը. քաղաք-ային, բան-ավոր, գեղ-անի, քառ-ակի,

- **բայական արմատ** - արմատի դերում հանդես են գալիս բայարմատները. խոս-(խոսել), փրկ-(փրկել), վազ-(վազել), որոնցով կազմվում են ինչպես բայեր, այնպես էլ բայանուններ՝ *խոսք*, *վազք*, *փրկանք*:

Պատմականորեն կարելի է առանձնացնել՝

- **ստուգաբանական արմատ** - որ բացահայտվում է ստուգաբանական վերլուծության միջոցով, օրինակ՝ անալի (< աղ), նշույլ (< շող),

- **բնիկ հայերեն արմատ**՝ հող, ջուր, հաց, տուն, տղա, աղջիկ,

- **փոխառյալ արմատ**՝ նամակ, կոնդակ, եկեղեցի, օգոստոս, մկրատ,

- **ձայնդարձով արմատ**- առաջացել է հնդեվրոպական արմատների ձայնավորների փոփոխության հետևանքով, ինչպես՝ մարդ - մեռ - մահ, կեռ - կոր, չոր - չիր, հետ(ք) – ոտ(ք) և այլն,

- **կախյալ արմատ** – սրանք առանձին անգործածական ձևույթներ են, բառի կառուցվածքում իրացվում են այլ ձևույթների հետ միասին, ինչպես՝ **հի**-անալ, **հ-լու**, **պղտ**-որ, **ործ**-կ-ալ, **ճեպ**-ընթաց, **ջր-արք**-ի և այլն:

ԱԾԱՆՑ - Ածանցներն ունեն բառակազմական արժեք. նրանք, դրվելով բառի կամ արմատի վրա, փոխում են նրա դերն ու բառական իմաստը և կազմում նոր բառեր: Ածանցները բառի արմատական իմաստին հավելում են իրենց հատուկ բառակազմական նշանակություն. հմմտ. մարդիկ + ային - *մարդկային*, տուն+ակ - *տնակ*, հայր+աբար - *հայրաբար*, ան+հրապույր - *անհրապույր*, դժ+գոհ - *դժգոհ*, ապ+ երջանիկ - *ապերջանիկ* և այլն:

Կան ձևույթներ, որոնց իմաստն իսպառ մթագնել է, և այն հնարավոր է վերականգնել միայն ստուգաբանական եղանակով: Օրինակ, *ընկալել*, *ըմբռնել*, *ընտանիք* բառերի նախամասնիկները՝ *ըն-*, *ըմ-*, բացահայտվում են ստուգաբանության միջոցով. նախապես եղել է *ընդ*, որ ունի տարբեր իմաստներ՝ 1. «միասին»՝ *ընդ-կալել*, *ընդ-բռնել* (միասին բռնել), 2. «տակ, ներքո»՝ *ընդ + տանիք = ընտանիք* (միևնույն տանիքի տակ): Որոշ ածանցների ստուգաբանական իմաստները հանգում են նյութական բովանդակության, օրինակ՝ *որսորդ*, *լողորդ*, *ծանրորդ* և այլ բառերի *-որդ* ածանցն ստուգաբանորեն հանգում է «որդի» բառին՝ «Ժառանգ, զավակ, դուստր» նշանակությամբ, հմմտ. *օրհորդ*՝ «իշխանի դուստր» (*օրհ*՝ «իշխան», հմմտ. Իսրայել Օրի):

Այդպես հայերենի *-ատ* ածանցը ծագում է *հատանել* (կտրել) բայի արմատից, *-որեն* ածանցը՝ *օրենք* բառից, պես-ը՝ *պէս* արմատից՝ «ձև, կերպ, եղանակ» նշանակությամբ, բար-ը՝ *բարք* բառից և այլն:

Կան ածանցներ էլ, որոնք ծագել են համապատասխան արմատների բառիմաստների վերացարկման հետևանքով. դրանք հանդես են գալիս երկակի՝ ածանցի և արմատի արժեքներով: Այդպիսի ձևույթները կոչվում են *ածանցակերպներ* (տե՛ս **Ածանցակերպներ**):

Ըստ արմատի նկատմամբ ունեցած դիրքի, զանազանում են ածանցների հետևյալ տեսակները՝ *նախածանց*, *միջածանց*, *վերջածանց* և *համածանց*:

ՆԱԽԱԾԱՆՑ - Ավելանում է բառակազմական հիմքին՝ սկզբից՝ փոխելով նրա բառակազմական նշանակությունը, ինչպես՝ *ան-* (անբան), *ապ-* (ապօրինի), *առ* - (առերես), *բաց* – (բացորոշ), *դժ* – (դժգույն), *համ* - (համանուն), *հար* – (հարադիր), ռուս. *за* – (*заход*), *при* – (*приход*), *пере* – (*переход*), *у* – (*уход*), *вы* – (*выход*), լատ. *com* (*com* – *plector*), *con* (*con*-*figuratio*), *sub*

(sub-scribere), հուս. anti (anti – dotum), dia (dia-gnosis), hyper (hyper – tonia), անգլ. ad (ad – verb), pre (pre – position), in (in – finitive) և այլն:

ՄԻՋԱԾԱՆՑ, ՆԵՐՈՒՅԹ կամ **ՄԻՋԱՄԱՍՆԻԿ** - Հանդես է գալիս արմատի մեջ. այդ բառերը հիմնականում ժողովրդախոսակցական կազմություններ են, որտեղ միջաձանցներն ունեն սաստկական նշանակություն. – լ – (բնդել – բլ(ա)նդել, պոկել – պլոկել, կանչել – կլանչել), – ր – (դմփալ – դրմփալ, թխկալ – թրխկալ), – ո – (շաչել – շառաչել) և այլն: Միջաձանցը կարող է հանդես գալ նաև բայական արմատի կամ հիմքի մեջ. օրինակ, լատիներենում բայերի ներկա ժամանակի ձևերը կազմվում են -ո- ածանցի միջոցով, vi – ո – co (հաղթում եմ) և li – ո – qu-о (թողնում եմ) և այլն: Հմմտ. անցյալի ձևերը. vic-i (հաղթեցի), liqu- i (թողեցի): Հմմտ. նաև՝ անգլ. ներկա ժամանակ՝ to sta-**ո**-d up (ոտքի եմ կանգնում), անցյալը՝ stood (կանգնեցի) և այլն:

ՎԵՐՋԱԾԱՆՑ - Ավելանում է բառակազմական հիմքին՝ վերջից: Հայերենը հարուստ է վերջաձանցներով՝ -(ա)բար (հայր-աբար), -(ա)պես (նյութ-ապես), -(ա)գին (հիվանդ-ագին), -ալի// -ելի (ցանկ-ալի, սիր-ելի), -անի (լեզվ-անի), -ատ (պոչ-ատ), -(ա)վոր (գլխ-ավոր), -ություն (քաջ-ություն), ռուս. -ость (конкретн-ость), -о (конкретн-о), -ок (игр-ок), -ой (молод-ой), անգլ. -tion (gusta-tion), -ic (pedant – ic), -ry (pedant – ry), -ly (similar – ly), գերմ. -er (Mord – er), -isch (morder – isch), -lich (morder – lich), -lat (Mord – lat) և այլն:

ՀԱՄԱԾԱՆՑ - Նախաձանցի և վերջաձանցի համաժամանակյա հավելում է բառարմատին. վեր – գետ(ի)ն – յա, ստոր – գետ(ի)ն – յա, ընդ – ծով – յա, համա – ժամանակ – յա, տար – ժամանակ – յա, ռուս. за – речь – е, под – окон – ник և այլն:

Հստ գործառական դերի՝ տարբերակում են նաև՝

ԱԾԱՆՑԱԿԵՐՊ - Այդ կարգի ձևույթները երկակի գործառույթ ունեն բառի արտահայտության պլանում: Դրանք հանդես են գալիս թե՛ որպես արմատ և թե՛ որպես ածանց. արմատի արժեքով ունեն նյութական նշանակություն, ածանցի արժեքով՝ բառակազմական նշանակություն. հմմտ. *գործունյա* – *գործավոր* բառերի մեջ *գործ* ձևույթն արմատ է, մինչդեռ *ժամագործ*, *գորգագործ*, *ասեղնագործ*, *թիթեղագործ* և այլ բառերի մեջ այն վերածվել է ածանցի: Այդպես նաև՝ **գետ** (*գիտուն*, *գիտակ*), **կալ** (*կալանեղ*, *կալանավոր*), **բան** (*բանավոր*, *բանագետ*) արմատներ են, իսկ *լեզվագետ*, *գրականագետ*, *գործակալ*, *կուսակալ*, *լեզվաբան*, *պատմաբան* և այլն բառերում՝ ածանց: Հմմտ. նաև՝ *вед* ձևույթը ռուսերենի բառակազմական մակարդակում. *вед-ать*, *вед-ение*, *языко-ведение* և *языко-вед искусство-вед естество-вед* և այլն: Այս ձևույթները դիտվում են **վերջաձանցակերպներ**:

Ածանցակերպները արմատի և ածանցի արժեքներով հանդիպում են նաև բառասկզբում՝ **նախաձանցակերպներ**, օրինակ՝ *տար-բեր*, *վեր-ուստ* (արմատ) և *տար-աշխարհ*, *վեր-գետնյա* (ածանց):

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ - Կաղապարները որոշակի բնագավառի մոդելներ են, որտեղ ցույց են տրվում տվյալ կառուցվածքի բաղադրիչների դասավորությունը, որից էլ բխեցվում են նրանց իմաստային քերականական կապերը:

Այդ միավորների բացահայտումը և դրանց ձևակերպումը որոշակի բանաձևերով կոչվում է *կաղապարում*: Ըստ այն հանգամանքի, թե լեզվական ինչպիսի բաղադրություն է կաղապարվում, առանձնացվում են կաղապարի հետևյալ տեսակները՝ բառակազմական կաղապար (տարածքը բառն է), հնչերանգային կաղապար (տարածքը՝ ասույթի վերգծային ոլորտ), ձևաբանական կաղապար (տարածքը՝ բառաձև) և շարահյուսական կաղապար (տարածքը՝ բառակապակցություն և նախադասություն):

Լեզվի մակարդակային միավորների նկատմամբ կարելի է ցուցաբերել ձևայնացած նկարագրություն, որի նպատակն է ստեղծել առանձնական (տվյալ լեզվին հատուկ) կաղապարներ, որպեսզի յուրահատուկ բանաձևերի միջոցով հնարավոր լինի ներկայացնել այդ կարգի միավորների կառուցատիպերը (կամ նրանց շարքերը):

ԲԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՂԱՊԱՐ - Բարդ կամ բաղադրյալ բառերի բառակազմական կաղապարները որոշել նշանակում է քննել բարդության կամ ածանցման բառակազմական եղանակը, այսինքն՝ բացահայտել բառակազմական վերջին քայլը, որով ձևավորվում է բարդ բաղադրյալ բառը: Եթե բարդ բառը հոդակապով կամ անհոդակապ բարդություն է, նրա բաղազմական անդամատումը դժվարություն չի հարուցում: Եթե բաղադրությունը ածանցական կազմություն ունի, բաղազմական վերջին քայլի բացահայտումը որոշակի դժվարություն է ներկայացնում. առաջին հայացքից թվում է՝ ինչքան ածանցավոր բառեր կան, մտնում են ածանցման կաղապարի տակ: Բայց դա միայն առաջին հայացքից:

Հարցն այն է, որ բարդ ածանցավոր բառերի մի զգալի մասը՝ որպես բաղադրություն կամ բարդություն, կարող է ձևավորվել բառաբարդման եղանակով և հետևաբար ունենալ բարդության կաղապար, երկրորդ՝ այդ կարգի բառերի մի զգալի մասն էլ կարող է բառակազմորեն երկակի մեկնաբանություն ունենալ (և՛ որպես ածանցում, և՛ որպես բարդություն), ըստ այդմ էլ դրանք կարող են բավարարել թե՛ ածանցման և թե՛ բարդության կաղապարներին:

Այսպես, հետևյալ բառերը ենթարկենք բառակազմական վերլուծության և որոշենք դրանց անմիջական կազմիչները՝ սերող և բաղադրող հիմ-

քերը. *ձեռնարկություն, այլուրեքություն, օրինազանցություն, մարդասիրական* և այլն:

Միանշանակ է, որ այս բառերի սերող հիմքն է մինչև ածանցն ընկած մասը, հետևաբար դրանց սերող հիմքերն են՝ *ձեռնարկ, այլուրեք, օրինազանց, մարդասիր* (<սեր) բաղադրյալ ձևությունները, իսկ բաղադրող հիմքերը՝ *-ություն, -ական* ածանցները: Ինչու՝ է այս մոտեցումը ճիշտ. քանի որ այլ բաժանման (տրոհման) դեպքում կստանանք՝ *ձեռն-արկություն, այլ-ուրեքություն, օրինա-զանցություն, մարդա-սիրություն* ձևությունները, որոնց ածանցավոր կազմությունները կեղծ բառեր են. հայերենում չկան *արկություն, ուրեքություն, զանցություն, սիրություն* և նման կազմություններ:

Ըստ այդմ՝ անկասկած է, որ վերոբերյալ բարդաձանցավոր բառերը կազմվել են ածանցման եղանակով և բավարարում են ածանցման կաղապարներին:

Դիտարկենք նույնատիպ կազմության այլ բառեր:

Այսպես, *թյուրիմացություն, ազդօրինակ, ազդանշան, միջքաղաքային, ինքնախարազանում* և այլ բառեր դարձյալ կազմված են երկու իմաստակիր ձևություններից և ածանցից:

Հարց է առաջանում՝ դրանք բառակազմական ո՞ր եղանակով են կազմվել և բառակազմական ո՞ր կաղապարին են բավարարում: Որոշենք այս բառերի անմիջական կազմիչները: Նախ առանձնացնենք ածանցները. ըստ այդմ կստանանք *թյուրիմաց-ություն, ազդօրին-ակ, ազդանշ-ան, միջքաղաք-ային, ինքնախարազան-ում*: Հասկանալի է, որ հայերենում չկան *թյուրիմաց, ազդօրին, ազդանշ, միջքաղաք, ինքնախարազան* կազմություններ. դրանք ևս կեղծ բառեր են: Հետևաբար վերոբերյալ բառերի անդամատումը պետք է կատարել այլ կտրվածքով՝ *թյուր-իմացություն, ազդ-օրինակ, ազդա-նշան, միջ-քաղաքային, ինքնա-խարազանում*:

Այս կարգի անդամատումը պատճառաբանվում է բաղադրության բաղադրիչների իմաստներով, նրանց բառական արժեքով և միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների բնությով: Կարող ենք եզրակացնել, որ այս բառերն էլ կազմվել են բարդության եղանակով. բարդությանը մասնակցել են անկախ բառեր, որոնց երկրորդ բաղադրիչը ածանցավոր կազմություն է. ածանցի առկայությունը չի փոխում բառակազմական եղանակի տեսակը, հետևաբար նման բառերը մտնում են բարդության կաղապարի տակ:

Դիտարկենք այն բարդ բառերն ու բաղադրությունները, որոնք կազմված են բառաբարդման եղանակով, և որոշենք դրանց կաղապարներն ու հնարավոր մասնակաղապարները:

Ուսուցողական առումով բառաբարդման կաղապարների նկարագրությունն այս բաժնում կատարելու ենք ըստ համադրական բարդությունների. վերլուծական բարդության կաղապարների նկա-

բազրությունն այս հարցում էական նշանակություն չունի. դրանք առանձին ուսումնասիրության նյութ կարող են դառնալ:

Բարդ բառերի ձևայնացված նկարագրությունը հանգում է սերող և բաղադրող (արմատական) հիմքերի կաղապարներ կազմելուն, իսկ բաղադրությունների դեպքում քննարկվում են այն կազմությունները, որոնց մի բաղադրիչը (հիմքը) ածանցավոր կազմություն է, այսինքն՝ բաղադրության բաղադրիչներից մեկը կազմված է լիմաստ խոսքի մասից և որևէ ածանցից: Նման բաղադրությունների կազմության եղանակը բառաբարդումն է: Այդ բարդությունները, անկախ բաղադրիչների քանակից, բաժանվում են երկու հատվածական մասի՝ սերող և բաղադրող հիմքերի:

Ընդ որում մեզ հետաքրքրող բարդությունների երկրորդ հիմքը ածանցավոր կազմություն է. հետևաբար նրանց առաջին հիմքը կնշանակենք *S*, ածանցավոր հիմքը՝ *Ss*, *Sa* տառանիշներով, որտեղ ածանցանիշ տարրն ունի իր դրսևորումները՝ *s* (գոյականակերտ կամ գոյականական ածանց), *a* (ածականական) և այլն:

Քննարկվող բաղադրությունների հիմնականապապը կարելի է ներկայացնել *SSD* բանաձևով (*D*-ն ածանցավոր հիմքի ցուցիչն է), որը կունենա իր մասնակաղապարները՝ պայմանավորված առաջին հիմքի (*S*) ձևավորման տիպերով, երկրորդ հիմքի կառուցվածքով, ածանցների խոսքիմասային իմաստներով և հիմքերի կապակցման տեսակով (հոդակապով կամ անհոդակապ):

Անհոդակապ բարդ բառերն ունեն *SS* կառուցվածքայի բանաձևը, հոդակապով կազմությունները՝ *SjS*: Դրանց մասնակաղապարները բնութագրվում են առաջնային հիմքի կամ ածանցի հնչյունափոխության հանգամանքով:

ՀՈԴԱԿԱՊՈՎ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ - Հոդակապով բարդությունների առաջին՝ հիմնային բաղադրիչը բարդություն է կազմում երկու եղանակով՝ ուղիղ և թեք (հնչյունափոխված) ձևով. ըստ այդմ էլ կարելի է տարբերակել մասնակաղապարները՝ *S* և *S* հիմքերի տիպերով: Դիտարկենք ուղիղ (ոչ ձևավոր) հիմքով հանդես եկող բարդության կաղապարները:

ա) **SjS** հոդակապով երկհիմք բարդությունների կաղապարներ, որոնց կազմությանը մասնակցում են միայն նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը: Այդ բարդությունները խմբավորվում են ըստ վերջին բաղադրիչի խոսքիմասային արժեքի՝ *գոյական* (ձեռնափայտ, դասամատյան, ալիքաձև, քարակույտ, արևածաղիկ, լեռնագագաթ...), *ածական* (հողաշատ, մարդավայել, ծիծաղախիտ, օրապակաս...), *բայական անդամ՝ բայահիմք* (մարդասպան, հողմածեծ, ականանետ, մաքասեր, քչախոս, ինքնասույզ, եռածալ, չարակամ...) և այլն:

Իբրև այս կադապարի մասնակադապարներ, հանդես են գալիս առաջնային հիմքի կամ ածանցի հնչյունափոխությամբ տարբերակները՝

բ) **SjS** - լուսապայծառ, սրտաբաց, դեղնակարմիր, մաքրասեր, նրբակատ, քշախոս, հազվագյուտ..., այգեկուր, որդեկորույս, գինեգործ, գինետուն, ոսկեվագ, բարեկամ, հոգեզմայլ, ոգելից և այլն:

գ) **Sj(Ss)** առաջին մաքուր հիմքով ձևավորված բաղադրության կադապարներ, որոնց երկրորդ հիմքում առկա է գոյականակերտ ածանց. հմմտ. տառաձուլարան, մետաղաձուլարան, այսօրինակ, մարդահասակ, մեծահասակ, միատեսակ, սուսերամարտիկ:

դ) **Sj(Sa)** - հյուրամեծար, ավագակաբարո, գաղտնաբարո, ակնահաճո, դաժանաբարո, միահեծան, լեռնաքիմիական:

ե) **Sj(S²s)**. բաղադրության երկրորդ հիմքը կազմված է իմաստակիր երկու ձևությից և գոյականակերտ ածանցից. ընդ որում, երկրորդ հիմքի բաղադրիչները սովորաբար լինում են ձևավոր. այդ հիմքը կարելի է ցույց տալ S^2 նշությով. ինքնաքննադատություն, բառակապակցություն, տառակապակցություն, գյուղատնտեսություն, գազալցակայան, տեսաձայնագրություն և այլն:

զ) **Sj (S²s)** – լուսաքողարկում:

է) **Sj (Sss)** – ազգաբնակչություն (երկրորդ ածանցի հնչյունափոխությամբ):

Ավելի շատ տարածված են այն բաղադրությունները, որոնց սերող կամ բաղադրող հիմքերը հանդես են գալիս հնչյունափոխված ձևով. այդ հիմքերը կարելի է դարձյալ արտահայտել S նշությով: Նման բառերի հիմնակադապար են դառնում **SjSD**, **SjSD** կամ **SjSD** բանաձևերը, ըստ երկրորդ բաղադրիչի ածանցի՝ s , a և այլն: Հնարավոր են հետևյալ մասնակադապարները՝

ա) **Sj(Ss)** – կիսահեղուկ, կիսահամոզում, մարմնակազմություն

բ) **Sj(Ss)** – նավաշինություն, աստղանշան

գ) **Sj(Ss)** - գրաքննություն

դ) **Sj(SSs)** – կիսաախտորոշում

ե) **Sj(Sa)** - այս մասնակադապարը զգալի բեռնվածություն ունի արդի հայերենում, ինչպես՝ կիսաբամբակյա, կիսագաղութային, կիսաթափառական, կիսակենդանի, կիսահասկանալի, կիսապաշտոնական, կիսատափաստանային, գիտատեխնիկական, վիճահարույց, խնդրահարույց

զ) **Sj(SjSa)** – կիսաեզրափակիչ

Բաղադրության երկրորդ հիմքը հանդիպում է կրկնակի ածանցով՝

ա) **S j(Sas)** – կիսավայրենություն

բ) **S j(Ssa)** – կիսաքաղաքացիական

գ) **(S²j)Sa** – տնտեսագիտական, հրթիռաշինական

դ) **Sj (Sj Sa)** – ինքնակենսագրական

է) **S j(S²as)** – լեզվամտածողություն

Որոշ դեպքերում, հնարավոր է, խուսափել ենք մասնակաղապարային բանաձևերում նշելու սերող և բաղադրող հիմքերի բոլոր փոփոխությունները՝ բանաձևերի առկա շարքերը չծանրաբեռնելու նպատակով:

ԱՆՀՈՂԱԿԱՊ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ - Անհողակապ բարդությունները երկհիմք կամ եռաբաղադրիչ կազմություններ են, որոնց բաղադրիչները միանում են առանց հողակապի՝ արմատների կամ հիմքերի պարզ համադրությամբ:

Երկհիմք կազմությունների կաղապարն է՝

ա) **SS** բանաձևը. լեռնանուն, ազգանուն, տեղանուն, վարդերես, բայիմաստ, քայլերգ, գործընկեր, կողոսկր, ջրաման և այլն:

բ) **SS** առաջնային հիմքի հնչյունափոխությամբ տարբերակը. ջրանուն, ջրասույգ, սրտամկան, սրտակեր, տնամերձ, սրատես, մանկամիտ, գիշակեր, ստախոս, մտամոլոր և այլն:

Եռարմատ անհողակապ բարդությունների հիմնակաղապարն է **SSS**, որին բավարարում են սակավաթիվ բառեր, և որոնք կարելի է ներկայացնել հետևյալ մասնակաղապարներով.

ա) **S(SS)** - երկբարբառ, եռաբարբառ,

բ) **(SS)S** – թեպետև, որպեսզի:

Անհողակապ բաղադրությունների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ նրանց երկրորդ բաղադրիչը (հիմքը) հանդես է գալիս մեկ կամ մեկից ավելի իմաստակիր բաղադրիչներով և այս կամ այն խոսքի մասին հատուկ ածանցով:

Նման բաղադրությունների առաջին բաղադրիչը սովորաբար գործառվում է անփոփոխ ձևով՝ իբրև ոչ ձևավոր հիմք:

Այդ բաղադրությունների հիմնակաղապարն է **S(SD)** կամ **S(S²D)**. սրանց մասնակաղապարները պայմանավորված են ածանցների ձևաբանական տիպերով և հիմնային բաղադրիչների հնչյունափոխության գործոնով:

Հնարավոր են **SSs**, **SSa** կամ **SS²s**, **SS²a** մասնակաղապարները՝

1. **S(Ss)** - սովորաբար երկրորդ՝ ածանցավոր հիմքի իմաստակիր բաղադրիչ է դառնում բայահիմքը կամ դերբայաձևը. հմմտ. գերլարում, նավամբարձիչ,

2.ա. **S(Sa)** - առավել տարածված են ածականական բաղադրիչ ունեցող երկրորդ հիմքով կազմությունները, հմմտ. մինչդպրոցական, մինչպատերազմական, հետպատերազմական, գերիշխանական, գերպլանային, մերձվոլգյան, անդրկովկասյան, մերձմոսկովյան, մերձտափաստանային, մերձբևեռային,

2.բ. **S(Sa)** - միջպատերազմական, միջազգային, միջանկյալ, միջցամաքային,

2.գ. **S(Sa)** - մերձերկրային, գերբնական,

3.ա. **S(Saa)** - վերջին բաղադրիչը երկաձանց կազմություն է՝ միջմասնիկավոր, միջկառավարական,

3.բ. **S(Saa)** - գերմարդկային, հետխորհրդային,

3.գ. **S(Saa)** - միջազգայնական,

3.դ. **S(Saa)** - միջշրջանային,

4. **S(SjSa)** - մինչհեղափոխական:

Մենք դիտարկեցինք այն բարդաձանցավոր բառերը, որոնք կազմվել են բառաբարդման կաղապարով. դրանց երկրորդ (բառակազմական) հիմքը բառաբարդման մասնակցելուց առաջ արդեն ձևավորված աձանցավոր բառ է: Ըստ այդմ՝ բառաբարդումը բարդություն կազմելու վերջին քայլն է:

ԱԾԱՆՑՄԱՆ ԿԱՂԱՊԱՐ – Ներկայանում են նախաձանցավոր և վերջաձանցավոր տեսակներով:

ՆԱԽԱԾԱՆՑՄԱՆ ԿԱՂԱՊԱՐ - Նախաձանցավոր դիտվում են այն բառերը, որոնց կառուցվածքում առաջին բաղադրիչը աձանց է, սակայն նախաձանցում ասելով հասկանում ենք բառակազմության այն տեսակը, երբ նոր բառ է կազմվում նախաձանցման միջոցով: Հմմտ. ան-տուն, չ-տես, համ-ա-կարծիք, արտ-ա-գնա և այլն: Նախաձանցին հաջորդող բառակազմական բաղադրիչը տվյալ բառի իմաստակիր միավորն է՝ միջուկային անդամը, որ կարող է կազմությամբ լինել թե՛ բարդ, թե՛ աձանցավոր: Հմմտ. ան-գրագետ, ան-բնական, ենթա-օրենսդրական և այլն:

Նախաձանցման կաղապարները քննելիս կարելի է ելակետ ունենալ հետևյալ գործոնները.

1) Նախաձանցների խոսքիմասային (ձևաբանական) արժեքը, այսինքն՝ տվյալ կաղապարներն առանձնացնել ըստ նախաձանցների՝ այս կամ այն խոսքի մաս կերտելու հատկանիշի. ըստ այդմ կստանանք գոյականական, ածականական, բայական նախաձանցների բառակազմական կաղապարներ և այլն:

2) Բառակազմական հիմքի կառուցվածքային գործոնը. հիմքը կարող է լինել աձանցավոր, բարդ և բարդաձանցավոր: Ըստ այդմ կարելի է առանձնացնել համապատասխան կաղապարներ:

3) Նախաձանցների թվային կազմը. հայերենում հանդիպում են նվազագույնը մեկ, առավելագույնը՝ երեք նախաձանցով կազմություններ. համաձայն այդ սկզբունքի՝ կարելի է ստանալ համապատասխան կաղապարներ:

4) Հիմնային բաղադրիչի խոսքիմասային պատկանելությունը. այս մոտեցումով կարելի է ստանալ տարատեսակ կաղապարներ, քանի որ հիմնային բաղադրիչի դերով կարող են հանդես գալ գրեթե բոլոր լիմաստ խոսքի մասերը (նրանց թեքված ձևերը կամ ձևավոր հիմքերը):

5) Ածանցների կապակցելիության հատկանիշները: Հայտնի է, որ ածանցներն ըստ արմատների (բառակազմական հիմքերի) հետ կապակցվելու հատկանիշի լինում են ընդհանրական և անընդհանրական: Դա այլ կերպ կարելի է համարել ածանցների գործառական արտադրողական և անարտադրողական լինելու հատկանիշ: Այդ դասակարգմամբ կստանանք ընդհանրական (արտադրողական) և անընդհանրական (անարտադրողական) նախածանցների բառակազմական կաղապարներ:

6) Ածանցների իմաստային հատկանիշը և ծագումնաբանական գործոնը: Առաջինի դեպքում կստանանք ժխտական նախածանցների բառակազմական կաղապարներ, երկրորդի դեպքում՝ գրաբարյան նախդիրների ածանցական կաղապարներ:

Անհրաժեշտ է նախածանցների բառակազմական կաղապարները ներկայացնել ըստ միջուկային բաղադրիչի ձևակազմական տիպերի:

Մինչև բուն կաղապարներին անցնելը պարզենք նախածանցով բառակազմական կաղապարի (հիմնակաղապարի) հնարավոր տիպերը, այնուհետև անցնենք այդ տիպերի (շարքերի) բացահայտմանը:

Ածանցման նվազագույն կաղապարն է ածանցի և արմատի (բառակազմական հիմքի) պարզ գուգորդումը, ինչպես մականուն՝ *sS*, անտուն՝ *aS*.

Հնարավոր են հետևյալ դեպքերը.

ա) ածանցը կարող է գուգորդվել վերջածանցավոր հիմքի՝ **մակերևույթ** *s(Ss)*,

բ) ածանցը կարող է հոդակապով գուգորդվել ածանցավոր հիմքի՝ **համալսարան** *sj(Ss)*,

գ) ածանցը կարող է գուգորդվել նախածանցավոր հիմքի՝ **անպարագիծ** *s(sjS)*,

դ) ածանցը կարող է գուգորդվել բաղադրյալ (բարդածանցավոր) հիմքի՝ **համաստորադասություն** *sj(ajSs)* և այլն:

ՎԵՐՋԱԾԱՆՑՄԱՆ ԿԱՂԱՊԱՐ - Ածանցման կաղապարներում զգալի կշիռ ունեն վերջածանցման կաղապարները, որ պայմանավորված է վերջածանցների զգալի քանակով. հայոց լեզվում վերջածանցները հասնում են շուրջ 200-ի: Կառուցվածքային առումով վերջածանցման կաղապարները պետք է դիտարկել սերող հիմքերի կառուցվածքային տեսակով և վերջածանցների կցման եղանակով:

Ըստ վերջածանցների կցման հատկանիշի՝ սովորաբար տարբերակվում են հոդակապով և անհոդակապ եղանակներ: Լեզվական փաստերի քննությունը ցույց է տալիս, որ դրանց միջև էական տարբերություն չկա, մանավանդ որոշ ածանցների կառուցվածքում հոդակապերն այնպես են ձուլվել-միացել ածանցին, որ միասին դիտվում են բառակազմական մեկ ձևույթ, ինչպես -աբար, -ազին, -ավոր, -ացի, -ապես, -ագույն և այլն:

Դիտարկենք վերջածանցման հետևյալ պարզ կաղապարը՝ արմատ կամ հիմք + ածանց կառուցվածքով:

Այսպես, ի՛նչ օրինաչափություններ կարող ենք տեսնել *քաղաքային*, *տնական*, *հոգևոր*, *առնական*, *իմացություն* և այլ վերջածանցավոր կաղապարներում:

Եթե այս բառերի սերող հիմքերը նշանակենք արդեն հայտնի նշույթով՝ S, բաղադրող հիմքը (ածանցը)՝ s, ապա կարող ենք ասել հետևյալը.

1. բոլոր բառերը երկբաղադրիչ կազմություններ են,
2. բոլոր բառերը կազմված են Ss կաղապարով,
3. բոլոր բառերում հիմքը նախորդում է ածանցին,
4. բոլոր բառերում ածանցը հաջորդում է հիմքին:

Այնուհետև, յուրաքանչյուր բառի հետ կապված, մենք կարող ենք ինդուկտիվ եղանակով խոսել ընդհանուր օրինաչափությունների մասին.

1. *քաղաքային* բաղադրությունը կազմված է մաքուր հիմքով (քաղաք. S),
2. *տնական* բաղադրությունը՝ հնչյունափոխված հիմքով (տն. S),
3. *հոգևոր* բաղադրության հիմքի և ածանցի ձայնավորները միասին ենթարկվել են հնչյունափոխության (h + a > ե. Ss),
4. *առնական* բաղադրության սերող հիմք է դարձել գոյականի սեռական հոլովածը (գոյականական հիմքը) (այր - առն. S^g),
5. *իմացություն* բաղադրության սերող հիմքը բայահիմք է (իմանալ-իմաց. S^f):

Ըստ այդ գործոնների էլ կարելի է առանձնացնել Ss հիմնակաղապարի մասնակաղապարները՝

1. Ss - քաղաքական (հիմնակաղապար)
1. Ss - տնական
1. Ss - հոգևոր
1. S^gs - առնական, իմացություն և այլն:

Այսպես կարող ենք վերլուծել այն բաղադրությունները, որոնք ունեն երկու, երեք կամ չորս վերջածանցներ: Նման բաղադրություններում բացի վերջին ածանցից մյուսները մտնում են սերող հիմքի մեջ: Հմատ. Ածակական - (Ss)s, լուսավորականություն (Sss)s, պահպանողականություն - (Ssss)s և այլն:

Սերող հիմքում կարող են լինել մեկից ավելի իմաստակիր ձևույթներ: Դիտարկենք վերջածանցման կաղապարների օրինակներ, որոնց սերող հիմքերում կա երկու իմաստակիր ձևույթ, և բնութագրենք այդ կաղապարներն ըստ հիմքի կառուցվածքային գործոնների:

Այսպես, *ծովելուզակ*, *այլազգի*, *այլախոհություն*, *երկասիրություն*, *գրագրություն* և *ծովագնացություն* բաղադրություններն այլ կարգի յուրահատկություն են ցուցաբերում.

1. բոլոր բաղադրությունները եռաձևությամբ կազմություններ են,
 2. բոլոր բաղադրությունները անկախ ձևությունների քանակից բաժանվում են սերող և բաղադրող հիմքերի,
 3. բոլոր բաղադրությունների սերող հիմքերը կազմված են երկու իմաստակիր ձևություններից,
 4. բոլոր բաղադրությունների սերող հիմքերը նախորդում են վերջածանցներին,
 5. բոլոր բաղադրությունների վերջածանցները հաջորդում են սերող հիմքերին,
 6. այդ բաղադրությունների որոշ սերող հիմքեր անհոդակապ բարդություններ են (այլազգ-ի, ծովելուզ-ակ, դյուցազն-աբար),
 7. որոշ սերող հիմքեր էլ հոդակապով բարդություններ են (այլախոհություն, երկասիրություն, ծովազնացություն),
 8. սերող հիմքերի որոշ բաղադրիչներ հանդես են եկել հնչյունափոխված ձևով (սիրերզ-ակ, գրագրություն, երկասիրություն) և այլն:
- Անհոդակապ հիմքերով բաղադրությունները ներկայացնում են (SS)s կաղապարը, հոդակապով հիմքերով բաղադրությունները՝ (SjS)s, հիմքի հնչյունափոխված բաղադրիչները տրվում են S ցուցիչով:

Ներկայացնենք այս հիմնականապարներն ըստ իրենց հիմքի կառուցվածքային գործոնների: Այսպես՝

1. (SS)s - այլազգի (հիմնականապար)
 1. ա. (SS)s - սիրերզակ
 1. բ. (S'S)s - դյուցազնաբար
 1. գ. (SS')s - ծովելուզակ
2. (SjS)s - այլախոհություն (հիմնականապար)
 2. ա. (SjS)s - երկասիրություն
 2. բ. (SjS)s - գրագրություն
 2. գ. (SjS')s - ծովազնացություն և այլն:

Այս կարգի վերլուծությունը կարելի է շարունակել այն բաղադրություններում, որոնց սերող երկհիմք կազմություններն ունեն ինչպես վերջածանց՝ նկարագրականություն [(SjS)s], այնպես էլ նախածանց՝ անշնորհակալություն [(s SjS')s] և այլն:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ - Ձևաբանական հարացույցների կաղապարները ներառում են թեքվող խոսքի մասերի՝ մասնավորապես գոյականի (ոչ ստորոգումային) և բայի (ստորոգումային) հարացույցների ձևայնացած նկարագրությունը:

Գոյականի և բայական բայաձևերի քերականական կարգերի (հարացույցներ) կաղապարները բնութագրվում են ըստ կարգերի քանակի, կարգանիշ ձևությունների դիրքի և պարտադրականության:

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՐԱՅՈՒՅՑԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ - Ըստ թվի

քերականական կարգի արտահայտության, տարբերակվում են բառական երկձևային և եռաձևային կառուցվածքներ (արտաքին թեքման դեպքում): Այդ հարացույցը եզակի թվում ունի երկձևային կառուցվածքի կաղապար, հոգնակիում՝ եռաձևային: Այսպես, *սեղանից* գոյականական բառաձևի համար կարելի է առաջարկել $S(+b)$ կառուցվածքային բանաձևը, որ նշանակում է՝

1. կաղապարը երկանդամ է՝ բաղկացած S գոյականական հիմքից և b հոլովանիշ մասնիկից,

2. S հիմքը նախորդում է b կարգի (հոլովանիշ) մասնիկին,

3. հոլովանիշ b կարգի մասնիկը հաջորդում է S հիմքին,

4. հոլովանիշ b կարգի մասնիկի առկայությունը պարտադիր չէ. S հիմքը կարող է հանդես գալ նաև առանց այդ մասնիկի. հմմտ. սեղան (S): Կառուցվածքային այս մոդելը փոխվում է նույն գոյականի հոգնակի թվի հոլովական հարացույցում:

Այսպես, *սեղաններից* բառաձևի համար առաջարկվում է $S(+a)(+b)$ կառուցվածքային բանաձևը, որ նշանակում է՝

1. կաղապարը եռանդամ է՝ բաղկացած S գոյականական հիմքից, a թվանիշ և b հոլովանիշ մասնիկներից,

2. S հիմքը նախորդում է a կարգի (թվանիշ), սա էլ b կարգի (հոլովանիշ) մասնիկներին,

3. թվանիշ (a կարգի) և հոլովանիշ (b կարգի) մասնիկները հաջորդում են հիմքին, ընդ որում, a կարգի մասնիկը հաջորդում է S հիմքին և նախորդում b կարգի մասնիկին, իսկ b կարգի մասնիկը, հաջորդելով a կարգի մասնիկին, եզրափակում է կաղապարը,

4. թվանիշ (a կարգի) և հոլովանիշ (b կարգի) մասնիկների առկայությունը պարտադիր չէ. S հիմքը կարող է հանդես գալ նաև առանց այդ երկու մասնիկների կամ դրանցից մեկնումեկի. հմմտ. [S] (սեղան), [$S(+a)$] (սեղաններ), [$S(+b)$] (սեղանից):

Սկզբունքորեն կառուցվածքային նույն կաղապարը կարող ենք ստանալ գոյականի առման քերականական կարգի մոդելավորման դեպքում:

Կառուցվածքային առումով իրարից չեն տարբերվելու *քաղաքը* և *քաղաքից* (-ի, -ով, -ում), մյուս կողմից՝ *քաղաքները* և *քաղաքներից* (-ի, -ով, -ում) բառաձևերի կաղապարները:

Տվյալ դեպքում հարցը քերականական կարգի նշույթավորմանն է վերաբերում (քերականական մասնիկի տառանվանմանը): Հմմտ. քաղաքը - $S(+p)$, քաղաքները - $S(+a(+p))$. հետևաբար գոյականի (եզակի թվի որոշյալ) առման քերականական կարգի կաղապարը երկձևային կառուցվածք է, հոգնակի թվինը՝ եռաձևային:

ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ - Դրանք դիտարկվում են ըստ բայաձևերի կառուցվածքային գործոնի: Այսպես, *խաղամ* և *գրեմ* բառաձևերի համար առանձնացվում է [S+c] կաղապարը, որ նշանակում է՝

1. կաղապարը երկանդամ է. այն բաղկացած է S հիմնային (խաղ-, գր-) ձևույթ(ներ)ից և c կարգի դիմաթվային մասնիկից,

2. S հիմնային ձևույթը նախորդում է դիմաթվային c կարգի մասնիկներին (-ամ, -եմ),

3. c կարգի դիմաթվային մասնիկները հաջորդում են S հիմնային ձևույթներին (խաղ-, գր-),

4. S հիմնային ձևույթներն առանց այդ մասնիկների հանդես գալ չեն կարող:

Այլ կառուցվածքի բայական բառույթի հարացուցային որևէ ձև ունենում է կաղապարային այլ բանաձև: Այսպես, *փախչեմ*, *չընկնեմ* հարացուցային ձևերի համար առաջարկվում է S+b+c կառուցվածքային բանաձևը, որ նշանակում է.

1. կաղապարը եռանդամ է. այն բաղկացած է S բայական հիմքից (փախ-, ընկ-), b կերպային (-չ-, -ն-) և c դիմաթվային կարգի մասնիկներից (-եմ, -եմ),

2. կերպային (b կարգի) մասնիկները հաջորդում են S բայական ձևույթին, c կարգի դիմաթվային մասնիկները եզրափակում են կաղապարները,

3. S հիմնային ձևույթը նախորդում է b կարգի կերպային մասնիկներին,

4. առանց b կարգի մասնիկների, S հիմնային ձևույթը չի կարող հարաբերվել c կարգի մասնիկներին,

5. S հիմնային ձևույթը առանց b և c մասնիկների առանձին հանդես գալ չի կարող. հմմտ. փախ-, ընկ-:

Նույն բայաձևերը, որպես այլ հարացույցի անդամ, բնորոշվում են կաղապարային այլ բանաձևով: Այսպես, *կփախչեմ*, *չընկնեմ* բայական բառաձևերի համար առանձնացվում է (a+)S+b+c կառուցվածքային բանաձևը, որ նշանակում է՝

1. կաղապարը քառանդամ է. այն բաղկացած է a (եղանակիչ ժխտական), b (կերպային), c (դիմաթվային) կարգի մասնիկներից և S բայական ձևույթից,

2. եղանակիչ և ժխտական՝ a կարգի մասնիկները նախորդում են հիմքին (արմատին), b կարգի մասնիկները՝ հաջորդում, իսկ c կարգի մասնիկները եզրափակում են կաղապարները,

3. a կարգի մասնիկների առկայությունը պարտադիր չէ (հմմտ. կփախչեմ > փախչեմ, չընկնեմ > ընկնեմ), իսկ b և c մասնիկների առկայությունը պարտադիր է. տվյալ կաղապարի բայաձևերը առանց այդ մասնիկների հան-

դես գալ չեն կարող, այսինքն՝ հնարավոր չեն *փախչ* և *ընկն* կամ *կփախ* և *չընկ* ոչ լիարժեք ձևերը,

4. առանց *Ե* կարգի կերպային մասնիկների *S* բայական հիմքը չի կարող հարաբերվել *Ե* դիմաթվային մասնիկներին:

Անշուշտ, բառաձևերի կառուցվածքային մոդելները պայմանավորված են լինում տվյալ միավորի կազմիչ տարրերի քանակով, որտեղ յուրաքանչ-յուր բաղադրիչ ունի որոշակի իմաստ՝ բառական կամ քերականական, սովորաբար բազմաբաղադրիչ կաղապարներում ավելի շատ են քերականական իմաստ արտահայտող մասնիկները:

Հայերենում, մասնավորապես գոյականի հոլովման համակարգում, քերականական տվյալ կարգին պատկանող իմաստները կարող են արտահայտվել ոչ թե մասնիկներով (մասնիկավորմամբ), այլ հերթագայությամբ (ներքին թեքմամբ): Այդ դեպքում ներքին թեքման միջոցները (հերթագայությունը կամ ձայնդարձը) հավասարեցվում են մասնիկներին և բերվում մասնիկների ձևով: Այսպես, սեղան բառի հարացուցային *սեղանից* բառաձևն ունի [*S(+b)*] կաղապարային բանաձևը. այդ բանաձևը կիրառելի է նաև *տուն* բառի հարացուցային՝ *տան* ձևի համար, որի կառուցվածքում առկա է ու > ա ձայնդարձը՝ *հ* նշույթով, հետևաբար նրա կաղապարը կլինի [*S(+h)*] բանաձևը: Թեև բառաձևի ձևության վերլուծության ժամանակ թեքականության ձևային դիտվում է ձուլված ձևային, որ փոխարինում է արմատի ձայնավորին, այնուամենայնիվ բառաձևի կաղապարավորման ընթացքում պետք է նշույթավորել քերականական իմաստի կրող մասնիկը:

Եթե մենք շարունակենք կաղապարավորել *տան* հիմքով կազմվող հոլովական հարացույցի մյուս ձևերը, ապա ստեղծվող մասնիկները (ըստ հոլովական իմաստների) կեզրափակեն կաղապարը (եզակի թվի դեպքում կունենանք կաղապարը եզրափակող մեկ մասնիկ): Այսպես, *տանից*, *տանով* հարացուցային ձևերի համար առաջարկվում է [*S(+h+(b))*] կառուցվածքային բանաձևը, որ նշանակում է.

1. կաղապարը եռանդամ է, որ բաղկացած է *S* հիմքից, *հ* (ներքին թեքման՝ ձայնդարձի), *Ե* կարգի (հոլովանիշ) մասնիկներից,

2. *S* գոյականական հիմքը չի կարող հանդես գալ առանց ներքին թեքման մասնիկի (*հ*). հետևաբար զրո ձևային առկայությունը պարտադիր է,

3. հոլովանիշ՝ *Ե* կարգի մասնիկի առկայությունը պարտադիր չէ, կաղապարը կարող է հանդես գալ նաև առանց այդ մասնիկի՝ *տան* ձևով և այլն:

Տարահիմքությունը, իբրև քերականական իմաստների դրսևորման միջոց, գործում է հիմնականում բայի խոնարհման համակարգում:

Այդպիսի բայերի կառուցվածքային մոդելն ունի իր յուրահատկությունները. արդի հայերենում որոշ բայերի անցյալ ժամանակի քերականական իմաստն արտահայտվում է այլ հիմքի միջոցով, ինչպես՝ *ուտել*, *լինել*,

զալ, որոնք համապատասխանաբար ունենում են *կեր*, *եղ*, *եկ* տարահիմք ձևերը:

Ներկա ժամանակում՝ *ուտում եմ*, *լինում եմ*, *զալիս եմ* բայաձևերը կունենան հետևյալ կաղապարը՝ $[S(+c^1)]+C$, որ նշանակում է.

1. կաղապարը եռանդամ է, բաղկացած է *S* բայական իմաստակիր ձևույթից, c^1 կարգի (դերբայական) և *C* կարգի (դիմաթվային) մասնիկներից,

2. *S* բայարմատը նախորդում է c^1 (դերբայական) մասնիկին, որին հաջորդում է *C* (դիմաթվային) մասնիկը՝ եզրափակելով կաղապարը,

3. *S* բայարմատն առանց c^1 (դերբայական) և *C* (դիմաթվային) մասնիկների հանդես գալ չի կարող, այսինքն՝ հնարավոր չէ *ուտ*, *լին* ձևերի գործածությունն առանձին բառական արժեքով (*զալ* բայահիմքը համընկնում է անորոշ դերբային և կարող է առանձին գործածվել. դա անկանոն բայի յուրահատկությունն է, որ կարելի է ցույց տալ կանոնավոր բայերի դեպքում, հմմտ. խաղալու եմ > խաղալ՝ դերբայական հիմքի դեպքում),

4. եռաբաղադրիչ կաղապարը վերլուծական կազմություն է, որ անդամատվում է երկու անմիջական կազմիչների՝ $S+c^1$ (բացարձակ հիմք + անկատար դերբայի մասնիկ = դերբայ) և *C* դիմաթվային ցուցիչ (որ համընկնում է օժանդակ բայի խոնարհված ձևին):

Այս բայերի տարահիմք կաղապարը ստանում ենք դրանց անցյալի ձևերը բանաձևելով, երբ անցյալի քերականական իմաստն արտահայտելու համար հանդես է գալիս նոր բայահիմք: Ընդ որում՝ տարահիմք կաղապարներն իրենց կառուցվածքով լինում են համադրական և վերլուծական: Այսպես, վերոբերյալ բայերն անցյալ կատարյալ ժամանակաձևում ունեն *կերա*, *եղա*, *եկա* ձևերը, որոնք դիտվում են համադրական կառուցվածքներ: Դրանց կաղապարն ունի հետևյալ բանաձևը $S+c$, որ նշանակում է.

1. կաղապարը երկանդամ է, այն բաղկացած է *S* բայահիմքից (աորիստից) և *c* (դիմաթվային) մասնիկից,

2. *S* բայահիմքը նախորդում է *c* (դիմաթվային) մասնիկին, որը եզրափակում է կաղապարը,

3. *S* բայահիմքը առանց *c* (դիմաթվային) մասնիկի կարող է հանդես գալ ինչպես բայական համակարգում, այնպես էլ բառակազմական մակարդակում:

Անցյալի հիմքից կազմվող որոշ ձևերում այդ բայերի կաղապարը դիտվում է վերլուծական, որ անդամատվում է *բայահիմք + օժանդակ բայ* բաղադրիչների: Այսպես, *կերել եմ*, *եղել եմ*, *եկել եմ* բայերի վերլուծական կաղապարը կունենա $[S^a + c^3]+C$ բանաձևը, որ նշանակում է.

1. կաղապարը եռանդամ է, այն բաղկացած է S^a բայահիմքից (աորիստից), c^3 կարգի (վաղակատար դերբայի) և *C* (դիմաթվային) մասնիկներից,

2. դերբայական՝ c^3 և դիմաթվային՝ *C* կարգի մասնիկները հաջորդում են S^a բայահիմքին,

3. կաղապարը անդամատվում է $S^2 + C^3$ (դերբայ) բաղադրիչի և C դիմաթվային ցուցիչի, որ համընկնում է օժանդակ բայի խոնարհված ձև(եր)ին և այլն:

Ձևաբանական կաղապարների քննությունն ու դրանց օրինաչափությունների բացահայտումը կարող է ամբողջացնել ոչ միայն ձևաբանական մակարդակի միավորների ձևայնացած նկարագրությունը, այլև լեզվական միավորների կաղապարավորման գործընթացի էությունն ընդհանրապես:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Է.Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:

Առաքելյան Վ. Դ., Խաչատրյան Ա. Հ., Էլոյան Ս. Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979:

Բեդիրյան Պ. Ս., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973:

Խաչատրյան Լ. Ս., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:

Խաչատրյան Լ.Ս., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:

Խաչատրյան Լ.Ս., Բառաշխարհի գաղտնիքները. հունալատինական փոխառություններ, Ե., 2014:

Խաչատրյան Լ.Ս., Հետաքրքրաշարժ լեզվաբանություն, Ե., 2010:

Խաչատրյան Լ.Ս., Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:

Խաչատրյան Լ.Ս., Միրումյան Մ.Վ., Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան, Ե., 2020:

Մարգարյան Ա.Ս., Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Ե., 1990:

Մարգարյան Ա.Ս., Ժամանակակից հայոց լեզու (բառագիտություն), Ե., 1993:

Միրումյան Մ.Վ., Հայոց լեզու. Տեսական և գործնական դասընթաց (Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), Ե., 2012:

Մուրադյան Մ.Հ., Բառագիտություն. «Հայոց լեզվի պատմական քերականություն», II, Ե., 1975:

Պետրոսյան Հ.Զ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Ջահուկյան Գ.Բ., Աղայան Է.Բ., Առաքելյան Վ.Վ., Քոսյան Վ.Ա., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Ե., 1980:

Սուքիասյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1984:

Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.

Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.

Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.

Общее языкознание, Внутренняя структура языка, М., 1972.

Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.

Тихонов А.Н., Словообразовательный словарь русского языка, тт. 1-2, М., 1985.

Хачатрян Л.М., Мирумян М.В., Структура макросистемы лингвистических терминов, Международная научно-практическая конференция. "Глобализация науки: проблемы и перспективы", 22 Мая, 2017, стр. 39-44, г. Краснодар.

Хачатрян Л.М., Мирумян М.В., Вопросы полифункциональности лингвистических терминов, European Journal of Humanities and Social Sciences, "East West" Association for Advanced Studies and Higher Education, GmbH. Vienna, N 3, 2017, стр. 23-27. Широков О.С., Введение в языкознание, М., 1985.

4. ԲԱՌԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բառագիտության բաժին, որ զբաղվում է բառարաններ կազմելու տեսական ու գործնական խնդիրներով: Բառարանագիտության առարկան բառարաններ կազմելու տեսության մեթոդիկայի և սկզբունքների մշակումն է, իսկ բառարանագրական պրակտիկան բառարանի կազմումն է, բառարանագիրների աշխատանքի կազմակերպումը, քարտարանի համակարգումն ու պահպանումը, որոնց հիման վրա կազմվում են բառարանները, այնուհետև տպագրվում:

ԲԱՌԱՐԱՆ - Բառարանը տեղեկատու-ինֆորմացիոն գիրք է, որի մեջ հավաքված և հիմնականում այբբենական կարգով դասավորված են տվյալ լեզվի բառական միավորները (բառեր, ձևույթներ, դարձվածային միավորներ և այլն), տրված են դրանց բացատրությունը, թարգմանությունը այլ լեզվի (լեզուների), ինչպես նաև տրված են այլ բնույթի տեղեկություններ: Բառարաններ կազմելու տեսական ու գործնական խնդիրներով զբաղվում է բառարանագիտությունը: Բառարանագիտության առարկան բառարաններ կազմելու տեսության մեթոդիկայի և սկզբունքների մշակումն է, իսկ բառարանագրական պրակտիկան բառարանի կազմումն է, բառարանագիրների աշխատանքի կազմակերպումը, քարտարանների համակարգումն ու պահպանումը, որոնց հիման վրա կազմվում են բառարանները և հետո տպագրվում: Բառարանագիտության տեսության առանցքային հարցերն են՝ *բառարանի կառուցվածքը, բառացանկը (բացատրվող և թարգմանվող բառա-կազմը), բառահոդվածը, անդրլեզուն, բառարանի տեսակները* և այլն:

ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ - Այն ներառում է բառարանի կառուցման սկզբունքները, բառարանի բովանդակությունը և նյութի մատուցման յուրահատկությունները: Բառարանի կառուցվածքը պայմանավորված է նրա տեսակով, որից բխում են նրա նպատակները, ինչպես՝ հանրագիտական, բացատրական, թարգմանական, արմատական (ստուգաբանական), դարձվածաբանական, բարբառային, բառակազմական, անձնանունների, տեղանունների և այլն:

Սովորաբար բառարանը կազմված է լինում երեք բաժնից՝ ներածություն, բուն բառարան, հավելված:

Ներածական մասում հեղինակը բացատրում է բառարանի կառուցվածքը, ցույց տալիս նրանից օգտվելու կարգը, ըստ բառարանի նպատակների՝ տալիս է տեսական բացատրություն լեզվական տվյալ իրողության և նրա ներկայացման վերաբերյալ: Եթե բառարանն արմատական է, ապա տրվում են այն մատուցելու սկզբունքները, բառահոդվածի բաժինները, բովանդակությունը: Եթե հոմանիշների բառարան է, ապա տրվում են հոմա-

նիշների տեսությունը, հոմանիշների դասակարգումները, ընդունված խմբավորումները: Եթե բացատրական է, ապա ներկայացվում է լեզվի բառային կազմը, բացատրվում են բառերի իմաստները: Եթե բառակազմական բառարան է, ապա տրվում են լեզվի բառակազմության միջոցներն ու եղանակները և այլն: Այս բաժնում տրվում են համառոտագրությունները, որոնք ներկայացնում են բնագրային օրինակների սկզբնաղբյուրների հեղինակներին, քերականական նշումները, բառագործածության ոլորտները, փոխառության աղբյուրները և այլն:

Բուն բառարանի մասում ներկայացվում է բառարանի բառացանկը՝ համապատասխան մեկնաբանություններով: Սա կազմում է ցանկացած բառարանի միջուկը, որի մատուցման ձևով պայմանավորված է բառարանի կառուցվածքը (կառուցվածքային տեսակը): Ժամանակակից բառարանագրության մեջ ընդունված են *նյութի մատուցման հետևյալ եղանակները*՝

ԲԱՌԱՅԱՆԿ - Բառարանում ընդգրկված լեզվական միավորների ցանկ, որի ծավալը որոշվում է բառարանի տեսակով (նպատակով): Եթե բառարանը հավակնում է ներկայացնել տվյալ լեզվի ամբողջական բառային կազմը (ըստ լեզվի զարգացման շրջանների, հասարակական և տարածքային տարբերակների, ըստ գործառական ոճերի և այլն), ապա նման բառարանի բառացանկն զգալիորեն մեծ պետք է լինի, իսկ եթե այն ներկայացնում է, օրինակ, լեզվի դարձվածանին, ապա նրա բառացանկը համեմատաբար սահմանափակ է՝ պայմանավորված տվյալ լեզվի դարձվածքների քանակով և այլն:

Միևնույն տեսակի բառարանի բառացանկը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված բառարանի նպատակով, այսինքն՝ ո՛ւմ է այն հասցեագրված: Եթե բառարանը ներկայացնում է լեզվաբանական բոլոր տերմինները, ապա այն պետք է բավական ծավալուն բառակազմ ունենա, իսկ եթե նույն բառարանը հասցեագրված է դպրոցին, ուրեմն՝ նրա բառացանկը համեմատաբար համառոտ պետք է լինի՝ պայմանավորված դպրոցական դասընթացում հանդիպող լեզվաբանական տերմինների քանակով և այլն:

Բառացանկը կարող է ընդգրկել ձևույթներ (ձևույթների բառարանում), բառեր (բացատրական, հոմանիշների, բարբառային, արմատական, թարգմանական և այլ բառարաններում), բառաձևեր (քերականական բառարաններում), բառակապակցություններ (դարձվածաբանական բառարաններում) և այլն:

Այբբենական - Սա համարվում է նյութի մատուցման ավանդական սկզբունք. բառահոդվածները (բառացանկը) դասավորված են այբբենական կարգով, ընդ որում, աստիճանական-հաջորդական կարգով. ինչպես՝ **քաղաք** գլխաբառին հաջորդելու են՝ *քաղաքաբերդ, քաղաքաբնակ, քաղաքագետ, քաղաքագիր, քաղաքագլուխ, քաղաքագյուղ, քաղաքագրություն, քաղաքա-*

դուռ, քաղաքադուռ, քաղաքաձայր, քաղաքական, քաղաքականություն, քաղաքակիրթ և այլն: Բառերի այլ դասավորությունն այս սկզբունքի տակ չի կարող մտնել:

- Այբբենական սկզբունքով կազմված բառարանի տարատեսակներից է **հակադարձ սկզբունքը**. այս եղանակով կազմված բառարանում բառահոդվածները տրվում են վերջին տառերի այբբենական կարգով (տե՛ս **Հակադարձ բառարան**):

- Բառարանագրական մեկ այլ եղանակի համաձայն, բառահոդվածները տրվում են ոչ թե այբբենական կարգով, այլ *փնջային սկզբունքով*:

Փնջային սկզբունք - Նյութի մատուցման այս եղանակի դեպքում ընդհանուր արմատից հետո տրվում են բոլոր այն կազմությունները, որոնք սերում են գլխաբառից: Գլխաբառից և նրա քերականական նշումներից հետո բերվում են տվյալ հիմքով ածանցավոր բառերի և բարդությունների բառափնջերը (տե՛ս **Բառակազմական բառարան**): Այս կարգի բառարանում ընդգրկվում են այն բառերը, որոնք բաղադրություններ են (բաղադրված են միևնույն սերող հիմքով):

Օրինակ, այդպիսի բառարանում **խաղ** գլխաբառից հետո տրվում են տվյալ հիմքով բարդությունները, ածանցավոր բառերը՝ համապատասխան քերականական նշումներով, ինչպես՝ *խաղագնդակ, բառախաղ, խաղագումար, խաղադաշտ, թղթախաղ, խաղաթուղթ, մնջախաղ, խաղալ, խաղային* և այլն:

Թեմատիկ-իմաստային սկզբունք - Այս կարգի բառարաններում բառահոդվածները տրվում են ըստ իմաստային-թեմատիկ սկզբունքի, օրինակ, մեկ իմաստային-թեմատիկ խմբի տակ տրվում են տվյալ խմբին պատկանող բառերը՝ համապատասխան բացատրություններով, ինչպես՝ *տիեզերք, երկրագիտություն, ջրային ավազան, ճարտարապետություն* և այլ իմաստային-թեմատիկ խմբերի բաժինները ներառում են միայն այն բառերը, որոնք վերաբերում են տվյալ իմաստային-թեմատիկ խմբին:

ԲԱՌԱՆՈՂՎԱԾ - Բառարանի բաղադրիչ, որ նվիրված է բառարանի ընդհանուր բառացանկի յուրաքանչյուր միավորի նկարագրությանը: Բառահոդվածն սկսվում է *գլխաբառի* մատուցումով, որ տրվում է ելակետային ձևով. գոյականի դեպքում՝ եզակի ուղղականը, բայի դեպքում՝ անորոշ դերբայը և այլն: Որոշ դեպքերում բայ խոսքի մասի գլխաբառ է դառնում սահմանական եղանակի ներկա ժամանակի առաջին դեմքի ձևը: Օրինակ, բայերն այդպես են տրված գրաբարի հայտնի բառարանագրական հուշարձաններում («Նոր բառգիրք հայկազեան լեզուի» և «Առձեռն բառարան հայկազեան լեզուի»), ինչպես նաև Ի.Դվորեցկու «Латинско-русский словарь» աշխատանքում և հին լեզուներին վերաբերող այլ բառարաններում:

Բառահոդվածում տեղեկություն է տրվում գլխաբառի քերականական հատկանիշների, ուղղագրության, արտասանության և շեշտի մասին. նրան կից տրվում են բառային տարբերակները, հաճախ՝ հոմանիշներն ու հականիշները, որոշակի տեսակի բառարաններում բերվում են բնագրային օրինակներ գլխաբառի բառաքերականական առանձնահատկությունները ցույց տալու համար:

Բառահոդվածները, պայմանավորված բառարանի տեսակով, ունեն իրենց առանձնահատկությունները: Այսպես, *բացատրական բառարանների* բառահոդվածները հանրագիտական բառարանների բառահոդվածներից տարբերվում են նրանով, որ առաջինում տրվում են բառի բացատրությունը, նրա ուղղակի և փոխաբերական իմաստները, վկայվում են բնագրային օրինակներ, գլխաբառով կազմված կայուն կապակցություններ, գլխաբառից անմիջապես հետո նշումների ձևով տրվում են նրա քերականական հատկանիշները և այլն (տե՛ս **Բացատրական բառարան**): *Հանրագիտական բառարանների* բառահոդվածներում տրվում են գլխաբառերը կամ բառակապակցությունները, երբեմն նաև օտարալեզու (հունարեն կամ լատիներեն) համարժեքներով, այնուհետև առարկայի, իրադարձության կամ հասկացության նկարագրությունը: Որպես օրենք՝ բառահոդվածն ավարտվում է թեմային վերաբերող մասնագիտական գրականության ցանկով (տե՛ս **Հանրագիտական բառարան**):

Արմատական կամ *ստուգաբանական* բառարաններում բառահոդվածը նվիրված է լինում առանձին բառերի կամ ազգակից բառաբների ուսումնասիրությանը: Բառահոդվածում բացահայտվում են տվյալ բառի ծագմանաբանական ընդհանրությունները ցեղակից լեզուների բառային զուգորդումների հետ, վերականգնվում են հին ձևերը, հաճախ տրվում են տվյալ բառի ստուգաբանությանը վերաբերող տեսակետները, ընդգծվում են առավել հավաստի արժեք ունեցող ստուգաբանական փորձերը և այլն (տե՛ս **Ստուգաբանական բառարան**):

Թարգմանական բառարանների բառահոդվածները տարբերվում են մյուս բոլոր տեսակի բառարանների բառահոդվածներից. նրանք բաղկացած են թարգմանվող գլխաբառի թարգմանական համարժեքից՝ արտահայտված հոմանիշ բառերով, բառակապակցությամբ կամ նախադասությամբ, գլխաբառով կազմված կայուն կապակցությունից և դրա թարգմանական համարժեքից, գլխաբառին վերաբերող քերականական նշումներից, որոնք ցույց են տալիս ելակետային լեզվում տվյալ բառի քերականական բնութագրերը և այլն (տե՛ս **Թարգմանական բառարան**):

ԱՆԴՐԼԵԶՈՒ - Բառարանի անդրլեզվի մեջ մտնում են բառի յուրահատուկ բացատրական նշումները, հղումները, համառոտագրությունները, պայմանական նշանները (թիվդան, շեղանկյունը, տարբեր տառատեսակներ-

րը, աղյուսակները, գծապատկերները, նկարները և այլն): Անդրլեզվի հիմնական տարրերն են.

Բառիմաստի բացատրություն - Անդրլեզվի այս բաղադրիչը բացատրական բառարանի կենտրոնական մասերից մեկն է: Բառիմաստի բացատրությունը նախատեսում է բացահայտել մենիմաստ և բազմիմաստ բառերի նշանակությունները: Բառի նշանակությունների քանակի և աստիճանակարգության բացահայտումը կանխորոշում է բառահոդվածի կառուցվածքը: Բացատրական բառարաններում տարբերակվում են նշանակությունների մի քանի տեսակներ՝ *փոխաբերական, տերմինաբանական (մասնագիտական) և դարձվածային*, որոնք ուղեկցվում են համապատասխան նշումներով:

Բառի նշանակության բացատրությունը ներառում է նրա ներքին բովանդակության բացահայտումը, լեզվի այլ բառերի հետ ունեցած կապերի վերհանումը, տվյալ լեզվում բառագործածության կանոնարկումը և այլն: Ի տարբերություն պատմական և բարբառային բառարանների, բացատրական բառարանը նպատակ ունի ոչ միայն հաղորդելու տվյալ բառի բոլոր նշանակությունները, այլև նպաստելու բառի նշանակության ճիշտ ընկալմանն ու ճիշտ գործածությանը: Այսպես, *պայթուցիկ* բառը (ըստ Էդ. Աղայանի բառարանի) ունի «պայթյուն առաջացնող», «պայթելու հատկություն ունեցող» և «պայթուցիկ նյութ» ուղիղ իմաստներ, «պայթական» իմաստով լեզվաբանական հնացած տերմին է, իսկ «բուռն, ուժգին» և «հնչեղ, աղմկալից» իմաստներով ունի փոխաբերական նշանակություններ և այլն:

Ժամանակակից բառարանագրության մեջ օգտագործում են բառիմաստի բացատրության տարբեր եղանակներ: Դրանցից հիմնական են համարվում իմաստային կամ նկարագրական սահմանումը, հոմանիշներով սահմանումը, բառակազմական սահմանումը, հղման կարգով սահմանումը (հղումը հոմանշային տարբերակի մատնանշումն է, որը տրվում է *տե՛ս* նշանով):

Իմաստային սահմանում - Վեր է հանում բառով արտահայտված հասկացության բովանդակությունն ու նրա ծավալը, ինչպես նաև ցույց է տալիս բառի և իրի կապը: Իմաստային սահմանումը ներառում է ընդհանուր (սեռային) և տարբերակիչ (տեսակային) հատկանիշներ: Ընդհանուր հատկանիշի և առարկայական վերաբերության առկայությունը իմաստային սահմանումը դարձնում է ակնառու-պատկերավոր: Այսպես, քաղաք բառի իմաստային սահմանումը, որպես «խոշոր բնակավայր», պարունակում է երեք հատկանիշ՝ տեղ, բնակչություն և մեծություն, ընդ որում, ընդհանուր հատկանիշը (բնակավայր) որոշարկվում է որպես «տեղանք տարածության մեջ» և այլն:

Հոմանշային սահմանում - Բառի նշանակության սահմանումն է այլ հոմանիշ բառերի կամ բառակապակցությունների միջոցով, որոնք ավելի հայտնի են և հասկանալի: Օրինակ, Էդ.Աղայանի բառարանում Պերճ գլխա-

բառը բացատրված է հետևյալ հոմանիշներով. 1. Շքեղ, զարդարուն, պաճուճված: 2. Փարթամ, ճոխ, հարուստ: 3. Հոյակերտ, հոյաշեն, հոյակապ: 4. Գեղեցիկ: 5. Վեհ, բարձր զգացումներով՝ զաղափարներով տոգորված: 6. Զարդարուն, ճոխ և ընտիր: 7. Վսեմ, մեծ բովանդակություն՝ նշանակություն՝ իմաստ ունեցող:

Բառակազմական սահմանում - Կիրառվում է ածանցավոր բառերի իմաստի բացատրության դեպքում. բացատրությունը տրվում է այն բառի նշումով, որից կազմված է ածանցավոր բառը: Օրինակ, քաղաքային, քաղաքացի և նման բառերի բացատրությունը տրվում է՝ հղում կատարելով այդ բառերի բառակազմական հիմքին և նրա իմաստին (քաղաք). հմմտ. քաղաքային - «քաղաքին հատուկ՝ վերաբերող», քաղաքացի - «քաղաքի բնակիչ», նմանապես՝ քաղաքացիություն, քաղաքացիական բառերի դեպքում հղում է կատարվում քաղաքացի բառակազմական հիմքին ու նրա իմաստին: Նույնը կատարվում է փաղաքշական ածանց ունեցող բառերի դեպքում, այսպես՝ քաղցրիկ փղքշ. քաղցր բառի, соловушка -ն փղքշ. соловей բառի և այլն:

Հաճախ բառակազմական սահմանումը պարունակում է բառակազմական վերլուծություն, հմմտ. *պատվոգիր* – պատվո (պատվի) գիր՝ (գրություն), *չարադաժան* – չար և դաժան, *հուսակտուր* – հույսը կտրած և այլն:

ԲԱՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - Գլխաբառից հետո տրվում են նրա քերականական կարգերը՝ խոսքիմասային արժեքը, սեռը, հոլովիչ- (ներ)ը, հոլովման բնույթը, հոգնակի թիվը՝ գոյականի (հմմտ. ՆՀԲ-ում՝ *Մասն*, սին, սունք, սանց, գ.), սեռը, երկրորդ հիմքի կազմությունը՝ բայի դեպքում (հմմտ. *պատմագրեն*, եցի, ն.) և այլն: Տրվում են նաև բառի բառակազմական և հնչյունական տարբերակները (հմմտ. Յաւէժ - Յաւէտ, Վայրկէան – Վայրկենի, Աղօթկէար - Աղօթկեր, Միջօրէայ - Միջօրէ), համադրական և վերլուծական տարբերակները (Մահու չափ - Մահուչափ, Ակն ունել - Ակնունել) և այլն:

ՈՃԱԿԱՆ ՆՇՈՒՄ - Այն ցույց է տալիս *գրքային և խոսակցական ոճերի* տարբերակումները: Գրքային ոճի նշումներ են դիտվում՝ գրք. (գրքային), բնստ. (բանաստեղծական), հրալիս. (հրապարակախոսություն), պշտն. (պաշտոնական), գիտ. (գիտական), ճրտս. (ճարտասանություն) և այլն: Խոսակցական ոճի նշումներ են համարվում՝ խսկց. (խոսակցական), հարկ. (հասարակաբանություն), գոհկ. (գոեհկաբանություն) և այլն: Ոճական նշումները միաժամանակ ցույց են տալիս նաև բառերի *հուզարտահայտչական* հատկանիշները, ինչպես՝ հեզն. (հեզնական), ծաղր. (ծաղրական), արհմրհ. (արհամարհական) և այլն: Նշումները ցույց են տալիս բառերի *պատմական բնութագիրը*. պատմ. (պատմական), հնց. (հնացած), հնբ. (հնաբանություն), նորաբ. (նորաբանություն), նաև՝ բառագործածության *մասնագիտական*

բնագավառները՝ աստղգ. (աստղագիտություն), լեզվբ. (լեզվաբանություն), բժշկ. (բժշկություն), գտնտ. (գյուղատնտեսություն) և այլն: Ոճական նշումները կարող են հանդես գալ ինչպես առանձին (տե՛ս բերված օրինակները), այնպես էլ միասին (օր.՝ հնգ. և բնաստ., ծաղր. և արհմրհ.) և այլն:

ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՈՒ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ – Դրանք անդրլեզվի մնացած մասերից առանձնանում են նոր պարբերությամբ, շեղանկյունաձև նշանով կամ այլ միջոցներով: Այսպես, Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» *Չար* գլխաբառի բառահոդվածում բացատրված են նրա 18 նշանակությունները, որից հետո գծիկով (-) և թավ տառատեսակով տրված են *չար* բաղադրիչով կազմված 19 կայուն կապակցություններ (հիմնականում դարձվածային միավորներ)՝ իրենց բացատրություններով՝ - *Չար աչք*, - *Չար աչքի գալ*, - *Չար աչքի դիպչել*, - *Չար աչքից հեռու*, - *Չար աչքով նայել*, - *Չար աչքով տալ*, - *Չար աստղի տակ ծնվել*, - *Չար լեզու*, - *Չար լեզուներն ասում են*, - *Չար խաղ*, - *Չար խաղ խաղալ*, - *Չար հոգի՝ ողի* և այլն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՂ ՕՐԻՆԱԿ - Այն բերվում է բառակապակցությամբ կամ նախադասության տեսքով՝ քաղված հեղինակային ստեղծագործություններից: Պարզաբանող օրինակներն ամբողջացնում են բառերի իմաստային-քերականական յուրահատկությունների բնութագիրը, բացահայտում են նրանց գործառական բնագավառները, ցույց տալիս կապակցելիական հնարավորությունները, նրանց գործառույթն ազատ և կայուն կապակցություններում, ընդգծում նրանց կանոնական բնույթը, նշում գրական նորմայից և լեզվի ոճական համակարգից կատարված շեղումները և այլն: Պարզաբանող օրինակները դառնում են ուղեցույցներ ժամանակակից բառագործածության հարցերում:

Օրինակ, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր բառարանը գրաբարի բոլոր բառերի և նրանց տարբեր իմաստների համար վկայում է բնագրային օրինակներ՝ քաղված գրաբար մատենագրությունից, տարաբնույթ թարգմանական գրականությունից և այլ կարգի գործերից:

Վկայենք պարզաբանող օրինակի նմուշ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատությունից.

ԲԱԶՄՕՐԵԱՅ, բէի, ից. ա Բազում աւուրց. ի բազում աւուրց հետէ եղեալ, և տնօղ ընդ բազում աւուրս. *Եւ եղիցես իբրև զկին մի սգացեալ ի վերայ բազմօրեայ մեռելոյ (Բ Թագ., ԺԴ, 2): *Մեղքն, որ (ի) հին բազմօրեայ ժամանակաց հնազանդեն զիս (Եփր. Հո): *Ահա վկայութիւն Աստուծոյ բազմօրեայ (Միսիան): *Իբրև զբազմօրեայ հիւանդ (Եղիշ. Ը): *Ի սաստկութենէ բազմօրեայ տքնութեանց կիսամեռք եղեն (Փարս.): *Եօթներեկաւն զաւագսն և զբազմօրեայ տօնս բաշխեալ ետ (Փիլ. Ժ. Բան): Ոիս բազմօրեայ ունիցի (Մանդ. ի ցանկն):

Կամ *ւ/* Ընդ բազում աւուրս. զաւուրս բազումս: Եւ այնպէս բազմօրեայ հանգուցեալ ի վաստակաբեկ աշխատութեանցն (Կադկանտ):

ԲԱԶՄՕՐԵԱՅ, Երկայնակեաց. բազմամեայ. հին աւուրց. *Բազմօրեայ լինիցիս, կամ եղիցիս ի վերայ երկրի (Օրին. Իբ. Իէ. Լ): Իսկ ԺԱ, 21. *Բազմօրեայք լինիցիք և աւուրք որդւոց ձերոց ի վերայ երկրին,,. յն. Բազմասցին աւուրք ձեր, և աւուրք որդւոց ձերոց:

ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ - Ըստ բառարանի նշանակության և նկարագրվող առարկայի բնույթի՝ բառարանները բաժանվում են հանրագիտական և լեզվաբանական (բանասիրական) տեսակների:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ – Այս կարգի բառարաններում տրվում է ոչ թե բառի բացատրությունը, այլ բերվում են հասկացություններ, որոշակի առարկաների, երևույթների, պատմական դեպքերի անվանումներ, հասարակական-քաղաքական կյանքի տարաբնույթ փաստեր, տնտեսության, գիտության և տեխնիկայի ու արվեստի բնագավառի տերմիններ, նշանավոր մարդկանց կենսագրություններ և այլն: Ըստ հետազոտության առարկայի բնույթի և շրջանակների (ծավալի)՝ հանրագիտական բառարանները լինում են *ընդհանուր*, *մասնավոր* կամ *ճյուղային* և *տարածաշրջանային* (*ռեգիոնալ*):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Բովանդակում են բոլոր գիտությունների, արհեստների, արվեստների, հասարակական կյանքի բոլոր բնագավառների հասկացությունները և տալիս են դրանց մեկնաբանությունը:

Ընդհանուր հանրագիտական բառարաններ են՝

Большая советская энциклопедия (тт. 1-30, М., 1970-1978).

Большой энциклопедический словарь /гл. ред. А. М. Прохоров.- М., СПб., 2001.

Большой российский энциклопедический словарь, М., 2003.

Հայաստան հանրագիտարան, հհ. 1-2, ՀՀ ԳԱԱ, Ե., 2009:

Հայկական սովետական հանրագիտարան (12 հատոր + մեկ լրացուցիչ հատոր), Ե., 1974-1987:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ հանրագիտական բառարանից («Հայկական սովետական հանրագիտարան»).

ԱԼՈԳԻԶՄ (< հուն. *ἀ* ժխտական մասնիկ+*λογισμός*), ճանաչողության մեջ տրամաբանության դերի ժխտում: Վկայակոչելով ձևական տրամաբանության միջոցով շարժումը բացատրելու անհնարինությունը՝ Ա-ի պաշտպանները (Ա.Շոպենհաուեր, Ֆ.Նիցշե, Ա.Բերգսոն և ուրիշներ) փորձում են ժխտել մարդկային բանա-

կանության հնարավորությունները՝ դրանց հակադրելով ինտուիցիան, բնագործ, հավատը են: Ա. հիմքից մերժվում է ճանաչողության պրոցեսի դիալեկտիկական մեկնաբանությամբ:

ՄԱՍՆԱՎՈՐ (ՃՅՈՒՂԱՅԻՆ) ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ - Վերաբերում են գիտության, արվեստի տարբեր ճյուղերին և հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ինստիտուտներին, ինչպես՝ Աստվածաշնչին, բժշկությանը, գրականությանը, լեզվաբանությանը, թատերական արվեստին, դիցաբանությանը, երաժշտությանը, աշխարհագրությանը, կինոարվեստին, քաղաքականությանը, տնտեսագիտությանը, լեռնային հանքարդյունաբերությանը (պինդ, հեղուկ և գազային օգտակար հանածոներին), գյուղատնտեսությանը, դեղագործությանը, բուսաբանությանը, փիլիսոփայությանը, մանկական աշխարհին, պատմությանը, բանասիրությանը, կենսաբանությանը, ֆիզիկային, կիբեռնետիկային, տարրական մաթեմատիկային, կրոնական հոսանքներին, նորաձևությանը (մոդային) և այլն:

Հայերեն մասնավոր հանրագիտական բառարաններն ի սկզբանե հրատարակվել են Վենետիկում՝ Մխիթարյան Միաբանության հոգևոր այրերի աշխատասիրությամբ: Դրանցից են՝

Բժշկյան Մ., Ճեմարան գիտելեաց, որ է համառօտ տեղեկութիւն հարկաւոր գիտութեանց ազատական արուեստից (գրաբար), Վենետիկ, 1815: Աշխատության մեջ նախ՝ չափածո, քառատողերի ձևով տրվում է բուն նյութը, և ապա՝ տողատակերում արձակ շարադրվում են տվյալ գիտությանն առնչվող տարաբնույթ արժեքավոր տեղեկություններ:

Ռեստէն Մ., Բառարան բժշկական բառից (գրաբար), Վենետիկ, 1822: Ինըլեզվյան՝ լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, յունարեն, արաբերեն, պարսկերեն, տաճկերեն և հայերեն բժշկական բառարան է:

Քաջունի Մ., Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց (գրաբար), հհ. Ա-Գ, Վենետիկ, 1891 - 1893: Ընդհանուր ծավալը 2325: Հանրագիտարանի սկզբունքով նախ տրվում է հոդվածի ֆրանսերենը և ապա՝ հայերենը:

Ալիշան Ղ., Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն (աշխարհաբար), Վենետիկ, 1895: Տրված են հայկական բնաշխարհի շուրջ 3400 բույսերի և ծաղկատեսակների անունները, նկարագրությունը, ինչպես նաև կիրառությունը բժշկության մեջ:

Երեմեան Ս., Պատկերազարդ բառգիրք գործնական գիտութեանց (աշխարհաբար), Վենետիկ, 1900: Քննարկված են բնական գիտությունների գրեթե բոլոր բնագավառները:

Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ.1, Վենետիկ, 1900, հ.2, Կ.Պոլիս, 1905:

20-րդ դարում և 21-րդ դարասկզբին Հայաստանում հրատարակվել են

ճյուղային հանրագիտարաններ, որոնք վերաբերում են արվեստի և գիտության տարբեր ճյուղերին, բժշկությանը, լեզվաբանությանը, գյուղատնտեսությանը և այլ ոլորտների: Դրանցից են՝

Աստվածաշնչի հանրագիտարան, Ե., 1999:

Դպրոցական մեծ հանրագիտարան, գ. 1-2, Ե., 2009-2010:

Քրիստոնյա Հայաստան, Հանրագիտարան, Ե., 2002:

Գյուղատնտեսական հանրագիտարան, Ե., 2015:

Հանրամատչելի բժշկական հանրագիտարան, Ե., 2001:

Երաժշտական հանրագիտարան, հհ. 1-6, Ե., 1973-1983:

Ֆիզիկական հանրագիտական բառարան, հհ. 1-5, Ե., 1960 – 1966:

Հ.Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ մասնավոր (ճյուղային) հանրագիտարանից (Հ.Զ. Պետրոսյան, «Հայերենագիտական բառարան»).

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ || **семасиология, семантика**, լեզվաբանական գիտաճյուղ (հաճախ սա դիտում են իբրև բառագիտության բաժին), որն ուսումնասիրում է ձևաիմաստային միավորների (արտահայտության ու բովանդակության պլաններով բնորոշ տարրերի)՝ բառերի, ձևույթների, բառաձևերի, բառայնացած կայուն բառակապակցությունների, դարձվածքների, լայն ընդգրկումով նաև շարահյուսական կառույցների իմաստային՝ բովանդակային կողմը, պարզաբանում է իմաստների բնույթը, տեսակները, դրանց փոխհարաբերակցությունները, պատմականորեն կրած փոփոխությունները և հարակից այլ հարցեր: Անցյալում լեզվական միավորների իմաստաբանական կողմը համեմատաբար քիչ է դիտարկվել, մեծ մասամբ դրան անդրադարձել են բառարանագրության, ստուգաբանության խնդիրների հետ կապված: Սակայն երկար ժամանակ (այժմ էլ) իմաստաբանության հարցերը գտնվել են նաև փիլիսոփաների, հոգեբանների, տրամաբանների և այլ մասնագետների ուշադրության կենտրոնում: Սակայն բուն լեզվաբանական դիտարկումները ամբողջական ուսմունքի տեսք ստացան ավելի ուշ: Այժմ իմաստաբանությունը ճանաչված է իբրև լեզվաբանության առաջնակարգ բնագավառներից մեկը:

Գրկն. **Աղայան Է. Բ.**, Լեզվաբանության ներածություն, Ե., 1967: Տե՛ս նաև բառագիտություն բառահոդվածի գրականության ցանկը:

Ռուսական բառարանագրական ավանդույթը հարուստ է ճյուղային հանրագիտարաններով, որոնք վերաբերում են արվեստի, գիտության և հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր բնագավառներին: Դրանցից են՝

Детская энциклопедия, тт. 1-12, М., 1964-1968.

Краткая литературная энциклопедия, тт. 1-9, М., 1962-1968.

Л.Кибалова, О.Гербенова, М.Ламарова, Иллюстрированная энциклопедия моды, Прага, 1986.

Encyclopedie du protestantisme, Genève, 1995.

- Горная энциклопедия, тт. 1-5, М., 1984-1991.
- Кинословарь, тт. 1-2, М., 1966-1970.
- Музыкальная энциклопедия, тт. 1-6, М., 1973-1982.
- Театральная энциклопедия, тт. 1-5, М., 1961-1967.
- Философская энциклопедия, тт. 1-5, М., 1960-1970.
- Краткая географическая энциклопедия, тт. 1-5, М., 1960-1966.
- Политическая энциклопедия, тт. 1-4, М., 1972-1980.
- Экономическая энциклопедия, тт. 1-3, М., 1961-1963.
- Энциклопедия лекарств, РЛС, М., 2003.
- Советская историческая энциклопедия, тт. 1-15, М., 1961-1974.
- Географический энциклопедический словарь. Географические названия, М., 2003.
- Физический энциклопедический словарь, М., 1983.
- Биологический энциклопедический словарь, М., 1986.
- Сельско-хозяйственный энциклопедический словарь, М., 1989.
- Философский энциклопедический словарь, М., 1983.
- Литературный энциклопедический словарь, М., 1987.
- Юридический энциклопедический словарь, М., 1987.
- Энциклопедия. Математика, М., 2003.
- Естествознание. Энциклопедический словарь, М., 2002.
- Энциклопедия. Биология, М., 2003.
- Энциклопедия. Химия, М., 2003.
- Энциклопедия. Мифология, М., 2003.
- Педагогический энциклопедический словарь, М., 2003.
- Новый иллюстрированный энциклопедический словарь, М., 2003.
- Арменоведческая энциклопедия, М., 1999.
- Физический энциклопедический словарь, тт. 1-5, М., 1960-1966.
- Детская энциклопедия, АРМЕНИЯ, М., 2001.
- Энциклопедия кибернетики, тт. 1-2, Киев, 1974-1975.
- Энциклопедия элементарной математики, М., 1951.
- М.В. Панов, Энциклопедический словарь юного филолога /языкознание/, М., 1984.
- Стилистический энциклопедический словарь русского языка /под ред. М. Н. Кожиной. – М., 2003.
- Словарь античности, М., 1989.
- Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ մասնավոր (ճյուղային) հանրաժողովրդին (М.В. Панов, «Энциклопедический словарь юного филолога»).

ГРАММАТИКА

Грамматика – учение о грамматической системе. Грамматическую систему

составляют единицы, обладающие грамматической формой (см. *Форма грамматическая; Способы грамматические*). Грамматика делится на морфологию – учение о грамматических формах отдельных слов – и синтаксис – учение о грамматических формах словосочетаний и предложений.

О морфологии рассказывают статьи – *Морфема; Лексема и форма слова; Аналитические и синтетические языки; Агглютинативные и фузионные языки; Изолирующие языки; Внутренняя форма слова; Нулевые единицы в языке; Связанные корни; Словообразование и словоизменение; Неологизмы; Окаzionaleизмы; Части речи; Местоимение; Числительное; Вид глагола; Залог; Наклонение; Время глагола; Лицо и число у глаголов; Число у имен; Падеж*.

О синтаксисе рассказывают статьи – *Синтаксические связи; Подчинение и сочинение; Модальность; Предикативность и полупредикативность; Предложение; Члены предложения; Порядок слов в предложении; Актуальное членение предложения; Сложное синтаксическое целое; Лингвистика текста*.

Մասնավոր կամ ճյուղային հանրագիտարանների մեջ առանձնանում են հատկանունների (անձնանունների և տեղանունների) բառարանները:

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՆՈՒՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ – Ներկայացնում են հատուկ անունների՝ անձնանունների և ազգանունների, դիցաբանական անվանումների ծագումը, նրանց իմաստները, բառային տարբերակները, ինչպես նաև գիտության ու մշակույթի բնագավառի նշանավոր գործիչների կենսագրությունը:

Այդ կարգի բառարաններից են՝

Հ. Մաթևոս Վ. Մաղաք-Թեոփիլյանց. Կենսագրություն երևելի արանց, հհ. 1-2, Վենետիկ, 1839: Հ. Մինաս Բժշկեան. Համառոտ նկարագիր վարուց երևելի արանց, Վենետիկ, 1850: Հ. Տեր-Աստվածատրյան. Բառարան հայ կենսագրության, Ա տառ. Թիֆլիս, 1904: Հրաչյա Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հհ. 1-5, Ե., 1942-62: Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հհ. 1-3, Ե., 1973-1990: Տ. Ավետիսյան, Հայոց ազգանունների բառարան, Ե., 2000: Մ.Ն. Բոտվիննիկ, Մ.Ա. Կոզան և ուրիշներ, Դիցաբանական բառարան, Ե., 1985: Տիգրան Հայկազն, Գարեգին Ղազարյան, Կենսագրական հանրագիտարան, 1000 Հայազգի գեներալներ և ծովակալներ, Ե., 2009:

Կենսագրական հանրագիտարան, Տիկնայք փափակասուն հայոց աշխարհի, Ե., 2005:

Կենսագրական հանրագիտարան, ԵՊՀ, Ե., 2009:

Հովհաննես Թումանյան. Հանրագիտարան, Ե., 2020:

А.С. Пушкин, Школьный энциклопедический словарь, М., 1999.

Лермонтовская энциклопедия, М., 1999.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ անձնանունների բառարանից (Տ. Ավետիսյան, «Հայոց ազգանունների բառարան»).

ԽԱՆԶԱԴՅԱՆ – Xanzadyan – Ханзадян

Խանզադե(ա), իգ., պրսկ.՝ «իշխանածին» ԺԴ դար (ՀԱՆԲ, Բ, 461) + **յան**: Ըստ Ս. Խանզադյանի՝ **Քրմանց** տոհմը **Խանզադյան** ազգ. ստացել է Նադիր շահի ժամանակներում նշանավոր Դավիթ խանի պատվին > «խանի ժառանգ» իմաստով: «Ի թվին ՌՃԴԴ: (1675), ես՝ Մելիք Շահնագարս, ամուսին իմ **Խանզասուն** շինեցինք սուրբ Ածայծին: Ձեռամբս Յակոբին» (ԴՀՎ, 6, 216):

Անձնանունների բառարանի մի տեսակ է տեղեկատու բառարանը, որ ներկայացնում է որևէ տարածաշրջանի ազգությունների բնորոշ անձնանունները և ունի գործնական նշանակություն՝ անվանադրության հարցում: Այդպիսի բառարան է «Справочник личных имён народов РСФСР», М., 1979: Այն պարունակում է Ռուսաստանի ֆեդերացիայի մեջ մտնող ժողովուրդների առավել գործածական 36 ցանկեր (աբազիյան, ավարական, բաշկիրական, բուրյաթական, հրեական, ինգուշական, կաբարդինո-չերքեզական, նենեցական, օսեթական, չեչենական, չուվաշական և այլն): Բառարանի լեզվանյութը ընտրված է ըստ լեզվաընտանիքների՝ հնդեվրոպական, ալթայյան, ուրալյան, իբերո-կովկասյան, հնասիական: Անձնանունների յուրաքանչյուր ցանկի նախորդում է համառոտ պատմական տեղեկանք անունների ծագման մասին, տրվում է անհրաժեշտ տեղեկություն նրանց արտասանության և ուղղագրության վերաբերյալ և այլն: Արական և իգական անունները տրվում են առանձին, զուգահեռ տրվում է անձնանունների գրությունը ազգային լեզուներով և ռուսերենով:

Վերջին շրջանում կազմվում են անձնանունների յուրահատուկ բառարաններ, որոնք ընդգրկում են գիտության, արվեստի և հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառների **հարյուր հայտնի անձանց** կենսագրությունը՝ ըստ ոլորտների ներկայացնելով հարյուր հայտնի ադմիրալների, զորավարների, դերասանների, գրողների, հերոսների, հանճարների, արկածախնդիրների, քանդակագործների, ասպետների, ազնվականների, ճարտարապետների, դափնեկիրների, երաժիշտների, երգահանների, ծովագնացների, քաղաքական գործիչների, հոգեբանների, ճանապարհորդների, հետախույզների, նկարիչների, մարզիկների, ընտանեկան զույգի և այլ ոլորտների անձանց՝ դառնալով տվյալ բնագավառի անձնանունների հանրագիտարաններ:

Դրանցից են՝

Скрицкий Н. Вл. - Сто великих адмиралов.- М., 2003.

Мусский И. А. - Сто великих актеров.- М., 2003.

Лубченков Ю. Н. - Сто великих аристократов.- М., 2003.

Самин Д. К. - Сто великих архитекторов.- М., 2003.

Муромов И. А. - Сто великих авантюристов.- М., 2004.

Шишов А. В. - Сто великих военачальников.- М., 2004.

Самин Д. К. - Сто великих вокалистов.- М., 2004.

Баландин Р. К. - Сто великих гениев.- М., 2008.

Шишов А. В. - Сто великих героев.- М., 2005.
 Семашко И. И. - Сто великих женщин.- М., 2005.
 Самин Д. К. - Сто великих композиторов.- М., 2014.
 Мусский С. А. - Сто великих лауреатов.- М., 2003.
 Авадяева Е. Н., Зданович Л. И. - Сто великих мореплавателей.- М., 2002.
 Соколов Б. В. - Сто великих политиков.- М., 2008.
 Лубченков Ю. Н. - Сто великих полководцев Второй мировой.- М., 2005.
 Еремин В. Н. - Сто великих поэтов.- М., 2008.
 Яровицкий В. - Сто великих психологов.- М., 2007.
 Муромов И. А. Сто великих путешественников.- М., 2003.
 Дамаскин И. А. - Сто великих разведчиков.- М., 2004.
 Мусский И. А. - Сто великих режиссеров.- М., 2008.
 Ломов В. М. - Сто великих писателей.- М., 2010.
 Вовк О. В. - Сто великих рыцарей.- М., 2004.
 Мусский С. А. - Сто великих скульпторов.- М., 2007.
 Берт Р. III. - Сто великих спортсменов.- М., 2003.
 Мусский И. А. - Сто великих супружеских пар.- М., 2008.
 Самин Д. К. - Сто великих ученых.- М., 2003.
 Самин Д. К. - Сто великих художников.- М., 2007.
 А.Юдакин, Ведущие языковеды мира, Энциклопедия, М., 2010.

Անձնանունների բառարանների այս շարքը շարունակվում է համա-
 լրվել:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Տեղեկություն են հաղորդում աշխարհագրական հասակացությունների վերաբերյալ (քաղաք, երկիր, գավառ, երկրամաս, մայրցամաք, գետ, ծով, լիճ, օվկիանոս, կղզի, լեռ, դաշտավայր և այլն): Լինում են մեծ և միջին ծավալի:

Մեծ ծավալի տեղանունների բառարանները բաղկացած են լինում մի քանի հատորից: Այդպիսին են՝

П.П. Семонов, Географическо-статистический словарь Российской империи, СПб, 1853-1875.

Н.Барсов, Материалы для историко-географического словаря Древней Руси до XIV в. включительно, Вильно, 1865.

Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախշյան, Հովհ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հհ. 1-5, Ե., 1986 –2001:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ տարածաշրջանային հանրագիտարանից (Թ. Հակոբյան, Սո. Մելիք-Բախշյան, Հովհ. Բարսեղյան, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»).

ՀԱՅՈՑ ԶՈՐ, Найоц дзор, Hayocс jor, **Խավածոր, Խավուծոր, Հայկածոր, Հայուծոր, Հավածոր – Գավառ (գավառակ, գյուղախումբ)** Մեծ Հայքի Վասպուրական աշխում: Իր տարածքի զգալի մասով համապատասխանում է ավելի հին Երվանդունիք **գավ**-ին: Նոր ժամանակներում այն հաճախ հիշատակվում է իբրև Վանի **նահ**-ի Վանի **գավ**-ի **գվոկ**-ներից և **գ**-ախմբերից մեկը: Տարածվում էր Խոշաբ գետի

հովտում: Ըստ ավանդության՝ Հ. ձում է տեղի ունեցել հայոց նահապետ Հայկի հաղթական ճակատամարտը Բելի դեմ: Ճակատամարտի տեղում Հայկը կառուցել է Հայք կամ Հայկաբերդ դաստակերտը, որի անունով էլ իբր կոչվել է **գավ**-ը: Հանդամասերի զգալի մասը և այգիները ոռոգվում են Շամիրամի ջրանցքի ջրերով: Զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով: Հացառատ էր: Կան տարբեր ժամանակների հնություններ ու հուշարձաններ: Հ. ձ-ի շուրջ 10 հազար մարդու հասնող հայերը բնաջնջվեցին 1915-ի Մեծ եղեռնի ժամանակ:

Միջին ծավալի տեղանունների բառարաններից են՝

Энциклопедия, Города России, М., 2003. В.А. Никонов, Краткий топонимический словарь, М., 1966. В.А. Жучкевич, Краткий топонимический словарь Белоруссии, Минск, 1974. В.П. Нерознак, Названия древнерусских городов, М., 1983. В.В. Леонтьев, К.А. Новикова, Топонимический словарь Северо-Востока СССР, Магадан, 1997. Г.П. Смолицкая, Топонимический словарь Центральной России, М., 1998. Е.М. Поспелов, Географические названия мира: Топонимический словарь, М., 1998. Հ. Գրգեարյան, Ն. Հարությունյան, Աշխարհագրական անունների բառարան, հհ. 1-2, Ե., 1987-1989:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ տեղանունների բառարանից (Հ. Գրգեարյան, Ն. Հարությունյան, «Աշխարհագրական անունների բառարան»).

ՄԻՋԱԳԵՏՔ – Բնական և պատմական մարզ Տիգրիս և Եփրատ գետերի միջին և ստորին հոսանքներում (այժմ՝ Իրաքի տերիտորիա): Քաղաքակրթության հնագույն օջախներից մեկը (մտել է Բաբելոնի, Ասորեստանի և այլ պետությունների կազմի մեջ): Հայերեն անվանումը հուն. *Մեսոպոտամիա* (**մեսոս** «միջին, միջև», **պոտամոս** «գետ») անվան պատճենումն է, որ փոխառված է եվրոպական գրեթե բոլոր լեզուներում:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ - Վերաբերում են որոշակի տարածաշրջանի (աշխարհամասի, երկրի, պետության, երկրամասի, գավառի, նահանգի) և ներկայացնում են այդ տարածք(ներ)ի պատմական դեպքերը, երևույթները, հասկացությունները, արվեստը, մշակույթը, ճարտարապետությունը, նշանավոր անձանց և այլն: Այդպիսի բառարան են՝

Советский энциклопедический словарь, /Гл. редакт. А.М. Прохоров/, М., 1990.

Татарстан, краткая иллюстрированная энциклопедия, Казань, 2015.

Большая российская энциклопедия. РОССИЯ, М., 2004.

Белорусская советская энциклопедия, М.

Языки народов СССР, тт. 1-5, М., 1966.

Հայաստան հանրագիտարան, հհ. 1-2, ՀՀ ԳԱԱ, Ե., 2009:

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Տրվում են լեզվական միավորների բացատրությունը, ուղղագրությունը, արտասանությունը, ծագումը, կազմությունը, գործածության ոլորտները, բնիկ կամ փոխառյալ լինելը և այլն: Պայ-

մանավորված լեզվական միավորների նկարագրության եղանակով և նպատակով՝ լեզվաբանական բառարանները բաժանվում են հետևյալ տեսակների՝ *միալեզվյան և երկլեզվյան (բազմալեզվյան), բացատրական, թարգմանական, լեզվաբանական, զուգադրական կամ համեմատական, պատմական, ստուգաբանական, կենսագրական, մասնագիտական (տեղեկատու-գործնական), տերմինաբանական, բառակազմական, դարձվածաբանական, հոմանիշների, հատկանունների, հաճախականության, ուղղախոսական, համանունների, քերականական* և այլն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Ժամանակակից բառարանագրությանը հայտնի են տարատեսակ բառարաններ, որոնք միմյանցից տարբերվում են նպատակով, բառարանագրության առարկայով, բառարանագրության մեթոդիկայով, բառարանագրական նյութի մատուցման եղանակներով և այլն:

Բոլոր լեզվաբանական բառարանները բաժանվում են երկու հիմնական տեսակի՝ *ընդհանուր և մասնագիտական*:

Ընդհանուր բառարան - Ներառում են համագործածական բառերը և տալիս են նրանց համակողմանի բնութագիրը: Ըստ լեզուների ընդգրկման քանակի՝ ընդհանուր բառարանները լինում են միալեզվյան, երկլեզվյան և բազմալեզվյան: Դրանք բացատրական, զուգադրական կամ թարգմանական և համեմատական բառարաններն են:

Ընդհանուր բացատրական բառարան է՝

DUDEN, Deutsches Universal Vörterbuch, DUDENVERLAG, Mannheim-Leipzig- Wien-Zürich, 2002.

Մասնագիտական բառարան - Իրենց հերթին բաժանվում են ճյուղային և լեզվաբանական ենթատեսակների:

Ճյուղային մասնագիտական բառարանները (ինչպես ճյուղային հանրագիտարանները) նկարագրում են գիտության այս կամ այն ճյուղի, սպորտի, տեխնիկայի կամ մշակույթի մասնագիտական բառապաշարը: Ինչպես՝

Փիլիսոփայական բառարան, Ե., 1975 (Մ.Ս. Ռոզենտալի խմբագրությամբ):

Կ.Գ. Բաբայան, Մարմնամարզական տերմինների տեղեկատու բառարան, Ե., 1985:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ ճյուղային մասնագիտական բառարանից (Կ.Գ. Բաբայան, «Մարմնամարզական տերմինների տեղեկատու բառարան»).

ԱՐՏԱԿՈՐ ՎԱՐՑԱՏԿ – соскок прогнувшись – կատարվում է արտակորված մարմնով, կրծքով դեպի գործիքը: Ետնաթափ վարցատկեր կատարելիս «արտակոր» բառը բաց է թողնվում (համառոտման նպատակով), քանի որ նման վարցատկի տեխնիկան արդեն արտակոր դիրք է պահանջում: Օրինակ՝ ետնաթափ վարցատկ

աջ: Դարձումով կատարելիս ավելացվում է՝ դարձումով և նշվում ուղղությունը: Օրինակ՝ ետնաթափ վարցատկ աջ հետդարձով (համանուն):

Ամենատարածված ճյուղային բառարան է համարվում **տերմինաբանական բառարանը**:

Լեզվաբանական տերմինների բառարաններից են՝

Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975:

Марузо Ж., Словарь лингвистических терминов /перевод с франц. Н. Д. Андреева, под ред. А. А.Реформатского. – М., 1960.

О.С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969.

В.Д. Старичёнок, Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008.

Т.В. Матвеева, Полный словарь лингвистических терминов, Ростов-на-Дону, 2010.

И.И. Богатырева, О.А. Волошина, Словарь школьных лингвистических терминов, М., 2012.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ լեզվաբանական բառարանից (Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, «Լեզվաբանական բառարան»).

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ || синтетические языки || synthetic languages || synthetiques || synthetische Sprachen:

Այն լեզուները, որոնց մեջ որպես քերականական իմաստների արտահայտման հիմնական միջոցներ օգտագործվում են ներքին թեքումը, ածանցումը, բառարմատի կամ բառաբնի կրկնությունը, բարդումը և զուգաձևությունները: Հիմնականում համադրական լեզուներ են՝ հին հայերենը, ռուսերենը, արաբերենը, լատիներենը, հին հունարենը և այլն: Տերմինն առաջարկել է Ավգուստ Շլեգելը (1818 թ.):

Լեզվաբանական (բանասիրական) բառարանները ներկայացնում են նաև լեզվի բարբառային բառաշերտերը, անցյալի գրական հուշարձանների բառային կազմը, բառերի (արմատների) ծագումը և այլն: Ըստ այդմ, տարբերակում են բարբառային, պատմական և ստուգաբանական բառարաններ:

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ - Ներկայացնում է լեզվի բառերի բարբառային շերտերը. դրանցից են՝ Սահակ Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, Հրաչյա Աճառյան, Հայերեն գավառական բառարան (Մ., 1913), «Հայոց լեզվի բարբառային բառարան», ԳԱԱ լեզվի ինստիտուտ, հհ.1-7, Ե., 2001-2012, «Ռուսերենի ժողովրդական խոսվածքների բառարան», հհ. 1-20, Մ., 1965-1985 (ռուսերեն):

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ բարբառային բառարանից (Հր. Աճառյան, «Հայերեն գավառական բառարան»).

ԶՈՒ Ազլ. Երև. Ղրբ. 1. Բանջարներու բունը կամ ցօղունը, որուն վրայ տերևները կը բսնեն. Բանջարներու ուտելի մասը մեծաւ մասամբ զոխն է. օր. *Կոտնմի*,

զինձի, բողկի, աւելուկի նն գոխ. 2. Բոյսին կամ խոշոր ծաղիկներու մէջտեղի ծիլը, որ կեղնեղով կ'ուտուի. 3. Երև. Մասնաւորապէս սիպէղ կոչուած բոյսին գոխը, որ աղաջուրի մէջ կը պահեն պահոց օրերն ուտելու համար. Բոխ-գոխ դրէ չէք՝ բոխ ու սիպէղ թթու դրած էք. 4. Ղրբ. Ձմեռուկին միջուկը (որ Պլ. Տճկ. Բառով կ'ըսուի յօրօզ՝ արլոր):

- **Ձոխ բոնել, գոխ կապել, գոխ քշել**՝ ծիլ արձակել (բոյսի), ծիլը հաստանալ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Ընդգրկում է որևէ լեզվի բառային կազմը և այն ներկայացնում պատմական զարգացման մեջ: Այդպիսի բառարան է Մխիթարյան միաբանների հեղինակած «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հիմնարար աշխատությունը: Որոշակի վերապահությամբ այդպիսի բառարան է Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» աշխատությունը (հհ. 1-4, Ե., 1944-45), որ բովանդակում է տարբեր բառարաններում ամփոփված բառերը (գրաբարյան, միջինհայերենյան, աշխարհաբար գրական, բարբառային). պարունակում է շուրջ 120 հազար բառ:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ պատմական բառարանից (Ստ. Մալխասյանց, «Հայերեն բացատրական բառարան»).

ԱՂԱՆԴ (ոյ, ոց), ի, գ., 1. Կրօնական ուսումն կամ վարդապետություն, որ խոտորվում է եկեղեցու մէջ ընդունված վարդապետությունից կամ դաւանութիւնից. մոլար վարդապետություն. Հերետիկոսություն: *Արիոսը ուսուցանում էր, թէ Քրիստոս կատարեալ մարդ է, բայց աստուած չէ. նրա այդ աղանդը նզովվեց Նիկիայի ժողովում: Նեստորի աղանդին հետևողները կոչվում են նեստորականներ: Քրիստոնէութեան մէջ ներկայումս շատ վարդապետութիւններ կան, որ մի եկեղեցի ընդունում է իբրեւ ուղղափառ դաւանութիւն, իսկ միւսը համարում է աղանդ, և փոխադարձաբար մէկը միւսին աղանդաւոր են կոչում:* 2. Կրօն, որ օտար է մի երկրում ընդունված կրօնին և մոլորական է համարվում այնտեղ. *Մոգերն ասացին Յագկերտ թագաւորին – Քրիստոնէական աղանդը վերացրո՛ւ մեր երկրից:* 3. Նման. Նորելուկ մի ուսումն, սկզբունք, որ մտցվում է լեզուի՝ գրականութեան, գիտութեան մէջ: * 4. Աղանդաւորների խումբ: * 5. Կախարդանք (Տ. Աղանդինք): * 6. Ճշմարիտ կրօն:

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Առանձնանում է բառերի նկարագրության եղանակով. դրանք բացահայտում են լեզվի բառերի ծագումը: Այդ կարգի բառարաններից են՝

Pokorny Julius, Indogermanisches Etymologisches Wörterbuch, 2 vols., Tübingen-Bern-Munich; A. Francke, 1957/1969 (1st edn.).

М. Фасмер, Этимологический словарь русского языка, тт. 1-4, М., 1964 - 1973. Этимологический словарь славянских языков. Праславянский лексический фонд, тт. 1-41, М., 1963-2018 [Гл. редакторы; О.Н. Трубачёв /1963-2002/, А.Ф. Журавлёв /2002-2016/, А.Ф. Журавлёв, Ж.Ж. Варбот /2016-2018/].

Հ. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան» (7 հատորով), Ե., 1927 – 1935 (վերահրատ. հհ.1-4 , Ե., 1971-1980):

Hrach K. Martirosyan, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, BRILL, LEIDEN • BOSTON. 2010.

Գ.Բ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

П.Я. Черных, Историко-этимологический словарь современного русского языка, тт. 1-2, М., 2009.

Пётр Червинский, Маргарита Надель-Червинская, Толково-этимологический словарь иностранных слов русского языка, Тернополь: Крок, 2012.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ ստուգաբանական բառարանից (Hr. K. Martirosyan, «Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon»).

anurj-k', *i*-stem: GDPl *anrj-i-c'* (Philo, Book of Chries, Gregory of Nyssa, Yovhannēs Draxanakertc'i, etc.); *o*-stem: GDSg *an(ə)rj-o-y* (Paterica), GDPl *anrjo-c'* (Grigor Narekac'i) 'dream, day-dream, prophetic vision, vision'.

The oldest attestation is found in Matthew 27.19: *y-anurj-s* 'in a dream'.

The meaning 'prophetic dream' is seen e.g. in the Alexander Romance (H. Simonyan 1989: 76L16f) and in Movsēs Xorenac'i 2.88 (1913=1991: 238L5; transl. Thomson 1978: 243), in the derivative *anrj-akan*. Note also Book of Chries 8.2.2 (G. Muradyan 1993: 189L34; Russ. transl. 2000: 179): *yastuacayin anrjic* 'n "в божественных сновидениях".

●ETYM Since NHB (1: 223c), connected with Gr. *ōvap* n. 'dream', especially 'fortune-telling dream, vision', *ōνειρος* m. 'god of dreams, dream', Aeol. *ōvoipoc* m., Cret. *āvairon*· *ōveipon*, *āvap*· *ōvap* (Hesychius), Alb. *ādërrë* (Geg.), *ëndërrë* (Tosc.) from **andërrë* < **h3nr-jo-* (Kortlandt 1986: 38, 44 = 2003: 68, 74). For references and a discussion, see HAB 1: 209-210; Pisani 1934: 180-182; Clackson 1994: 182, 236339; Balles 1997: 150-152. Arm. *anurj*, *o*-stem, comes from QIE **h3nōr-jo-*. The alternative *i*-stem probably points to **ih2-*.

Beekes (1969: 46) reconstructs the following paradigm: nom. **-ōr*, acc. **-ér-m*, gen. **-r-ós*. See also s.vv. *ayr* 'man', *awr* 'day'. As to the form in **-jo-*, I assume thematization based on a frozen locative in **-i-* (cf. Hamp 1984a: **Hnen-i* vs. nom. **Hon-ŋ* > **Hneri* > **Hnerjo-*, Helleno-Armenian thematization), cf. s.vv. **alj-* 'darkness', *ayg* 'morning'.

A possible trace of QIE **h3nor-ih2-* may be seen in *c'nor-k'*, *i*-stem 'fancy, fantasy, day-dream; bad dream, apparition, bogy'.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ ստուգաբանական բառարանից (Գ.Բ. Զահուկյան, «Հայերեն ստուգաբանական բառարան»).

ԿՂԶԻ, -ւոյ, -եաց «կղզի»:

Բաղադրություններ՝ *կղզային*, *կղզեակ*, նոր՝ *կղզիաբնակ*, *կղզիանալ*, *թեքակղզի*:

Թերևս բնիկ հնդեվրոպական՝ **gēlghiiō-* **gel-* «գնդ(վ)ել» արմատից՝ **-g* ածականով (**gel-*, **gleg'*, մասամբ **glegh-*) ձևից. հմմտ. լեհ. *glaz* «ժայռ, գլաժայռ, գլաքար, գետաքար», մ.վ.գ. *klinge* «խճուտ ծանծաղուտ գետի մեջ», հ. իսլ. *kleggi* «խոտի դեզ»: - Զահ. ԼՀԳ 1988, 11, 70: Պեղերսենը և Պատրուբանին կապում են ըն-կղմել, ըն-կլնուլ բառերի հետ (որպես «ծովում ընկղմած»), իսկ Աճառյանը (ՀԱԲ 2, 603) համարում է ակկադական (ասուրական) փոխառություն՝ ենթադրելով այն արաբ. *jazira* և ասոր. *gazartā* «կղզի» ձևերի հիման, որոնք ձևով հեռու են:

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Ընդգրկում են որևէ լեզվի բառերը՝ բացատրված նույն լեզվով: Ըստ նյութի ընդգրկման ծավալի, նրա մշակման սկզբունքների ու մեթոդիկայի և մատուցման եղանակների՝ բացատրական ընդհանուր բառարանները լինում են մեծ, միջին և փոքր:

Մեծ բառարանները կոչվում են ակադեմիական բառարաններ, որոնք ներկայացնում են տվյալ լեզվի բոլոր բառերը, եթե անգամ բառը գործածվել է միայն մեկ անգամ, յուրաքանչյուր բառ ու նշանակություն վկայվում է բնագրային օրինակով: 1900 թ. ձեռնարկել են լատիներենի ակադեմիական բառարանը, որ կոչվում է Thezaurus linguae latinae (առ այսօր անավարտ է):

Այդպիսի ակադեմիական բառարաններից են՝

Словарь современного русского литературного языка, тт. 1-17, М.-Л., 1950-1965.

Словарь современного русского языка. XI-XVII вв., тт. 1-17, М., 1975-1991.

Словарь русского языка, тт. 1-17, М., 1948-1965.

Большой толковый словарь русского языка, М., 1988.

Oxford dictionary, vv. 1-12, London, 1934.

Մի. Մերաստացի, Բառգիրք Հայկազեան Լեզուի, Վենետիկ, հ. 1, 1749, հ. 2, 1769:

Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավգերյան, Նոր բառգիրք Հայկազեան Լեզուի, հհ. Ա-Բ, Վենետիկ, 1836 – 1837:

Մ. Ավգերյան, Առձեռն բառարան Հայկազեան Լեզուի, Վենետիկ, 1865:

В.И Даль, Толковый словарь живого великорусского языка, тт. 1-4, 1863-1866 (վերահրատ.՝ 1981 – 1982 թթ.).

Толковый словарь русского языка, тт. 1-4, М., 1935-1940 (Դ.Ն.174 Ուշակովի խմբագրությամբ).

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1969-1980: Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, (Ե., 1976)՝ (երկու ստվար հատորով) և այլն:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ մեծ բացատրական բառարանից («Նոր բառգիրք Հայկազեան Լեզուի»).

ԱԳԱՐԱԿ, ի, ագ, գ. Αγρός, έπαυλις, Ager, villa. ըստ եբր. *ակեշ*: Գետին բացօթեայ մշակեալ, ուր արտորայք են, և սակաւ բնակութիւն, որ է Անդաստան. Անդ. *արտեր. չիֆթլիք*. * Ագարակն է անդաստան արձակ.Վարդան. ծն: *Որ է ի վիճակի ագարակի իւրոյ: Հրձիգ արար գամենայն անդս և զագարակս նոցա: Որ գայր յագարակէ (կամ յանդէ): Յագարակս և ի գիւղս: Զագարակս նորա և զաւանս նորա: Ի վերայ ագարակացն, և այլն. ստէպ *ի Սուրբ գիրս*: * Գեղջկաց առաւել պատիւ լիցի քան բնակչաց ագարակի. *Մի. դտ*: * Ագարակ մի վատթար յագարակս. *Ոսկ. յի*:

Ագարակ. Կալուած գետնոյ շուրջ զբաղաբար և զգեղիք. *արփալըգ*. *Հրամայէ զաւանսս գիւղից և ագարակաց որոշել: Որում տուեալ զաւանս Տատեանս հանդերձ ագարակօք. *Խոր. Բ. 53. 59*:

Կամ Գիւղ. աւան. գէղ. քէօյ. * Պատմեցին ի քաղաքին և յագարակս: Ի գիւղսն և յագարակսն հանգիցեն. *Ղկ. Ը. 34: Բ. 12:** Շինէին եկեղեցիս ի մենաստանս և յաւանս և յագարակս. *Յհ. կթ:*

Ագարակ. ա. իբր Ագարակային.* Կարգեաց չորս չորս հողս երդոց յամենայն ագարակ տեղիս. *Ագայթ:*

Վկայենք բառահողովածի նմուշ-օրինակ Էդ.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից».

ԻՆՔՆԱՀՈՍ, 1. ած. Ինքն իրեն՝ առանց կողմնակի ուժի հոսող: 2. գ. Որևէ գործի՝ աշխատանքի անպլանային՝ անկազմակերպ ընթացք, որևէ բանի տարերային ընթացք: 3. Նույնն է՝ Ինքնահոս գրիչ: 4. Հեղուկների և սորուն նյութերի՝ իրենց ճնշման կամ ծանրության ազդեցությամբ տեղի ունեցող հոսք:

- **Ինքնահոս գրիչ** - գրչակոթ, որի մեջ լցված թանաքն ինքն իրեն հոսում է գրչին:

- **Ինքնահոսի մատնել՝ մատնվել** – տարերային վիճակի մեջ թողնել՝ թողնվել:

Միջին բացատրական բառարանները զիջում են ակադեմիական բառարաններին իրենց ծավալով և գործնական մեծ նշանակություն ունեն, ինչպես՝ Ե. Մեղրեցի, Բառգիրք հայոց, Ալիկոռնա, 1698, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (հհ. 1-2, Ե., 1987-92), Ռ. Ղազարյան, «Գրաբարի բառարան» (հհ. Ա-Բ, Ե., 2000), С.И. Ожегов, «Словарь русского языка» (1973, պարունակում է շուրջ 72.000 բառ), Գնել արք. Ճերեճեան, Փարամազ Կ. Տոնիկեան, Արտաշէս Տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան (հհ. 1-2, Պէյրուք, 1992), LONGMAN, Dictionary of Contemporary English (The Living Dictionary) և այլն: Random house Webster's unabridged dictionary, New York, 2001.

Վկայենք բառահողովածի նմուշ-օրինակ միջին բացատրական բառարանից (Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, «Միջին հայերենի բառարան»).

ԱԻԻՐԵԼ, ն. 1. Փչացնել, վատացնել, վնասել, անպետք դարձնել: Եւ լինի որ աւիրէ զկերակուրն (*ՄՀՋՄ, 25*): Զջրաղացպաններն կու հրամայէ օրէնքս որ հատուկ և հաւատարիմք պատեհ է դնել վասն գոյութեան երկրին, որ չաւիրեն զաղունն (*ՍՍԴ, 171*): Թող մուկն իւր կարասն ընկնի, կատուն իւր ձկնակն աւիրէ (*ՆՔ, 317*): **2. Ավերել, կործանել:** Աւիրենք շատոնց տուն ու տեղ (*ՆՔ, 96*): **3. Վարկաբեկել, անվանարկել, խայտառակել, անպատվել:** Որ նա չաւիրէ զանունդ ու լինիս ի փողոց նման (*ՆՔ, 276*):

Փոքր բացատրական բառարանները համեմատաբար սահմանափակ բառային կազմ են ընդգրկում. դրանք սովորաբար կազմում են՝ նկատի ունենալով դպրոցական կամ բուհական ծրագրերի շրջանակները: Այդպիսին են՝ Ա.Կ. Քոչոյան, «Հայերեն դպրոցական բացատրական բառարան» (Երևան, 1966), Պ. Բեդիրյան, Դարձվածաբանական բացատրական բառարան (դպրոցական, համառոտ), Ե., 1971: В.В. Лопатин, Л.Е. Лопатин, Малый толковый словарь русского языка, М., 1990. А.Е. Баханьков, И.М. Гайдукевич,

П.П. Шуба, Толковый словарь русского языка для средней школы, М., 1975.
Н.М. Неусыпова, Толковый словарик русского языка, М., 1992.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ փոքր բացատրական բառարանից (Ա.Կ. Քոչոյան, «Հայերեն դպրոցական բացատրական բառարան»).

ԱՍՊԵՏ, ի, գ.: 1. Միջնադարյան ռազմաֆեոդալական դասին պատկանող անձ: 2. Միջին դարերում՝ Եվրոպայում ձիավոր զինվորական, ազնվական ծագումով: 3. փխր. Աներկյուղ, քաջ, անձնուրաց, վեհանձն, ազնիվ մարդ: 4. Շքանշանով պարգևատրված անձ, շքանշանակիր: 5. Որևէ կնոջ նկատմամբ նվիրվածություն հանդես բերող անձ, երկրպագու:

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Պարունակում է որևէ լեզվի բառերը՝ թարգմանված մի այլ լեզվով: Թարգմանական բառարաններում մի լեզվի բառերը կարող են թարգմանվել ոչ թե մեկ, այլ երկու, երեք կամ ավելի լեզուներով. դրան համապատասխան էլ այդ բառարանները լինում են երկլեզվյան, եռալեզվյան, քառալեզվյան, բազմալեզվյան և այլն: Լինում են նաև մի լեզվից մյուսը և հակառակը թարգմանական բառարաններ:

Երկլեզվյան թարգմանական բառարաններ՝

ա) Այլ լեզուներից հայերենին.

Աստվածատուր Ներսեսովիչ, Dictionarium Latino-Armenium, Հռոմ, 1695:

Հարություն Դադբաշյան, Լիակատար բառարան ռուսերենից հայերեն, Թիֆլիս, 1903:

Նորայր Բյուզանդացի, Բառգիրք ի գաղղիերենէ ի հայերեն, Կ.Պոլիս, 1884:

Ավետիք Կոյլավյան, Բառգիրք գերմաներենէն-հայերեն, Վենետիկ, 1884:

Ռուս - հայերեն բառարան, հհ. 1-4, Ե., (1954 – 1958, ԳԱԱ լեզվի ինստիտուտ):

Արարատ Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Ե., 1968:

Գ.Մ. Անդրեասյան, Գերմաներեն-հայերեն բառարան, Ե., 1976:

Անգլերեն-հայերեն բառարան, Ե., 1984 (խմբագր. Հ. Ասմանգուլյանի և Մ. Հովհաննիսյանի):

Ա. Բարլեզիզյան, Թ. Բլբուլյան, Ս. Գալստյան և ուրիշներ, Ֆրանսերեն-հայերեն բառարան, Ե., 2010:

А. Блбулян, Новый русско-армянский словарь, Е., 2011.

Հ. Հ. Չազմազճեան, Ընդարձակ Բառարան Անգլիերենէ Հայերեն, Բոստոն, 1922:

Ընդարձակ Բառարան Անգլիերենէ Հայերեն, Բեյրութ, 1981:

Ա. Բարլեզիզյան և ուրիշներ, Ֆրանսերեն-հայերեն բառարան, Երևան, 2010:

բ) Հայերենից այլ լեզուներին.

- Francisco Rivola, *Dictionarium Armeno-Latinum*, Միլան, 1621:
- Հ. Յ. Աւգերեան, Հովհ. Պրէնտեան, Բառարան հայերէն եւ անգղիական, Խ. Բ, Վենետիկ, 1825:
- Մանուէլ վրդ. Ջախջախեան, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, 1837:
- Դարաստան. Բառարան յատուկ և հասարակ անուանց, Ի պէտս ընթերցանութեան և թարգմանութեան ի Հայոց լեզուէ ի Ռուս, Տփլիս, 1838, ի տպարանի Յ. և Դ. Արզանեանց:
- Ալ. Խուդաբաշեանց, Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ, Մոսկվա, Խ. 1-2, 1838:
- Տ. Ի. Խ. Զօլագեան, Նոր բառարան հայերէնէ ի յունարէն, Կոստանդնուպոլիս, 1868:
- Մատաթիա վրդ. Պետրոսեան, Նոր բառգիրք հայ-անգլիարէն, Վենետիկ, 1875-79:
- Գ. Լուսինեան, Կ. Բասմաջեան, Առձեռն բառարան հայերէն աշխարհիկ լեզուէ ֆրանսերէն, Կ. Պոլիս, 1915:
- Ա. Ղարիբյան, Ե. Տեր-Մինասյան, Մ. Գևորգյան, Հայ-ռուսերէն բառարան, Երևան, 1960:
- Մ. Գոյումճեան, Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Բեյրութ, 1970:
- Հայր Յարութիւն Թէքեան, Բառարան Հայերէնէ Սպաներէն, Բուենոս Այրես, 1984:
- Հայ-ռուսերէն բառարան, Երևան, 1987:
- Մ. Գ. Մինասեան, Առձեռն բառարան հայերէն-անգլիերէն, Կ. Պոլիս, 1902:
- Ջ. Տ. Ս. Փափագեան, Գործնական Բառարան Հայերէն-Անգլիերէն, Կ. Պոլիս, 1905:
- Մ. Յովհաննէսեան, Բառարան հայերէն-ֆրանսերէն, Կ. Պոլիս, 1925:
- Հ. Գեորգ Պայեան, Բառարան հայերէն-գաղղիերէն, Վենետիկ, 1926:
- D. Froundjian, *Armenisch-Deutsches Wörterbuch*, München, 1952:
- Ժ. Թազպազեան, Բառարան հայերէնէ արաբերէն, Բեյրութ, 1964:
- Վեր. Տ. Խնդրունի, Մ. Գուշագճեան, Հայերէնէ-Անգլերէն Արդի Բառարան, Բեյրութ, 1970:
- Մ. Կ. Գոյումճեան, Գրպանի Նոր Բառարան Հայերէն-Անգլերէն, այժմէականացուց Լ. Թորոսեան, Բեյրութ, 2002:
- Հ. Վահան վրդ. Օհանեան, Բառարան հայերէն-իտալերէն, Վենետիկ, 1999:
- Ն. Բարաթյան, Հայերէն-անգլերէն բառարան, Երևան, 2002:
- Ե. Տեմիրճիպաշեան, Գրպանի բառարան հայերէնէ գաղղիերէն, Ե տպ., Բեյրութ, 2003:

Վ. Յարութինեան, Հայերէնից պարսկերէն բառարան, Թեհրան, 2006:
 Պ. Զ. Կարապետեան, Մեծ բառարան հայերէնէ օսմաներէն, Կ. Պոլիս, 1907:
 Տ. Դավթյան, Հայերէն-պարսկերէն բառարան, Երևան, 2011:
 Մ. Դերմենջյան, Հայերէն-թուրքերէն բառարան, Երևան, 2013:
 Լ. Թորոսեան, Ընդարձակ բառարան Հայերէն-Գերմաներէն, Վիեննա, 2019:

զ) Այլ լեզուներէից ռուսերէնին.

И.Х. Дворецкий, Древнегреческо-русский словарь, тт. 1-2, М., 1958.
 И.Х. Дворецкий, Латинско-русский словарь, М., 1986.
 А.Д. Вейсман, Греческо-русский словарь, М., 1991.
 В.К. Мюллер, Англо-русский словарь, М., 1971.
 Большой немецко-русский словарь, тт. 1-2, М., 1980.

դ) Ռուսերէնից այլ լեզուներէի.

Русско-английский словарь /под общим рукавод. А.И. Сьирницкого/, М., 1969.
 Вл. Мюллер, Большой русско-английский словарь, Издат. Эксмо, 2014.
 Большой русско-немецкий словарь, Издат. Дрофа, 2008.
 Большой русско-китайский словарь, Издат. Славянский дом книги, 2010.
 Новый большой русско-итальянский словарь, Издат. Дрофа, 2011.
 Современный русско-хинди словарь, Издат. Дрофа, 2008.
 Большой русско-испанский словарь, Издат. Дрофа, 2008.
 Большой русско-французский словарь, Издат. МЦНМО, 2020.

ե) Մի լեզվից մյուսը և հակառակը թարգմանական բառարաններ.

Ա. Գալֆայեան, Բառգիրք հայ-գաղղիարէն եւ գաղղիարէն հայերէն, Փարիզ, 1861:

Պ. Բեդիրյան, Զ. Ղարիբյան, Դ. Անմեղիկյան, Ռուս-հայերէն, հայ-ռուսերէն բառարան, Ե., 1984:

Ս. Սեֆերյան և ուրիշներ, Անգլերէն-հայերէն, հայերէն-անգլերէն բառարան, Երևան, 2009:

Կ. Առաքելյան, Ե. Գևորգյան և ուրիշներ, Հայերէն-էսպերանտո-ռուսերէն. էսպերանտո-հայերէն-ռուսերէն բառարան, Ե., 2013:

Երկլեզվյան թարգմանական բառարանները կարող են ներառել մասնագիտական որևէ բնագավառի տերմինները. ինչպէս՝

Ս. Հարությունյանց, Հայ-ռուսերէն լեզվաբանական բառարան, Երևան, 1963:

Англо-русский сельскохозяйственный словарь, М., 1983.

Տարածված են երկլեզվյան թարգմանական դարձվածաբանական բառարանները: Դրանցից են՝

Немецко-русский фразеологический словарь (сост. Л. Э. Бинович), М., 1956.

Англо-русский фразеологический словарь (сост. А. В. Кунин), т.т. 1-2, М., 1980.

Французско-русский фразеологический словарь (под ред. Я. И. Рецкера), М., 1963.

Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան (խմբագր. Ռ. Լ. Մելքունյանի և Պ. Մ. Պողոսյանի), Ե., 1975:

Д.И. Квеселевич. Русско-английский фразеологический словарь, М., 2001.

Բազմալեզվյան թարգմանական բառարաններից են՝

Արիստակես և Ստեփանոս Նազարյաններ, Նոր բառգիրք հունարեն-իտալերեն-հայերեն-տաճկերեն, Վիեննա, 1848:

Ռուբեն Աբրահամյան, Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Ե., 1965:

Ю.Н. Рерих, Тибетско-русско-английский словарь с санскритскими параллелями, Издат. “Наука”, тт. 1-10, М., 1983 -1987.

Բազմալեզվյան բառարանները կարող են ներառել լեզվի որևէ բնագավառի մասնագիտական տերմիններն ու արտահայտությունները, ինչպես՝

Վահան Արծրունի, Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան, 1956:

Ա.Ա. Քեշիշյան, Աստվածաշնչյան դարձվածքների և արտահայտությունների հայերեն, անգլերեն և ռուսերեն բացատրական բառարան, Ե., 2014:

Ս. Ամիրյան, Ա. Մարտիրոսյան, Ֆիզիոլոգիական տերմինների հայերեն-անգլերեն-ռուսերեն բառարան-տեղեկատու, Ե., 2013.

Դ.Ս. Չիլինգարյան, Ա.Ե. Սարգսյան, պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարան, Ե., 2012.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ բազմալեզվյան թարգմանական բառարանից. Ю.Н. Рерих, Тибетско-русско-английский словарь с санскритскими параллелями.

Gāthā - санскр. gāthā 1) стихотворная часть буддийских сутр / metrical part of Buddhist sutra; 2) вид индийского рукописного почерка, вероятно, кайтхи / kind of Indian handwriting, probably, the gāthā or kaithi characters. /h. 2. էջ 10/.

Պատկերազարդ թարգմանական բառարաններ են՝

Գ. Լուսինեան, Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. 1, Փարիզ, 1900:

Պ.Ս.Բեդիրյան, Արևմտահայերեն-արևելահայերեն-ռուսերեն-անգլերեն պատկերարան. Պատկերներով բացատրական բառարան, Ե., 2020:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ երկլեզվյան թարգմանական բառարանից (Ա. Ղարիբյան, «Ռուս-հայերեն բառարան»).

ЗАКОН ա. 1. օրենք, основной ≈ հիմնական օրենք. избирательный ≈ ընտրական օրենք. свод ≈ օրենքների ժողովածու. кодекс ≈ օրենքների կոդեքս, օրենսգիրք. статья ≈ օրենքի հոդվածը. нарушение ≈ օրենքի խախտում. 2. կանոն, օրենք. ≈ вежливости բաղադրվածության կանոն: 3. **Սովորաբար հոգն.** /законы/ կանոններ, օրենքներ. ≈ грамматики քերականության կանոններ: 4. **հնգ. կրոն.** օրենք. ≈ божий կրոնագիրք, կրոնի ուսուցման առարկա. мусульманский ≈ մուսուլմանական կրոն. **Δ по ≈ у** օրենքով, ըստ օրենքի. **вне ≈ а** օրենքից դուրս. **вопреки ≈ у** օրենքին հակառակ. **именем ≈ а** հանուն օրենքի. **в силу ≈ а** ըստ օրենքի. **издать ≈** օրենք հրատարակել. **драконовские ≈** դրակոնյան օրենքներ. **соблюдать ≈ ы** օրենքները պահպանել. **≈ ы природы** բնության օրենք. **≈ ы мышления** մտածողության օրենքներ. **≈ всемирного тяготения** ֆիզ. տիեզերական ձգողականության օրենք. **твое желание для меня ≈ рп** ցանկությունն ինձ համար օրենք է. **состоять /жить/ в законе** խսկց. օրինավոր կերպով ամուսնացած լինել:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Ընդգրկում են որևէ լեզվաընտանիքի կամ նրա մի ճյուղի լեզուների ընդհանուր բառերը: Այդպիսի բառարան են՝

Alois Walde Julius Pokorny, Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, bb. 1-3, Berlin und Leipzig, 1927-1931.

А. Будагов, Сравнительный словарь турецко-татарских наречий, hh. 1-2, Уսնկտ Պետերբուրգ, 1869.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ բազմալեզվյան թարգմանական բառարանից (Alois Walde- Julius Pokorny, «Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen»).

1. ghreu-: ghreu- „zusammenstürzen, einstürzen, auf etwas stürzen“.

Horn, *εχραον* (*βχρασον*) „überfiel, bedrängte“ (mit lat. *ingruo* verbunden von Döderlein Horn. Gl. I 257, Schulze KZ. 29, 241, Hirt BB. 24, 282),

ζαχρηέις „heftig andrängende, ungestüme“ (*-χρηι-ής*~, Ahrens Beitr. z. gr. u. lat. Et. 1, 8f., Bgm. IF. 11, 287);

lat. *ingruo*, -ere „mit Heftigkeit hereinstürzen, hereinbrechen“, *congruo*, -ere „zusammenfallen, zusammentreffen“, wovon *ruo*, -ere in der Bed.

„stürzen“ und *ruina* „Fall, Sturz, Einsturz, Trümmer“ (trotz Sommer Krit. Erl. 52, Persson Beitr. 284 ff.) nicht getrennt werden darf (zum Anlaut *raus* *ghr*- s. Yf. IF. 19, 99, Gesch. d. Sprw. II, I 185).

Lit. *griduju*, *griöviau*, *griäuti* „niederbrechen (tr. intr.); donnern“ *iiau*

aus eu; daraus das r von:) *griüvii* (*grivj,m*, Trautmann Bsl. Wb. 100), *griuvaü griuti* „zusammenfallen, in Trümmer fallen“; lett. *grauju*, *grüvu*, *tfraut*

648 ghreu- : ghrau

„zertrümmern“, *grüstu*, *gruvu*, *grüt* „einstürzen“, *gruvesi* m. pl. „Schutt“.

Pott Wzwb. I 744, Froehde KZ. 22, 252, Hoffmann BB. 26, 142, Yf. aaO., Trautmann aaO., Bechtel Lex. 334, Mühlenbach-Endzelin I 673.
Yon Zupitza KZ. 37, 388 als Anlautdoublette neben *qreu-* (s. d.) betrachtet.
— Ursprgl. Beziehung zu *ghreu-* „scharf drüber reiben, zerreiben“
(Pick I I I 4 144f.) ist nicht verlässlich zu stützen („einstürzen“ aus medialem „zerbröckeln“??).

Berneker 357 f. erwägt für russ. mdartl. *gruchnuh* *éα* „mit Geräusch zusammenstürzen“,

klr. *hruchnuty* „poltern; krähen“, bg. *grüham* „stoße, zerstoße“, skr. *grüham*, *grilhati* „krachen (von der Kanone); mit Krachen schlagen; durch Schlagen enthülsen“, cak. *grilh* „kleine Steine“, slov. *gruh* „Steingeröll“, *grusati* „zerbröckeln“, *griisa* „grober Sand, Schotter“, poln. *gruchnqc* „ertönen; mit Krachen hinfallen; fest schlagen“ (*gruchac* „girren wie die Taube“ malt hingegen sicher den Girrlaut) neben schallmalendem Ursprung auch eine s-Erw. unserer Wz. als Gdlage; eher besteht Zshang mit *ghreu-* „reibend über etwas darüber fahren, zerreiben“ womit sich ja auch Schallvorstellungen verbinden (auch mnd. *grüs*, *gros* „zerbröckelte Steine, Kies“, wenn nicht als *ghrüd-to-*, *ghraud-to-* oder *-so* zur verwandten Wzf. **ghreud-* gehörig, wiesen auf ein *ghreu-s-* solcher Gdbed.).

Yerfehlt schließt Charpentier IF. 28, 153 die bait. Worte aus und legt unter Yergleich mit av. *srvan*, *zrün-* „Zeit“ (angeblich aus „Gang“, doch s. u. *ger-* „morsch werden“) ein *ghreu-* der Bed. „eilen“ zugrunde (dagegen mit Recht Persson Beitr. 963).

Gr. äol. *χρανω* „ritze, verletze“, usw. bleiben fern, s. u. *ghreu-* „reiben“.

ՏԵՂԵԿԱՏՈՒ-ԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Լինում են *ուղղագրական* – *ուղղախոսական*. Բաժանվում են ընդհանուր և մասնավոր ենթատեսակների:

Ընդհանուր բառարանները ներկայացնում են տվյալ լեզվի առավել գործածական բառային կազմը՝ ընդունված ուղղագրությամբ, որոշ դեպքերում ցույց են տալիս բառերի ուղղախոսությունը: Դրանցից են՝

Ա. Ղարիբյան, Գ. Շեկյան, Դպրոցական ուղղագրական բառարան, Ե., 1965: Հովհ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Ե., 1973: Ա. Սուքիասյան, Ք. Սուքիասյան, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., 2002: Ռ. Նազարյան, Ա. Գյոդակյան, Հայերեն ուղղագրական դպրոցական բառարան, Ե., 2004: Փ. Մեյթիխանյան, Հայերենի ուղղագրական նոր բառարան, Ե., 2005: Դ. Գյուրջիյան, Հայերենի ուղղագրական բառարան, «Էդիթ Պրինտ», Ե., 2020: Орфоэпический словарь русского языка. Произношение, ударение, грамматические формы, М., 1989.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ ուղղագրական բառարանից

(Դ. Գյուրջինյան, «Հայերենի ուղղագրական բառարան»).

ափտոմեքենա	բարեկարգ
ատաղձ	բարեկարգել (բարեկարգած)
ատաղձագործ	բարեկարգիչ
ատամնաբույժ	բարեկարգում
Ատլանտյան օվկիանոս	բարեկիրթ
Արագածոտնի մարզ	բարեկրթություն
արագ-արագ	բարեհամբույր
արագքնթաց	բարեհոգի

Մասնավոր բառարանները վերաբերում են ուղղագրության այս կամ այն բաժնին (ուլորտին), ինչպես, օրինակ՝ կրկնակ բաղաձայնների, հատուկ անունների, բաղադրյալ կազմությունների գրությանը և այլն: Այդպիսի բառարաններից են՝ Դ. Գյուրջինյան, Մեծատառ, թե՛ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու, Ե., 2001: Դ. Գյուրջինյան, Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Ե., 2008:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ տեղեկատու-գործնական բառարանից (Դ. Գյուրջինյան, «Մեծատառ, թե՛ փոքրատառ. հայերեն բառարան-տեղեկատու»).

մատենադարան - գրադարան, գրապահոց

Մատենադարան (գործածվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի համար՝ **Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Մաշտոցյան Մատենադարան**)

ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Այդ կարգի բառարաններում տրվում են տվյալ լեզվի հոմանիշները. յուրաքանչյուր բառահոդված ներկայացնում է մեկ հոմանշային շարք, որի համար իբրև գլխավոր անդամ (հենաբառ) է ներկայացվում շարքի ոճականորեն չեզոք անդամը: Հոմանիշների բառարաններից են՝

Էդ. Հյուրմուզյան, Բառգիրք յաշխարհաբառե ի գրաբառ, Վենետիկ, 1869 (աշխարհաբարյան գլխաբառի դիմաց տրվում է դրա գրաբարյան հոմանիշների շարքը):

Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 1967 (2-րդ հրատ., Ե., 2003):

Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., 2006:

Словарь синонимов русского языка, тт. 1-2, Л., 1970-1971.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ հոմանիշների բառարանից (Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»).

ԵՐԵՎԱՆ, չբ. 1. Տեսնվել, դիտվել (տեսանելի լինել): 2. Նկատվել, նշմարվել (արևմտի.), երևնալ, երևել, ի հայտ գալ, աչքի առաջ գալ՝ պատկերվել, աչքի(ն) դիպչել (զարկել, զարնել, ընկնել, խփել), աչքը գալ, աչքին

ընկնել, երես գալ, (գվռ.) (նկատելի դառնալ): 3. Գոյանալ, առաջանալ, երևան գալ (սկիզբ առնել): 4. Թվալ (մի բանի տեսք ունենալ): 5. Ծագել, դուրս գալ (լուսատուների մասին): 6. Պարզվել, բացահայտվել, բանից դուրս գալ (հայտնի՝ պարզ դառնալ): 7. Պատկերանալ (տպավորություն թողնել, տպավորություն առաջացնել): 8. Արտահայտվել (արտահայտություն գտնել): 9. Տե՛ս Ներկայանալ, Գալ: 10. Տե՛ս Նմանվել:

ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Այդ կարգի բառարանում բերվում են տվյալ լեզվի համանունական զույգերը (համանունական բաղադրիչները), բացատրվում են բաղադրիչների իմաստները, դրանց համար տրվում են համապատասխան բնագրային վկայություններ: Այդպիսի բառարան են՝

Ե. Գևորգյան, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Ե., 1978:

Ռ. Նազարյան, Ա. Գյոդակյան, Հայոց լեզվի համանունների դպրոցական բառարան, Ե., 1998:

О.С. Ахманова, Словарь омонимов русского языка, М., 1974:

Л.А. Введенская, Н.П. Колесников, Учебный словарь омонимов русского языка, М., 2005:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ համանունների բառարանից (Ե. Գևորգյան, «Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան»).

1. **ԱՐՈՐ**, (հնիւ.), գ. (գյուղտնտ.) Հողը վարելու գործիք:

2. **ԱՐՈՐ**, (**արօր** ձևից), գ. (կենդր.) Ճահճային ու ջրային մի թռչուն՝ մերկասրունք ու երկարակտուց, արորիկ: «Կանչում է արորը... և ուզում էս այդ թռչունին առնել ափիդ մեջ»

(Բ. Հովսեփյան, Դու հասակացա՞ր ինձ):

ՀԱԿԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Բառարան-տեղեկատու է, որ նվիրված է հականիշ բառերի կամ զույգ(եր)ի և նրանց բառիմաստների նկարագրությանը: Հականիշների բառարանում գլխաբառերը տրվում են սովորաբար այբբենական սկզբունքով, սակայն երբեմն կիրառվում է նաև փնջային սկզբունքը, որ հնարավորություն է տալիս միավորելու հականիշները, հոմանիշները և ածանցական կազմությունները, որոնք ի հայտ են գալիս միջբառությային հարաբերությունների ժամանակ:

Այդպիսի բառարաններից են՝

Н.П. Колесников, Словарь антонимов русского языка, М., 1972:

М.Р. Львов, Словарь антонимов русского языка, М., 1978:

М.Р. Львов, Школьный словарь антонимов русского языка, М., 1981:

Դ. Գյուրջինյան, Հայերենի հականիշների բառարան, «Էդիթ Պրինտ», Ե., 2020:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ հականիշների բառարանից (Դ. Գյուրջինյան, «Հայերենի հականիշների բառարան»).

ԱՌԱՏԱԶԵՌՆ

ԱՌԱՏԱԶԵՌՆ – ԺԼԱՏ. Խոստանալու համար խիստ **առատաձեռն** է, բայց կատարելու մեջ՝ չափազանց **ժլատ**: (Բաֆֆի)

ԱՌԱՏԱԶԵՌՆ – ԿԾԾԻ (չափազանց ժլատ). Այսօր անվախ, վաղը՝ վախկոտ, մի օր նախանձոտ, մի օր՝ մեծահոգի, այսօր **առատաձեռն**, վաղը՝ **կծծի**: (Գ. Մահարի)

ԳԱԼ – ԳՆԱԼ

Առածներ Գողը **եկավ**, սևերես **գնաց**:

Ցավը **գալիս** է վազելվազ, **գնում** է նազենազ:

Հանելուկ Սարից **գալիս**, **գնում** է ծով.

Գոհ բերածով ու տարածով: (գետ)

Գեղարվեստական խոսք Սիրուն մանկիկ, ես **գնում եմ**, դու **գալիս ես** այս աշխարհ: (Ավ. Բասիակյան)

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Բառարան-տեղեկատու է, որ արտացոլում է տվյալ լեզվի բառի բառակազմական կառուցվածքը և վեր է հանում բառերի միջև գոյություն ունեցող բառակազմական կապերը: Այս կարգի բառարանում բառերը տրվում են այբբենական սկզբունքով կամ սերող հիմքից բաղադրված բառերը տրվում են փնջային սկզբունքով: Բառակազմական բառարանում բառահոդվածն ունի յուրահատուկ կառուցվածք, որ պայմանավորված է բառարանի կառուցվածքով և խնդիրներով: Բառահոդվածի ծավալը պայմանավորված է տվյալ գլխաբառի բառակազմական հնարավորություններով. թե որքան կազմությունների համար այն կարող է դառնալ սերող հիմք, նկատի են առնվում նաև նրանից սերած բաղադրությունները, որոնք իրենց հերթին դառնում են սերող հիմքեր այլ կազմությունների համար. գլխաբառով տրվում են նախ՝ նույնահիմք բարդությունները, ապա ածանցավոր կազմությունները, այնուհետև բարդություններից սերած ածանցավոր կազմությունները:

Այդպիսի բառարաններից են՝

Ս. Գալստյան, Դպրոցական բառակազմական բառարան, Ե., 2011:

А.Н. Тихонов, Словообразовательный словарь русского языка, тт. 1-2, М., 1985.

Т.Ф. Ефремова, Толковый словарь словообразовательных единиц русского языка, М., 2005.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ բառակազմական բառարանից (Ս. Գալստյան, «Դպրոցական բառակազմական բառարան»).

(գործ)(ընկեր), գ.,

(խաղ)(ընկեր), գ.,

(դաս)(ընկեր) գ.,

(ընկեր)աբար, *ւ.*, ական, *ա.*, ային, *ա*, անալ, *չ*, անի, *գ.*, ավարի, *ւ.*,
 ացնել, *նք.*, ացում, *գ.*, ովի, *ւ.*, ություն, *գ.*, ուհի, *գ.*
 (ընկեր)ա(գուրկ), *ա.*, ու>ը-ով՝ ել, *նք.* -ություն, -ում, *գ.*
 (ընկեր)ա(սեր), *ա.*, ե(է) >ի-ով՝ աբար, *ւ.*, որեն, մ., ություն, *գ.*
 (ընկեր)ա (վար), *գ.*, ական, *ա.*, ություն, *գ.*:

ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Այդպիսի բառարաններում տրվում է տվյալ լեզվի դարձվածանին՝ իմաստային բացատրություններով, կառուցվածքային տարբերակներով: Դարձվածային միավորի բազմիմաստ նշանակություններից յուրաքանչյուրի համար բերվում են բնագրային վկայություններ: Այդպիսի բառարաններից են՝

Фразеологический словарь русского языка (под ред. **А. И. Молоткова**), М., 1967.

Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

Պ. Բեդիրյան, Հայոց լեզվի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ դարձվածաբանական բառարանից (Պ. Բեդիրյան, «Հայոց լեզվի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»).

Գլուխ (գլուխը) **բարձրացնել**- **ա.** (*ա/ւ* + - վերցնել՝ *հնց.* ամբառնալ, բառնալ) *Ծառս լինել, ըմբոստանալ*:

Իր երկրի հայ բնակչությունը ևս կարող է **գլուխ բարձրացնել**. ազատության ու անկախության պահանջներ ունենալ (*Հովնան, Մայր Արաքսի ափերով...*):

Այդ օրերու ընթացքին, թաղերու մեջ, նախ անհատներ և հետո խմբեր **գլուխ բարձրացուցին** և սկսան բողոքել կատարված անարդարության դեմ (*ԶԵ, Կրակե...*):

Երբ իշխանության տկարանալը տեսան՝ հպատակ ազգերն ամեն կողմից **գլուխ վերցրին (բարձրացրին)**: - Մլխս.

Շարավոտ [«թարախակալած, նեխած»] ամիրայության առհավությունը [«հնամենիությունը»] ... մեկենիմեկ **գլուխ կ'ամբառնար**, կը դառնար, կը մոլեգներ այդ աղվոր, գեղակերտ իրանին մեջ (*Եր., Ամիրային...*):

Ուստի եթե գահը նստողը ծույլ և անհոգ կենար, նախարարք **գլուխ կը բառնային**, երկպառակության ոգին ամենուրեք կը տիրեր (*Մամ., Անկլիական...*):

բ. (*ա/ւ* - վերցնել, *խսկց.* - վեր առնել՝ **հզվդալ**. հանել) *Աշխուժանալ. ակտիվանալ. հանդուգն դառնալ*:

Ձանգվածային դժգոհության ու բողոքի ալիքի վրա **գլուխ է բարձրացնում** խուժանը, որն իշխանությունը վերցնելու հավակնություններ ունի (*«Ազգ»*) :

Ռեաքցիան կրկին **գլուխ բարձրացուց** Ծալվարի մեջ (*Օ, Փանջունի*) :

Բայց Թուրքի իր հոգիին մեջ **գլուխ վերցուցած** գազանը դեռ չէր հանդարտած (*ԱՀ, Աստուծո մատը*) :

Հայկանուշն ունի քսան փեսացու, / Մինը մեկելից գորեղ, ահարկու. / Այդ գազանները **գլուխ վեր առած**, / Միշտ թափառում են սար ու ձոր ընկած (*ՂԱ, Տորք Անգեղ*):

Ներսում **գլուխ հանեց**, խլրտաց ստեղծելու ոգին, որ վիրավոր էր, բայց ոչ մեռած (*ՄԽ, Մխիթար...*) :

Գարնան առաջին գաղջ հովերուն հետ **գլուխ կը վերցնեն** մարգերը (*ՌՀ, Սալորը ելավ*) :

գ. Մեջտեղ ելնել. հանդես գալ:

Նույն շրջապատում երբեմն **գլուխ են բարձրացնում** գոեհկությունը, միջակությունն ու կամայականությունը (*«ԳԹ»*) :

Նրա հետ հարիր քաջ հայի տղերք էլ իրանց **գլուխը բարձրացրին** ու ամենն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ (*ԽԱ, Վերք...*) :

Աշխարհաբարն արդեն **գլուխ էր բարձրացրել**, ժամանակն իրանը պահանջում էր (*ՊՊ, Հուշեր*) :

դ. (բրբ. -ը լուս գցել) Ջգալի լինել. իրեն զգալ տալ:

Ես մեկնեցի հրացանս, որ կրակեմ, բայց խիղճն իմ մեջ ևս **գլուխ բարձրացրեց** (*ՎԱն., Իսկական որսորդը*) :

Ցավն իր **գլուխը լուս կու գցե**, թե վուր դուն վրետ չդրիր (*ՄՂ*):

ե. բրբ. Մթափվել, մի տանջող բանից ազատվել:

Էրզան հիվանդությունան հազիվ **ար կլոխ պըցըրցըրալ**, վեր մին էլ փորցանքի հանդիպից (*Ղարաբաղ*):

գ. Ոտքի կանգնել, մեջքը շտկել:

Մեր ժողովուրդը... **գլուխ բարձրացուցած է** միշտ ամեն կործանումե ետք և կերտած (*ՆՍ, Արմատ նետել*) :

ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Ներկայացնում է տվյալ լեզվի կամ նրա որևէ թեմատիկ թևավոր խոսքերը՝ տարբեր լեզուների թարգմանություններով կամ օտարալեզու տարբերակներով: Այդպիսի բառարան են՝

Պ. Բեդիրյան, Հայերենի թևավոր խոսքերը, Ե., 2007:

Պ. Բեդիրյան, Բառարան. Սուրբգրային թևավոր խոսքեր, Ե, 2016:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ թևավոր խոսքերի բառարանից (Պ. Բեդիրյան, «Բառարան. Սուրբգրային թևավոր խոսքեր»).

Ղո ւ ասացեր գրբ. («ասացիր»)

Ինքդ քո բերանով ասացիր:

Ինչո՞ւ թշնամի: «Դո՛ւ ասացեր»: *Ինքը չի ասել* («Հ»):

= «Իսկ Պիղատոսը նրան (Հիսուսին – Պ. Բ.) հարցրեց. «Հրեաների թագավորը դո՛ւ ես»: Նա պատասխան տվեց ու ասաց. «Դո՛ւ ասացիր» (Ղկ. ԻԳ 3):

Բայց գործածել է դեռ Ցիցերոնը իր «Աստվածների գոյության մասին»-ում, նրանից առաջ՝ Պյութագորասի աշակերտները (հուն. *αμιων υ εΐψωα*): Հմմտ. 215:

*ռուս. Ты говоришь, անգլ. You have said so, ֆր. C'est toi qui le dis, գերմ. Er selbst (դու ինքդ) hat es gesagt, (արևմտյան լեզուներում գործածական է նաև լատ. Ipse dixit [ի փսե դի՛քսիտ]):

ՇՐՋԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Տալիս է տվյալ լեզվի շրջասությունները՝ համապատասխան բնագրային վկայություններով: Այդպիսին է՝ Պ. Բեդիրյան, Հայերեն շրջասությունների բառարան, Ե., 2002:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ շրջասությունների բառարանից (Պ. Բեդիրյան, «Հայերեն շրջասությունների բառարան»):

Երեք կրոնների քաղաք

= *Երուսաղեմ*

Ելույթ ունենալով «երեք կրոնների քաղաքի» հիմնախնդիրների՝ Կա-հիրեում բացված միջազգային խորհրդածողովում՝ արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղարն ասել է. «Եթե Երուսաղեմի հարցն արդարացի չլուծվի, ապա Մերձավոր Արևելքում կայուն խաղաղության հաստատման ամեն հույս ձախողման կմատնվի» («ՀՀ»):

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ – Ներկայացնում է լեզվի կայուն համեմատությունները կամ համեմատություն-կայուն կապակցությունները՝ իմաստային բացատրություններով և բնագրային վկայություններով: Այդպիսի բառարան է՝

В.М. Огольцев, Словарь устойчивых сравнений русского языка, 2001.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ համեմատությունների բառարանից (В.М. Огольцев, Словарь устойчивых сравнений русского языка):

КАК /СЛОВНО, ТОЧНО/ ОГОНЬ

Красный.

КАК /СЛОВНО, ТОЧНО/ БЛИН

Плоский, тонкий, сплюснутый.

Это значит, что в речи данные устойчивые сравнения выступают в виде оборотов: **красный как огонь, плоский как блин, тонкий как блин, сплюснутый как блин.** сплюснутый

КАК /СЛОВНО, ТОЧНО/ СТЕНА

Белый, бледный, побелеть, побледнеть.

КАК /СЛОВНО, ТОЧНО/ ГРИБЫ <ПОСЛЕ ДОЖДЯ>

Расти, возникать, появляться - быстро, дружно, в большом количестве.

В речи такие сравнения могут употребляться и с одним первичным словом-сопроводителем, и с сочетанием первичного слова-сопроводителя с вторичным: *растут как грибы, растут быстро как грибы*.

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՎԻ (ՇԱՐԺՈՒՄՆԱՅԻՆ) ԲԱՌԱՐԱՆ - Տալիս է ձեռքերի (կամ մարմնի այլ մասերի) շարժումների, ժեստերի և միմիկայի համալիր բացատրություն, որ հատուկ է որոշակի մշակույթի: Ստեղծվել են տարբեր մշակույթների շարժումնային բառարաններ, ինչպես՝ Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի և այլն: Այդպիսի բառարանները ներկայացնում են շարժումների գծագրական պատկերը և լեզվական արտահայտությամբ բացատրում են նրա իմաստը՝ հաճախ օգտագործելով հոմանշային այլ միջոցներ: Այդպիսի բառարաններից են՝ С. А. Григорьева и др., Словарь языка русских жестов, М., 2001. Ե. Գևորգյան, Հայոց շարժումնային լեզվի բացատրական բառարան (Շարժութարան), Ե., 2003:

ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ԿԱՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ - Պարունակում են որևէ գրքի կամ որևէ հեղինակի ստեղծագործությունների բոլոր բառերը. լինում են բառաքերականական և բնագրային: Բառաքերականական համաբարբառներում տրվում են հեղինակի երկում գործածված բոլոր բառերը՝ միայն էջանշումով, իսկ բնագրային համաբարբառներում ըստ էջերի տրվում են այն բոլոր նախադասությունները կամ կապակցությունները, որոնց մեջ գործածվել է տվյալ բառը: Բնագրային են՝

Բառարան Սուրբ գրոց, Հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք և տախտակօք, Կոստանդնուպոլիս, Տպագրութիւն Ա. Յակոբ Պոյաճեան, 1881:

Թաղեւոս վրդ. Աստվածատուրեան, Համաբարբառ հին և նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895:

Լիդա Պետրոսյան, Հովհ. Թումանյանի գեղարվեստական երկերի բառարան, Եր., 1976:

Արտաշես Պապոյան, Պ. Սևակի չափածոյի բառարան, հհ. 1-2, Ե., 1982: Словарь языка Пушкина, тт. 1-4, М., 1956-1961.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ համաբարբառ բառարանից (Թաղեւոս վրդ. Աստվածատուրեան, «Համաբարբառ հին և նոր կտակարանաց»).

ԳՈՒԺԵԼ

Բ.Մակ.Դ.48. Սպասուն սրբութեան Գուժել

Հովբ.Լ.2.13. Գրգռեցեն զսրտմտութիւն, ոչ Գուժեցին զի կապեաց զնոսա

Եսայ. ԺԵ.4. Զի Գուժեաց Եսերովն

Երեմ.Բ.24. Գուժեաց ի ճանապարս իւր

Գ. 21. Չայն ի շրթանց Գուժեաց

Թ.19. „ ողորմ Գուժեաց ի Սիովն

ԻԵ.34. Գուժեցե՛ք, հովի՛ւք, և աղաղակեցե՛ք

ԽԸ.31. „, յամե. կողմանց Մովաբու

ԽԹ.3. Գուժեա՛, Եսերոն

Եզե.ԻԷ.30. Գուժեցեն դառնապէս

Մատ.Բ.18. Ձայն Գուժեաց ի Հռամայ

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի համաբարբառների և քարտարանի բաժինը կազմել և հրատարակել է 5-13-րդ դարերի հայ մատենագիրների, փիլիսոփաների, բանաստեղծների երկերի համաբարբառառարանները՝ «Հայկական համաբարբառ» ընդհանուր վերնագրով (Ա. Ղարիբյանի նախաձեռնությամբ և անմիջական ղեկավարությամբ)։ Դրանցից են՝

Համաբարբառ Ագաթանգեղայ «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեցին՝ Օ. Խաչատրյան և ուրիշներ), հ.հ. Ա-Բ. Ե., 1973:

Համաբարբառ Միւ. Այրիվանեցւոյ «Պատմութիւն Ժամանակագրական» երկի (Կազմեց՝ Հ. Հովհաննիսյան), Ե., 1975:

Համաբարբառ Միւ. Անեցւոյ «Պատմութիւն» երկի (Կազմեց՝ Լ. Գուլգազարյան), Ե., 1980:

Համաբարբառ Դ. Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի (Կազմեց Է. Դեմիրճյան), Ե., 1979:

Համաբարբառ Փ. Բիւզանդացւոյ «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Վ. Գևորգյան), հ.հ. 1-3, Ե., 1974-1978:

Համաբարբառ Եզնկայ Կողբացւոյ «Եղծ աղանդոց» երկի (Կազմեց՝ Գ. Թոսունյան), Ե., 1972:

Համաբարբառ Եղիշէի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի (Կազմեց՝ Լ. Գուլգազարյան), հ.հ. 1-2, Ե., 1974-1978:

Համաբարբառ Զենոնի Իմաստասիրի «Յաղագս բնութեան» երկի (Կազմեց՝ Հ. Հովհաննիսյան), Ե., 1978:

Համաբարբառ Մ. Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեցին՝ Օ. Խաչատրյան և ուրիշներ), հ.հ. 1-3, Ե., 1975-1976:

Համաբարբառ Կորինի «Վարք Մաշտոցի» երկի (Կազմեց՝ Է. Դեմիրճյան), Ե., 1972:

Համաբարբառ Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի «Պատմութիւն» երկի (Կազմեց՝ Պ. Բեդիրյան), Ե., 1978:

Համաբարբառ Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Ս. Ղազարյան), հ.հ. 1-3, Ե., 1976-1983:

Համաբարբառ Գր. Նարեկացւոյ «Մատեան ողբերգութեան» երկի (Կազմեցին՝ Գ. Թոսունյան, հ.հ. 1-2, Է. Դեմիրճյան, հ. 3), Ե., 1975-1978:

Համաբարբառ Ստ. Տարօնեցւոյ Ասողկան «Պատմութիւն Տիեզերական» երկի (Կազմեց՝ Ս. Ղազարյան), հ.հ. 1-2, Ե., 1986:

Համաբարբառ Ղ. Փարպեցույ «Պատմութիւն Հայոց» երկի (Կազմեց՝ Ալ. Մարգարյան), հ.հ. 1-3, Ե., 1975-1978:

Համաբարբառ Ղ. Փարպեցույ «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» երկի (Կազմեց՝ Հ. Հովհաննիսյան), Ե., 1973:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ համաբարբառ բառարանից (Մ. Խորենացի «Պատմութիւն Հայոց»):

ԱՌԱԳԱՍՏ - և մեք փութապէս դիմեալք ի Բիւզանդիոյ, յուսացաք յարսանեաց պարել ... և *առագաստի* ասել երգս – 361. սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի դուռն տաճարին հասանել՝ դահեկանս ճապաղել ... սապէս և թագուհեացն *յառագաստին*՝ մարգարիտ – 179. ոմն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ *առագաստիդ*՝ և հարսնդ ոչ աղտեղացար – 359. Արտաշիսի հասեալ ի յԵրուանդայ շրջապատեալ *առագաստն*, ի կաշեայ և ի կտաւեայ պարսին, էջ – 172. Թաքուցեալ դօղեցին ընդ կեղծաւորութեանն *առագաստիւ*, սպասեալ դիպող աւուր – 312.

ՀԱՆԳԱՔԱՌԱՐԱՆ ԿԱՄ ՀԱԿԱԴԱՐՁ ԲԱՌԱՐԱՆ - Բերվում է տվյալ լեզվի բառացանկն ըստ բառերի վերջնահանգների. այսինքն՝ հանգաբառարանում բառերի այբբենական դասավորությունը կատարվում է ոչ թե ըստ բառի սկզբի, ոչ թե ձախից դեպի աջ, այլ ըստ բառի վերջի՝ աջից ձախ ուղղությամբ:

Բառերի հակադարձ կարգով մատուցումը կարևոր է քերականական բառարանների համար, քանի որ կողք կողքի են հայտնվում միանման վերջավորություններով, միանման ածանցներով և արմատների միանման վերջնահնչյուններով վերջացող բառեր, օրինակ, բոլոր բայերը - **ել**, -**ալ** վերջավորություններով, գոյականները՝ -*ություն*, -*անք*, -*արք*, -*ոց*, -*անոց* և այլ ածանցներով, ածականները՝ -*ական*, -*եղեն*, -*յա*, -*ե*, -*յան* ածանցներով և այլն:

Այս կարգի բառարանները կարող են նպաստել տեքստերը մեքենական թարգմանության նախապատրաստելիս: Դրանց միջոցով կարելի է որոշել, թե ինչպիսի բառեր են վերջանում, օրինակ, -*ուկ* հնչյունախմբով. *տաքուկ*, *բանուկ*, *ճարճատուկ*, *գիրուկ*, *խոզուկ*, *ստրուկ*, *բագուկ*, *սնդուկ* և այլն, որոնցից առաջին հինգը վերջանում են -*ուկ* ածանցով, իսկ մնացած երեքում (ստրուկ, բագուկ, սնդուկ) -*ուկ* հնչյունախումբն արմատական տարր է և չի առանձնանում նրանից:

Այդ կարգի բառարաններից են՝

Խորեն Գալֆայան, Յանգարան կամ բառգիրք յանգաց հայկազեան լեզուի, Թեոդոսիա, 1862: Պ.Խ. Թերզյան, Հանգարան նույնաձայն և նույնահանգ բառերու, Պոլիս, 1905: Խաչատուր Աթանասյան, Հանգարան և թանգարան հայ լեզվի, Բեյրութ, 1961: Հայոց լեզվի հանգաբառարան, Եր., 1976 (ՀՄՄՀ ԳԱ և պետական համալսարանի հաշվողական կենտրոն): Обратный

словарь русского языка, М., 1974. Л.А. Кудрявцева, Обратный деривационный словарь русских новообразований, М., 1993. Բ. Ղազարյան, Հաճախակա-նության բառարան, Ե, 1982:

Հանգաբառարանները կարող են ընդգրկել առանձին գրողների կամ բանաստեղծների ստեղծագործությունների հանգերը, ինչպես, А.Л. Бабкин, Словарь рифм Евгения Евтушенко, М., 2000.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Ներառում է դպրոցական կամ բուհական որևէ դասընթացի բառապաշարը՝ որոշակի ընտրությամբ: Տրվում են նաև լեզվական որևէ իրողություն կամ լեզվի մակարդակային միավոր-ները համեմատաբար ընդարձակ բացատրություններով. որոշ դեպքերում նման բառարանները ձեռք են բերում ուսումնական ձեռնարկի արժեք:

Այդ բառարաններից են՝

Ա. Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Ե., 1993:

Լ. Խաչատրյան, Գրաբարի ուսումնական բառարան, Երևան, 2013:

Լ. Խաչատրյան, Գրաբարի ուսումնական բառարան, Վենետիկ, 2016:

Լ. Խաչատրյան, Մ. Միրումյան, Հայերենագիտական տերմինների ու-սումնական բառարան, Ե., 2020:

К.В. Губачин, Учебный толковый словарь русского языка, М., 1983.

Учебный словарь сочетаемости слов русского языка, М., 1978.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ ուսումնական բառարանից (Ա. Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան»).

genere sm 2 . род (в лингвистической таксономии: класс предметов, обозначаемый данной языковой единицей – словом или словосочетанием – и включающий множество видов этих предметов). սեռ (լեզվաբանական դաս-դասաբանության մեջ. տվյալ լեզվական միավորի՝ բառի կամ բառակապակ-ցության կողմից ցույց տրվող առարկաների դաս, որը ընդգրկում է այդ առարկաների բազմաթիվ տեսակներ).

ANT. espce sf

COR. hyperonymie.

Ուսումնական բառարանի տեսակ է **գործնական-ուսումնական բա-ռարանը**, որ կարող է վերաբերել լեզվի տարբեր մակարդակային միա-վորների: Այդպիսին է՝ Պ. Բեդիրյան, Բառերի ընտրությունը. Հոմանիշների գործնական-ուսումնական բառարան, Ե., 2017, որը պարունակում է 4900 հոմանշային շարք՝ բնագրային նմուշներով, իմաստային նրբությունների և կիրառության յուրահատկությունների մատնանշումով, որոնք օգտագործո-ղին հնարավորություն կտան խոսքի համար անհրաժեշտ ամենահարմար հոմանիշն ընտրելու:

Ուսումնական բառարանի մեջ կարելի է գետեղել նաև **թեմատիկ բառարանը**, որ պարունակում է լեզվի որևէ թեմատիկ խմբի բառապաշարը: Այդպիսին է՝ Պ. Բեդիրյան, Հայերեն բառերի ու արտահայտությունների թեմատիկ բառարան-գանձարան, Ե., 2019 (պարունակում է 299 թեմա):

Ուսումնական բնույթի է նաև **կետադրական բառարանը**. որպես գլխաբառեր տրվում են հայերենի կետադրության հիմնական հասկացությունները և դրանց բացատրությունը՝ բնագրային համապատասխան օրինակների ցուցադրումով, որ կազմում է տվյալ բառահոդվածի բովանդակությունը: Այդպիսի բառարան է՝ Հովհ. Զաքարյան, Կետադրական բառարան. ուսումնական տեղեկատու, Ե., 2013:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ - Ներկայացնում է լեզվի բառային կազմին հատուկ այս կամ այն քերականական կարգը. կարող են վերաբերել բայասեռին, խնդրառությանը, հոլովառությանը, անուն խոսքի մասերի թվի կարգին, խոսքիմասային տարարժեք բառերին և այլն:

Այդ բառարաններից են՝

Լ. Խաչատրյան, Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան, Ե., 1998 (բառաքերականական):

Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Ե., 2003 (բնագրային):

Դ. Գյուրջինյան, Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Ե., 2005:

Грамматический словарь русского языка, М., 1977.

Кузнецова А.И., Ефремова Т.Ф., Словарь морфем русского языка, М., 1986.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ քերականական բառարանից (Լ. Խաչատրյան, «Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր»).

ԱԹՈՌԱԿԻՑ, ա.1. Հավասար իրավունքներ ունեցող. Մատեան առաջի նորում մերձաւորք եւ աթոռակիցք արքային (Եսթեր. Ա. 14): 2. Փոխանորդ, տեղապահ. Յդեաց զիւր աթոռակիցն զԽաղ (Բուգ., 100): 3. Գործակից. Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր (Եդ., 14): 4. Մի ժողովի՝ խորհրդակցության մասնակից՝ ներկա. Սուրբ հարքն ի նիկիացոց քաղաքի ժողովեալքն, որոց աթոռակից էր Քրիստոս (Կիւրդ.): 5. Էակից, փառակից, հավասարապատիվ (սուրբ երրորդության մասին). Աթոռակից հօր (որդի), եւ նմին պատուի, ի նոյն մեծարանս (Մեբեր. Բ.): գ. Մեկի իշխանությանը մասնակից, իշխանակից, մտերիմ՝ հարազատ անձ. Ինքնակալ Վաղենտինոս, հանդերձ աթոռակցաւ եւ թագակցաւ Վաղեսիւ կայսերաւ, Արշակայ Հայոց արքայի ինդալ (Խոր., 278):

ԲԱՌԱՅԱՆԿՈՎ ԲՆՈՒԹԱԳՐՎՈՂ ԲԱՌԱՐԱՆ – Ըստ բառացանկի յուրահատկությունների՝ բառարանները լինում են մեղմասացության և էթիկայի, հապավումների, հատուկ անունների, օտար բառերի, նորաբանությունների, հնացած բառերի և այլն:

ՄԵՂՄԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԱՅԻՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ԲԱՌԱՐԱՆ – Մեղմասության բառարաններում տրվում են գրական լեզվի մեղմասությունները, որոնք փոխարինում են ժողովրդախոսակցական ոչ պատշաճ արտահայտություններին, ինչպես նաև այն մեղմասությունները, որոնք այդպիսին են դիտվում լեզվի պատմության տեսանկյունից: Տրվում են նաև ստուգաբանական մեկնաբանություններ՝ բառերի բառագիտական բնութագրերով:

Խոսքային վարքականոնի բառարաններում բառահոդվածները պարունակում են բառի կամ արտահայտության բացատրությունը, տրվում են նրանց քերականական - ռճական նկարագրությունը, ստուգաբանական տեղեկություններ, բերվում են բնագրային վկայություններ՝ գեղարվեստական գրականությունից կամ ժողովրդախոսակցական լեզվից:

Այդպիսի բառարաններից են՝

Е.П. Сеничкина, Словарь эвфемизмов русского языка, М., 2008.

А.Г. Балакай, Словарь русского речевого этикета, М., 2007.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ խոսքարվեստի բառարանից (А.Г. Балакай, "Словарь русского речевого этикета").

ВСЕ (МЫ) ПОД БОГОМ (ХОДИМ) – *Прост.* Никто не гарантирован от непредвиденных опасностей, неприятностей, бед; всё же с каждым может случиться. Употр. Часто при утешении того, с кем произошло несчастье. [Пожилая женщина – знакомой]. Ну, ничего, даст Бог, нога – то заживёт, ты молодая ещё... Вот ведь как... все под Богом ходим. Спасибо хоть все живы остались.... (1992).

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Բառարան-տեղեկատու է, որ «բացում է» հապավումները, որոնք հաճախ են օգտագործվում թարգմանիչների, խմբագիրների, ինչպես նաև օտարերկրացիների խոսքում, որոնք դժվարանում են տվյալ լեզվի հապավումները վերծանելու հարցում: Բառարանում հապավումները բերվում են այբբենական կարգով և ուղեկցվում են մեկնաբանություններով: Օրինակ, ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, ՀՀ ԿԳՆ - Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և այլն:

Այդպիսի բառարաններից են՝ Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի հապավումների բառարան, Ե., 1979: Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատու, «Հայաստան», Ե., 2000:

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ հապավումների բառարանից (Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան, «Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատու»).

ԱՀԿ¹ - Առևտրի համաշխարհային կազմակերպություն

Գլոբալ առևտրի համակարգի հիմքում ընկած են ԱՀԿ-ի պայմանագրերը: Ի, 14-20.12.99

ԱՀԿ² - Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

Դեռևս 1992 թվականից գործում է ԱՀԿ-ի կողմից հաստատված բրոնխների ապրամայով հիվանդության միջազգային դասակարգումը: ԱԼ, 12.04.00

ԱՀԿ³ - ավտոմատ հեռախոսակայան

Եվս մեկ ԱՀԿ կկառուցվի Ախուրյանի շրջկենտրոնում: Ն, 14.04.00

ՕՏԱՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Պարունակում է այն փոխառյալ բառերը, որոնք գործածվում են գիտական գրականության մեջ, ԶԼՄ-ներում, հանդիպում են առօրյա-խոսակցական լեզվում. դրանց օտարալեզու լինելը գիտակցվում է հանրության կողմից: Այս կարգի բառարանները բացատրում են օտար բառերի իմաստները (ուղղակի թե փոխաբերական), մեկնաբանում նրանց ստուգաբանական նշանակությունը, ցույց տալիս փոխառու լեզվում գլխաբառի կրած իմաստային փոփոխությունները և այլն: Այդ առումով նրանք մոտենում են հանրագիտական բառարաններին:

Այդպիսի բառարաններից են՝ Տեր-Ղազարյան, Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի, Թիֆլիս, 1908: Մարտ. Հարությունյանց, Բացատրական բառգիրք օտարազգի բառերի և օտարազգի բառերի ու դարձվածքների, որոնք գործածվում են հայոց գրականության մեջ, Ալեքսանդրապոլ, 1912: Ալ. Մարգարյան, Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Ե., 2004: Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Ե., 2011: Словарь иностранных слов, 15-ое издание, М., 1988. Словарь иноязычных выражений и слов, тт. 1-2, Л., 1981.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ օտար բառերի բառարանից (Ա. Հայրապետյան, «Օտար բառերի բառարան»).

ՁՈՆԴ [*< зонд < фр. sonde*], գ. 1. Ձննաձող՝ գուտապերչի կամ մետաղյա ձողանման գործիք, որով հետազոտում են վերքերը կամ մարմնի ներքին գործարանները: 2. Հորատիչ՝ անցքերի՝ փոսերի հորատման երկաթյա ձող՝ ապարների ևն հետազոտման համար: 3. Հատուկ գործիքներով սարքավորված օդապարիկ՝ օդի վերին շերտերն ուսումնասիրելու համար:

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Արձանագրում և բացատրում է նոր բառերն ու կայուն կապակցությունները, որոնք ստեղծվել են հասարակական կյանքի և գիտության տարբեր բնագավառների զանազան հասկացություններ և իրողություններ արտահայտելու համար: Սովորաբար այդ կարգի լեզվական միավորները «դուրս են գրվում» մամուլից և գեղարվեստական գրականությունից, ունեն բառական արժեք և արձանագրված չեն լինում բացատրական բառարաններում:

Սովորաբար այդպիսի բառարաններում նորաբանությունները մատուցվում են բնագրային վկայություններով՝ նշելով հեղինակին: Այդպիսի աշխատանքներ են՝ Ֆ. Խլդաթյան, Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Ե., 1982: Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., 2002: Այն որոշակի գաղափար է տալիս հայերենի բառային կազմի ժամանակակից փուլի զարգացման վերաբերյալ, միաժամանակ արտացոլում է նրա փոփոխման իրական վիճակը, ինչպես նաև կարող է նյութ մատակարարել նոր բացատրական բառարաններին:

Նորաբանությունների բառարանները կարող են ընդգրկել միայն պատմական որոշակի ժամանակահատվածում արձանագրված նորաբանությունները, որոնք տվյալ ժամանակահատվածի հասարակական-քաղաքական իրադարձությունների հետևանք են, ինչպես՝ В.И. Максимов, Словарь перестройки, М., 1992.

Վկայենք բառահոդվածի նմուշ-օրինակ նորաբանությունների բառարանից (Ս. Էլոյան, «Արդի հայերենի նորաբանությունների բառարան»).

ԴԱՐՉՎԱԾԱԿԱԶՄԻՉ, ած. (լեզվբ.):

Դարձվածք կազմող: *Եթե խոսքիմասային տարարժեք բառերի ածանցյալ իմաստն ու արժեքը եզակի (օկագիտնալ) չէ, այն պետք է բավարարի տարարժեքությանը ներկայացվող պահանջները. պետք է ունենա՝ ա) բառային-քերականական բազմիմաստություն, բ) դարձվածակազմիչ դեր* (Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, 78):

ՀՆԱՅԱԾ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ - Արձանագրում է այն բառերն ու բառակապակցությունները, որոնք դուրս են մղվել գործածությունից, սակայն պահպանվում են գրական ստեղծագործություններում: Հնացած բառերի մեկնաբանությունը օգնում է պահպանելու մշակութային ժառանգության շարունակականությունը, ճանաչելու անցած դարերի հասարակական և անձնական կյանքի իրողությունները: Այդպիսի բառարանները սովորաբար մեկնաբանում են այն բառերն ու արտահայտությունները, որոնք դուրս են մնացել ընդհանուր բացատրական բառարաններից. դրանք, այլ կերպ ասած, ընդգրկում են լեզվի *հնաբառերն ու պատմաբառերը*:

Այդպիսի բառարան է՝

Р.П. Рогожникова, Т.С. Карская, Школьный словарь устаревших слов русского языка, М., 1996.

Թվարկած տեսակներով չեն սպառվում հայերենի (և այլ լեզուների) բառարանները. բառարանների այս շարքերն անընդհատ համալրվում են նորանոր տեսակներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:

Ամալյան Հ. Ս., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (5-15-րդ դդ.), Ե., 1966:

Ամալյան Հ. Ս., Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (16-17-րդ դդ.), Ե., 1971:

Գասպարյան Գ.Կ., Հայ բառարանագրության պատմություն, Ե., 1968:

Թոսունյան Գ.Բ., Գրաբարի բառարանագրությունը, Ե., 2005:

Խաչատրյան Լ.Ս., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:

Խաչատրյան Լ.Ս., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:

Պետրոսյան Հ. Զ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Ե., 1975:

Ахманова О.С., Словарь лингвистических терминов, М., 1969.

Богатырева И.И., Волошина О.А., Словарь школьных лингвистических терминов, М., 2012.

Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.

Большой энциклопедический словарь /гл. ред. А. М. Прохоров.- М., СПб., 2001.

Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.

Лайонз Дж., Общее языкознание, М., 2005.

Лингвистический энциклопедический словарь /гл. ред. В. Н. Ярцева/. – М., 1990.

Марузо Ж., Словарь лингвистических терминов /перевод с франц. Н. Д. Андреева, под ред. А. А.Реформатского. – М., 1960.

Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.

Матвеева Т.В., Полный словарь лингвистических терминов, Ростов-на-Дону, 2010.

Розенталь Д. Э., Словарь-справочник лингвистических терминов /Д.Э. Розенталь, М. А. Теленкова. – М., 2001.

Старичёнок В.Д., Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008.

Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.

Широков О.С., Введение в языкознание, М., 1985.

5. ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քերականություն - եզրույթը բազմիմաստ է, այն նշանակում է՝

ա) լեզվի կազմություն, որ ներառում է լեզվի քերականական կարգերը, քերականական միավորները և քերականական ձևերը,

բ) լեզվաբանության բաժին, որ ուսումնասիրում է լեզուների ձևաբանական և շարահյուսական մակարդակները, նրանց միավորները և փոխադարձ հարաբերությունները:

Քերականությունը գործ ունի լեզվի նյութական և վերացական հասկացությունների հետ: Նյութական հասկացությունների առումով քերականությունն ուսումնասիրում է լեզվի քերականական կառուցվածքային միավորները՝ խոսքի մասերը, բառաձևերը, բառակապակցություններն ու նախադասությունները, որոնք կազմում են խոսքի նյութական ատաղձը: Վերացարկված հասկացությունների առումով քերականությունն ուսումնասիրում է լեզվի նյութական միավորներին հատուկ քերականական իմաստները, քերականական (ձևաբանական ու շարահյուսական) կարգերը և այլն:

Քերականության բաժիններն են ձևաբանությունը և շարահյուսությունը:

Ձևաբանություն - ուսմունք է բառերի ձևերի մասին: Բառաձև ասելով՝ հասկանում ենք ոչ թե բառի հնչյունակազմը, այլ նրա քերականական ձևերը, այսինքն՝ հոլովման, խոնարհման ձևերը, հոգնակի կազմելու ձևերը և այլն, որոնք ծառայում են այս կամ այն ձևաբանական (քերականական) իմաստն արտահայտելուն: Ձևաբանությունը լայն իմաստով զբաղվում է նաև բառերի առավել ընդհանուր քերականական խմբերով՝ խոսքի մասերով: Խոսքի մասերի ուսմունքն ընդգրկում է բառերի իմաստային-քերականական խմբերի դասակարգման սկզբունքները, բառաքերականական խմբերը, այդ խմբերի ներքին դասակարգումները, նրանց հարացույցները, շարահյուսական գործառնությունները և այլն:

Շարահյուսություն - ուսմունք է հաղորդակցման միավորի՝ նախադասության, նրա կառուցվածքային բաղադրիչների, նրանց կապակցման եղանակների, բառակապակցության, նախադասության անդամների ու նրանց բնորոշ շարահյուսական կարգերի, շարահյուսական իմաստների ու նրանց արտահայտման միջոցների մասին: Շարահյուսության ուսումնասիրության առական են բառակապակցությունը, նախադասությունը և բնագիրը (տեքստը):

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ԲԱՌԱՁԵՎ - Բառերը լեզվում գործածվում են երկու ձևով՝ ուղիղ կամ անփոփոխ և թեք կամ փոփոխված: Բառի ուղիղ կամ անփոփոխ ձևը նրա ելակետային ձևն է, իսկ նրա թեք՝ փոփոխված ձևը, որով

այս կամ այն քերականական իմաստն է արտահայտվում, կոչվում է բառաձև:

Օրինակ, *աշակերտ* բառի *աշակերտի*, *աշակերտի(ն)*, *աշակերտից*, *աշակերտով*, *աշակերտները*, *աշակերտների*, *աշակերտներից* և այլ փոփոխված քերականական ձևերը նրա բառաձևերն են, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է մեկ կամ մեկից ավելի քերականական իմաստներ:

Ճիշտ այդպես՝ *ասել*, *խոսել*, *լսել*, *պարել*, *գնալ*, *զգալ*, *ուրախանալ*, *հիանալ* և այլ բառեր ուղիղ՝ ելակետային ձևեր են, իսկ նրանց մյուս՝ եղանակային (ասացի - ասացինք, *ասել եմ* - *ասել ենք*, *ասեմ* - *ասենք*, *կասեմ* - *կասենք*, *ասա՛* - *ասացե՛ք* (և այլն) և դերբայական (ասում - ասելիս - ասելու - ասել (եմ) - ասած - ասող - (չեմ) ասի) ձևերը բառաձևեր են:

Բառաձևերը, նույն բառի փոփոխված քերականական ձևերը լինելով, կազմված են ձևաբանական հիմքից և բառահարաբերական ձևույթներից՝ հոլովման, խոնարհման ցուցիչներից, դերբայական և հոգնակիակերտ մասնիկներից, հոդերից և այլն: Բառաձևի մասնիկներից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ որպես մեկ քերականական իմաստի կրող: Ինչպես՝ *գիշերվա* բառաձևում -վա մասնիկն արտահայտում է միայն սեռական հոլովի իմաստ, *սեղանից* բառաձևում -ից մասնիկը՝ միայն բացառական հոլովի իմաստ և այլն: Բառաձևի հիմքը և մասնիկը կարող են ձևավորվել նաև առանձին, ինչպես՝ *գրելու եմ* բառաձևում, որտեղ *եմ* մասնիկը (օժանդակ բայը) արտահայտում է ներկա ժամանակի, եզակի թվի, առաջին դեմքի քերականական իմաստներ և այլն:

Եթե քերականորեն իմաստակիր մասնիկները (վերջավորությունները) ավելանում են բառի արմատին կամ հիմքին (գրվում են միասին), ապա գործ ունենք համադրական (սինթետիկ) բառաձևերի հետ, իսկ եթե այդ մասնիկները գրվում են առանձին, այսինքն՝ բառի բաղադրիչները ձևավորվում են առանձին, ապա գործ ունենք վերլուծական (անալիտիկ) բառաձևերի հետ:

Համադրական բառաձև - քերականական իմաստներն արտահայտվում են վերջավորությունների միջոցով, որոնք անմիջականորեն ավելանում են բառին (հիմքին կամ արմատին). ինչպես՝ *գրեց-ի*, *գրեց-իր*, *գրեց*-, *գրեց-ինք*, *գրեց-իք*, *գրեց-ին*, *սեղան-ի*, *սեղան-ի-ն*, *սեղան-ից*, *սեղան-ով*, *սեղան-ը*, *սեղան-ներ-ը* և այլն:

Վերլուծական բառաձև - իբրև քերականական իմաստների կրողներ հանդես են գալիս օժանդակ բառերը. այդպիսի բառաձևերի բաղադրիչները ձևավորվում են առանձին: Դա հաստուկ է հիմնականում անջատական լեզուներին, ինչպիսին է անգլերենը, որտեղ լայն գործածություն ունեն նախդիրները, սպասարկու բառերը: Հմմտ. *in the street* (փողոցում. ներգոյական հոլովի իմաստ), *on the table* (սեղանի վրա. տրական հոլովի իմաստ), *from*

the city (քաղաք-ից. բացառական հոլովի իմաստ), I *must* go (պետք է գնամ. հարկադրական եղանակի իմաստ) և այլն:

Անկախ տիպաբանական կառուցվածքից (անջատական թե կցական)՝ ցանկացած լեզվում կարելի է ցույց տալ թե՛ համադրական, թե՛ վերլուծական բառաձևեր: Հմմտ. ռուսերեն. стена – стены, остров – острова և хочу читать, буду читать, в городе, անգլերեն. books (գրքեր) և of the book (գրքի), հայերեն. *երգե-մ, երգե-ս, երգ-ի և երգել եմ, երգելու եմ, երգելու լինեմ և այլն:*

Որոշ լեզուներում բայական համակարգի վերլուծական ձևերում կարևոր դեր ունի օժանդակ բայը, ինչպես արդի հայերենում, անգլերենում, գերմաներենում և այլն: Անգլերենում, օրինակ, to be բայի ներկայի ձևերը՝ am, is, are, անցյալի ձևերը՝ was, were, և ապառնիի ձևերը՝ shall, will, անորոշ դերբայի և առաջին ու երկրորդ դերբայների հետ կազմում են վերլուծական բառաձևեր, ինչպես՝ I am playing, I was writing, I shall read և այլն: Գերմաներենում գործածվում է երկու օժանդակ բայ՝ haben և sein, որոնք տարբեր խմբերի բայերի հետ կազմում են վերլուծական բայաձևեր, ինչպես՝ er hat gelesen (նա կարդացել է), er ist gegangen (նա գնաց) և այլն:

ՀԱՐԱՑՈՒՅՑ - Հարացույցը ընդհանրական հատկանիշներով միավորվող բառաձևերի շարք է: Այսպես, միևնույն գոյականի հոլովման բոլոր ձևերի ամբողջությունը կազմում է տվյալ գոյականի հոլովական հարացույցը, կամ տվյալ բայի խոնարհման բոլոր ձևերի ամբողջությունը կազմում է տվյալ բայի խոնարհման հարացույցը: Հարացուցային շարքը կազմված է շարքի անդամներից. շարքի յուրաքանչյուր անդամ մյուսին կամ մյուսներին հակադրվում է և՛ ձևով, և՛ իմաստով. հմմտ. *քաղաք – քաղաքի – քաղաքից – քաղաքով և այլն, կամ՝ գրում եմ – գրում ես – գրում է, գրեցի – գրեցիր – գրեց* և այլն:

Զանազանում են հնչությաբանական, բառակազմական, բառաիմաստային, ձևաբանական, շարահյուսական հարացույցներ:

Հնչությաբանական հարացույց – այս հարացույցն ըստ դիրքի, ըստ ձայնի և աղմուկի հարաբերության, ըստ արտաբերման եղանակի և այլ հատկանիշների հերթագայվող հնչյունների շարք է: (Տե՛ս **Բաղաձայնների դասակարգումն ըստ ձայնի և աղմուկի հարաբերության, ըստ արտաբերման եղանակի, ըստ արտաբերման տեղի** բառահոդվածները):

Բառակազմական հարացույցը – այս հարացույցը բառակազմական միևնույն ձևությամբ (արմատով կամ ածանցով) ընդհանրացող բաղադրյալ բառաշարքն է. օրինակ՝ *մարդասեր, հայրենասեր, որդեսեր, գրքասեր, որսասեր, թատերասեր, բանասեր* կամ *քաղաքային, ազգային, հողային, ջրային, խոսքային, տեղային* և այլն:

Բառաիմաստային հարացույց – այս հարացույցն իմաստային – թեմատիկ խմբերում զետեղված բառաշարքն է: Դրանք են՝ *ժամանականիշ*

բառերը (գիշեր, ցերեկ, ժամ, րոպե, ամառ, ձմեռ...), անձնանիշ բառերը (մարդ, տղա, հայր, աղջիկ, ուսուցիչ, օդաչու...), *իրանիշ բառերը* (սեղան, ծառ, գիրք, տուն, գրադարան...), *որնէ արհեստի վերաբերող բառերը* (շինարարություն, որմնադիր, քար, ավազ, ցեմենտ, շաղախ, կիր, հատիչ...), *ասացական բայերը* (ասել, խոսել, պատմել, նկարագրել...), *գունանունները* (սև, սպիտակ, կարմիր, կանաչ, դեղին, կապույտ, բոսոր, կանաչավուն...), *կացարանանիշ բառերը* (տուն, բնակարան, սենյակ, պալատ, դղյակ, հանրակացարան, վրան...), *ազգակցականության* (եղբայր, քույր, անեք, սկեսուր, սկեսրայր, փեսա, հարս, աներորդի, քենի, քեռի, հորեղբայր...), *թանձրացականության-նյութայնության* (առարկա, սեղան, թուղթ, ջուր, հող, խնձոր...), *հատկանշայնության* (գեղեցիկ, հետաքրքիր, հակիրճ, ընդարձակ, անկաշառ...), *ընթացայնության* (շարժվել, գնալ, ընթանալ, ուղևորվել, ճանապարհորդել...), *հավաքականության* (հասարակություն, ավագանի, երամակ, վտառ, գորք, նախիր...), ինչպես նաև այլ հատկություններով միավորվող բառաշարքերը և այլն:

Ձևաբանական հարացույց - միևնույն խոսքի մասի թեքված ձևերը ներկայացնող բառաձևերի շարք է: Տարբերակում են անվանական և բայական հարացույցները (կամ էլ՝ գոյականական, ածականական, դերանվանական). ավելի մասնավորված՝ հոլովական (սեղան-սեղանի-սեղանից-սեղանով), խոնարհման (խաղում եմ – խաղում ես – խաղում է...), համեմատության աստիճանների (լավ – ավելի լավ- լավագույն – ամենալավ (ամենից լավ)) և այլն:

Հարացույցը կարող է ունենալ ենթաշարքեր: Սրանք կարող են ներկայանալ իբրև *լրիվ հարացույցներ* (լրիվ՝ ամբողջական շարքեր), *ոչ լրիվ հարացույցներ* (թերի շարքեր) և *հավելավոր հարացույցներ* (հավելավոր շարքեր):

Շարահյուսական հարացույց – այն անվանում են նաև *նախադասության հարացույց*. ներառում է նախադասության վերացական կառույցների բոլոր իրացումները, որոնք միավորված են շարակարգային հիմունքով. այդ կառույցները ներկայանում են իբրև շարակարգային վերափոխումների շարքեր և ընդգրկում են օբյեկտիվ՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակները (սահմանական եղանակ), ինչպես նաև սուբյեկտիվ եղանակներն ու նրանց իմաստային տարատեսակ դրսևորումները: Հմմտ. *Դու աշխատում ես: Դու աշխատելու ես: Դու աշխատեցիր: Երանի դու աշխատեիր: Դու պետք է աշխատես: Դու կաշխատես: Թերևս դու աշխատես: Որպեսզի դու աշխատես...: Դու աշխատի՛ր: Դո՛ւ աշխատիր...* և այլն:

Լրիվ հարացույց - հայերենում կանոնավոր բայերի խոնարհման և իրանիշ գոյականների հոլովման հարացույցները լրիվ են. հարացույցներն ամբողջանում են հարացուցային շարքի անդամներով. շարքում բաց անդամ չի մնում:

Ոչ լրիվ հարացույց – հայերենում պակասավոր բայերի հարացույցները (կամ, ունեմ, գրաբարում՝ եմ, գոգ, գոլ, կայ, պարտել(իմ), չիք) թերի են. դրանք չունեն հարացուցային բոլոր ձևերը. հարացուցային շարքում մնում են բաց անդամներ: Անձնանիշ գոյականները (մարդ, տղա, աղջիկ, մանկավարժ, գիտնական և այլն) ներգոյական հոլովաձև չունեն, հետևաբար այդպիսի գոյականների հոլովական հարացույցը նույնպես թերի է:

Հավելավոր հարացույց – այդպիսի ձևեր ունեն որոշ գոյականներ, դերանուններ և բայեր, որոնց այս կամ այն քերականական ձևը զուգաձևություն է հանդես բերում: Հմմտ. գրաբարում *է* ներքին թեքման գոյականների հոգնակի հոլովաձևերը՝ անգեղք – անգեղց (անգեղաց) – յանգեղց (յանգեղաց) – անգեղբք (անգեղաւք): Ցուցական որոշ դերանունների եզակի և հոգնակի ձևերը. այս – այսր (այսորիկ) – այսմ (այսմիկ) – յասմ (յասմանէ) – այսու (այսուիկ), այսք (այսոքիկ) – այսց (այսոցիկ) – այսց (այսոցիկ) – զայս (զայսոսիկ) – յասց (յասցանէ) – այսոքիւք (այսոքիմբք) և այլն:

Արդի հայերենում հավելավոր հարացույց ունեն անկանոն բայերը (բերել, դնել, անել, զարկել և այլն)՝ պայմանավորված հիմքակազմությամբ, հմմտ. զարկի-զարկիր-զարկեց, զարկինք-զարկիք-զարկին և զարկեցի-զարկեցիր-զարկեց, զարկեցինք-զարկեցիք-զարկեցին, հմմտ. նաև հրամայականի ձևերը՝ գրե՛ք – գրեցե՛ք, նստե՛ք – նստեցե՛ք և այլն:

Հարացույցի ելակետը բառի ուղիղ ձևն է, հայերենի հոլովական հարացույցում բառի ուղիղ ձև է եզակի ուղղականը, բայական հարացույցում՝ անորոշ դերբայը, ածականական հարացույցում՝ դրական աստիճանը:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ – «Խոսքի մասեր» եզրույթը պատճենում է հունարեն և լատիներեն համապատասխան եզրույթի (հմմտ. լատ. *partes orationis*), որ ավանդաբար գործածվում է նաև այլ լեզուներում (ռուս. *части речи*, գերմ. *Redeteile*, անգլ. *parts of speech*): Արդի լեզվամտածողությամբ այդ եզրույթը հակասում է «խոսք» բառի ժամանակակից ընկալմանը: «Խոսքի մասերը»՝ գոյական, ածական, բայ, մակբայ և այլն, լեզվական միավորների խմբեր են և ոչ թե *նախադասության* մասեր: Ավելի հաջող է «բառերի խմբեր» անվանումը, որ հանդիպում է մի շարք լեզուներում, ինչպես՝ շվեդերենում և դանիերենում՝ *ordklasser*:

Խոսքի մասերը բառերի առավել ընդհանուր խմբեր են, բառաքերականական խմբեր կամ դասեր, որոնք միմյանցից տարբերվում են քերականական նշանակություններով, ձևաբանական առանձնահատկություններով և շարահյուսական գործառույթներով: Խոսքի մասերը բաժանվում են երկու հիմնական խմբի՝ *լիիմաստ բառերի* և *սպասարկու բառերի*:

Լիիմաստ կամ նյութական բովանդակություն ունեցող բառեր – դրանք կարող են նախադասության անդամ դառնալ և արտահայտել առանձին հասկացություն: *Սպասարկու բառեր* – դրանք նախադասության առանձին

անդամ չեն դառնում, նրանք արտահայտում են լրացական (ստորադասական) հարաբերություններ՝ ձևավորելով վերլուծական կառույցներ, կապական կապակցություններ: Հետևաբար լիմաստ և սպասարկու բառերի տարբերությունը կրում է գործառական-քերականական բնույթ:

ԼԻԻՄԱՍՏ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ - Խոսքի մասերի համակարգում հիմնական միավորներ են համարվում *անունը և բայը*: Դրանք նախադասության հիմնական բաղադրիչներն են, ձևավորում են լեզվի բառային կազմի երկու հիմնական խմբեր, ունեն իրենց բառակազմական միջոցները, բառակազմական կաղապարներն ու ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները: Անուններն անվանում են առարկաներ և նրանց հատուկ մշտական հատկանիշներ: Այդ առումով անունները բաժանվում են գոյական անունների, ածական անունների և թվական անունների:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ - Արտահայտում է առարկա կամ առարկայացված հասկացություն և նախադասության մեջ հանդես է գալիս ենթակայի ու խնդրի գործառույթներով, կարող է փոփոխվել ըստ հոլովների՝ կազմելով հոլովաձևեր և նախդրավոր հոլովական կապակցություններ (Տե՛ս *Գոյականի հոլովի կարգը* բառահոդվածը): Ունի անձի և իրի իմաստ, որոշյալության և ստացականության կարգ (Տե՛ս *Գոյականի առկայացման կարգը* բառահոդվածը), փոփոխվում է նաև թվով (Տե՛ս *Գոյականի թվի քերականական կարգը* բառահոդվածը):

Առարկայի կամ առարկայացված հասկացության շրջանակներում քերականության մեջ տարբերակում են տարատեսակ հասկացական խմբեր, ինչպես՝

- անձեր և կենդանի այլ արարածներ (մարդ, առյուծ, թռչուն, սողուն),
- առարկաներ (սեղան, գիրք, հայելի),
- կենդանիների, առարկաների և անձանց հավաքական ամբողջություն (նախիր, երամակ, գոհարեղեն, ուսանողություն),
- նյութական առարկաներ (սոսինձ, կաթ, ձյուն),
- առարկայացված վիճակ, գործընթաց (զեկուցում, սլացք, ընթացք),
- երևույթ, իրադարձություն (որոտ, կայծակ, ջրհեղեղ),
- ժամանակային միավոր կամ մի հատված (րոպե, ժամ, տարեդարձ, հոբելյան) և այլն:

Գոյականի համակարգում առանձնացնում են հետևյալ *իմաստային-քերականական խմբերը*՝ հատուկ և հասարակ, թանձրացական և վերացական, անձ և իր ցույց տվող գոյականներ:

Հատուկ անուն - Գոյականի իմաստային-քերականական խումբ, որի միավորները, որպես անվանումներ, տրվում են միատեսակ առարկաներից *յուրաքանչյուրին*. այդ առարկաները կարող են լինել անձեր, իրեր, երևույթ-

ներ: Այս գոյականները կոչվում են *հատուկ անուններ*: Հատուկ անունները դասակարգվում են որոշակի ենթախմբերի՝ պայմանավորված այն հանգամանքով, թե հասկացական ինչպիսի՝ խմբերի առարկաներ են անվանում: Առանձնացվում են հատուկ անունների հետևյալ հիմնական տեսակները.

- *անձնանուններ*. նրանց մեջ մտնում են մարդկանց անունները, ազգանունները, հայրանունները, մականունները, պատվանունները և այլն. Եղիշե Աբգարի Սողոմոնյան, Գայլ Վահան, Իվան Ահեղ, Աշոտ Երկաթ,

- *դիցանուններ*. նրանց մեջ մտնում են աստվածների և դիցաբանական հասկացությունների անունները. Զևս, Ապոլլոն, Աֆրոդիտե, Վանատուր, Արամազդ,

- *տիեզերանուններ*. նրանց մեջ մտնում են տիեզերական մարմինների, երկնային մոլորակների, աստղերի անվանումները. Երկիր, Արեգակ, Լուսին, Մեծ Արջի համաստեղություն,

- *տեղանուններ*. աշխարհագրական տեղանքի անվանումները (Երկիր, քաղաք, գյուղ, գետ, օվկիանոս, ծով, լիճ, փողոց և այլն). Արցախի Հանրապետություն, Երևան, Ատլանտյան օվկիանոս, Սևանա լիճ, Նալբանդյան փողոց,

- *տոների և հիշարժան դեպքերի անվանումներ*. Մայիսի մեկ, Նոր տարի, Հաղթանակի օր,

- *հաստատությունների, կազմակերպությունների անվանումներ*. «Էրեբունի» հյուրանոց, Հայաստանի գրողների միություն,

- *գրական գեղարվեստական երկերի անվանումներ*. «Վարդանանք» պատմավեպ, «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծություն, «Անուշ» պոեմ,

- *հրատարակչությունների, թերթերի, ամսագրերի անվանումներ*. «Զանգակ» հրատարակչություն, «Առավոտ», «Հայագիտական հանդես»,

- *նյութական մշակույթի արժեքավոր կառույցների, տաճարների, վանքերի անվանումներ*. «Էրմիտաժ» պատկերասրահ, Ամբերդ ամրոց, Գառնու տաճար, Ս. Էջմիածնի Մայր տաճար:

Հասարակ անուն - Գոյականի իմաստային քերականական խումբ, որի միավորները, որպես անվանումներ, տրվում են առարկաների, անձանց կամ երևույթների *ընդհանրական խմբերին*: Հասարակ գոյականների ներսում առանձնացնում են հետևյալ բառաքերականական խմբերը՝ թանձրացական, վերացական, նյութական և հավաքական:

- *Թանձրացական գոյականներ*. Ցույց են տալիս օբյեկտիվ իրականության մեջ գտնվող առարկաներ, մարդկանց, կենդանիներ, բուսականություն, իրեր, նյութական հասկացություններ և բաժանվում են երկու խմբի՝ *անձնանիշ և իրանիշ*:

- *Անձնանիշ գոյականները* անձերի հասարակ և հատուկ անուններ են, ինչպես՝ *աղջիկ, տղա, մանկավարժ, քաղաքացի, օդաչու, նավավար, հյուսն, Անդրանիկ, Գևորգ, Անահիտ, Ասպրամ* և այլն:

- *Իրանիշ գոյականները* առարկաներ են կամ առարկայացված հասկացություններ, օրինակ՝ *ծով, սեղան, դպրոց, տիեզերք, զեկուցում, վագր, արարմունք, գեղեցկություն* և այլն:

- *Վերացական գոյականներ*. Գոյականների տեսակ, որի անդամներն արտահայտում են վերացական հասկացություններ, հատկանիշներ, զգացմունք կամ վիճակ, որոնք քերականորեն հասցված են առարկայի աստիճանի, մտածվում են որպես առարկա, օրինակ՝ *վախ, սեր, միտք, համեստություն, չարչարանք, հայրենասիրություն, երկյուղ, բարություն, հաճույք, վագր* և այլն:

Վերացական գոյականները սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում:

• *Նյութական գոյականներ*. Հասարակ անունների ենթատեսակ, որի միավորներն արտահայտում են նյութական-զանգվածային իմաստներ: Դրանք տարատեսակ նյութերի անվանումներ են, ինչպիսին են ըմպելիքները, նյութերը, քիմիական տարրերն ու միացությունները, դեղագործական նյութերը, գյուղատնտեսական մշակաբույսերը և այլն, օրինակ՝ *բենզին, թթվածին, ծծմբաթթու, սոսինձ, գինի, ջուր, պողպատ, բրինձ, կաթ, մեղր, մեղրաջուր, շաքար, շաքարավազ* և այլն: Նյութական գոյականները չթվարկվող են. այլ կերպ կոչվում են *անհաշվելի գոյականներ*:

• *Հավաքական գոյականներ* (Տե՛ս *Հավաքական թիվ* բառահոդվածը):

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ - Արտահայտում է առարկայի հատկանիշի գաղափար, պատասխանում է *ո՞ր, որպիսի՞, ինչպիսի՞* հարցերին, շարահյուսական մակարդակում հանդես է գալիս որպես գոյականի որոշիչ կամ բաղադրյալ ստորոգյալի մաս, ունի բառակազմական յուրահատուկ ածանցներ: Ժամանակակից հայերենում ածական անունները չունեն թվի և հոլովի քերականական կարգեր և գոյականներին չեն համաձայնում: Ածականի մի տեսակը (որակականը) ունի համեմատության աստիճաններ:

Ածականների հատկանշային իմաստները բազմազան են. դրանք արտահայտվում են երկու եղանակով, որոնք ընկած են նրա տեսակների առանձնացման հիմքում:

Ածականի մի տեսակն արտահայտում է առարկայի ինքնին ունեցած (որակային) հատկանիշ, այլ կերպ ասած՝ այդ հատկանիշն առարկայից անբաժան է, հմմտ. *բարձր լեռ, պայծառ արեգակ, քաղցր պտուղ, ամեհի աղյուծ* և այլն: Հատկանիշն այդ եղանակով ցույց տվող բառերը կոչվում են *որակական ածական*:

Ածականի մյուս տեսակն արտահայտում է առարկայի այնպիսի հատկանիշ, որ ածականն արտահայտում է մեկ այլ առարկայի միջնորդությամբ. այսինքն ածականը հատկանիշն արտահայտում է մեկ այլ առարկայի հարաբերությամբ, օրինակ, *փայտե դուռ* կապակցության *փայտե* ածականը *դուռ* գոյականի հատկանիշն արտահայտում է *փայտ* առարկայի միջոցով կամ նրա հարաբերության միջոցով: Հմմտ. նաև՝ *աշակերտական նստարան, լեռնային հեղեղ, ոսկյա ժամացույց, արծաթե գոտի* և այլն: Հատկանիշն այդ եղանակով ցույց տվող բառերը կոչվում են *հարաբերական ածական*:

Որակական ածական - Ցույց են տալիս բնության մեջ եղած առարկաների, անձանց և երևույթների հատկանիշները. կարող են արտահայտել՝

- *գունային հատկանիշ* (սև, սպիտակ, կարմիր, բոսոր, կանաչ),
- *ֆիզիկական հատկանիշ* (բարձր, հսկա, նիհար, թիկնեղ, կույր, ցածրահասակ),
- *ներքին հատկանիշ* (ազնիվ, խելոք, հպարտ, խոնարհ),
- *արտաքին հատկանիշ* (զեղեցիկ, տգեղ, հմայիչ, առինքնող, պարթև),
- *ձևի և չափի հատկանիշ* (ուղիղ, կոր, երկար, կարճ, նեղ),
- *ունենալու (չունենալու) հատկանիշ* (լուսավոր, ժանգոտ, ամաչկոտ, գունատ),

- *տարիք կամ հասակ* (երիտասարդ, ծեր),
- *զգայական հատկանիշ* (քաղցր, համեղ, տաք, սառը, նուրբ, դառը),
- *բնավորության, մտավոր կարողության հատկանիշ* (համառ, անկոտրում, բարի, կիրթ, հպարտ) և այլն:

Որակական ածականներն ունեն *համեմատության աստիճաններ* (տե՛ս *Համեմատության աստիճաններ* բառահոդվածը):

Հարաբերական ածական - Արտահայտում են միջնորդավորված հատկանիշ, այնպիսի հատկանիշ, որ դրսևորվում է այլ առարկաների, անձանց կամ երևույթների հարաբերությամբ: Հարաբերական ածականներն արտահայտում են տարատեսակ հատկանիշներ.

- *տարածական հատկանիշ* (գյուղական, ջրային, ցամաքային, քաղաքային),
- *ժամանակային հատկանիշ* (ամառային, հնադարյան, գիշերային, ցերեկային),
- *նյութի, բաղկացության հատկանիշ* (ոսկե, փայտե, մարմարյա, արծաթյա) և այլն,
- *հատկացական, պատկանելության կամ վերաբերության հատկանիշ* (մայրական, հայրական, հայրենի, մայրենի, հողային, տնային) և այլն:

Հարաբերական ածականներն ածանցավոր կազմություններ են:

Որակական և հարաբերական ածականները տարբերակվում են ոչ միայն իմաստային հատկանիշներով, այլև ունեն քերականական, ձևակազմական և գործառական տարբերություններ:

ա) որակական ածականները կարող են ստանալ համեմատության աստիճաններ, իսկ հարաբերականները գուրկ են դրանից,

բ) որակական ածականներն ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ, իսկ հարաբերականները պարզ լինել չեն կարող,

գ) որակական ածականը կարող է արտահայտել գործողության հատկանիշ՝ հանդես գալով մակբայի քերականական արժեքով (*քաջ* զինվոր և *քաջ* զիտակցել)՝ (տե՛ս **Խոսքիմասային տարարժեքություն** բառահոդվածը), կարող է ածանցման կաղապարով վերածվել մակբայի (*քաջ+աբար* կռվել), իսկ հարաբերականներն այդպիսի դեր չունեն,

դ) որակական ածականից կարելի է փաղաքշական ածանցներով կազմել նոր ածականներ (քաղցր+իկ, լավ+իկ, տաք+ուկ, անհնար+ին), իսկ հարաբերականներից այդպիսի ձևեր չեն կազմվում,

ե) որակական ածականից *-ություն* ածանցով կարելի է կազմել վերացական գոյականներ (լավ+ություն, բարձր+ություն, համեստ+ություն), իսկ հարաբերականներից սովորաբար չեն կազմվում (հազվադեպ՝ գավառական+ություն, թթվայն+ություն և այլն),

զ) որակական ածականները կարող են կազմել հականշային գույգ (բարձր-ցածր, լավ-վատ, գիտուն-տգետ, բախտավոր-դժբախտ), իսկ հարաբերականները՝ ոչ:

Հատկանշի արտահայտման տեսակետից որակական-հարաբերական հակադրությունը հայերենում երբեմն հստակ տարբերակված չի լինում. երբեմն հարաբերական ածականի մեջ զարգանում է որակականի նշանակություն, և միևնույն բառույթը համատեղում է երկու իմաստներն էլ: Այս երևույթը հետևանք է ածականի ներսում ընթացող ներխոսքիմասային տեղաշարժերի: Հմտ. *արմատական* ածականը «արմատին վերաբերող, ստուգաբանական» իմաստներով հարաբերական ածական է (*արմատական* բառարան), իսկ «էական, հիմնական» իմաստներով՝ որակական (*արմատական* փոփոխություններ), *մարդկային* ածականը «մարդկանցից բաղկացած, մարդկանց» իմաստներով հարաբերական է (*մարդկային* հասարակություն), իսկ «մարդուն հատուկ՝ վերաբերող» իմաստներով՝ որակական (*մարդկային* վերաբերմունք) և այլն:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ - Կազմում է առանձնահատուկ բառաբերականական խումբ: Այդ բառերը սովորաբար շարահյուսական մակարդակում հանդես են գալիս տարատեսակ գործառնություններով. այդ առումով նրանք հարում են բառաբերականական այլ խմբերի և դիտվում են այլ խոսքի մասերի ենթախմբեր, ինչպես՝ գոյական-թվականներ (երեք, չորս), ածական-թվականներ (առաջին, երկրորդ) և այլն (որոշ քերականական ավանդույթներում թվականները նախապես մտնում էին անուն խոսքի մասի մեջ):

Որպես լիմաստ խոսքի մաս՝ արտահայտում է քանակ, քանակային հատկանիշ, ցույց է տալիս քանակայնության գաղափար՝ աճող կամ նվազող աստիճանականությամբ, ինչպես՝ *մեկ, երկու ..., առաջին, երկրորդ ..., երկուական, երեքական ..., մեկ երկրորդ, երկու երրորդ ...* և այլն:

Թվականները, իրենց բառական իմաստով պայմանավորված, քանակի գաղափարը դրսևորում են մասնավորված-տարբերակված ձևով, իսկ մյուս բառերը քանակի գաղափարն արտահայտում են ընդհանուր ձևով, առանց մասնավորման: Այդ բառերը կարող են դառնալ բայական անդամի լրացում, իսկ թվականներն այդպիսի դեր չունեն (բացառությամբ բաշխական թվականների) (հմմտ. այսքան խոսել, կրկին պատմել), դրանք կարող են արտահայտել հատկանիշի հատկանիշ, իսկ թվականներն այդպիսի գործառույթ չունեն (հմմտ. այնքան հետաքրքրասեր, շատ խելոք) և այլն: Թվականներն արտահայտում են առարկաների մասնավորված-տարբերակված քանակ, որոշակիորեն ցույց են տալիս առարկաների թվային կարգը կամ հավասարաչափ բաշխումը:

Թվականների իմաստային դասակարգումը կատարվում է ըստ այն հանգամանքի, թե նրանք ի՞նչ եղանակով են դրսևորում քանակի գաղափարը: Ըստ այդմ՝ տարբերակում են հետևյալ տեսակները՝ *քանակական և դասական*:

Քանակական թվական - Ցույց են տալիս վերացական թիվ կամ առարկաների քանակ և պատասխանում են *ինչքա՞ն, որքա՞ն, քանի՞* հարցերին: Բաժանվում են *բացարձակ, կոտորակային և բաշխական* տեսակների՝

-Բացարձակ թվական. Արտահայտում են ամբողջական թվերի իմաստ՝ մեկից մինչև անսահմանություն. *մեկ, երկու ..., տասը, տասնհինգ ..., քսան, երեսուն, իննսուն, հարյուր, հարյուր հինգ, հազար, հազար երկու հարյուր..., միլիոն, երկու միլիոն..., միլիարդ, մեկ միլիարդ երկու հարյուր հազար* և այլն: Բացարձակ թվականները կապակցություն են կազմում գոյական անունների հետ, ինչպես՝ *երկու աշակերտ, քսան տետր, քսան հազար դրամ, հարյուր հազար կիլոմետր* և այլն:

Բացարձակ քանակական թվականները, իրենց բուն խոսքիմասային իմաստով գործածվելիս, ժամանակակից հայերենում չեն հոլովվում (նրանց հոլովումը հատուկ է գրաբարին, ինչպես՝ *մի-միոյ-միոջ/միում-զմի-ի միոջե-միով, երկու-երկուց-երկուց-գերկուս-յերկուց-երկուք* և այլն):

Ըստ կազմության՝ բացարձակ թվականները լինում են՝ *պարզ* (զրո, մեկ, երկու... տասը, քսան, հարյուր, հազար, միլիոն, միլիարդ, տրիլիոն), *ածանցավոր* (երեսուն, քառասուն, յոթանասուն, ութսուն), *համադրական բաղադրություններ* (տասնմեկ..., տասնինը, երեսունմեկ ..., երեսունինը, իննսունմեկ..., իննսունինը), *հարադրական բաղադրություններ* (հարյուր մեկ, մեկ միլիոն երկու հազար հինգ հարյուր իննսունինը):

-Բաշխական թվականներ - Ցույց են տալիս առարկաների քանակական հավասար բաշխում. կազմվում են երկու եղանակով.

ա) քանակական թվականներից՝ *-ական* ածանցով. *երկուական, երեքական, քսանական, հարյուրական, հազարական* և այլն,

բ) քանակական թվականի կրկնությամբ. բաղադրիչները գրվում են գծիկով. *մեկ-մեկ, հինգ-հինգ, վեց-վեց, տասը-տասը, քսան-քսան* և այլն:

-Կոտորակային թվական - Ցույց են տալիս առարկայի քանակային հատկանիշ՝ մասի և ամբողջի հարաբերությամբ: Օրինակ՝ Զինվորների *երկու երրորդ* մասը (կամ *երկու երրորդը*) ճեղքեց թշնամու շրջապատման օղակը:

Կոտորակային թվականները կազմվում են հարադրությամբ. նրանց առաջին բաղադրիչը քանակական թվական է, երկրորդը՝ դասական թվական (տե՛ս **Դասական թվականներ**):

ա) Երկրորդ բաղադրիչը (դասական թվականը) ստանում է *-որդ* կամ *-երորդ* ածանցը, ինչպես՝ *մեկ երկրորդ, չորս հինգերորդ* և այլն,

բ) *-որդ* կամ *-երորդ* ածանցի հետ կարող է հանդես գալ նաև *-ական* ածանցը, որով նա ունենում է միաժամանակ երկու ածանց (*-որդական* կամ *-երորդական*), հմմտ. *երկու երրորդական, երկու տասներորդական* և այլն,

գ) կոտորակային թվականներն արտահայտվում են նաև թվանշաններով.

2 - *երկու երրորդ*, 8 - *ութ իններորդ*, 9 - *ինը տասներորդ* և այլն:

3

9

10

Դասական թվական - Ցույց են տալիս առարկաների թվային կարգը կամ դասային հաջորդականությունը: Կազմվում են՝

ա) քանակական թվականներից՝ համապատասխանաբար *-որդ*, *-երորդ* ածանցների միջոցով. *երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, տասներորդ* և այլն,

բ) *մեկ* թվականի դասականը կազմվում է տարահիմքությամբ՝ *առաջին*:

Այդ թվականները դրսևորվում են՝

ա) արաբական թվանշաններով, որոնցից հետո դրվում է *-րդ*. 2-րդ (երկրորդ), 3-րդ, 5-րդ և այլն (*մեկ* թվականի համար՝ *1-ին՝ առաջին*),

բ) հռոմեական թվանշաններով, հմմտ. I (առաջին), II (երկրորդ), III (երրորդ), IV (չորրորդ), V (հինգերորդ), VI (վեցերորդ), VII (յոթերորդ), VIII (ութերորդ), IX (իններորդ), X (տասներորդ), XI (տասնմեկերորդ) և այլն: Յուրահատուկ են 50, 100, 500, 1000 թվականների դասականները՝ L – հիսուներորդ, C – հարյուրերորդ, D – հինգհարյուրերորդ, M – հազարերորդ,

գ) հայկական այբուբենի տառերով, որոնք գրվում են առանձին (մեծատառով), միջակետով կամ փակագծով.

<i>առաջին</i> - Ա	ա.	ա)
<i>երկրորդ</i> - Բ	բ.	բ)
<i>տասներորդ</i> - Ժ	ժ.	ժ)
<i>տասներկուերորդ</i> - ԺԲ	ժբ.	ժբ)

Հմմտ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս *Վազգեն Ա* - Ն.Ս.Օ.Տ.Տ.

Ամենայն Հայոց կաթողիկոս *Վազգեն Առաջին*:

ԴԵՐԱՆՈՒՆ - Խոսքի մաս, որի միավորներն արտահայտում են տարբեր խոսքիմասային նշանակություններ, կարող են բաշխվել գոյականի, ածականի, թվականի և մակբայի միջև, ունեն փոխարինման հատկանիշ և նախադասության մեջ փոխարինում են լիմաստ բառերին: Նրա խոսքիմասային առանձնահատկությունը դրսևորվում է երկու տեսանկյունով՝

ա) ցույց է տալիս անձ, առարկա, հատկանիշ՝ խոսողի տեսանկյունից. *ես* – խոսողն է, *դու* – խոսակիցն է կամ որևէ անձ, որին դիմում են, *նա* – կողմնակի անձ է կամ առարկա, որի մասին խոսվում է,

բ) ունի *փոխարինման գործառույթ*. այդ դերով դերանունն արտահայտում է առարկա, հատկանիշ և քանակի գաղափար՝ փոխարինելով՝

ա) *գոյականի* (առարկա) - անձնանիշ (*ես, դու, ո՞վ, ամեն մեկը, ոչ ոք, ոմանք* և այլն) և *իրանիշ* (*սա, դա, ի՞նչ, ոչինչ*),

բ) ածականի (հատկանիշ) - ինչպես՝ *այս, այդ, այն, այսպիսի... սույն, նույն, միևնույն, յուրաքանչյուր, ամբողջ, համայն, ամենայն, ամեն մի, ոչ մի, ուրիշ, այլ, որոշ, ինչ-որ* և այլն,

գ) թվականի (քանակ)- *մի քանի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, քանի՞, ինչքա՞ն, որքա՞ն, որչա՞փ* և այլն, դասական թվականների իմաստով՝ *ո ը, ո ը երորդ, քանի՞ երորդ*,

դ) մակբայի (հատկանիշ և քանակ)-*այստեղ, այդտեղ, այնտեղ, այսպես, այդպես, այնպես, նույնպես, ինչպե՞ս, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, ինչքա՞ն, որքա՞ն* ե՞րբ, երբևէ, երբևիցե:

Ըստ բառիմաստի և բառաբերականական հատկանիշների՝ դերանունները բաժանվում են հետևյալ տեսակների.

Անձնական դերանուն - Ցույց են տալիս խոսքային հաղորդակցման մասնակիցներին (անձանց). դրանք են՝ *ես, դու, նա, ինքք, մենք, դուք, նրանք, իրենք*: Ես դերանունը մատնանշում է խոսողին, որ կատարում է գործողությունը, հոգնակին՝ *մենք*, ցույց է տալիս գործողություն կատարող անձանց: Դու դերանունը մատնանշում է հաղորդակցմանը մասնակցող անձին, որին ուղղված է խոսքը, իսկ *դուք* ձևը՝ հաղորդակցմանը մասնակցող անձանց (որոնց ուղղված է խոսքը): *Նա, նրանք, ինքք, իրենք* դերանունները մատնանշում են անձանց, որոնք անմիջականորեն չեն մասնակցում հաղորդակցմանը, թեև խոսքը նրանց է վերաբերում:

Ցուցական դերանուն - Արտահայտում են առարկա, հատկանիշ, քա-

նակ և գործողության տարածական և չափի ու ձևի հանգամանքներ: Արտահայտած հարաբերության դրսևորման տեսակետից ցուցական դերանունները բաժանվում են երկու խմբի.

1. Դերանուններ, որոնք առարկան ու հատկանիշն արտահայտում են տարածական, չափի ու ձևի հարաբերությամբ: Դրանք են՝ *սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, այսպես, այդպես, այնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ, այստեղ, այդտեղ, այնտեղ*:

2. Դերանուններ, որոնք առարկան ու հատկանիշը չեն արտահայտում տարածական հարաբերությամբ: Դրանք են՝ *նույն, միևնույն, նույնպես, նույնպիսի, նույնքան, նույնչափ, մյուս*:

Փոխադարձ դերանուն - Ցույց են տալիս փոխադարձաբար իրար հետ կապված առարկաներ. դրանք են՝ *միմյանց, իրար, մեկմեկու (մեկմեկի)*: Հմմտ. *Իրար* փաթաթված ստվեր ու կաճան, Ու հետքե ր, հետքե ր, հետքե ր մարդկային (ՀՄ): Այս նախադասության *ստվեր ու կաճան* առարկաները գործողությամբ կամ վիճակով միմյանց կապված են. նրանք գտնվում են փոխադարձ կապի մեջ:

Փոխադարձ դերանունները մտնում են գոյականական դերանունների մեջ և ուղղական հոլովի ձև չունեն:

Որոշյալ դերանուն - Ցույց են տալիս խոսողին ծանոթ (հայտնի) առարկաների քանակական ամբողջություն կամ առանձին առարկայի ամբողջություն՝ որոշակի հարաբերությամբ: Դրանք են՝ *ամենքը, բոլոր(ը), յուրաքանչյուր, ամեն, ամեն ոք, ամեն ինչ, ամեն մի (մեկը), յուրաքանչյուր ոք, ողջ, ամբողջ, համայն, ամենայն*:

Ըստ արտահայտած ընդհանրական իմաստների՝ այդ դերանունները բաժանվում են տարբեր խմբերի.

ա) Առարկաների կամ նրանց քանակի ընդհանուր ամբողջությունը ցույց տվող դերանուններ. *ամենքը, բոլոր(ը)*: Հմմտ. Ինչքան որ հուր կա իմ սրտում, *բոլորը* քեզ (ԵՉ):

բ) Առարկաների կամ նրանց քանակի ընդհանուր ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին շեշտող դերանուններ. *ամեն, յուրաքանչյուր, ամեն ոք, ամեն ինչ, ամեն մի, ամեն մեկը (մինը), յուրաքանչյուր ոք*:

գ) Առանձին առարկայի ամբողջությունը ցույց տվող դերանուններ. *ամբողջ, ողջ, համայն, ամենայն*:

Որոշյալ դերանունների մի մասը, որոշիչ հոդ ստանալով, մատնացույց է անում առարկա, ինչպես՝ *բոլորը, յուրաքանչյուրը, ամբողջը, ողջը*: Հմմտ. Ինչքան, բառ, *ո ողջը* մրմունջ, Ինչքան երգ, *ո ողջը* լալով. Ջուլո մ էր, գուլո մ, լա՛ն (ՊՄ):

Անորոշ դերանուն - Գործածվելով գոյական անունների հետ կամ հան-

դես գալով անկախ կիրառությամբ՝ ցույց են տալիս այդ առարկաներից մեկը կամ մի քանիսը՝ առանց որոշակի հարաբերության. *այլ, այսինչ, այնինչ, որոշ, ուրիշ, որնէ, որնիցէ, երբնէ, ոմն, մի (մեկը), ինչ-որ, ինչ-ինչ, մի քանի, մի քանիսը, մի շարք* և այլն:

Առարկայանիշ դերանունները, ըստ քանակի գաղափարն արտահայտելու հանգամանքի, բաժանվում են երկու խմբի.

ա) Միայն հոգնակի թվի իմաստ ունեցող դերանուններ. *մի քանի, մի քանիսը, մի շարք, ինչ-ինչ*:

բ) Միայն եզակի թվի իմաստ ունեցող դերանուններ. *մի (մեկը), ոմն, որնէ, որնիցէ, այսինչ, այնինչ*:

Այլ, ուրիշ դերանունները կարող են գործածվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի գոյականների հետ, հմմտ. *այլ* հարց, *այլ* հարցեր: *Երբնէ, երբնիցէ* դերանունները ժամանականիշ բառեր են, զուրկ թվի գաղափարից:

Անորոշ դերանունների ժխտական ձևերը դերանվան առանձին տեսակ չեն կարող համարվել, հմմտ. մեկը - *ոչ մեկը*, ոք - *ոչ ոք* (անձնանիշ), ինչ - *ոչինչ* (իրանիշ), մի - *ոչ մի* (անձնանիշ և իրանիշ):

Հարցա-հարաբերական դերանուն - Արտահայտում են հարցում խոսողին անձանոթ առարկայի կամ հատկանիշի վերաբերյալ կամ կատարում են շաղկապական բառերի դեր՝ հանդես գալով քերականական արժեքով. *ու՛ր, ինչ, որ, քանի, որքան, որչափ, ինչչափ, ինչքան, որպիսի, ինչպիսի, քանիերորդ, որերորդ, ուր, երբ, ինչպես*:

Այս դերանունները շարահյուսորեն երկարժեք գործառույթ ունեն. հանդես են գալիս մեկ՝ իբրև հարցական, մեկ՝ իբրև հարաբերական դերանուն:

Իբրև *հարցական դերանուններ*, հանդես են գալիս գոյականների և բայական անդամների հետ: Գոյականի (առարկայի) հետ գործածվելիս արտահայտում են հարցում խոսողին անձանոթ *անձի* (ո՞վ), *առարկայի* (ի՞նչ), *առարկայի հատկանիշի* (ինչպիսի՞) վերաբերյալ, բայական անդամի հետ՝ հարցում գործողության կատարման *տեղի* (որտե՞ղ, ո՞ւր), *ժամանակի* (ե՞րբ), *ձևի* (ինչպե՞ս), *չափ ու քանակի* (ինչքա՞ն) վերաբերյալ և այլն:

Իբրև *հարաբերական դերանուններ*, գործածվում են բարդ ստորադասական նախադասությունների կազմում՝ երկրորդական նախադասությունը կապելով գլխավոր նախադասությանը. այս դերով հավասարվում են (ստորադասական) շաղկապներին: Հմմտ. Բայց նա է հայ, *Ու՛ր* հովազի արնախում երախում էլ Խոսի լեզվով իր մայրենի (ՀՇ): *Քանի* գյուղին մոտենում էինք, գելերն այնքան հետ էին ընկնում (ՀԹ): *Երբ* հասան բերդի ավերակներին, հեծյալները վայր իջան ձիերից (ԱԲ):

Որոշ դերանուններ ունեն *թվի և հոլովի կարգեր* և այդ տեսակետից յուրահատկություն են դրսևորում. փոխվում են նրանց ձևաբանական հիմքերը, հմմտ. հոգնակի թվակազմությունը. *ես - մենք, նա - նրանք, ինքք* -

իրենք : Հմմտ. հոլովակազմությունը. *ես - իմ - ինձ, դու - քո - քեզ, նա - նրա - նրան, մենք - մեր - մեզ, դուք - ձեր - ձեզ*. հոլովման այս տիպը կոչվում է *դերանվանական հոլովում* (Տե՛ս *Դերանվանական հոլովում* բառահոդվածը):

Անձնական դերանուններն ունեն նաև *դեմքի* քերականական կարգ՝ *I դեմք (ես, մենք), II դեմք (դու, դուք), III դեմք (նա, նրանք, ինքը, իրենք)*՝ (տե՛ս *Դերանվան դեմքի քերականական կարգը* բառահոդվածը):

ԲԱՅ - Ցույց է տալիս գործողության, եղելության, դրության և վիճակի գաղափար: Տարբերակվում են բառաքերականական մի շարք հատկանիշներով:

1. *Հստ դիմայնության հատկանիշի՝* բայերը լինում են դիմավոր և անդեմ (տե՛ս *Բայի դեմքի կարգը* բառահոդվածը):

2. *Հստ եղանակայնության հատկանիշի՝* արդի հայերենում տարբերակվում են սահմանական, ըղձական, ենթադրական, հարկադրական և հրամայական եղանակները (տե՛ս **Բայի եղանակի կարգը** բառահոդվածը):

3. *Հստ սեռայնության հատկանիշի՝* տարբերակվում են ներգործական, կրավորական և չեզոք սեռերը, ինչպես նաև՝ սեռադասերը (անցողական և անանցողական) և սեռային առումները (միջին անդրադարձ և պատճառական) (տե՛ս **Սեռ** բառահոդվածը):

4. *Հստ խոնարհման հատկանիշի՝* տարբերակվում են *կանոնավոր բայերը*, որոնք ունեն եղանակաժամանակային բոլոր կանոնական ձևերը, և *անկանոն բայերը*, որոնք շեղվում են կանոնավոր ձևերից: Խոնարհման համակարգում հանդիպում են կերպային տարբերակներ, որոնք կազմվում են տարբեր հիմքերով կամ տարբեր արմատներով և դիտվում են *հավելավոր բայեր* (ունեմ – ունենում եմ, դրի – դրեցի), տարբերակվում են նաև *միադիմի բայերը* (անձրևում է, մթնեց), *պակասավոր բայերը* (եմ, կա), առանձնացվում են *էական բայերը*, որոնք արտահայտում են «լինելու, գոյություն ունենալու» իմաստ, ինչպես՝ *է, լինեմ* (տե՛ս **Խոնարհում** բառահոդվածը):

5. *Հստ իմաստային հատկանիշի՝* տարբերակվում են բայերի իմաստային-թեմատիկ խմբերը՝ *ասացական բայեր* (ասել, պատմել, գրուցել, խոսել, հարցնել), *զգացական բայեր* (սիրել, ուրախանալ, ասել, հիանալ), *իմացական բայեր* (սովորել, ճանաչել, հետազոտել), *մտածական բայեր* (մտածել, մտորել, խորհել, որոշել), *ընթացական բայեր* (գնալ, շարժվել, ճանապարհ ընկնել) և այլն:

Տարբերակվում են նաև՝ *վերացական բայեր*, որոնք զուրկ են նյութական բովանդակությունից, ունեն սպասարկու դեր (լինել, համարվել, դառնալ), *թանձրացական բայեր*, որոնք ունեն նյութական բովանդակություն և օժանդակ բայի (կամ վերացական բայերի) հետ կազմում են պարզ ստորոգյալ (երգել, նկարել, գրել, խաղալ, կարդալ):

6. *Հստ բայակազմական հատկանիշի՝* տարբերակվում են ածանցա-

վոր բայերը: Բայակազմ ածանցներ, որոնք բաժանվում են չորս տեսակի՝

ա) Բաղադրության քերականական կամ հիմքակազմիչ ածանցներ՝ *ան-, -են-, -ն-, -չ-,* հմմտ. *մերձենալ, լավանալ, ընկնել, թռչել*: Այս ածանցները ձևավորում են ներկայի կամ առաջին հիմքը, ինչպես՝ *մերձեն* - ում եմ, *լավան* - ում եմ, *թռչ* - ում եմ, *մտն* - ում եմ, երկրորդ կամ անցյալի հիմքում - *ն-* և *-չ-* ածանցներն ընկնում են. *թո* - ա, *մտ* - ա, *իսկ* -ան-, -են- ածանցները հանդես են գալիս *ն-ց* հերթագայությամբ, հմմտ. *մերձեց* - ա, *լավաց* - ա:

բ) Պատճառական ածանց՝ -ցն-, որ կազմում է պատճառական սեռային առման բայեր, ինչպես՝ *խաղացնել, բազմեցնել, ուրախացնել, հարբեցնել, նստեցնել* և այլն):

գ) Կրավորական ածանց՝ -վ-. կազմում է կրավորական սեռի բայեր. գրել - գրվել, այդպես նաև՝ սիրվել, գլորվել, ազատագրվել, քանդվել և այլն:

դ) Բազմապատկական ածանցներ՝ -ատ-, -ոտ-, -կոտ-, -տ-. դրվում են բայի առաջին հիմքի վրա. *կոտրել* – *կոտրատել, նստոտել, թռչկոտել, կտրոտել* և այլն:

7. *Ըստ ձևակազմական հատկանիշի՝* տարբերակվում են համադրական և վերլուծական բայերը:

Համադրական բայերը ձևավորվում են բայահիմքով և վերջավորություններով. վերջիններս արտահայտում են բայական դեմքի, թվի և ժամանակի քերականական կարգերը, իսկ հիմքը և վերջավորությունը՝ բայի եղանակը: Հմմտ. *գրեց-ի, տես-ա*. սահմ. եղանակ, անցյալ կատարյալ, եզակի թիվ, առաջին դեմք: *Գր-ի, կարդ-ա*. ըդձ. եղանակ, ապառնի ժամանակ, եզակի թիվ, երրորդ դեմք և այլն:

Վերլուծական բայերը ձևավորվում են տարբեր սկզբունքներով.

ա) մեկից ավելի բայական բաղադրիչներով. գնում-հասնում է, վազել-հասել է և այլն,

բ) անվանական և բայական բաղադրիչներով. գլուխ է տալիս, գլխի է ընկել, ոտքի կանգնեց և այլն,

գ) դերբայով և օժանդակ բայով. գրում եմ / էի, խաղում եմ / էի և այլն,

դ) դիմավոր բայաձևով ու արգելական *մի՛* մասնիկով. մի՛ գրիր / գրեք, մի՛ խաղար / խաղաք և այլն,

ե) դիմավոր բայով և *պիտի* կամ *պետք է* եղանակիչներով. պիտի գրեմ-գրեի, պիտի խաղամ –խաղայի և այլն:

Ղեքբայ- Բայի անդամ ձևերի խումբ, որ դիմավոր ձևերից տարբերվում է նրանով, որ ունենալով բայիմաստ և սեռի քերականական կարգ (մասամբ էլ՝ խնդրառություն)՝ զուրկ է ժամանակի, եղանակի, դեմքի, թվի քերականական կարգերից: Այդ բայաձևերը շարահյուսական մակարդակում *բայի դեր են կատարում*, ուստի կոչվում են նաև *դերբայներ*: Արդի հայերենի դերբայներն են՝ *անորոշ, անկատար, կատարելի, վաղակատար, հարակատար, համակատար, ենթակայական և ժխտական*: Այս բոլոր դերբայներին բնորոշ են

ձևակազմական, ձևաբանական ու գործառական որոշակի հատկանիշներ:

1) *Ըստ ձևակազմական հատկանիշի՝* դերբայներից յուրաքանչյուրը հանդես է գալիս յուրահատուկ կառուցվածքով՝ դերբայական հիմքով և վերջավորությամբ: Այդ դերբայները և նրանց վերջավորություններն են՝

անորոշ - ել, -ալ (երգել, խաղալ), անկատար -ում (երգում, խաղում), կատարելի - ու (երգելու, խաղալու), վաղակատար -ել, -ալ (երգել, խաղացել), հարակատար - ած (երգած, խաղացած), համակատար - իս (երգելիս, խաղալիս), ենթակայական - ող (երգող, խաղացող), ժխտական - ի, -ա (երգի, խաղա):

2) *Ըստ հիմքակազմության հատկանիշի՝* դերբայների մի խումբը կազմվում է բայի անորոշի (կամ ներկայի) հիմքից, մյուս մասը՝ անցյալ կատարյալի հիմքից, երրորդը՝ դերբայական հիմքից:

Այսպես, *անորոշի (կամ ներկայի) հիմքից* կազմվում են՝ բոլոր բայերի անորոշ դերբայը՝ անկախ կառուցվածքից (երգ-ել, խաղ-ալ, թռչ-ել, մտն-ել, մոտեն-ալ, գոհան-ալ, մոտեցն-ել, կոտրատ-ել, թռչկոտ-ել), անկատարը (երգ-ում, խաղ-ում), **Ե** լծորդության պարզ բայերի վաղակատարը (երգ-ել, սիր-ել) և հարակատարը (նստ-ած, պառկ-ած), պարզ և բաղադրության քերականական ածանց ունեցող բայերի ժխտական դերբայը (երգ-ի, խաղ-ա, թռչ-ի, մտն-ի, մոտենա, գոհան-ա):

Բայի *երկրորդ (անցյալ կատարյալի) հիմքից* են կազմվում՝ **Ե** լծորդության հիմքակազմիչ (ն, չ) ածանցներով բայերի վաղակատար (թռչել - թռել, մտնել - մոտ-ել) և հարակատար դերբայները (նան՝ -են-, -ան- ածանցներով բայերի)՝ (թռչել - թռած, մտնել - մտած, մոտենալ - մոտեցած, գոհանալ - գոհացած): Այդպես նաև Ա լծորդության բոլոր բայերի վաղակատար (խաղալ - խաղացել, մոտենալ - մոտեցել, գոհանալ - գոհացել) և հարակատար դերբայները (խաղալ - խաղացած, մոտենալ - մոտեցած, գոհանալ - գոհացած):

Դերբայական հիմքից են կազմվում կատարելի և համակատար դերբայները: Կատարելիի (-ու) և համակատարի (-իս) վերջավորություններն ավելանում են անորոշ դերբային. գրել-ու, գրել-իս, կարդալ-ու, կարդալ-իս, թռչել-ու, թռչել-իս, մոտենալ-ու, մոտենալ-իս, մոտեցնել-ու, մոտեցնել-իս և այլն:

Պատճառական բայերի ածանցը անցյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս -ցն/ցր- հերթագայությամբ: Այդպիսի հիմքը կոչվում է *քեական*: Այսպես կազմվում են վաղակատար և հարակատար դերբայների պատճառական բայերը. մոտեցնել - *մոտեցրել*- *մոտեցրած*, խաղացնել - *խաղացրել* - *խաղացրած* և այլն:

3) *Ըստ կառուցվածքային հատկանիշի՝* դերբայները տարբերակվում են հիմքի կառուցատիպերի տեսակներով. այսինքն՝ դերբայական հիմքում ինչպիսի՝ և ինչքա՛ն մասնիկներ կարող են հանդես գալ: Դերբայական հիմ-

քերում գործառնող բոլոր մասնիկները հանդիպում են անորոշ դերբայա-
ձևում. անորոշի հիմքի կառուցվածքի վերլուծությունից կարելի է գաղափար
կազմել դերբայական հիմքերի կառուցատիպերի մասին:

Անորոշ դերբայի հիմքը հանդես է գալիս հետևյալ կառուցատիպերով.

ա) *ացն / եցն+ել*. վազեցն-ել, խաղացն-ել,

բ) *ցն + ել*. փախցն-ել, թոցն-ել,

գ) *վ + ել*. շարժվ-ել, գրվ-ել,

դ) *ան / են / ն / չ + ել / ալ*. լողան-ալ, մոտեն-ալ, փախչ-ել, մտն-ել,

ե) *եց / աց + վ + ել*. հնչեցվ-ել, աղացվ-ել,

զ) *ատ / ոտ / տ / կոտ +ել*. կոտրատ-ել, ջարդոտ-ել, կտրտ-ել, ցատ-
կոտ-ել,

է) *ատ / ոտ +վ + ել*. կոտրատվ-ել, ջարդոտվ-ել,

թ) *չ + կոտ + ել*. թռչկոտ-ել:

4) *Հստ գործառական հատկանիշի*՝ դերբայները բաժանվում են երեք
խմբի՝ կախյալ (ունեն ձևաբանական արժեք), անկախ (ունեն շարահյու-
սական արժեք) և երկարժեք (հանդես են գալիս թե՛ ձևաբանական և թե՛
շարահյուսական արժեքներով):

ա) **Կախյալ դերբայներ** - Օժանդակ բայի ժամանակային ձևերի հետ
կազմում են եղանակաժամանակային (դիմավոր) ձևեր և նախադասության
մեջ դառնում են պարզ ստորոգյալ. բայական համակարգում դրանց գոր-
ծածությունը պայմանավորված է օժանդակ բայով: Դրանք են՝ *անկատար*,
կատարելի, *վաղակատար* և *ժխտական*:

Այս դերբայներից յուրաքանչյուրն օժանդակ բայի հետ կազմում է
երկուական ժամանակային ձև՝ դերբայով արտահայտված գործողությունը
համեմատելով ներկա և անցյալ ժամանակների հետ: Հմմտ. *անկատար դեր-
բայ*. գրում եմ / էի, *կատարելի*. գրելու եմ / էի, *վաղակատար*. գրել եմ / էի,
ժխտական. չեմ / չէի գրի:

բ) **Անկախ դերբայներ** - Գործառնալիս կախում չունեն օժանդակ բայից
և նախադասության մեջ կատարում են շարահյուսական տարբեր պաշտոն-
ներ: Դրանք են՝ *անորոշ* և *ենթակայական*:

Կարող են գոյականի նման հոլովվել. անորոշը հոլովվում է **-ու**
հոլովմամբ (գրել-ու, խաղալ-ու), ենթակայականը՝ **-ի** հոլովմամբ (գրող-ի,
խաղացող-ի): Նախադասության մեջ կատարում են շարահյուսական տար-
բեր պաշտոններ:

գ) **Երկարժեք դերբայներ** - Ունեն թե՛ ձևաբանական և թե՛ շարա-
հյուսական գործառնություն. դրանք են *հարակատար* և *համակատար դեր-
բայները*:

Ձևաբանական արժեքով կազմում են դիմավոր ձևեր՝ հանդես գալով
իբրև խոնարհման համակարգի հարացուցային ձևեր: Հմմտ. *հարակատար*
նստած եմ / էի, քնած եմ / էի, *համակատար* (երկրորդական բաղադրյալ

ժամանակների կազմում՝ *տիրելիս է լինում, աշխատելիս է եղել, տիրելիս լինեմ՝ կլինեմ՝ պիտի լինեմ* և այլն:

Այդ նույն դերբայները շարահյուսական արժեքով գործածվելիս հանդես են գալիս շարահյուսական տարբեր պաշտոններով: Հմմտ. *քնած իշխանուհի* (որոշիչ), *պառկած* մտածել (ձևի պարագա), մոտենալ *ընկածին* (հանգման անողղակի խնդիր), *աշխատելիս* երգել (ժամանակի պարագա) և այլն:

ՄԱԿԲԱՅ - Արտահայտում է գործողության կամ դրության հատկանիշ՝ հատկանիշի հատկանիշ, շարահյուսական մակարդակում հանդես է գալիս բայի լրացման դերով՝ կատարում է պարագայական գործառնություններ:

Ձևաբանորեն մակբայները չեն թեքվում (չեն հոլովվում և չեն խոնարհվում), չունեն քերականական կարգեր, չեն արտահայտում քերականական նշանակություններ: Որոշ մակբայներ, սակայն, կարող են հոլովվել գոյականի նման, թեև ցուցաբերում են պակասավոր հարացուցային ձևեր, ինչպես *դուրս(ը) - դրսի - դրսից - դրսում, այսօր - այսօրվա - այսօրվան - այսօրվանից, վաղը - վաղվա - վաղվան - վաղվանից* և այլն: Որպես բացառություն՝ որոշ մակբայներ ունեն համեմատության աստիճաններ. հմմտ. *արագ - ավելի արագ, շատ - ավելի շատ*:

Շարահյուսորեն մակբայները բնութագրվում են նրանով, որ կարող են դառնալ որոշ լիմաստ խոսքի մասերի լրացում. *արագ* ընթացք, *հապճեպ* ժամանում, *շեղակի* հարված, *չափազանց* ուժեղ, *բարոյապես* տկար, *ֆիզիկապես* ամուր, *համարյա* անլուծելի և այլն:

Բնաստաբանորեն մակբայներն արտահայտում են տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, աստիճանի և ընդհանրական իմաստներ՝ ցույց տալով գործողության հետ առնչվող զանազան հանգամանքներ:

Տեղի մակբայ - Ցույց է տալիս բայով արտահայտված գործողության կամ եղելության կատարման տեղ. *ամենուր, ամենուրեք, այլուր, դեմուդեն, դեմառդեն, դեմ դիմաց, դեմ հանդիման, դեսուդեն, դոնեդուռ, գյուղեգյուղ, գյուղից գյուղ, տեղից տեղ, տեղ-տեղ, ձեռքից ձեռք, վերուստ, վար, վեր* և այլն:

Ժամանակի մակբայ - Ցույց է տալիս բայով արտահայտված գործողության կամ եղելության կատարման ժամանակ. *արդեն, վաղ, ուշ, այլևս, ասօր, օրեցօր, օրըստօրե, օրավուր, օրնիքուն, օր օրի, օր ու գիշեր, օրերս, այժմ, առայժմ, հիմա, ներկայումս, միշտ, ընդմիշտ, մշտապես, առմիշտ, հավետ, հավիտյան, առհավետ, շուտ, շուտով, ուշ, ուշ-ուշ, հետո, հետագայում, վաղ, վաղուց, վաղօրոք, նախապես, նախօրոք, վերջերս, վերջապես, ի վերջո, դեռ, դեռևս, այսուհետև, տարեցտարի, գիշեր-ցերեկ, գիշեր ու գօր* և այլն:

Ձևի մակբայ - Ցույց է տալիս գործողության կատարման ձև, նախադասության մեջ դառնում է բայական անդամի ձևի պարագա լրացում. *արագ, արագորեն, արագ-արագ, դանդաղ, դանդաղորեն, կամաց, կամաց-կամաց,*

հագիվ, հագիվհագ, հապճեպ, հանկարծ, հետզհետե, հիմնովին, հոտնկայս, միասին, միանգամայն, իսկույն, ձեռաց, շարունակ, ներքուստ, արտաքուստ, մեկ-մեկ, զույգ-զույգ, ուշիուշով, փոխնիփոխի և այլն:

Չափ ու քանակի մակբայ - Ցույց են տալիս գործողության կատարման չափ կամ հատկանիշի սաստկության աստիճան. *ավել, ավելի, ավելի ևս, առավել, առավելապես, ամեննին, ամբողջովին, բոլորովին, լիովին, զլիսովին, դարձյալ, կրկին, նորից, հաճախ, հաճախակի, եռակի, քառակի, երիցս, քանիցս, բազմիցս, համարյա, հագիվ, գրեթե, մասամբ, մոտավորապես, մասնակիորեն, փոքրիշատե, թեթևակի, չափազանց, շատ-շատ, քիչ-քիչ, փոքրիկ, ընդամենը, հիմնականում, իսպառ և այլն:*

Ընդհանրական մակբայներ - Այդ մակբայներն առաջացել են մակբայ խոսքի մասի ներսում ընթացող տեղաշարժերի հետևանքով. շարահյուսական կիրառության հիմքի վրա մակբայի մեկ տեսակի մեջ զարգացել է նոր նշանակություն, և միևնույն լեզվական միավորը համատեղել է մեկից ավելի մակբայական նշանակություններ: Այդ մակբայներն են՝ *առաջ, մեկ-մեկ, մերթ, մերթ-մերթ, մերթ ընդ մերթ, իսկույն, ի բնե, ի ծնե, ստեպ-ստեպ, անընդհատ, շուտ, շուտով, հանկարծ, բերնբերան, տեղնուտեղը* և այլն:

Հասկանալի մակբայները բնութագրում են գործողությունը կամ հատկանիշը. այդպիսին են ձևի և չափ ու քանակի մակբայները:

Պարագայական մակբայները ցույց են տալիս հանգամանքների արտաքին հարաբերությունները գործողության նկատմամբ. այդպիսին են տեղի և ժամանակի մակբայները:

ՍՊԱՍԱՐԿՈՒ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ - Սպասարկու խոսքի մասերը գուրկ են նյութական բովանդակությունից, խոսքում կատարում են լրացական գործառնություններ և միմյանցից տարբերվում են իրենց կատարած դերով: Հայերենում սպասարկու բառեր են համարվում կապերը, շաղկապները, եղանակավորող բառերը (վերաբերականներ) և ձայնարկությունները: Դրանք բաժանվում են երկու ենթատեսակի՝ *քերականական և վերաբերմունքային իմաստ ունեցող բառեր:*

-Քերականական իմաստ ունեցող բառեր - դրանք են *կապերն ու շաղկապները:*

ԿԱՊ - Դրվում է գոյականի, գոյականաբար գործածված այլ խոսքի մասերի, ինչպես նաև անձնանիշ դերանունների վրա և ցույց է տալիս նրանց լրացական հարաբերությունը գերադաս անդամի (հիմնականում՝ բայական անդամի) նկատմամբ:

Դասակարգվում են տարբեր հիմունքներով՝ *ըստ կազմավորման աստիճանի, ըստ կապվող բառի նկատմամբ ունեցած դիքի (շարադասության), ըստ քերականական հարաբերությունների բնույթի, ըստ հոլովառության* և այլն:

Ա. *Ըստ կազմավորման աստիճանի դասակարգելիս* առանձնացնում են երեք տեսակի կապեր՝ իսկական, անիսկական և կապական բառեր:

ա) **Իսկական կապ** - Արտահայտում են բացարձակապես վերացարկված քերականական հարաբերություններ. դրանցից են՝ *առ, ըստ, ընդ, ի* (գրաբարյան նախդիրները), *դեպի, հետ, միասին, բացի, հանուն, հանդեպ, համար, հանդերձ, հանձին, հանձինս, պես, ի վեր, ի հեճուկս, ի փառս, նկատմամբ, փոխարեն* և այլն:

բ) **Անիսկական կապ** - Կապեր, որոնց խոսքիմասային իմաստը երկփեղկված է, և նրանց նյութական իմաստին զուգահեռ, հավասար կամ առավել չափով հանդես է գալիս կապային իմաստը: Այդ կապերից են՝ *մոտ, վրա, մեջ, տակ, շուրջ, դեմ, անց, համաձայն, փոխարեն, դիմաց, առջև, համեմատ, չափ, նայած, չնայած, նման, գատ, միջոցին* և այլն:

գ) **Կապական բառ** - Այն բառերն են, որոնք թեև գործածվում են կապի արժեքով, այնուամենայնիվ նրանց իմաստային կառուցվածքում գերակշռում է նյութական իմաստը: Դրանցից են՝ *Ժամանակ, վերև, ներքև, դուրս, հեռու, կից, զուգընթաց, անունից, անունով, ձեռքով, գծով, ճանապարհով, կողմից, հավասար, ընթացքում, սկզբում, նպատակով, հետևանքով* և այլն:

Բ. *Ըստ կապվող բառի նկատմամբ ունեցած դիրքի*՝ առանձնացնում են նախադրություններ (նախդիր), հետադրություններ և երկդրություններ տեսակները:

- **Նախադրություն (նախդիր)** - Կապվող բառի նկատմամբ նախադաս դիրք են գրավում. *առ, առանց, դեպի, ընդդեմ, ըստ, ի դեմ, ի փառս, իբրև, ինչպես, հանձին, հանձինս, հանուն, հոգուտ, մինչ, մինչև, նախքան, որպես, չնայած, փոխանակ, քան* և այլն:

- **Հետադրություն** - Կապվող բառի նկատմամբ վերջադաս դիրք ունեն. *անց, անունից, անունով, առաջ, գծով, Ժամանակ, ընթացքում, ի վար, ի վեր, կից, կողմից, համար, համեմատ, հանդերձ, հեռու, հետ, հետո, հիման վրա, ձեռքով, մասին, մեջ, միջև, ներս, ներքո, ներքև, նկատմամբ, նման, նպատակով, շուրջը, չափ, պատճառով, պես, վերաբերյալ, վերև, վրա, տակ, ուղղությամբ* և այլն:

- **Երկդրություն** - Կապվող բառի նկատմամբ կարող են ունենալ թե՛ նախադաս և թե՛ վերջադաս դիրք. *անկախ, բացի, հակառակ, համաձայն, համապատասխան, հանդեպ, շնորհիվ, փոխանակ* և այլն:

Գ. *Ըստ քերականական հարաբերությունների բնույթի*՝ կապերն արտահայտում են պարագայական և խնդրային հարաբերություններ:

ա) **Պարագայական կապ** - Նախադասության մեջ կապվող բառի հետ դառնում են պարագա:

- *Տեղի կամ տարածական կապ*. *մեջ, վրա, մոտ, տակ, ներքև, ներքո, միջև, հանդեպ, դիմաց, շուրջը, դեպի, հեռու, վերև, վեր, վար, դուրս, առաջ, առջև* և այլն:

- *Ժամանակի կապ*. օրոք, օրով, հետո, անց, նախքան, մինչև, միջոցին, պահին, առաջ, առ, սկսած, ժամանակ, ընթացքում և այլն:

- *Հիմունքի կապ*. ըստ, առթիվ, համաձայն, կապակցությամբ, հիման վրա, հիմամբ, նայած և այլն:

- *Պատճառի կապ*. շնորհիվ, ձեռքից, երեսից, պատճառով և այլն:

- *Նպատակի կապ*. համար, հոգուտ, հանուն, ի փառս, ի շահ, օգտին և այլն:

- *Չափ ու քանակի կապ*. չափ, ավել, պակաս, քան, մինչև և այլն:

- *Ձևի կապ*. պէս, նման, ինչպես և այլն:

բ) **Խնդրային կապ** - Նախադասության մեջ կապվող բառի հետ դառնում են անուղղակի խնդիր: Դրանք են՝

- *Բացառման կապ*. բացի, առանց, զատ, բացառությամբ և այլն:

- *Վերաբերության կապ*. մասին, վերաբերյալ, վերաբերմամբ, նկատմամբ, առթիվ, կապակցությամբ և այլն:

- *Միասնության կապ*. հետ, հանդերձ և այլն:

- *Ընդդիմության կապ*. դեմ, ընդդեմ, ի հեճուկս և այլն:

- *Բացահայտման կապ*. իբրև, որպես, ինչպես, ի նշան և այլն:

- *Սահմանափակման կապ*. գծով, ուղղությամբ, գործում և այլն:

Դ. *Ըստ հոլովառության հատկանիշի՝* առանձնացնում են կապերի այն խմբերը, որոնք պահանջում են որոշակի հոլովով կապի խնդիր:

ա) *Սեռական հոլովով* խնդիր են պահանջում. *անունից, անունով, առջև, երեսից, ընթացքում, առթիվ, դեմ, դիմաց, ըստ, ժամանակ, համար, հանուն, հոգուտ, հակառակ, հետևանքով, հետ, ձեռքից, մասին, մեջ, մոտ, ներքո, նկատմամբ շուրջը, չափ, պատճառով, պատվին, պէս, վերաբերյալ, վրա, փոխարեն, օրոք, օգտին* և այլն:

բ) *Տրական հոլովով. ի դեմս, հանուն, համար, հետ, հոգուտ, հանձինս, մոտ, պէս:*

գ) *Հայցական հոլովով. առ, դեպի, իբրև, ինչպես, մինչ, նախքան, որպես, ց, քան* և այլ կապեր:

դ) *Բացառական հոլովով. բացի, դուրս, զատ, հեռու, հետո, ներքև, սկսած, վերև* և այլ կապեր:

ե) *Գործիական հոլովով. հանդերձ* (ընտանիքով հանդերձ), *չափ* (կիսով չափ), *մեկ* (երկրորդ մեկ):

զ) Մի շարք կապեր խնդիր են պահանջում տարբեր հոլովաձևերով՝ *ի վեր, անց, առաջ, հետո*, և այլն: Այսպես, *ի վեր* կապը պահանջում է հայցական և բացառական հոլովներով խնդիր, հմմտ. *գետն ի վեր* և *այն օրից ի վեր*, *առաջ* կապը՝ սեռական, հայցական և բացառական հոլովներով խնդիր. *դղյակի առաջ, օրեր առաջ* և *մայրամուտից առաջ:*

ՇԱՂԿԱՊ - Սպասարկու բառեր են, որոնք արտահայտում են պարզ

նախադասության համարժեք անդամների միջև եղած տարբեր հարաբերությունները, կապակցում են բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները նաև հանդես են գալիս տեքստի պարբերությունների կապակցման դերով:

Շաղկապները դասակարգվում են տարբեր հիմունքներով. *ըստ գործառական-դիրքային հատկանիշի, ըստ իմաստաբանական-կիրառական հատկանիշի* և այլն:

ա) *Ըստ գործառական-դիրքային հատկանիշի*՝ առանձնացնում են *մենադիր շաղկապներ* (և, ու, բայց, իսկ, որպեսզի, որովհետև և այլն), *կրկնադիր շաղկապներ* (թե՛ ... թե՛, և՛ ... և՛, կա՛մ ... կա՛մ, ո՛չ ... ո՛չ և այլն), *գուգադիր շաղկապներ* (ոչ թե ... այլ, ոչ միայն ... այլև, չնայած... բայց, քանի որ ... ուստի, թեկուզ ... բայց, եթե ... ապա, եթե ... ուրեմն, թեկուզ ... սակայն, թեպետ ... բայց, թեպետ ... բայց և այնպես և այլն):

բ) *Ըստ իմաստաբանական-կիրառական հատկանիշի*՝ առանձնացնում են համադասական և ստորադասական խմբեր:

Համադասական շաղկապ - Կապակցում են նախադասության համագործ անդամներ, բարդ համադասական նախադասության կազմիչ տարբեր (պարզ նախադասություններ) և տեքստի համագործ պարբերություններ:

Ըստ արտահայտած հարաբերությունների բնույթի՝ համադասական շաղկապները լինում են միավորիչ, ներհակական և տրոհական:

ա) *Միավորիչ շաղկապներն* արտահայտում են թվարկման կամ հավելական հարաբերություններ, դրանք են՝ *և, ու, էլ, ևս, նաև, այլև, թե, նույնպես և, նմանապես և, ինչպես և, ինչպես նաև, ոչ միայն ... այլև, ոչ թե ... այլ, ոչ ... ոչ, թե՛ ... թե՛ և այլն:*

Այս շաղկապներն իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի՝ *բուն միավորիչ* (կամ թվարկում արտահայտող) շաղկապներ (և, ու, թե, ո՛չ ... ո՛չ) և *միավորիչ-հավելական* շաղկապներ (նաև, ևս, էլ, այլև, նույնպես և, նմանապես և, ինչպես և, ինչպես նաև, ոչ միայն ... այլև, ոչ թե ... այլ):

բ) *Ներհակական կամ հակադրական շաղկապներն* արտահայտում են ներհակական կամ հակադրական հարաբերություններ և բաժանվում են հետևյալ ենթախմբերի՝ *ժխտման հարաբերություն արտահայտող* (այլ, ոչ թե, այլ ոչ թե, և ոչ թե, ոչ թե ... այլ, ոչ միայն ... այլև), *հակասման հարաբերություն արտահայտող* (բայց, բայց և, սակայն, և սակայն, սակայն և, բայց և այնպես, մինչդեռ, միայն, միայն թե և այլն), *հանդիպադրական հարաբերություն արտահայտող* (իսկ, ապա, միայն, եթե ... ապա), *պայմանական հարաբերություն արտահայտող* (թե չէ, եթե ոչ, ապա թե ոչ, այլապես):

գ) *Տրոհական շաղկապները* ցույց են տալիս տրոհական-բաժանական հարաբերություն. կապակցվող միավորների արտահայտած առարկաներից, հատկանիշներից մեկը կամ մի խումբն է նկատի առնվում կամ իրական,

հնարավոր համարվում՝ ի տարբերություն մյուսի կամ մյուսների (կամ, կամ թե, կամ թե չէ, կամ ... կամ թե, կամ .. կամ թե չէ, կամ ... և կամ, և կամ թե):

Ստորադասական շաղկապ - արտահայտում են ստորադասական հարաբերություններ, հանդես են գալիս բարդ ստորադասական նախադասությունների կազմում՝ գլխավոր նախադասությանը կապելով երկրորդական նախադասությունը:

Ըստ արտահայտած քերականական հարաբերությունների բնույթի՝ բաժանվում են ենթատեսակների՝ *մեկնական* (որ, թե, ինչ, իբր թե), *ժամանակի* (մինչ, մինչև, հենց, նախքան, քանի, մինչ որ, հենց որ, քանի դեռ, երբ որ), *պայմանի* (եթե, թե, թե որ, միայն թե, եթե միայն, նայած թե, քանի դեռ), *պատճառի և հիմունքի* (որովհետև, քանի որ, չէ որ, մանավանդ որ, նամանավանդ որ), *զիջական* (թեև, թեկուզ, թեկուզև, թեպետ, թեպետև, չնայած, չնայած որ, փոխանակ, թեև ... բայց, թեպետ ... բայց, թեպետ ... սակայն, թեկուզ ... բայց և այնպես), *նպատակի* (որպեսզի, որ, միայն թե, ինչ է թե, թե ինչ է), *համեմատության* (ասես թե, կարծես թե, քան, քան թե, ինչպես որ, որպես թե), *մակաբերական* (ուստի, ուրեմն, հետևաբար, ուստի և, ուրեմն և, և ուրեմն, այնպես որ), *բացահայտման* (այսինքն, այն է):

-ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԱՅԻՆ ԻՄԱՍՏ ՈՒՆԵՑՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ –

Վերաբերմունքային իմաստ են արտահայտում վերաբերականներն ու ձայնարկությունները:

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ - Արտահայտում են խոսողի մտածական կամ դատողական վերաբերմունքը և, ըստ այդմ, երանգավորում նախադասությունը կամ նրա որևէ անդամը, նախադասության անդամ չեն դառնում, չեն թեքվում և չունեն բառաձևերի հարացույցներ: Ըստ իմաստային հատկանիշի՝ զանազանում են վերաբերականների հետևյալ տեսակները՝

ա) *Հաստատական վերաբերական* - Արտահայտում են խոսողի հաստատական, դրական վերաբերմունքը տվյալ երևույթի, գործողության կամ եղելության վերաբերյալ. *այո, իհարկե, հարկավ, իրավ, իրոք, իսկապես, հավաստյալ, արդարև, իսկ և իսկ* և այլն:

բ) *Ցուցական վերաբերական* - Ունեն ցուցական իմաստ. այդ բառերով խոսողն ուշադրություն է հրավիրում նախադասության բովանդակության կամ նրա որևէ անդամի իմաստի վրա. *ահա, ահավասիկ, գրբ. ահաւասիկ (աւասիկ) – ահաւաղիկ (աւաղիկ) – ահաւանիկ (աւանիկ):*

գ) *Երկբայական վերաբերական* - Արտահայտում են խոսողի թեական, երկբայական վերաբերմունքը, որ կարող է լինել՝ *հավանական* (կարծեմ, կարծես, կարծես թե, ասես, թերևս, երևի), *անհավանական* (իբր, իբր թե, իբրև թե) և *հարցական* (գուցե, միգուցե, չլինի՞, չլինի՞ թե, արդյո՞ք, մի՞ թե):

դ) *Մաստկական վերաբերական* - Արտահայտում են գործողության կամ եղելության սաստկությունը. *նույնիսկ, անգամ, մինչև իսկ, մինչև անգամ, իսկ, մանավանդ, նամանավանդ* և այլն:

ե) *Սահմանափակման վերաբերական* - Արտահայտում են գործողությունների, առարկաների կամ հատկանիշների սահմանափակման իմաստ. *գեթ, գոնե, լոկ, միայն, միմիայն* և այլն:

զ) *Կամային վերաբերական* - Արտահայտում են խոսողի կամքը գործողության կատարման (կամ չկատարման) վերաբերյալ. *թող, դե, հապա, ապա, մի* և այլն:

է) *Զիջական վերաբերական* - Արտահայտում են խոսողի զիջական վերաբերմունքը ապագայում սպասվող գործողության կամ եղելության վերաբերյալ. *ինչևե, ինչևիցե, ինչ որ է, համենայն դեպս, այնուամենայնիվ, ինչ էլ լինի* և այլն:

ը) *Ժխտական վերաբերական* - Արտահայտում են գործողության, եղելության, առարկայի կամ հատկանիշի ժխտում. *ոչ, չէ, բնավ, երբեք, ամենևին*:

թ) *Բաղձանքի վերաբերական* - Արտահայտում են իդձ, փափագ կամ ցանկություն գործողության կամ եղելության վերաբերյալ. *երանի, երնեկ, երանի թե, երնեկ թե, ուր է թե, ուր է* և այլն:

Վերաբերականները գրավոր խոսքում սովորաբար տրոհվում են նախադասության անդամներից, երբ հնչերանգով որոշակիորեն առանձնանում են շարահյուսական միջավայրում:

ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ - Արտահայտում են խոսողի զգացական վերաբերմունքը՝ հանդես գալով բացականչական նախադասություններում, գուրկ են նյութական իմաստից, չունեն քերականական կամ վերաբերական իմաստ: Զգացական վերաբերմունքից բացի արտահայտում են նաև կամային մղում, նրանց մի մասն էլ վերարտադրում է բնական ձայները: Այդ միավորների հնչարտաբերական և ձևակազմական առանձնահատկությունն այն է, որ սակավահնչյուն են՝ կազմված նույնիսկ մեկ հնչյունից. ձայնարկություններ կարող են ձևավորել լեզվի բոլոր ձայնավորները:

Ըստ իմաստային ու գործառական հատկանիշի՝ ձայնարկությունները բաժանվում են երեք խմբի՝ *զգացական, կամային և նմանաձայնական*:

ա) *Զգացական ձայնարկություն* - Արտահայտում են խոսողի հուզազգացական վերաբերմունքը, որ կարող լինել տարբեր բնույթի.

- *ուրախություն, հաճելիություն, հրճվանք* (ջա՛ն, օխա՛յ, ուխա՛յ, վա՛յ, ո՛ւյ, օ՛հ և այլն),

- *ցավ, վիշտ, վախ* (վա՛յ, վո՛ւյ, վա՛շ, վի՛շ, ա՛, ամա՛ն և այլն),

- *զարմանք* (օհո՛, օ՛, օ՛հ, բա՛, ա՛, պահո՛, վա՛յ, վա՛հ և այլն),

- *զղջում և ավստասանք* (ա իս, է իս, ավա՛դ, օ՛հ, օ՛, վա՛յ, վա իս և այլն),

- *արհամարհանք* (պա՛հ, պա՛հ-պա՛հ, պահո՛ւ և այլն),
- *դժգոհություն* (օ՛, օ՛ֆ, է՛հ, օ՛ֆ, ա՛խ, հը՛ և այլն),
- *տհաճություն, զգվանք* (ֆու՛հ, փո՛ւ, թո՛ւհ, թո՛ւ, ո՛ւհ և այլն),
- *անտարբերություն* (է՛, էէ՛, է՛հ, ա՛հ, ը՛հ և այլն),
- *հանդիմանություն, կշտամբանք* (ա՛յ, ա՛յ-ա՛յ, ա՛յ-ա՛յ-ա՛յ, վա՛յ-վա՛յ, օ՛ֆ և այլն):

բ) Կամային (կոչական) ձայնարկություն - Արտահայտում են կամային մղումներ՝ կոչ, կանչ, քաջալերանք, խնդրանք, դիմում, արգելանք, վանում, գործածվում են կա՛մ մարդկանց, կա՛մ կենդանիների նկատմամբ: Այսպես, *մարդկանց* (խոսակցի) նկատմամբ գործածվող ձայնարկություններ են՝ *ա՛, ա՛յ, հե՛յ, հե՛յ-հե՛յ, էհե՛յ, հարա՛յ, հա՛յ, հա՛յ-հարա՛յ, տո՛, ծո՛, օ՛ն* և այլն: *Կենդանիների* նկատմամբ գործածվող ձայնարկություններն են՝ *քը՛ւ-քը՛ւ* (շան), *փիշի՛-փիշի՛* (կատվի), *ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ, քշա՛* (հավի և ընդհանրապես թռչունների), *հոլե՛-հոլե՛* (ոչխարների նկատմամբ) և այլն:

գ) Նմանաձայնական (բնաձայնական) ձայնարկություն - Ձայնարկություններին հարում են իրենց ձևային՝ հնչյունական և առոգանական հատկանիշներով, թեև իմաստաբանորեն գուրկ են զգացական վերաբերմունքից: Այդ կարգի բառերի զգալի մասը կրկնավոր կազմություններ են, որոնք գրավոր խոսքում գրվում են գծիկով, ստանում են բառական շեշտ կամ բացականչական նշան, գաղտնավանկ Ը ձայնավորը գրվում է (երբ այլ ձայնավոր չկա). *տը՛ զզ, բը՛ զզ, ճը՛ ոռ, ճը՛ ոռ-ճը՛ ոռ, ծուղըղուղո՛ւ, հա՛ֆ-հա՛ֆ, միառո՛ւ, թըրը՛ խկ, չըրը՛ խկ, չը՛ խկ-չը՛ խկ, ծի՛ վ, ծի՛ վ-ծի՛ վ, թը՛ ոռ* և այլն:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ – Որակական ածականների և մակբայների համեմատության աստիճան, որ ցույց է տալիս առակայի կամ գործողության հատկանիշի առավել կամ պակաս չափը այլ առականների կամ գործողության նույն հատկանիշի համեմատությամբ. այն կարող է ցույց տալ նաև նույն առակայի տարբեր որակային հատկանիշների դրսևորման տարբեր աստիճաններ: Համեմատության աստիճանը կազմության տեսակետից կարող է ունենալ պարզ (համադրական), բարդ (վերլուծական) և տարահիմք կառուցատիպեր:

Պարզ կազմությունները բաղկացած են արմատից և ածանցից, ինչպես՝ *ռուս. белый - белее, теплый - теплее, низкий - ниже, весело - веселее, коротко - короче, глубоко - глубже, красивый - красивейший, справедливый - справедливый, լատ. brevis - brevior - brevissimus, originalis - originalior - originalissimus, անգլ. long - longer - longest, short - shorter - shortest, գրբ. գեղեցիկ - գեղեցկագոյն, լատ. - լաւագոյն, արդի հայ. գեղեցիկ - ամենագեղեցիկ, բարի - ամենաբարի, նվազ - նվազագոյն* և այլն:

Բարդ կազմությունները ձևավորվում են ածականի կամ մակբայի ուղիղ ձևերով և համեմատության իմաստ արտահայտող բառերով: Հմտ.

ռուս. более высокий, более интересный, менее красивый, более строго, более громко, անգլ. more interesting, most interesting, more beautiful - most beautiful, գրբ. յոյժ գեղեցիկ, կարի գեղեցիկ, անհնարին գեղեցիկ, սաստիկ գեղեցիկ և այլն, արդի հայերեն. ավելի գեղեցիկ, ամենից գեղեցիկ, նվազ գեղեցիկ, պակաս գեղեցիկ և այլն:

Վերլուծական կազմություններում կարող է լինել համեմատության առարկա՝ կապական կապակցություն, հմմտ. *արևի պես պայծառ, ածուխի պես սև, օձի պես իմաստուն, կրիայի պես դադադ* և այլն:

Տարահիմք կազմությունները հատկանիշի առավելությունը ցույց են տալիս այլ բառերի միջոցով, հմմտ. ռուս. хороший – лучший – превосходный, լատ. bonus – melior – optimus, անգլ. good – better – best, գերմ. gut – besser – am besten և այլն:

Հստ համեմատվող հատկանիշի աստիճանի (կամ ծավալի դրսևորման)՝ լեզուներում առանձնացնում են համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական և գերադրական:

Դրական աստիճան - Ածականի կամ մակբայի ելակետային ձևը, ցույց է տալիս առարկայի կամ գործողության հատկանիշ՝ առանց այն համեմատելու այլ առարկայի կամ գործողության նույն հատկանիշի հետ, ինչպես՝ *գեղեցիկ աղջիկ, ուժեղ կամք, թանձր մառախուղ, բարձր կարգալ, արագ ընթանալ* և այլն:

Բաղդատական աստիճան - Արտահայտում է առարկայի կամ գործողության ունեցած հատկանիշի առավել, պակաս կամ հավասար չափով ունենալը՝ այն համեմատելով այլ առարկայի կամ գործողության նույն հատկանիշի հետ: Հայերենում այն ունի երեք կարգի դրսևորում՝ *առավելական* (գեղեցիկ – ավելի գեղեցիկ, բարձր ավելի բարձր), *նվազական* (պակաս՝ քիչ գեղեցիկ, պակաս՝ նվազ բարձր) և *հավասարական* (Ժայռի պես ամուր, քամու պես արագ):

Գերադրական աստիճան - Արտահայտում է առարկայի կամ գործողության հատկանիշի գերազանցությունը այլ առարկայի կամ գործողության նույն հատկանիշի համեմատությամբ: Լինում է բացարձակ և համեմատական տեսակի. *բացարձակ գերադրականը* ցույց է տալիս առարկայի հատկանիշի գերազանցությունն առանց համեմատելու այլ առարկաների նույն հատկանիշի հետ. կազմվում է *-(ա)զույն* ածանցով, ինչպես՝ *խիստ - խստագույն, լավ - լավագույն* և այլն, *համեմատական գերադրականը* հատկանիշի գերազանցությունը ցույց է տալիս համեմատության միջոցով. կազմվում է *ամենա-*, *ամենից* բառերի միջոցով, ինչպես՝ *խիստ - ամենախիստ, լավ - ամենալավ, խելոք - ամենախելոք կամ ամենից խելոք, հետաքրքիր - ամենահետաքրքիր կամ ամենից հետաքրքիր, արագ - ամենաարագ, շատ - ամենաշատ* և այլն:

Մակբայների գերադրական աստիճանի ձևերը (ամենաարագ, ամենա-

շատ և այլն) մակբայական կիրառություն չունեն (կամ հանդես են գալիս հոդով *ամենաարագը, ամենաշատը*). դրանց փոխարեն գործածվում են *ամենից արագ և ամենից շատ* վերլուծական կազմությունները:

Որոշ որակական ածականներ համեմատության աստիճաններ չունեն, որ պայմանավորված է նրանց *բառիմաստով*. դրանք արտահայտում են *վիճակային հատկանիշ* (ամուրի, ազապ, խուլ, այրի, կույր, գանգուր և այլն), *գունային հատկանիշ* (սև, սպիտակ, կարմիր, կանաչ և այլն): Համեմատության աստիճաններ չունեն որոշ *ածանցավոր կազմություններ* (անգլուխ, անտուն, անձայն, վճարովի, ընտրովի, բառացի, հարևանցի, դիմակավոր, գծավոր և այլն), ինչպես նաև կազմությամբ *բարդ ածականները* (ալիքաձև, աղեղնաձև, ծիրանավառ, գլխաբաց, մամռապատ, խավարածին, բազմահմուտ, այլազգի, միոտանի, երկգլխանի և այլն):

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ - Ուսումնասիրում է նախադասությունը որպես լեզվական միավոր, նրա տեսակները, կառուցվածքային տիպերը, նրանց շարահյուսական հարաբերությունները, վերջիններիս ձևավորման միջոցները և այլն:

Շարահյուսության միավորներից է նաև բառակապակցությունը, այսինքն՝ բառերի այնպիսի կապակցությունը, որ ստորոգում չունի և հաղորդում չի արտահայտում, այլ հանդես է գալիս իբրև նախադասության բաղադրյալ բաղադրիչ: Շարահյուսությունն ուսումնասիրում է բառակապակցությունը թե՛ որպես նախադասության կառուցվածքային բաղադրիչ և թե՛ որպես բաղադրյալ անվանողական արժեք ունեցող միավոր:

Բառակապակցության բաղադրիչների և նախադասության անդամների դերով հանդես են գալիս բառերն ու բառաձևերը, որոնք մտնում են լեզվի այս կամ այն խոսքի մասի մեջ: Բառակապակցությունն ու նախադասությունը դիտվում են շարահյուսական կառույցների հիմնական տիպեր, որոնք անհրաժեշտ են բառերի որոշակի կապակցություններ և շարույթներ, արտահայտություններ ու դարձույթներ սերելու համար:

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ - Բառակապակցությունը դիտվում է նախադասության բաղադրիչ, համարվում է նախադասության ատաղձն ու բաղադրյալ անվանումների հիմքը, թեև այն գոյություն ունի նախադասությունից անկախ: Այդ առումով անհրաժեշտ է բառակապակցությունը տարբերակել բառերի կապակցություններից և նախադասության բաղադրյալ անդամներից:

Օրինակ՝ *երկաթե դուռ, փայտյա նավակ, ռսկյա մատանի* և այլն տարբեր բառերի կապակցություններ են, մեկ կառուցվածքային տեսակ են՝ գոյականական բառակապակցություններ, որոնց բաղադրիչները կապված են որոշիչ-որոշյալի քերականական հարաբերությամբ: Բառերի այդ կապակ-

ցությունները և բառակապակցության այդ տեսակները կարող են օգտագործվել բաղադրյալ անվանումների և նախադասությունների կառուցման համար: Հմտ. «Երկաթե կամք» և «Երկաթե դուռը չի այրվում» կառույցները:

Բառակապակցությունը՝ որպես շարահյուսական միավոր, առնվազն երկու լիմաստ բառերի կապակցություն է, որի բաղադրիչները կապված են լրացում-լրացյալի հարաբերությամբ. կախյալ բաղադրիչներն արտահայտում են ստորադասական զանազան հարաբերություններ:

Հմտ. *Թումանյանի պոեմները* (հատկացուցիչ), *հինավուրց քարանձավ* (որոշիչ), *արագ քայլել* (ձևի պարագա), *հանդում աշխատող* (տեղի պարագա) և այլն:

Բառակապակցությունները՝ որպես լեզվական միավոր, ըստ բաղադրիչների իմաստային ձուլվածության աստիճանի, բաժանվում են ազատ, ոչ ազատ (ամբողջական) և կայուն տեսակների:

Ազատ բառակապակցություն – Այնպիսի կապակցություններ են, որոնք կազմավորվում են խոսքի ընթացքում և ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության՝ բաժանվում են անվանական և բայական տեսակների:

Անվանական բառակապակցությունների գերադաս անդամներն արտահայտվում են *գոյականով* (սարի *ծաղկունք*, ուրախության *արտասուք*), *ածականով* (չափազանց *գեղեցիկ*, պատվին *արժանի*), *թվականով* (շուրջ *հարյուր*), *դերանունով* (աշակերտներից *յուրաքանչյուրը*, ունկնդիրներից *ինչ-որ մեկը*): Բայական բառակապակցությունների գերադաս անդամն արտահայտվում է բայի կախյալ դերբայներով (գլուխը ձեռքերի մեջ *առնել*, քնից *արթնանալիս*, մտածմունքի մեջ *ընկղմված*, հեռուներից *եկող*):

Ըստ կառուցվածքային գործոնի՝ ազատ բառակապակցությունները լինում են *նախդրավոր* (կովել հայրենիքի համար), *աննախդիր* (պայծառ ապագա), *պարզ* (գիշերային լուսատու), *բարդ* (պեղել հնագույն քաղաքակրթության հետքերը) և այլն:

Ոչ ազատ բառակապակցություն – Այդպիսի կապակցությունները հատկանշվում են բաղադրիչների համեմատաբար սերտ կապով և նախադասության մեջ հանդես են գալիս մեկ անդամի պաշտոնով: Այդ կարգի կառույցներում գլխավոր անդամը չունի բավարար իմաստային ամբողջություն, այդ պատճառով կախյալ անդամը կատարում է իմաստի որոշակիացման դեր:

Հմտ. հինգ երեխա, հանդիսատեսների խումբը, ուսանողներից շատերը, մեզանից որևէ մեկը, մեծահասակներից ոմանք, *կանացի դեմքով* տղամարդ, *արևախանձ մաշկով* բեդվին և այլն:

Անվանական սեռ ունեցող լեզուներում (լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն և այլն) բառակապակցության ստորադաս բաղադրիչները սեռով, թվով և հոլովով համաձայնում են գերադաս անդամին, հմտ.

ռուս. прочитанный роман, прочитанная книга, прочитанное письмо, լատին. campus herbidus, tabula rasa, verbum bonum և այլն: Ռուսերենում այդ համաձայնությունը կարող է լինել նաև մասնակի (միայն սեռով), ինչպես՝ чёрный кофе, քանի որ кофе –ն չի հոլովվում և չունի հոգնակի թվի իմաստ (ու նաև ձև):

Բառակապակցության բաղադրիչների միջև գործում են ստորադասական կապակցության տարբեր տեսակներ, ինչպես *առդրություն* (սև աչքեր, արագ ընթանալ), *խնդրառություն* (նամակ գրող, պատվին նախանձախնդիր), *համաձայնություն* (ի ծննդէ իւրմէ, ի ձեռաց իմոց) և այլն:

Կայուն բառակապակցություն - Լեզվում գոյություն ունեցող պատրաստի կապակցություններ են, որոնց բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական նշանակություններով. դրանք հայտնի են *դարձվածք* անվանումով, ինչպես՝ գլխի ընկնել (կռահել), գլուխ տալ (խոնարհվել), գլուխն ուտել (սպանել), սիրտ տալ (գոտեպնդել), սիրտը դող ընկնել (սաստիկ վախենալ), սրտից խոսել (համախոհ լինել), ձեռք առնել (ծաղրել), ձեռքով անել (հասկացնել), ձեռք բռնել (օգնել), լեղին ջուր կտրել (սարսափահար լինել), ուղտի ականջում քնած լինել (անտեղյակ լինել ամեն ինչից), լեզուն կապ ընկնել (պապանձվել), օձին բնից հանել (քաղցր լեզվով խոսել) և այլն:

Ազատ բառակապակցությունը և նույնաբաղադրիչ դարձվածքը միմյանց նկատմամբ ցուցաբերում են համանունական հարաբերություն, ինչպես՝ *ձեռքերը լվանալ* (լվացվել) և *ձեռքերը լվանալ* (մի բանից հեռու մնալ), *ոտքը կտրել* (անդամատել) և *ոտքը կտրել* (արգելել մի տեղ մտնել) և այլն:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԸ - Բառակապակցությունների ներսում (նրանց բաղադրիչների միջև) առկա ստորադասական կապերը տարբեր բնույթի են լինում: Հիմնական տեսակներ են համարվում համաձայնությունը, խնդրառությունը, առդրությունը, ներառումը, իզաֆետը և ներմարմնավորումը: Բոլոր լեզուներին այս բոլոր տեսակները հատուկ չեն. հնդեվրոպական լեզուներին հատուկ են համաձայնությունը, խնդրառությունը, առդրությունը և ներառումը:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ - Ստորադասական կապակցության այնպիսի տեսակ է, որի ընթացքում կախյալ բաղադրիչները ձեռք են բերում գերադասանդամի (առանցքային բառի) քերականական հատկանիշները: Օրինակ, գրաբարում բազմավանկ հետադաս ածականները, ցուցական և ստացական դերանունները թվով ու հոլովով համաձայնում են գերադաս անդամին՝ գոյական անվանը, հմմտ. *եղբարք հարազատաւ* (եզակի թիվ, գործիական հոլով), *այսու տամբ, տամբս այսուիկ* (եզակի թիվ, գործիական հոլով), *ի մանկութենէ իւրմէ, յիւրմէ ծննդէ* (եզակի թիվ, բացառական հոլով) և այլն: Ռուսերենում ածականները համաձայնում են գոյականներին սեռով, թվով և

հոլովով, ընդ որում՝ այդ համաձայնությունը կարող է լինել լիակատար և մասնակի, հմմտ. *старую газету* – լիակատար համաձայնություն, իսկ *черный кофе* – մասնակի համաձայնություն է (միայն սեռով), քանի որ *кофе*-ն չի հոլովվում և չունի հոգնակի թվի իմաստ (ու նաև ձև). *черного кофе, черному кофе* կապակցություններում ածականի հոլովական ձևերն են ցույց տալիս բառակապակցությունների պաշտոնը նախադասության մեջ: Դիտարկված օրինակներում համաձայնությունը կրում է ոչ ստորոգումային բնույթ:

Համաձայնությունը կարող է լինել նաև ստորոգումային, որ գործում է ենթակայի և ստորոգյալի միջև. այն իր բնույթով հաճախ լինում է ոչ լիակատար, այն կարող է լինել նաև իմաստային, հմմտ. *հինգ ուսանող գնաց* և *հինգ ուսանողներ գնացին*:

Մեռով համաձայնություն ունեցող լեզուներում համաձայնության ցուցիչը կարող է ընդգրկել բազմաբաղադրիչ բառակապակցության բոլոր կախյալ անդամները, ընդ որում՝ դրանք կարող են համընկնել նաև ձևականորեն: Այսպես, *вижу того доброго старого знакомого* բառակապակցության մեջ -*ого* ձևությամբ ընդգրկել է բառակապակցության բոլոր բաղադրիչները. այստեղ համաձայնությունը կայացել է նաև թեքությունների ձևական համընկնման միջոցով:

ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ - Ստորադասական կապակցության այնպիսի եղանակ է, որի դեպքում կախյալ բաղադրիչն ստանում է նաև կախյալ ձև. այն չի կրկնում առանցքային բաղադրիչի քերականական կարգերը, այլ արտահայտում է նրա քերականական կամ բառաքերականական յուրահատկությունները: Օրինակ՝ *գիրք կարդալ, աշխատել դպրոցում, վախենալ չարախոսությունից, թոկից փախած, մտքերի մեջ խորասուզված* և այլն: Խնդրառությունը հատուկ է բայական բառակապակցություններին, չնայած լեզուներում հանդիպում են բառակապակցություններ նաև առանցքային այլ անդամներով, ինչպես՝ գոյականով (կամրջի շինարարություն, մուտք դեպի մետրո), ածականով (պատվին նախանձախնդիր, խելքից պակաս) և այլն:

Խնդրառությունը կարող է լինել նաև նախդրավոր (խոսել ընկերոջ մասին) և աննախդիր (խոսել ընկերոջից), ուժեղ (*կառուցել* շենք, *քնեցնել* երեխային) և թույլ (*դուրիշ* պայտերը, *զիսի ընկնել* մի բան) և այլն: Ռուսերենում և հայերենում հանդիպում են խնդրառության բոլոր տեսակները, իսկ անգլերենում, ֆրանսերենում, գերմաներենում տարածված է խնդրառության նախդրավոր տեսակը: Հմմտ. անգլ. *go to school* (գնալ դեպի դպրոց), *we talked with him* (մենք խոսել ենք նրա հետ), *to turn water into ice* (ջուրը սառույց դարձնել), *to hit under the belt* (հարված գոտկատեղից ներքև), գերմ. *für drei Tage fortfahren* (երեք օրով մեկնել), *zu Schule gehen* (գնալ դեպի դպրոց), *lege das Buch auf den Tisch* (գիրքը դի՛ր սեղանի վրա), *fahren durch die Stadt* (անցնել՝ շրջել քաղաքի միջով) և այլն:

Համաստորադասական հարաբերություն ունեցող կառույցները լատիներենում ունեն յուրահատուկ դրսևորումներ, որոնք կազմում են հոմանշային բառակապակցություններ: Բառակապակցության համադաս անդամները, որոնք միավորված են լինում համադասական շաղկապով, այլ տարբերակում զրկվում են շաղկապից (և նախդիրից), իսկ երկրորդ բաղադրիչն ստանում է *que* շաղկապը, որ դրվում է բառավերջում: Այսպես, *Pro Senatus et populus Romanus* («Հռոմի սենատի և ժողովրդի համար» կամ «Հանուն հռոմեական սենատի և ժողովրդի») բառակապակցության համագոր անդամները (*senatus et populus*) կրում են վերոնշյալ փոփոխությունը, և բառակապակցությունն ստանում է հետևյալ կառուցվածքը. *Senatus populus-que Romanus*:

ԱՌԴՐՈՒԹՅՈՒՆ - Ստորադասական կապակցության այնպիսի եղանակ է, որի դեպքում ստորադասական կապի հատուկ միջոցներ չեն կիրառվում, ստորադաս անդամն անփոփոխ ձևով առանցքային բաղադրիչի նկատմամբ ցուցաբերում է լրացական, կախումնային հարաբերություն: Այսպիսի կապակցության մեջ կարևոր են իմաստային կապը, շարադասությունը և հնչերանգը: Գերադաս անդամը կարող է արտահայտվել գոյականով, ածականով, բայով և մակբայով, հմմտ. ծաղիկ *հասակ*, դժվար *հասկանալի*, երկար *նայել*, չափազանց *արագ* և այլն:

Առդրությունը լայնորեն տարածված է լեզուներում. նա կապակցության հիմնական տեսակ է դիտվում այն լեզուներում, որտեղ բացակայում են ածանցները (օրինակ՝ վիետնամերենում), առդրությունը հանդիպում է նաև այն լեզուներում, որտեղ կան ածանցներ և բառաթեքական ձևեր: Այդ դեպքում առանձնացնում են առդրության երկու հիմնական տեսակներ՝ առդրություն չթեքվող բառերի միջև և առդրություն թեքվող բառերի բառաձևերի միջև:

Ռուսերենում չթեքվող բառերի (խոսքի մասերի) առդրությունը գործում է մակբայի և անորոշ դերբայի, ինչպես նաև մակբայական դերբայի, չթեքվող ածականների և գոյականների միջև: Այլ լեզուներում առդրությամբ կապակցություն կազմում են ածականները: Այսպես, արդի հայերենում և անգլերենում ածականները չեն թեքվում թվով ու հոլովով, չունեն անվանական սեռի կարգ և գոյականական բառակապակցություններում առդրությամբ կապակցվում են առանցքային անդամի (գոյականի) հետ: Հմմտ. *green tree* – կանաչ ծառ, *large room* – ընդարձակ սենյակ, *long way* – երկար ճանապարհ և այլն: Ածականներն առդրությամբ կապակցություն են կազմում նաև թյուրքական լեզուներում, ինչպես՝ *кызыл йорт* – կարմիր տուն, *кызыл кулмек* – կարմիր զգեստ, *кызыл алма* – կարմիր խնձոր, *кызыл итеклер* – կարմիր կոշիկներ և այլն:

Թեքում ունեցող բառերի դեպքում գոյականական բառակապակ-

ցության մեջ առողջությամբ կապակցվում են ոչ միայն հասարակ, այլև հատուկ անունները: Հմմտ. *Հայաստան* աշխարհ, *Արշակ* արքա, «*Մոմա*» պոեմ, капитан *Иванов*, маршал *Жуков* և այլն: Գերմաներենում գոյականներն առողջությամբ կապակցվում են այն գոյականների հետ, որոնք արտահայտում են չափի գաղափար, ինչպես՝ ein Glas Tee – մի բաժակ թեյ, zwei Liter Milch – երկու լիտր կաթ, ein Partie Billard – մի պարտիա բիլիարդ, eine Stunde Erholung – մի ժամ հանգիստ (ընդմիջում) և այլն:

ՆԵՐԱՌՈՒՄ - Որպես ստորադասական կապակցության եղանակ՝ ունի հետևյալ յուրահատկությունը. առանցքային բաղադրիչին շարահյուսորեն հարաբերակցվող սպասարկու բառը կամ ածանցը գտնվում են բառակապակցության առաջին բաղադրիչի մոտ՝ այդպիսով մեկ ամբողջության մեջ միավորելով ինչպես պարզ, այնպես էլ բարդ (բազմաբաղադրիչ) բառակապակցությունները: Ներառման միջոցներ են դառնում նախդիրները, նախադրությունները, հոդերը, դերանունները, օժանդակ բայը, համաձայնության և խնդրառության ցուցիչները:

Կապակցության այս եղանակը գործում է մասնավորապես ռուսերենում, գերմաներենում, ֆրանսերենում, բուլղարերենում, արաբերենում, հայերենում և այլն:

Եթե այս կարգի բառակապակցությունն սկսվում է, օրինակ, իզական սեռի ածականով, ապա կապակցության մյուս բոլոր բաղադրիչները, որոնց հատուկ է սեռի կարգը, պարտադիր պետք է լինեն իզական սեռի. տվյալ դեպքում նրանց միավորում է այդ սեռի ցուցիչը *-ая*. դա ենթադրելի է, քանի որ ածականական բաղադրիչի սեռը հուշում է, որ լրացյալ գոյականը նույնպես իզական սեռի է՝ անկախ այն բանից, թե նա բառակապակցության որ մասում է գտնվում, թեև սովորաբար առանցքային բառը, տվյալ դեպքում ռուսերենում, գտնվում է կապակցության վերջում: Օրինակ՝ *прочитанная мною в детстве книга* բառակապակցության համաձայնության ցուցիչը (*-а*), գտնվելով բառակապակցության առաջին բառի կառուցվածքում, իմաստաբանորեն հարում է վերջին բառին՝ գոյականին (*книга*), և այդպիսով կապակցում է գոյականական բառակապակցությունը: Որքան էլ տվյալ բառակապակցությունն աճի նոր լրացումներով (առանցքային անդամին վերաբերող), դրանք նույնպես պետք է լինեն իզական սեռի, հմմտ. *прочитанная мною в детстве интересная книга* և *прочитанная мною в детстве одна интересная книга* և այլն:

Դիտարկենք այնպիսի կապակցություններ, որոնց գերադաս և կախյալ անդամները, ինչպես նաև նրանց լրացումները լինեն արական կամ չեզոք սեռի:

Прочитанное мною в детстве одно интересное стихотворение.

Прочитанный мною в детстве один интересный героический роман.

Հին հայերենում ներառման կապակցության կարևոր միջոցներից են նախդիրները: Այսպես, «*առ երկայնանստիւ միով լերամբ*» (Խոր., 33) կապակցության ներառման ցուցիչը *առ* նախդիրն է, որ հարում է խնդրին՝ *լերամբ* բառաձևին. գերադաս և ստորադաս անդամների միջև ընկած բառերը (լրացման լրացումները – երկայնանստիւ, միով) ներառված են կապակցության մեջ: Նրանց կապակցման եղանակը (հոլովական) համաձայնությունն է (եզակի թիվ, գործիական հոլով, ինչպիսին *լերամբ* բառաձևն է): Թեև կառույցի ներսում գործում է կապակցության համաձայնության եղանակը, այնուամենայնիվ նախդրավոր կառույցը բնութագրվում է ներառման ստորադասական հարաբերությամբ:

ԻԶԱՖԵՏ - Ստորադասական կապակցության տեսակներից է, որ հանդիպում է իրանական, թուրքական և սեմական լեզուներում (տե՛ս **Իզաֆետային կառույց** բառահոդվածը):

ՆԵՐՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ - Ստորադասական կապակցության տեսակներից է, որ հանդիպում է չուկոտյան-կամչատկյան, էսկիմոսյան-ալեուտյան և ենիսեյյան, հյուսիս - ամերիկյան հնդկացիական ցեղերի լեզուներում (տե՛ս *Ներմարմնավորյալ լեզուներ* բառահոդվածը):

Բառերի շարահյուսական կապակցման դիտարկված եղանակները (համաձայնություն, խնդրառություն, իզաֆետ, ներառում, ներմարմնավորում, աղորություն) օգտագործվում են ոչ միայն բառակապակցություններ կառուցելու, բարդ բառեր և բաղադրյալ անվանումներ ձևավորելու գործում, այլև դրանք անհրաժեշտ են հաղորդակցական միավորներ՝ նախադասություններ կազմելու ընթացքում:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Շարահյուսագիտության կարևոր հարցերից մեկը նախադասության ուսմունքն է: Նախադասությունը լեզվի հաղորդակցական միավոր է, որ արտահայտության պլանում ներկայանում է որպես բառերի հետևողական շարք, որի միավորները միմյանց կապված են իմաստով և քերականորեն, բնութագրվում են ստորոգման կարգով և ունեն ձևավորված (ավարտուն) հնչերանգ:

Նախադասությունը բառերի և բառաձևերի հորիզոնական շղթա է, որի միավորները դիտվում են առանձին հարացույցների կարգային անդամներ: Թեքական խոսքի մասի յուրաքանչյուր բառույթ ունի որոշակի հարացույց. վերջինս ներկայանում է որպես հարաբերակից ձևերի *ուղղահայաց շղթա*: Տարբեր հարացույցների կարգային անդամներ, «իրար կողքի դասավորվելով», կազմում են բառաձևերի *հորիզոնական շղթա* կամ բառերի հորիզոնական շարակարգ, որ կոչվում է նախադասություն:

«Ավարայրի դաշտում հայոց զորաբանակը դիմագրավեց պարսիկներին» նախադասության յուրաքանչյուր անդամ համարվում է առանձին հարացույցի կարգային անդամ. այդ անդամները, անջատվելով ուղղահայաց շղթայից, քերականորեն կապակցվել են և կազմել հորիզոնական շղթա՝ ստեղծելով հաղորդակցական միավոր, դառնալով լեզվական լիանշան:

Այսպես, *Ավարայրի* բառաձևը *Ավարայր* հատուկ գոյականի հոլովման հարացույցի մեկ առանձին անդամ է՝ սեռական հոլովաձև, *դաշտում* բառաձևը՝ *դաշտ* գոյականի հոլովական հարացույցի մեկ անդամ՝ ներգոյական հոլովաձև, եթե *Ավարայրի դաշտում* բաղադրյալ գոյականը դիտենք որպես նախադասության մեկ անդամ, ապա այն դարձյալ բաղադրյալ գոյականի հոլովման հարացույցի մեկ անդամ է՝ ներգոյական հոլովաձև, *զորաբանակը* բառաձևը *զորաբանակ* գոյականի առկայացման հարացույցի մեկ անդամ է՝ որոշյալ առումով, *դիմագրավեց* բառաձևը՝ *դիմագրավել* բայի խոնարհման համակարգի մեկ անդամ՝ սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, եզակի թիվ, երրորդ դեմք, *պարսիկներին* բառաձևը՝ *պարսիկներ* բառաձևի հոլովման հարացույցի մեկ անդամ՝ տրական հոլովաձև:

Այս բառերը շարակարգային հարաբերությունների մեջ են մտել իրար հետ՝ դրսևորելով համագոր կամ անհամագոր քերականական հարաբերություններ: *Համագոր հարաբերությունները* միմյանց են կապում ինչպես նախադասության առանձին բառեր (այրուծին դիմագրավեց), այնպես էլ բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններ [Դրեք սիրտս հարազատ օրբան (1), Օրորեցեք վիրավոր սիրտս նաիրյան (2)]:

Անհամագոր հարաբերությունները նույնպես միմյանց են կապում ինչպես նախադասության առանձին բառեր՝ լրացում-լրացյալի հարաբերությամբ (հայոց այրուծին, դիմագրավեց պարսիկներին, դիմագրավեց Ավարայրի դաշտում), այնպես էլ բարդ նախադասության կազմում գլխավոր և երկրորդական նախադասություններ (Երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ափերին (1), Աբու-Մահարին հեռացավ քաղաքից (2) (ԱԻ):

Անկախ նախադասության անդամների հարաբերությունների բնույթից՝ կարող ենք ասել, որ այդ անդամները, միավորվելով շարակարգային կապերով, արտահայտում են *ամփոփ (ավարտուն) միտք*: Սա նախադասության էական հատկանիշներից է:

Նախադասությունը հակադրվում է իր կազմում եղած բառերին (բառաձևերին) և բառակապակցություններին՝ ձևով, իմաստով և գործառույթներով:

Բառերը և բառակապակցությունները համարվում են անվանողական միավորներ, նախադասությունը՝ հաղորդակցական միավոր: Նախադասությունը կարող է կազմված լինել մեկ բառից, սակայն չնույնանալ բառի հետ. հմմտ. *երեկո* և *Երեկոյացավ*: Նախադասությունը կարող է կազմված լինել

երկու բաղադրիչից, սակայն չնույնանալ բառակապակցության հետ. հմմտ. *պարզ երկինք* և *Երկինքը պարզվեց*:

Բառերը և բառակապակցությունները գործառնապես կատարում են նախադասության անդամ(ներ)ի պաշտոններ՝ շարահյուսական մակարդակում հանդես գալով տարբեր դերերով: Նախադասության գործառնությո՞ւնը հաղորդում արտահայտելն է: Մյուս կողմից՝ նախադասություններն էլ կարող են հանդես գալ նախադասության անդամների պաշտոններով (հմմտ. Երկրորդական նախադասությունների գործառնությունները բարդ ստորադասական նախադասությունների կազմում):

Լայն իմաստով՝ նախադասություն է համարվում շարահյուսական ցանկացած ծավալուն կառուցվածք (գրավոր բնագրում՝ վերջակետից մինչև վերջակետ), բառից կամ բառաձևից մինչև արտահայտություն, որ ինչ-որ բանի մասին հաղորդում է պարունակում և ընկալվում է լսողական (արտասանական պլանում) կամ տեսողական (գրային պլանում) զգայարաններով:

Նախադասության շրջանակներում իրացվում են լեզվական համակարգի բոլոր միավորները. հնչյունները՝ ձևությունների մեջ, ձևությունները՝ բառերի մեջ, բառերը՝ բառաձևերի մեջ, բառերն ու բառաձևերը՝ բառակապակցությունների մեջ և, վերջապես, բառակապակցությունը՝ նախադասության մեջ: Լայն առումով՝ նախադասությունը՝ պարբերության մեջ, պարբերությո՞ւնը տեքստի (բնագրի) մեջ, բնագիրը՝ գերտեքստի մեջ: Դառնալով բնագրի բաղադրիչ՝ նախադասությունը մյուս կարգի միավորների հետ կազմում է վերհատությային (վերֆրազային) միասնություն՝ նրա առանձին բաղադրիչները հարաբերելով մեկը մյուսին:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՒԿ – Այդ դերով հանդես են գալիս նախադասության գլխավոր անդամները՝ *ենթական և ստորոգյալը*:

Նախադասությունները կարող են ծավալվել հենվելով իրենց կառուցվածքային հիմքի վրա: Հետևաբար նախադասության ենթական և ստորոգյալը կազմում են նախադասության գլխավոր անդամները, սակայն միայնակ չեն կարող արտահայտել առարկայական աշխարհի առարկաներն ու երևույթները, ուստի նրանց բազմազան հատկանիշներն ու տարատեսակ փոխհարաբերությունները արտահայտելու համար կարիք է զգացվում այլ անդամների: Ըստ այդմ՝ նախադասության գլխավոր անդամների իմաստը պարզաբանվում, նրանց բովանդակային պլանը լրացվում է այլ անդամներով. բայ-ստորոգյալի արտահայտած ընթացայնության գաղափարը մի կողմից լրացվում է բայական գործողության ոլորտ ընդգրկված առարկաներով (խնդիրներով), մյուս կողմից՝ այդ գործողության իրականացման հետ կապված հանգամանքներով (պարագաներով՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի ու քանակի, նպատակի, պատճառի և այլն): Ենթական (կամ գոյականական

անդամն ընդհանրապես) արտահայտում է առարկայության գաղափար, որի հատկանիշների քերականական արտահայտությունները (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ) իրենց հերթին ամբողջացնում են արտաքին աշխարհի առարկաների ու նրանց հատկանիշների վերաբերյալ եղած տեղեկությունը: Հետևաբար նախադասության ծավալմանը մասնակցում են ինչպես բայական, այնպես էլ գոյականական անդամի լրացումները, որոնք միասին կազմում են նախադասության երկրորդական անդամների համակարգը:

ՍՏՈՐՈԳՈՒՄ - Ստորոգումը նախադասության կարևոր հատկանիշներից է: Նախադասության բովանդակային պլանում հատկանիշը ենթակային վերագրելը կատարվում է ստորոգման միջոցով:

Ստորոգման կարգը լեզվաբանության վիճելի հարցերից մեկն է. մինչ այժմ վերջնականապես մշակված չէ մի ընդհանուր տեսակետ այդ հարցի վերաբերյալ, թեև գործնականում այն ուսուցանվում է դպրոցական և բուհական պրակտիկայում. դա քերականական այն կարգն է, որ ապահովում է ստորոգյալի կապը ենթակայի հետ: Հնդեվրոպական, ուգրա-ֆիննական, թյուրքական և բազմաթիվ այլ լեզուներում ստորոգման կարգը վերաբերում է ասույթի՝ քերականորեն անկախ անդամի՝ ենթակայի էական հատկանիշի առանձնացմանը: Ի՛նչ ասել է՝ էական հատկանիշ:

Դիտարկենք հետևյալ ասույթները. «Բացվեց պայծառ օր» և «Այդ օրը պայծառ էր»: Անշուշտ, *պայծառ* բառը երկու դեպքում էլ արտահայտում է առարկայի հատկանիշ, սակայն այդ հատկանիշները համարժեք չեն ասույթի կառուցվածքում և ասույթի միջոցով արտահայտված մտքի կառուցվածքում: Առաջին ասույթի մեջ *պայծառ* արտահայտում է այնպիսի հատկանիշ, որ մեզ ոչինչ չի հաղորդում օրվա գոյության մասին, օրվա այդ հատկանիշը մեր գիտակցությանը հասնում է ժամանակից դուրս. գիտակցության հարաբերությունը դեպի այդ հատկանիշը չի արտահայտված: Երկրորդ ասույթի մեջ *պայծառ* բառը մեզ հաղորդում է, որ օրը գոյություն ունի, որ այն կա, հատկանիշն ինքը բացահայտում է այդ օրվա գոյը, և այն մեր գիտակցությանն է հասնում ժամանակային հատկանիշով. գիտակցությունը հաստատում է, որ այդ հատկանիշը գոյություն ունի, և այն հատուկ է որոշակի առարկայի: *Պայծառ էր* կառույցը, փաստորեն, ունի ստորոգման կարգ, որ արտահայտվել է ստորոգյալի միջոցով. ստորոգումն արտահայտում է նրա բովանդակային կողմը:

Ստորոգյալի գործառույթներում ստորոգումը դրսևորվում է եղանակի, ժամանակի, դեմքի և թվի ձևաբանական կարգերով: Այսպես, «Թռչունները չվում են հյուսիս» նախադասության ստորոգյալը ենթակայի հետ բայիմաստի հարաբերությունը հաստատում է թվով (գործողության սուբյեկտը հոգնակի է), դեմքով (սուբյեկտը հաղորդակցվող կողմերից դուրս է՝ երրորդ

դենք), հատկանիշի վերագրումը կատարվում է ներկայում՝ խոսելու պահին (ներկա ժամանակ), գործողության (եղելության) և իրականության հարաբերակցությունը ներկայացվում է որպես ստույգ կատարվող գործողություն (սահմանական եղանակ) և այլն:

Ստորոգումը արտահայտվում է նաև *հնչերանգի* միջոցով:

Հնչերանգային ստորոգումը դրսևորվում է անվանական նախադասություններում:

Օրինակ՝ Լեոնե՛ր, լեոնե՛ր հայրենի, անմահակա՛ն դշխոնե՛ր:

Самсон – мой друг. Это прекрасное товарищество.

Ստորոգումը շարահյուսական կարգ է, որով նախադասության բովանդակությունը վերագրվում, հատկացվում է իրականությանը, և որն ընկած է նախադասության կազմավորման հիմքում՝ նախադասությունը դարձնելով հաղորդակցական կառույց:

ՀՆՉԵՐԱՆԳ - Առոգանական միավոր է՝ նման բարձրացող-իջնող կորագծի, որ նախադասության ավարտի հետ ավարտվում է դադարով: Նախադասության հնչերանգի մեջ մտնում է ինչպես նախադասությունն ամբողջությամբ, այնպես էլ նրա բաղադրիչները՝ առանձին-առանձին, ինչպես՝ խոսքի *տեմպի փոփոխությունը* (արտասանվածքի արագացումն ու դանդաղեցումը), *տեմբրը* (կախված ասույթի նպատակից՝ այն կարող է լինել *ուրախ, տխուր, զարմացական, հարցական* և այլն), *խոսքի ռիթմը* (համասեռ տարբերի կրկնությունը խոսքի շղթայում), *հնչեղությունը* (ուժը), *դադարը, տրամաբանական շեշտը* և այլն:

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Բառերի (նախադասության անդամների) դասավորության ընդունված կարգն է՝ գծային որոշակի հաջորդականությամբ, որ հնարավորություն է տալիս ձևակերպելու միտքը: Շարադասությունը պայմանավորված է տվյալ հանրության լեզվամտածողությամբ. դա է պատճառը, որ միևնույն նախադասությունը տարբեր լեզուներում տարբեր կարգի շարադասություն ունի: Շարադասության տարբերությունները դիտարկելի են նաև միևնույն լեզվի տարբեր գոյավիճակներում: Հմմտ.

ա) գրաբար. *Առակք Սողոմոնի որդւոյ Դաւթի թագաւորի Բարայելի:*

բ) արդի հայերեն. *Բարայելի թագավոր Դավթի որդի Սողոմոնի առակները.*

գ) ռուս. Притча Саломона сына Давида царя Израиля.

դ) լատ. Parabolae Salomomis filii David regis Israhel.

ե) անգլ. The saying Salomons of the son Davids of the king Israels.

զ) գերմ. Die Fabeln von Salomon des Sohnes israelischen Königs David.

Ինչպես տեսնում ենք, գրաբարում նախադասության շարադասությունը չի համընկնում արդի հայերենի շարադասությանը, սակայն այն լի-

վին համընկնում է ռուսերենի, անգլերենի, գերմաներենի և լատիներենի նախադասությունների շարադասությամբ:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ – Ըստ կազմության՝ նախադասությունները բաժանվում են *պարզ և բարդ տեսակների*:

- **ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ** - Անկախ անդամների քանակից՝ ունի մեկ ստորոգում և արտահայտում է մեկ միտք: Կառուցվածքային տեսակետից լինում են *երկկազմ* (երկբևեռ) և *միակազմ* (միաբևեռ):

- **Երկկազմ նախադասություն** - Մի բևեռում գործող առարկան է կամ երևույթը (ենթական), մյուսում՝ ենթակային վերագրվող հատկանիշը՝ արտահայտված ստորոգումով (ստորոգյալը). *Գարունը բացվեց: Ձորում երևաց առաջին արագհիլը*: Աղջկա խաժ *աչքերն* առավել *արտահայտիչ էին* (ՄԽ):

Երկկազմ (կամ երկբևեռ) են նաև այն նախադասությունները, որոնց մի բևեռը արտահայտված չի լինում (զեղչված է), բայց մտքից հասկացվում է. Միբիավր թռավ և *երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա*: Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, *աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան* (ԱԲ):

Միայն ենթակայից ու ստորոգյալից կազմված նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն: Օրինակ՝ Հորիզոնը շառագունել է: Վարդը բացվեց: Երկինքը ջինջ է: Օրը խաղաղ է:

Այն պարզ նախադասությունը, որի գլխավոր անդամը (անդամները) ունի (են) լրացում (լրացումներ), կոչվում է պարզ ընդարձակ նախադասություն: Օրինակ՝ Արձճի նման գորշ, անփայլ ու մութ Փովել էր իմ դեմ ծովը հողմակոչ (ԵԶ):

- **Միակազմ նախադասություն** - Այնպիսի նախադասություն, որի գլխավոր անդամներից մեկն արտահայտված չէ և չի կարող վերականգնվել. ունի միաբևեռ կառուցվածք:

Միակազմ նախադասություններում փաստորեն առկա է կա՛մ ենթական, կա՛մ ստորոգյալը: Այն միակազմ նախադասությունը, որի ստորոգումը բացակայում է կամ հստակ չի արտահայտվում, ընկալվում է որպես ավարտուն նախադասություն հնչերանգի *ավարտվածության* շնորհիվ (ստորոգյալի բացակայության դեպքում շեշտվում է հնչերանգի դերը): Հմմտ. *Աքաղաղների՝ իրար հաջորդող կանչեր, դռների ճռռոց, թեթև ոտնաձայներ և բեռնատար մեքենաների մոտորների հռնդյուն...* (Ստ.Կ):

Ըստ քերականական կառուցվածքի և դիմային հատկանիշի՝ բաժանվում են երկու խմբի՝ *դիմավոր միակազմ և անդեմ միակազմ նախադասություններ*:

- **Դիմավոր միակազմ նախադասություն** - Այդպիսի նախադասության ենթական չկա և չի կարող վերականգնվել, ըստ դիմային իմաստի յուրա-

հատկության՝ լինում են՝ *ձևական դիմավոր, անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր*:

1. **Ձևական դիմավոր նախադասություն** - Դիմային վերաբերության տեսակետից չեզոք է, և նրանով արտահայտված գործողությունը կամ երևույթը (դիմային տեսակետից) չի կապվում մի բան եղողի, կատարողի հետ: Ըստ գլխավոր անդամի արտահայտության՝ լինում են *բայական և անվանական*:

ա) *Բայական* է համարվում այն դիմավոր նախադասությունը, որի գլխավոր անդամը կամ հենց նախադասությունը արտահայտվում է բայի դիմավոր ձևով. *Լուսացավ: Մթնեց: Կամաց-կամաց մթնում է:*

բ) *Անվանական* է համարվում այն դիմավոր նախադասությունը, որը կամ որի գերադաս անդամն արտահայտվում է անվանական բաղադրիչով և հանգույցով. *Գարուն է: Արդեն տաք է: Մեր կողմերում արդեն աշուն է:*

2. **Անորոշ դիմավոր նախադասություն** - Դիմային վերաբերության իմաստն անորոշ է, հայտնի չէ՝ ո՛վ է գործողություն կատարողը: Հմմտ. Մի օր էլ քաղաքից լուր բերին, որ թագավորին թախտից *վեր են բերել* (ԱԲ): Վարժապետ Մինասն ասաց, որ շուտով *գալու են* հոդերը *չափեն*, հարուստից *խլեն*, աղքատին *տան...* (ԱԲ):

3. **Ընդհանրական դիմավոր նախադասություն** - Արտահայտվում են որոշակի դեմքով, սակայն չեն վերաբերում միայն տվյալ դեմքին, այլ ունեն ընդհանրական դիմային նշանակություն: Այսպիսի նախադասությունները հիմնականում առած-ասացվածքներ են: Հմմտ. Ձուկը պոչից *չեն բռնի*: Մարդուն ընկերով *են ճանաչում*: Աչքդ *թեքեցիր*, բանիդ տերը չես: Վախեցի՜ր մարմանդ գետից:

- **Անդեմ միակազմ նախադասություն** - Միակազմ նախադասություն, որ չունի քերականական դեմք: Լինում են երկու տեսակ՝ *բայական և անվանական*:

ա) **Բայական անդեմ նախադասություն** - Գերադաս անդամն արտահայտվում է անորոշ դերբայով. *Սիրել* ու կրկին *սիրել* խնդագին, *Փայփայել* քնքուշ, *լինել* հարազատ, *Հեռանա լ*, *դառնա լ* կրկին ու կրկին, Անհուն աշխարհում բացսիրտ ու ազատ (ՎՏ): *Լինե՛լ, թե՛ չլինել...* (Շ):

բ) **Անվանական անդեմ նախադասություն** - Գերադաս անդամն արտահայտված է անուն խոսքի մասով: Դալուկ դաշտեր, մերկ անտառ... մահացողի տխուր կյանք (ՎՏ): Օրհնություն քեզ, ե՛րգ, և՛ երագ, և՛ սեր (ՎՏ): Օ՛, բնություն՛ն, օ՛, մա՛յր (ԵՉ):

Բառ-նախադասություն - Հիմնականում գործածվում է երկխոսություններում որպես հարցական կամ պատասխանական նախադասություն. այն հաստատում կամ ժխտում է որևէ միտք: Բառ-նախադասությունների հետ կարող են գործածվել վերաբերականներ՝ *իհա՛րկե, անշո՛ւշտ, հարկա՛վ, թերևս, ըստ երևույթին, հավանաբար* և այլն: Լինում են երեք տեսակ՝ *հաստատական, ժխտական և հարցական*:

Հաստատական բառ-նախադասություն. հաստատում կամ հիմնավորում է որևէ միտք: Օրինակ՝

- Հա՛յր սրբազան, գիտե՛ս մեզ հասած դժբախտությունն արդյոք,- ասաց մի ծեր վարդապետ:

- *Այո՛,* - տնքաց Խաղ սրբազանը (ՍԶ):

Ժխտական բառ-նախադասություն. արտահայտում է ժխտում՝ գործածվելով հնչյուն երկխոսությունների, այնպես էլ մենախոսությունների մեջ.

- Ես հիմա մոտի՞կ եմ ձեզ: *Օ՛, ո՛չ...* (մենախոսություն):

- Վաղը ներկայացում լինելո՞ւ է:

- *Ո՛չ,* - պատասխանեց հսկիչը (երկխոսություն):

Հարցական բառ-նախադասություն. արտահայտում է հարցում առարկայի, գործողության կամ նրանց հատկանիշների վերաբերյալ.

- Դու պիտի գնա՞ս:

- Այո՛:

- *Այո՞:*

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Բարդ նախադասությունը կազմված է քերականորեն և իմաստով իրար կապված երկու կամ ավելի բաղադրիչ նախադասություններից, որոնց միավորները միասնաբար կազմում են իմաստային ու հնչերանգային ամբողջություն: Բարդ նախադասության բաղադրիչ միավորները տրամաբանորեն և քերականորեն կարող են լինել համագոր և ոչ համագոր: Այդ գործոնով պայմանավորված՝ բարդ նախադասությունները լինում են *բարդ համադասական և բարդ ստորադասական:*

ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Բարդ նախադասություն, որի կառուցվածքում բաղադրիչ նախադասությունները քերականորեն համագոր են և համարժեք, լրացում-լրացյալի հարաբերություն չեն արտահայտում և բոլորը միասին ծառայում են հաղորդակցման միևնույն նպատակին՝ բնութագրվելով ընդհանուր հնչերանգով: Այդպիսի նախադասության բաղադրիչների իմաստային հարաբերությունն արտահայտվում է համադասական շաղկապներով և շարահարությամբ կամ հնչերանգի միջոցով:

ա) *Շաղկապներով կապակցություն.* և, ու, այլև, իսկ, բայց, սակայն, այլ, ապա, բայց և այնպես, թե չէ, այլ ոչ թե, եթե ոչ, ոչ թե... այլ, եթե... ապա, սակայն...բայց, բայց և, և սակայն, եթե ոչ, ապա եթե ոչ, ապա թե ոչ, թե չէ, կա մ...կա մ, կամ թե, կամ էլ, և կամ, կամ թե չէ, թե և այլն: Օրինակ՝

Նա վայր դրեց վրձինը, խորը շունչ առավ և մեջքը հենելով բազկաթոռի թիկնակին՝ փակեց աչքերը (ՀՂ): Մարութը փշրված սրտով նստեց չեչաքարին, *իսկ* Սաթենին՝ կանաչ գորգ հիշեցնող խոտերի վրա (ՄԽ): Անակնկալի եկած ձիավորը աղաղակեց, *սակայն* նրա աղաղակը խեղդվեց անեղաձայն գետի և քրտնած ձիու վրնջունի մեջ (ՀՂ): Եղյա՞մն էր նստել նրա

հոնքերին, թե՞ արդեն ծերացել էր. բո՞ւքն էր մարել աչքերի կրակը, թե՞ նրանք խամրել էին վաղուց. հոգնածությունն էր խլել նրանից ինքնավստահ քայլվածքը, թե՞ արդեն վիատվել էր նա... (ՀՂ):

բ) *Շաղկապական բառերով. այսուամենայնիվ, այդուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այդուհանդերձ, այնուհանդերձ, հակառակ դեպքում* և այլն: Թշնամուն հետ մղելու համար հզոր բանակ է պետք, *ուրեմն* անհրաժեշտ է գավառներից նոր ուժեր բերել (ՄԽ): Դու պետք է օգնես, *այլապես* գլուխ չի գա թնդանոթ ձուլելու գործը,- ասաց Բեկը (ՄԽ):

գ) *Շարահարությունամբ*. Ծովից ծով Հայաստան էինք ուզում. օվկիանոսից օվկիանոս Սփյուռք ստացանք (ՎՊ): Արեգակը թեքվել էր մայրամուտ, և վանքի երկարած ստվերում դեռ սաղմոսներ էին սերտում փոքրավորները (ՀՂ): Կրակները վաղուց հանգել էին. հազարացիների բանակն ընկղմվել էր խոր քնի մեջ (Մ):

Համադասական նախադասությունները լինում են *փակ և բաց* կառուցվածքի, որը պայմանավորված է բաղադրիչ նախադասությունների քանակի սահմանափակության կամ ավելացման հնարավորությամբ: *Փակ* է համարվում այն համադասական նախադասությունը, որը կազմված է երկու բաղադրիչ նախադասություններից, և ուրիշ բաղադրիչ նախադասություն ավելացնել հնարավոր չէ: Այսպիսի նախադասության բաղադրիչները սովորաբար կապակցվում են ներհակական շաղկապներով. Եվ ուզում ես խոսել Ինչ-որ ուրիշ ռճով, *Բայց* կորչում է ասես Հայերենը քո ճոխ (ՊՍ):

Բաց են այն համադասական նախադասությունները, որոնք կազմված են երկու և ավելի հավասարաթեք նախադասություններից և կարող են իրենց կազմ ընդունել համարժեք այլ նախադասություններ ևս. Ուրիշ բլբուլ կգա, կմտնի բաղը, Ուրիշ աշուղ կասի աշխարհի խաղը... (ԵԶ):

Բարդ համադասական նախադասության մեջ տարբեր ստորոգյալներ կարող են վերաբերել կա՛մ տարբեր ենթակաների, կա՛մ միևնույն ենթականին: Հմտ. Գարնանային *զեփյուռը հեռում էր* անհուն երջանկությունից, և գիշերահավի *ողբը* ասես բնության *տնքոցը լինելը*: *Նա վայր դրեց* վրձինը, խորը *շունչ առավ* և մեջքը հենելով բազկաթոռի թիկնակին՝ *փակեց* աչքերը (ՀՂ): (Վերջին կառուցատիպի նախադասությունները կոչվում են *միավորյալ նախադասություն*):

Բարդ համադասական նախադասության ձևային հատկանիշներից են համադասական շաղկապները, որոնց միջոցով իրականացվում է բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների իմաստային կապը: Համադասական շաղկապների իմաստային հարաբերությունների բնութոյով պայմանավորված՝ բարդ համադասական նախադասությունները բաժանվում են հետևյալ տեսակների.

ա) *Միավորական* - Բարդ համադասական նախադասության բաղադրիչներն արտահայտում են իրար չհակադրվող գործողություն կամ

եղելություն և միավորվում են իմաստային համասեռ երևույթներ արտահայտելու հիմքի վրա: Կապակցվում են միավորիչ շաղկապներով (և, ու, այլև, նաև, ևս, էլ, նույնպես) կամ շարահարությամբ և ունենում են երկու դրսևորում՝ *համաժամանակություն և տարժամանակություն*:

- *Համաժամանակության հարաբերությամբ* կապվող համագոր նախադասությունների արտահայտած գործողությունների կատարման ժամանակները համընկնում են: Օրինակ՝ Եղյամն *էր* սունկի գլուխն *արծաթում*, Մրսում *էր* կարծես վայրի նշենին, *Հանգստանում էր* հողմը բացատում՝ Ականջն ամպրոպի ազդանշանին (ՀՄ):

- *Տարժամանակության հարաբերությամբ* կապվող համադաս նախադասությունների արտահայտած գործողությունները կատարվում են տարբեր ժամանակներում: Օրինակ՝ Ոչ ոք *չի լսել* սկիզբը նրա և *չի լսելու* վախճանը նրա (ԱԲ):

բ) **Ներհակական** - Բարդ նախադասությունների բաղադրիչները բովանդակությամբ ներհակ, հակադիր են միմյանց: Այդ հարաբերությունն արտահայտվում է ներհակական շաղկապներով (*իսկ, բայց, սակայն, այլ, մինչդեռ, ապա, բայց և այնպես, թե չէ, այլ ոչ թե, եթե ոչ, ոչ թե... այլ, եթե... ապա* և այլն) կամ շարահարությամբ (վերջինիս դեպքում կարևորվում է հնչերանգի դերը): Եվ ահա՝ իշխանի համար հասել էր ցանկալի օրը, *բայց* բախտի անողոք որոշմամբ նա չէր կարողանում այժմ վերադառնալ իր տուն (Մ):

գ) **Տրոհական** - Բարդ նախադասությունների արտահայտած գործողություններից միայն մեկն է իրական կամ հնարավոր դիտվում: Այդ հարաբերությունն արտահայտվում է *կամ, կա՛մ... կա՛մ, կամ թե, կամ էլ, և կամ, կամ թե չէ, թե* շաղկապներով: Հմմտ. Խշշում էին բարդիները, և նրանց դեղնած տերևները խմբով թռչում էին քամու հետ *կամ* օդապտույտ թափվում գետնին (ԱԲ): *Կա՛մ* հող տվեք, *կա՛մ* մենք մորեխի պես կոչնչացնենք ձեր քաղաքները (ԱԲ):

դ) **Հավելական** - Բարդ նախադասության հիմնական մասին ավելանում է մի բաղադրիչ նախադասություն, որ իմաստային տեսակետից չի ձուլվում հիմնական մասին, այլ մի տեսակ հավելում է պարունակում: Դրանով հաճախ տրվում է լրացուցիչ տեղեկություն, կամ արտահայտվում է խոսողի վերաբերմունքը հիմնական նախադասության գործողության նկատմամբ: Այդ հարաբերությունն արտահայտվում է *և, ու, իսկ, բայց, սակայն, և այնուամենայնիվ, բայց և այնպես, ըստ որում, ընդ որում, ուրեմն, հետևաբար* և այլ շաղկապներով: Օրինակ՝ Անցավ մի քանի օր, *և էս Խոնարհին չտեսա* (ԱԲ): Թշնամուն հետ մղելու համար հզոր բանակ է պետք, *ուրեմն անհրաժեշտ է գավառներից նոր ուժեր բերել* (ՄԽ):

ԲԱՐՊ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ - Բարդ նախադասություն, որ բաղկացած է տրամաբանորեն և քերականորեն երկու ոչ համագոր բաղադրիչ նախադասություններից, որոնք կապված են ստորադասական հարաբերությամբ և արտահայտում են լրացում-լրացյալի հարաբերություն:

ԳԼԽԱՎՈՐ ԵՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Բարդ ստորադասական նախադասության մեջ տարբերակում են գլխավոր և երկրորդական նախադասություններ. *գլխավոր նախադասության մեկ անդամն արտահայտված է լինում մեկ այլ նախադասությամբ, որ երկրորդական անդամ է՝ երկրորդական նախադասության, քանի որ լրացնում է գլխավոր նախադասության որևէ անդամի՝ որպես կախյալ անդամ:*

Այսպես, «*Բարձր պարիսպներով շրջապատված դղյակն ընկղմվել էր գիշերային մթության մեջ*» (ՀՂ) նախադասության *բարձր պարիսպներով շրջապատված* բառակապակցությունը լրացնում է *դղյակը* գլխավոր անդամին և համարվում է որոշիչ: Եթե այդ բառակապակցությունն ստանա ստորոգում և վերածվի նախադասության, ապա կունենանք բարդ նախադասություն, որի բաղադրիչները կապված կլինեն ստորադասական հարաբերությամբ: Հմմտ. «*Դղյակը (1), որ շրջապատված էր բարձր պարիսպներով (2), ընկղմվել էր գիշերային մթության մեջ (1)*»: Տվյալ դեպքում առաջին նախադասությունը գլխավորն է, երկրորդը՝ ստորադասը կամ երկրորդականը, որ կատարել է որոշչի պաշտոն (արտահայտված նախադասությամբ):

Երկրորդական նախադասությունը կարող է *փոխարինել գլխավոր նախադասության որևէ անդամի: Հմմտ. Մերում են նրանք այն վայրենուց, Որ էլ չէր կարող ապրել քարայրում* (ՊՍ): Տվյալ բարդ նախադասության մեջ «որ էլ չէր կարող ապրել քարայրում» երկրորդական նախադասությունը փոխարինում է գլխավոր նախադասության *այն* ձևական անդամին և կատարում է նրա շարահյուսական գործառույթը (որոշիչ):

Բարդ ստորադասական նախադասության *բաղադրիչները կապակցվում են՝*

ա) Ստորադասական շաղկապներով. որ, որպեսզի, քանի որ, որովհետև, եթե, թե, չէ՞ որ, մինչև որ, եթե միայն, միայն թե, թեկուզ, թեկուզև, թեպետ, թեպետև և այլն:

Տանտերը կարծես ցանկանում էր ցույց տալ, *թե* չի հավատում իր լսածին (ՀՂ): Ոսկանը կռահեց, *որ* նա ծերունու ասած Զաքարիան պիտի լինի (ՀՂ): Այդ կոգին կատարյալ դրախտ կարելի էր դարձնել, *որովհետև* ջրի աղբյուրներ կային (Բ): Եվ *քանի որ* դու շուշան ես, Թող քո մեջ զրնգա իմ ձայնը մաքուր (ՌԴ): *Որ* գալիս է տաք շեղջի բույրը, ուրեմն ցորեն են ծեծում

(ԱԲ): Թեև վտանգն արդեն անցել էր, սակայն սարսափահար ուղևորները դեռ ուշքի չէին եկել (ՀՂ):

բ) *Հարաբերական բառերով (հարաբերական դերանուններով)*. Եվ ահա մի գեղեցիկ օր, *էրբ* դաշնակից իշխանները վերջին զորահանդեսն էին կատարում, հանդիպակաց դաշտի վրա երևաց հեծյալների մի խումբ (Մ): Դոյակը, *որ* շրջապատված էր փարթամ այգիներով, ննջում է գիշերային անդորրի մեջ (ՀՂ): Անապատում ապրում են բեղվիկների ցեղախմբեր, *որոնց* դռները դեռ չէր թակել քաղաքակրթության մունետիկները (Դասագիրք):

Որոշակի դեպքերում գլխավոր նախադասության մեջ լինում են համապատասխան հարաբերյալներ - *այն... ինչ, այն ... որ, այնպես ... ինչպես, այնպիսի ... ինչպիսի, այնքան ... որքան, այնտեղ ... որտեղ, այն ամենը ... ինչ, նա ... ով* և այլն: Հմմտ.

Այն ալիքը, *որ* հիմա փշրվում է քո ձեռքին, Մի օր ծաղկունք է եղել Վանա ծովի եզերքին (ՀՄ): Չի հոգնում *նա, Ով* գնում է շատ հեռավոր հանդիպումի (ՊՄ): Ջորականը մեղմ նայեց *նրան, ով* անհամբեր շարժումով դարձավ դեպի գավիթը (ԴԴ): Ազարիան երբեք ուշադրություն չէր դարձրել *այն բանի վրա, որ* կինը միշտ լռակյաց է ու տխուր (ՄԽ):

գ) *Շարահարության միջոցով*. Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես ... (ՀԹ): Ես չգիտեմ՝ ի՞նչ խոսքերի ադամանդով քեզ ներբողեմ (ՀՇ): Ինքը պետք է անարատ պահի իրեն. հայրենիքում նրան անվանում են հերետիկոս (ԱԲ):

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ -

Ըստ այն հանգամանքի, թե իմաստային ինչպիսի կապեր են առկա գլխավոր և ստորադաս նախադասությունների միջև, ստորադաս նախադասությունները բաժանվում են երեք խմբի՝

1. *Նախադասության գլխավոր անդամի պաշտոն կատարող.*

ա) ենթակա ստորադաս նախադասություն. Մեզ *նա* միայն կհասկանա, *ով գեղեցիկ, Բայց հեռավոր մի կնոջ է սիրահարված...* (ՊՄ):

բ) ստորոգելիական վերադիր ստորադաս նախադասություն. իսկական որսորդը *նա է, ով* ոչ մի անգամ չի վրիպում (ԱԲ):

2. *Ենթակայի կամ գոյականով արտահայտված անդամի լրացնող.*

ա) որոշիչ ստորադաս նախադասություն. Այդ հավիտենաշունչ ձեռագրերի մեջ իրենց մտքի, գրչի ու վրձնի լուսավոր հետքերն են թողել *այնպիսի* հանճարներ, *ինչպիսին Եղիշեն էր, Դավիթ Անհաղթն ու Նարեկացին, Սարգիս Պիծակն ու Թորոս Ռոսլինը* (ՀՂ):

բ) հատկացուցիչ ստորադաս նախադասություն. Տղաները բռնեցին *նրա* ձիու սանձը, *ով զինվորական հագուստով էր* (ՄԽ):

գ) բացահայտիչ ստորադաս նախադասություն. (Ես սիրում եմ քեզ, իմ հա՛յ ժողովուրդ), Քե՛զ, *որ կերտող էս դարերում եղել* (ՎԴ):

3. Ստորոգյալին կամ բայով արտահայտված այլ անդամի լրացնող.

Ա) Խնդիր ստորադաս նախադասություն.

ա) ուղիղ խնդիր - Այն, որ անծանոթն իրեն էր նայում հեզնոտ ու խանդոտ, նա չնկատեց (ԴԴ):

բ) հանգման խնդիր - Ձորավարներն սպասում էին, թե Բեկը երբ Հայոց ժողովի ավագանու խորհուրդ կգումարի (Դ):

գ) մատուցման խնդիր - Տալիս եմ երգս լուսե, Ում որ կուզեք (ԵՁ):

դ) անջատման խնդիր - Ջգուշացե՛ք, օրհորդնե՛ր, որ ձեր ծաղկող հասկն ապարդյուն չանցնի նման բարդի ծառին (Մ):

ե) միջոցի խնդիր - Դա հաստատվում է այն բանով, որ Կոդակը հետզհետե ավելի էր ամփոփվում իր մեջ և ամեն բան չէր պատմում Գյուտին (ԴԴ):

զ) ներգործող խնդիր - Բեկի առաջարկն ընդունվեց բոլոր նրանց կողմից, ովքեր հավաքվել էին Բարխուդարի տանը (ՄԽ):

է) վերաբերության խնդիր - Քրիստը մեզ պատմում էր, թե ինչպես է Դավիթ Բեկը կովել օսմանյան բանակների դեմ (ՄԽ):

թ) մասնավորման (սահմանափակման) խնդիր - Փորձում էր գոհանալ այն բանով, որ նա երեկոները այցելում էր իրենց (ՆԴ):

Բ) Պարագա ստորադաս նախադասություն.

ա) տեղի պարագա - Կայծակի լույսը սահեց այնտեղով, ուր որսորդներին հալածված եղջերուի նման մոլորվել էին Սառան ու Ստեփանիկը (Դ):

բ) ժամանակի պարագա - Արևն իր գլուխը դրել էր լեռան ձերմակ բարձին, երբ սպարապետն իր շքախմբով հասավ Ծիծեռնավանք (ՄԽ):

գ) պատճառի պարագա - Պակին զարմանում էր, թե ինչու մեկիքներն ու իշխանները թագավոր չեն հռչակում Դավիթ Բեկին (ՄԽ):

դ) հիմունքի պարագա - Մեզնից խորշելու ամենևին հարկ չկա, մանավանդ որ ձեր վարժուհին մեր աղջիկն է (ՆԴ):

ե) նպատակի պարագա - Որպեսզի երիտասարդ թագավորը սխալներ չանի անփորձությունից, դուքսը անընդհատ հսկում էր նրան (ՍԶ):

զ) պայմանի պարագա - Ես չեի վախենա նրանց ներկայանալուց, եթե չլիներն մեր սուրբ հայրերը, որոնց քաջության մասին այնքան էլ հավատք չունեմ (ՀԴ):

է) զիջման պարագա - Թագավորը, թեպետ դժգոհ էր այս անակնկալ այցից, այսուամենայնիվ, ի պատիվ իշխանի՝ սիրով ընդունեց հյուրերին (Մ):

ը) ձևի պարագա - Ինչպես Բեկը կանխագուշակում էր, այնպես կատարվեց ամեն ինչ (ՄԽ):

թ) չափի պարագա - Որքան ցավել է իմ սիրտը, այնքան թող զվարթ լինի քո սիրտը լուսեղ (ՎՏ):

ժ) հետևանքի պարագա - Ախ, ի՞նչ եղավ քեզ, որ հուր կարոտի Արցունքներդ այդպես շուտով մոռացար (ԱԲ):

ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

- Բարդ ստորադասական նախադասությունը, որի կազմում կան մեկ գերադաս և երկու կամ ավելի ստորադաս բաղադրիչներ: Ըստ կառուցվածքի և ըստ բաղադրիչների հարաբերության՝ բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասությունները լինում են տարբեր տեսակի:

1. **Համաստորադասությամբ կապակցություն** - Այս կառուցատիպի նախադասություններում գերադաս նախադասությանը լրացնում են միմյանց համագոր ստորադասական նախադասություններ.

Ով պարզ է նայում մթին գիշերին (1), Ով պարզ է ժպտում արևոտ օրվան (2), Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ (3), Հազար բյուր անգամ էրանի նրան (4)՝ (ՎՏ):

Թիվ 1, 2 և 3 համասեր նախադասություններն ստորադասված են գլխավոր նախադասությանը (թիվ 4):

2. **Տարաստորադասությամբ կապակցություն** - Բազմաբաղադրիչ նախադասություն, որի ստորադաս նախադասությունները կատարում են տարբեր գործառնություններ՝ գերադաս նախադասությանը լրացնելով տարբեր պաշտոններով.

Երբ Լառ-Մարգարը նայում էր ծիրանի ճյուղերի արանքից (1), նրան թվում էր (2), թե հավքը լազուրի վրա միայնակ սահող ամպի կտորի հետ է խաղում (3)՝ (ԱԲ):

Գլխավոր նախադասությանը (2) լրացնում են ժամանակի պարագա (1) և ենթակա ստորադաս կապակցությամբ (3) նախադասություններ:

3. **Ենթաստորադասությամբ կապակցություն** - Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն, որը կազմված է մեկ գերադաս (գլխավոր) և իրար հաջորդաբար ստորադասված երկու կամ ավելի (երկրորդական) նախադասություններից.

Հայրապետը թաքնվեց վանքում (1), որպեսզի փրկի իր անձը և հայրապետական հարստությունները (2), որոնք ժառանգել էր նախնիներից (3)՝ (Ս):

Գլխավոր նախադասությանը (1) ստորադասվում է 2-րդ նախադասությունը, որին էլ՝ երրորդ նախադասությունը. ստորադաս նախադասություններից երկրորդը ստորադաս է առաջինի նկատմամբ, երրորդը՝ երկրորդի նկատմամբ:

Ենթաստորադասական նախադասության բաղադրիչ նախադասություններն ունենում են տարբեր շարադասություն. ստորադաս նախադասությունները գլխավորի (գերադասի) հանդեպ կարող են լինել.

ա) *նախադաս. Երբ հասան մայրաքաղաքը շրջապատող այգիներին, որտեղ հաճախ էին երևում պարսիկ զինվորներ,* երիտասարդ գուսանն զգուշացավ (ՍԶ):

բ) *հետադաս*. Երեկո էր, երբ Բաբկեն իշխանը յուր գորքերով մտավ Ազատ գետի հովիտը, որպեսզի ուղղություն վերցնի դեպի Դվին (Մ):

գ) *միջադաս*. Ամեն անգամ, երբ Եղիշը բարձրանում էր խնձորուտի լանջը, որ ջրի Մերիի պատվաստած ծառը, քաղցր հիշողություններ էին արթնանում (ՄԽ):

4. Հանրաստորադասությամբ կապակցություն - Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն, որի միևնույն ստորադաս նախադասությունը լրացնում է երկու կամ ավելի համագոր (համասեռ) նախադասությունների: Հմմտ.

Երբ փչում է աշնան դառնաշունչ քամին (1), ծառերի ճյուղերից պոկվում են դեղնած տերևները (2), այգում մրսում է երիտասարդ կեռասենին (3), սիմֆոնիի երկար տերևները թրերի նման քսվում են իրար (4), և նույնիսկ խոնարհվում է քարափի հաստաբուն կաղնին (5)` (ԱԲ):

Տրված բազմաբարդ նախադասության մեջ ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը (1) լրացնում է միմյանց համագոր գլխավոր նախադասություններին (2, 3, 4, 5):

ՇԱՐԱՀԱՅԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ - Անկախ դերբայներով և նրանց լրացումներով կազմված բայական բառկապակցություն: Դերբայական դարձվածի գերադաս անդամն արտահայտվում է`

ա) *անորոշ դերբայով*. Նա ինձ առաջարկեց գնալ Ուտիք՝ *թագավորի արշավանքի մասին տեղեկություն առնելու* (Մ): Նա ամբողջ օրն զբաղվում էր կա՛մ իր հնամաշ շորերը կարկատելով, կա՛մ գուլպա գործելով (ՆԴ):

բ) *ենթակայական դերբայով*. Թվում էր, թե նա դիտում է *հեռվում աղոտ կերպով նշմարվող* մթապատ լեռների կատարները (Մ): Ի՞նչ պատասխան պիտի ես տամ *հող ու ծաղիկ տվողին* (ՀԹ):

գ) *հարակատար դերբայով*. Առաջին անգամ կրակ տեսած նախամարդու նման նա դողացող մատները մոտեցրեց որդան կարմիրին, իսկույն էլ ետ քաշեց (ՌՀ): Զինվորները ձայն տվեցին *աշտարակի վրա կանգնածներին* և զգուշացրին վտանգի մասին (ՄԽ):

դ) *համակատար դերբայով*. Բնության հետ համեմատվելիս շահում են հզորները, թույլերը չարանում են և կամ խեղճանում, եթե ազնիվ են (ՌՀ):

ե) *կապական կառույցով*. Նա զայրացած էր հրամանատարի վրա Ատոմի գորագնդին *ենթարկվելու պատճառով* (ԴԴ):

Դերբայական դարձվածի շարահյուսական գործառույթները -

Դերբայական դարձվածը նախադասության մեջ հանդես է գալիս մեկ անդամի պաշտոնով, կատարում է շարահյուսական նույն գործառույթը, ինչ նրա գերադաս բաղադրիչը՝ դերբայը: Օրինակ՝ «Բարձր ծառերով շրջապատված ամրոցն ընկղմվել էր գիշերային անդորրի մեջ» նախադասության

դերբայական դարձվածը՝ *բարձր ծառերով շրջապատված*, և դարձվածի գերադաս անդամը՝ *շրջապատված*, կատարում են որոշիչ շարահյուսական պաշտոն:

Նախադասության մեջ դերբայական դարձվածը կատարում է շարահյուսական տարբեր պաշտոններ՝ *ենթակա, ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր, պարագա*:

ա) ենթակա. Այդ պահին *վշտահար թագուհուն հետաքրքրողը* խորհրդավոր երիտասարդուհին էր (Մ):

բ) ստորոգելիական վերադիր. Ես մտածեցի, որ այս աշխարհում ամենից դժվար բանը *հեքիաթն իրականություն դարձնելն* է (ՌՀ):

գ) որոշիչ. Անթափանց խավարում դժվար էր տեսնել *խորին տառապանք արտահայտող* նրա դեմքը (ՀՂ): Գուցե իմ սրտում, երգերում իմ մութ, Հեռավոր մեկի անրջանքն եմ սուտ՝ *Նետված աշխարհի անսուտ երազին* (ԵՉ):

դ) հատկացուցիչ. *Անցած ձմռանը նշանվածների* կոպերի տակով Անհամբերությամբ սահում է հիմա երազանքն այրող... (ՊՍ):

ե) բացահայտիչ. Եվ բախտից մի բան ենք խնդրել՝ *Ճամփա տալ բոլոր հովերին, Եվ կանգնել հողմերին հակառակ* (ՀՍ):

զ) խնդիր. Գյուտն անօգուտ համարեց *համառ ծերուկի հետ վիճելը* (ԴԴ) - ուղիղ խնդիր: Օրեր շարունակ Դվինում խոսում էին *նոր թագավորի հայրենիք վերադառնալու մասին* (ՍԶ) - վերաբերության անուղղակի խնդիր: Ճանապարհի երկու կողմը կուտակված բազմությունն անհամբեր սպասում էր *պարսպադռնից Պապի ներս մտնելուն* (ՍԶ) - հանգման անուղղակի խնդիր:

է) պարագա. *Մանկությունս հիշելիս* սիրտս դառնում է գինով (ԵՉ) - ժամանակի պարագա: Այժմ նա դառնում էր տուն՝ *հույսը բոլորովին կտրած* (ՆԴ) - ձևի պարագա: Եվ ամեն ոք շտապում էր դեպի կուլիս՝ *անձամբ սեղմելու երիտասարդ հանճարի ձեռքը* (ՆԴ) - նպատակի պարագա: *Ընկերուհուց վրեժ լուծելու զգացումից դրդված*՝ Մանեն խստորեն խոսեց նրա հետ (ՆԴ) - պատճառի պարագա: *Չնայելով օրվա տարածամեղուն*՝ այնուամենայնիվ թագուհին դեռ չէր հեռացել Տրդատա հովանոցից (Ս) - զիջման պարագա:

Դերբայի լրացումները կոչվում են *կողմնակի անդամներ*: Հմնտ. Այս գավոն էլ եկեք հարգենք և անթառամ հիշատակը *կամար-կամուրջ կապողների* (ՊՍ) (*կամար-կամուրջ* - կողմնակի ուղիղ խնդիր): *Տափակ կտուրներից ծուլորեն ելնող* ծուխը կեռմաններ էր անում (ՍԽ) (*ծուլորեն* կողմնակի ձևի պարագա, *կտուրներից* կողմնակի տեղի պարագա, *տափակ*՝ որոշիչ (ոչ կողմնակի). անմիջապես դերբային չի առնչվում):

Ըստ գլխավոր անդամների նկատմամբ ունեցած դիրքի՝ դերբայական դարձվածն ունենում է *նախադաս, միջադաս և հետադաս* շարահյուսություն, որով էլ պայմանավորվում է նրա կետադրությունը:

Նախադաս և հետադաս դերբայական դարձվածները տրոհվում են բուրժով, իսկ միջադասները՝ ստորակետերով. Ու թներն ահա փռած տի-
րաբար՝ Թոչում է հոգիս, թոչում դեպի տուն (ՀԹ) - նախադաս: Ինքը գնաց
Սևորոյաց կողմերը՝ Ուտիքի մեջ կարևոր կարգադրություններ անելու (Մ) -
վերջադաս: Զինվորները, լսելով Մուշեղ սպարապետի խրախուսող կոչերը,
ոգևորված նետվում էին դեպի թշնամին (ՍԶ) - միջադաս:

Նախադաս դերբայական դարձվածը չի տրոհվում, եթե կատարում է
ենթակայի [Ծերունի վարդապետի հետևից քայլողները բարձր բռնած տա-
նում էին մարգարտակար ծոպերով սրբապատկերներ (ՄԽ)], հատկացուցչի
[Սակայն ռուս զինվորներն էլ պակաս զարմանքով չէին նայում իրենց առջև
հպարտությամբ կանգնածների թուխ դեմքերին, սև ու հանդուգն աչքերին
(ՄԽ)], որոշչի [Ինքնամոռացության մեջ ընկած աբեղային թվում էր, որ նորից
գտնվում է գունավոր ճառագայթներով լցված դասատանը (ՀՂ)] գործառույթ-
ներ կամ գործածվում է կապի հետ [Գյուղական ռազմաջոկատների վիճակն
ստուգելու համար Մխիթար սպարապետն սկսեց շրջագայել գավառները
(ՄԽ)]:

ՇԱՐՈՒՅԹ - Նախադասությունների կաղապարի անդամատումը
կարող է տարբեր լինել: Դա պայանավորված է այն հանգամանքով, թե
նախադասության անդամատումը ի՞նչ սկզբությամբ է կատարվում: Այն կարելի
է կատարել՝ սկսելով նախադասության նվազագույն միավորներից և գնալ
դեպի ավելի մեծ հատվածներ կամ հակառակը՝ մեծ հատվածներից գնալ
ավելի փոքր՝ ընդհուպ նվազագույն միավորները: Առաջին մոտեցման դեպ-
քում վերլուծությունը կատարվում է հնչյունից, և ունենում ենք *հնչյուն* -
երկհնչյուն - *երկրորդական ձևույթ* - *հիմնական ձևույթ* - *բառ* - *բառաձև* -
բառակապակցություն - *նախադասություն* գծային պլանը, երկրորդ մոտեց-
մամբ՝ այդ պլանի հակառակ դասավորությունը: Նախադասության անդա-
մատման նպատակը լեզվի իմաստակիր միավորների *իմաստային-գործա-
ռական-հնչերանգային* արժեքի որոշումն է նախադասության կառուցված-
քում:

Ժամանակակից լեզվաբանական ուսմունքում նախադասության ան-
դամատումը կատարվում է աստիճանական կարգով՝ այն սկսելով ավելի
մեծ (ծավալուն) հատվածներից: Նախադասության աստիճանական անդա-
մատմամբ որոշվում է բառի, բառաձևի և բառակապակցության տեղը նա-
խադասության կառուցվածքային պլանում, ինչպես նաև բացահայտվում են
բառից ավելի ծավալուն հատվածները:

Ըստ այդմ՝ նախադասությունները մի դեպքում կարելի է բաժանել բա-
ռակապակցությունների, մյուս դեպքում՝ բառերի և բառաձևերի, երրորդ
դեպքում՝ հնչերանգային միասնություն կազմող միավորների:

Օրինակ՝ *Նա ծառերի հետևում անտառը չի տեսնում:*

Այս նախադասությունը կարելի է անդամատել երեք ձևով.

1) Ըստ բառակապակցությունների. ծառերի հետևում, անտառը չի տեսնում:

2) Ըստ բառերի և բառաձևերի. նա, ծառերի, հետևում, անտառը, չի տեսնում:

3) Ըստ հնչերանգային միասնություն կազմող միավորների. նա, ծառերի հետևում, անտառը չի տեսնում:

Տվյալ դեպքում անդամատման այս տարբերակում յուրահատուկ կառույցներ են *հնչերանգային միասնություն կազմող միավորները*, որոնք լեզվաբանության մեջ կոչվում են *շարույթ*:

Շարույթը բաժանվում է տակտերի (բառ) և վանկերի:

Շարույթը խոսքի հատված է, արտահայտության մաս, որ իր կազմում միավորում է մեկից ավելի բառեր և բնութագրվում է շարահյուսական ամբողջականությամբ: Մյուս կողմից՝ շարույթը նախադասությունների մեջ հնչերանգային միասնություն կազմող ռիթմիկ շնչառական միավոր է, որ հակադրվում է մյուսներին. այն չունի ներքին հնչերանգային դադար:

Ունենք՝ *նա, ծառերի հետևում, անտառը չի տեսնում* շարույթները:

Այս շարույթներից առաջինն արտահայտված է մեկ բառով և կատարում է նախադասության մեկ անդամի պաշտոն (ենթակա), երկրորդն արտահայտված է երկու բառով և կատարում է նախադասության մեկ անդամի պաշտոն (տեղի պարագա), երրորդ շարույթն արտահայտված է երեք բառով (բայական բառակապակցությամբ) և կատարում է նախադասության երկու անդամի պաշտոն (ուղիղ խնդիր և բայական ստորոգյալ):

Ըստ այդմ՝ շարույթն ինքնուրույն միավոր է, որ չի նույնանում ո՛չ բառի, ո՛չ բառակապակցության և ո՛չ էլ նախադասության անդամի հետ:

Նախադասությունների այն հատվածները, որոնք բաղկացած են մեկ բառից, բառախմբից կամ բառակապակցությունից, և որոնք հանդես են գալիս որպես որոշակի դադարներով և հնչերանգով առանձնացվող միավորներ, կոչվում են *շարույթներ* (Գ. Ջահուկյան):

Շարույթը կարելի է ընդարձակել թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության տեսակետից, սակայն եթե նրա հնչերանգային միասնությունը չի խաթարվում, անկախ շարույթում ընդգրկված կառույցների քանակից՝ ունենում ենք դարձյալ մեկ շարույթ:

Այդպիսի շարույթները լինում են միաստիճան, երկաստիճան, եռաստիճան և բազմաստիճան: Օրինակ՝ *Հանդ գնացողը* թարմ ծաղիկներ էր տեսնում Մխիթարի գերեզմանին (միաստիճան): *Հանդը հերկելու գնացողը* թարմ ծաղիկներ էր տեսնում Մխիթարի գերեզմանին (երկաստիճան): *Ձորերի միջև ընկած հանդը հերկելու գնացողը* թարմ ծաղիկներ էր տեսնում Մխիթարի գերեզմանին (եռաստիճան): *Գյուղից ոչ հեռու գտնվող ձորերի միջև ընկած*

հանդը հերկելու գնացողը թարմ ծաղիկներ էր տեսնում Մխիթարի գերեզմանին (բազմաստիճան):

Բազմանդամ շարությունները խրախուսելի չեն. դրանք ծանրացնում են խոսքը և նրան զրկում գեղարվեստական արժեքից:

ՇԱԽԱԴԱՍՏՈՒԹՅՈՒՆ - Նախադասությունը բառերի և բառաձևերի հորիզոնական շղթա է, որի միավորները դիտվում են առանձին հարացույցների կարգային անդամներ: Թեքական խոսքի մասի յուրաքանչյուր բառույթ ունի որոշակի հարացույց, որ ներկայանում է որպես հարաբերակից ձևերի *ուղղահայաց շղթա*: Տարբեր հարացույցների կարգային անդամներ, իրար կողքի դասավորվելով, կազմում են բառաձևերի *հորիզոնական շղթա կամ բառերի հորիզոնական շարակարգ*, որ կոչվում է նախադասություն:

«Ավարայրի դաշտում հայոց զորաբանակը դիմագրավեց պարսիկներին» նախադասության յուրաքանչյուր անդամ համարվում է առանձին հարացույցի կարգային անդամ. այդ անդամները, անջատվելով ուղղահայաց շղթայից, քերականորեն կապակցվել են և կազմել հորիզոնական շղթա՝ ստեղծելով հաղորդակցական միավոր, դառնալով լեզվական լիանշան:

Այսպես, *Ավարայրի* բառաձևը *Ավարայր* հատուկ գոյականի հոլովման հարացույցի մեկ առանձին անդամ է՝ սեռական հոլովաձև, *դաշտում* բառաձևը՝ *դաշտ* գոյականի հոլովական հարացույցի մեկ անդամ՝ ներգոյական հոլովաձև, եթե *Ավարայրի դաշտում* բաղադրյալ գոյականը դիտենք որպես նախադասության մեկ անդամ, ապա այն դարձյալ բաղադրյալ գոյականի հոլովման հարացույցի մեկ անդամ է՝ ներգոյական հոլովաձև, *զորաբանակը* բառաձևը *զորաբանակ* գոյականի առկայացման հարացույցի մեկ անդամ է՝ որոշյալ առումով, *դիմագրավեց* բառաձևը՝ *դիմագրավել* բայի խոնարհման համակարգի մեկ անդամ՝ սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, եզակի թիվ, երրորդ դեմք, *պարսիկներին* բառաձևը՝ *պարսիկներ* բառաձևի հոլովման հարացույցի մեկ անդամ՝ տրական հոլովաձև:

Այս բառերը *շարակարգային հարաբերությունների* մեջ են մտել իրար հետ՝ դրսևորելով տարատեսակ (համագոր կամ անհամագոր) հարաբերություններ, որոնք քերականական բնույթի են:

ՊԱՐԲԵՐՈՒՅԹ - Երկբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ նախադասություն է, որի բաղադրիչ տարրերը գտնվում են բովանդակային, կառուցվածքային, հնչերանգային որոշակի համաչափության ու ներդաշնակության մեջ: Այն յուրահատուկ կառույց է, որ հատուկ է գրական խոսքին, մասնավորապես չափածոյին, ինչպես նաև հրապարակախոսությանն ու ճարտասանությանը. արտաբերվում է առանձնահատուկ շեշտադրությամբ, քնարական հուզականությամբ, հոետորական հանդիսավորությամբ, հնչերանգային հստակ անցումներով: Օրինակ՝

Դժվար կլինի իմ երթը հիմա, Դժվար ու դժնի, քան երբևիցե,
Եվ ճամփիս գուցե օձերի նման Ինձ արյունոտեն ժանիքները ձեր, //
Բայց պի՛նդ է ոգիս... Ու ո՛չ մի ժանիք Ինձ չի՛ բաժանի իմ անդուլ
դարից,

Ինչպես ո՛չ մի ուժ ինձ չի՛ բաժանի Իմ շոնդալից, պայծառ քնարից...
(ԵԶ):

Պարբերությո՞ւն արտաբերության հնչերանգով բաժանվում է երկու մա-
սի. առաջին մասն արտասանվում է աստիճանաբար բարձրացող տոնով,
իսկ երկրորդը՝ ցածրացող: Պարբերությո՞ւն բաղկացած է լինում երկու գու-
գաղի՞ր կամ հակաղի՞ր մասերից: Նրա երկու հիմնամասերը նույնպես կարող
են լինել երկբաղադրիչ կամ բազմաբաղադրիչ: Հիմնականը պարբերությո՞ւն
առաջին մասն է, որը կոչվում է *առաջնային մաս կամ հիմնամաս*: Այն մի
բարդ կառույց է՝ բարդություն բարդության մեջ, որի բաղադրիչները միմյանց
հարաբերակցում են համադաս կապակցությամբ: Պարբերությո՞ւն հիմնամասն
իր բովանդակությամբ ու ձևով սպասելի է դարձնում քերականական կա-
ռույցի շարունակությունը:

Պարբերությո՞ւն երկրորդ մասը, որ կոչվում է *երկրորդային մաս*, ամ-
բողջացնում է պարբերությո՞ւն և առաջինին միանում է շաղկապներով, շաղ-
կապական բառերով կամ շարահարությամբ: Օրինակ՝

Ու խորհեց խորին արարողը մեծ = Եվ անտեսորեն երկրում թա-
փառեց, = Տեսավ ցնծում է սիրտը հավքերի, = Խենթ համբուրում են գա-
զաններն իրար, //

Ու նրանց տվեց խայթը ցավերի՝ Ցրելով նրանց խինդը խելագար (ՀՇ)
– (շաղկապ):

Դու անհոգ նայեցիր իմ վրա = Ու անցար քո խաղով կանացի, // Ես
քեզնից դառնացած հեռացա, = Ես քեզնից հեռացա = ու լացի (ՎՏ) – (շա-
րահարություն):

**Հորիզոնական գծերը (=) սորոհում են հիմնամասերի անդամները, իսկ
ուղղահայաց գծերը (//)՝ պարբերությո՞ւն հիմնամասերը:**

Պարբերությո՞ւն երկու հիմնամասերի միջև լինում է համադասական
կամ ստորադասական հարաբերություն:

*ա) Համադասական պարբերությո՞ւն հիմնամասերը կապակցվում են
թե՛ միավորական, թե՛ ներհակական հարաբերությամբ, կապակցումը կա-
տարվում է ինչպես համադասական շաղկապներով, այնպես էլ շարա-
հարությամբ:*

Այսպես վաստակած նա ծովն է մտնում, = Եվ ծովն է վերջին կայանը
նրա, //

Բայց ծովի մեջ էլ հանգիստ չի գտնում, = Նավեր է պահում իր կրծքի
վրա (ՀՍ):

Թավալվում է նա մեզի մեջ, = Գալարվում է մեջքի վրա, //

Եվ լսում են ծառերը մերկ Խեղդված ու խուլ երգը նրա (ՀՍ):

բ) Ստորադասական պարբերության հիմնամասերի միջև կա ստորադասական հարաբերություն: Ստորադաս հիմնամասը կարող է նախորդել կամ հաջորդել գերադասին:

Եթե բախտն ու վայելքները քեզ ժպտան, = Օտար մարդիկ քեզ սիրաբար ողջուն տան, // Գուցե ես լամ բախտիդ համար, իմ անգի՛ն, = Սակայն դարձի՛ր, = վերադարձի՛ր դու նորից (ՎՏ):

... Բարձրանամ կապույտ գահը լեռների,

= Արևն իբրև թագ իմ գլխին առնեմ,

= Հագնեմ ծիրանին արշալույսների,

= Գարնան թագավոր ինձ թագադրեմ

= Եվ հրովարտակ արձակեմ մի խիստ, // Որ աղբյուրները հավերժ կարկաչեն,

= Որ ծաղկեն լեռներն իմ արևանիստ, = Որ ծով դաշտերը հավերժ կանաչեն,

= Որ գարունները գան ու չգնան... (ՀՇ):

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ - Կապակցված տեքստի բաղկացուցիչ մաս է (հատված), որը ներկայանում է մեկ կամ մի քանի նախադասություններով և բնորոշվում է բովանդակության միասնությամբ ու հարաբերական ավարտվածությամբ:

Պարբերությունը տեղակայվում է գրավոր տեքստի նոր տողերի միջև: Պարբերությունը խոսքաշարում հանդես է գալիս որպես մտքի արտահայտման ամբողջական ու ծավալուն միավոր, քան նախադասությունն է. այն շարահյուսական բարդ ամբողջություն է, որով բացահայտվում է տեքստի որևէ մանրաթեմա: *Պարբերության ներսում* բովանդակության միասնությունը դրսևորվում է շաղկապների, շաղկապական բառերի, առարկաների նույնությունն արտահայտող բառերի առկայությամբ, ինչպես նաև որոշ բառերի զեղչման և ստորոգյալների ժամանակային հարաբերակցության միջոցով: *Երբ պարբերությունների միջև նման կապը թուլանում է, այն նշում է պարբերության ավարտը և հաջորդի սկիզբը:*

Պարբերության բովանդակության համար վճռական դեր է ունենում առաջին նախադասությունը, որի բացահայտմանն են ծառայում հաջորդ նախադասությունները: Հմմտ.

Հայոց բանակի մեջ ուրախ էր մի մարդ, և դա Դավիթ Բեկն էր: Ինչպե՛ս նա չճանաչի հեծելագորն առաջնորդող սպիտակ ձիավորին: Քանի՛ անգամ է այդ ձիավորը, իր նժույգի ականջը մտած, փութանակի սուրացել թշնամիների վրա: Բեկը կանգնեց ձիու ասպանդակներին ու որքան ձայն ուներ՝ կանչեց.

- Միիթար սպարապետը եկա՛վ... (ՄԽ):

Պարբերության ծավալը հաճախ կախված է լինում հեղինակի անհատական ընկալումից և ոճական նկատառումներից: Հետևաբար պարբերությունները կարող են կազմված լինել նաև մեկական նախադասությունից: Հմմտ.

Հայոց ժողով գումարելուն մնացել էր մի շաբաթ միայն:

Հալիձորը պատրաստվում էր գահերեց գորավարի ընտրությանը (ՍԽ):

Ընդհանուր առմամբ՝ գեղարվեստական ցանկացած տեքստ կազմված է իրար հաջորդող և իրար լրացնող պարբերություններից:

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ – Տեղաշարժերի գործընթացը լեզվում ընթացող բառային կազմի փոփոխության ու համալրման դրսևորումներից է: Խոսքիմասային որոշակի արժեք ունեցող բառեր լեզվի տարժամանակյա կտրվածքում կարող են համատեղել նախկին և ձեռք բերած նոր խոսքի մասի հատկանիշները կամ էլ ձերբազատվելով նախնական բառիմաստից ու խոսքիմասային արժեքից՝ անցնել այլ խոսքի մասի՝ ձեռք բերելով վերջինիս բառաբերականական հատկանիշները: Այդ տեղաշարժերն ընթանում են խոսքիմասային համակարգի օղակների միջև և դիտվում են ***միջ-խոսքիմասային տեղաշարժեր***: Դրանք կարող են ընթանալ ինչպես նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերի միջև, այնպես էլ նյութական բովանդակությունից դեպի սպասարկու բառերը: Լեզուներում դիտարկվում է նաև ***ներխոսքիմասային տեղաշարժերի երևույթը***, երբ քերականական իմաստի տեղաշարժ է կատարվում միևնույն խոսքի մասի շրջանակներում, ինչպես, օրինակ, տեղաշարժեր բայի սեռային իմաստի ներսում (մի սեռից անցում մյուսին, կրկնասեռության առաջացում և այլն), գոյականի ներսում (հատուկ տեսակից անցում հասարակին և հակառակը), ածականի ներսում (անցում հարաբերական տեսակից որականին), մակբայի ներսում (մի տեսակից անցում ընդհանրական տեսակին) և այլն:

Պայմանավորված անցման լիակատար կամ մասնակի բնույթով՝ տարբերակում են *խոսքիմասային փոխանցում* և *խոսքիմասային տարարժեքություն* իրողությունները:

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ - Խոսքիմասային փոխանցման դեպքում բառերն անցնում են նոր իմաստի ու արժեքի: Այդ կարգի փոփոխությունները կրում են տարժամանակյա բնույթ և պայմանավորված են որոշակի գործոններով, ինչպես՝ *որոշային կիրառություն, բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնում, փոխանուն կիրառություն, ստուգաբանական իմաստի մթագնում, բառակապակցության կրճատում* և այլն:

Ա. Որոշային կիրառության հետևանքով որոշ գոյականներ լեզվի պատմական զարգացման ընթացքում ձեռք են բերել ածականի խոսքիմա-

սային արժեք: Այսպես, *սառն*, *պաղ*, *պարթն* բառերը գրաբարում գոյական են, արդի հայերենում՝ ածական:

Հմմտ. Եւ ձին, և *սառն* և կարկուտ և մրրիկք՝ թէ յայլմէ արարչէ էին ... (Եզն.) - գոյ.: Ննջեմ գազանների տաքուկ թների տակ, Նրանց *սառն* աչքերից *սառը* մի ջուր խմեմ (ՌԴ) - ած.:

Բ. *Բառաձևի բառական ու քերականական իմաստի մթագնման* հետևանքով նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերից առաջացել են ինչպես լիիմաստ, այնպես էլ սպասարկու բառեր:

Այսպես, գրաբարի գոյականի որոշ հոլովաձևեր արդի ըմբռնումով արդեն ածական, մակբայ, կապ կամ վերաբերականներ են, հմմտ. *խելօք* - *խելոք* (ած.), *ի բնէ* - *ի բնե*, *ի ծնէ* - *ի ծնե*, *ի սկզբանէ* - *ի սկզբանե*, *դուրս*, *ցմահ*, *ցարդ*, *ցայժմ*, *առայժմ*, *ցայսօր* (մկբ.), *առթիւ* - *առթիվ*, *շնորհիւ* - *շնորհիվ*, *նկատմամբ* (կապ) *իրօք* - *իրոք*, *իրաւ* - *իրավ*, *ի հարկէ* - *իհարկե* (վերաբերական):

Բայական համակարգի գրաբարյան որոշ թեք ձևեր այժմ անցել են այլ խոսքի մասերի շարքը, հմմտ. *դարձեալ* - *դարձյալ* (մկբ.), *հանգուցեալ* - *հանգուցյալ*, *տուեալ* - *տվյալ*, *անիծեալ* - *անիծյալ* (ած.), *հասցէ* - *հասցե* (գոյ.), *կեցցէ* - *կեցցե* (ձայնարկ.) և այլն:

Գ. *Փոխանուն կիրառության* ուղիով գրաբարի որոշ ածականներ ձեռք են բերել գոյականի խոսքիմասային արժեք, ինչպես՝ *աճական*, *թռչուն*, *զենուն*, *աշխարհագոր*, *բանակորիվ*, *լուսածագ*, *խեղկատակ* և այլն: Հմմտ. Ուր առնէր Գրիգոր զմկրտութիւնսն *աշխարհագոր* բազմութեան (ՆՀԲ) - գոյ.: Երիտասարդ և ալնոր, ով ընդունակ է զենք շարժել, ելան *աշխարհագոր* (ՆԶ) - գոյ.:

Դ. *Ստուգաբանական իմաստի մթագնման* հետևանքով հատկանշային որոշ բառեր (ածականներ) ձեռք են բերել առարկայի իմաստ և անցել գոյականի շարքը: Այսպես, գրաբարում *հրացան* «հուր սփռող», *օղաչու* «օդում ճախրող՝ թռչող» բառերն ածական են, արդի հայերենում՝ գոյական. *հրացան* «ձեռքի հրազեն», *օղաչու* «օդանավ վարող անձ»: Հմմտ. Արկանեն ի *հրացան* հնոց տանջանաց (ՆՀԲ) -ած.: Կախ տվավ սնին սև *հրացանը* սև օձի նման (ՀԹ) - գոյ.:

Ե. *Բառակապակցության կրճատման* հետևանքով կապակցության իմաստի դոմինանտը՝ ածականով արտահայտված որոշիչը, ներառում է գոյականի իմաստ. տեղի է ունենում ածական > գոյական խոսքիմասային փոխանցում: Հմմտ. *լուսամփոփ լամպ* > *լուսամփոփ*, *կործանիչ ինքնաթիռ* > *կործանիչ*, *համաճարակ հիվանդություն* > *համաճարակ*, *նտանավոր քերթվածք* > *նտանավոր*, *տնամերձ հողամաս* > *տնամերձ* և այլն:

Որոշ հարաբերական ածականներ այս ուղիով դարձյալ փոխանցվել են գոյականի, ինչպես՝ *ոսկեղեն*, *մասրենի*, *տանձենի*, *խնձորենի*, *բալենի* և այլն:

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ – Խոսքիմասային փոխանցումները կրում են տարժամանակյա բնույթ՝ անկախ այն բանից՝ դրանք ընթանում են լեզվի միևնույն, թե՞ տարբեր գոյավիճակներում: Այլ կերպ ասած՝ խոսքիմասային փոխանցումները՝ լեզվի միևնույն գոյավիճակում և նրանից դուրս միշտ կրում են տարժամանակյա բնույթ: Այդ իրողության բնորոշ գծերն են՝ *խոսքիմասային արժեքի երկփեղկում, երկփեղկված արժեքներից մեկի երկատում, երկփեղկված արժեքներից մեկի փոփոխություն, երկփեղկված արժեքներից մեկի կորուստ, խոսքիմասային արժեքի տեղաշարժ*:

Ա. Խոսքիմասային արժեքի երկփեղկում - Խոսքիմասային արժեքի երկփեղկումը ձևաբանական մասնակի տեղաշարժերի հետևանք է: Այսպես, գրաբարում *հետախոյզ, դասալիք, եղեռնագործ, լուսաւորիչ* բառերն ածական են, որոնք արդի հայերենում համատեղում են նաև գոյականի խոսքիմասային արժեք: Հմմտ. գրբ. *հետախոյզ*. «հետքերը զննող՝ փնտրող». Մեզ իբրու շանց *հետախուզից* քննելի է (ՆՀԲ) - ած.: Արդի հայերենում նաև գոյական «հետախուզության գնացող զինվորական, գործակալ». *Հետախույզ* աչքերը դժվարանում էին դիտելու, թե ով էր տիկնոջ խոսակիցը (Բ) - ած.: Կրակովն իր *հետախույզների* հետ մտավ ամեն ծակուծուկ՝ դիվերսանտին գտնելու հույսով (ՍԽ) - գոյ.:

Բ. Երկփեղկված արժեքներից մեկի երկատում – Ժամանակի ընթացքում բառայթի երկատված արժեքներից մեկը կարող է զանազան փոփոխություններ կրել, որը կարող է հանգեցնել նոր արժեքի ձևավորման: Այսպես, գրաբարում *անդորր* բառը համատեղում էր գոյական-ածական արժեքներ. հմմտ. 1. «անդորրություն, հանգստություն» (գոյ.). Յայսմ նեղութենէ գայ վաղնջուցն *անդորր* (ՆՀԲ): 2. «դյուր, հանգիստ, հանդարտ» (ած.). Յոյժ *անդորր* են ինձ պատուիրանք քո (ՆՀԲ):

Ժամանակի ընթացքում *անդորր* բառի հատկանշային իմաստի մեջ զարգացել է մակբայական նշանակություն՝ «հանգիստ կերպով, հանդարտորեն». արդի հայերենում այն համատեղում է գոյական-ածական-մակբայ խոսքիմասային իմաստներ: Հմմտ. ... Ու երկարի այն *անդորրը* շուքիդ նման (ՊՍ) - գոյ.: Եվ դողանջները ծորում քաղցրալուր, ողողում էին դաշտերը *անդորր* (ԱԲ) - ած.: Եվ քարավանը ... Դեպի երագուն և կապույտ հեռուն հոսում էր առաջ հանգիստ ու *անդորր* (ԱԲ) - մկբ.:

Գ. Երկփեղկված արժեքներից մեկի փոփոխություն - Գրաբարում *ծածուկ* բառն ուներ ածականի և գոյականի արժեքներ: Հմմտ. 1. «գաղտնի, թաքուն». Ի նմա որոգայթս իմն *ծածուկս* ընդ մեջ աստիճանացն (Խոր.) - ած.: 2. «գաղտնիք». Տրտմութիւն է *ի ծածուկս* նորա (Ագաթ.) - գոյ.: Արդի հայերենում այն ունի ածական-մակբայ արժեքներ: Հմմտ. 1. Բազենյանը ... կարծես ինչ-որ *ծածուկ* բան էր պատմում նրան (ՆԴ) - ած.: 2. մկբ. «գաղտնապես,

թաքուն կերպով»։ Հեռուներից մոտենալով գաղտագողի-*ծածուկ*-անտես՝ Խորշակը նույն, որ շատ շուտով պիտի տաներ միլիոն հայեր (ՊՄ)։

Դ. Երկփեղկված արժեքներից մեկի կորուստ - Այս իրողությունը պայմանավորված է բառիմաստի նեղացման գործոնով. գրաբարում *անապատ*, *ծիրանի*, *բազմական* բառերը հանդես էին գալիս ածականի և գոյականի խոսքիմասային երկատված արժեքներով։ Հմմտ. *անապատ* – 1. «ամայի, անշեն, անմարդաբնակ» (աձ.). Տանել զնոսա հեռի ի քաղաքէն յանկոխ և *յանապատ* տեղի (Փարպ.)։ 2. «անմարդաբնակ վայր՝ տեղ» (գոյ.). Եվ բարձեալ վաղվադակի գրաստուց՝ փոխէին յայլ տեղի *յանապատին* (Փարպ.)։ Արդի հայերենում այդ բառերը գոյական անուններ են։ Հմմտ. Նրա հետևում լոկ *անապատն* էր փոխված հոլանի՝ լույսերի ծոցում (ԱԻ)։

Ե. Խոսքիմասային արժեքի տեղաշարժ - Այս դեպքում բառը զրկվում է իր խոսքիմասային իմաստից ու արժեքից և ձեռք բերում ձևաբանական նոր նշանակություն՝ շարահյուսական մակարդակում կատարելով նոր արժեքին հատուկ պաշտոններ։ Իմաստաարժեքային այդ կարգի տեղաշարժերը խաբսխվում են մի շարք գործոնների վրա (տե՛ս **Խոսքիմասային փոխանցում**)։

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ - Խոսքիմասային փոխանցումների ընթացքում բառերը կարող են համատեղել նախկին և նոր խոսքիմասային արժեքի հատկանիշները։ Այդ դեպքում միևնույն բառույթը ձեռք է բերում բազմիմաստություն, խոսքիմասային նշանակությամբ՝ տարարժեքություն։ Այդպիսի միավորները կոչվում են *խոսքիմասային տարարժեք բառեր*, իսկ քերականական իրողությունը՝ *խոսքիմասային տարարժեքություն*։

Խոսքիմասային տարարժեք բառերը հավասարապես կարող են հանդես գալ մեկից ավելի ձևաբանական արժեքներով։ Հայերենում արմատական բառերի խոսքիմասային իմաստներն արտահայտության պլանում նշույթավորված չեն, ուստի դրանք, առանց ձևակազմական փոփոխությունների, շարահյուսական մակարդակում ստանում են տարբեր դերեր։ Խոսքիմասային տարարժեք բառերը կարելի է խմբավորել՝ ելնելով տվյալ բառույթի երկատված արժեքների գործառական հաճախականությունից։ Ըստ այդմ՝ արդի հայերենում կարելի է առանձնացնել այդ կարգի միավորների երկու խումբ՝ *խոսքիմասային երկարժեք և եռարժեք բառեր*։

1. *Խոսքիմասային երկարժեք բառերը* համատեղում են երկու տարբեր խոսքիմասային իմաստներ։ Այսպես, *գոյական* // *ածական* արժեքներ են համատեղում *այրի*, *աղքատ*, *գող*, *ծեր*, *կույր*, *մութ*, *դրացի*, *լեռնական*, *աթոռակից*, *բերդակալ*, *բժշկապետ*, *զինակիր*, *մեծամեծ* և այլ բառեր։ Հմմտ. *ծերունի* - 1. «ալևոր, տարիքով» (աձ.). Ներս մտավ Նազիաթ, որ միշտ այցի էր գալիս *ծերունի* բանաստեղծին (ԱԻ)։ 2. «ծեր՝ տարիքն առած մարդ» (գոյ.). «Կանգնեցե՛ք», - գոչեց վրձինը ձեռքին կախարդ *ծերունին* հուզված տարերքին (ՀԹ)։

Ածական // մակբայ արժեքներ են համատեղում *բարձր, զուր, լավ, ծանր, մեղմ, խաղաղ, անլռելի, անկասելի, բարձրաձայն, միահամուռ, սրտատրոփ* և այլ բառեր: Հմմտ. *մեղմ* - 1. «հանդարտ» (ած.). Նրա ժպիտը *մեղմ* էր ու դողդոջ, Ինչպես լուսնյակի հմայքը տիտուր (ՎՏ): 2. «ցածրաձայն, շշուկով» (մկբ.). Արձակ դաշտերի ամայության մեջ նա *մեղմ* շշնջաց (ՎՏ):

2. *Խոսքիմասային եռարժեք բառերը* երկփեղկված յուրաքանչյուր արժեք արտահայտում են առանձին կիրառությամբ: Այսպես, արդի հայերենում *ածական // գոյական // մակբայ* արժեքներ են համատեղում *խմաստուն, սուտ* և այլ բառեր: Հմմտ. *խմաստուն* - 1. «գիտուն, խելամիտ, ճարտար» (ած.). Ուզեցի սիրել շշուկն *խմաստուն* Արևանման, արնավառ խոսքի (ԵՉ): 2. «փիլիսոփա, գիտնական» (գոյ.). Գիտունների և *խմաստունների* հետ վեճի մտավ (ԱԲ): 3. «խմաստնապես» (մկբ.). Ես ասում եմ՝ *խմաստուն* վարվեց արքան (ՆԶ):

Մակբայ // ածական // կապ արժեքներ է համատեղում *մոտ* բառը: Հմմտ. 1. «մերձ, մոտիկ, մոտենալով» (մկբ.). Ծերունին դողդոջուն մատներով քաշեց հրացանի ձգանը, սակայն *մոտ* կրակեց (Մամուլ): 2. «մոտավոր, մոտիկ» (ած.). Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու *մոտ*՝ Եկել էին նրանք նորից ... (ԵՉ): 3. «առընթեր, կից» (կապ). Լիլիթը, աղբյուրի *մոտ* նստած, նայում էր դրախտի աստղազարդ երկնքին (ԱԲ):

Արդի հայերենում առանձնացվում է տարարժեք բառերի մեկ այլ շերտ, որ խոսքիմասային իմաստի ու արժեքի մասնակի տեղաշարժերի է ենթարկվել լեզվի զարգացման տարժամանակյա կտրվածքում՝ գրաբար-արդի հայերեն ժամանակահատվածում (տե՛ս **Խոսքիմասային փոխանցման աստիճանները** բառահոդվածը):

ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ - Ելակետային լեզվական միավորների կառուցվածքի ձևական փոփոխություններ են, որոնք առաջ են բերում լեզվական տարբերակներ և սերիչ կաղապարների նկատմամբ ցուցաբերում են հոմանշային հարաբերություն:

Լեզվական ի՛նչ կառույցներ են փոխակերպելի:

Ա. Նախադասությունների փոխակերպում. փոխակերպվում են՝

ա) Նախադասությունների ներգործաձև և կրավորաձև կառույցները – Այս կարգի փոխակերպումների ժամանակ ելակետային ներգործական կառույցի նախադասությունը վերածվում է կրավորական կառուցվածքի. Փոխակերպական կառույցում բայ-ստորոգյալը դառնում է կրավորական սեռի, իսկ ելակետային կառույցի ենթական դառնում է ներգործող անուղղակի խնդիր՝ համապատասխան կապերի հետ: Հմմտ. *Ֆիդայիներն ազատագրեցին իմ ծննդավայրը – Իմ ծննդավայրն ազատագրվեց ֆիդայիների ձեռքով* (կողմից):

բ) *Երկրորդական նախադասությունները* – Այս կարգի փոխակերպումը կոչվում է նաև բարդ ստորադասական նախադասության պարզեցում. բարդ նախադասության ստորադաս բաղադրիչի (նախադասության) փոխարինումն է ոչ ստորոգումային միավորով՝ բառակապակցությամբ.

Հոնուտա սարի գլխին ցոլում էին տխրատեսիլ աստղերը, *որոնք սառած արցունքների նման քարացել էին երկնքի կապույտ հայելու վրա* (ՄԽ): Հոնուտա սարի գլխին ցոլում էին *սառած արցունքների նման երկնքի կապույտ հայելու վրա քարացած* տխրատեսիլ աստղերը:

գ) *Ուղղակի և անուղղակի խոսքերը* – Ուղղակի խոսքը անուղղակի դարձնելիս շարահարական կապակցությունը վերածվում է շաղկապական կապակցության, և հեղինակի խոսքը, անկախ ուղղակի խոսքով կապակցության մեջ ունեցած դիրքից, ունենում է նախադաս շարահարություն: Հմմտ.

- *Դուք ոչ միայն սքանչելի երգիչ էք, այլև նուրբ երաժիշտ ու պայծառ հոգի*, - համերգից հետո Կոմիտասին մոտենալով՝ ասաց Փափագյանը (ԽԲ): Համերգից հետո Կոմիտասին մոտենալով՝ Փափագյանն ասաց, *որ նա ոչ միայն սքանչելի երգիչ է, այլև նուրբ երաժիշտ ու պայծառ հոգի*:

դ) *Դրական և ժխտական նախադասությունները* – Այս կարգի փոխակերպումների ժամանակ ժխտական նախադասություններում գործում է կրկնակի ժխտում: Հմմտ. *Մխիթարը պետք է զնա Հալիձոր – Մխիթարը չի կարող չզնալ Հալիձոր: Ես կարող եմ մասնակցել գիտաժողովին – Ես չեմ կարող չմասնակցել գիտաժողովին*:

ե) *Հրամայական և ըղձական նախադասությունները* – Այս կարգի փոխակերպումների ժամանակ հրամայական եղանակի բայերը վերածվում են ըղձական եղանակի: Հմմտ.

Գոհարը ցավով ասաց.

- *Զգուշացի՛ր, հավիտյան մի՛ փակիր այն ամրոցի դռները, որ դու ամենաթանկն ես համարում* (ՄԽ) - Գոհարը ցավով ասաց, *որ Մխիթարը զգուշանա, հավիտյան չփակի այն ամրոցի դռները, որ նա ամենաթանկն է համարում*:

զ) *Բացականչական, հարցական և պատմողական նախադասությունները* – Այս կարգի փոխակերպումները իրացվում են ուղղակի և անուղղակի խոսքերի ոլորտում: Եթե ուղղակի խոսքն ունի հրամայական, բացականչական կամ հարցական երանգ, ապա անուղղակի դարձնելիս փոխվում է տվյալ նախադասության հնչերանգը, և այն ստանում է պատմողական երանգ: Հմմտ.

- *Օ՛, որքա՛ն գեղեցիկ են ապարանջանները, և որքա՛ն մեծ խորհուրդ կա դրանց մեջ*, - հիացմունքով ասաց տիկինը (Ը) - Տիկինը հիացմունքով ասաց, *որ գեղեցիկ են ապարանջանները, և մեծ խորհուրդ կա նրանց մեջ*:

Մխիթարը, հայացքը ներքև ուղղած, հարցրեց.

- *Բնչո՞ւ եմ արժանացել քո շնորհին* (ՄԽ):

Մխիթարը, հայացքը ներքև ուղղած, հարցրեց, *թե ինչով է արժանացել նրա շնորհին:*

է) Կա շարահյուսական փոխակերպման մի տեսակ, որի դեպքում բայական կապակցությունը (նախադասությունը բայական լրացումներով հանդերձ) *առարկայանում է՝* վերածվելով հոմանիշ անվանական բառակապակցության. առաջանում է նախադասություն՝ անվանական անդամների խմբով: Հմմտ.

Մխիթարը վերադարձավ Հալիձոր – Մխիթարի վերադարձը Հալիձոր: Ինքնաթիռը թռչում է Մոսկվայի երկնականարով – Ինքնաթիռի թռիչքը Մոսկվայի երկնականարով:

Փոխակերպական կառույցներում ելակետային նախադասության բայ-ստորոգյալը վերածվում է բայանուն գոյականի. *վերադառնալ – վերադարձ, թռչում է – թռիչք* և այլն:

Բ. Փոխակերպում բառակապակցությունների և բաղադրությունների-

Բաղադրությունները (բարդ և ածանցավոր բառերը) միջուկային նախադասություններից սերած երկրորդական նախադասությունների, բառակապակցությունների և դերբայական դարձվածների հետագա փոխակերպման արդյունք են: Ըստ փոխակերպների ձևավորման ժամանակագրության՝ բարդությունները նախորդում են ածանցավոր բառերին. ածանցական կազմություններն առավել բարձր վերացարկվածության հետևանք:

Բաղադրությունները սերել են երկու կարգի կաղապարներով՝ բարդության և ածանցման: Իբրև փոխակերպման հետևանք՝ փոխակերպները վերացարկման տարբեր աստիճաններում են ձևավորվում: Առաջին աստիճանում միջուկային նախադասություններից սերում են բառակապակցությունները, երկրորդ աստիճանում՝ բառակապակցություններից բաղադրությունները: Բաղադրությունները, սակայն, սերման միևնույն աստիճանում չեն առաջացել. նախապես ձևավորվել են ստորադասական բարդությունները, այնուհետև ածանցավոր կազմությունները. ածանցներն առավել վերացարկված մտածողության հետևանք են, քան բարդության անվանական բաղադրիչները:

Բարդությունների բաղադրիչներն արտահայտում են ստորադասական հարաբերություններ՝ պահպանելով սերող կաղապարի բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները.

Այս մարդը *խնդիր է հարցում* (միջուկային նախադասություն): Այս մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից: → Այս մարդը, որ *խնդիր է հարուցում*, չի ընդունվում ունկնդիրների կողմից: → *Խնդիր հարուցող* մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից: → *Խնդրահարույց* մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից:

Մշուշը պատել է դիմացի լեռը: → Դիմացի լեռը պատվել է մշուշով (միջուկային նախադասություն): Դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է:

→ *Դիմացի լեռը, որ պատվել է մշուշով*, հորիզոնի վերջին կետն է: → *Մշուշով պատված* դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է: → *Մշուշապատ* դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է:

Այս մարդը խելքը կորցրել է (միջուկային նախադասություն): Այս մարդը չի գիտակցում իր արարքը: → *Այս մարդը, որ խելքը կորցրել է*, չի գիտակցում իր արարքը:

→ *Խելքը կորցրած* այս մարդը չի գիտակցում իր արարքը: → ***Խելակորույս*** այս մարդը չի գիտակցում իր արարքը:

Լիլիթը լուսավոր ժպիտ ունի (միջուկային նախադասություն): → *Լիլիթը* գայթակղում է բոլորին: → *Լիլիթը, որ լուսավոր ժպիտ ունի*, գայթակղում է բոլորին: → *Լուսավոր ժպիտ ունեցող* Լիլիթը գայթակղում է բոլորին: → *Լուսաժպիտ* Լիլիթը գայթակղում է բոլորին:

Փոխակերպման բառակապակցական աստիճանում արմատական բաղադրիչները երբեմն կարող են փոխարինվել հոմանիշ տարբերակներով: Հմմտ. *մազ-հեր* արմատական բաղադրիչների գործառական արժեքները.

Հայկը գանգուր մազեր ուներ (միջուկային նախադասություն): Հայկը հսկա էր: → *Հայկը, որ գանգուր մազեր ուներ*, հսկա էր: → *Գանգուր մազեր ունեցող* Հայկը հսկա էր: → ***Գանգրահեր*** Հայկը հսկա էր:

Ածանցավոր կազմությունները (բաղադրությունները) բաժանվում են երկու խմբի. մի դեպքում բառերը վերջածանցավոր կազմություններ են, երկրորդ դեպքում՝ նախածանցավոր:

Վերջածանցավոր կազմությունների ածանցները փոխարինում են *ունենալ* բայի ենթակայական կամ հարակատար դերբայներին՝ «մի բան ունեցող / ունեցած կամ չունեցող / չունեցած» նշանակություններով:

Դրանց սերող հիմքերը հիմնականում գոյական անուններ են.

Բնակարանը, *որ երկու հարկ ունի*, գտնվում է գլխավոր փողոցի վրա: → *Երկու հարկ ունեցող* բնակարանը գտնվում է գլխավոր փողոցի վրա: → *Երկհարկանի* բնակարանը գտնվում է գլխավոր փողոցի վրա:

Նախածանցավոր կազմություններն արտահայտում են «մի բան չունեցող, մի բանից զուրկ» իմաստներ՝ պայմանավորված նախածանցի բառակազմական նշանակությամբ: Տվյալ դեպքում, միջև ածանցավոր կազմության ձևավորումը, հատկանիշի բացակայությունը արտահայտվել է նյութական նշանակություն ունեցող բառերով: Ածանցի (ածանցավոր կազմության) ի հայտ գալը պայմանավորված է վերացարկվածության առավել բարձր աստիճանով: Հմմտ.

Այս մարդը տուն չունի (միջուկային նախադասություն): Նա մոլորված է: → *Այս մարդը, որ տուն չունի*, մոլորված է: → *Տուն չունեցող* մարդը մոլորված է: → ***Անտուն*** մարդը մոլորված է:

Նախադասություն → բառակապակցություն → բարդություն փոխա-
կերպման գործընթացում փոխակերպների իմաստային բեռնվածությունը
կրում է բայական բաղադրիչը, որ պարզ ստորոգյալից փոխակերպվում է
բառակապակցության դերբայի, իսկ բարդության մեջ՝ բայահիմքի՝ հանդես
գալով որպես դոմինանտ վերջնաբաղադրիչ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
Խաչատրյան Լ.Մ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:
Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.
Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
Лайонз Дж., Общее языкознание, М., 2005.
Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.
Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.
Широков О.С., Введение в языкознание, М., 1985.
Bernd Heine, Cognitive Foundations of Grammar, Oxford University Press,
1997.
Haspelmath Martin and Sims Andrea D., Understanding Morphology, 2nd edn.,
Hodder Education, an Hachette UK Company, 2010.

Ա) ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Ժամանակակից
հայոց լեզու, հ. 2, Ե., 1974:
Աբրահամյան Ս.Գ., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու
քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից
հայերենում, Ե., 1965:
Աբրահամյան Ս.Գ., Ժամանակակից հայերենի քերականություն,
1975, Ե.:
Աբրահամյան Ա.Ա., Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962:
Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հար-
ցեր, հ.հ. Ա- Գ. Ե., 1970 -1977:
Խաչատրյան Լ.Մ., Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ,
Ե., 1985:
Խաչատրյան Լ.Մ., Խոսքիմասային տարաբեկությունն արդի հայերե-
նի կայուն կապակցություններում, Ե., 1996:
Մարգարյան Ա.Ս., Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966:
Միրումյան Մ.Վ., Հայոց լեզու. Տեսական և գործնական դասընթաց
(Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), Ե., 2012:
Ջահուկյան Գ.Բ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե.,
1959:

Բ) ՇԱՐԱՀԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա. և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, գ. 3, Շարահյուսություն, Ե., 1976:

Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու. շարահյուսություն, Ե., 2004:

Առաքելյան Վ.Դ., Հայերենի շարահյուսություն, հ.հ. Ա-Բ, Ե., 1958, 1964:

Միրումյան Մ.Վ., Հայոց լեզու. Տեսական և գործնական դասընթաց (Շարահյուսություն), Ե., 2013:

Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982:

Սևակ Գ., Հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 1981:

Ջահուկյան Գ.Բ., Աղայան Է.Բ. և ուրիշներ, Հայոց լեզու, Ա մաս, Ա պրակ, Ե., 1980:

Քոսյան Վ.Ա., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., 1975:

6. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏ ԵՎ ՁԵՎ - Բառի քերականական ձևի մեջ պետք է տարբերել բառային և քերականական իմաստները: Բառային իմաստը տվյալ հնչյունախմբով մտածվող, ընկալվող գաղափարն է՝ առարկայի հատկության, քանակի, գործողության և այլնի մասին, որ հատուկ է տվյալ բառի տարբեր գործածություններին, բնորոշ է նրան և նրա մասնավոր իմաստն է: Ամեն մի բառ մյուսից իր բառային իմաստով է տարբերվում: Քերականական իմաստը բառային իմաստին հավելվող, բառային իմաստը մասնավորող, նրա վերաբերությունը նշող իմաստն է:

Այն իմաստները, որոնք կոնկրետացնում, մասնավորում են բառի (կամ արմատի) բառական իմաստները և ցույց են տալիս այդ իմաստների փոխադարձ հարաբերությունները խոսքի մեջ, կոչվում են քերականական իմաստներ:

Քերականական իմաստներն արտահայտվում են համապատասխան միջոցներով: Դրանք հատուկ են ոչ միայն առանձին բառերի կամ բառաձևերի (այդ թվում՝ բարդ և վերլուծական ձևերին), այլև (պայմանավորված լեզվի քերականական կառուցվածքով) նշանակալի չափով՝ բառակապակցություններին ու ամբողջական նախադասություններին:

Թեև քերականական իմաստները վերացարկված իմաստներ են, այնուամենայնիվ, դրանք դարձյալ բառի իմաստների սահմաններում են մնում: Յուրաքանչյուր քերականական իմաստ իր արտահայտման միջոցն ու եղանակն ունի, օրինակ, առարկայի հոգնակի թվի իմաստը քերականական իմաստ է, որ արտահայտվում է -եր, -ներ մասնիկներով, բայի ժխտական խոնարհման իմաստն արտահայտվում է չ մասնիկի միջոցով, հարկադրական եղանակի իմաստը՝ *պիտի* մասնիկի միջոցով և այլն:

Դիտարկենք հետևյալ նախադասության մեջ առկա քերականական իմաստները. «Իմ ընկերը Մոսկվայից ինձ ինքնաթիռով գրքեր ուղարկեց»:

Ենթակայի քերականական իմաստը արտահայտվել է ուղղական հոլովով (ընկերը), ստորոգյալի իմաստը՝ խոնարհված բայով (ուղարկեց), հատկացուցչի (պատկանելության) քերականական իմաստը՝ *իմ* բառաձևով (ես-իմ), որոշյալության իմաստը՝ *-ը* հոդով (ընկերը), անորոշ առման իմաստը՝ զրո ձևությամբ (գրքեր-), տեղի պարագայի իմաստը՝ բացառական հոլովով, *-ից* մասնիկով (Մոսկվայից), միջոցի անուղղակի խնդրի իմաստը՝ գործիական հոլովով, *-ով* մասնիկով (ինքնաթիռով), հանգման անուղղակի խնդրի իմաստը՝ *ինձ* բառաձևով, տրական հոլովով, ուղիղ խնդրի իմաստը՝ հայցական հոլովով (գրքեր), ժամանակի իմաստը (անցյալ)՝ բայական բառաձևով (ուղարկեց), բայական դեմքի և թվի իմաստները՝ զրո ձևությամբ (ուղարկեց-), եղանակի (սահմանականի) իմաստը՝ դարձյալ նույն բայաձևով և այլն:

Կարող ենք ասել, որ քերականական իմաստը լեզվական իմաստների մեջ այն իմաստն է, որ հատուկ է բառերի որոշ խմբի, արտահայտում է բառային իմաստների վերաբերություն կամ հարաբերություն և դրսևորվում է համապատասխան միջոցներով: Քերականական իմաստներ են հոլովական, ժամանակի, եղանակի, դեմքի, թվի իմաստները և այլն: Քերականական ձևերի հետ կապված պետք է իմանանք նաև, որ միևնույն քերականական ձևը կարող է միաժամանակ մեկից ավելի քերականական իմաստներ արտահայտել, օրինակ՝ գիրք - եզակի թիվ, ուղղական կամ հայցական հոլով: Մեկ այլ դեպքում այն կարող է ներծույլ ձևով բազմիմաստություն արտահայտել, ինչպես՝ *զնամ* բառաձևի -մ մասնիկն արտահայտում է դեմքի, թվի, եղանակի, ժամանակի իմաստներ և այլն:

Քերականական իմաստը և ձևը միմյանցից անբաժան են. ամեն մի ձև ունի իրեն հատուկ քերականական իմաստ, և ամեն մի քերականական իմաստ արտահայտվում է որոշակի քերականական ձևով:

Քերականական իմաստներն ունեն իրենց համապատասխան արտահայտությունը, այսինքն՝ լեզվի մեջ դրսևորվում են համապատասխան միջոցներով և եղանակներով: Միևնույն լեզվում քերականական տարբեր իմաստների համար կարող են լինել տարբեր քերականական միջոցներ, իսկ տարբեր լեզուներում դրանք, բնականաբար, տարբեր են, սակայն կարելի է այդ միջոցները խմբավորել և ներկայացնել որոշակի խմբերով, թեև հնարավոր չէ սպառնալ ձևով ներկայացնել քերականական արտահայտման բոլոր միջոցները: Լեզուներում տարածված քերականական իմաստների արտահայտման միջոցներն են.

ՄԱՍՆԻԿԱՎՈՐՈՒՄ - Այն իրողությունն է, երբ որպես քերականական այս կամ այն իմաստի արտահայտման միջոց բառի հիմքին սկզբից կամ վերջից ավելանում են համապատասխան երկրորդական քերականական մասնիկներ՝ նախամասնիկներ և վերջամասնիկներ, որոշ լեզուներում նման մասնիկներ ավելանում են արմատի կամ հիմքի ներսում (միջամասնիկ կամ ներմասնիկ):

Նախամասնիկները, ավելանալով արմատի կամ հիմքի սկզբից, նրան հաղորդում են այս կամ այն քերականական նշանակությունը: Ռուսերենում, օրինակ, նախամասնիկներն արտահայտում են բայի կատարյալ կերպի քերականական իմաստ, ինչպես՝ *сделать* (և *делать*), *написать* (և *писать*), *прочитать* (և *читать*) և այլն: Գրաբարում է, է նախահավելված աճականներն արտահայտում են բայի անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքի քերականական իմաստ, հմմտ. տես և ետես, ած և էած և այլն:

Վերջամասնիկներն ավելանում են արմատի կամ հիմքի վրա՝ վերջից, և արտահայտում են զանազան քերականական իմաստներ: Այդպիսի դեր ունեն հոլովման ցուցիչները՝ հոլովիչները (քաղաք-ի, քաղաք-ից, քաղաք-ով,

քաղաք-ում), խոնարհման վերջավորությունները (գրեց-ի, գրեց-իր, գրեց-ինք, գրեց-իք, գրեց-ին), դերբայակազմիչ մասնիկները (գր-ել, գր-ում, գր-ել-իս, գր-ել-ու, գր-ած, գր-ող), հոգնակի թվի մասնիկները (ծառ-եր, քաղաք-ներ, սիրտ-ք, նետ-ք), հոդերը (գիրք-ս, գիրք-դ) և այլն: Միջամասնիկները քերականական իմաստներ արտահայտում են՝ տեղակայվելով արմատի կամ հիմքի մեջ: Օրինակ, ներկա ժամանակի բայաձևերը լատիներենում և հունարենում կազմվում են միջածանցների միջոցով, լատիներենում՝ -n-, ինչպես՝ vinc-o (հաղթում եմ), find-o (ջարդում եմ), հմմտ. անցյալի ձևերը՝ vic-i (հաղթեցի), fid-i (ջարդեցի), հունարենում՝ -m-, ինչպես՝ lamb-an-o (վերցնում եմ) և e-lab-on (վերցրի), հմմտ. նաև անգլերեն՝ sta-n-d (կանգնել) և stood (կանգնեց) և այլն:

Լեզուներում միջամասնիկները քերականական արժեքով քիչ են հանդիպում. դրանք ավելի շուտ ունեն բառակազմական արժեք:

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ - Որպես քերականական իմաստի արտահայտման միջոց՝ ընդհանրապես տարածված է լեզուներում: Բառերի և արմատների կրկնությունը ծառայում է որպես բառակազմական միջոց, որ միաժամանակ արտահայտում է բառային իմաստների նրբությունները, օրինակ, քաշքշել, ծամծմել, վազվզել արմատակրկնություններն արտահայտում են նաև բազմապատկության գաղափար:

Կրկնությամբ կարող են արտահայտվել նաև քերականական իմաստներ, շատ հաճախ՝ հոգնակի թվի իմաստ, ինչպես, հայերեն՝ գունդ (ջոկատ) և գունդ-գունդ (ջոկատներ, զորախմբեր), փունջ և փունջ-փունջ, մարդ և մարդ-մուրդ, աման և աման-չաման և այլն, ռուս. тары-бары (դատարկություններ), հմմտ. նաև թյուրքական լեզուներում, ինչպես աղբբեջաներեն՝ mal-mul, xurda-murda, xara-xura, ուզբեկերեն՝ at-mat (at- ձի), baran-maran և այլն: Կրկնությունը՝ որպես թվակազմության միջոց, մեծ տարածում ունի ինդոնեզիական, ավստրոնեզիական լեզուներում, ինչպես նաև չինարենում, ճապոներենում, կորեերենում և այլն: Այսպես, ինդոնեզիական լեզվում orang (մարդ) և orang – orang (մարդիկ), kuda (ձի) և kuda - kuda (ձիեր), բուշմենների լեզվում՝ ka (ձեռք) և ka-ka (ձեռքեր), tu (բերան) և tu-tu (բերաններ), չինարենում՝ жень (մարդ) և жень - жень (մարդիկ), син (աստղ) և син - син (աստղեր) և այլն:

Բայափիմքի կրկնությամբ կարող է արտահայտվել անցյալ ժամանակի քերականական իմաստ, հմմտ. սանսկրիտ dadarsha (տեսա), լատ. tetigi (շափեցի), հուն. leloipa (թողեցի), գրբ. առնել > արար-ի (կատարեցի, ստեղծեցի) և այլն:

ՆԵՐՔԻՆ ԹԵՔՈՒՄ - Հնչյունական այդ փոփոխությունը շեշտի հետ կապ չունի և կատարվում է քերականական այս կամ այն իմաստը դրսևո-

րելու նպատակով: Բառի քերականական ձևը ենթարկվում է հնչյունական հերթագայության: Մա տարածված էր հին հայերենում, օր. ատամն – ատաման, ձուկն – ձկան, վագր – վագեր, արյուն – արեան: Մա հնչյունական հերթագայություն է, այս երևույթը դրսևորվում է նաև ժամանակակից հայերենում. որոշ գոյականների սեռական և տրական հոլովները ձևավորվում են հնչյունական հերթագայությամբ, օրինակ, տուն – տան, ուրախություն – ուրախության և այլն:

Ռուսերենում քերականական իմաստների դրսևորմանն է ծառայում ձայնավորների ձայնդարձն ու բաղաձայնների հերթագայությունը: Որոշ գոյականների հոլովաձևերում գործում է *ь*, *е* ձայնավորների և զրո հնչյունի ձայնդարձը, ինչպես՝ сон - сна, день - дня, сестра - сестер, земля - земель, носить - ношу, пус- кать - пушу, шутить - шучу և այլն: Ռուսերենում այն հազվադեպ ծառայում է իբրև կատարյալ և անկատար կերպերի տարբերական միջոց, ինչպես՝ наладить - налаживать (д-ж), упросить - упрашивать (с-ш), пересмотрит - пересматривает, заточит - затачивает (о-а): Ձայնդարձը երբեմն էլ կարող է արտահայտել հոգնակի թվի իմաստ, հմմտ. akno (պատուհան) – o'kna (պատուհաններ), selo (գյուղ) և s'o'la (գյուղեր) և այլն:

Ներքին թեքումը մասամբ գործում է նաև անգլերենում գոյականի հոգնակի թվի և բայի անցյալ ժամանակի քերականական իմաստներ արտահայտելու համար, ինչպես՝ foot (ոտք) և feet (ոտքեր), goose (սագ) և geese (սագեր), man (մարդ) և men (մարդիկ), mouse (մուկ) – mice (մկներ), write (գրել. գրում եմ) և wrote (գրեցի), meet (հանդիպել. հանդիպում եմ) և met (հանդիպեցի), win (հաղթել. հաղթում եմ) և won (հաղթեցի), come (գալ) և came (եկել), find (հայտնաբերել. հայտնաբերում եմ) և found (հայտնաբերեցի) և այլն:

Ներքին թեքումը՝ որպես քերականական իմաստների արտահայտման միջոց, մեծ դեր է խաղում սեմական լեզուներում: Օրինակ, հին հրեերենում և արաբերենում արմատները սովորաբար բաղկացած են միայն բաղաձայններից, որոնք անկախ գործածություն չունեն. քերականական իմաստներ արտահայտելու համար դրանք «համալրվում են» որոշակի ձայնավորներով, որոնց ներքին փոփոխություններով էլ պայմանավորվում է այս կամ այն քերականական իմաստը: Այսպես, հին հրեերենում GNB բաղաձայնական արմատն ունի «գողություն» վերացական նշանակություն. զանազան ձայնավորներով կազմվում են՝ GNoB (գողանալ), GaNaB (գողացավ), GoNýB (գողացող), GaNyB (գողացված) և այլն: Արաբերեն KTB նշանակում է «գրել» մինչդեռ՝ KaTiB (գրող), KiTaB (գիրք), KuTuB (գրքեր), aKTuB (գրում էի), KaTaBa (գրեց), maKTuBu (գրում էինք), uKTuB (գրիք) և այլն:

Այդպիսի երևույթ կարելի է ցույց տալ նաև գերմանական լեզուներում: Այսպես, բաղաձայնական արմատներ են՝ անգլերենում SNG, գերմաներենում՝ ZNG, որոնք ներքին թեքման միջոցով արտահայտում են տարբեր քե-

քականական իմաստներ. հմմտ. անորոշ դերբայ (երգել)՝ անգլ. SiNG գերմ. ZiNGen, անցյալը (երգեց)՝ անգլ. SaNG, գերմ. ZaNG, կրավորական սեռի դերբայ (երգված)՝ անգլ. SuNG, գերմ. geZuNGen, բայանուն (երգ)՝ անգլ. SoNG, գերմ. geZaNG և այլն:

ՄՊԱՍԱՐԿՈՒ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ - Լեզուներում քերականական իմաստների արտահայտման տարածված միջոցներից են սպասարկու բառերը՝ նախդիրները, նախադրությունները, կապերը, շաղկապները, հոդերը և այլն: Դրանք հատուկ են հիմնականում ռոմանական և գերմանական լեզուներին:

Հոդերը, օրինակ, կատարում են քերականական զանազան գործառնություններ. ա) դրվելով ոչ անուն խոսքի մասերի վրա՝ նրանց վերածում են գոյականի, հմմտ. գերմ. schreiben – գրել և das Schreiben – նամակ, բ) արտահայտում են որոշյալ-անորոշ կարգի իմաստներ, հմմտ. անգլ. the (որոշյալ) – a (անորոշ), գերմ. der, die, das (որոշյալ) – ein, eine (անորոշ), գ) տարբերակում են բառի անվանական սեռը. գերմ. der – արական, die – իգական, das – չեզոք, դ) տարբերակում են թվի քերականական կարգը, հմմտ. գերմ. der Arbeiter – բանվոր, die Arbeiter – բանվորներ և այլն. to մասնիկը, դրվելով գոյականի վրա, նրան վերագրում է բայի խոսքիմասային արժեք. հմմտ. անգլ. work – աշխատանք և to work – աշխատել:

Միևնույն նախդիրը տարբեր հոլովաձևերի հետ կարող է քերականական տարբեր իմաստներ արտահայտել: Այսպես, գրաբարյան *ընդ* նախդիրը գոյականի տարբեր հոլովաձևերի հաղորդում է տարբեր քերականական իմաստներ. սեռական հոլովի հետ արտահայտում է «դիմաց», «փոխարեն» իմաստներ՝ *ընդ բարույ* (բարու փոխարեն), տրական հոլովի հետ՝ միասնության իմաստ՝ *խօսէր ընդ նմա* (խոսում էր նրա հետ), հայցականի հետ՝ տեղի իմաստ՝ *խաղայ ընդ արևմուտս* (շարժվում է դեպի արևմուտք), բացառական հոլովի հետ՝ պատճառի իմաստ՝ *ընդ երկհւղէն* (վախի պատճառով) և այլն:

Երբեմն միևնույն քերականական իմաստը կարող է արտահայտվել ինչպես մասնիկավորմամբ, այնպես էլ սպասարկու բառերի միջոցով: Հմմտ. գրաբարում՝ *գրեց-ից* բայաձևը և նրան համարժեք աշխարհագրարյան կազմությունները 1. *գրելու եմ* (սահմանական եղանակ), 2. *պիտի (պետք է) գրեմ* (հարկադրական եղանակ), 3. *կգրեմ* (ենթադրական եղանակ):

Լեզվի քերականական կառուցվածքում սպասարկու բառերն ըստ իրենց կատարած դերի բաժանվում են երկու մեծ խմբի. բառեր, որոնք արտահայտում են առանձին բառերի քերականական նշանակություններ (հոդերը, օժանդակ բայերը, համեմատության աստիճան կազմող բառ-մասնիկները) և բառեր, որոնք արտահայտում են նախադասությունների և բա-

ռակապակցությունների զանազան շարահյուսական հարաբերություններ (շաղկապները, շաղկապական բառերը):

ՏԱՐԱՀԻՄՔՈՒԹՅՈՒՆ - Սա բառի քերականական իմաստների դրսևորման միջոցներից մեկն է, երբ միևնույն բառույթի տարբեր քերականական իմաստներն արտահայտվում են տարբեր բառերի կամ տարբեր հիմքերի միջոցով: Այս դեպքում, չնայած արմատների կամ հիմքերի փոփոխությանը, բառական նշանակությունը չի փոխվում. «բառերի տարբերությունը» ծառայում է տուսկ որպես քերականական միջոց՝ տարբերակելու համար բառի քերականական նշանակությունները:

Հնդեվրոպական բոլոր լեզուներում անձնական դերանվան հոլովման համակարգում գործածվում են տարահիմք ձևեր, որ իր հերթին համարվում է այդ լեզուների ցեղակցության պայմաններից մեկը, ինչպես՝ ես-իմ, ռուս. я - меня, գերմ. ich- mich, անգլ. I - me, ֆրանս. je - moi, սանսկր. agham - mam, լատ. ego - mei և այլն:

Որոշ բայերի ներկա և անցյալ ժամանակների քերականական իմաստների տարբերակումը կատարվում է տարահիմքությամբ. գրբ. ըմպ-եմ և արբ-ի, երթ-ամ և չոգ-այ, ռուս. ид-у և же-л ձևերը տարբերվում են ոչ միայն մասնիկներով (-եմ և -ի, -ամ և -այ, -у մասնիկ և - л ածանց), այլև հիմքերով: Գերմաներենում sein օժանդակ բայի ներկան է bin (ist, sind), իսկ անցյալը՝ war, անգլերենում to be բայի ներկան է am (is, are), անցյալը՝ was և այլն: Հետևաբար, ես և իմ, ըմպ-եմ և արբ-ի, ид-у և (я) же-л, bin և war, am և was ձևերի տարբերությունը քերականական է: Պարսկերենում didan (տեսնել) բայի ներկան կազմվում է binesh (տեսողություն) բառի հիմքից՝ bin. հմմտ. mi-bin-am (տեսնում եմ): Xastan (ցանկանալ) բառը հանդես է գալիս սպասարկու դերով՝ արտահայտելով ապառնի ժամանակի իմաստ. այդ դեպքում գործածվում է այլ հիմք՝ xah, հմմտ. xaham nevesht (գրելու եմ) և այլն: Գրաբար ակն - աչք, ռուսերեն человек - люди, ребенок - дети, գերմաներեն Mensch (մարդ) - Leute (մարդիկ) գույգերում առկա բառական տարբերությունն արտահայտում է եզակի և հոգնակի թվի քերականական իմաստ: Հետևաբար երկու տարբեր բառերի (արմատների) միասնությունն արտահայտում է քերականական նշանակություն, և այդ բառագույգերը կարելի է անվանել բառաձևերի գույգեր. իմ-ինձ բառաձևերը ես դերանվան հոլովական ձևեր են, bin և war բառաձևերը sein բայի ժամանակային ձևեր են, իսկ ակն - աչք, человек - люди բառաձևերը՝ միևնույն բառի թվի արտահայտման ձևեր և այլն:

Հնդեվրոպական լեզուներում տարահիմքությունը կարևոր դեր ունի ածականի համեմատության աստիճանների և դասական թվականների իմաստների արտահայտման համար: Հմմտ. ածականի համեմատության աստիճանների դրսևորումը տարբեր լեզուներում. ռուսերեն՝ хороший - лучший - превосходный, լատիներեն՝ bonus (լավ) - melior - optimus, malus

(վատ) – *pejor – pessimus, magnus* (մեծ) – *major – maximus*, գերմաներեն՝ *gut* (լավ) – *besser – am besten*, անգլերեն՝ *good* (լավ) – *better – best* և այլն: Հմմտ. դասական թվականի իմաստի դրսևորումը տարբեր լեզուներում. հայերեն՝ մի – առաջին՝ առաջնորդ կամ առաջներորդ (գրք.), մեկ – առաջին, ռուսերեն՝ *один – первый, два – второй*, անգլերեն՝ *one – first, two – second*, լատիներեն՝ *uno – prima, duo – altera, segunda* և այլն:

ԲԱՌԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ – Քերականական իմաստները կարող են արտահայտվել նաև բառերի դասավորությամբ կամ շարադասության միջոցով: Ճիշտ է, տարբեր լեզուներում բառերի դասավորությունը քերականական իմաստների արտահայտման հարցում միատեսակ դեր չունի: Այսպես, լատիներենում բառերի դասավորության կարգը թեև կայուն է, սակայն բառերի շարադասությունը փոխելով՝ չեն փոխվում նրանց արտահայտած քերականական իմաստները: Հմմտ. *Pater amat filium* (Հայրը սիրում է որդուն:) և *Filium amat pater*. ամեն դեպքում ենթական (*pater*) մնում է ենթակա, խնդիրը (*filium*)՝ խնդիր: Սակայն կան լեզուներ, որոնցում եթե փոխենք նախադասության անդամների դասավորությունը, կփոխվեն նաև նրանց քերականական իմաստները (պաշտոնները): Շարադասությունը քերականական դեր ունի հատկապես այն լեզուներում, որոնց շատ բնորոշ է բառերի թեքումը: Այդ լեզուներում բառերի տարբեր դասավորությամբ քերականական տարբեր իմաստներ են արտահայտվում:

Այսպես, հին հրեերենում բառերի դասավորության կարգի փոփոխությունն առաջ է բերում քերականական իմաստների փոփոխություն, հմմտ. *beth lehem* (հացի տուն) և *lehem beth* (հացը տան): Անգլերենում նախադասությունն ունի բառերի կայուն շարադասություն. առաջին տեղում ենթական է, երկրորդում՝ ստորոգյալ, երրորդում՝ խնդիրը և այլն: Հմմտ. «*The lecturer greeted the students*» նախադասության անդամների շարահյուսական պաշտոնները (*lecturer* – ենթակա, *greeted* – ստորոգյալ, *students* – խնդիր): Եթե փոխենք ենթակայի և խնդրի դասավորության կարգը՝ *The students greeted the lecturer*. այդ դեպքում կփոխվեն նաև նրանց շարահյուսական պաշտոնները, այսինքն՝ կփոխվեն նաև բառերի արտահայտած քերականական իմաստները, հմմտ. *students* – ենթակա, *lecturer* – խնդիր և այլն: Դա նշանակում է, որ ենթակայի և խնդրի քերականական իմաստներն արտահայտվում են առաջին հերթին բառերի գրաված դիրքով. վերջինս դառնում է քերականական իմաստների արտահայտման միջոց՝ շատ հաճախ մասնիկավորման և սպասարկու բառերի հետ միասին (հմմտ. տվյալ դեպքում որոշյալ առման հոդը՝ *the*) :

Այս երևույթը գործում է արևմտահայերենում, որտեղ չկա ուղղական և հայցական հոլովների տարբերակում, հմմտ. «Պետրոս կ'սիրե Կիրակոս» և «Կիրակոս կ'սիրե Պետրոս»: Արևելահայերենում և ռուսերենում, սակայն,

այս իրողությունը սահմանափակ դրսևորումներ ունի, հմմտ. «Աթոռը քերծեց սեղանը» և «Սեղանը քերծեց աթոռը», стул царапает стол и стол царапает стул և այլն:

Բառերի դասավորության կարգի փոփոխությունը կարող է առաջ բերել նախադասության քերականական իմաստի (հաստատականության, հարցականության և այլնի) փոփոխություն: Հմմտ. անգլերեն՝ She is at home (հաստատական) և Is she at home? (հարցական) և այլն:

Այլ հանգամանքներում բառերի դասավորության կարգի փոփոխությունը (շրջուն շարադասությունը) ունի ավելի շուտ ոճական, քան քերականական արժեք:

ՇԵՇՏ ԵՎ ՀԱՉԵՐԱՆԳ - Շեշտի դիրքի փոփոխության հետևանքով կարող են տարբեր քերականական իմաստներ արտահայտվել: Այդ դեպքում շեշտը դառնում է քերականական իմաստի ձևավորման միջոց: Այսպես, ուսերենում, որին հատուկ է շեշտի անկայուն դիրքը, շեշտի դիրքի փոփոխությունը կապված է բառաձևերի քերականական իմաստների արտահայտման հետ. սակայն դա մեծ մասամբ դառնում է քերականական իմաստների արտահայտման լրացուցիչ միջոցներից մեկը: Մի շարք գոյականների հոգնակի թվի և որոշ հոլովաձևերի կազմավորման ժամանակ շեշտի դիրքի փոփոխությունը դառնում է տվյալ քերականական իմաստների արտահայտման հիմնական միջոց, ինչպես՝ ме́ста – места́, го́рода – города́, до́ма – дома́, о́кна – окна́, ру́ки – руки́ և այլն: Ռուսերենում շեշտի տեղափոխությունը կարող է բայական բառային կերպային տարբերակում կատարել, ինչպես՝ насы́пать – насыпа́ть, обре́зать – обреза́ть և այլն:

Քերականական իմաստների արտահայտման նյութական միջոցներից մեկն է *հնչերանգը*: Հարավարևելյան Ասիայի որոշ լեզուներում (վիետնամերեն, չինարեն և այլն), Այլասկայի հնդկացիական որոշ ցեղերի լեզուներում գոյություն ունի ոչ միայն նախադասության հնչերանգ, այլև բառի հնչերանգ, որ ծառայում է տարբեր նշանակությունների, մասնավորապես քերականական իմաստների տարբերակմանը: Հնդեվրոպական լեզուներում հնչերանգը վճռական նշանակություն չունի, սակայն կարող է նպաստել նախադասության կամ նրա բաղադրիչների հաղորդակցական իմաստների տարբերակմանը: Հմմտ. 1. Երկիր մոլորակը գնդաձև է: 2. Երկիր մոլորակը գնդաձև՝ է: 3. Երկիր մոլորակը գնդաձև՝ է: Ունենք երեք նախադասություն, որոնք կազմված են նույն բառերով և ունեն բառական նույն նշանակությունը, սակայն դրանցից յուրաքանչյուրը տարբերվում է մյուսից իր քերականական իմաստով. առաջինը պատմողական նախադասություն է, երկրորդը՝ բացականչական, երրորդը՝ հարցական: Դժվար չէ նկատել, որ այդ երեք նշանակությունները արտահայտվում են երեք տարբեր հնչերանգների միջոցով:

Այսպիսով, քերականական նշանակությունների արտահայտման նյութական միջոցների շարքին են դասվում մասնիկավորումը, ներքին թեքումը, բառերի շարադասությունը, շեշտը և հնչերանգը, սպասարկու բառերը, տարահիմքությունը և այլն:

Դիտարկված քերականական միջոցները ցույց են տալիս, որ դրանք միմյանցից բավական տարբեր են և արտահայտում են տարատեսակ քերականական նշանակություններ: Ընդ որում, քերականական նշանակությունները ինքնակա գոյություն չունեն. նրանք հանդես են գալիս որպես քերականական ձևերի բաղադրիչներ մի դեպքում՝ բառաձևերի և բառերի կազմավորման ժամանակ, մյուս դեպքում՝ բառակապակցությունների և նախադասությունների ձևավորման ընթացքում, երրորդ դեպքում՝ այս կամ այն խոսքի մասին հատուկ քերականական կարգերի արտահայտման ժամանակ:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ - Զանազան քերականական հարաբերություններ արտահայտելու համար լեզվի բառերը խոսքի մեջ կրում են տարաբնույթ փոփոխություններ՝ վերածվելով բառաձևերի կամ քերականական ձևերի:

Բառաձևերը բառաքերականական իմաստի ու քերականական ձևի միասնություն են կազմում (Տե՛ս *Բառաձև* բառահոդվածը):

Յուրաքանչյուր բառաձև արտահայտում է որոշակի քերականական իմաստ, իր հերթին յուրաքանչյուր քերականական իմաստ արտահայտվում է որոշակի ձևով: Ըստ այդմ, քերականորեն հարաբերակից իմաստների ու նրանց արտահայտման միջոցների ամբողջությունը կոչվում է *քերականական կարգ*: Քերականական կարգերն արտացոլում են լեզվի քերականական կառուցվածքի առավել ընդհանուր ու էական հատկանիշները:

Տարբերակվում են կերպի, սեռի, ժամանակի, հոլովի, թվի, դեմքի և այլ բնույթի քերականական կարգեր:

Կարգայնացնող հատկանիշ - Քերականական կարգի ձևավորման գործում որոշիչ դեր է կատարում *կարգայնացնող հատկանիշը*: Այսպես՝ ժամանակի, դեմքի, բայասեռի քերականական կարգերի կարգայնացնող հատկանիշն այն ընդհանրացնող նշանակությունն է, որ միևնույն կարգի մեջ միավորում է *ժամանակային տարբեր հատվածներ* կամ *դեմքի տարբեր նշանակություններ* և *բայասեռի տարբեր իմաստներ*: Այսպես, ժամանակի քերականական կարգի մեջ մտնում են միևնույն ընդհանրական նշանակության տարբեր հատվածներ (ներկա, անցյալ և ապառնի), որոնք կարգայնանում են ընդհանրական (ժամանակային) նշանակությամբ:

Ընդհանրապես, քերականական կարգի մեջ առաջին պլան է մղվում նրա նշանակությունը. միևնույն ժամանակ քերականական կարգի անհրաժեշտ հատկանիշ է դիտվում նաև նշանակության և նրա արտահայտման

միասնությունը քերականական ձևերի համակարգում, որպես երկկողմանի լեզվական միավոր:

Հակադրական հարաբերություններ - Միևնույն քերականական կարգի հարաբերակից քերականական իմաստները միմյանց նկատմամբ գտնվում են *հակադրական հարաբերությունների մեջ* (հակադրություն ըստ քերականական իմաստի և ըստ արտահայտության ձևի):

Այսպես, բայի ներկա, անցյալ և ապառնի ժամանակներն իրենց ձևավորման միջոցներով կազմում են մեկ կարգ՝ ժամանակի քերականական կարգը, 1-ին, 2-րդ և 3-րդ դեմքերը միասին կազմում են դեմքի քերականական կարգը, եղանակների իմաստներն իրենց արտահայտման միջոցներով կազմում են եղանակի քերականական կարգը և այլն: Ամեն մի քերականական կարգ առնվազն երկու ձևաիմաստային (կարգային) անդամներից է բաղադրվում:

Միևնույն քերականական կարգը տարբեր լեզուներում տարբեր դրսևորումներ ունի, որ պայմանավորված է տվյալ քերականական կարգի մեջ մտնող կարգային անդամների քանակով:

Այսպես, լեզուներում անվանական սեռի քերականական կարգն ունի եռաձև համակարգ՝ արական, իգական և չեզոք, իսկ կերպի քերականական կարգը՝ երկանդամ համակարգ՝ կատարյալի և անկատարի կերպ, նվազագույն կարգային անդամներ ունի թվի քերականական կարգը. այն ներկայանում է երկանդամ համակարգով՝ եզակի և հոգնակի թվերով: Հոլովի քերականական կարգը անգլերենում այն ունի 2 կարգային անդամ, գերմաներենում՝ 4, լատիներենում՝ 5, հայերենում՝ 7 և այլն: Թվի քերականական կարգը հին հունարենում ունի 3 կարգային անդամ, հին հայերենում, արդի հայերենում, ռուսերենում և այլ լեզուներում՝ 2 անդամ: Եղանակի կարգը գրաբարում, անգլերենում, ռուսերենում, լատիներենում ունի 3 կարգային անդամ, ժամանակակից հայերենում՝ 5 անդամ և այլն:

Ըստ իրենց նշանակության և լեզվի միավորների կապերի բնույթի, քերականական կարգերը բաժանվում են երկու հիմնական տեսակի՝ ձևաբանական և շարահյուսական:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ - Այդ կարգերը ենթաբաժանվում են բառափոխական և դասակարգողական տեսակների:

Բառափոխական կարգ - Դրանք միավորում են միևնույն բառույթի բոլոր բառաձևերը, իսկ դասակարգողական կարգերը՝ տարբեր բառույթները՝ ընդհանուր քերականական նշանակությունների հիման վրա: Որպեսզի ավելի պարզ լինի բառափոխական և դասակարգողական կարգերի տարբերությունը, համեմատենք գոյականի հոլովի և բայական սեռի քերականական կարգերը:

Գոյականի հոլովման քերականական կարգը համարվում է բառափո-

խական կարգ, քանի որ որպես քերականական կարգի հակադրվող անդամներ հանդես են գալիս միևնույն բառի փոփոխված ձևերը (հոլովածները՝ գիրք -գրքի - գրքից և այլն), որոնց բառափոխական ցուցիչներն արտահայտում են տվյալ հոլովածին (բառածնին) հատուկ քերականական իմաստներ:

Պասակարգողական կարգ - Այդ կարգերում հակադրվում են տարբեր բառեր (օրինակ՝ դերանունների դեմքը՝ ես, դու, նա): Բայական սեռի քերականական կարգը համարվում է դասակարգողական կարգ: Բայերը խմբավորվում են ըստ անցողական և անանցողական սեռադասերի՝ համապատասխանաբար դասակարգվելով ըստ ներգործական (աշխատել, գրել, կարդալ...), պատճառական (հագեցնել, քնեցնել, խաղացնել...), կրավորական (գրվել, կառուցվել, սիրվել...) և չեզոք (քայլել, վազել, գնալ...) սեռերի:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՐԳ - Դրանք հատուկ են լեզվի շարահյուսական միավորներին՝ նախադասություններին ու բառակապակցություններին, որտեղ քերականական իմաստները ձևավորվում են բառերի կապակցությունների մեջ՝ հիմնականում շարադասության միջոցով, հնչերանգի օգնությամբ և այլն: Շարահյուսական կարգերը բացահայտվում են շարահյուսական միավորների վերլուծության, ինչպես նաև նրանց դասակարգման ու համակարգման ժամանակ: Նախադասության հիմնական կարգեր են նախադասության անդամները (գլխավոր և երկրորդական) և նախադասության տեսակները (միակազմ և երկկազմ): Բառակապակցական կարգերը բացահայտվում են նրա գերադաս (առանցքային) անդամների և կապակցության բաղադրիչների հարաբերությունների վերլուծության ընթացքում: Ըստ գերադաս (առանցքային) անդամների՝ առանձնացվում են անվանական (սարի ծաղկունք, քար սիրտ...), բայական (արագ վազել, թռչել լուսին...), ածականական (խիստ գեղեցիկ, չափազանց հետաքրքիր...) և այլ կարգի բառակապակցություններ:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԵՌ - Անվանական սեռը որոշ լեզուներում գոյականին հատուկ քերականական կարգ է, որին համապատասխան՝ գոյական անունները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ արական, իգական և չեզոք: Ամեն մի գոյականի հատուկ է միայն մեկ քերականական սեռ: Հմմտ.

ռուսերեն. экзамен, контекст, дом, тренер, театр, магазин,

լատիներեն. sirupus, globulus, medicus, spiritus, fructus, labor, magister (արական սեռ),

ռուսերեն. родина, лекция, аудитория, любовь, победа, машина,

լատիներեն. aqua, forma, valeriana, terra, vita, magnesia, doctrina (իգական սեռ),

ռուսերեն. окно, солнце, сочетание, озеро, общество, отношение, зрение,

լատիներեն. vitrum, glucosum, medicamentum, oleum, aurum, argentum, ferrum, jodum, metallum, opium, zinkum, sacharum, labium (չեզոք սեռ) և այլն:

Անեզական գոյականները սեռ չունեն, ինչպես՝ шахматы, брюки, ножницы, очки.

Սեռի կարգը ենթադրում է գոյականի և համապատասխան ածականի, թվականի, բայի և դերանվան սեռային կարգերի համապատասխանություն. ինչպես՝

вечерний спектакль, летняя прогулка, одна интересная книга, мое платье, студентка пришла, она написала.

Իմաստաբանորեն սեռի կարգի արտահայտությունը կապված է գոյականի իրական սեռային նշանակության հետ (արական կամ իգական). ըստ այդմ՝ արական սեռի անձ և կենդանի նշանակող առարկաները պատկանում են արական սեռին, իսկ իգական սեռի նշանակության անձինք և կենդանիները՝ իգական սեռին. мужчина-женщина, мальчик – девочка, отец – мать, сын – дочка, жених – невеста.

Ձևաբանորեն գոյականի սեռը որոշվում է վերջավորության և հիմքի բնույթով.

дом, герой, мебель, книга, площадь, окно, зрение.

Վերջավորությունները որոշում են նաև չհոլովվող գոյականների սեռը.

крепкий кофе, старый денди, бархатное кепи, старомодное пенсне, английская леди. Մասնագիտություն նշանակող որոշակի գոյականներ արական և իգական սեռերի տարբերակում չունեն, ինչպես՝ агроном, академик, бухгалтер, врач, геолог, инженер, композитор, редактор, судья, профессор, доктор, спортсмен, языковед.

Այդպիսի գոյականների սեռը յուրաքանչյուր որոշակի դեպքում որոշվում է շարահյուսական միջոցներով.

Агроном Иванов, агроном Иванова, молодой врач осмотрел, молоденькая врач осмотрела, академик говорил, академик говорила և այլն:

Հատուկ գոյականների սեռը որոշվում է հասարակ անվան սեռային նշանակությամբ, ինչպես՝ Дели, Багио պատկանում են արական սեռի, քանի որ город բառն արական սեռի է, Миссури, Лимпопо պատկանում են իգական սեռի, քանի որ река բառն իգական սեռի է, "Юманите", "Унита" բառերը դարձյալ պատկանում են իգական սեռի, քանի որ газета բառն իգական սեռի է և այլն:

Հապավումների սեռային պատկանելությունը որոշվում է հենակետային բառի սեռային նշանակությամբ: Այսպես՝ МГУ - արական սեռ. հենակետային բառն է университет, ГУМ - արական սեռ. հենակետային բառն է магазин, МХАТ - արական սեռ. հենակետային բառն է театр, ЭВМ - իգական

սեռ. հենակետային բառն է машина և այլն:

Այն հապավումները, որոնք վերջավորվում են -o/-e, պատկանում են չեզոք սեռի. НАТО, Минэнерго և այլն:

Որոշ լեզուներում դերանուններն անվանական սեռի կարգը տարբերակում են միայն երրորդ դեմքում. ինչպես՝ ռուս. он, она, оно, անգլ. he, she, it, գերմ. er, sie, es, լատ. illa, ille, illum և այլն:

Որոշ դեպքերում անվան սեռի կարգը որոշվում է լրացուցիչ բառերի միջոցով (դրանք համարվում են սպասարկու բառեր, թեև ունեն լիմաստ նշանակություն). անգլ. wreiter և *wumen* wreiter:

Բառակապակցության գերադաս անդամի սեռով պայմանավորված՝ մյուս անդամները նույնպես սեռով համաձայնում են նրան. հմմտ. ռուս.

прочитанная мною в детстве одна интересная *книга* (իզական),

прочитанный мною в детстве один интересный *роман* (արական),

прочитанное мною в детстве одно интересное *письмо* (չեզոք):

Գերմաներենում անվանական սեռի ցուցիչներ են դառնում հոդերը՝ համապատասխան սեռային տարբերակումներով. հմմտ.

Der – Arbeiter, Bauer, Schatz, Soldat, Sportplatz, Barbar, Tyrann...,

Die – Frau, Sonne, Sprache, Sprachkenntnis, Sprachfamilie...,

Das – Buch, Heft, Sprachgut, Sprechzimmer, Parkett, Mandat....

ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ – Թվի կարգն արտահայտում է քանակայնության գաղափար և տարածվում է հաշվելի առարկաների վրա: Այն հատուկ է հիմնականում գոյական անուններին, մյուս խոսքի մասերն ունեն թվի շարահյուսական կարգ, ինչպես՝ ածականը (գրաբարում), թվականը, դերանունը, մասնավորապես՝ բայը:

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ – Հաշվելի գոյականները կարող են լինել մեկից ավելի. այստեղից էլ քանակայնության հասկացությունը: Քանակի կամ թվի ըմբռնումը ներառում է եզակի (մեկ) և հոգնակի (մեկից ավելի) հասկացություններ, որոնք քերականորեն և բառայնորեն տարբեր արտահայտություններ ունեն:

Հայերենում գոյականի եզակի թիվը նշույթավորված չէ. իբրև քերականական իմաստի արտահայտման միջոց հանդես է գալիս բառի ուղիղ ձևը, որ հատկանշվում է զրո ձևությամբ: Ի հակադրություն զրո ձևությի՝ հոգնակի թիվը նշույթավորված է. հոգնակիության գաղափարն արտահայտվում է թվանիշ թեքությունների միջոցով, որոնք բառը (բառույթը) վերածում են բառաձևի:

Անհոգնական գոյական – Կան բառեր, որոնց առարկայնության գաղափարը դուրս է թվակարգային ոլորտից. այդպիսի բառերը համապատաս-

խան հոգնակի ձև չունեն և կոչվում են անհոգնական գոյականներ: Այդ խմբին վերաբերում են՝

ա) հատուկ անունները (Երևան, Մոսկվա, Անահիտ, Արաքս, Սևանա լիճ),

բ) հավաքական գոյականները (երիտասարդություն, ուսանողություն, մարդկություն),

գ) բնության մեջ եզակի առարկաների անունները (արև, լուսին, երկինք),

դ) նյութական-զանգվածային անունները (թթվածին, ազոտ, սոսինձ, բրինձ) և այլն:

Որոշակի գոյականներ էլ չունեն եզակի թվի ձև, հանդես են գալիս միայն հոգնակի թվի իմաստով և կոչվում են անեզական գոյականներ:

Անեզական գոյական – Կան գոյականներ, որոնք ձևով հոգնակի են: Որոշակի դեպքերում դրանց արտահայտության պլանում հոգնակիակերտ – ք մասնիկը ձուլվել-սերտաձել է (կախյալ) արմատին, այդպիսի բառերը եզակի թվի ձև չունեն և համարվում են անեզական գոյականներ: Այդ խմբին վերաբերում են՝

ա) եզակի թվի հետ անհամարժեքություն ունեցող գոյականները (զանգուրներ, հուշեր, պապոնք, Վարդանանք),

բ) երկկազմ կամ բազմակազմ առարկաները (խոիկներ, լնդերք, դահուկներ, գրաբարում՝ կառք, դեմք, դժոխք, երկինք, խելք, բաղանիք),

գ) բազմապահ անցքեր՝ դեպքեր (հարսանիք, աղաչանք, ընթացք, վազք) և այլն:

Թվի կարգը ժամանակի ընթացքում կարող է փոփոխություններ կրել. այսպես, գրաբարի անեզական գոյականները ժամանակակից հայերենում դիտվում են իբրև եզակի թվի գոյականներ, որոնք կարող են ստանալ հոգնակի թիվ, ինչպես՝ միտք – մտքեր, խօսք – խոսքեր, ելք – ելքեր, դեմք – դեմքեր, կառք – կառքեր և այլն:

Հավաքական գոյական – Հայերենում որոշակի դրսևորում ունի հավաքական թիվը, որ ներկայացնում է միասեռ կամ միատեսակ առարկաների ամբողջություն: Ձևականորեն այն արտահայտվում է ինչպես պարզ կամ արմատական բառերով (վտառ, ամբոխ, բոլուկ, ոհմակ, պարս, գունդ), այնպես էլ հավաքականակերտ ածանցներով (ամանեղեն, մրգեղեն, կոշկեղեն, գյուղացիություն, ուսանողություն):

Թվանիշ վերջավորություն – Եթե նկատի առնենք նաև գրաբարատիպ թվանիշ այն կազմությունները, որոնք հանդիպում են անկախ գործածություն ունեցող բառերում, և դրանց ավելացնենք արդի հայերենում գործածվող թվանիշ ձևությունները, ապա կարելի է առանձնացնել գոյականի հետևյալ թվանիշ վերջավորությունները՝ *-եր* (< *եար*), *-ներ* (< *նեար*), *-իկ*, *-ք*, *-անք*, *-այք*, *-ենք*, *-ոնք*:

Թվանիշ թեքությունները, որպես թվանիշ վերջավորություններ կամ թվանիշ մասնիկներ, ավելանում են գոյականական հիմքի վրա. լեզվում բոլոր հիմքակազմ տարրերը կամ բոլոր ձևավոր հիմքերը չեն կարող թվանշային գուգորություններ կազմել թվանիշ վերջավորությունների հետ, քանի որ թե՛ առաջինները և թե՛ վերջինները դիրքային սահմանափակություններ ունեն, հետևաբար թվանիշ վերջավորությունները կարող են հանդիպել միայն որոշ տիպի հիմքերի հետ: Թվանիշ թեքությունները շատ հաճախ փոխում են հիմքի կառուցվածքը: Այդ փոփոխությունը ներառում է ինչպես հիմքի հնչյունական կառուցվածքը, այնպես էլ նրա (հնչ)արտաբերությունը:

Առաջին դեպքում գործ ունենք հիմքի հնչյունափոխության, երկրորդ դեպքում՝ շեշտափոխության երևույթների հետ: Այս իրողությունները դիտվում են թվանիշ հիմքերի կազմիչներ կամ հիմքակազմ տարրեր: Հենց այդ գործոններով էլ պայմանավորված են թվակազմիչ հիմքերի «մաքուր» և «ձևավոր» տեսակները (Գ.Ջահուկյան):

Թվանիշ թեքություններն ավելանում են ձևավոր հիմքերին՝ կազմելով հոգնակի թվի բառաձևեր: Ինչպես նշեցինք, եզակի թվում գոյականը (գոյականական հիմքը) հատկանշվում է զրո ձևությամբ (թեքությամբ). հետևաբար եզակի-հոգնակի հակադրության պլանում առկա են մի կողմում՝ զրո հիմքակազմ տարրով և զրո ձևությամբ (թեքությամբ) արտահայտված հիմքեր, մյուս կողմում՝ որոշակի հիմքակազմ տարրերով (չբացառելով զրո հիմքակազմ տարրը) ձևավորված և որոշակի թվանիշ ձևությամբ (թեքությամբ) ձևավորված բառաձևեր:

Ահա հենց թվակազմության այս կարգի բառաձևն էլ հատկանշվում է որոշակի կառուցվածքով, որի տարրերի վերլուծությունն էլ դառնում է թվակազմության կադասարի մակաբերման հիմք:

Դիտարկենք հոգնակի թվով հետևյալ գոյականները՝ *օրիորդք, գերանք, մայրք, դարաւանդք, նոճք, նիզակակիցք, նոխազիւք, ցլուք, զգոհս, աւագանի, աղախնայս, պառաւունք, բերդեան*: Եթե անդամատենք տվյալ գոյականներն ըստ հիմքի և վերջավորության, ապա կարող ենք առանձնացնել քերականական այն մասնիկները, որոնք արտահայտում են հոգնակիության իմաստ: Այսպես՝ *օրիորդք-ք, գերանք-ք, մայրք-ք, դարաւանդք-ք, նոճք-ք, նիզակակիցք-ք, աւագ-անի, պառաւ-ունք, բերդ-եան* բառաձևերում *-ք, -անի, -ունք* և *-եան* մասնիկները թվակազմական ցուցիչներ են, որոնք ավելացել են եզակի ուղղականի հիմքին:

Թվակազմական հիմք - Թվանիշ թեքություններն ավելանում են որոշակի տիպի հիմքերի վրա. ուստի անհրաժեշտ է պարզել՝ ի՞նչ կարգի փոփոխություններ են կրում զրո ձևությամբ գոյականական հիմքերը հին հայերենում, երբ ստանում են հոգնանիշ (թվանիշ) թեքություններ:

Հոգնանիշ թեքությունները (վերջամասնիկները) հիմնականում փոխում են գոյականական հիմքի կառուցվածքը՝ առաջացնելով ձևավոր հիմքի տար-

բեր տիպեր: Դրանք են՝

1. *Շեշտափոխական տիպ*. մաքուր հիմքը հատկանշվում է շեշտակրությամբ (որպես ելակետային միավոր), ձևավոր հիմքը (թվանիշ ձևությի դեպքում)՝ անշեշտակրությամբ, հմմտ. աւա՛գ – աւագանի՛, բե՛րդ– բերդեա՛ն և այլն:

2. *Հնչյունափոխված տիպ*. ձևավոր հիմքը համընկնում է մաքուր հիմքին՝ ավելացրած ձևավոր հիմքի շեշտագրկությունը և հիմքի ձայնավորների շեշտափոխությունը, հմմտ. կի՛ն > կան-ա՛յք (ի՛ > ա), բարձի՛կ > բարձ(ը)կ-նե՛ ար (ի՛ > ը), թո՛ւղթ > թ(ը)ղթ-եա՛ն (ո՛ւ > ը), մանո՛ւկ > մանկ-տի՛ (ո՛ւ > Օ), ոսկո՛ր > ոսկրո-տի՛ (ո՛ > Օ) և այլն:

3. *Անփոփոխ տիպ*. ձևավոր և մաքուր հիմքերը համապատասխանում են իրար թե՛ հնչյունակազմով, թե՛ շեշտակրությամբ: Անփոփոխ հիմքը հանդիպում է թվանիշ – ք մասնիկի դեպքում, որը, հասկանալի է, չի կարող շեշտի փոփոխության և դրա հետ կապված հնչյունափոխության պատճառ դառնալ, ինչպես՝ քաղա՛ք – քաղա՛ք-ք, տո՛ւն – տո՛ւն-ք, արքա՛յ – արքա՛յ-ք, արծուի՛ – արծուի՛ – ք և այլն:

Վերոբերյալ բոլոր բառերի հոգնակի թիվը կազմվել է *մասնիկավոր-մասնիջոցով*:

Հոլովական համակարգում մասնիկավորումը, որպես քերականական իմաստների արտահայտման միջոց, գործում է նաև արդի հայերենում: Անհրաժեշտ է պարզել՝ ձևավոր հիմքերի ինչպիսի տիպերի հետ են հանդես գալիս այդ մասնիկներն արդի հայերենում:

1. - Եր. ա) վերջավորությունը հանդես է գալիս միավանկ հիմքերի դեպքում (բացառությամբ մարդ և կին միավանկ գոյականների, որոնք համապատասխանաբար ստանում են -իկ և -այք թեքություններ),

բ) այն գործառվում է մեկնկեսվանկանի բառերի (հիմքերի) դեպքում, երբ ամբողջական վանկը (լիավանկը) գտնվում է բառի (հիմքի) սկզբում. ա՛ստ(ը)դ - աստդ-ե՛ր,

գ) միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող բարդությունների դեպքում, որտեղ միավանկ բաղադրիչը թվակազմության ժամանակ պահպանում է իր հիմնական (բառական) իմաստը. ծրագի՛ր – ծրագրե՛ր:

2. - Ներ. ա) բազմավանկ հիմքերի դեպքում,

բ) մեկնկեսվանկանի բառերի դեպքում, երբ ամբողջական վանկը (լիավանկը) գտնվում է բառի (հիմքի) վերջում. գ(ն)դա՛կ - գնդակ-նե՛ր:

3. - Իկ. *մարդ* հիմքով (բառով) և նրանով վերջացող բաղադրյալ հիմքերի դեպքում:

4. - Այք. *կին* հիմքով (բառով) և նրանով վերջացող բաղադրյալ հիմքերի դեպքում:

5. - Ք. -ի ձայնավորով վերջացող (-ացի, -եցի ածանցներ ունեցող) բաղադրյալ հիմքերի դեպքում:

6. - Անք. հատկանուններով արտահայտված հիմքերի դեպքում, որոնք հանդիպում են գրաբարատիպ կազմություններում և խոսակցական - քարքառային ոճերում:

7. - Ենք. հատկանուններով արտահայտված հիմքերի դեպքում (խոսակցական ոճում):

8. - Ոնք. միավանկ ազգակցական անունների (պապ, տատ) և ստացական դերանունների դեպքում (մերոնք, ձերոնք)՝ (Ըստ Գ.Ջահուկյանի):

Թվակազմական մասնիկներ - Հոլովական հարացույցում թվի քերականական իմաստը մենք դիտարկեցինք այնպիսի բառերի և բառաձևերի արտահայտության պլանում, որոնք հոգնակիության իմաստն արտահայտում են -ք մասնիկի միջոցով: Այդ մասնիկը որոշակի դեպքերում, պայմանավորված հոլովաձևի հնչյունական-ձևակազմական փոփոխություններով, ստանում է *-ունք, -ինք, -անք* (նաև՝ -ոնք) ձևեր, թեև, ընդհանուր առմամբ, այդ վերակազմավորումներում իմաստի բեռնվածությունը դարձյալ կրում է -ք մասնիկը:

Թվակազմության նորմը սահմանում է, որ գրաբարի հոգնակիակազմ հիմքերը զուգորդվում են *-ք, -ց, -ս* մասնիկների հետ, սակայն կարող են հանդիպել նաև տարբեր հոգնակերտներով հիմքեր: Տվյալ դեպքում *քուն հոգնակերտ // հավաքական հոգնակերտ* հակադրության մեջ կա գործածության անհամարժեքություն:

Այդ իրողությունը մեկ անգամ ևս հաստատում է այն տեսակետը, որ հին հայերենում թվի քերականական իմաստի արտահայտման միակ միջոցը մասնիկավորումն է, որով նա բավարարում է կցական տիպի լեզուներին ներկայացվող պահանջները: Այդ մասնիկներն են՝

- ական - գուսանական, զարական, գրաստական,
- ան - իշան, ձիան,
- անի - երիցանի, աւագանի, նամականի, ջաղացանի, ամրոցանի,
- եան - բերդեան, գիւղեան, գրեան, գործեան, թղթեան, խորդեան, մոգեան, շաքաթեան, նախարարեան,
- եար - բանեար, վանեար, վարժեար,
- նեար - նաւկնեար, բարձկնեար,
- որեայ //- որայ - արտորեայ, վանորայ,
- տի - մանկտի ոսկրոտի, փորոտի և այլն:

Թվակազմական զուգաձևություն - Հին հայերենում թվակազմությունը ձգտում էր միակերպության՝ մանավանդ ձևաբանական այլ կարգերի համեմատությամբ, սակայն հոգնակերտ հավաքականների մասնակցությամբ տարբերակային կազմավորումները զգալիորեն շատ են:

Զուգաձևությունները թվի քերականական կարգի տեսանկյունից յուրահատկություն են դրսևորում (հոլովական հիմքերի տարբերակների առումով):

Այսպես՝ հին հայերենի հոգնակի ուղղական հոլովում, ըստ հիմնային տարբերակների, զուգաձևություն են դրսևորում այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ծին - *ծինք* // *ծնունք*, կողմն - *կողմանք* // *կողմունք*, երագ - *երագք* // *երագունք*, աղանդ - *աղանդք* // *աղանդիք* // *աղանդինք* և այլն:

Կան *թվակազմական զուգաձևություններ*, որոնք հոգնակիության իմաստն արտահայտում են միևնույն հիմքին ավելացող հոմանիշ տարբեր (հոգնակերտ) մասնիկների միջոցով: Բուն և հավաքական հոգնակերտներով կազմությունները գործածության հաճախականության տեսակետից հին հայերենում համարժեք չեն. մատենագիտական վկայություններում հանդիպում են վիճակագրական տարբեր հաճախականությամբ: Այսպես՝

- | | |
|------------------------------|--|
| - ք // - եայք՝ | համատոհմք // համատոհմեայք |
| - ք // - ունք՝ | եպիսկոպոսք // եպիսկոպոսունք |
| - եան // - եայք՝ | որկորեան // որկորեայք |
| - ստայք // ստեայք՝ | գեօղաստայք // գեօղաստեայք |
| - անք // - եանք՝ | ախոյանք // ախոյեանք |
| - ք // - եան՝ | շաբաթք // շաբաթեան, նոխազք // նոխազեան |
| - իք // -եան՝ | ջորիք // ջորեան |
| - ք // -իք // -եան՝ | հեսկք // հեսկիք // հեսկեան |
| - եար // -եանք՝ | որեար // որեանք |
| - ան // - անք // - եան՝ | իշան // իշանք // իշեան |
| - որայ // - որեայ // որեայք՝ | վանորայ // վանորեայ // վանորեայք |

Անկանոն հոլովման բառերի թվակազմությունը - Թվակազմության հարացույցում որոշակի յուրահատկություն են դրսևորում զարտուղի հոլովում ունեցող գոյական անունները: Հին հայերենում այդ կարգի բառերն են՝ *այր*, *տէր*, *հայր*, *մայր*, *եղբայր*, *քոյր*, *կին*, *տիկին*, *աւր*, *տիւ*, *գյուղ* և այլն: Այս բառերի թվակազմության քննությունը ցույց է տալիս, որ դրանք թվի քերականական իմաստն արտահայտում են մասնիկավորմամբ՝ *հոլովահիմք+ք մասնիկ* կադապարով. հետևաբար մասնիկավորումը նրանց տիպաբանական հատկանիշն է: Հմմտ. *այր* – *ար+ք*, *հայր* – *հար+ք*, *մար*-*ք*, *երբար*-*ք*, *տէր* – *տեար*-*ք*, *քոյր* – *քոր+ք*, *կին* > *կան-այ+ք*, *տիկին* – *տիկն-այ+ք*, *աւր* – *աւուր+ք*, *տիւ* – *տիւ+ք*, *գիւ*- *գիւղ+ք*:

Հին հայերենում անկանոն կամ զարտուղի հոլովման գոյականների թվակազմության քննությունը ցույց է տալիս, որ այդ բառերի թվակազմական իմաստներն արտահայտվում են մասնիկավորման միջոցով, հետևաբար կարելի է եզրակացնել, որ հոգնակի թվի (և հոլովների) քերականական իմաստների արտահայտության հիմնական եղանակը մասնիկավորումն է, և, ինչ-

պէս նշել ենք քանիցս, այդ հատկանիշը բնութագրական է կցական կառուցատիպի լեզուներին:

Ձայնորդահանգ հիմքերով գոյականների թվակազմությունը - Հին հայերենում կան զգալի քանակությամբ բառեր, որոնք բնորոշվում են ձայնորդահանգ հիմքերով. դրանք վերջանում են -ն, -ր, -ո ձայնորդներով կամ -դ բաղաձայնով, որոնցից առաջ հնչում է գաղտնավանկի -ը ձայնավորը:

Այդ կարգի բառերի թվակազմական կաղապարները ներկայացնելիս անհրաժեշտ է կատարել որոշակի խմբավորումներ՝ անհարկի կուտակումներից խուսափելու նպատակով: Այդ բաժանումները կկատարենք ըստ վերջին ձայնորդի (կամ բաղաձայնի). ըստ այդմ՝ կարելի է առանձնացնել ձայնորդահանգ (բաղաձայնահանգ) հիմքերով հետևյալ բառախմբերը՝

ա) (ը)ն > ուն հիմքերով բառեր - *ակունք, աղեղն- աղեղունք, ասեղն - ասղունք, ատամն - ատամունք, գազաթն- գազաթունք, բուրգն - բրգունք, երկն - երկունք, թեկն - թիկունք, թիթեռն - թիթռունք, լիսեռն - լիսռունք, ծիծառն - ծիծռունք, նուռն - նռ(ն)ունք, ուսումն - ուսմ-ունք, արարումն - արարմ-ունք, կոչումն - կոչմ-ունք, երդումն - երդմ-ունք, սունկն - սնկունք* և այլն:

բ) իւն- հիմքերով բառեր - *անկիւն -անկիւնք, սիւն - սիւնք, արդիւն - արդիւնք, արիւն - արիւնք, հերիւն - հերիւնք, ձիւն - ձիւնք, մրջիւն - մրջիւնք* և այլն:

գ) (ը)ն > ին հիմքերով բառեր - *հարսն - հարսինք-ք, ողն - ողինք-ք, ազն - ազինք-ք, անձն - անձինք-ք, դաշն - դաշինք-ք, եզն - եզինք-ք, խաշն - խաշինք-ք, կաթն- կաթինք-ք, սաղմն - սաղմինք-ք, բեռն - բեռինք-ք, նեռն - նեռինք-ք, գառն - գառինք-ք, սառն - սառինք-ք, սեռն (անվի առանցք) - սեռինք-ք* և այլն:

դ) (ը)ր > եր հիմքերով բառեր- *ազդր - ազդ-երք, դուստր - դստ-երք, եզր - եզ-երք, կայսր - կայս-երք, կողր - կող-երք, ոսկր - ոսկ-երք, ուստր - ուստ-երք, սակր - սակ-երք, վագր - վագ-երք, տագր - տագ-երք* և այլն:

ե) (ը)ղ > եղ հիմքերով բառեր - *անզղ - անզ-եղք, արկղ - արկ-եղք, աստղ - աստ-եղք, ետղ - ետ-եղք, կոճղ - կոճ-եղք, սկուտղ - սկուտ-եղք (սկտ-եղք)* և այլն:

զ) իւր (եւր) > եր և ուր > եր հիմքերով բառեր - *աղբիւր - աղբեր+ք, եղջիւր -(եղջեր)+ք, աղտիւր - աղտեր +ք // եղտիւր- (եղտեր) +ք, ալիւր - ալեր +ք* և այլն:

Ըստ այդմ՝ կարելի է ասել, որ հին հայերենում թվի քերականական կարգն արտահայտվում է վերջամասնիկների (կցման) միջոցով:

ԱԾԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ - Ածականի հոգնակի թվի իմաստը ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական հատկանիշ է, քանի որ ածականն առանձին հոգնակի թվով հանդես չի գալիս, եթե չի գործածվում գոյական անվան հետ. հետևաբար հոգնակի թվի հատկանիշը պայմանա-

վորված է նախադասության անդամների համաձայնության հանգամանքով, որ շարահյուսական հասկացություն է: Մյուս կողմից՝ ածականի թվի գաղափարը պայմանավորված է փոխանվանական գործածության հանգամանքով, երբ ածական անունը գործովում է գոյական անվան փոխարեն, որի հետևանքով տեղի են ունենում ածական-գոյական խոսքիմասային փոխանցումներ՝ խոսքիմասային տարարժեք բառերի անջատումով: Եթե ածականը հանդես է գալիս նաև հոգնակի թվով, ապա կարելի է խոսել նրա թվակազմական հատկանիշի մասին. այսինքն՝ ի՛նչ եղանակով կամ ի՛նչ միջոցով է արտահայտվում նրա հոգնակիակազմությունը:

Ածականի թվի կարգը հնարավոր չէ քննել առանց հաշվի առնելու նրա գործառնությունը (շարահյուսական միջավայրը): Այսպես՝

Ոչ է օրէն դիւցազանց ... թշնամութիւն յաւիտենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել (Խոր., 178): Մեծաց հարուածոց արժանի առնէր զՎարազն (Բուզ., 87): Եւ ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց (Եզն., 8):

Ազգաց քաջաց, մեծաց հարուածոց և չարաց իրաց կապակցություններում քաջաց, մեծաց և չարաց ածականները համաձայնել են հոգնակի լրացյալներին (ազգաց, հարուածոց, իրաց) և արտահայտում են հոգնակի թվի իմաստ ք-ց հերթագայության միջոցով:

Դիտարկենք բազմավանկ ածականների հոգնակիակազմությունը և նրանց գործածությունը լրացական դերով.

Տիկինայք փափկասունք Հայոց աշխարհին յանապազ բոկ եւ հետի երթային ի տունս յաղօթից (Եղ., 201): Ոչ են յուսացեալ ի նիզակս իւրեանց, այլ ի վերայ լերանց բարձանց իւրեանց (Յուդիթ, Է, 12): Գիսաւոր նոխազիւք և ցլոք սպիտակօք առատացոյց զգիոս կրակին (Եղ., 12): Արտաքնոցն երևէին իբրեւ այրիք սգաւորք (Եղ., 203): Յիշի աստանօր ի պատմութեանս՝... բնակեալ յառաջագոյն արք սակաւք ինքնակամ հնազանդեալ դիւցազինն (Խոր., 33): Դարձի՛ր նմանեաց դու այծեման կամ որթոց եղանց ի վերայ լերանց խնկաբերաց (Երզ., Գ, 17):

Վերոբերյալ ածականների հոգնակի թվի իմաստն արտահայտվել է մասնիկավորման եղանակով: Այսպես, փափկասունք, սգաւորք և սակաւք բառերը հոգնակի թիվն արտահայտում են ք մասնիկի միջոցով, բարձունք ածականի արտահայտության պլանում ձևականորեն կարող ենք առանձնացնել -ունք հոգնակերտ-հավաքական մասնիկը (դրանց կազմությանն առանձին կանդրադառնանք), իսկ սպիտակօք բառաձի հոգնակին դրսևորվել է ք մասնիկով՝ եզակի գործիականից՝ սպիտակաւ-ք:

Ինչպես կարելի է եզրակացնել վկայված օրինակներից՝ բազմավանկ ածականները, որպես կանոն, հետադաս գործածությամբ հոլովով և թվով համաձայնում են հոգնակի լրացյալին, իսկ նախադաս բազմավանկ ածականները ոչ:

Ածականի թվակազմությունը պայմանավորված է նրա ձևակազմա-

կան գործոնով, որ մասնավորապես վերաբերում է ածանցավոր կազմություններին: Ածանցավոր ածականների հոգնակին, որպես կանոն, կազմվում է ելակետային՝ *սերող հիմք + ք մասնիկ կաղապարով*. վերջածանցի տեսակը թվակազմության առումով չեզոք է:

Հմտ. հետևյալ ածանցավոր որակական ածականների թվակազմությունը. անամօթ-ք, անառակ-ք, անհաւատ-ք, անաստուած-ք, անարժան-ք, անզգամ-ք, անխիղճ-ք, անհնազանդ-ք, անհոգ-ք, անմեղ-ք, անմիաբան-ք, թունաւոր-ք, հեռաւոր-ք, կեղծաւոր-ք, ահաւոր-ք, աղետաւոր-ք, կենարար-ք, լուսարար-ք, աղմկարար-ք, զրուցարար-ք, խռովարար-ք, հաշտարար-ք, ազդարար-ք, հոգեկան-ք, կործանական-ք, օրհասական-ք, հանրական-ք, հանդարտական-ք, խաղաղական-ք, ցանկալի-ք, իմանալի-ք, բաղձալի-ք, տաղտկալի-ք, սիրելի-ք, լաւագոյն-ք, աւագագոյն-ք, բարձրագոյն-ք, գեղեցկագոյն-ք, պարզագոյն-ք, կարծրագոյն-ք, խօսուն-ք, ասուն-ք, զիտուն-ք, իմաստուն-ք, հասուն-ք, զեռուն-ք և այլն:

Հարաբերական ածականների թվակազմությունը պայմանավորված է շարահյուսական համաձայնության գործոնով, ինչպես նաև փոխանվանաբար գործածության հանգամանքով: Հմտ. գարնանային-ք, աշնանային-ք, ամառնային-ք, ձմեռնային-ք, մարդկային-ք, լեռնային-ք, ցամաքային-ք, արքունական-ք, հայրական-ք, մայրական-ք, եղբայրական-ք, մանկական-ք, ծովական-ք, բրդեայ-ք, մետաքսեայ-ք, ասուեայ-ք, ծովափնեայ-ք, ստորերկրեայ-ք, արծաթեղեն-ք, ոսկեղեն-ք, երկաթեղեն-ք, ասրեղեն-ք, բրդեղեն-ք, բոցեղեն-ք, հողեղեն-ք, հրեղեն-ք:

Ածական անունը, նրա թվի կարգը իմաստավորվում և արժևորվում են խոսքային գործածության ոլորտում. ըստ այդմ՝ ածական խոսքի մասի թվակազմական հատկանիշը պետք է դիտարկել շարահյուսական մակարդակում: Ածականների տեսակների և նրանց ձևակազմական տիպերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ածական անվան հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է *մասնիկավորման միջոցով*:

ԹՎԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ - Թվականն արտահայտում է քանակայնության գաղափար. քանակը կարող է պարունակել եզակիից մինչև անսահմանություն. քանակի իմաստը բառայնորեն արտահայտվում է բառերի այն խմբով, որ մտնում է թվական խոսքի մասի մեջ: Թվականը բառայնորեն արտահայտվում է ինչպես արմատական, հարադրավոր, այնպես էլ ածանցավոր կազմությամբ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե առարկաների ինչպիսի՝ քանակ է ցույց տալիս:

Քանակի գաղափար արտահայտող բառերը հոգնակի թվի անհրաժեշտություն չունեն, այսինքն՝ նրանք, թվում է, պետք է միայն եզակի թվով արտահայտված լինեն, սակայն թվականի համակարգում հանդիպում են բա-

ներ, որոնք հոգնակի կառուցատիպ ունեն. դրանք անեզական բառեր են և իրենց արտահայտության պլանում ունեն հոգնակիակերտ –ք մասնիկը:

Բացառիկ դեպքում թվի գաղափարը կարող է հոգնակի արտահայտություն չունենալ, ինչպիսին է *Մի* պարզ թվականը:

Հին հայերենում թվականները բաժանվում են քանակական, դասական և անձներական տեսակների: Թվականի քանակական և դասական տեսակները մասնիկավորման միջոցով արտահայտում են հոգնակի թվի գաղափար, իսկ անձներական թվականներն իրենց կառուցվածքում ունեն հոգնակիակերտ մասնիկներ:

Քանակական թվականների հոգնակիակազմությունը - Քանակական թվականները, բացի *Մի* թվականից, հոգնակի թվի գաղափարն արտահայտում են –ք մասնիկի միջոցով. թվակազմական կաղապարների մեջ պետք է առանձնացնել թվակազմական հիմքը և թվակազմական մասնիկը: Թվակազմական հիմքը դիտարկվում է հոգնակի ուղղականում, որտեղ առանձնացվում են հիմքերի հետևյալ կառուցատիպերը:

1) Եզակի ուղղականի անփոփոխ հիմք, որ հանդիպում է՝

ա) միավորների և տասնավորների (-սուն մասնիկով) հոգնակի թվում՝ հինգ-ք, վեց-ք, ութ-ք, քսան-ք, երեսուն-ք, քառասուն-ք, հիսուն-ք, վաթսուն-ք, եւթանասուն-ք, ութսուն-ք, իննսուն-ք,

բ) 11-19 թվականների հոգնակի թվում՝ մետասան-ք, երկոտասան-ք, երեքոտասան-ք, հնգետասան-ք, վեչոտասան-ք....., իննտասան-ք:

գ) հարյուրավորների հոգնակի թվում՝ հարիւր-ք, երկերիւր-ք, երեք-հարիւր-ք... իննհարիւր-ք,

դ) հազարավորների թվակազմական կաղապարներում. հազար-ք, երկու հազար-ք, երեք հազար-ք, հինգ հազար-ք.... ինն հազար-ք,

ե) *բիւր* թվականի և նրանով հարադրված կազմությունների հոգնակի թվում՝ բիւր-ք, երկու բիւր-ք, երեք բիւր-ք, տասն բիւր-ք, հազար բիւր-ք և այլն:

2) Եզակի ուղղականի հնչյունափոխված հիմք, որ համընկնում է՝

ա) *եւթն* թվականի եզակի սեռականին՝ եւթան- եւթան-ք,

բ) *տասն* թվականի եզակի սեռականին՝ ի-ու ձայնդարձով՝ տասին – տասուն-ք:

3) Եզակի ուղղականի ձայնդարձով հիմք՝ ինն – ինունք:

Դասական թվականները (ներառյալ *առաջին* թվականը) հոգնակին կազմում են –ք մասնիկի միջոցով, այլ կերպ ասած՝ դասական թվականների հոգնակիակազմությունը մասնիկավոր է. հոգնակիակերտ մասնիկն ավելանում է դասական թվականի եզակի ուղղականին, որ դառնում է թվակազմական հիմք, ինչպես՝ երկրորդ-ք, երրորդ-ք, չորրորդ-ք... իններորդ-ք... երկոտասաներորդ-ք քառասներորդ-ք հարիւրերորդ-ք հազարերորդ-ք և այլն:

Դասական թվականի հոգնակի գործածությունը պայմանավորված է՝
ա) լրացյալ գոյականի անեզական տեսակով.

Ի կառսն երրորդս ձիք սպիտակք, եւ *ի կառսն չորրորդս* ձիք պէսպէս
պիսակք (Ձաքա., Զ, 3):

բ) հոգնակի լրացյալին շարահյուսորեն համաձայնելու հանգամանքով.

Կամիմ զանիմաստասէր Բարս *առաջնոցն մերոց նախնեացն* ոչ առանց
յիշատակի Բամբասանաց թողուլ (Խոր., 9): Երկրորդաց սա հասցէ. բայց
սակայն *երկրորդքն* և նոքա *մեծամեծք* են (ՆՀԲ, 1, 702):

գ) փոխանվանաբար գործածությամբ.

Եւթանասուն եւթներորդք համառոտեցան ի վերայ ժողովրդեան քո և ի
վերայ քաղաքին սրբոյ (Դան., Թ, 24): *Երկրորդքն երրորդիցն* առաջնորդեն
(ՆՀԲ, 1, 704): *Հարիւրերորդս* մտից նախնիս հրամայեալ (ՆՀԲ, 2, 62):

դ) արտահայտած հավաքականության՝ ամբողջության իմաստով.

Եւ տօն *եւթներորդաց* արասցես ինձ ի սկզբան հնձոց ցորենոյ, եւ զտօն
արմտեաց ամփոփելոյ՝ յընդմիջել տարւոյն (Ելք, ԼԴ, 22). *Եւթներորդք* – մի
շաբաթ, յոթ օր:

Անձներական թվականները կազմվում են *-եքին, -եքեան* մասնիկների
միջոցով, ինչպես՝ *երկոքին – երկոքեան* (երկուսով, երկուսը՝ երկուսով միա-
սին), *երեքին – երեքեան* (երեքով, երեքը՝ երեքով միասին), *չորեքին – չորե-
քեան* (չորսով, չորսը՝ չորսով միասին), *հնգեքին – հնգեքեան* (հինգով, հինգը՝
հինգով միասին), *տասնեքին – տասնեքեան* (տասով, տասը՝ տասով միա-
սին) և այլն:

Ինչպես ցույց է տալիս թվականի քանակական, դասական և անձնե-
րական տեսակների հոգնակիակազմության ուսումնասիրությունը, թվակա-
նը բոլոր դեպքերում հոգնակին արտահայտում է մասնիկավորմամբ. որոշ
դեպքերում մասնիկներն առկա են թվականի արտահայտության պլանում՝
որպես կառուցվածքային բաղադրիչներ: Թվականի հոգնակի թվով գործա-
ծությունը պայմանավորված է շարահյուսական գործոնով. մի դեպքում այն
հանդես է գալիս փոխանվանաբար՝ արտահայտելով հոգնակի թվի գաղա-
փար, երկրորդ դեպքում՝ դա պայմանավորված է հոգնակի լրացյալին հա-
մաձայնելու հանգամանքով:

ԴԵՐԱՆՎԱՆ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ - Դերանվան որոշ
տեսակների թվակազմությանը բնորոշ է միայն մասնիկավորման եղանակը.
հոգնակի թվի իմաստն արտահայտում են *-ք մասնիկով* կամ այդ տարրն
ունեցող *բաղադրյալ այլ մասնիկներով*:

Անձնական դերանունները թվակազմական անմիօրինակություն են
ցուցաբերում. որոշ դեպքերում հստակ է մասնիկների դերը, որոշ դեպքերում
մասնիկավորումը զուգակցվում է տարահիմքությանը, որոշ դեպքերում

թվակազմական մասնիկները զետեղվում են բառի կառուցվածքում՝ փոխանակ եզրափակելու բառաձևի կաղապարը և այլն:

Հմմտ. ես – մե-ք, դու – դու-ք, նա – նո-ք-ա, ինքն – ինքեան-ք, իւր – իւրեան-ք:

Ցուցական դերանունները հոգնակի թվի իմաստն արտահայտում են տարբեր ձևերով:

Սա, դա, նա դերանունների հոգնակի թվում կարելի է ցույց տալ հոգնակիակերտ –ք մասնիկի դերը՝ սա – սո-ք-ա, դա – դո-ք-ա, նա – նո-ք-ա: Այս, այդ, այն ցուցական դերանուններն հոգնակի թվում ունեն ձևակազմական տարբերակներ, որոնց արտահայտության պլանում ակնհայտ է –ք մասնիկի հոգնակիակազմ դերը, ինչպես՝ այս – այս-ք // այս-ո-ք-իկ, այդ – այդ-ք // այդ-ո-ք-իկ, այն – այն-ք // այն-ո-ք-իկ:

Ստացական դերանունների թվակազմության ոլորտում անշեղորեն գործում է հոգնակիակազմ –ք մասնիկը: Ստացական դերանունների թվակազմական հիմքերը անձնական դերանվան սեռական հոլովաձևերն են. դրանք եզակի սեռականում բառաձևից անցել են բառային մակարդակ, որոնց վրա ավելանում է հոգնակիակերտ –ք մասնիկը: Հմմտ. ես – իմ – իմ-ք, դու – քոյ-քոյ-ք, իւր – իւր-ք, մեք – մեր – մեր-ք, դուք – ձեր – ձեր-ք:

Հին հայերենի դերանվան համակարգում որոշյալ դերանունները (բացառությամբ ամենայն-ի) հոգնակիակազմ են և արտահայտում են հավաքական առարկաների ամբողջություն: Այդ դերանունները կազմվում են –եքին // -եքեան ածանցներով, որոնց արտահայտության պլանում առկա է –ք հոգնակերտ տարրը, ինչպես՝ ամեն-եքին, ամեն-եքեան, բոլոր-եքին, բոլոր-եքեան: Հոգնակի թեք հոլովներում թվակազմական –ք տարրը ենթարկվում է *ք-ց* հերթազայության, հայցականում՝ *ք-ս*, հմմտ. ամենեքին // ամենեքեան – ամենեցուն // ամենեցունց և զամենեսին // զամենեսեան և այլն:

Հարցական (և հարաբերական) դերանունների մի մասը հոգնակի թիվը կազմում է մասնիկավորման եղանակով. որպես ընդհանուր հոգնակիակերտ ցուցիչ՝ հանդես է գալիս –ք մասնիկը: Այդ դերանուններն են՝ *n^օ* և *n^ի*, որոնք համապատասխանաբար ունեն հոգնակի հետևյալ ձևերը՝ *n^օ* – *n^ի* – *ք* և *n^ի* – *նիլ-ք*:

Փոխադարձ դերանունների թվի կարգը դարձյալ դրսևորվում է մասնիկավորման եղանակով: Փոխադարձ դերանունները անեզական անուններ են, չունեն հոգնակի ուղղականի ձևեր. դրանց ելակետային վիճակը հոգնակի սեռական հոլովաձևն է, որ հոլովի և թվի քերականական իմաստներն արտահայտում է –ց մասնիկի միջոցով, ինչպես՝ միմեանց, իրերաց: Ակնհայտ է, որ այս ձևերը ծագում են նախագրային հայերենում երբևէ գոյություն ունեցած միմեանք, իրեարք ձևերից, որոնք ժամանակի ընթացքում դուրս են եկել դերանվան ձևաբանական համակարգից: Այդ ձևերի հոգնակի

ուղղականի –ք մասնիկից կարելի է բխեցնել հոգնակի սեռականի –ց մասնիկը, որ հետևանք է ք-ց հերթագայության՝ քերականական արժեքով:

Անորոշ *ումն*, *այլ* դերանունները հոգնակի թիվն արտահայտում են մասնիկավորմամբ, հմմտ. *այլ* – *այլ-ք*, *ումն* – *ուման-ք*:

Դերանվան որոշ տեսակների թվի քերականական կարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դերանվանական բառաձևերի արտահայտության պլանում գործում է մասնիկավորումը՝ որպես քերականական իմաստների արտահայտման միջոց: Ընդ որում՝ դերանունների համակարգում հոգնակի թիվն արտահայտության տարբեր դրսևորումներ ունի:

Անձնական, ցուցական, ստացական, անորոշ, հարցական և հարաբերական դերանունների հոգնակի թիվը կազմվում է հոգնակիակերտ –ք մասնիկի միջոցով:

Թվի քերականական կարգը *մասնիկավորմամբ* է արտահայտվում նաև՝

ա) ռուսերենում. հոգնակերտ մասնիկների դերով հանդես են գալիս *ы* կամ *и*, *а* կամ *я* վերջավորությունները. *парта* – *парты*, *стена* – *стены*, *стол* – *столы*, *конь* – *кони*, *пуля* – *пули*, *дом* – *дома*, *озеро* – *озёра*, *поле* – *поля*, *море* – *моря*,

բ) անգլերենում. *book-books* (գրքեր), *map-maps* (քարտեզներ), *witch-witches* (կախարդներ), *city-cities* (քաղաքներ), *leaf-leaves* (տերևներ), *child-children* (երեխաներ),

գ) թուրքերենում. *baş* (գլուխ) – *baş-lar* (գլուխներ), *adam* (մարդ) – *adam-lar* (մարդիկ), *oda* (սենյակ) – *oda-lar* (սենյակներ), *ev* (տուն) – *evler* (տներ) և այլն,

դ) լատիներենում. *tabulă* – *tabul-ae*, *lupus* – *lup-ī*, *verbum* – *verb-a*, *orātor* – *orator-ēs*.

Որոշ լեզուներում թվի կարգն արտահայտվում է *ներքին թեքման միջոցով* (արմատահնչյունի փոփոխությամբ), ինչպես՝

ա) անգլերենում. *man-men* (տղամարդիկ), *goose-geese* (բաղեր), *tooth-teeth* (ատամներ), *person-people* (մարդիկ),

բ) արաբերենում. *KiTaB* (գիրք) – *KuTuB* (գրքեր), *balad* (երկրամաս) – *bilad* (երկրամասեր), *gild* (կաշի) – *gulud* (կաշիներ), *ragil* (մարդ) – *rigal* (մարդիկ), *arab* (արաբ) – *arub* (արաբներ) և այլն:

Որոշ դեպքերում այն դրսևորվում է *կրկնության* միջոցով՝

ա) հայերենում. գունդ-գունդ, փունջ-փունջ, մարդ-մուրդ, աման-չաման,

բ) ինդոնեզիական, ավստրոնեզիական լեզուներում. *orang* (մարդ) և *orang* – *orang* (մարդիկ), *kuda* (ձի) և *kuda* – *kuda* (ձիեր),

գ) բուլղարների լեզվում. *ka* (ձեռք) և *ka-ka* (ձեռքեր), *tu* (բերան) և *tu-tu* (բերաններ),

դ) չինարենում. *жень* (մարդ) և *жень – жень* (մարդիկ), *син* (աստղ) և *син- син* (աստղեր) և այլն:

Երբեմն էլ հոգնակի թվի իմաստը կարող է արտահայտվել ձայնդարձով, հմմտ. ռուս. *akno* (պատուհան) և *o'kna* (պատուհաններ), *selo* (գյուղ) և *so'la* (գյուղեր):

Գերմաներենում թվի քերականական կարգն արտահայտվում է քերականական տարբեր միջոցներով՝ մասնիկավորմամբ, սպասարկու բառերով (*die* հոդի միջոցով). դրանք կարող են հանդես գալ ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միաժամանակ.

Der Sonntag – die Sonntag (ամառներ),

Das Schüler – die Schüler (աշակերտներ),

Das Kind – die Kind+er (երեխաներ),

Der Soldat – die Soldat+en (զինվորներ),

Das Heft – die Heft+e (տետրեր),

Das Buch – die B+ü+ch+er (գրքեր) և այլն:

Դերմանունը թվի քերականական կարգն արտահայտում է նաև *տառահիմքության միջոցով*.

ա) եզակի և հոգնակի որոշ ձևեր ցուցաբերում են տարբեր արմատներ (հիմքեր).

ես – մենք, նա – նրանք,

I – we, he/she/it – they,

Ich – wir, du – ihr, er – sie,

Я –мы, ты – вы, он /она, оно/ – они.

բ) ուղիղ և թեք հոլովների արտահայտության պլանում ի հայտ են գալիս թվային հակադրության տարբեր դրսևորումներ, հմմտ. հայ.

ես – իմ – ինձ – ինձնից, դուք – ձեր – ձեզ, ռուս. я –меня – мне, անգլ. I – my – me, he- his – him, she – her – hers, լատ. ego – mei – mihi – me և այլն:

ԲԱՅԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ - Բայի խոնարհման համակարգում թվի կարգը պետք է դիտարկել դեմքի կարգից անբաժան, քանի որ խոնարհման հարացույցում բայի դեմքը և թիվը արտահայտվում են ընդհանուր վերջավորություններով, այսինքն՝ խոնարհման համակարգում գործառնող վերջավորությունները միաժամանակ արտահայտում են դեմքի և թվի հատկանիշներ՝ հանդես գալով որպես երկարժեք ձևային:

Թվի կարգը բայական համակարգում արտահայտվում է ինչպես քերականական մասնիկների, այնպես էլ սպասարկու բառերի (օժանդակ բայի) միջոցով. ըստ այդմ էլ՝ տարբերակվում են համդրական և վերլուծական բայաձևերը:

Թվի կարգը մասնիկների միջոցով է արտահայտվում համադրական բայաձևերում՝ սահմանական, ստորադասական և հրամայական եղանակներում:

Համադրական եղանակային ձևերում թվի իմաստ արտահայտող մասնիկները հանդես են գալիս պարզ և բաղադրյալ տիպերով, որոնք ավելանում են տարբեր կառուցատիպերի բայահիմքերի վրա: Բայի խոնարհման համակարգում թվակազմական մասնիկները գործում են սահմանական, ստորադասական և հրամայական եղանակների ժամանակաձևերի արտահայտության պլանում:

Սահմանական եղանակի ներկա ժամանակի դիմաթվային վերջավորություններն են՝ -մ, -ս, -յ (եզակի թվում) և -մք, -յք, -ն (հոգնակի թվում): Հմմտ. խաղ-ամ, խաղ-աս, խաղ-այ, խաղ-ամք, խաղ-այք, խաղ-ան, շարժ-եմ, շարժ-ես, շարժ-ե, շարժ-եմք, շարժ-էք, շարժ-են և այլն: **Անցյալ անկատար ժամանակի** դիմաթվային վերջավորություններն են՝ -ի, -իր, -յր, -աք, -իք, -ին, որոնք ընդհանուր են բոլոր խոնարհումների համար: Հմմտ. խաղ-այի, խաղ-այիր, խաղ-այր, խաղ-այաք, խաղ-այիք, խաղ-ային, կիզ-ուի, կիզ-ուիր, կիզ-ոյր, կիզ-ուաք, կիզ-ուիք, կիզ-ուին և այլն:

Անցյալ կատարյալ ժամանակում հոգնակիակազմությունը դարձյալ մասնիկավոր կառուցատիպ ունի. սիրեց-ի, սիրեց-եր, սիրեաց-, սիրեց-աք, սիրեց-էք (-իք), սիրեց-ին, աղաց-ի, աղաց-եր-, աղաց-, աղաց-աք, աղաց-էք (-իք), աղաց-ին և այլն:

Ստորադասական եղանակի պարզ բայաձևերը համադրական կառուցատիպի են, խոնարհումն իրականանում է քերականական մասնիկների միջոցով, որոնք արտահայտում են բայի եղանակային ձևերի քերականական հատկանիշները՝ դեմքը և թիվը: Առաջին ապառնիում. խաղ-այցեմ, խաղ-այցես, խաղ-այցե, խաղ-այցեմք, խաղ-այցէք, խաղ-այցեն, շարժ-իցեմ, շարժ-իցես, շարժ-իցե, շարժ-իցեմք, շարժ-իցէք, շարժ-իցեն և այլն, երկրորդ ապառնիում՝ խաղաց-ից, խաղաս-ցես, խաղաս-ցե, խաղաս-ցուք, խաղաս-ջիք, խաղաս-ցեն, կիզ-ից, կիզ-ցես, կիզ-ցե, կիզ-ցուք, կիզ-ջիք, կիզ-ցեն և այլն:

Հրամայական եղանակի բայաձևերը հոգնակին կազմում են դարձյալ մասնիկավորման եղանակով. խաղաց-է՛ք, շարժեց-է՛ք, կիզ-է՛ք, խաղաս-ջի՛ք, շարժես-ջի՛ք և այլն:

Եթե ընդհանրացնենք բայի դիմավոր ձևերում թվի քերականական կարգի դրսևորման միջոցները, կարող ենք ասել, որ համադրական բայաձևերում հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է մասնիկավորման միջոցով, որտեղ զգալի դեր ու կշիռ ունի –ք հոգնակիակերտ մասնիկը, որ հանդես է գալիս բաղադրյալ մասնիկների կազմում՝ կրելով հոգնակիության իմաստի բեռնվածությունը:

Վերլուծական բայաձևերում թվի քերականական կարգն արտահայտվում է օժանդակ բայի հոգնակի ձևերի միջոցով՝ *եմք, էք, են* (կոչելոց եմք, կոչելոց էք, կոչելոց են), *էաք, էիք, էին* (կոչելոց էաք, կոչելոց էին, կոչելոց էին), *իցեմք, իցէք, իցեն* (կոչեալ իցեմք, կոչեալ իցէք, կոչեալ իցեն): Վեր-

լուծական բայաձևերում թվի կարգն արտահայտվում է սպասարկու բառերի միջոցով:

ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ – Հոլովի քերականական կարգն արտահայտվում է հոլովների միջոցով. այն բնորոշ է գոյականին և դերանվանը: Յուրաքանչյուր հոլով արտահայտում է որոշակի քերականական իմաստ, որ իր հերթին դրսևորվում է որոշակի հոլովանիշ մասնիկների, ձայնդարձի կամ տարահիմքության միջոցով: Ըստ այդմ, հոլովաձևը քերականական իմաստի և քերականական ձևի միասնությունն է, որ հանդես է գալիս իբրև հոլովական հարացույցի մեկ անդամ (մեկ բառաձև):

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԻ ԿԱՐԳԸ– Միևնույն լեզվի տարժամանակյա (անգամ համաժամանակյա) մակարդակներում հոլովի կարգը տիպաբանորեն տարբեր դրսևորումներ ունի: Այդ առումով գրաբարը և արդի հայերենը հոլովի քերականական կարգի արտահայտման տեսակետից ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Հին հայերենում գրեթե հավասարապես գործում են կցականությունն ու ներքին թեքումը, իսկ արդի հայերենում իշխում է կցականությունը:

Ժամանակակից հայերենը տիպաբանորեն պատկանում է կցական (մասնիկավոր) տեսակին, ուստի հոլովական կաղապարներում հոլովանիշ մասնիկների նշույթավորումը դժվարություն չի հարուցում: Այդ կաղապարները բնութագրելու և հնարավոր մասնակաղապարները ստանալու համար հարկ է լինում անդրադառնալ հոլովական հիմքերին, որոնք տարբեր տեսակի են և ունեն տարբեր գործառական արժեքներ:

Հոլովական ձևայինքներ – Դրանք բաժանվում են երկու տեսակի՝ *առաջին կարգի* և *երկրորդ կարգի հոլովանիշներ*, որ պայմանավորված է այն հանգամանքով, թե ո՞ր հոլովում են հանդես գալիս:

Առաջին կարգի հոլովանիշներ – Հանդես են գալիս առաջին թեք հոլովում՝ սեռական հոլովում: Ընդհանրապես գոյականի հոլովական հարացույցի բառաձևերի ձևակազմական կաղապարները հստակ որոշելու համար պետք է բացահայտել հոլովական իմաստներ արտահայտող ձևայինքների հնարավոր քանակը:

Ըստ այդմ.

1) հոլովանիշ վերջավորություններն են՝ ա (աղջկ - ա), ի (սեղան-ի, սեղաններ-ի), ո (հր-ո, սիր-ո), ու (գին-ու, ձի-ու), ան (աշն-ան), անց (մարդկ-անց), յան (գալստ - յան), ոջ (ընկեր-ոջ), վա (ցերեկ-վա), վան (մահ-վան),

2) հերթագայություններն են՝ այ / ո (մայր - մոր), (ը) / ե (կայս(ը)ր-կայսեր), ի/ու (կղզի - կղզու), ու/ա (տուն - տան, արյուն - արյան), ու /վա (անուն - անվան), ք/ց (Վարդանանք - Վարդանանց, Հակոբենք > Հակոբենց, պապոնք - պապոնց), յ-ք/ն-ց (կանայք - կանանց):

Ինչպես տեսնում ենք, գոյականի հոլովական իմաստների արտահայտման դեպքում գործում են հոլովական տասնութ թեքությո՝ տասը հոլովանիշ վերջավորություն և ութ հերթագայություն:

Ընդ որում, բոլոր 18 թեքությունները գործում են առաջին թեք հոլովում՝ սեռական հոլովում: Ըստ այդմ էլ, այդ թեքությունները կոչվում են *առաջին կարգի հոլովանիշներ*:

Այժմ ցույց տանք այս թեքությունների (վերջավորությունների և հերթագայությունների) գործածության (իրացման) պայմանները: Այսպես՝

1. - ա. գործածվում է -իկ նվագական-փաղաքշական ածանց ունեցող աղջիկ հիմքի դեպքում,

2. - ի. մյուս թեքությունների գործածության պայմաններին չբավարարող հիմքերի դեպքում և հոգնակի թվի գոյականների բոլոր տեսակի հիմքերի դեպքում,

3. - ո. սեր, սուգ, հուր, աստված հիմքերի դեպքում (գրաբարատիպ հոլովում),

4. - ու. իրացվում է ի ձայնավորով վերջացող հիմքերի դեպքում,

ա) միավանկ բառեր (ծի),

բ) գրաբարյան ոյ>ու հոլովումների պատկանող որոշ հիմքերի դեպքում (մարդ),

5. - ան.

ա) - ուն հնչյունախմբով վերջացող ժամանականիշ (գարուն, աշուն) բառերի դեպքում,

բ) - ում ածանցով վերջացող բայանունների դեպքում,

գ) որոշ միավանկ բառերի դեպքում, որոնք գրաբարում ունեցել են և վերջնահնչյունը, որ ժամանակի ընթացքում ընկել է,

6. - անց. մարդիկ բառի հոգնակի հիմքի դեպքում,

7. - յան. -ուստ և -ունդ վերջածանցներով բառերի դեպքում,

8. - ոջ.

ա) իգական սեռի ազգակցականություն նշանակող բառերի հիմքերի դեպքում (տալ, սկեսուր),

բ) տեր, ընկեր, աներ հիմքերի դեպքում,

9. -վա. ժամանականիշ բառերի հիմքերի դեպքում,

10. - վան. մահ բառահիմքի դեպքում,

11. - (այ >) ո. այր հնչյունախմբով վերջացող ազգակցանիշ հիմքերի դեպքում,

12. - (ը >) ե. (ը)ր հնչյունախմբով վերջացող անձնանիշ հիմքերի դեպքում,

13. - (ի >) ու. ի ձայնավորով վերջացող բազմավանկ հիմքերի դեպքում,

14. - (ու >) ա.

ա) - ություն վերջածանցով բառերի դեպքում,
բ) - ուն, -յուն հնչյունախմբով (ոչ ածանցով) վերջացող բառերի դեպքում (շուն, տուն, ձյուն, սյուն, արյուն),

15. - (ու>) վա. -ուն հնչյունախմբով վերջացող ան բառահիմքերի դեպքում,

16. - (ք >) ց. -ք ածանցով վերջացող հոգնանիշ հիմքերի դեպքում,

17. - (յ - ք>) ն-ց. -յք հնչյունախմբով վերջացող հոգնանիշ հիմքերի դեպքում (կանայք),

18. - (ի - ք >) ո-ց. -իք հնչյունախմբով վերջացող հոգնանիշ հիմքերի դեպքում (քաղաքացիք):

Երկրորդ կարգի հոլովանիշներ – Հանդես են գալիս բացառական հոլովից սկսած: Դիտարկենք երկրորդ կարգի հոլովանիշ վերջավորությունների և հոլովական հիմքերի զուգորդելիության հնարավորությունները՝ առանձին-առանձին:

1. - Ից վերջավորությունը զուգորդություն է կազմում միևնույն գոյականի թե՛ անհոլովանիշ, թե՛ առաջին կարգի հոլովանիշներով ձևավորված հիմքերի հետ, ինչպես նաև կարող է հանդես գալ այդ հիմքերից միայն մեկի հետ: Այսպես՝

Ա. - Վա հոլովման դեպքում -ից վերջավորությունը կարող է ավելանալ երկու տիպի հիմքերի վրա, հմմտ. օր>օր-ից, օր-վա-ն-ից (-ն- հավելուրդային տարրով) և մահ > մահ-ից, մահ-վան-ից:

Բ. Միայն առաջին կարգի հոլովանիշներով ձևավորված հիմքերի վրա.

ա) գրաբարատիպ աղջիկ > աղջկա հոլովման դեպքում՝ -ն հավելուրդային տարրով՝ աղջկա-ն-ից,

բ) - ան հոլովման պատկանող գարուն, աշուն ժամանականիշ գոյականների հիմքի վրա՝ գարուն > գարն - ան - ից, աշուն > աշն - ան - ից,

գ) - վա հոլովման պատկանող ամառ գոյականի հիմքից՝ -ն հավելուրդային տարրով. ամառ > ամառ - վա - ն - ից,

դ) - ոջ հոլովման պատկանող քույր, ընկեր բառերի հիմքերի վրա՝ քույր > քրոջ - ից, ընկեր - ընկեր - ոջ - ից,

ե) - ո ներքին թեքման (այ > ո) պատկանող հայր, մայր, եղբայր բառերի հիմքերի վրա՝ հայր > հոր - ից, մայր > մոր-ից, եղբայր > եղբոր - ից և այլն,

զ) հերթագայությամբ առաջին կարգի հոլովանիշներով ձևավորված հիմքերի վրա՝ մարդկանց-ից, կանանց-ից, Հակոբենց-ից:

Գ. Միայն անհոլովանիշ հիմքերի վրա:

Այդպիսի հիմքերի դեպքում կարելի է առանձնացնել հետևյալ տարբերակիչ գործոնները.

ա) -ի հոլովման պատկանող գոյականներ (եզակի թվում). սեղան-ից, ծառ-ից, քաղաք-ից, փողոց-ից և այլն,

բ) ն հավելուրդային տարր ունեցող գրաբարյան միավանկ բառեր.

հարսն > հարս-ից, ծունկն > ծնկ-ից, եզն > եզ-ից, ձուկն > ձկ-ից և այլն,

զ) - ում(ն) վերջածանց ունեցող բառեր. ուսում(ն) > ուսում-ից, շարժում(ն) > շարժում-ից, արարում(ն) > արարում-ից,

դ) -ունք, -անք հավաքական (հոգնակի) ածանցներով վերջացող բառեր. ուսմունք-ից, շփոթմունք-ից, զարմանք-ից,

ե) գրաբարատիպ հոլովման պատկանող դուստր, կայսր բառեր. դուստր > դ(ու)ստր-ից, կայսր > կայսրից և այլն,

զ) - ություն ածանց ունեցող գոյականներ. ուրախություն-ից, քաջություն-ից, լավություն-ից և այլն,

է) - ուստ ածանց ունեցող գոյականներ. կորուստ - ից, պահուստ - ից:

Անշուշտ, -ից հոլովանիշի իրացման այլ պայմաններ ևս կան, սակայն մենք բավարարվենք դիտարկած դեպքերով:

2. - Ուց վերջավորությունը սովորաբար ավելանում է առաջին կարգի հոլովանիշներով ձևավորված հիմքերի վրա, հազվադեպ՝ անհոլովանիշ հիմքերի վրա:

ա) անհոլովանիշ հիմքեր. վաղ-ուց, մանկ(ություն)-ուց,

բ) ձևավոր հիմքեր. սրանք սովորաբար ստանում են ու հոլովում՝ ձի > ձի-ուց, այգի > այգ-ուց, կղզի > կղզ-ուց, օղի > օղ-ուց. մարդ բառի մարդ-ուց ձևը բացատրվում է պատմականորեն. մարդոյ + ց, փակ վանկում՝ ոյ > ու, հետևաբար՝ ոյց > ուց (հմմտ. գեկ - ոյց > գեկ - ուց - ել):

- Ուց հոլովանիշ ձևույթը գործառական սահմանափակումներ ունի:

Եթե -ից, -ուց հոլովանիշ թեքույթները դիտարկենք պատմական հայեցակետով, պետք է ասենք, որ դրանց ի, ու ձայնավոր տարրերը գրաբարյան հոլովիչներ են, իսկ ց մասնիկը՝ գրաբարյան հոլովակերտ, որ հանդիպում է գոյականի հոգնակի թվի թեք հոլովներում (սեռական-տրական և բացառական):

Հետևաբար պատճառը դա է, որ -ից վերջավորություն ստանում են այն բառերը, որոնք ենթարկվում են -ի հոլովման, իսկ հոգնակի թվում բոլոր գոյականներն են բացառականում ստանում -ից մասնիկ, նմանապես -ուց մասնիկն ավելանում է -ու հոլովման գոյականների ձևավոր հիմքին (ինչը տեսանք վերևում՝ ձի > ձի - ու + ց):

3. -Ով երկրորդ կարգի հոլովանիշ վերջավորությունն ավելանում է կա՛մ անհոլովանիշ հիմքերի, կա՛մ առաջին կարգի հոլովանիշներով ձևավորված հիմքերի վրա:

Ընդ որում, -ով վերջավորությունը գործառապես ակտիվ զուգորդելիություն է կազմում անհոլովանիշ հիմքերի հետ:

Եթե ի մի բերենք ժամանակակից հայերենում առկա հոլովական թեքույթների (առաջին և երկրորդ կարգի հոլովիչների) խմբերը, կարելի է ստանալ այդպիսի չորս խումբ (բացառելով զրո ձևույթի խումբը).

1) Ի հոլովանիշի խումբ (18 անդամով).

2) Ից մասնիկի խումբ (2 անդամով)։

3) Ով մասնիկի խումբ (2 անդամով)։

4) Ում մասնիկի խումբ (1 անդամով)։

Գրաբարում հոլովի քերականական կարգն արտահայտվում է վեց հոլովների միջոցով. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական։

Գոյականի հոլովական իմաստներն արտահայտվում են պարզ և խառը հոլովումների միջոցով, որոնք ունեն ներքին և արտաքին դրսևորումներ։

Գոյականի արտաքին հոլովումը *մասնիկավոր* հոլովում է. դրան պատկանում են Ա, Ի, Ո, ՈԻ (պարզ) և Ի-Ա, Ո-Ա (խառը) հոլովումները, ինչպես՝ տիտան – տիտան-այ, տիտան-ա-ց (Ա), որդի – որդու-ոյ, որդու-ո-ց (Ո), արքայ – արքա-յի, արքա-յի-ց (Ի), զարդ – զարդ-ու, զարդ-ու-ց (ՈԻ), քաղաք – քաղաք-ի – քաղաք-ա-ց (Ի-Ա), այգի – այգու-ոյ – այգե-ա-ց (Ո-Ա) և այլն։

Գոյականի *ներքին հոլովումը* բնութագրվում է թեքականությամբ. այդպես հոլովվում են Ա, Ե (պարզ), Ի-Ա (խառը) հոլովման պատկանող բառերը, ինչպես՝ ատամն – ատամ-ա-ն, ատամ-ա-ն-ց (Ա), դուստր – դստ-ե-ր, դստ-ե-ր-ց, դստե-ր-ա-ց (Ե), անձն – անձ-ի-ն – անձ-ա-նց (Ի-Ա) և այլն։

Գրաբարում կան որոշ բառեր, որոնք հոլովման համակարգում այլ օրինաչափություն են ցուցաբերում. դրանք հոլովական իմաստներն արտահայտում են արմատահնչյունի (կամ երկբարբառի) փոփոխության (ձայնդարձի կամ հերթագայության) միջոցով. Հմմտ. այր – առն, արք – արանց, հայր – հաւր, հարք – հարց – հարանց, մայր – մաւր, մարք – մարց, եղբայր – եղբօր, եղբարք – եղբարց, կին – կնոջ, կանայք – կանաց – կանանց, քոյր – քեռ, քորք – քերց, գիւղ – գեղջ, գիւղք – գիւղից և այլն։

Այս կարգի բառերը որոշ հոլովներում պահպանում են այդ հոլովներին բնորոշ հոլովակերտ մասնիկները, ինչպես՝ այր – յառն-է, արամ-բ, հայր – ի հօր-է, հար-բ, քորք – քեր-ց, գիւղք – ի գեղջ-է, գիւղի-ւ, գիւղի-ց, գիւղի-ւ-ք և այլն։

Այս կարգի բառերը, այսպես կոչված զարտուղի կամ անկանոն հոլովման գոյականները, գրաբարում պահպանել են նախագրային վիճակի կանոնավոր հոլովման հետքերը. դրանք անկանոն են համարվում կանոնավոր հոլովման հարացույցի համեմատությամբ։

ԱՇՏԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԻ ԿԱՐԳԸ - Հին հայերենում ածականն ունի անվանական հոլովում, հոլովվում է պարզ և խառը հոլովումներով, ենթարկվում է արտաքին թեքման։

Հմմտ. *բարձրագոյն* - *բարձրագուն-ի*, *բարձրագունից* (Ի հոլովում), *մարդկային* – *մարդկայն-ո-յ*, *մարդկայն-ո-ց*, *գիտուն* – *գիտն-ո-յ*, *գիտն-ո-ց* (Ո հոլովում), *բոցեղէն* – *բոցեղին-ի*, *բոցեղին-ա-ց* (Ի-Ա հոլովում), *աղանդաւոր* – *աղանդաւոր-ի*, *աղանդաւոր-ա-ց* (Ի-Ա հոլովում), *գեղանի* - *գեղանու-ո-յ*,

զեղանե-ա-ց (Ռ-Ա հոլովում), *լեզուանի* - *լեզուանու-ն-յ*, *լեզուանե-աց* (Ռ-Ա հոլովում) և այլն:

Ածական անվան հոլովական իմաստներն արտահայտվում են մասնիկավորման միջոցով. այդ հատկանիշով նա կրկնում է գոյականի թեքման օրինաչափությունը և տիպաբանական բնութագրով բավարարում է լեզուների ձևաբանական դասակարգման կցական կառուցատիպին:

Ժամանակակից հայերենում վերացել է ածական-գոյական համաձայնությունը, վերացել է նաև ածականի հոլովման քերականական կարգը: Արդի հայերենում ածականի հոլովումը պայմանավորված է փոխանվանական գործածության հանգամանքով, որ սահմանափակվում է շարահյուսական գործածության ոլորտով: Մյուս կողմից՝ ածական-գոյական տարաբժեք բառերը հոլովվում են, որ պայմանավորված է այդ բառերի գոյականական արժեքով, ինչպես՝ *բանակային* – ի, -ից, -ով, *զինվորական* – ի, -ից, -ով, *աղեղնավոր* – ի, -ից, -ով և այլն:

ԹՎԱԿԱՆԻ ՀՈԼՈՎԻ ԿԱՐԳԸ – Թվականի հոլովումը բնորոշ է հին հայերենին: Թվականները հոլովական իմաստներն արտահայտում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թեքման եղանակներով:

Ներքին թեքում ունեն որոշ քանակական թվականներ և անձներական թվականները: Հմմտ. *եւթն*, *եւթ-ա-ն*, *եւթ-ա-ն*, *(զ)եւթն*, *յեւթան-է*, *եւթ-ա-մ-ք*, *եւթան-ք*, *եւթ-ա-ն-ց*, *եւթ-ա-ն-ց*, *(զ)եւթան-ս*, *յեւթանց*, *եւթ-ա-(ն>)մ-ք-ք* (Ա հոլովում): *Տասն* – *տաս-ի-ն*, *տաս-ի-ն*, *(զ)տասն*, *ի տասն-է*, *տաս-ա-մ-ք*, *տասունք*, *տաս-ա-ն-ց*, *տաս-ա-ն-ց*, *(զ)տասուն-ս*, *ի տասանց*, *տասա-մ-ք-ք* (Բ-Ա):

Հին հայերենում **անձներական թվականները** հանդես են գալիս անհոլովակերտ (կարճ) և հոլովակերտով (երկար) ձևերով: Կարճ ձևերով թեքվում են *-եքին* ածանցով բառերը սեռական –տրական հոլովներում՝ *չորեքին* – *չորեք-ու-ն*, *չորեք-ու-ն*, հայցական՝ *(զ)չորեսին*: *-եքեան* ածանցով բառերը ունեն երկար ձևեր. նկատի ունենք այն հանգամանքը, որ հոգնակի սեռական-տրականում ստանում են –ց հոլովակերտը, որի ելակետային –ք տարրը չկա ուղղականում. *չորեքեան* – *չորե-ց-ու-նց*, *չորե-ց-ու-նց*, բացառական՝ *ի չորեցունց*: Հայցականը կանոնավոր կերպով կազմվում է ուղղականից՝ *(զ)չորեսեան*: Գործիականը միակ հոլովն է, որ պահպանում է կրկնակի –ք մասնիկը՝ որպես բուն հոգնակերտ տարր՝ *չորե-ք-ում-ք-ք*:

Թվականի համակարգում քերականական իմաստներն *արտաքին թեքմամբ*՝ *մասնիկավորմամբ* են արտահայտում քանակական և դասական թվականները:

Քանակական թվականները ենթարկվում են անվանական հոլովման. թեքվում են պարզ և խառը հոլովմամբ, ունեն ներքին և արտաքին թեքում:

Հմմտ. *մի- մի-ն-յ* // *մի-ն-ջ*, *մի-ում* // *մի-ն-ջ*, *(զ)մի*, *ի միոջ-է*, *մի-ն-վ* (Ռ

հոլովում): *Երկու - երկու-ց* (Ու հոլովում), *երեք - եր-ի-ց* (Ի ոլովում), *չորք - չոր-ի-ց* (Ի հոլովում), *հինգ - հնգ-ի, հնգ-ի-ց* (Ի հոլովում), *երեսուն - երեսն-ի, երեսն-ի-ց* (Ի հոլովում) և այլն: *Հարեւր- հարիւր-ն-յ, ութհարեւր, ութհարիւր-ն-յ* (Ո հոլովում), *բեր- բիւր-ու, բիւր-ու-ց* (Ու հոլովում):

Հարադրական կազմության թվականները հոլովվում են երկու կերպ. կա՛մ հոլովվում է վերջին բաղադրիչը, կա՛մ բոլոր բաղադրիչները միասին, հմմտ. *երեսուն եւ երեք- երեսուն եւ եր-ի-ց, երեսն-ի-ց եւ եր-ի-ց* (Ի հոլովում):

Դասական թվականները բացարձակ գերակշռությամբ հոլովական իմաստներն արտահայտում են մասնիկավորման եղանակով: Հմմտ.

Առաջին - առաջնոյ, առաջնոց (Ո հոլովում), *երկրորդ - երկրորդի, երկրորդի // երկրորդում, երկրորդաց* (Ի-Ա հոլովում) և այլն:

Դասական թվականների հոլովումն իրականանում է մասնիկավորման եղանակով. մասնիկավորումը դասական թվականների տիպաբանական հատկանիշն է, ինչպես՝

ԴԵՐԱՆՎԱՆ ՀՈԼՈՎԻ ԿԱԳԸ – Հին հայերենում *դերանվան հոլովական* իմաստները մասնիկավորմամբ արտահայտում են ստացական, փոխադարձ, հարցական և հարաբերական դերանունները, ինչպես նաև որոշյալ դերանունների մի մասը: Հմմտ.

Ստացական դերանուններն են՝ իմ, քո, քոյ, իւր, մեր, ձեր, որոնք առաջացել են անձնական դերանունների սեռական հոլովաձևերից և դարձել սկզբնաձևեր:

իմ, իմ-ն-յ, իմ-ում, զիմ, յիմ-է, իմ-ն-վ,
քո, քո-յ, ք-ում, զքո, ի քում-է, ք-ն-վ,
քոյ, քոյ-ն-յ, քոյ-ում // քոյ-ն-յ, զքոյ, ի քոյոյ, քոյ-ն-վ,
իւր, իւր-ն-յ, իւր-ում, զիւր, յիւր-է, իւր-ն-վ,
մեր, մեր-ն-յ, մեր-ում, զմեր, ի մեր-է, մեր-ն-վ,
ձեր, ձեր-ն-յ, ձեր-ում, զձեր, ի ձեր-է, ձեր-ն-վ:

Հոգնակի թվի քերականական իմաստն արտահայտվում է –ք հոգնակերտ մասնիկի միջոցով, որը թեք ձևերում ենթարկվում է ք-ց հերթագայության, հոգնակի հայցականում՝ ք-ս.

իմ-ք, իմ-ն-ց, իմ-ն-ց, զիմ-ս, յիմոց, իմ-ն-վ-ք,
քոյ-ք, քոց // քոյոց, քոց // քոյոց, զքոյ-ս, ի քոց // ի քոյոց, քո-վ-ք // քոյ-ն-վ-ք,

իւր-ք, իւր-ն-ց, իւր-ն-ց, զիւր-ս, յիւրոց, իւր-ն-վ-ք,
մեր-ք, մեր-ն-ց, մեր-ն-ց, զմեր-ս, ի մերոց, մեր-ն-վ-ք,
ձեր-ք, ձեր-ն-ց, ձեր-ն-ց, (զ)ձեր-ս, ի ձերոց, ձեր-ն-վ-ք:

Փոխադարձ դերանունները՝ միմեանց, իրերաց, որոնք չունեն եզակի թիվ և հոգնակի ուղղական հոլով: Դրանք հոլովվում են անվանական հոլովմամբ՝ *Ս հոլովիչով*, ինչպես՝ միմե-ա-ն-ց, միմե-ա-ն-ց, (զ)միմե-ա-ն-ս, ի մի-

մեանց, միմե-ա-մ-բ-ք, իրեր-ա-ց, իրեր-ա-ց, (զ)իրեար-ս, յիրերաց, իրեր-ա-ւ-ք (օք):

Հին հայերենի *որոշյալ դերանունների* մի մասն ունի մասնիկավոր հոլովում. *ամենայն* (միայն եզակի թվով) և *խրաքանչիւր* դերանունները (մյուսներն ունեն ներքին թեքման օրինաչափություն):

Հմմտ. *ամենայն, ամենայն-ի, ամենայն-ի* (Ի հոլովում), *խրաքանչիւր-ո-յ, խրաքանչիւր-ոց* (Ո հոլովում), *այլ - այլ-ո-յ, այլ-ո-ց, միւս, միւս-ո-յ* (Ո հոլովում) և այլն:

Հետևաբար, անուն խոսքի մասերի հոլովական իմաստները հիմնականում դրսևորվում են *մասնիկավորման եղանակով*:

Գոյականի ձևաբանական համակարգում պարզ և խառը հոլովումները բնորոշվում են ներքին և արտաքին թեքման տիպերով, սակայն արտաքին թեքման քննությունը առավել ընդգրկուն դրսևորում ունի. գոյականի բոլոր հոլովները (բացառությամբ եզակի ուղղական և հայցական հոլովների) բնորոշվում են մասնիկավորմամբ. ընդ որում՝ ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն հոլովումները (վերջիններիս մի մասը միայն): Ածականի հոլովական համակարգը միանշանակ կցական կառուցատիպ ունի, որ ներառում է ինչպես պարզ, այնպես էլ խառը հոլովումները:

Թվականի հոլովական համակարգը հատկանշվում է ներքին և արտաքին թեքման տիպաբանությամբ, սակայն արտաքին թեքման քննությունը ցույց է տալիս, որ թվականների թեքման հիմնական եղանակը դարձյալ մասնիկավորումն է, որ բնորոշ է քանականական և դասական թվականներին:

Դերանունները թեքման յուրահատակություն են ցուցաբերում՝ ենթարկվելով անվանական, դերանվանական և անվանական-դերանվանական հոլովումների (Տե՛ս **Դերանվանական հոլովում** բառահոդվածը):

Հոլովական իմաստների արտահայտման մասնիկավորման եղանակը կցական կառուցատիպի լեզուներին բնորոշ ձևաբանական հատկանիշ է, որ, իշխող մասով տարածվում է նաև հին հայերենի անուն խոսքի մասերի հոլովական համակարգերի վրա:

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ - Հոլովման համակարգում երբեմն քերականական իմաստներն արտահայտվում են *բառի հիմքի փոփոխության (տարահիմքության) միջոցով*. այն հատուկ է դերանուն խոսքի մասին, ուստի հոլովման այդ տիպը կոչվում է *դերանվանական հոլովում*: Դերանվան համակարգում տարահիմքությունը գործում է անձնական, անորոշ և հարցական դերանունների (կամ նրանց մի մասի) թեքական ձևերում: Ընդ որում՝ այդ կարգի բառերի հոլովումը կատարվում է *տարահիմքության միջոցով, որ ուղեկցվում է մասնիկավորմամբ*: Վերոնշյալ դերանունների հոլովման համակարգում տարահիմքությունը գործում է սեռական-տրական հոլովներ-

րում, իսկ բացառական և գործիական հոլովներում միանշանակ գործում է մասնիկավորումը:

Անձնական դերանվան առանձնահատկությունը հոլովակազմության մեջ այն է, որ սեռական և տրական հոլովները կազմվում են ոչ միանշանակ. յուրաքանչյուր հոլով ցուցաբերում է տարահիմքություն, հմմտ. *ես-իմ- ինձ, դու- քո- քեզ, նա- նորա- նմա*: Հոգնակի թվում այդ սկզբունքը գործում է առաջին և երկրորդ դեմքում, ինչպես՝ *մեք – մեր – մեզ, դուք – ձեր – ձեզ*: Երրորդ դեմքի դերանունը հոգնակի թվում ցուցաբերում է անվանական հոլովման օրինաչափություն. տրականը կազմվում է սեռականի նման. հոլովական իմաստներն արտահայտվում են ք-ց հերթագայության միջոցով. *նոքա – նոցա*:

Անորոշ իմն, ինչ դերանունները հոլովվում են միայն եզակի թվով և հոլովական իմաստներն արտահայտում են տարահիմքությամբ. սեռական-տրականում փոխվում է հոլովական հիմքը՝ *իմն – իրիք, իմիք, ինչ – իրիք, իմիք*, բացառականը մասնիկավոր կազմություն ունի՝ *յիմենն-է, յիմեք-է*: Գործիական հոլովը պակասավոր հարացույց է *իմն* դերանվան դեպքում, իսկ *ինչ* դերանունն ունի *իւիք* ձևը:

Հարցական զի՞, զի՞նչ դերանունները հոլովվում են միայն եզակի թվով, սեռական և գործիական հոլովներում ունեն ընդհանուր ձևեր: Սեռական-տրականում հոլովի քերականական իմաստներն արտահայտվում են տարահիմքության եղանակով: Հմմտ.

զի՞ // զի՞նչ – է՞ր, ի՞մ // հի՞մ // էրո՞ւմ: (*է՞ր, ի՞մ* ձևերում, կարծում ենք, կարելի է առանձնացնել սեռականի –ր, տրականի –մ տարբերը, որոնք հանդես են գալիս դերանվան հոլովման համակարգում (այս-ր, այս-ո-ր-իկ, այս-մ, այս-մ-իկ և այլն):

Բացառական և գործիական հոլովներում գործում է մասնիկավորումը. մասնիկներն ավելանում են տարահիմք հոլովաձևերի վրա, ինչպես՝ *յիմ-է՞ // առ իմ-է՞ // զմ-է՞, ի՞-ւ* (վերջին դեպքում տեղի է ունեցել է>ի հնչյունափոխություն):

Դերանունների հոլովման համակարգում կարելի է առանձնացնել, այսպես կոչված, *խառը տիպ*, որ ունի հետևյալ դրսևորումները՝ ներքին թեքում – մասնիկավորում, տարահիմքություն – մասնիկավորում, ներքին և արտաքին թեքումների հերթագայություն (եզակի և հոգնակի թվերում), դերանվանական հոլովում – անվանական հոլովում և այլն:

ա) **Ներքին թեքում – մասնիկավորում** - Այդպիսի հոլովում ունեն ցուցական դերանունները, որոնց եզակի թվի սեռական-տրական հոլովներում օրինաչափորեն հանդես են գալիս համապատասխանաբար –ր և –մ ձայնորդները. –ց ձայնորդից առաջ հանդիպում է –ո- ձայնավորը, որ կատարում է հոլովիչի դեր: Հմմտ.

սա, ս-ո-ր-ա, ս-մ-ա, դա, դ-ո-ր-ա, դ-մ-ա, նա, ն-ո-ր-ա, ն-մ-ա:

Բացառական և գործիական հոլովները մասնիկավոր կազմություններ են՝ համապատասխան հոլովական հիմքերով (տրականով և սեռականով), հմմտ. ի սմա-ն-է, ի դմա-ն-է, ի նմա-ն-է, սո(ր>)վա-ւ, դո(ր>)վա-ւ, նո(ր>)վա-ւ:

բ) **Տարահիմքություն – մասնիկավորում** - Հարցական *ո՞, ո՞վ* դերանունների եզակի թվի թեք հոլովաձևերը և հոգնակի թիվը ընդհանուր են. եզակիում հոլովվում են տարահիմքությամբ, հոգնակիում՝ մասնիկավորմամբ: Հմմտ.

ո՞ // ո՞վ – ո՞յր – ո՞ւմ – զո՞ // յում-է՞. գործիականը պակասավոր հարացուցային ձև է:

Հոգնակին ենթարկվում է անվանական հոլովման՝ հոլովի իմաստներն արտահայտելով մասնիկավորման եղանակով, հմմտ. *ո՞յ-ք – ո՞յ-ց – ո՞յ-ց – (զ)ո՞յ-ս – յո՞յ-ց*. հոգնակի թվում գործիականը պակասավոր ձև է:

գ) **Ղերանվանական հոլովում – անվանական հոլովում** - Այդպիսի հոլովում ունեն *ո՞, ո՞վ* հարցական դերանունները, որոնք եզակի թվում ունեն ընդհանուր հոլովաձևեր, ցուցաբերում են հոլովական տարահիմքություն, գործիական հոլովը պակասավոր հարացուցային ձև է, և միայն բացառականն է կազմվում մասնիկավորմամբ՝ տարահիմք հոլովական կառուցատիպով: Հմմտ.

ո՞ // ո՞վ – ո՞յր – ո՞ւմ – զո՞ – զո՞վ – յումէ՞:

Հոգնակի ուղղականը կազմվում է եզակի սեռականից -ք հոգնակերտ մասնիկի միջոցով, սեռական-տրականում գործում է ք-ց, հայցականում՝ ք-ս հերթագայությունը՝ հոլովական իմաստներն արտահայտելու համար: Հմմտ.

ո՞յ-ք, ո՞յ-ց, ո՞յ-ց, (զ)ո՞յս, յո՞յ-ց:

Գործիականը (եզակի և հոգնակի թվում) պակասավոր հարացուցային ձև է:

Անորոշ դերանուններից հոլովման այդ տիպով են թեքվում *ումն, ոք* դերանունները, որոնք եզակի թվում պատկանում են ղերանվանական (տարահիմք) հոլովման, իսկ հոգնակի սեռական-տրականում և հայցականում հոլովական իմաստներն արտահայտվում են ք-ց և ք-ս հերթագայությունների միջոցով, գործիականը մասնիկավոր կազմություն ունի: Հմմտ.

ումն – ուրումն – ումեմն – (զ)ումն – յումեմն-է, ումամ-ք,

ոք – ուրուք – ումեք – (զ)ոք – յումեք- է,

ուման-ք – ուման-ց – ուման-ց – (զ)ուման-ս – յումանց, ումամ-ք-ք:

Ոք ղերանվան եզակի գործիականը պակասավոր հարացուցային ձև է:

Ինչպես ցույց է տալիս հին հայերենի հոլովական համակարգի արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցված քննությունը, հոլովական համակարգում գործում է քերականական իմաստների արտահայտման յուրահատուկ՝ *խառը տիպ*, որ ներառում է լեզվական-քերականական տարբեր միջոցներ, ինչպես՝ ներքին թեքումն ու մասնիկավորումը, տարահիմքությունն ու մասնիկավորումը, ղերանվանական և անվա-

նական հոլովումները և այլն: Դա հոլովման յուրահատուկ տիպ է, որ կարևորվում է լեզվի ձևաբանական տիպաբանությունը բնութագրելու հարցում:

ՀՈԼՈՎԻ ԿԱՐԳԸ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ – Հոլովի քերականական կարգը տարբեր լեզուներում ունի տարբեր քանակի կարգային անդամներ և արտահայտության տարբեր միջոցներ:

Ռուսերենն ունի վեց հոլով, որոնցից հինգը համապատասխանում են հայերենին. դրանք են՝ *именительный* – ուղղական, *родительный* – սեռական, *дательный* – տրական, *винительный* – հայցական, *творительный* – գործիական: Ռուսերենն ունի նաև *предложный падеж* (նախդիրիվ հոլով), որը “о” և “об” նախդիրներով ցույց է տալիս առարկայի մասին խոսելու, մտածելու և նմանատիպ գործողություններ (говорить о книге – խոսել գրքի մասին), իսկ “в” և “на” նախդիրներով ցույց է տալիս հայերենի ներգոյական հոլովի նշանակություն. *сиджу в комнате* – նստած եմ սենյակում, *работаю на заводе* – աշխատում եմ գործարանում և այլն:

Ռուսերենում տարբերակում են հոլովման երեք տիպ.

Առաջին հոլովման պատկանում են ուղղականում իգական և արական սեռերի *а* և *я* վերջավորություն ունեցող գոյականները. օրինակ՝ *сестра, стена, воля, папа, пуля*. այս հոլովման բառերը սեռականում ունենում են *ы* կամ *и* վերջավորություն. օրինակ՝ *сестра – сестры, воля – воли*.

Երկրորդ հոլովման պատկանում են արական սեռի բոլոր գոյականները և ուղղականում չեզոք սեռի *о* և *е* վերջավորություն ունեցող գոյականները, օրինակ՝ *стол, кот, сад, край, сарай, олень, море, поле*. այս հոլովման բառերը սեռականում ունենում են *а* կամ *я* վերջավորություն, օրինակ՝ *кот – кота, край – края*.

Երրորդ հոլովման պատկանում են իգական սեռի այն գոյականները, որոնք ուղղականում ունեն փափուկ բաղաձայն վերջավորություններ, և որոնց սեռականն ունենում է *и* վերջավորություն, օրինակ՝ *степь – степи, ткань – ткани, ночь – ночи, любовь – любви, рож – ржи* և այլն:

Հատիներենում հոլովի քերականական կարգը ունի վեց կարգային անդամ՝ ուղղական (*nominativus*), սեռական (*genetivus*), տրական (*dativus*), հայցական (*accusativus*), արևատիվուս (*ablativus*) և կոչական (*vocativus*).

Հատիներենում նույնպես հոլովական իմաստները դրսևորվում են մասնիկավորմամբ: Ընդ որում, լատիներենում տարբերակվում է հոլովման հինգ տիպ՝ ըստ սեռական հոլովի համապատասխան վերջավորությունների: Այսպես՝

1-ին հոլովում - *ae. tabulă – tabulae, amica – amicae, femina – feminae, luna – lunae, Armenia – Armeniae, medicina – medicinae, biologia – bioilogiae*

2-րդ հոլովում -*ī. lupus – lupī, angulus – angulī, servus – servī, vespēr – vesperī, vir – virī, magister – magistrī, verbum – verbī, argentum – argentī,*

3-րդ հոլովում- իs. orātor – orātorīs, consūl- consūlīs, tempus – tempōrīs, frater – fratīs, homo – hominīs, labor – labōrīs, māter – mātīs,

4-րդ հոլովում -ūs. fructus – fructūs, habitus –habitūs, defectus- defectūs, spīritus – spīritūs, domus –domūs,

5-րդ հոլովում - ēī. rēs – rēī, cariēs –cariēī, fidiēs – fidiēī, seriēs – seriēī, speciēs – speciēī.

Գերմաներենում հոլովի քերականական կարգը ունի չորս կարգային անդամ՝ ուղղական (nominativus), սեռական (genetivus), տրական (dativus), հայցական (accusativus): Հոլովի քերականական իմաստ արտահայտում են նախդիրներն ու համապատասխան վերջավորությունները. քերականական իմաստի դրսևորման ցուցիչները պամանավորված են գոյականի անվանական սեռով:

Պայմանավորված եզակի սեռականում գործող վերջավորություններով՝ գերմաներենում առանձնացնում են գոյականի հոլովման չորս տիպ.

ա) ուժեղ հոլովում (սեռականում գոյականն ունի –(e)s վերջավորություն).

der Tag - des Tag(e)s, der Shüler – des Shüler-s,

բ) թույլ հոլովում (սեռականում գոյականն ունի –(e)n վերջավորություն).

der Knabe – des Knabe-n, der Held – des Held-en,

գ) իզական հոլովում (սեռականում գոյականը վերջավորություն չունի).

die Frau – der Frau, die Fauna – der Fauna,

դ) խառը հոլովում (սեռականում գոյականն ունի –(e)ns վերջավորություն, տրականում և հոգնակի թվում՝ –(e)n. der Name – des Namens – dem Namen – den Namen).

Հոլովի կարգի դրսևորման այլ միջոցներ - Հոլովումը, որպես բառափոխական կարգ, արտահայտվում է վերջավորություններով, սակայն որոշ լեզուներում առկա են նաև այլ միջոցներ.

ա) նախդիրները և նախադրությունները, որոնք մասնավորեցնում, որոշակիացնում են հոլովածների իմաստները.

գրաբար. գ+արքայ, գ+արքայէ, ի տան, առ Հայկ, առ բանակաւ, ըստ օրինակի, ընդ աստեղօք, ց+արքայն, վասն Վարդանայ, յաղագս Շամիրամայ, որպէս զարծուի, պէս օձից,

լատին. per aspera, ad astra, pro senatus, sub lingua, in vino, ex libris,

գերմ. für drei Tage, zu Schule, nach Moskau, durch die Stadt,

անգլ. on the table, under the table, in the city, from the city, for the work, after the work,

ռուս. стена – около стены, в стене, за стеной, дворец – в дворце, к дворцу, перед дворцом, он – для него, мимо него, возле них.

բ) ձայնդարձն ու հերթագայությունը. ухо – ушей, любов – любви.

գ) շեշտը. го́ры – горы́, а́дреса – адреса́, о́рдера – ордера́, ре́ки – реки́.

Անգլերենում հոլովի քերականական կարգն ունի երկու կարգային անդամ՝ ուղղական և սեռական (ստացական). ընդ որում՝ սեռական հոլովի քերականական իմաստն արտահայտվում է երկու եղանակով՝ կա՛մ՝՝s մասնիկով, կա՛մ of սպասարկու բառով, ինչպես՝ *pages of book*, *colour of picture*, *professor's lecture* – the lecture *of professor*, the *Shahumyan's square* – square *of the Shahumyan* և այլն:

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ - Առկայացման քերականական կարգն արտահայտում է առարկայի առկայացման հարաբերությունը խոսողության մասնակիցների՝ հաղորդակցվող կողմերի նկատմամբ: Որպես իմացաբանական ըմբռնում՝ առկայացումը լեզվի մեջ դրսևորվում է բառայնորեն կամ քերականորեն, երբեմն էլ այն մնում է արտակառուցվածքային մակարդակում: Առկայացման կարգը բնորոշ է գոյականին. հայերենում քերականական առկայացումն իրացվում է հոդերով, և ըստ այդմ՝ այն հայտնի է նաև *հոդային առումներ* կամ *հոդի կարգ* անվանումներով:

Լեզվաբանական նորագույն ուսումնասիրություններում նկատում են, որ ժամանակակից հայերենում առկայացման քերականական կարգն ունի երկու ենթակարգ՝ որոշյալության և ցուցաստացականության:

ՈՐՈՇՅԱԼՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՐԳ – Որոշյալության ենթակարգն արտահայտության պլանում նշույթավորված է և բնորոշվում է -ը, -ն որոշիչ վերջավորությունների կամ հոդերի առկայությամբ և սրա հետ կապված Օ/ը, Օ/ն հակադրություններով (սեղան-սեղան-ը, փեսա-փեսա-ն):

ՀՈԴԱՌՈՒԹՅՈՒՆ - Ժամանակակից հայերենում -ն հոդի գործառույթները պայմանավորված են բառի վերջնականի տեսակով և շարահյուսական միջավայրով:

Ա. Հայերենում բաց վանկով (ձայնավորով) վերջացող բառերն ստանում են ն հոդանիշ մասնիկը:

Հայերենում արդյոք բոլոր ձայնավորները հանդիպում են բառի վերջում: Հարցն այն է, որ բառավերջում հանդիպում են *ա, ի, է, է, ու, ո* ձայնավորները, որոնց կարող է հաջորդել միայն ն հոդը. հմմտ. արքա-ն, պատանի-ն, ափսե-ն, մանրե-ն, կատու-ն:

Ո ձայնավորը հանդիպում է հատուկ անունների վերջում՝ Կամո-ն, Սարո-ն, Մարո-ն և այլն:

Ժամանակակից հայերենում *օ* և *ը* ձայնավորները բառավերջում հանդես գալ չեն կարող:

Բ. Ն հոդի գործածությունը պայմանավորված է նաև հոդառու բառի շարահյուսական միջավայրով: Այդ միջավայրում որոշիչ դեր ունի հնչե-

րանգային գործոնը. այստեղ *ն* - ն փոխարինում է *ը* հոդին: *Ը* հոդառու բոլոր այն բառերը, որոնք նախորդում են ձայնավորով սկսվող բառերի, ստանում են *ն* հոդ:

Ը հոդանիշ մասնիկով կաղապարների հիմքերը կարող են լինել երկանդամ և եռանդամ: Տվյալ դեպքում նկատի ունենք հիմքի կառուցվածքը մի դեպքում՝ հոլովանիշ մասնիկների, մյուս դեպքում՝ թվանիշ մասնիկների, երրորդ՝ թվանիշ և հոլովանիշ մասնիկների առկայությամբ:

1) *Ը* հոդը կարող է դրվել հոլովանիշ թեքությունների վրա. նման դեպքերում այն հարաբերակցում է բաղադրյալ (երկանդամ) հիմքերի հետ: Հմտ.

- | | |
|---------------|------------------|
| 1. գարնան-ը | 7. մահվան-ը |
| 2. խոստման-ը | 8. հոր-ը |
| 3. թոռան-ը | 9. դստեր-ը |
| 4. կորստյան-ը | 10. մանկության-ը |
| 5. քրոջ-ը | 11. անվան-ը |
| 6. օրվա-ն | |

2) *Ը* հոդը կարող է դրվել թվանիշ մասնիկ(ներ) ունեցող երկանդամ հիմքերի վրա և եզրափակել կաղապարը.

- ա) ծառ-եր-ը
- բ) բ(ը)ն-եր-ը
- գ) թոռն-եր-ը
- դ) մ(ը)կն-եր-ը

Առկայացման քերականական կարգում *ը* հոդը յուրահատուկ դրսևորում ունի այսպես կոչված «փոխանուն սեռականի» կառուցվածքում, ինչպես՝ Վազգենին-ը, Վազգենին-ի-ն, Վազգենին-ից, Վազգենին-ով, Վազգենինում:

«Փոխանուն սեռականը» միակ դեպքն է, երբ հոլովական վերջավորությունները հանդիպում են որոշիչ (ն) հոդից հետո :

Բառական միջոցներ - Որոշյալության ենթակարգն արտահայտվում է նաև բառական միջոցներով, այդ դերով հանդես են գալիս որոշյալ դերանունները, որոնց հակադրվում է անորոշ դերանունների իմաստային խումբը:

Այսպես, գրաբարում որոշյալ առման իմաստն արտահայտում են *ամենքին, ամենքեան, բոլորեքին, բոլորեքեան* և *ամենայն* դերանունները, որոնց հակադրվում են *ոմն, ոք, իմն, ինչ, այլ, միւս* անորոշ դերանունները:

Ռուսերենում որոշյալ առման հատուկ ցուցիչներ չկան, որոշյալության ենթակարգն արտահայտվում է ցուցական դերանունների միջոցով (ընդ որում՝ անվանական սեռի համաձայնությամբ): Որոշյալության իմաստ են արտահայտում հետևյալ դերանունները՝ *сам, самый, весь /всё, вся/, всякий, каждый, всячески, всяк*, անորոշ առման իմաստ՝ *некто, нечто, ничей, неко-*

торый, некий, кто-то, что-то, какой-то, чей-то, кто-либо, что-либо, какой-либо, кто-нибудь, чей-нибудь, кое-кто, кое-что դերանունները և այլն:

Նախդրագործածություն - Հնդեվրոպական մի շարք լեզուներում որոշյալության ենթակարգն արտահայտվում է սպասարկու բառերի (նախդիրների) միջոցով: Օրինակ, անգլերենում և գերմաներենում գործում են հոդանիշ որոշակի մասնիկներ, որոնք հակադրություն են կազմում անորոշ առման մասնիկների հետ:

Անգլերենում անորոշ առման ցուցիչներ են *a (an)* հոդերը և մի անորոշ դերանունը՝ *one*. հմտ. *a book, a map, an apple, one book, one day* և այլն:

Որոշյալ առման ցուցիչն է *the* - *the book, the map, the apple* և այլն:

Որոշյալ առումն արտահայտվում է նաև ցուցական դերանունների միջոցով, ինչպես՝ *this book, that book* և այլն:

Գերմաներենում որոշյալ - անորոշ առումների հակադրություն ստեղծում են *ein(e)* անորոշ դերանունը և *der, die, das* հոդերը.

ein Bauer - der Bauer, ein Arbeiter - der Arbeiter,

eine Frau - die Frau, eine Hochzeit - die Hochzeit,

ein Buch - das Buch, ein Sprachforscher - der Sprachforscher

ՍՏԱՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՐԳ - Ստացականության ենթակարգն արտահայտության պլանում բնորոշվում է *ս, ղ* (երբեմն էլ՝ *ը, ն*) մասնիկների կամ հոդերի առկայությամբ:

Հոդանիշ մասնիկներ - Հոդանիշ մասնիկները՝ որպես առկայացման կարգի արտահայտման միջոցներ, բովանդակության պլանում արտահայտում են ստացականության իմաստ:

Այս բոլոր իմաստների մեջ գլխավորը և ծագմամբ առաջնայինը ցուցական իմաստն է. *ս, ղ* հոդերը ծագում են *այս, այդ* (և *սա, դա*) ցուցական դերանուններից և համընկնում են նրանց արմատական բաղաձայններին (*այս, սա - ս, այդ, դա - դ*):

Ս, ղ հոդերի ցուցական իմաստների վրա երկրորդաբար աճել է ստացական իմաստը: Ստացական առումն արտահայտում է պատկանելության հարաբերություն: Այդ հոդերը հարաբերակից են ստացական դերանուններին կամ անձնական դերանունների սեռական հոլովաձևին. հմտ. *իմ գիրքը > գիրքս, քո գիրքը > գիրքդ*:

Ս, ղ հոդերի արտահայտած դիմորոշ իմաստն արդյունք է անձնական (անձնանիշ) դերանունների հետ անունների համաձայնելու (ես՝ աշակերտս). ընդ որում հոդով օժտված անունը կարող է անկախ գործառնությունենալ:

Դիմորոշ առումը կապված է դիմայնության գաղափարի հետ: Նախապես այդ հոդերն ունեցել են իմաստագործառական ընդհանրություն, որոնց տարբերակող հատկանիշը եղել է դիմայնության իմաստը, որ ցույց է

տալիս հարաբերություն տվյալ դեմքի նկատմամբ: Ըստ այդմ՝ *ս* հոդը ցույց է տալիս հարաբերություն առաջին դեմքի (ես-ի) նկատմամբ, *դ* հոդը՝ երկրորդ դեմքի (դու-ի), *ն* հոդը՝ երրորդ դեմքի (նա-ի) նկատմամբ:

Ժամանակակից գրական հայերենում *ս*, *դ* հոդերը գործածվում են համապատասխան անձնական դերանունների հետ միասին՝ դառնալով նրանց բացահայտիչը: Հմմտ. ես՝ աշակերտս, մենք՝ աշակերտներս, դու՝ աշակերտդ, դուք՝ աշակերտներդ և այլն:

Ստացական դերանուններ - Ստացականության ենթակարգը լատիներենում, գրաբարում, ռուսերենում և այլ լեզուներում արտահայտվում է ստացական դերանունների միջոցով:

Հատիներենում ստացական դերանուններն ունեն սեռի քերականական կարգ. *meus, mea, meum* (իմ), *tuus, tua, tuum* (քո), *suus, sua, suum* (նրա), հոգնակին՝ *noster, nostra, nostrum* (մեր), *vester, vestra, vestrum* (ձեր): Հմմտ. *Pater noster, qui in caelis est, sanctificetur nomen tuum, veniat regnum tuum, fiat voluntas tua....*

Գրաբար. իմ, քո, քոյ, իւր, մեր, ձեր, իմք, քոյք, իւրք, մերք, ձերք, որոնք հոլովով և թվով համաձայնում են լրացյալ գոյականների հետ, ինչպես՝ *ի ծննդէ իմմէ, ի ծննդէ քոյոյ, ի ծննդէ իւրմէ, ի ծննդէ մերմէ, ի ծննդոց իմոց, ի ծննդոց քոյոց, ի ծննդոց իւրոց, ի ծննդոց մերոց* և այլն:

Ռուսերեն. мой, наш, твой, ваш, свой. այս դերանունները տարբերակվում են սեռով, հոլովվում են ածականների նման, փափուկ վերջավորությամբ. ինչպես՝ мой, моего, моему..., моя, моей, мою..., моё, моего, моему....

Անգլերենում ստացականության քերականական կարգն արտահայտվում է անձնական դերանունների սեռական հոլովաձևերով (անգլերենը չունի ստացական դերանուններ): Հմմտ.

I – my, You – Your, we – our, they – their.

Եզակի երրորդ դեմքում տարբերակվում են անվան սեռի կարգով. he – his, she – her, it – its:

ԲԱՅԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ - Լեզուներում ընդհանրապես առանձնացնում են բայական և ստորոգական հետևյալ կարգերը՝ եղանակ, կերպ, ժամանակ, դեմք, թիվ, սեռ և դաս:

ԵՂԱՆԱԿԻ ԿԱՐԳ - Բառափոխական բայական քերականական կարգ, որ ցույց է տալիս կա՛մ տվյալ գործողության հարաբերությունը օբյեկտիվ իրականության նկատմամբ, կա՛մ խոսողի վերաբերմունքը տվյալ գործողության նկատմամբ: Գործողության և իրականության հարաբերության առումով նկատի է առնվում, որ այդ գործողությունը մտածվում է իբրև ստույգ կատարվող, կատարված կամ կատարելի, իսկ խոսողի և իրականու-

թյան հարաբերության առումով՝ այն, որ խոստողը կարող է պարզապես հաղորդել նրա մասին, կարող է ցանկություն հայտնել այն կատարելու, կարող է հրամայել ուրիշին այն կատարելու կամ չկատարելու և այլն:

Տարբեր լեզուներում եղանակի կարգը տարբեր կարգային անդամներ ունի: Լեզուներում տարբերակում են 3-5 եղանակ:

Այսպես, գրաբարում, լատիներենում, ռուսերենում, անգլերենում և գերմաներենում բայն ունի երեք եղանակ, իսկ ժամանակակից հայերենում՝ հինգ եղանակ:

Բոլոր լեզուներում բայի երեք եղանակներն ունեն ընդհանուր անվանումներ՝

1. *սահմանական* (լատ. *modus indicativus*, ռուս. *изъвательное наклонение*, անգլ. *indicative mood*, գերմ. *Indicativ*),

2. *ստորադասական* (լատ. *modus coniunctivus*, ռուս. *сослагательное наклонение*, անգլ. *subjunctive mood*, գերմ. *Subjunctiv*),

3. *հրամայական* (լատ. *modus imperativus*, ռուս. *повелительное наклонение*, անգլ. *imperative mood*, գերմ. *Imperativ*):

Գրաբարի ստորադասական եղանակը ժամանակի ընթացքում տրոհվել է երեք եղանակի, և արդի հայերենում բայն ունի հինգ եղանակ՝ սահմանական, ըզձական, ենթադրական, հարկադրական և հրամայական:

Բայի եղանակը ցույց է տալիս խոստղի վերաբերմունքը գործողության կամ եղելության նկատմամբ. այդ վերաբերմունքը կարող է լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ: Ըստ այդմ՝ եղանակները բաժանվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ տեսակների:

Սահմանական եղանակը օբյեկտիվ եղանակ է. այն ցույց է տալիս իրականության մեջ ստույգ կատարվող, կատարված կամ կատարելի գործողություն, այն դուրս է խոստղի ցանկությունից և կարող է իրականանալ բոլոր ժամանակներում՝ ներկա, անցյալ և ապառնի, ունի գործողություն կատարողի բոլոր թվերն ու դեմքերը:

Սահմանական եղանակն ունի վեց վերլուծական և մեկ համադրական ժամանակաձև: Վերլուծական ժամանակները կազմվում են դերբայ+օժանդակ բայ կադապարով, իսկ համադրականը՝ բայափոխով և վերջավորություններով.

գրում՝ խաղում եմ - էի

գրելու՝ խաղալու եմ - էի

գրել՝ խաղացել եմ - էի

Համադրական ժամանակաձև. գրեցի՝ խաղացի - գրեցինք՝ խաղացինք:

Մնացած եղանակները սուբյեկտիվ եղանակներ են (կախում ունեն խոստղի կամքից) և կազմվում են բայի առաջին (անորոշ դերբայի) հիմքից՝ համապատասխան խոնարհման վերջավորություններով:

Ըղձական եղանակ. գրեմ - գրենք (ապառնի) և երգեի - երգեինք (անցյալ):

Ենթադրական եղանակ. կգրեմ - կգրենք (ապառնի) և կերգեի - կերգեինք (անցյալ):

Հարկադրական եղանակ. պիտի՝ պետք է գրեմ - գրենք, (ապառնի) և պիտի՝ պետք է երգեի - երգեինք (անցյալ):

Հրամայական եղանակ. գր-ի՛ր, խաղ-ա՛, գրեց-ե՛ք, խաղաց-ե՛ք:

ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳ – Բայի ժամանակները բաժանվում են բացարձակ և հարաբերական տեսակների:

ԲԱՑԱՐՁԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ - Բային հատուկ բառափոխական քերականական կարգ, որ ցույց է տալիս գործողության կամ եղելության կատարման ժամանակը: Գործողության կատարման ժամանակը որոշելու համար այն վերցնում են որոշակի պահի՝ խոսելու պահի համեմատությամբ: Հետևաբար բայի ցույց տված գործողությունը կամ եղելությունը կարող է խոսելու պահի համեմատությամբ երեք կարգի դրսևորում ունենալ. խոսելու պահին համընկնող, խոսելու պահից առաջ և նրանից հետո:

Ըստ այդմ՝ տարբերակում են ներկա, անցյալ և ապառնի ժամանակներ:

Բայի ժամանակի կարգը սերտորեն կապված է բայի կերպի կարգի հետ: Ժամանակի գաղափարը բնութագրական է միայն սահմանական եղանակի բայաձևերին. անկատար կերպի բայերն ունեն բոլոր երեք ժամանակների ձևերը, իսկ կատարյալ կերպի բայերն ունեն միայն երկու ժամանակ (ներկա ժամանակը բացակայում է, օրինակ՝ ռուսերենում):

Ներկա ժամանակ - Լեզուներում տարբեր կարգի դրսևորում ունի. այն արտահայտվում է համադրական և վերլուծական եղանակներով:

Այսպես, գրաբարում, գերմաներենում, ռուսերենում և լատիներենում ներկա ժամանակն ունի համադրական կազմություն: Օրինակ՝

գրբ. խաղա-մ, խաղա-ս, խաղա-յ, խաղա-մք, խաղա-յք, խաղա-ն, գերմ. *schneid-e, schneid -est, schneid -et, schneid -en, schneid-et, schneid-en*, ռուս. чита-ю, чита-ешь, чита-ет, чита-ем, чита-ете, чита-ют, լատին. am-o, ama-s, ama-t, amam-us, ama-tis, ama-nt.

Ժամանակակից հայերենում և անգլերենում այն ունի վերլուծական կազմություն, ինչպես՝

Ժամ. հայ. գրում եմ, գրում ես, գրում է, գրում ենք, գրում եք, գրում են, անգլ. I work, You work, he, she, it works.

Անգլերենում այդպիսին է նաև ներկա շարունակական ժամանակաձևը.

I am writing
he, she, it is writing
You are writing

They are writing.

Անցյալ ժամանակ - Ունի դրսևորման տարբեր ձևեր, որոնցից յուրաքանչյուրը ցույց է տալիս անցյալում կատարված գործողության կամ եղելության այս կամ այն բնույթը.

Ա. Անցյալ ժամանակակետի համեմատությամբ անցյալում սկսված գործողություն. բայաձևերը վերլուծական կամ համադրական կառուցվածքի են:

Ժամանակակից հայերենում այն վերլուծական կառուցատիպի է, հմմտ. գրում էի-էինք, խաղում էի - էինք:

Ռուսերենում բայի դեմքի և թվի կարգն արտահայտում է անձնական դերանունը՝ ստեղծելով վերլուծական կառուցատիպ. я писал, ты писал, он /она/ писал/а/, мы писали, вы писали, они писали.

Լատիներենում այդ բայաձևերը երկու կարգի դրսևորում ունեն.

ա) համադրական. amābam (սիրում էի), amābas (սիրում էիր), amābat (սիրում էր), amābāmus (սիրում էինք), amābātis (սիրում էիք), amābant (սիրում էին),

բ) վերլուծական (կրավորական).

Կրավորաձև խոնարհման դեպքում դերբայը և օժանդակ բայը սեռով համաձայնում են ենթակային: Հմմտ. անցյալ կատարյալ.

amatus (–a, –um) sum	amati (–ae, –a) sumus
amatus (–a, –um) es	amati (–ae, –a) estis
amatus (–a, –um) est	amati (–ae, –a) sunt

Հմմտ. սահմանական եղանակի գերակատար.

amatus (–a, –um) eram	amati (–ae, –a) eramus
amatus (–a, –um) eras	amati (–ae, –a) eratis
amatus (–a, –um) erat	amati (–ae, –a) erant

Գերմաներենում անցյալ ժամանակը՝ Imperfekt -ը, վերլուծական կազմություն ունի. նկատի ունենք բայաձևի կառուցվածքը, որ ձևավորվում է haben կամ sein օժանդակ բայերի ներկայով և Particip-2 դերբայով, ինչպես՝

ich habe (bin) gesprochen	wir haben (sind) gesprochen
du hast (bist) gesprochen	ihr habt (sind) gesprochen
er/sie/es hat (ist) gesprochen	er/sie/es haben (sind) gesprochen

Անգլերենում վերլուծական կազմություն ունեն անցյալի շարունակական (Past continuous) և անցյալի վաղակատարի շարունակական (Past perfect continuous) ժամանակաձևերը.

I was showing, he was showing, we was showing, we were showing,

I had been showing, he had been showing, we had been showing.

Բ. Անցյալ ժամանակակետի համեմատությամբ ավարտված գործողություն. ժամանակակից հայերենում. *գրել էի-էինք*:

Անգլերենում. Past perfect. I had shown, he had shown, we had shown.

Գերմաներենում անցյալ ժամանակակետի համեմատությամբ վաղա-
կատար գործողություն է ցույց տալիս Plusquamperfekt ժամանակը, որ նույն-
պես վերլուծական կազմություն ունի.

ich hatte gesprochen	wir hatten gesprochen
du hattest gesprochen	ihr hattet gesprochen
er/sie/es hatte gesprochen	er/sie/es hatten gesprochen

Գ. Ներկայի համեմատությամբ ավարտված գործողություն.

Ժամանակակից հայերենում. *գրեց, խաղաց:*

Լատիներենում.

amāvī (սիրեցի)	amāvīmus (սիրեցինք)
amāvistī (սիրեցիր)	amāvistis (սիրեցիք)
amāvit (սիրեց)	amāverunt (սիրեցին)

Ռուսերենում. այս ժամանակի իմաստ են արտահայտում կատարյալ
կերպի բայերը. я засеял/а,о/ ты засеял/а,о/, он засеял/а,о/, мы засея-
ли, они засеяли.

Ապառնի ժամանակ - Այս ժամանակի տարբեր ձևերը նույնպես ունեն
տարբեր իմաստներ. *գրելու էմ* (խոսելու պահից հետո հաստատ կատարվող
գործողություն), *գրեմ* (ապագայում ցանկալի գործողություն), *պիտի գրեմ*
(ապագայում անհրաժեշտաբար կատարվող գործողություն), *կգրեմ* (ապա-
գայում ենթադրաբար կատարվող գործողություն) և այլն:

Վերոբերյալ բայաձևերը մտնում են սահմանական, ըղձական, հարկա-
դրական և ենթադրական եղանակների մեջ և ցույց են տալիս միևնույն ընդ-
հանուր ժամանակի տարբեր հատվածներում կատարվող գործողություններ
և համարվում են բացարձակ ժամանակներ:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ - Ի հակադրություն բացարձակ ժա-
մանակների՝ մասնագետները տարբերակում են նաև հարաբերական ժամա-
նակներ հասկացությունը: Հարաբերական ժամանակի բայաձևերը որոշվում
են ոչ թե ներկա, այլ անցյալ ժամանակի նկատմամբ ունեցած հարաբերու-
թյան տեսանկյունից, որ իրացվում է բարդ ստորադասական նախադասու-
թյան երկրորդական նախադասության շրջանակներում:

Հարաբերական ժամանակներ են համարվում *անցյալի անկատար*,
անցյալի ապառնի, *անցյալի վաղակատար*, *ինչպես նաև ըղձական, ենթա-*
դրական և հարկադրական եղանակների անցյալի ձևերը:

Տարբեր լեզուներում ապառնի ժամանակը տարբեր կարգի արտահայ-
տություն ունի՝ համադրական և վերլուծական:

Գրաբարում ապառնիության իմաստն արտահայտվում է հետևյալ
կերպ.

ա) *համադրական կազմությամբ*. գրիցեմ - գրիցեմք, խաղայցեմ - խա-
ղայցեմք, հեղուցում - հեղուցումք, բազմիցիմ - բազմիցիմք. գրեցից - գրեա-
ցուք, խաղացից - խաղացուք, հեղից - հեղցուք, բազմեցայց - բազմեցուք,

բ) *վերլուծական կազմությամբ*. գրելոց իցեմ-իցեմք, խաղալոց իցեմ – իցեմք, հեղլոց իցեմ – իցեմք և այլն:

Ժամանակակից հայերենում նույնպես ապառնիության գաղափարը արտահայտվում է համադրական և վերլուծական եղանակներով: Հմմտ.

գրեմ-գրենք, կգրեմ-կգրենք և գրելու եմ-էի, պիտի գրեմ – պիտի գրեի:

Հատիներենում սահմանական եղանակի առաջին և երկրորդ ապառնիների ներգործածն խոնարհումն ունի համադրական կազմություն.

ա) I ապառնի.

amabo amabimus

amabis amabitis

amabit amabunt

բ) II ապառնի.

amavero amaverimus

amaveris amaveritis

amverit amaverint

գ) Սահմանական երկրորդ ապառնիի կրավորածն խոնարհումն ունի վերլուծական կազմություն.

amatus (-a, -um) ero amati (-ae, -a) erimus

amatus (-a, -um) eris amati (-ae, -a) eritis

amatus (-a, -um) erit amati (-ae, -a) erint

Ռուսերենում ապառնիությունն ունի համադրական և վերլուծական ձևեր, հմմտ.

ա) выкопаю, засею, согну, выкопаем, засеем, согнём.

բ) я буду читать мы будем читать

ты будешь читать вы будете читать

он будет читать они будут читать

Եվրոպական որոշ լեզուներում այն ունի միայն վերլուծական կազմություն:

Գերմ. ich werde arbeiten wir werden arbeiten

du wirst arbeiten ihr werdet arbeiten

er/sie/es wird arbeiten sie werden arbeiten

Անգլ. (Future indefinite)

I shall go we shall go

You will go you will go

He/she/it will go they will go

Future continuous.

I shall be going we shall be going

You will be going you will be going

He/she/it will be going they will be going

Ղեմք – Տե՛ս **Բայի դեմքի կարգը** բառահոդվածը:

ԹՎԻ ԿԱՐԳ - Ցույց է տալիս գործողություն կատարողների քանակը. հայերենում նրա թվակազմության միջոցը հերթագայությունն է, որ հատուկ է յուրաքանչյուր դեմքի, հմմտ. մ-ենք (գրեմ - գրենք), ս-ք (գրես - գրեք), -ն (գրի - գրեն)՝ (Տե՛ս **Բայի թվի քերականական կարգը** բառահոդվածը):

Լատիներենում, գերմաներենում և ռուսերենում համադրական բայա-ձևերի թիվն արտահայտվում է դիմաթվային վերջավորությունների միջոցով. դիտարկենք ներկա ժամանակի բայաձևեր.

լատ. am-o, ama-s, ama-t, amam-us, ama-tis, ama-nt,

գերմ. arbeit-e, arbeit-est, arbeit-et, arbeit-en, arbeit-et, arbeit-en,

ռուս. чита-ю, чита-ешь, чита-ет, чита-ем, чита-ете, чита-ют.

Ռուսերենում և անգլերենում համանուն բայերի բայական թվի գաղափարն արտահայտվում է համապատասխան անձնական դերանունների միջոցով.

ռուս. я писал, ты писал, он /она/ писал/а/ мы писали, вы писали, они писали,

անգլերեն. I go, we go, You go, they go.

Սպասարկու բառերը նույնպես արտահայտում են թվի գաղափար, հմմտ. ռուսերեն *я буду писать, мы будем писать*.

ՍԵՌԻ ԿԱՐԳ - Բայ խոսքի մասին հատուկ քերականական կարգ, որ պայմանավորված է գործողության սուբյեկտի (ենթակայի), բուն գործողության և գործողության օբյեկտի (խնդրի) փոխհարաբերությամբ: Բայի սեռի մասին ամբողջական գաղափար կազելու համար պետք է տարբերակել հետևյալ հասկացությունները. *սեռադասեր, սեռեր* և *սեռային առումներ*:

ՍԵՌԱԴԱՍ - Սեռից ավելի լայն հասկացություն է, որի մեջ մտնում են տարբեր սեռային իմաստներ արտահայտող բայաշարքեր: Հայերենում բայերը բաժանվում են երկու խմբի՝ ըստ սուբյեկտի, բուն գործողության և գործողության օբյեկտի՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների բնույթի: Այդ հարաբերությունների բնույթը պայմանավորում է երկու սեռադասերի առանձնացումը՝ *անցողական և անանցողական*:

Անցողական բայ - Ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ անմիջականորեն անցնում է մեկ այլ առարկայի վրա (կարդալ գիրք, ուտել հաց), որ կրող առարկան մասնակիորեն է ընդգրկվում գործողության ոլորտ (կարդալ պատմվածքներից, ուտել հացից), ազդում է առարկայի վրա (ներկել պատը, մաքրել հատակը), որի ոլորտ ընդգրկված առարկան դիտվում է այդ նույն գործողության հետևանքը (կառուցել տուն, պատրաստել նստարան, գրել շարադրություն), դրդում է մեկ ուրիշին՝ գործողության ոլորտ ընդգրկե-

լու մեկ այլ առարկա (խաղացնել երեխային, նստեցնել աշակերտին, հագցնել մանկանը) և այլն:

Անանցողական բայ - Յույց են տալիս այնպիսի գործողություն, որ հիմնականում մնում է գործողության սուբյեկտի շրջանակներում և չի անցնում այլ առարկայի վրա: Դրանք հիմնականում այն բայերն են, որ ցույց են տալիս շարժում (գնալ, վազել, ընթանալ), վիճակային հատկանիշ (պառկել, թիկնել, ծնկել), ֆիզիկական, հոգեբանական կամ զգայական վիճակ (ցավել, տառապել, մորմոքել, վշտանալ), արտաքին որակական հատկանիշ (հզորանալ, գեղեցկանալ, մեծանալ), ներքին որակական հատկանիշ (ժլատանալ, տկարանալ, հիվանդանալ) և այլն: Անանցողական բայեր են համարվում -վածանցով կազմությունները՝ անկախ բայիմաստից (այրվել, փրկվել, լվացվել, սանրվել, սիրահարվել, խելագարվել):

Քանի որ անցողականությունն ավելի ընդգրկուն կարգ է, քան բայի սեռը, անցողականությունն ու անանցողականությունը համարվում են *սեռադաս*:

Անցողական և անանցողական սեռադաս հասկացությունը ներառում է տարբեր բնույթի սեռեր:

Անցողական սեռադասի մեջ մտնում են ներգործական և պատճառական բայերը, անանցողական սեռադասի մեջ՝ կրավորական, չեզոք և միջին-անդրադարձ բայերը:

Յուրաքանչյուր սեռադասի մեջ մտնող խմբերը (սեռերը) միատեսակ չեն անցողականության և անանցողականության հատկանիշների առումով: Անցողական սեռադասի մեջ մտնող որոշ բայեր, ինչպես պատճառական բայերը, անցողականությունն ավելի ընդգծված են արտահայտում, քան մյուսները (ներգործական սեռի բայերը), իսկ անանցողական սեռադասի մեջ մտնող որոշ բայեր, ինչպես միջին-անդրադարձ բայերը, անանցողականությունն ավելի թույլ են արտահայտում, քան կրավորական և չեզոք սեռի բայերը:

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ – Այս բայերն արտահայտում են այնպիսի գործողություն, որի օբյեկտ է դառնում կրող առարկան. նրա վրա է տարածվում, նրան է անցնում սուբյեկտի (գործողի) կատարած գործողությունը. սուբյեկտի և օբյեկտի հարաբերության տեսակետից առաջին պլան է մղվում սուբյեկտի դերը: Սուբյեկտն արտահայտվում է ուղղական, օբյեկտը՝ հայցական հոլովով և կոչվում է ուղիղ խնդիր, ինչպես՝ *խմել հյուր, մշակել հող, նկարել պարտեզ, կառուցել ամրոց, սիրել հայրենիքը* և այլն:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ - Այս բայերն արտահայտում են այնպիսի գործողություն, որտեղ հաղորդակցման պահանջով պայմանավորված՝ առաջին պլան է մղվում գործողության օբյեկտը՝ դիտվելով իբրև հաղորդման ելակետ.

սուրբեկտը (ենթական) մղվում է երկրորդ պլան: Գործողության օբյեկտը, որպես ենթակա, գործողության կատարումը կրում է ուրիշ առարկայից (ներգործող անուղղակի խնդիր բացառական կամ գործիական հոլովներով): Կրավորական սեռի ցուցիչ է համարվում -վ- բայածանցը. *Բորբորվել զայրությից, գերվել երագով, հրավիրվել դպրոցականների կողմից, փրկվել ազատամարտիկների ձեռքով:*

Կրավորական կառույցներում առաջին պլան է մղվում գործողության օբյեկտը՝ դիտվելով իբրև հաղորդման ելակետ. սուրբեկտը (ենթական) մղվում է երկրորդ պլան:

Հմտ. Կադնին տապալվեց փոթորկից: Տերևները քշվեցին քամուց: Ամրոցը կառուցվում է շինարարների կողմից (ձեռքով): Շուշին ազատագրվեց ֆիդայիների կողմից (ձեռքով):

Կրավորական սեռի ձևական ցուցիչ է համարվում -վ- ածանցը, ինչպես նաև բացառական կամ գործիական հոլովներով արտահայտված ներգործող անուղղակի խնդիրը՝ որպես գործողության իրական կատարող (փոթորկից, ֆիդայիների ձեռքով), նաև ուղղական հոլովով (հայերենում) արտահայտված գոյականը՝ գործողության օբյեկտի նշանակությամբ (տերևները, Շուշին):

Ռուսերենում, օրինակ, կրավորական սեռի նշանակությունը կարող է արտահայտվել -ся /-сь/ մասնիկներով և *быть* օժանդակ բայի խոնարհված ձևերի և բայական կապակցության միջոցով, որ հանդես է գալիս որպես կրավորական սեռի դերբայ, ինչպես՝ *театр строится рабочими, план был выполнен, праздник был организован студентами.*

Գերմաներենում կրավորական սեռն արտահայտվում է ձևային միջոցով՝ *sich vorbereiten* (պատրաստվել), *ich werde mich vorbereiten, du wirst dich vorbereiten, er (sie, es) wird sich vorbereiten.*

Լատիներենում կրավորական սեռի համար կան հատուկ խոնարհման ցուցիչներ, որոնք բայահիմքի հետ կազմում են համադրական ձևեր. -(o)r, -ris, -tur, -mur, mini, -ntur.

Հմտ. amor (սիրվում եմ), amaris, amator, amatur, amamini, amantur.

Ընդհանրապես կրավորական սեռը բայի ելակետային վիճակում ձևակազմորեն արձանագրված չէ. այն ի հայտ է գալիս շարահյուսական միջավայրում, որպես ներգործական նախադասության փոխակերպման հետևանք: Ներգործական-կրավորական փոխակերպումը հատուկ է գրեթե բոլոր լեզուներին: Հմտ.

ա) հայերեն. Քամին քշում է տերևները – Տերևները քշվում են քամուց:

բ) ռուսերեն. Студенты *выполняют* контрольную работу - Контрольная работа *выполняется* студентами.

գ) լատիներեն. Pater noster *mutat* temporam et terram – Terra et tempora *mutantur* a Patre nostre.

դ) գերմաներեն. Schülern *übersetzen* der deutsche Text ins russisch - Der deutsche Text *wird* von den Schülern ins russisch *übersetzt*.

ե) անգլերեն. I bought a house - A house was bought by me. They read the book - The book was read by them.

Կրավորական կառուցվածքի նախադասություններում սուբյեկտը (ներգործող խնդիրը) կարող է չարտահայտվել, ինչպես՝ ջրանցքը կառուցվում է, канал строится, der Kanal wird gebaut և այլն:

Այս հանգամանքը հիմք է տվել, որ որոշ մասնագետներ ընդունեն նաև բայի երրորդ սեռի գաղափարը, որ կոչել են **միջին -անդրադարձ սեռ** (սեռային առում):

Ի տարբերություն ներգործական սեռի բայերի՝ կրավորական սեռի բայերը դիմային սահմանափակություն ունեն. նրանք արտահայտվում են միայն երրորդ դեմքով:

Ընդհանուր առմամբ, ժամանակակից լեզվաբանական ուսմունքներում ընդունված է բայական սեռի ըմբռնման երկու մոտեցում. բայական երկու սեռի տեսակետ (ներգործական և կրավորական) և բայական երեք սեռի տեսակետ (ներգործական, կրավորական և միջին անդրադարձ):

Բայասեռի իմաստավորման մեկ այլ մոտեցման համաձայն՝ բոլոր բայերը դասակարգվում են երկու մեծ սեռադասի մեջ՝ պայմանավորված գործողության անցողականությամբ և անանցողականությամբ: Ըստ այդմ՝ տարբերակվում են *անցողական և անանցողական բայեր* հասկացությունները:

Անցողական բայեր են համարվում ներգործական բայերը, անանցողական՝ կրավորական և միջին-անդրադարձ բայերը:

ՉԵԶՈՔ ՄԵՌ – Չեզոք սեռի բայերն իմաստով հակադրվում են մի կողմից՝ ներգործական սեռի բայերին, որ նրանց ցույց տված գործողության համար չի պահանջվում անմիջական կրող առարկա, մյուս կողմից՝ կրավորական բայերին, որ նրանց ցույց տված գործողության ենթական գործողության կատարումը չի կրում ուրիշ առարկայից: Ըստ այդմ, նրանք *չեզոք* դիրք են գրավում ներգործական և կրավորական բայերի միջև: (Որոշ մասնագետներ չեզոք սեռը հանում են սեռի քերականական կարգից, ինչպես դրական աստիճանը՝ համեմատության աստիճանի կարգից): Կան որոշ բայեր -Վ- մասնիկով, որոնք սեռանիշ չեն և համարվում են *կրավորակերպ չեզոք* բայեր, ինչպես՝ *բնակվել, զբաղվել, հիասթափվել, չքվել, մտադրվել, սթափվել, սիրահարվել, վարժվել, վիստվել, ուշաթափվել* և այլն: Այս կարգի բառերի մեջ -վ- մասնիկը բառակազմական դեր ունի, քանի որ դրանք առանց ածանցի գոյություն չունեն արդի հայերենում:

ՄԵՌԱՅԻՆ ԱՌՈՒՄ - Անցողական և անանցողական սեռադասերից առանձնանում են այն բայերը, որոնք համապատասխան խմբում ցուցաբերում են ուժեղ կամ թույլ խնդրառություն: Սեռային առումն ընդգրկում է պատճառական և միջին-անդրադարձ բայերը:

Պատճառական սեռային առում –Այս բայերն արտահայտում են այնպիսի գործողություն, որտեղ հաղորդակցման պահանջով պայմանավորված՝ գործողության ոլորտ է ընդգրկվում մեկ այլ առարկա՝ երկրորդ օբյեկտ, որին սուբյեկտը դրդում է գործողություն կատարելու: Պատճառական բայի լրացումը դիտվում է ուղիղ խնդիր և դրվում է հայցական հոլովով: Պատճառական սեռային առման ցուցիչն է -ցն- բայածանցը. *հագցնել երեխային, նստեցնել աշակերտին, թոցնել աղավնիներին, վախեցնել թշնամիներին*: Պատճառականությունն արտահայտվում է նաև հարադրական եղանակով՝ *անորոշ դերբայ+տալ* կառուցվածքով, ինչպես՝ *գրել տալ, խմել տալ, բերել տալ, լցնել տալ և այլն*:

Միջին-անդրադարձ սեռային առում - Այս բայերը սուբյեկտի, օբյեկտի և գործողության փոխհարաբերության տեսակետից յուրահատկություն են դրսևորում. այդ հարաբերությունը տարածվում է միայն գործողի (սուբյեկտի կամ սուբյեկտների) վրա:

Այս բայերի ձևակազմական յուրահատկությունն այն է, որ հանդես են գալիս -վ- մասնիկով, որ կրավորական սեռի առումով (այս բայերի կառուցվածքում) չեզոք է: Մի դեպքում՝ սուբյեկտը միաժամանակ հանդես է գալիս օբյեկտի դերում. սուբյեկտը գործողությունը կատարում է ինքն իր հետ, գործողությունն անդրադառնում է սուբյեկտին, ինչպես՝ *ածիլվել, լվացվել, սանրվել, սափրվել, հագնվել, հանվել, թեքվել, պատրաստվել, նվիրվել* և այլն, երկրորդ դեպքում՝ մեկից ավելի սուբյեկտներ միաժամանակ միմյանց նկատմամբ հանդես են գալիս օբյեկտի դերում, ինչպես՝ *համբուրվել, գրկախառնվել, փաթաթվել, տեսնվել, ողջագուրվել* և այլն:

ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅՈՒՆ - Բայասեռի դրսևորումներից մեկը, երբ միևնույն բայական բառույթը համատեղում է երկու սեռի նշանակություն: Կրկնասեռ դիտվում են այն բայերը, որոնք առանց ձևակազմական փոփոխությունների ցուցաբերում են տարբեր սեռերի զուգահեռություն: Կրկնասեռությունը պայմանավորված է բայի խնդրատական փոփոխություններով, որոնք հանգեցնում են սեռային իմաստի տեղաշարժերի: Այդպիսի տեղաշարժերն ընթացել են երկու ուղղությամբ.

ա) ներգործականից չեզոք սեռ,

բ) չեզոքից ներգործական սեռ:

Ժամանակակից հայերենում կրկնասեռ բայերը համատեղում են *ներգործական-չեզոք սեռերի* նշանակություններ: Կան բայեր, որոնց իմաստային կառուցվածքում կարելի է ցույց տալ սեռային որևէ իմաստի որոշիչ դերը:

Այսպես, *լսել, խնայել* և այլ բայերի մեջ իշխում է ներգործական սեռային իմաստը: Հմտ. **լսել** – 1. «ականջ դնել, ունկնդրել, իմանալ, տեղեկանալ» (նբ.), (Դարերով մաշված այդ «Բարի լույսը» *լսում են* կարծես առաջին ան-

գամ (ՊՍ)], 2. «հնագանդվել, մեկի ասածներին ենթարկվել» (չբ.), [*Համալ եմ*, տե՛ր իմ, հրամանդ ի կատար (ԴԴ)]:

Սովորել, հոգալ, ապրել, նայել և այլ բայերի մեջ իշխում է չեզոք սեռի նշանակությունը: Հմմտ. **հոգալ** – 1. «խնամել, հոգ տանել» (չբ.), [Ինչպե՞ս *չհոգալ* աշխարհի մասին (ՊՍ)], 2. «կարիքները լրացնել» (նբ.), [Ու չեմ կարենում մի հնար գտնեմ՝ ցավերս *հոգալ* (ՀԹ)]:

Կան կրկնասեռ բայեր էլ, որոնք ներգործական-չեզոք սեռերի նշանակությունները հավասարապես համատեղում են բայական միևնույն բառության մեջ, ինչպես՝ *շնչել, դոփել, բուրել, փչել, տեղալ, հորդել* և այլն:

Հմմտ. Ես օտար եմ այս երկրում. առաջին անգամ եմ *շնչում* այստեղի օդը (ԱԻ),- նբ.: Թո՛ղ ապրե, թո՛ղ *շնչե* քո հոգին, Նոր հույզով, անհայտով անմեկին (ՎՏ),- չբ.:

ԿԵՐՊԻ ԿԱՐԳ - Բային հատուկ քերականական կարգ, որ ցույց է տալիս գործողության ավարտվածությունը կամ անավարտվածությունը: Այդ կարգը ներառում է երկու կարգային անդամ՝ կատարյալի կերպ և անկատար կերպ: Բային հատուկ այս կարգը կենսունակ է հատկապես ռուսերենում:

Անկատար կերպ – Այդ բայերը ցույց են տալիս անավարտ, շարունակական գործողություն և գործողության բազմապատիկություն, որ չի հասել իր տրամաբանական ավարտին, ինչպես՝ *читать, решать, кричать, бежать, проверять, строить* և այլն:

Կատարյալի կերպ – Այդ բայերը ցույց են տալիս ավարտված գործողություն, միապատիկ գործողություն, որ հասել է որոշակի արդյունքի, ինչպես՝ *прочитать, решить, крикнуть, прибежать, проверить, построить* և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ բոլոր բայերը չունեն կերպի բոլոր ձևերը: Կան որոշակի բայեր, որոնք միայն կատարյալի կերպն ունեն, ինչպես՝ *очнуться, заработать, нагуляться* և այլն: Կան բայեր էլ, որոնք միայն անկատար կերպն ունեն, ինչպես՝ *отсутствовать, спать, быть, бездействовать* և այլն:

Անկատար և կատարյալի կերպի բայերը (գույգերը) ընդհանուր են բանական նշանակությամբ, սակայն տարբերակվում են միայն կերպի քերականական կարգով:

Կերպային գույգ(եր) - Բայի կերպի անդամները կազմում են կերպային գույգ(եր), որոնք ձևավորվում են տարբեր միջոցներով. հիմնական գործոններ են համարվում՝

ա) նախածանցները. *бежать* (վազել) – անկատար կերպի - *выбежать* (դուրս վազել) – կատարյալի կերպի, այդպես նաև՝ *писать* – *на+писать, делит* – *по+делить, смешить* – *рас+смешить, делать* – *сделать, будить* – *раз+будить* և այլն,

բ) ածանցները. *разбить* (ջարդել) – կատարյալի կերպի, *разбивать* (ջարդոտել) – անկատար կերպի, այդպես նաև *обслужить* – *обслуживать*, *опознать* – *опознавать*, *дать* – *давать* և այլն,

գ) բայածանցի փոփոխությունը. *двигать* (տնականորեն շարժել) – անկատար կերպի, *двинуть* (մեկ անգամ շարժել) – կատարյալի կերպի, այդպես նաև *пустить* – *пускать*, *пролетать* – *пролететь*, *толкать* – *толкнуть*,

դ) տարահիմքությունը. *искать* (տնականորեն որոնել՝ փնտրել) – անկատար կերպի, *найти* (գտնել, հայտնաբերել) – կատարյալի կերպի, այդպես նաև *брать* – *взять*, *говорить* – *сказать* և այլն:

Եթե կերպի կարգը դիտարկենք հայերենի բայական համակարգում, ապա կարող ենք ասել հետևյալը:

Հայերենում բայի *անկատար կերպը* դիտարկելի է սկզբնաձևային վիճակում (առանց բայական ածանցների). նկատի ունենք անորոշ դերբայի անաձանց կառուցվածքը, որ արտահայտում է գործողության միապատիկության գաղափար, ինչպես՝ *գրել, երգել, խաղալ, կարդալ* և այլն: Կատարյալի կերպի բայերը, ըստ այս մոտեցման, ածանցավոր կամ վերջամասնիկներով կազմություններ են, որոնք սահմանափակում են բայական գործողության ներքին սահմանները, ինչպես՝ *մոտեցնել, գրեց, խաղաց* և այլն:

Կատարյալի կերպի բայերը անկատար կերպի բայերին հակադրվում են նաև արմատի կրկնության եղանակով. կրկնավոր կազմության բայերն արտահայտում են գործողության բազմապատիկության գաղափար, ուստի դրանք կատարյալի կերպի բայեր են, ինչպես՝ *քաշել* (ընդհանրապես քաշել) – անկատար կերպ, *քաշքշել* (մեկ անգամ գործողություն կատարել) – կատարյալի կերպ, այդպես նաև՝ *վազել* – *վազվզել*, *գոռալ* – *գոռոգոռալ*, *ծամել* – *ծամծամել*, *ծակել* – *ծակծակել* և այլն: Մրանց հարում են բազմապատկական ածանցով կազմությունները (որպես կատարյալի կերպի բայեր), ինչպես՝ *կտրել* – *կտրատել*, *խոցել* – *խոցոտել*, *թռչել* – *թռչկոտել*, *նստել* – *նստոտել*, *բեկել* – *բեկտել*, *պեծին տալ* – *պեծկլտալ*, *հեծել* – *հեծկլտալ* և այլն:

Ժամանակակից հայերենում, ըստ Գ.Ջահուկյանի, կերպի արժեքը հատուկ է նաև բայական արմատներին, որոնք (արմատները) բաժանվում են երեք խմբի.

ա) բայարմատներ, որոնք ինքնին կերպի արժեք ունեն, և դրանք կատարյալի կերպ դարձնելու համար պետք է կցել կատարյալություն արտահայտող հատուկ վերջամասնիկներ, հմմտ. *գր-եց, երգ-եց, զն-աց, խաղ-աց* և այլն,

բ) բայարմատներ, որոնք ինքնին կատարյալի կերպի են, և դրանք անկատար դարձնելու համար պետք է կցել անկատարություն արտահայտող հատուկ վերջամասնիկներ, հմմտ. *տես-ն-ել, փա-չ-ել*,

գ) կերպային չեզոքություն ունեցող բայարմատներ (մոտ-, իմ-, տա-, դառ/ր), որոնք անկատար կամ կատարյալի կերպի արժեք ստանալու հա-

մար պետք է օժտվեն մի դեպքում՝ *-են, -ան-, -ն-*, մյուս դեպքում՝ *-եց-, -աց-, -ր-, -ձ-* մասնիկներով, հմմտ. *մոտենալ, իմանալ, տանել, դառնալ* (անկատար կերպի արժեք) և *մոտեց-, իմաց-, տար-, դարձ-* (կատարյալի կերպի արժեք):

Կերպի գաղափարը սերտորեն կապված է բայի ժամանակի կարգի հետ. անկատար կերպի բայերն ունեն ներկա, անցյալ և ապառնի ժամանակային ձևեր, իսկ կատարյալի կերպի բայերը ներկա ժամանակի ձևեր չունեն:

ԴԵՄՔԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ – Դեմքի քերականական կարգը հատուկ է բային և դերանվանը: Այդ խոսքի մասերը տարբեր լեզուներում դեմքի կարգն արտահայտում են տարբեր միջոցներով:

Ղերանվան դեմքի կարգը – Ղերանվան համակարգում դիմանիշ հատկություն ունեն անձնական դերանունները: Ղերանվան դեմքը ցույց է տալիս գործողությանը մասնակցող *խոսող, խոսակից կամ երրորդ անձ*: Առաջին դեմքը հակադրվում է երկրորդ դեմքին (խոսակցին) և արժևորվում որպես առաջին դեմք (խոսող): Երկրորդ դեմքը հակադրվում է առաջինին (խոսողին) և արժևորվում որպես երկրորդ դեմք (խոսակից), երրորդ դեմքը հակադրվում է առաջինին (խոսողին) և երկրորդին (խոսակցին) և արժևորվում որպես երրորդ անձ (ո՛չ խոսող, ո՛չ խոսակից):

Դեմքի գաղափարը սերտորեն կապված է թվի իմաստի հետ. դերանվան դեմքը և թիվն արտահայտվում են միևնույն կամ տարբեր արմատներով.

ա) առաջին և երրորդ դեմքի դերանունները եզակի և հոգնակի թվերում դեմքն արտահայտում են տարբեր արմատներով (հիմքերով).

հայ. *ես - մենք, նա - նրանք*, ռուս. я –мы, он /она, оно/ – они, անգլ. I – we, he/she/it – they, գերմ. Ich – wir, er – sie,

բ) ուղիղ և թեք հոլովների արտահայտության պլանում ի հայտ են գալիս դիմային հակադրության տարբեր դրսևորումներ: Հմմտ.

ես – իմ – ինձ – ինձնից, դուք – ձեր – ձեզ, я –меня – мне, անգլ. I – my – me, he- his – him, she – her – hers, լատ. ego – mei – mihi – me և այլն,

գ) հայերենում անձնական դերանվան երկրորդ դեմքի հոգնակին դրսևորվում է մասնիկավորմամբ. *դու դուք*, ռուսերենում, գերմաներենում և լատիներենում՝ տարահիմքությամբ՝ ты – вы, du – ihr, tu – vos, անգլերենը եզակի-հոգնակիի տարբերակում չունի՝ You:

Անձնական դերանունների դիմանիշ հատկությունն առանձնապես ընդգծված է ռուսերենի և անգլերենի բայական համակարգերում. համանունական բայաձևերի դիմաթվային բաշխումը կատարվում է համապատասխան *անձնական դերանունների միջոցով*, ինչպես՝

ռուս. я писал, ты писал, он /она/ писал/а/, անգլ. I go, You go, he (she, it) goes.

Դերանվան համակարգում կան որոշ *հոդանիշ մասնիկներ*, որոնք համապատասխան դերանվան հետ արտահայտում են դեմքի քերականական իմաստ. դրանք են -ս, -դ, -ը (-ն) մասնիկները: Հմմտ. ինք-ս, ինքներ-ս (1-ին դեմք), ինք-դ, ինքներ-դ (2-րդ դեմք) և ինք-ը (3-րդ դեմք). ինքը դերանվան հոգնակին (երրորդ դեմքը) արտահայտվում է տարահիմքությամբ՝ *իրենք*:

Հայերենի -ս, -դ, -ն *հոդերի արտահայտված* դիմային հատկանիշը հստակ երևում է ցուցական դերանունների իմաստային կառուցվածքում, որտեղ վերոնշյալ հոդերն ունեն արմատական արժեք: Հմմտ. *սա-սրանք, դա-դրանք, նա-նրանք, այս, այդ, այն* և այլն:

Հոդերի դիմայնությունն արտահայտում է առարկայի հարաբերությունը խոսողի, խոսակցի և երրորդ անձի նկատմամբ. ս՝ առաջին դեմքի, դ՝ երկրորդ դեմքի, իսկ ն՝ երրորդ դեմքի հարաբերությամբ առնվելու դեպքում:

Բայի դեմքի կարգը- Բառափոխական քերականական կարգ, որ հատուկ է բային, անձնական դերանուններին (և որոշ հոդանիշ մասնիկներին): Բայի դեմքը ծառայում է հաղորդակցման մասնակից կողմերին տարբերակելու (միմյանցից զանազանելու) համար: Տարաբերակվում է երեք դեմք՝ առաջին, երկրորդ և երրորդ:

Առաջին դեմք - Ցույց է տալիս, որ խոսողը համարվում է բայով արտահայտված գործողության կատարողը: Եթե գործողություն կատարողը մեկն է, ապա առաջին դեմքն արտահայտվում է եզակի թվով (գրում եմ), իսկ եթե գործողություն կատարողները խոսողների խումբ են կամ մեկից ավելի, ապա այն արտահայտվում է հոգնակի թվով (գրում ենք):

Երկրորդ դեմք - Ցույց է տալիս, որ գործողություն կատարողը խոսակիցն է. այդ դեպքում այն արտահայտվում է եզակի թվով (գրում ես), իսկ եթե խոսակցի անունից հանդես են գալիս մեկից ավելի անձինք, ապա այն արտահայտվում է հոգնակի թվով (գրում եք):

Երրորդ դեմք - Ցույց է տալիս, որ գործողության կատարմանը ոչ անմիջականորեն մասնակցում է մեկ անձ (անձինք), որ չի համարվում կա՛մ խոսողը, կա՛մ խոսակիցը (գրում է - են):

Միադիմի բայեր - Կան բայեր, որոնց դիմայնությունը որոշակի չէ. գործող անձը (առարկան) քերականորեն արտահայտված չէ, անհայտ է. այդպիսի բայերը համարվում են միադիմի բայեր: Միադիմի բայերը սովորաբար ցույց են տալիս միայն երրորդ դեմք. մյուս դեմքերը բացառվում են: Հմմտ.

գրք. հարկ է, պարտ է, պիտոյ է, պատշաճ է,

ժամ. հայ. երևում է, թվում է, համարվում է, հաճելի է, զարմանալի է և այլն,

լատ. fulgurat (փայլում է), lapidat (քարկոծեց), oportet (պետք է), constat (հայտնի է), interest (լինում է, կա) և այլն:

Բայական դեմքի հատկանիշն արտահայտվում է կա՛մ սպասարկու բառերի, կա՛մ քերականական մասնիկների միջոցով: Սպասարկու դերով

հանդես են գալիս օժանդակ բայի խոնարհված ձևերը՝ եզակի և հոգնակի թվով.

Եզակի թիվ					Հոգնակի թիվ			
1-ին դեմք.	եմ	sum	am	bin	ենք	sumus	are	sind
2-րդ դեմք.	ես	es	-	bist	եք	estis	are	seid
3-րդ դեմք.	է	est	is	ist	են	sunt	are	sind

Դիմային վերջավորություններ - Բայի դեմքի արտահայտման մասնիկներ են համարվում դիմային վերջավորությունները, որոնք հանդես են գալիս խոնարհման վերջավորությունների հետ ձուլված: Դրանք տարբերակվում են ըստ բայահիմքի կազմության: Առաջին հիմքից կազմվող ձևերի դիմային վերջավորություններ են. -մ, -ս, -, -նք, -ք, -ն, հմմտ. գրե-մ, գրե-ս, գրի-, գրե-նք, գրե-ք, գրե-ն:

Երկրորդ հիմքից կազմվող ձևերի դիմային վերջավորություններն են. -ի, -իր, - ինք, -իք, -ին (գրեց-ի, գրեց-իր, գրեց-, գրեց-ինք, գրեց-իք, գրեց-ին), ինչպես նաև՝ -ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան (տես-ա, տես-ար, տես-ավ, տես-անք, տես-աք, տես-ան):

Հրամայական եղանակի բայաձևերն ունեն մեկ դեմք և տարբերակվում են ըստ թվակազմության տեսակների (եզակի և հոգնակի):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Արեղյան Մ.Խ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
 Աղայան Է.Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967:
 Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
 Խաչատրյան Լ.Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
 Խաչատրյան Լ.Մ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:
 Պետրոսյան Հ. Զ., Գոյականի առումները հայերենում, Ե., 1960:
 Պետրոսյան Հ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972:
 Զահուկյան Գ.Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:
 Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.
 Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
 Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
 Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.
 Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.
 Шахмайкин А. М. Проблема лингвистического статуса категории рода // Актуальные проблемы современной русистики. Диахрония и синхрония.- М.: МГУ, 1996.- С. 226-273.
 Широков О.С., Введение в языкознание, М., 1985.

7. ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանությունը գիտություն է մարդկային լեզուների վերաբերյալ, որոնք առանձին-առանձին հանդես են գալիս իբրև ընդհանուրի մասնավոր դրսևորումներ: Պատմականորեն ձևավորվել են լեզվաբանության գիտակարգերն ու բաժինները, որոնք շատ հաճախ խաչաձևվելով միմյանց՝ դարձյալ մնում են իբրև մեկ կառուցվածքային ամբողջության բաղադրիչներ:

Թեև այդ բաժինները հարաբերակցում են մեկը մյուսին, այնուամենայնիվ, ըստ հարցադրումների շրջանակների, առաջադիր խնդիրների և գործադրած եղանակների ու մեթոդների, դրանք ունեն որոշակի տարբերակիչ չափորոշիչներ: Ըստ այդմ՝ լեզվաբանությունը ներկայանում է երկու գիտակարգով՝ ընդհանուր լեզվաբանություն և մասնավոր լեզվաբանություն:

Ընդհանուր լեզվաբանություն – Այս գիտակարգը բացահայտում է բոլոր լեզուներին հատուկ ընդհանուր գծերը ինչպես փորձով (էմպիրիկ), այնպես էլ մակաձևական (ինդուկտիվ) եղանակով: Ընդ որում՝ դա անում է՝ հետազոտելով մի կողմից՝ լեզուների կառուցվածքների և գործառության ընդհանուր օրինաչափությունները, մյուս կողմից՝ ցանկացած խոսքային գործունեության կամ տեքստի (բնագրի) լեզվական առանձնահատկությունները:

Ընդհանուր լեզվաբանությունը, հենվելով որոշակի լեզուների բնորոշ կողմերի վրա, փորձում է լուսաբանել մի շարք խնդիրներ՝ ինչ է մարդկային լեզուն, ինչպես է առաջացել, զարգացել, որն է նրա հասարակական դերը, ինչպիսին է լեզվի և մտածողության կապը, ինչ կառուցվածք ունի լեզուն, որոնք են լեզուների զարգացման օրինաչափությունները, որոնք են լեզվաբանության տեսության հիմնական հարցերը, լեզվաբանության պատմության շրջաններն ու նրանց ենթաշրջանները, որոնք են լեզվաբանության հետազոտության մեթոդները և այլն:

Ընդհանուր լեզվաբանությունն ըստ այդմ ունի 3 բաժին.

Ա. Լեզվաբանության պատմություն,

Բ. Լեզվաբանության տեսության հիմնական հարցեր,

Գ. Լեզվաբանական հետազոտության մեթոդներ:

Մասնավոր լեզվաբանություն – Այս գիտակարգը ներառում է լեզուների քննության հետևյալ շրջանակները:

1) Լեզվաընտանիքների քննություն: Թեև ընդհանուր լեզվաբանության խնդիրների մեջ են մտնում լեզվաընտանիքների առանձնացման հարցերը, մասնավոր լեզվաբանությունը նույնպես զբաղվում է այս հարցով: Յուրաքանչյուր լեզվաընտանիքի մեջ մտնում են այն լեզուները, որոնք զարգացել են մեկ ընդհանուր հիմքի վրա: Փաստորեն հնդեվրոպական, ալթա-

յան, ուրալյան, դրավիդյան, չին-տիբեթական, սեմական և այլ լեզվաընտանիքների առանձին-առանձին ուսումնասիրությունը մասնավոր լեզվաբանության քննության դաշտում է գտնվում:

2) Լեզվամիությունների քննություն: Լեզվամիությունները աշխարհագրական տարածքով միավորված լեզուներ են, որոնց ներսում խմբավորվում են տիպաբանորեն մերձակից լեզուներ: Այդպիսին են բալկանյան լեզվամիությունը, կովկասյան լեզվամիությունը և այլն: Բալկանյան լեզվամիության հարցերով զբաղվում է բալկանագիտությունը, կովկասյան լեզվամիության հարցերով՝ կովկասագիտությունը և այլն:

Մասնավոր լեզվաբանությունը որևէ լեզվամիություն ուսումնասիրելիս ցուցաբերում է երեք կարգի մոտեցում՝ պատմական, տիպաբանական և արեալային: Այնուհետև համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքներով քննում է տվյալ լեզվամիության բաղադրիչների (լեզուների, բարբառների) զարգացումն ու միմյանց վրա ունեցած փոխազդեցությունները՝ բացահայտելու համար նրանց համընդհանուր գծերն ու ընդհանուր զարգացման միտումները:

3) Ցեղակից լեզուների քննություն: Մասնավոր լեզվաբանությունը որոշում է տվյալ լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուները, լեզվաճյուղերը, ցույց է տալիս նրանց տարածվածության սահմանները, վեր հանում նրանց ցեղակցության աստիճանը, պատմական զարգացման շրջանները, նրանց գրի պատմությունը և այլն: Մասնավոր լեզվաբանությունը ցույց է տալիս, որ մեկ լեզվաընտանիքի պատկանող լեզուները ծագել են մեկ ընդհանուր՝ մայր լեզվից և ժամանակի ընթացքում ապրելով որակական փոփոխություններ՝ անկախացել են միմյանցից՝ սպասարկելով տարբեր հանրությունների: Ցեղակից լեզուները կարող են սպասարկել ինչպես աշխարհագրական տարածքով ընդհանուր, այնպես էլ տարածքով անջատ ապրող հանրությունների:

Օրինակ, լատիներենի հիմքի վրա առաջացած լեզուները (իտալերեն, իսպաներեն, պորտուգալերեն, ֆրանսերեն և այլն) կազմում են մեկ լեզվաճյուղ և կոչվում են ռոմանական լեզուներ: Դրանց ուսումնասիրությամբ զբաղվող գիտաճյուղը կոչվում է ռոմանագիտություն: Ռոմանական լեզուները գործածվում են ինչպես Եվրոպայում, այնպես էլ Կենտրոնական կամ Լատինական Ամերիկայում (վերջինս այդպես է կոչվում այնտեղ գործածվող լեզուների մայր լեզվի՝ լատիներենի անունով):

4) Առանձին լեզվի քննություն: Մասնավոր լեզվաբանության խնդիրն է ուսումնասիրել առանձին լեզուները, որոնք մտնում են այս կամ այն լեզվաընտանիքի մեջ, ինչպես՝ հայերենը, ռուսերենը, անգլերենը, արաբերենը, չինարենը, թուրքերենը, մոնղոլերենը, ամերիկյան բնիկների (հնդկացիական) լեզուները և այլն: Մասնավոր լեզվաբանությունը որևէ առանձին լեզու քննում է երկու՝ համաժամանակյա և պատմական հայեցակետով՝ ցույց է

տալիս քանակական այն փոփոխությունները, որոնք պատմական կտրվածքով դառնում են որակական փոփոխությունների պատճառ:

Առանձին լեզվի քննության շրջանակների մեջ մտնում են նրա բարբառների, գրական և ոչ գրական տարբերակների, ինչպես նաև խոշոր գրողների լեզվի ուսումնասիրության (ոճագիտության) հարցերը:

ԼԵԶՎԱՍԵՆԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ – Լեզվաբանության բաժին, որ ուսումնասիրում է լեզվական իրողությունների՝ իզոգլոսների տարածական-աշխարհագրական դրսևորումները (ձևերը), նրանց փոխներգործությունները, զարգացման ընդհանուր միտումներն ու օրինաչափությունները:

Ա) Միևնույն լեզվի ներսում որոշում է՝

ա) իզոգլոսների աշխարհագրական տարածվածության սահմանները,

բ) միևնույն լեզվաընտանիքի լեզուների միջև հին նախալեզվի արմատական ընդհանրությունների տարածվածության սահմանները,

գ) հնդեվրոպական նախալեզվի բարբառային իրողությունների տարածվածության սահմանները,

դ) նոստրատիկ լեզուներում մայր լեզվի լեզվական իրողությունների տարածվածության սահմանները,

Բ) Աշխարհագրական անվանումների լեզվաբանական մեկնաբանության միջոցով որոշում է՝

ա) հանրության տարածվածության սահմանները (Պակիստան, Փենջաբ),

բ) հանրության տեղաշարժերի ուղղությունները (Լատինական Ամերիկա, Նոր Զուդա, Նոր Նախիջևան, Արմյանսկ),

գ) հանրության պատմական հայրենիքը (հույների համար՝ Կ.Պոլիս, հայերի համար՝ Նախիջևան):

ԼԵԶՎԱՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ – Լեզվաբանության բնագավառ, որ զբաղվում է որևէ լեզվի աշխարհագրական տարածվածության շրջանակները որոշելով: Միևնույն հանրությանը սպասարկելուց բացի, լեզուն կարող է հաղորդակցության գործիք դառնալ այլ հանրությունների համար. դա վերաբերում է նաև ազգամիջյան և միջազգային լեզուներին: Օրինակ, հայերենի լեզվաքարտեզագրությունը ենթադրում է՝ որոշել արևելահայերենի և արևմտահայերենի գործածության աշխարհագրությունը: Արևելահայերենի լեզվաքարտեզագրությունը ներառում է Հայաստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը (եթե այլ երկրներում ապրող հայկական փոքր համայնքները չհաշվենք, ինչպիսին է Ուկրաինայի համայնքը), մինչդեռ արևմտահայերենի լեզվաքարտեզագրությունը ներառում է աշխարհագրական ավելի լայն տարածքներ՝

Ավստրալիա, Հնդկաստան, Լիբանան, Սիրիա, ԱՄՆ, Կանադա և այլն: Ըստ այդմ՝ աշխարհի քարտեզի վրա համապատասխան գույներով կարելի է նշել հայերենի երկու տարբերակների լեզվագործածության սահմանները:

Ազգամիջյան լեզուների պարագային քարտեզի վրա նշվում են ազգային ինքնավար հանրապետություններն ու անկախ պետությունները, որտեղ գործածվում է ազգամիջյան լեզուն: Օրինակ, ռուսերենի լեզվական քարտեզը, բնականաբար, ընդգրկում է Ռուսաստանի Դաշնությունն ու նախկին ԽՍՀՄ տարածքի հանրապետությունները (եթե որևէ պետությունում արգելված չէ ռուսերենի գործածությունը):

Միջազգային լեզվի քարտեզագրությունն ավելի լայն շրջանակներ է ընդգրկում, պայմանավորված այդ լեզուն կրող հանրությունների աշխարհագրական տարածքներով: Օրինակ, անգլերենի լեզվական քարտեզը ներառում է Մեծ Բրիտանիան, այնուհետև՝ Հնդկաստանը, ԱՄՆ, Կանադան, Ավստրալիան (որտեղ անգլերենը պետական լեզու է), ինչպես նաև եվրոպական երկրները (որտեղ անգլերենը գործածվում է որպես երկրորդ լեզու):

Լեզվաքարտեզագրությունը կարող է օգնել տվյալ լեզուն գործածողների վիճակագրությունը կատարելուն՝ ելնելով այդ պետությունների (երկրների) բնակչության թվաքանակից:

ԼԵԶՎԱՄԱՊԱԳԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – Լեզվաբանական բնագավառ, որ զբաղվում է լեզվի ապագայի հարցերի ուսումնասիրությամբ. որոշակի առումով՝ այն շփման եզրեր ունի լեզվի պատմության հետ, սակայն չի սահմանափակվում լեզվի զարգացման փուլերի բնորոշ գծերը բացահայտելով, այլ ցույց է տալիս լեզվական համակարգի փոփոխության միտումները և հետևում է այդ միտումների ընթացքին՝ արձանագրելով ոչ միայն լեզվի արդի փուլում կատարվող փոփոխությունների ուղղություններն ու դրսևորումները լեզվական համակարգի տարբեր մակարդակներում, այլև ելնելով այդ միտումներից՝ կանխագուշակում է լեզվի *կենսաբանական ապագան*: Այս առումով՝ լեզվի ապագայաբանությունը համարժեք է դառնում *լինգվոֆոնոլոգիային* և ցույց է տալիս այն հեռանկարը, որ սպասում է տվյալ լեզվին ապագայում: Լեզվի ապագայաբանությունը օգտվում է *լեզվավիճակագրության* տվյալներից և լեզվի համակարգային փոփոխությունների քարտեզը կազմելիս նկատի է առնում լեզվական համակարգի տարբեր մակարդակներում կատարված փոփոխությունների վիճակագրությունը և կանխատեսումներ կատարում տվյալ մակարդակի փոփոխությունների առումով:

Օրինակ, եթե հինգերորդ դարի մակարդակում հնարավոր լիներ կիրառել արդի լեզվաբանական մեթոդներն ու նրանց եղանակները, ապա հնարավոր կլիներ որոշել գրաբարի զարգացման հեռանկարը (ապագան)՝ ընդհուպ արդի հայերենի լեզվավիճակը: Ժամանակակից հայերենի առումով՝ լեզվի ապագայաբանությունը կարող է ցույց տալ բառային մակարդակի

փոփոխությունների միտումները՝ ելնելով վերջին հարյուրամյակում բառային կազմի աննախադեպ աճից, և կարող է որոշել՝ ո՛ր են տանում այդ փոփոխությունները (բառակազմության, բառակազմական կադապարների, պատճենումների, իմաստային դաշտերի, իմաստային-թեմատիկ խմբերի առումներով և այլն): Նույն մոտեցումով կարելի է որոշել շարահյուսական մակարդակում կատարվող փոփոխությունների ընթացքը՝ ելնելով այլալեզու ազդեցությունների ուղղություններից և լեզվական կառույցների փոփոխությունների միտումներից:

Տողերիս հեղինակին ծանոթ բուլղարացի մի գիտնական դոկտորական ատենախոսություն է պաշտպանել «Բուլղարերենի ապագան» թեմայով:

Լեզվի ապագայաբանությունը զբաղվում է լեզվական համակարգի տարբեր մակարդակների և նրանց միավորների զարգացման հեռանկարների հարցերով և փորձում է կազմել ապագայի մոդելները:

ԼԵԶՎԱՍԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ – Լեզվաբանական ուղղություն, որ ուսումնասիրում է լեզվի խնդիրները՝ կապված որևէ ժողովրդի, ազգի (էթնոսի) պատմական առանձնահատկությունների և մշակութային զարգացվածության մակարդակի հետ:

Լեզվաբանության և ազգագրության կապն արտահայտվում է նրանով, որ լեզվաբանությունը որոշակի խնդիրներ լուծելու համար հենվում է ազգագրության ընձեռած փաստական նյութի վրա: Բանահյուսական նմուշները, որոնք վերաբերում են կենցաղին, ազգային սովորույթներին, հավատալիքներին և այլ բնագավառների, լեզվաբանի համար կարևոր կովաններ են այս կամ այն բարբառի գիտական նկարագիրն ամբողջական կերպով ներկայացնելու առումով: Մյուս կողմից, ազգագրության տվյալները՝ առտնին-կենցաղային իրերի ու առարկաների, կիրառական արվեստի (գորգագործության, խեցեգործության և այլնի), գյուղատնտեսական գործիքների անվանումների վերաբերյալ, օգնում են տերմինաբանական թեքումով բառարաններ կազմելու աշխատանքներին:

ԼԵԶՎԱՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Լեզվաբանության բնագավառ, որտեղ գործադրվում են վիճակագրական մեթոդներ: ԼՎ կարող է կիրառվել լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակների դեպքում՝ նրանց միավորների գործառական հաճախականությունը բացահայտելու նպատակով:

ԼՎ լեզվի բնորոշ ու օրինաչափ երևույթների հետազոտությամբ նպաստում է համապատասխան օրենքների ձևակերպմանը, որոնք բնութագրում են լեզուն ամբողջությամբ կամ, մեծ մասամբ, նրա առանձին գործառական ոլորտները (արձակ, դրամատուրգիա, մամուլ ևն): ԼՎ մեթոդի օգտագործման հնարավորությունը հիմնված է տեքստի ընդհատ ու կրկնվող տարրերի վրա (տառեր, վանկեր, բառեր, քերականական ձևեր են): Բառերի

և այլ միավորների քանակական տվյալներն արտացոլվում են հաճախականության բառարաններում: ԼՎ համար ելակետային հարցեր են ընտրանքի ծավալի սահմանումն ու վերլուծության ենթակա տեքստերի օբյեկտիվ ընտրությունը:

Օրինակ, բառային կազմի որևէ շերտի գործառական հաճախականության բացահայտումը որևէ հեղինակի գործում՝ տվյալ ժամանակաշրջանի բառագործածության նկարագիրը ցույց տալու նպատակով: Օրինակ՝ հունական փոխառությունների վիճակագրական պատկերը Մ. Խորենացու երկում՝ այն համեմատելով Ագաթանգեղոսի կամ Ղ. Փարպեցու երկերում նույն տիպի փոխառությունների վիճակագրության հետ:

ԼՎ դրսևորումներից է *ոճավիճակագրությունը*: Այն գործադրվում է տարբեր հեղինակների ոճական համակարգերի համեմատական նկարագրության ժամանակ՝ պարզելու ոճական-պատկերավորման և արտահայտչական եղանակների կիրառական արժեքները տվյալ ժամանակաշրջանի լեզվի ոճական նկարագիրը բնութագրելու առումով:

ԷԿՈԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – Լեզվաբանական ուղղություն, որ ուսումնասիրում է տարաբնույթ հարցեր՝ կապված լեզվական իրադրության, լեզվական միջավայրի, լեզվաքաղաքականության, խոսքի մշակույթի, խոսքի գեղագիտության, լեզվական նորմայի շարժունության, էկոլոգիական և շրջակա միջավայրի խնդիրների հնարավոր լուծումների բնագավառում լեզվի դերի և այլ խնդիրների հետ: Լեզվաբանական այս ուղղության հետաքրքրության շրջանակներում են լեզվի պահպանության և հոգածության հարցերը՝ որպես հաղորդակցության հիմնական միջոց, որպես մարդկային հասարակության կեցության հոգևոր պայման:

ԷԼ նպատակն է ցույց տալ, թե արդյոք լեզվաբանությունը կարող է կիրառվել բնապահպանական առանցքային խնդիրները լուծելիս, ինչպիսին է, օրինակ, կլիմայական փոփոխության պատճառով կենսաբազմազանության կորուստը, որն էլ սպառնում է լեզվի գոյությանը:

ԷԼ ուսումնասիրությունները գործնականում երկու ուղղությամբ են ընթանում՝ քննադատական խոսույթի և լեզվի էկոլոգիայի: *Քննադատական խոսույթի* ուսումնասիրությունը շրջակա միջավայրի, էկոլոգիային առնչվող տեքստերի լեզվական քննությունն է: *Լեզվի էկոլոգիան* զբաղվում է բնապահպանության, բնական աղետների, հասարակական կյանքի փոփոխությունների, լեզվական բազմազանության, ազգային փոքրամասնությունների լեզուների հարցերի ուսումնասիրությամբ և այլն:

Ըստ ԷԼ մշակած նոր հայեցակարգի՝ լեզուն դիտարկվում է որպես մեծ էկոհամակարգի բաղադրիչ. հետևաբար լեզվական ուսումնասիրությունները պետք է ձգտեն նպաստել և ծառայել նաև բնապահպանական խնդիրների լուծմանը:

ԼԵԶՎԱԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – Մայրենի լեզվի՝ որպես օտար լեզվի տեսության և գործնական ուսուցման բաժին, որ ենթադրում է սովորողներին համակողմանի գիտելիքներ հաղորդել ժողովրդի (ուսումնասիրվող լեզուն կրողների) մշակույթի, նրա ավանդույթների, պատմության, կենցաղի առանձնահատկությունների, կենսակերպի, երկրի աշխարհագրության, նրա բնության և այլ կարգի հարցերի վերաբերյալ:

ԼԵԳ տվյալների հիման վրա կարելի է կազմել արտասահմանցի ուսանողների համար առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր, ուսումնական ձեռնարկներ, բնագրերի ժողովածուներ, մեթոդական ձեռնարկներ, ուսուցչի ուղեցույցներ, աշխատանքային տետրեր, ուղղագրական, թեմատիկ և բացատրական բառարաններ և այլն:

ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – Համակցված գիտակարգ, որ ուսումնասիրում է մարդու խոսքի ձևավորման գործընթացները, խոսքային գործունեությունը, խոսքի ընկալումն ու ձևավորումը՝ լեզվի համակարգի բաղադրիչներին համապատասխան: Վերամշակում է խոսքային գործունեության կադապարներն ու մարդու խոսքային գործունեության հոգեֆիզիկական հիմունքները: Հոգելեզվաբանությունը դիտարկում է խոսքի սերումը, ձևավորումն ու ընկալումը որպես մարդու գործունեության մասնավոր դրսևորում, որ պայմանավորված է անձի հոգեբանությամբ և գիտակցականությամբ, ինչպես նաև տարաբնույթ արտալեզվական (հասարակական) գործոններով:

Ուսումնասիրության առարկայով մոտ է լեզվաբանությանը, հետազոտության մեթոդով՝ հոգեբանությանը:

Հոգելեզվաբանության տիրույթում կիրառվում են նաև փորձարարական մեթոդներ, ինչպես՝ *գուգորդային փորձարկումը, իմաստաբանական տարբերակման մեթոդը* և այլն: Հոգելեզվաբանությունը փորձում է պատասխանել տեսական իմաստավորման գործնական մի շարք խնդիրների, որպեսզի լուծի որոշ լեզվաբանական հարցեր, որոնք լիարժեք լուծում չեն ստացել՝ կապված տեքստի վերլուծության և ոչ թե խոսող անհատի հետ:

Այդ խնդիրներն են՝ մայրենի լեզվի (առանձնապես՝ օտար լեզվի) ուսումնասիրում, լեզվական ունակությունների զարգացում, զանգվածային լրատվամիջոցների խոսքային ազդեցության առանձնահատկությունների բացահայտում, արտախոսքային գուգորդությունների ուսումնասիրում, անհատի հոգեբանական գործունեության փորձարարական հետազոտություն՝ լեզվի յուրացման ընթացքում, նախադպրոցականի և դեռահասների խոսքային դաստիարակության և լոգոպեդիական խնդիրներ, ինժեներական (օդաչուական և տիեզերական) հոգեբանության հարցեր, դատաբժշկական հոգեբանության խնդիրներ և քրեագիտություն, աֆազիայի և ուղեղի խոս-

քային խանգարումների ախտորոշման ու բուժման հարցեր և այլն:

Այս գիտակարգի շրջանակներում մշակվել են նոր լեզվաբանական ուղղություններ՝ կապված խոսքային գործունեության և մարդու նյարդային համակարգի գործունեության համապատասխանության ու նրանց խանգարումների հետ: Դրանցից է նյարդալեզվաբանությունը:

Նյարդալեզվաբանությունն ուսումնասիրում է լեզվական կառուցվածքի ու խոսքի հարաբերակցությունն ուղեղի ենթագիտակցական գործունեության հետ: Նյարդալեզվաբանությունը լեզվաբանության տվյալների հիման վրա ուսումնասիրում է մարդու կենտրոնական նյարդային համակարգի գործունեությունն ու գոտիները՝ կապված լեզվագործածության նորմայի և դրա խաթարման հետ: Այդ գիտաճյուղի զարգացման մակարդակից ելնելով՝ պահանջ է դրվում ուսումնասիրելու լեզվի տարբեր բաղադրիչների համապատասխանությունը մարդու կենտրոնական նյարդային համակարգի գործունեությանն ու նրա գոտիների կատարած աշխատանքին:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ (ԿԻԲԵՈՆԵՏԻԿԱԿԱՆ) ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ –

Մաթեմատիկական կամ կիբեոնետիկական լեզվաբանությունն առաջացել է մաթեմատիկայի և լեզվաբանության շփման կետում: Այն ներառում է լեզվի ձևային մաթեմատիկական նկարագրությունը, ինչպես նաև լեզվի վիճակագրական տեսությունը (որն օգտվում է մաթեմատիկական վիճակագրական մեթոդներից, հավանականության տեսությունից և ինֆորմացիայի տեսությունից), մշակում է լեզուն ԷՀՄ համակարգ ներառելու և լեզվական կառուցվածքը ձևայնացնելու սկզբունքներն ու մեթոդները: Նրա նպատակն է լեզվի միջոցով ստեղծել ԷՀՄ-ին սպասարկելու համակարգ, ապահովել մարդու և ԷՀՄ-ի ուղղակի հաղորդակցումը, տեղեկույթի մտապահումը, ավտոմատ վերամշակումը և այլն: Լեզվաբանության ավանդական որոշ բնագավառներ էապես փոխում են իրենց հետազոտական մեթոդիկան՝ ԷՀՄ-ի հնարավորություններն օգտագործելու հետևանքով:

Որպես մաթեմատիկայի գիտակարգ՝ մաթեմատիկական կամ կիբեոնետիկական լեզվաբանության ուսումնասիրության առարկան ձևական ապարատի մշակումն է՝ բնական և արհեստական լեզուների նկարագրության համար: Լեզուների մաթեմատիկական նկարագրությունը հիմնված է Ֆերդինանդ դե Մոսյուրի այն դրույթի վրա, որ լեզուն դիտում է իբրև մեխանիզմ, որի գործունեությունը դրսևորվում է լեզվակիրների խոսքային հաղորդակցության ընթացքում, որի արդյունքն է «ճշգրիտ տեքստը» կամ խոսքային միավորների հաղորդակցականության գործառույթը, որ ենթարկվում է որոշակի օրինաչափությունների: «Ճշգրիտ տեքստերի» նկարագրության մաթեմատիկական մեթոդների և եղանակների վերամշակումն ու ուսումնասիրությունը (առաջին հերթին՝ նախադասության կտրվածքով) կազմում է

մաթեմատիկական լեզվաբանության բաժիններից մեկը՝ *լեզվի շարահյուսական կառուցվածքի նկարագրության եղանակների տեսությունը*:

Մաթեմատիկական կամ կիրառական լեզվաբանության առաջնահերթ խնդիրներն են՝

ա) մաթեմատիկայի (ինֆորմատիկայի) տարբեր մեթոդների կիրառումը բացառապես լեզվաբանական խնդիրներ լուծելու համար,

բ) ԷՀՄ-ի միջոցով տեքստերի ավտոմատ համակարգով վերամշակումը,

գ) տեքստի ավտոմատ թարգմանությունը,

դ) համաբարբառների կազմումը (հակադարձ, հաճախականության բառարաններ, հանգաբառարաններ)՝ բառերի ցուցիչների (ինդեքսների) նշումով և այլն:

ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Ուսումնասիրում է ժողովրդի մշակույթի դրսևորումները, որոնք արտացոլվում և միաժամանակ ամրագրվում են լեզվում կամ լեզվական միջոցներով: Լեզվամշակութաբանությունը փորձում է մեկնաբանել լեզվի հիմնական գործառնություններից մեկը, որ մինչև օրս չէր դիտարկվել նրա մյուս՝ հաղորդակցական, ճանաչողական, կուտակողական և կառուցողական գործառնությունների համատեքստում: Լեզվի այդ նոր գործառնությամբ, որ ընկած է լեզվամշակութաբանության հիմքում, լեզվի կիրառական այն հատկանիշն է, որով նա դառնում է մշակույթի ստեղծման, զարգացման, պահպանման և հաղորդման գործիք:

Լեզվամշակութաբանության հիմնական հասկացություններն են՝ *մշակույթ, լեզվական նշաններ, մշակույթի կոնցեպտ*:

Մշակույթ - Մշակույթը մարդկային գործունեության արդյունք է. լայն առումով այն դիտվում է որևէ հանրության կյանքի և կենսագործունեության յուրահատուկ միջոցների ամբողջություն, մարդկանց միջև առկա հարաբերությունների դրսևորում (սովորություններ, ծեսեր, ավանդույթներ, արարողություններ), արտաքին աշխարհը ուսումնասիրելու, ըմբռնելու և այն վերափոխելու գործիքների միասնություն: Ազգային (հասարակական) մշակույթի բաղադրիչ են համարվում այն կրողների վարքի բնագավառները՝ ծեսերը, վարքագիծը, ավանդությունները, սովորությունները, իսկ անհատական մշակույթում վճռական դեր է կատարում բառը՝ որպես լեզվական նշան: Լեզվական իմաստակիր նշանները՝ ձևություններ, բառեր, նախադասություններ, համարվում են մշակութային կարգեր, ըստ այդմ, լեզվական նշանները, փոխարինելով բառերին, հասկացություններին և նախադասություններին, ընդունակ են կատարելու «մշակույթի լեզվի» նշանների դեր:

Լեզվական նշաններ - Լինելով մշակույթի ցուցանմուշ՝ միաժամանակ դառնում են նրա (մշակույթի) պահպանողը կամ կուտակողը՝ հանդես բերելով լեզվական նշանին վերապահված կարևոր գործառնություններից մեկը՝

կուտակողական (ակումուլատիվ) դերը: Իբրև մշակույթի լեզվի նշաններ՝ դրանք իրագործում են լեզվի մյուս կարևոր գործառույթներից մեկը՝ մշակութային տեղեկությունը փոխանցելով սերունդներին, կատարելով հաղորդակցման յուրահատուկ գործիքի դեր:

Մշակույթի կոնցեպտ - Մշակույթի բնագավառում որոշիչ դեր է պատկանում մշակութային արժեքներին, որոնք համարվում են **նշանների կոնցեպտներ**: Առավել ևս, մշակույթը գնահատում են նաև որպես տարանջատ, սակայն միախմբված արժեքների համակարգ: Մշակութային արժեքները դիտվում են որպես աշխարհի նկատմամբ մարդու մշակութապես իմաստավորված հարաբերություններ, որոնք ծառայում են նրա մշակութային կողմնորոշվածությանը: Արժեքների մեջ կարելի է առանձնացնել հանրության, համամարդկային, գաղափարաբանական և ազգային արժեքներ: Գոյություն ունեն քրիստոնեական արժեքներ, որոնք ընդհանուր են քրիստոնյա բոլոր ժողովուրդների համար, բուդդայական մշակույթի արժեքները ընդհանուր են բոլոր բուդդիստների համար, զրադաշտական մշակույթի արժեքները համընդհանուր պաշտամունքի առարկա էին իրանական ժողովուրդների համար (Աքեմենյանների շրջանից մինչև Սասանյանների հարստությունը): Մշակութային բոլոր արժեքներն արտացոլվում են լեզվի մեջ՝ բառերի և դարձվածքների նշանակություններում, առակաբանության ու նախատիպային բնագրերի մեջ և այլն:

ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – XX դ. երկրորդ կեսին լեզվաբանությունը լեզվական համակարգի կառուցվածքային (ստրուկտուրալ) ուսումնասիրություններից անցավ լեզվի միավորների գործառույթների ուսումնասիրության ոլորտ՝ տուրք տալով Կոպենհագենի կառուցվածքաբանների ֆունկցիոնալիստական սինխրոնիզմին. այլ կերպ ասած՝ լեզվական քննությունը թևակոխեց մարդկային հաղորդակցման կարևորագույն բնագավառ: Այդօրինակ քննությունների համատեքստում լեզուն սկսեցին դիտարկել որպես հաղորդակցման հիմնական պայման և նրա իրագործման միջոց:

Հաղորդակցական լեզվաբանության հիմնական հասկացություններն են՝ *հաղորդակցական ակտ, լեզվական հաղորդակցում, լեզվական անհատ, տեղեկատվական հաղորդակցում, կարգավորող հաղորդակցում, արտալեզվական հաղորդակցում, էլեկտրոնային հաղորդակցում, միջմշակութային հաղորդակցություն*:

Հաղորդակցական ակտ - Ըմբռնվում է որպես նշանների փոխանցում, որն արտացոլում է որոշակի տրամաբանական կառուցվածքներ (հաղորդակցական մոտեցում), որ դրսևորվում է հաղորդակցվող անհատների նշանային ակտիվության ընթացքում (գործունեական մոտեցում): Այդ համատեքստում կարևորագույն խնդիր է համարվում մշակութային առար-

կաների նշանային հատկության ուսումնասիրությունը (նշանագիտական մոտեցում):

Լեզվական հաղորդակցում - Մարդկային հանրության (նրա անդամների) համար կարևորագույն միջոց է. նկատի է առնվում, որ այդ միջոցը հանրային (ընդհանրական) բնույթ է կրում, և որ հաղորդակցման մյուս բոլոր ձևերի համեմատությամբ լեզվականը գերակա բնույթ ունի: Լեզվական հաղորդակցման հիմնական միջոցներն են լեզվի գրավոր և բանավոր տարբերակները:

Լեզվական անհատ - Լեզվական հաղորդակցման գործընթացում առաջնահերթ նշանակություն ունի լեզվական անհատի դերը: Լեզվական անհատը գոյություն ունի լեզվական տարածություններում (լեզվական շփման բնագավառում և վարքականոնի դրսևորումներում): Ժամանակակից հոգեբանության մեջ տարածված է անհատի բազմակիության տեսակետը: Անհատը բարդ երևույթ է, նա գոյություն ունի սոցիալական, ֆիզիկական, բանական, զգայական, լեզվամտածողական և այլ հարթություններում: Լեզվական անհատը, որպես բազմաչափ կառուցվածք, ուսումնասիրվում է ոչ միայն լեզվաբանության, այլև փիլիսոփայության, հոգեբանության և հասարակագիտության կողմից: **Լեզվական անհատ** ըմբռնումը համակողմանիորեն բացահայտելու համար պետք է այն դիտարկել տվյալ անհատի ազգային բնութագրերի համատեքստում: Անհատի լեզվական վարքականոնի մեջ ամբողջովին դրսևորվում է նրա ազգային բնավորության (հոգեբանության, վարքագծի, պահվածքի, զգայական ապրումների և հակազդեցությունների) ողջ համապատկերը:

Տեղեկատվական հաղորդակցում - Լեզվի ունակություններից մեկն է, որ արտաքին աշխարհի մասին տեղեկություններ է պահպանում և հաղորդում մարդուն: Հաղորդակցման այս տեսակն ուսումնասիրվում է տեղեկատվական լեզվաբանության կողմից:

Կարգավորող հաղորդակցում - Ուսումնասիրում է լեզվի ազդեցությունը լեզվակիր անհատի գիտակցության և վարքագծի վրա: Հաղորդակցման այս տեսակն ուսումնասիրվում է պրագմատիկական լեզվաբանության կողմից:

Արտալեզվական հաղորդակցում - Իրականացվում է հարալեզվական նշանների միջոցով (շարժումների համակարգ, մնջախաղ, դիմախաղ), որոնք իրենց հերթին հաղորդակցումը ձևավորում են նշանների նշանի միջոցով (Մորզեի այբուբեն, երաժշտական նոտաներ, ծրագրավորման լեզու, մաթեմատիկական բանաձևեր, լեզվական կաղապարների բանաձևեր կամ սիմվոլներ և այլն):

Էլեկտրոնային հաղորդակցում - Հաղորդման յուրահատուկ տեսակ է, որ տեղի է ունենում ժամանակով (պայմանավորված ժամային գոտիների տարբերությամբ) և տարածությամբ միմյանցից հեռու գտնվող մարդկանց

փոխգործունեությունը ապահովելու նպատակով և իրականացվում է համացանցի հնարավոր բոլոր տարածություններում:

Միջմշակութային հաղորդակցություն - XX դարում դարձավ հաղորդակցական լեզվաբանության գերակա ուղղություն, որն ուսումնասիրում է տարբեր հանրություններում ձևավորված մշակույթների երկխոսությունը: Միջմշակութային հաղորդակցության խնդիրներն են հաղորդակցության հնարավոր անհաջողությունների կանխումը, լեզվամշակութաբանական հիմնական հասկացությունների հաղորդումը լեզվից լեզու, օտար լեզվամշակութաբանական ոլորտի տիրապետումը (ուսումնասիրվող լեզվի մշակույթը) և այլն: Միջմշակութային հաղորդակցության իմացությունը հանգեցրեց նրան, որ այդ հիմնախնդրին նվիրված աշխատությունների մեծ մասում կարևոր համարվեց խաչաձևվող մշակույթների (кросскультура) ուսումնասիրությունը, այսինքն՝ այն մշակույթի միջոցները, որոնք դեպի իրենց են ձգում օտար մշակույթի արժեքները:

ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – Լեզվաբանության համադրական գիտակարգ, որը մարդու ճանաչողական գործընթացների ժամանակ միավորում է մաթեմատիկական, փիլիսոփայությունը, լեզվաբանությունը, հոգեբանությունը, տեղեկության տեսությունը և այլն: Այս ուղղության խնդիրներն են գիտելիքների մասնատման բնագավառները՝ նրանց ներկայացումը, պահպանումը, որոնումը, վերամշակումը, օգտագործումը համակարգչային ծրագրերում: Ճանաչողական լեզվաբանության հիմքում ընկած է այն դրույթը, որ մարդու վարքագիծն ու գործունեությունը նշանակալի չափով որոշվում են նրա գիտելիքներով, իսկ նրա լեզվական վարքականոնը՝ լեզվաիմացությամբ: Այս ուղղության առանցքային հարցադրումներից է **կոնցեպտ** հասկացությունը:

Կոնցեպտ – Օբյեկտիվ իրականության որևէ առարկայի հարաբերականորեն կայուն ճանաչողական կադապարն է: Կոնցեպտի բնագավառ կարելի է մտնել լեզվական միջոցների ուղիով՝ բառերի, նախադասությունների, խոսույթների և այլնի միջոցով:

Ընդունված է ասել, որ մեկ կոնցեպտը կարող է ներկայանալ ոչ թե բառի նշանակությամբ, այլ բառերի ամբողջ ասպեկտով և արտահայտություններով, առածներով, ասացվածքներով և նույնիսկ ամբողջական բնագրերով՝ գումարած բազմաթիվ զուգորդություններ, որոնք հարուցվել են այդ բառերով և որոնք նշանակությունների մեջ ընդգրկված չեն: Այսպես, *Խիղճ* կոնցեպտը կարող է ներկայանալ ամենատարբեր բառերով և նրանց նշանակություններով՝ *օրենք, ճշմարտություն, արդարադատություն, Աստված* և այլն:

Կոնցեպտների բնագավառում տարբերակվում են *զեղարվեստական կոնցեպտները*, որոնք անհատական են, եզակի և հոգեբանական առումով ավելի բարդ. դրանք հասկացությունների, զգացումների, զգացմունքների,

կամքի դրսևորման համալիր միջոցներ են, որոնք ի հայտ են գալիս գեղարվեստական գուգորդությունների հիման վրա: Որևէ գրողի կամ բանաստեղծի ոճի, աշխարհայացքի, ինքնարժևորման նկարագրության համար անհրաժեշտ է իմանալ նրա կոնցեպտի բնագավառը (կոնցեպտոսֆերան), իսկ ազգային մշակույթի խոշոր դեմքերի կոնցեպտոսֆերաները միավորելով՝ կարելի է ստանալ տվյալ ազգային մշակույթի կոնցեպտոսֆերայի բառարանը:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Զբաղվում է լեզվաբանության մեջ համակարգչային գործիքների կիրառման և նրան առնչվող գիտակարգերի հարցերով. զբաղվում է *հաղորդակցության կաղապարավորման, մեքենական թարգմանության, համակարգչային բառարանների ստեղծման* և այլ հարցերով:

Հաղորդակցության կաղապարավորում- Լեզվաբանական կաղապարի հասկացությունը գիտական կիրառություն է ստացել XX դ. 60-70-ական թվականներին մաթեմատիկական լեզվաբանության բնագավառում և կիրեռնետիկայի գաղափարների ու մեթոդների ներթափանցմամբ լեզվաբանության ոլորտ: Լեզվաբանության մեջ կաղապարը դիտվում է լեզվի կառուցվածքային միավոր՝ տիպ, բաղադրիչ (կազմիչ) տարրերի հետևողական (ընդհանրական) շարք՝ դրանց կանոնավորված փոխկապակցվածությամբ (փոխհարաբերությամբ): Կաղապարավորումը լեզվի կառուցվածքային միավորների բացահայտումն է ու դրանց ձևակերպումը որոշակի բանաձևերով: Հետևաբար լեզվական կաղապարները բաղադրիչ տարրերի հետևողական շարքեր են՝ դրանց կանոնավորված փոխկապակցությամբ (փոխհարաբերությամբ), որոնք միմյանցից տարբերվում են այդ կարգերի քանակով, դիրքով և պարտադրականությամբ:

Մեքենական թարգմանություն - Մի լեզվից թարգմանություն է մյուս լեզվի, որ կատարում է համակարգիչը: Տեղեկության ապահովման մակարդակում ներառվում են այն առարկայական բնագավառի մասին գիտելիքներ, որին վերաբերում են թարգմանելի տեքստերը: Տրամաբանական ապահովման մակարդակում ներառվում են տրամաբանական եզրահանգումների կանոնները, որոնք թույլ են տալիս օգտագործել առարկայական բնագավառի վերաբերյալ գիտելիքներ տեքստի վերլուծության և համադրության ընթացքում:

Համակարգչային բառարան - Համակարգչային բառարանագրությունը նոր ազդակ է ինչպես տեսական լեզվաբանության, այնպես էլ կիրառական բնույթի մի շարք խնդիրներ լուծելու համար: Համակարգում եղած բազային տվյալները հնարավորություն են տալիս տեղեկություն ստանալ բառային ցանկացած միավորի բառական շրջապատի վերաբերյալ: Համակարգչային բառարանը մեկ կամ մի քանի բառարանների կայք է, նրանց մուտքի ին-

դեքսներ, այդ բառարանի կառուցվածքի և ծրագրային համակարգի նկարագրություն, որոնք ապահովում են բառարանի ստեղծումը և հնարավորություն տալիս նրան դիմելու երկխոսության ձևով և այլ ծրագրերի միջնորդությամբ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Առաջացել է լեզվաբանության և քաղաքագիտության միացման կետում և սերտորեն կապված է լեզվաբանական ժամանակակից գիտակարգերի՝ հաղորդակցական և ճանաչողական լեզվաբանության հետ:

ՔԼ հիմնական հասկացություններն են՝ *քաղաքական խոսույթը, լեզվական-քերականական միջոցները, կոչականը, մեջբերումը, հակադրությունների օգտագործումը, կրկնությունները, ոճական միջոցները* և այլն:

Քաղաքական խոսույթ - Լեզվաբանական գրականության մեջ քաղաքական խոսույթը ներկայացվում է բազմապլան երևույթ. դա բաղադրիչների հանրագումար է, որ կազմում է մեկ ամբողջություն: Նրա կարևորությունը (լեզվական առումով) հատկապես ընդգծվում է խորհրդարանական, նախագահական և այլ կարգի ընտրությունների շեմին: Քաղաքական բանավեճերի ընթացքում կարևորվում է այն հանգամանքը, թե քաղաքագետներից ով կարող է շահել մեծամասնության համակրանքը՝ այն իրականացնելով ամենից առաջ իր լեզվի շնորհիվ:

Քաղաքական խոսույթի կազմավորման հարցում կարևորվում են **լեզվական-քերականական միջոցները**: Դա կապակցությունների, նախադասությունների «անսովոր» գործածություն է ըստ պահանջվող իրադրության, հոլովաձևերի և խոնարհված ձևերի անսովոր կիրառությունն է: Ինչպես՝ «Բռնարարքի սաղրիչները շարունակ խաղում են միավորված պետությունների հետ» «Բոլոր գրոհայիները հարձակման պահին մինչև ատամները զինված էին» և այլն:

Քաղաքական խոսույթի կազմավորման բաղադրիչ են **տեքստային ոճական միջոցները** (որոնք դուրս են գալիս բառի և նախադասության շրջանակներից, սակայն չեն վերաբերում ոճագիտության ոլորտին), **կոչականը** (ընտրողներին դիմելու ձևը), **մեջբերումը** (նշանավոր մարդկանց վկայակոչումը), **հակադրությունների օգտագործումը, տարատեսակ կրկնությունները, ոճական միջոցները** (փոխաբերություն, հոետորական հարցում, հումոր, ծաղր, չափազանցություն) և այլն:

ՀԱՆՐԱԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Գիտակարգ, որ ձևավորվում է լեզվաբանության, հասարակագիտության, հասարակական հոգեբանության և ազգագրության հատման կետում և ուսումնասիրում է հարցադրումների լայն շրջանակ՝ կապված լեզվի հասարակական բնույթի, նրա հասարակա-

կան գործառնությունների, լեզվի վրա հասարակական գործոնների ազդեցության և այն դերի հետ, որ խաղում է լեզուն հասարակական կյանքում:

Հանրալեզվաբանության հիմնական հասկացություններն են՝ լեզվի հասարակական տարբերակումը, լեզվի և մշակույթի կապերը, երկլեզվության հիմնախնդիրը, լեզվի հաղորդակցական գործառնությունը, լեզվաքաղաքականության հիմնահարցը և այլն:

Լեզվի հասարակական տարբերակման հարցերը դիտարկվում են նրա կառուցվածքային բոլոր մակարդակներում, որ բազմապլան երևույթ է և կրում է միջնորդավորված բնույթ: Լեզվի հասարակական տարբերակման կառուցվածքը բազմաչափ է և ներառում է ինչպես շերտակազմական (կազմահատկային) տարբերակները (որ պայմանավորված է հասարակական մշակույթի տարածքային բնությամբ), այնպես էլ իրավիճակային տարբերակները (որ պայմանավորված է հասարակական իրավիճակների բազմաձևությամբ):

Լեզվի և մշակույթի կապերը կրում են երկկողմանի բնույթ, տարբեր մշակույթների առնչվող հարցերն իրենց արտացոլումն են գտնում լեզվի բառային փոխառությունների բնագավառում:

Երկլեզվության հիմնախնդիրը դիտարկվում է անհատական (билингвизм) և հասարակական (диглоссия) առումներով: Երկլեզվության պայմաններում երկու լեզուն գոյակցում են միևնույն հասարակության շրջանակներում:

Լեզվի հաղորդակցական գործառնություն ուսումնասիրվում է որպես դրական տարբերակի ընտրության գործընթաց՝ հասարակականորեն ընդունելի արտահայտություններ կառուցելու նպատակով: Ըստ այդմ՝ բացահայտվում է հասարակականորեն ընդունելի տարբերակների ընտրության մեխանիզմը, առաջարկվում են չափանիշներ, որոնք ընկած պետք է լինեն ընտրության հիմքում:

Լեզվաքաղաքականության հիմնահարցը վերաբերում է պետության, կուսակցության, հասարակական խմբավորումներին և ուղղված է փոփոխելու կամ պահպանելու գոյություն ունեցող լեզուների կամ նրանց ենթահամակարգերի գործառնությունների բաշխումը՝ նոր կամ պահպանված հին լեզվական նորերը կենդանի լեզու ներառելու համար:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Լեզվաբանության գիտական ուղղություն, որ զբաղվում է լեզվի գործնական խնդիրների լուծմանն ուղղված մեթոդների մշակմամբ՝ կապված լեզվի գործածության հետ:

Կիրառական լեզվաբանության խնդիրների լուծման ընդհանուր մեթոդները մշակվում էին տեսական լեզվաբանության մեջ, ամենից առաջ նրա այն բնագավառում, որ ուսումնասիրում է լեզվի վերլուծության ձևական

ալգորիթմական ընթացակարգերը, այդ մեթոդները մշակվում էին նաև մաթեմատիկական լեզվաբանության շրջանակներում:

Կիրառական լեզվաբանության հիմնական հասկացություններն են՝ *ընդհանուր և տերմինաբանական խոսքային մշակույթը, մեքենական թարգմանությունը, լեզվական և խոսքային կառուցվածքների ավտոմատ վերլուծությունն ու համադրությունը, պրագմատիկ լեզվաբանության խնդիրները, ինժեներական լեզվաբանությունը, հաշվողական (քվանտիտատիվ) լեզվաբանությունը, կոմբինատորային լեզվաբանությունը* և այլն:

Ընդհանուր և տերմինաբանական խոսքային մշակույթի առումով անհրաժեշտություն է առաջանում տերմինավորելու բառերն ու հասկացությունները, որոնք վաղուց ի վեր կիրառվում են խոսքի հաղորդակցական որակները բնութագրելու համար: Այդ աշխատանքի կատարման հիմք կարող են դառնալ խոսքի համակարգի կապերը լեզվական համակարգի, գիտակցության և մտածողության համակարգերի, լեզվով նշանակվող իրականության համակարգերի և, վերջապես, մարդու հետ:

Մեքենական թարգմանությունը կատարվում է ԷՀՄ համակարգի միջոցով. դա մի լեզվի բնագրի թարգմանությունն է մեկ այլ լեզվի համակարգչի օգնությամբ: Մեքենական թարգմանության լեզվաբանական հիմքերը դեռևս ամբողջովին հասկանալի չեն, իսկ ԷՀՄ-ի հնարավորությունները օրեցօր մեծանում են: Ցանկացած տեղեկատվական-որոնողական համակարգ և ցանկացած կառավարման ավտոմատացված համակարգ իր կառուցվածքի մեջ ընդգրկում է նաև տեղեկատվության լեզվաբանորեն ապահովման բաղադրիչ: Տեղեկատվության ծառայությանը անհրաժեշտ են այսպես կոչված տեղեկատվական լեզուներ, բառարաններ, տեքստերի ավտոմատ փոխակերպման, փաստաթղթերի ավտոմատ ինդեքսավորման, համառոտման և սեղմման մեթոդիկաներ:

Լեզվական և խոսքային կառուցվածքների ավտոմատ վերլուծության և համադրության փորձերը գտնվում են կիրառական լեզվաբանության հետաքրքրությունների և որոնումների հարթությունում: Այդ խնդիրները իրականացնելու հարցում մեքենաների հնարավորությունները մեծ են, սակայն լեզվական միավորների և ամբողջական տեքստերի հետ նրանց աշխատելու հնարավորությունները անսահմանափակ են:

Պրագմատիկ լեզվաբանության խնդիրները հետաքրքրում են ժամանակակից կիրառական լեզվաբանությանը, այդ գիտակարգն ուսումնասիրում է լեզուն՝ մարդու, նրա վարքագծի և գործունեության հետ ունեցած կապերի տեսանկյունից:

Բարձր տեխնոլոգիաների զարգացման և համացանցի դարաշրջանում կիրառական լեզվաբանության շրջանակներում առանձնացնում են լեզվաբանական հետևյալ գիտակարգերը՝ *համակարգչային լեզվաբանություն* (տե՛ս *Համակարգչային լեզվաբանություն* բառահոդվածը), *ինժեներական*

*լեզվաբանություն, հաշվողական (քվանտիտատիվ) լեզվաբանություն, կոմ-
բինատորային լեզվաբանություն* և այլ ճյուղավորումներ:

Ինժեներական լեզվաբանություն հետազոտական շրջանակների մեջ մտնում են՝ էՀՄ-ի սպասարկման համակարգի ստեղծում (թույլ է տալիս ծրագրերի ավտոմատ մշակում), հիշողություն, տեղեկության որոնում և եզրակացություն խոսքային (լեզվական) ձևի մեջ:

Հաշվողական (քվանտիտատիվ) լեզվաբանություն օգտագործում է քանակային (վիճակագրական) մեթոդներն ու հնարները լեզվի կառուցվածքային-հավանական կաղապարներ ստեղծելու համար, որոնք կարող են օգտագործվել լեզվի գործառական լեզվաբանական մոնիտորինգի և ծածկագրված տեքստերի գաղտնագերծման դեպքում:

Կոմբինատորական լեզվաբանությունը կիրառական հետազոտություններում օգտագործում է մաթեմատիկական որոշ հնարներ՝ բազմությունների տեսությունը, մաթեմատիկական տրամաբանությունը, ալգորիթմների տեսությունը և այլն:

ՀԱՐԱԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՊԱՐԱԼԻՆԳՎԻՍՏԻԿԱ) – Լեզվաբանության բնագավառներից մեկն է, որի հետազոտության առարկան են արտալեզվաբանական այն միջոցները, որոնք ուղեկցում են խոսքային հաղորդակցմանը և լեզվական միջոցների հետ միասին հաղորդում են որոշակիորեն իմաստավորված տեղեկություն:

Հարալեզվաբանական միջոցների թվին են պատկանում *խոսքի տեմբրը և տեմպը, հնչեղության աստիճանը, ամանակը, դադարի տեսակները, խոսքի զգացական-արտահայտչական բնույթը, տարատեսակ շարժումները, ձեռքերը, դիմախաղը* և այլն:

Հարալեզվաբանությունն անվանում են նաև *հաղորդակցական ակտին մասնակցող ոչ լեզվական միջոցների ամբողջություն*:

Հարալեզվաբանական միավորները բաժանվում են երեք խմբի՝ հնչյունային, կինետիկական և գրաֆիկական:

Հնչյունային տեսակին վերաբերում են խոսքի տեմբրը, տեմպը, բարձրությունը, դադարների տեսակը (կակագումը, ը -ը , ը մ -ը մ), մեղեդայնությունը, ինչպես նաև հնչյունների արտաբերական առանձնահատկությունները (բարբառային, հասարակական-տարբերակային) և այլն:

Կինետիկական բաղադրիչներին վերաբերում են ժեստը, գրաված դիրքի տեսակները, դիմախաղը, շարժումները և այլն:

Գրաֆիկական տեսակին վերաբերում են տառատեսակը, նշագրությունը (ընդգծումը), տառերի լրացուցիչ գրաֆիկական միջոցները (շեղատառ, թավ, ցրված կամ ցրիվ շարվածքը), տառերի փոխարինիչները և այլն:

Հարալեզվաբանական միջոցները ոչ միայն լրացնում են լեզվաբանական հաղորդակցության բովանդակությունը, այլև համարվում են տեղեկու-

թյան աղբյուր խոստովի կամ գրողի, նրա հասարակական, տարիքային, սեռի, բնավորության առանձնահատուկ գծերի և այլնի վերաբերյալ: Չնայած այն բանին, որ հարալեզվաբանական միջոցները չեն մտնում լեզվական համակարգի մեջ, չեն համարվում խոսքի միավորներ, այնուամենայնիվ, խոսքային հաղորդակցումը չի կարող դառնալ հաղորդակցական ակտ առանց հարալեզվաբանական միջոցների ուղեկցության. ըստ այդմ՝ հարալեզվաբանական միջոցները այս կամ այն աստիճանով ներկայացվում են յուրաքանչյուր խոսքային միավոր տարածքում:

ՏԵՔՍՏԻ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Լեզվաբանական գիտական ուղղություն, որ սերտորեն կապված է ոճագիտության, խոսքի մշակույթի, հոեւորության հետ և ուսումնասիրում է տեքստը, նրա կառուցվածքը, կառուցման միջոցներն, բաղադրիչները և այլն: Տեքստի լեզվաբանության հիմնական հասկացություններն են՝ *տեքստը*, *հիպերտեքստը*, *խոսույթը* և այլն:

Տեքստ - Բնագրի համակարգված բարձրագույն ձև է, բովանդակում է որոշակի հաղորդում արտաքին աշխարհի որոշակի հատվածի վերաբերյալ, կազմված է հեղինակի մտահղացումով, ունի կառուցվածքային, իմաստաբանական և պրագմատիկ ամբողջականություն, վերամշակված է համաձայն լեզվի գործառական և ոճական նորմերի:

Ցանկացած տեքստի համար կարևոր հատկանիշ է բովանդակության կարգը, որ իրեն է ենթարկում տեքստային բոլոր բաղադրիչներին՝ հոգեբանական, կառուցվածքային, ոճաբանական ձևավորումն ու մյուս տարրերին, որոնք մտնում են տեքստի հաղորդակցական բովանդակության մեջ: Ըստ այդմ՝ տեքստը միաժամանակ թե՛ հաղորդակցման միջոց է, թե՛ տեղեկության պահոց, թե՛ մշակույթի կեցության ձև, թե՛ ազգի ու անհատի կենսաձևի հոգեբանական արտացոլում, թե՛ որոշակի պատմական դարաշրջանի արտադրանք:

Եթե նախապես ավանդական լեզվաբանությունը հետազոտում էր տեղեկության ներտեքստային միավորների համակարգային հարաբերությունները, արդի ժամանակներում ի հայտ են գալիս փորձեր՝ հետազոտության աղբյուրը տեսնելու ոչ թե տեքստի, այլ ավելի մեծ միավորման ներսում, ինչպիսին մշակույթի միավորումն է, որի բաղկացուցիչ մասն է համարվում տվյալ տեքստը:

Հիպերտեքստ- Ներառում են մեծ ծավալի տեքստերի (բնագրեր) բազմություններ. դրանք տեքստային զանգվածներ են՝ գծային կառուցվածքով: Հիպերտեքստի ստեղծումը նոր տեղեկատվական դարաշրջանի սկիզբն է համարվում, որ հակադրվում է գրատպության (տպագրության) շրջանին: Հիպերտեքստային տեխնոլոգիաները լայն հնարավորություն են ընձեռում օգտագործողին և թույլ են տալիս հեշտությամբ կապակցել տեղեկության

տարբեր տեսակներ, ինչպիսին են սովորական տեքստը, նկարը, գծանկարը, աղյուսակը, գծապատկերը, տրամագիրը, տեսահոլովակը և այլն:

Ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներում հիպերտեքստը համարվում է նյութի կազմավորման և հաղորդակցման ավտոմատ համակարգին միանալու մուտքի թույլտվություն, որի ընթացքում տարբեր տեքստերի միջև հաստատվում կամ վերականգվում են որոշակի կապեր՝ ինչպես տվյալ կայքի այլ բաժիններ, այնպես էլ այլ կայքին հղում կատարելու միջոցով:

Հիպերտեքստի օրինակ են տերմինաբանական բառարանները, հաճախականության բառարանները, հեղինակային համաբարբառները և այլն:

Տերմինաբանական բառարանում, օրինակ, որոշ բառահոդվածներ բացատրելու փոխարեն հղում է կատարվում այդ նույն բառարանի այլ հոդվածների՝ այդպիսով ապահովելով միջտեքստային կապեր: Բնագրային համաբարբառում գլխաբառի բառահոդվածում տրվում են նրա բոլոր շարահյուսական կիրառությունները (նախադասությունների կառուցվածքով), որոնք սփռված են տեքստային տարբեր տարածություններում: Բառաքերականական համաբարբառներում գլխաբառի բառահոդված են կազմում բառային վկայությունները՝ համապատասխան էջերով, առանց բնագրային կիրառությունների: Համաբարբառը, հաճախականության բառարանի հետ համեմատած, թույլ է տալիս բացահայտել հենակետային (բանալի) բառերը, գաղափար կազմել հեղինակի գործածած բառային կազմի վերաբերյալ և հասկանալ նրա աշխարհայացքն ու աշխարհընկալումը:

Հիպերտեքստն ըստ էության ինքնակազմավորված տեքստ է. այդ տերմինը այժմ առավել հաճախ փոխարինում է *համակարգչային տեքստին*: Համակարգչային ծրագրերը, որոնք ապահովված են հիպերտեքստով, թույլ են տալիս իրականացնել տեղեկույթի արագ դիտարկման ապահովում, վերանշակել մեջբերման կամ առաքման հարաբերությունները, առկա տեքստը հարստացնել նոր տեղեկույթներով, անցում կատարել մեկ էլեմենտից մյուսին, ճանապարհորդել հիպերտեքստում՝ բացահայտելով նոր տեղեկույթներ:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հիպերտեքստը տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգում յուրահատուկ միջոց է, որ ծառայում է տեղեկույթի շարադրման, պահպանման և ներկայացման համար: Հիպերտեքստը ոչ թե տեքստ է բառի ուղղակի իմաստով, այլ համարվում է տեքստի կաղապար: Հիպերտեքստը չունի ո՛չ սկիզբ և ո՛չ էլ վերջ, որ ընթերցողին թույլ է տալիս ընտրելու տեղեկույթի ընկալման հաջորդականության որոշակի կարգ: Գիտատեխնիկական նվաճումների ժամանակակից փուլում հիպերտեքստային տեխնոլոգիաները լայն կիրառություն ունեն համացանցի դաշտում, մինչդեռ հիպերտեքստի գործառական լեզվաբանական սկզբունքների նկարագրությունն ու վերլուծությունն ամբողջությամբ դեռևս չի կատարվել:

Խոսույթ - Լայն իմաստով՝ այն հաղորդակցական գործընթաց է, որ տեղի է ունենում խոսողի և լսողի (դիտողի) միջև որոշակի ժամանակի և տարածության սահմաններում: Խոսույթի հասկացությունը ծագել է նախադասությունից դուրս գալու լեզվաբանական հետաքրքրությամբ՝ էլք դեպի վերֆրազային շարահյուսություն, քանի որ խոսույթի տեսությունն օգնում է նոր լույսի ներքո տեսնելու շարահյուսական մի շարք իրողություններ: Խոսույթը հաղորդակցական բարդ իրողություն է, որ տեքստային նյութից բացի ներառում է նաև գիտելիքներ աշխարհի մասին, կարծիքներ, դրույթներ, հասցեատեր և այլն:

Արդի ժամանակներում գեղարվեստական տեքստի նկատմամբ ցուցաբերում են խոսութային մոտեցում՝ ձևավորելով **գեղարվեստական խոսույթի** հասկացությունը: Այս դեպքում ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում են ոչ թե կապակցված, ավարտված տեքստին և նրա կառուցվածքի սկզբունքներին, այլ նրա գործառության մեխանիզմների վերլուծությանը մշակույթի բնագավառում: Խոսույթը մի կողմով վերաբերում է լեզվին, մյուսով՝ գեղարվեստական հաղորդակցության մասնակիցների մտավոր գործընթացներին: Ըստ այդմ՝ գեղարվեստական տեքստը, մի կողմից, լեզվական միավորների իրացման դաշտ է, մյուս կողմից՝ խոսքամտածողական գործընթաց, որ սահմանափակվում է խոսքային գործունեության առանձնահատուկ միջոցներով (գեղարվեստական խոսքի ոլորտում):

ԿՈՐՊՈՒՄԱՅԻՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - Բնական լեզվի ուսումնասիրությունն է տեքստային կորպուսի միջոցով: Կորպուսը որոշակի սկզբունքով հավաքված տեքստերի ամբողջություն է, յուրատեսակ շտեմարան, որը ծառայում է որպես լեզվաբանական որոնման համակարգ: Երբեմն կորպուս են անվանում տեքստերի որոշակի պարզ հավաքածուներ, որոնց հատվածները միավորված են լինում որոշակի ընդհանուր սկզբունքով (լեզվով, ժանրով, հեղինակով, տեքստերի ստեղծման ժամանակով, թեմատիկայով և այլն):

Կորպուսներ ստեղծողները փորձում են մեծ քանակությամբ իրական տվյալներ հավաքել՝ ցույց տալով այն, ինչ կատարվում է լեզվում: Տեխնոլոգիական զարգացման ներկա պայմաններում կան կորպուսներ, որոնք կարող են տեղեկություններ տալ բառի մասին՝ բառակազմական, ձևաբանական, շարահյուսական, երբեմն էլ իմաստաբանական տեսանկյուններից: Օրինակ, եթե գրված է «գալ» բայը, կորպուսը տալիս է այդ բայի բոլոր ձևերն ու կիրառությունները: Եթե պետք է իմանալ, թե այդ բայն ի՞նչ բառերի հետ է գործածվում, համակարգին տրվում է հարցում, և ստանում ենք կարևոր տվյալներ:

Կորպուսների օգտագործումը հետազոտողին հնարավորություն է տալիս հետևելու հետաքրքրող լեզվական իրողությունների (բառ, բառակա-

պակցություն, քերականական կարգեր, շարահյուսական կառույցներ և այլն) գործածությանը բնական լեզվի միջավայրում. այն է՝ իրականում գոյություն ունեցող, այլ ոչ թե արհեստական կառուցված տեքստերում:

Ժամանակակից լեզվաբանական հետազոտություններն ու աշխատանքները՝ բառարանները կամ քերականական ուսումնասիրությունները, այս կամ այն կերպ կողմնորոշված են լինում դեպի տեքստերի կորպուսները (օրինակ, Collins հրատարակչության բառարանները ստեղծվել են էլեկտրոնային լեզվական Bank of English կորպուսի հիման վրա):

Կորպուսային ԼԲ առարկան է՝ լեզվական տվյալների տեսական հիմքերի և կորպուսի ստեղծման ու օգտագործման պրակտիկ մեխանիզմների մշակումը, որոնք նախատեսված են լեզվաբանական հետազոտությունների համար՝ հասցեագրված օգտագործողների լայն շրջանակների:

Լեզվաբանական կորպուսներում տեքստերը ընտրվում են ոչ պատահականորեն, այլ *խնդրահարույց ոլորտին* համապատասխան, այսինքն՝ հետազոտողին հետաքրքրող լեզվական իրականության իրացման ոլորտին համապատասխան: Խնդրահարույց ոլորտն ունի երկու ասպեկտ՝ լեզվական և խոսքային: Լեզվական ասպեկտը հետազոտվող լեզվական երևույթն է, խոսքայինը՝ համատեքստերի բազմությունն է, որի շրջանակներում լեզվական իրողությունը ներկայացված է լինում:

Կորպուսի կազմությանն ու կառուցվածքին ներկայացվող առաջին պահանջը լիարժեքության պահանջն է: Կորպուս կազմողների խնդիրն է հնարավորինս մեծ քանակությամբ տեքստեր հավաքել լեզվի տվյալ ենթաբազմության վերաբերյալ, որի հետազոտության համար ստեղծվում է կորպուսը: Մյուս կողմից՝ որևէ կորպուս չի կարող լիովին ընդգրկել լեզվական որևէ իրողության բոլոր հնարավոր դրսևորումները:

Կորպուսի չափորոշիչներից է նրա ծավալը, օրինակ, Ռուսերենի ազգային կորպուսը ներառում է ավելի քան 140 միլիոն բառագործածություն, Bank of English Բրիտանական կորպուսը ներառում է շուրջ 2,5 միլիարդ բառագործածություն և այլն:

Կորպուսային ԼԲ առաջնահերթ խնդիրներից մեկը ազգային համապարփակ կորպուսների ստեղծումն ու ընդլայնումն է. այնպես, որ կիրառելի լինեն բոլոր լեզուների համար և ծառայեն տվյալ լեզվի ամենատարբեր իրողությունները հետազոտելու նպատակով: Աշխարհի շատ լեզուներ արդեն ունեն իրենց ազգային կորպուսները: Համընդհանուր ճանաչում ունի, մասնավորապես, Բրիտանական ազգային կորպուսը (BNC). սլավոնական լեզուների ազգային կորպուսների շարքում առանձնանում է Չեխական ազգային կորպուսը: Ազգային կորպուսներ կան նաև գերմաներեն, չինարեն, ֆիններեն, ռուսերեն և այլ լեզուների համար:

Հայերենի համար ստեղծվել է Արևելահայերենի ազգային կորպուսը (ԱՐԵՎԱԿ). այն բազմաթիվ արևելահայերեն տեքստեր պարունակող լեզվա-

բանական որոնման համակարգ է: ԱՐԵՎԱԿ-ի ընդհանուր բնութագիրը.

- մոտ 110 միլիոն բառամթերք,
- հզոր որոնման համակարգ բառային-ձևաբանական բարդ հարցումների հնարավորությամբ,
- 19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերն ստեղծված արևելահայերեն տեքստերի դիախրոնիկ կորպուս,
- արևելահայերենի գրավոր և բանավոր նյութի ընդգրկում,
- բառային-ձևաբանական և մետատեքստային ծանոթագրություններ,
- բաց համակարգ:

ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Լեզվի տեսության հիմնական հարցն այն է, թե ո՞րն է լեզվի էությունը, և ո՞րն է լեզվաբանության առարկան:

Լեզուն, կապված լինելով հասարակության մտածողության հետ, առիթ է տվել այն նույնացնելու մտածողության հետ, և այդ առումով էլ լեզվի տարբեր ըմբռնումներ են արտահայտվել լեզվաբանության տարբեր ուղղություններում: Դա բխում է այն բանից, որ լեզուն կապված է այլ երևույթների հետ, և բնականաբար լեզվաբանությունը շփման եզրեր ունի ուրիշ գիտությունների հետ: Շփման այդ եզրերում էլ առաջացել են անցողիկ կամ միջանցիկ գիտություններ, ինչպես՝ սոցիոլինգվիստիկա, մենտալինգվիստիկա, լեզվանշանագիտություն, պսիխոլինգվիստիկա, նատուրալիստական լեզվաբանություն, մաթեմատիկական լեզվաբանություն և այլն:

Լեզվաբանություն առարկայի որոշումն ու ճշգրտումը բխում է լեզվի էության ըմբռնումից: Տեսական լեզվաբանության մեջ կենսունակ են այն ըմբռնումները, որոնք լեզուն կապում են՝

1. մտածողության հետ (տրամաբանական լեզվաբանություն և միաժամանակ լեզվի տեսության մենտալինգվիստիկական ասպեկտ),
2. հոգեկան գործողության հետ (հոգեբանական լեզվաբանություն՝ պսիխոլինգվիստիկա և միաժամանակ լեզվի տեսության հոգեբանական ասպեկտ),
3. սոցիալական այլ երևույթների հետ (սոցիոլինգվիստիկա և միաժամանակ լեզվի տեսության սոցիալական ասպեկտ),
4. բնության երևույթների հետ (նատուրալիստական լեզվաբանություն և միաժամանակ լեզվի տեսության ակուստիկ-ֆիզիոլոգիական ասպեկտ),
5. նշանային այլ սիստեմների հետ (նշանագիտություն ու մաթեմատիկական լեզվաբանություն և միաժամանակ լեզվի տեսության լեզվա-նշանագիտության ասպեկտ),
6. հաղորդակցման մեխանիզմների հետ (հաղորդակցական լեզվաբանություն և միաժամանակ լեզվի տեսության հաղորդակցական ասպեկտ),

7. ճանաչողական գործունեության հետ (ճանաչողական լեզվաբանություն և միաժամանակ լեզվի տեսության ճանաչողական ասպեկտ),

8. մշակութային գործունեության հետ (լեզվամշակութաբանություն և միաժամանակ լեզվի տեսության մշակութաբանական ասպեկտ),

9. համացանցային հաղորդակցության հետ (համակարգչային լեզվաբանություն և միաժամանակ լեզվի տեսության հեռահաղորդակցության ասպեկտ),

10. տեքստային հաղորդակցության մեխանիզմների հետ (տեքստի լեզվաբանություն և միաժամանակ լեզվի տեսության տեքստային հարաբերությունների բացահայտման ասպեկտ),

11. քաղաքական խոսույթի կազմավորման մեխանիզմների հետ (քաղաքական լեզվաբանություն և միաժամանակ լեզվի տեսության քաղաքական ասպեկտ):

Իբրև բարդ հասարակական կազմություն, սերտորեն կապված մարդու և հասարակական գիտությունների տարբեր կողմերի հետ՝ լեզուն բազմոճակ երևույթ է: Լեզվի բազմոճակությունը, երբեմն էլ հասարակությունը հանդես է գալիս ինչպես նրա միավորների և կարգերի գործածության, այնպես էլ նրա ընդհանուր կառուցվածքի մեջ: Այս հակասությունը հանգեցնում է լեզվի և խոսքի հակադրությանը: Լեզվի հակասականությունը տարբեր ուսմունքների մեջ հանգեցրել է մի շարք հակադրությունների: Դրանք են՝

Կայուն և փոփոխական. Սա ներկայանում է մերթ իբրև անալոգիա և անոմալիա, մերթ իբրև վերարտադրվող (պատրաստի), մերթ էլ իբրև տրամաբանական կամ համամարդկային, մերթ էլ՝ անհատական, մերթ իբրև հնարավոր և իրական:

Ժամանակակից և անցյալ. Սա ներկայանում է մերթ իբրև սինխրոնիկ և դիախրոնիկ, մերթ իբրև վերժամանակյա և պատմական, մերթ իբրև կանոն և միտում:

Տրամաբանական և հոգեբանական. Սա ներկայանում է մերթ իբրև ընդհանուր և մասնավոր, մերթ օբյեկտիվ և սուբյեկտիվ, մերթ իբրև ռացիոնալ և էմոցիոնալ, մերթ իբրև մտածողության ձև և մտքի պրոցես, մերթ իբրև վերացական և կոնկրետ:

Հասարակական և անհատական. Սա ներկայանում է մերթ իբրև նորմա և ոճ, մերթ իբրև քերականություն և ոճաբանություն, մերթ էլ՝ համաժողովրդական և բարբառային:

Ձև և բովանդակություն. Սա ներկայանում է մերթ իբրև քերականություն և իմաստաբանություն, մերթ՝ լեզու և նորմա, մերթ համակարգ և լեզու:

Լեզվի հակասականությունը առավելաբար դրսևորվում է լեզվական համակարգի և նորմայի հարաբերության բնագավառում:

ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ – Լեզվական համակարգի կառուցվածքային

միավորներ, որոնց ամբողջությունը, առանձին վերցրած, կազմում է լեզվական այս կամ այն մակարդակը: Լեզվական միավորները նույնանում են լեզվի առանձին մակարդակների միավորների հետ: Ըստ այդմ՝ տարբերակում են՝ *խոսքային միավորներ* (հնչյուն, վանկ, շեշտ, տակտ, հնչերանգ), *բառային-բառակազմական միավորներ* (արմատ, ձևույթ, ածանց, բարդություն), *ձևաբանական միավորներ* (խոսքի մասեր, բառաձև, հարացույց) և *շարահյուսական միավորներ* հասկացությունները (բառակապակցություն, նախադասություն): Լեզվական միավորները խոսքային շղթայում միմյանցից անկախ չեն գտնվում և անկախաբար չեն գործածվում: միննույն լեզվական միավորը հանդես է գալիս լեզվական համակարգի տարբեր մակարդակներում և ուսումնասիրվում է լեզվաբանության տարբեր բաժիններում: Այսպես, *բառը*, որպես լեզվական միավոր, *հնչյունաբանության բաժնում* ուսումնասիրվում է հնչյունական կազմի առումով (ձայնավոր, բաղաձայն, երկհնչյուն, երկբարբառ, եռաբարբառ, վանկ, շեշտ, տողադարձ), *բառագիտության բաժնում* ուսումնասիրվում է ծագման (բնիկ հայերեն կամ փոխառյալ), ներբառությային (մենիմաստություն, բազմիմաստություն, ուղղակի և փոխաբերական իմաստներ) և միջբառությային իմաստների հարաբերությունների տեսանկյունից (հոմանշություն, հականշություն, համանունություն, հարանունություն), դարձվածակազմիչ դերի առումով և այլն, *ձևույթաբանության մեջ* ուսումնասիրվում է բառակազմության տեսանկյունից (պարզ, բարդ, ածանցավոր, բարդություն, սերող և բաղադրող հիմքեր), *ձևաբանության մեջ*՝ թեքականության և անթեքականության հատկանիշների առումներով (հոլովում, խոնարհում, հարացուցային ձևեր, քերականական կարգեր), *շարահյուսության մեջ*՝ շարահյուսական գործառույթների առումով (նախադասության անդամներ, նրանց հատուկ հատկանիշներ՝ խնդրառություն, համաձայնություն և այլն, սպասարկու դեր և այլն):

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐ - Լեզվական իմաստները, ըստ լեզվի միավորների հետ ունեցած հարաբերության, բաժանվում են երկու խմբի՝

1. Լեզվական միավորների սեմանտիկա (նրանց բովանդակությունը կոչվում է լեզվական կառուցվածքային իմաստներ):

2. Հասկացական և այլ կարգեր (սրանք հաղորդվող, տեղեկատվական իմաստներն են):

Լեզվական իմաստները՝ իբրև միավորի բովանդակություն, երկու տեսակ են՝ բառական (լեքսիկական) և քերականական:

Բառական իմաստ - Կապված է առանձին բառերի հետ (*քար* իմաստը՝ *քար* բառի հետ): Բառական իմաստը նյութական իմաստ ունեցող լեզվական միավորի բովանդակային պլանն է, որ հասկացվում է նրա հնչյունական թաղանթով. Դա այն իմաստն է, որ մենք հասկանում ենք տվյալ բառը լսելիս:

Քերականական իմաստ - Հատուկ է ոչ թե առանձին բառի, այլ բառախմբերի, այլ կերպ ասած՝ լեզվին՝ ամբողջությամբ, ինչպիսին են հոգնակիության, հոլովի, դեմքի, եղանակի, ժամանակի, սեռի և այլ կարգի իմաստները: Յուրաքանչյուր բառային իմաստ դրսևորվում է միայն ընդհանուր իմաստի միջոցով:

Քերականական իմաստները՝ որպես լեզվի դասակարգող հասկացություններ, պարտադիր են լինում բոլոր անհատների համար, իսկ բառային-լեքսիկական իմաստները տարբեր չափով են գործածվում խոսողի կողմից. սա պայմանավորված է խոսողի զարգացման մակարդակով, լեզվի ոճական միջոցներին տիրապետելու կարողությամբ, հստակ լեզվամտածողությամբ: Լեքսիկական իմաստների տարբերակայնությունը, համանշտությունը ավելի լայն ու բազմազան երևույթ է, քան քերականական իմաստներինը:

Բառական իմաստները դրսևորվում են ինչպես մենիմաստ, այնպես էլ բազմիմաստ բառերի բովանդակային պլանում: Մենիմաստ բառերի լեքսիկական իմաստները սահմանափակվում են տվյալ լեզվական միավորի շրջանակներում, մինչդեռ բազմիմաստ բառերի լեքսիկական նշանակությունները շատ են և միմյանց նկատմամբ գտնվում են հոմանշային հարաբերությունների մեջ: Օրինակ՝ մենիմաստ են տերմինները, ինչպես՝ *գոյական, ածական, բայ, խոնարհում, հոլով, ուղղական հոլով, ուղիղ խնդիր, տեղի պարագա* և այլն, որոնց իմաստները մնում են քերականական նշանակությունների շրջանակներում՝ որպես քերականական հասկացություններ:

Բառի հիմնական հատկանիշներից մեկն այն է, որ խոսքի մեջ կարող է արտահայտել շատ երևույթներ, առարկաներ, դրանց հատկանիշները, իսկ այդ բառերը պատմական զարգացման ընթացքում կարող են ձեռք բերել այլ իմաստներ և դառնալ *բազմիմաստ*: Բազմիմաստ բառերի նշանակությունները կարող են հասնել մի քանի տասնյակի. դրանց տարբերակված իմաստները սեմանտիկական հիմք ունեն. պատկանում են մեկ բառույթի: Հենց որ այդ իմաստներից մեկը շատ է հեռանում մյուսից կամ մյուսներից, բառույթը երկփեղկվում է, և առաջանում են համաձին բառական համանուններ, ինչպես՝ սուր¹ – «կտրող» և սուր² – «թուր»:

Մինչ այժմ այն կարծիքն է իշխել, որ լեզվում անհամեմատ մեծ տոկոս են կազմում բազմիմաստ բառերը, իսկ մենիմաստ բառերը շատ փոքր քանակություն են կազմում: Մեր օրերում, սակայն, այդ տեսակետն ընդունվում է վերապահությամբ:

Այսպես, էդ. Ադայանի կազմած «Արդի հայերենի բացատրական բառարանի» տվյալների համաձայն՝ մենիմաստ բառերն անհամեմատ ավելի շատ են, քան բազմիմաստները. հիշյալ բառարանը պարունակում է 135.600 բառ, որոնցից որպես բազմիմաստ են ներկայացված շուրջ 38.000-ը, իսկ մենիմաստ՝ 97.000-ը (ըստ Ա.Ա. Մակինյանի):

Բառի բառական իմաստը կարող է լինել ուղիղ և փոխաբերական.

այդ իմաստներն իրենց հերթին կարող են լինել պատճառաբանված և չպատճառաբանված:

Բառի ուղիղ իմաստը պատճառաբանված է այն դեպքում, երբ առկա են նրա բառակազմական անդամագատությունը և բառակազմական նշանակությունը, ինչպես՝ *պտղաբեր* - պտուղ բերող (տվող) – պատճառաբանված է:

Չպատճառաբանված այն բառերն են, որոնց կազմությունը հնարավոր չէ պարզել, ինչպես՝ *պտուղ*:

Բառերի փոխաբերական նշանակությունը միշտ էլ պատճառաբանված է, ինչպես՝ *ծաղիկ հասակ* (երիտասարդ տարիք), *ձյուն մազեր* (ձերմակ մազեր), *նավի քիթ* (նավի առաջամաս), *ոսկի ձեռքեր* (հմուտ՝ շնորհալի ձեռքեր) և այլն:

ՆՇԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ - Ուսմունք է նշանների, նշանային համակարգերի, նրանց տեսակների, ընդհանուր հատկանիշների, կառուցվածքի, գործառնությունների և նշանային իրադրության մասին: Նշանագիտության բնագավառում յուրաքանչյուր նշան առարկայական տեղեկության կրող է: Նշան կարող են դիտվել *մատնահետքեր, ձյունը, ջրվեժը, անձրևը, ծուխը, հրդեհը, եղյամբը, կրծքանշանը, գերբը, դրոշը, քարտեզը* և այլն:

Նշանագիտության մի բաժինը՝ *սեմիոտիկան*, ուսումնասիրում է նշանների ոլորտը, նշանային տարածությունը. վերջինս ներառում է նշանների և լեզվական հաղորդակցության միասնությունը, որ իրացվում է ժամանակի և տարածության մեջ:

Նշանագիտությունն ունի երեք բաժին.

1) Մինտակտիկա - նշանների շարահյուսություն. ուսումնասիրում է նշանների հարաբերությունը իրար նկատմամբ (մի համակարգի ներսում),

2) Սեմանտիկա – իմաստաբանություն. ուսումնասիրում է նշանների հարաբերությունը նշանակվողների նկատմամբ,

3) Պրագմատիկա - ուսումնասիրում է նշան գործածողների հարաբերությունը նշանների նկատմամբ:

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆ - Լեզուն նույնպես նշանային համակարգ է: Լեզվական նշան են նյութական բովանդակություն ունեցող բառերը, որոնք երկկողմանի միավորներ են. ունեն *արտահայտության պլան* (որ ընկալվում է լսողական և տեսողական ապարատի միջոցով), *բովանդակության պլան* (որ վերաբերում է օբյեկտիվ իրականության որոշակի հատվածի), *համակողմանիություն* (սպասարկում է կյանքի և մարդկային գործունեության բոլոր բնագավառները) և *կայունություն* (հիմնականում անփոփոխ են լեզվի պատմության ընթացքում), *ավանդականություն* (սերնդեսերունդ փոխանցվում են որպես հոգևոր մշակույթի ծածկագրեր):

Լեզվի նշանային համակարգն ունի ինչպես նշանային, այնպես էլ ոչ

նշանային հատկություններ: Լեզվի նշանները (նշանային հատկանիշները) ուսումնասիրում է *լեզվանշանագիտությունը*, որ գտնվում է լեզվաբանության և նշանագիտության շփման եզրում:

Նշանները լինում են *բնական* և *արհեստական (պայմանական)*:

Բնական նշան - Սրանք կոչվում են նաև հատկանիշներ, պայմանական կամ արհեստական նշանները՝ նշան-տեղեկատուներ: Բնական նշանները առարկայի կամ երևույթի մասն են, ինչպես՝ շոգ եղանակը ամառվա նշան է, սառույցը՝ ձմեռվա և այլն:

Արհեստական նշան - Սրանք ստեղծվում են հաղորդում ձևավորելու, պահպանելու, փոխանցելու, ինչպես նաև առարկաները, երևույթները արտահայտելու նպատակով:

Դրանք ունեն տարբեր տեսակներ՝ ազդանշան, խորհրդանշան, լեզվական նշան, նշան-փոխարինիչ:

Ազդանշան - Այն պայմանական նշան է, որ որոշակի բովանդակություն ունի, կապված իրադրության հետ՝ տեսողական և լսողական: Ինքնին վերցրած՝ ազդանշանը որևէ հաղորդում չի պարունակում, այդ հաղորդումը նրան տրված է, այն պայմանավորված է, ինչպես՝ փարոս, փողոցի լուսատու նշաններ, ճանապարհային նախազգուշացնող, հրամայող, ցուցիչ նշաններ (տեսողական), զանգ (դպրոցի, աղբ հավաքելու), ձայնային ազդանշան, սուլիչ (ավտոտեսուչի, մրցավարի):

Խորհրդանշան - Ազդանշանից տարբերվում է նրանով, որ բովանդակությունը ակնհայտ է, ինչ-որ բան խորհրդանշում է, զերծ է պայմանավորվածությունից. դրոշակ, գերբ, կրծքանշան, գլոբուս, քարտեզ:

Լեզվական նշան - Հաղորդակցման հիմնական նշանն է, որ երկկողմանի միավոր է. ակուստիկական պատկերի և իմաստի զուգորդումն է: Սա մյուսներից տարբերվում է նրանով, որ արտացոլում է մարդու գիտելիքները արտաքին աշխարհի մասին: Նա ծագման ժամանակ եղել է պայմանական, բայց ժամանակի ընթացքում նրա իմաստային կողմը կապվել է մարդու հասարակական գիտակցության հետ: Լեզվական նշան են համարվում լեզվի իմաստակիր միավորները՝ *ձևույթ, բառ, նախադասություն*:

Նշան-փոխարինիչ - Եթե բնական լեզվի նշանները առաջնային են, ապա փոխարինիչներն օժանդակ են, դրանք փոխարինում են ոչ թե առարկային կամ հասկացությանը, այլ առաջնային նշաններին (նշանի նշան են): Սրանք կարող են լինել ֆիզիկական, ակուստիկական (հնչյունական) և տեսողական: Օրինակ՝ պայմանական այբուբեններ, արհեստական լեզվի նշաններ, գիտություններում գործադրվող բազմաթիվ նշաններ՝ քիմիական, մաթեմատիկական բանաձևեր, Մորզեի այբուբենը:

Սրանք նշանի նշաններ են: Կան անգամ փոխարինիչի փոխարինիչներ, ինչպես՝ տառը հնչյունական նշանի փոխարինիչն է, իսկ Մորզեի այբուբենը՝ տառի փոխարինիչն է (փոխարինիչի փոխարինիչ):

ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – Լեզվի համակարգը նրա միավորների և մասերի ներքին կազմավորվածությունն է. ամեն մի միավոր համակարգի մեջ մտնում է որպես ամբողջի մաս և մյուս միավորների մասերի հետ անմիջական կամ միջնորդավորված կապերի մեջ է գտնվում: Ըստ այդմ՝ լեզուն բարդ և բազմաշախ կառուցվածք է. այն ունի իր կառուցվածքային տարրերը կամ ենթակառուցվածքները, որոնք կոչվում են մակարդակներ: Այդ մակարդակները թեև ունեն կառուցվածքային ինքնուրույնություն և տարբեր կերպ են գործառվում լեզվի համակարգի և նորմի պահանջներով, այնուամենայնիվ, կարող են գործածվել ինքնուրույնաբար, առանձին, այդ պատճառով էլ դիտվում են լեզվական համակարգի (մեկ ամբողջության) ենթակառուցվածքներ կամ ենթամակարդակներ: Հետևաբար լեզվաբանությունը բացահայտում է լեզվի կառուցվածքային մակարդակները, առաջին հերթին որպես հնչյունների ամբողջություն և համակարգ, երկրորդ՝ ձևայինների ամբողջություն և համակարգ, երրորդ՝ բառերի ամբողջություն և համակարգ, չորրորդ՝ բառաձևերի ամբողջություն և համակարգ, հինգերորդ՝ բառակապակցության և նախադասության տեսակների ամբողջություն ու համակարգ: Ընդհանուր առմամբ, լեզվի կառուցվածքը դիտվում է իբրև հաղորդակցման մեխանիզմ: Այդ մեխանիզմը շատ բարդ համակարգ է. նրա կազմահարկի մեջ մտնում են ծավալով տարբեր մակարդակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի միատեսակ միավորներ: Այդ մակարդակները թեև ունեն որոշակի ինքնուրույնություն, այնուամենայնիվ բոլորը միասին ձևավորում են լեզվի հաղորդակցման մեխանիզմը:

Լեզվի մակարդակները դասակարգվում են որոշակի սկզբունքներով.

ա) ամեն մի մակարդակի միավոր հանդես է գալիս նաև այլ մակարդակի կազմում, մասնակցում նրա կազմավորմանը կամ ամբողջացնում այն,

բ) ցանկացած մակարդակի միավոր տարբերակայնորեն վերարտադրվում է հաջորդ մակարդակում՝ ի վերջո հանդես գալով ավելի բարդ միավորի՝ խոսքի կառուցվածքում,

գ) յուրաքանչյուր մակարդակի միավոր հանդես է գալիս որպես նշան,

դ) բոլոր մակարդակների միավորները կազմում են նշանների ամբողջություն՝ ձևավորելով լեզվի նշանային համակարգը:

Լեզվական մակարդակները լեզվի կառուցվածքի մեջ դասավորված են աստիճանական, կազմահարկային (յարուսային) ձևով: Դրանք ներկայացնում են հատած բուրգի շուռ տված պատկեր և ստորոտից բարձրանում են վեր. յուրաքանչյուր նախորդ մակարդակ ծառայում է հաջորդ մակարդակի ձևավորմանը: Ըստ այդմ՝ տարբերակում են.

1. Հնչյութային մակարդակ: Այդ մակարդակի միավորը *հնչյություն* է, որը մտնում է ձևային և բառի հնչյունական թաղանթի մեջ, տարբերակայնորեն

վերարտադրվում է ձևայինների և բառերի կազմում, ունի ներքին տարբերակիչ հատկանիշների համակարգ, հանդես է գալիս որպես լեզվական առաջնային նշան (ազդանշան):

2. **Ձևային-ձևաբանական մակարդակ:** Այս մակարդակն ունի երկու միավոր՝ *ձևային* և *բառաձև*: Ձևային մտնում է բառի և նրա քերականական ձևերի՝ բառաձևերի կազմի մեջ, տարբերակայնորեն վերարտադրվում է բառերի և նրա քերականական ձևերի կազմում, ունի ներքին ամբողջականություն, հանդես է գալիս որպես մասնակի նշան: Բառերի քերականական ձևերը հատուկ են լիմաստ (թեքվող) խոսքի մասերին, իսկ չթեքվող խոսքի մասերն ունեն սպասարկու դեր:

3. **Բառային մակարդակ:** Այս մակարդակի միավորն է *բառը*, որ մտնում է բառակապակցության կազմի մեջ, մասնակցում է բառակազմական կադապրների և ձևաբանական կարգերի կազմությանը, ամբողջացնում է հնչույթների և ձևայինների իրացումները, տարբերակայնորեն վերարտադրվում է բառակապակցությունների և նախադասությունների (ասույթների) կառուցվածքում, հանդես է գալիս իբրև առանձնահատուկ նշան (կիսանշան), որի նշանակյալ է դառնում ինքնուրույն նշանակությունը կամ նշանակությունների միկրոհամակարգը:

4. **Շարահյուսական մակարդակ:** Այս մակարդակի միավորներն են *բառակապակցությունն ու նախադասությունը*, որոնք մասնակցում են տեքստի (բնագրի) կառուցմանը, ամբողջացնում են շարակարգային հարաբերությունները ձևաբանական կարգերի միջև, տարբերակայնորեն վերարտադրվում են տեքստի կառուցվածքում, ունեն ներքին ամբողջականություն (շարահյուսական իմաստների և նրանց արտահայտման միջոցների միասնականություն), հանդես են գալիս իբրև լեզվական լրիվ նշաններ:

Մասնագիտական գրականության մեջ ընդունում են նաև ***միջանկյալ կամ անցողիկ մակարդակներ***՝ *ձևային-հնչույթաբանական, բառակազմական* և *դարձվածաբանական*: Ձևային-հնչույթաբանականի միավորներ են համարվում ձայնդարձը, հերթագայությունը, շեշտը և այլն: Բառակազմականն ուսումնասիրում է բառաբարդումը, ածանցումը և հապավումը, այս մակարդակի մեջ են զետեղվում նաև ձևայինները: Դարձվածաբանականն ուսումնասիրում է լեզվի դարձվածքները, նրանց ծագումը, տեսակները և այլն:

Լեզվական համակարգի ենթամակարդակները, առանձին վերցրած, յուրահատուկ կառուցվածքներ կամ համակարգեր են. լեզվական յուրաքանչյուր մակարդակում կարելի է առանձնացնել այդպիսի «համակարգեր». այսպես՝ հնչյունաբանական մակարդակում կարելի է առանձնացնել *բաղաձայնական համակարգը*, բառային մակարդակում՝ *տերմինների համակարգը*, ձևաբանականում՝ *հոլովական համակարգը*, *եղանակի համակարգը*, *խոնարհման համակարգը*, շարահյուսականում՝ *բառակապակցությունների*

քերականական խմբերը, գլխավոր կամ երկրորդական անդամների համակարգը և այլն: Ըստ այդմ՝ լեզվի համակարգը, որ ներառում է համակարգերին համարժեք ինքնուրույն ենթահամակարգեր, իրավամբ դիտվում է *համակարգերի համակարգ*:

Լեզվական համակարգը՝ որպես վերացական սխեմա, իրացվում է խոսողական գործունեության ընթացքում. նրա բաղադրիչները, առանձին վերցրած, ուղղահայաց հարացույցի անդամներ են, որոնք խոսքային պրակտիկայում դառնում են հորիզոնական հարացույցի անդամներ՝ կազմելով կապակցված խոսք (դարձվածք, նախադասություն, պարբերությո՜ւթ, շարույթ, տեքստ և այլն): Լեզվական համակարգը (համակարգի կարգային անդամները) խոսողական գործունեության ժամանակ ենթարկվում է որոշակի ազդեցությունների՝ պայմանավորված հանրության լեզվագործածության մակարդակով և նախասիրություններով:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուր լեզու իր գոյության որևէ ձևի մեջ հանդես է գալիս որպես կոնկրետ հասարակական-պատմական նորմ:

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ - Արդի լեզվաբանության մեջ լեզվական նորմը բխեցվում է լեզվի համակարգի և խոսքի հետ համեմատվելուց: Լեզվի համակարգն ըմբռնվում է որպես լեզվի կառուցվածքի պոտենցիալ և նրա վերացական սխեմա, իսկ լեզվական նորմը՝ իբրև կառուցվածքային սխեմայի հնարավորությունների իրացում կոնկրետ պատմական ձևի մեջ:

Լեզվի համակարգն անմիջականորեն հակադրվում է լեզվական նորմին. համակարգն ու նորմը գտնվում են մշտական հակադրության մեջ: Լեզվի մեջ առկա են տարբեր շերտեր, և նորմը թույլ չի տալիս համակարգային ձևերին զուգահեռ ոչ համակարգային ձևերի գործածություն: Համակարգը և նորմը ժամանակի ընթացքում ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Լեզվական յուրաքանչյուր համակարգ իրացվում է որոշակի ժամանակահատվածում: Օրինակ, գրաբարի համակարգը նորմատիվ է լեզվի զարգացման հին հայերենի ժամանակահատվածի համար, մյուս կողմից՝ հնարավոր չէ, որ գրաբարի համակարգը նույնությամբ իրացվի ժամանակակից հայերենում: Այլ կերպ ասած՝ երբ ասվում է կոնկրետ պատմական ձև, նկատի է առնվում լեզվի զարգացման պատմական (տվյալ) գոյավիճակը:

Լեզվական նորմը երեք հատկություն ունի.

1. ընտրականություն (նյութի փոխակերպման օրենք),
2. կայունություն կամ ավանդականություն (նյութի պահպանման օրենք),
3. պարտադրականություն:

Ընտրականություն - Ամեն մի լեզվական նորմ յուրովի է իրացնում լեզվի համակարգի հնարավորությունները և տարբեր կերպ է արձանագրում մարդկանց ճանաչողական գործունեությունը: Սրա շնորհիվ նորմն ընդու-

նակ է զարգանալու և տարբերակներ ունենալու: Դա լեզվի նորմը դարձնում է բարդ, հակասական և շարժուն երևույթ:

Օրինակ՝ 19-րդ դարում գեղարվեստական գրականության մեջ, հատկապես Բաժֆու ստեղծագործություններում, կենսունակ են բայի անցյալ կատարյալ ժամանակի կրավորաձև խոնարհումները (կազմությունները)՝ *ընկղմվեցալ, ծածկվեցալ*: Ժամանակի ընթացքում նորմն ընտրեց ներգործաձև խոնարհման ձևերը՝ *ընկղմվեց, ծածկվեց* և այլն:

Նորմի ընտրականությունը կարևոր գործոն է դառնում լեզվական զուգաձևությունների հարցում. նորմը դրանցից ընտրում է մեկը: Այդպես նաև՝ *սկսեց // սկսալ, ասեց // ասաց // ասալ*, զուգաձևություններից նորմն ընտրեց *սկսեց, ասաց*, տարբերակները և այլն: Մեկ այլ դեպքում գիտի // գիտե, արժի // արժե զուգաձևություններից նորմն ընտրել է ե-ով ձևերը՝ *արժե, գիտե* և այլն:

Կայունություն - Նորմը լեզվի կոլեկտիվ գիտակցության մեջ հանդես է գալիս որպես ընդհանուր բան՝ փոխանցվելով սերնդից սերունդ: Այն միավորում է ժամանակով, տարածությամբ, սոցիալական դրությամբ և գիտելիքների մակարդակով տարբեր խոսողների խոսողական գործունեությունը: Կայունությունը դրսևորվում է լեզվական ավանդույթների պահպանմամբ:

Օրինակ, գրաբարում Ե լծորդության որոշ պարզ բայեր անցյալ կատարյալում -եաց հիմնային ածանցի փոխարեն ստանում են -աց, ինչպես՝ ասել - ասաց, գիտել - գիտաց, մերկել - մերկաց, մարթել - մարթաց, կարել - կարաց: Այստեղ նորմը ճնշում է համակարգին՝ ստիպելով՝ գործածել -աց հիմնային ածանցը: Ժամանակի ընթացքում, բացի *ասաց* բայաձևից, մյուսները դուրս են եկել գործածությունից, և նորմը պահպանել է օրինաչափ է *ասաց* ձևը, սա կայունության դրսևորում է. հետևաբար ասաց-ը նորմայի գործածությունն է:

Գրաբարում Ու լծորդության պարզ բայերը անցյալ կատարյալում ստանում են արմատական հիմք, սակայն որոշ բայեր շեղվում են համակարգից, ինչպես՝ լնուլ - լից, խնուլ - խից, ընթեռնուլ - ընթերց և այլն: Այս բայերի գրաբարյան երկրորդ հիմքն արդի հայերենում գործառվում է որպես առաջին հիմք (անորոշ դերբայում), ինչպես՝ խց-կ-ել, լց-ն-ել, ընթերց-ել և այլն:

Գրաբարում *նստիմ* բայի անցյալ կատարյալը շեղվում է կանոնավոր խոնարհման համակարգից՝ ստանալով արմատական հիմք՝ *նիստ*. այդ հիմքը պահպանվել է արդի հայերենում և գործում է բայի խոնարհման համակարգում՝ առաջին և երկրորդ հիմքից կազմվող ձևերում: Սա նորմի կայունության դրսևորում է:

Արդի հայերենում *կայսեր, դստեր* գրաբարյան ձևերի գործածությունը ժառանգականության դրսևորում է, իսկ -ություն ածանց ունեցող բառերի Ա ներքին թեքման տիպը լեզվական ավանդույթների պահպանման հետևանք է:

Պարտադրականություն - Այն բխում է ոչ թե լեզվի համակարգի ներքին դրսևորումից, այլ արտաքին պահանջներից, լեզվի որևէ իրողության ընդունելի լինելուց: Հանրության կողմից ճանաչված իրողությունները ոչ միայն պարտադիր, այլև ճիշտ են համարվում. օրինակ, եթե օժանդակ բայի 3-րդ դեմքում գործածում ենք Հ օժանդակ բայը (և ոչ թե՝ ա), սա ճիշտ է և նորմի պարտադրականության հետևանք է:

Նորմի պարտադրականությունը կարող է դրսևորվել հարացուցային ձևերի շրջանակներում՝ որպես համակարգող հատկանիշ: Օրինակ, գրաբարում ժամանականիշ բառերը, ինչպես նաև կենդանի և թռչուն նշանակող բառերը ենթարկվում են Ու հոլովման. *ժամ-ու, շաբաթ-ու, առաւօտ-ու, առիւծ-ու, ցլ-ու, արջ-ու, հաւ-ու, կաքաւ-ու* և այլն: Հոլովման այս օրինաչափությունը հին հայերենի գոյավիճակում նորմի պարտադրականության դրսևորում է: Արդի հայերենում գրաբարյան *ձուկ(ն) – ձկան, մուկ(ն) – մկան, եզ(ն) – եզան, թռռ(ն) – թռռան* ձևերի գործածությունը նորմայի պարտադրականություն է. արդի հայերենում այդ բառերը եզակի ուղղականում հանդես են գալիս առանց Ն ձայնորդի. հետևաբար թեք ձևերում Ն ձայնորդի առկայությունը նույնպես նորմի պարտադրականության հետևանք է:

Նորմը՝ որպես հասարակական-պատմական երևույթ, ենթադրում է համակարգային և ոչ համակարգային իրողությունների պահպանում և համակարգի իրացման տարբերակայնության ճանաչում:

Լեզվի համակարգը և նորմը գտնվում են տարաբնույթ հարաբերությունների մեջ. ընդհանրապես համակարգային ձևերն ունեն նորմատիվ կիրառություններ: Երբեմն նորմն իրացնում է ոչ համակարգային ձևեր. այս դեպքում նորմը իշխում է համակարգի վրա: Սա նշանակում է, որ համակարգը և նորմը կարող են գտնվել հակասության մեջ. վերջինս ունի մի շարք դրսևորումներ:

1. Համակարգային որոշ ձևեր կարող են չիրացվել, և հարացույցը այդ դեպքում մնում է բաց: Օրինակ, գոյականի հոլովման համակարգը ենթադրում է, որ բոլոր գոյականները պետք է ունենան ներգոյական հոլովաձև (-ում մասնիկով): Սակայն նորմը ցույց է տալիս, որ անձնանիշ գոյականները ներգոյական հոլովաձև չունեն, ինչպես՝ *ուսուցիչ, մանկավարժ, տղա, աղջիկ, հայր, մայր, օղաչու* և այլն:

Տվյալ դեպքում անձնանիշ գոյականների հոլովական հարացույցը մնում է բաց կամ նրանց հարացույցը լինում է պակասավոր (թերի):

2. Համակարգային միավորներն իրացնելիս նորմն ստեղծում է գուգահեռ ձևեր. այդպես առաջանում են հավելավոր հարացուցային ձևերը: Հավելավոր հարացուցային ձևեր առաջանում են գրաբարի գոյականի և դերանվան հոլովման համակարգերում: Հմտ. Ե ներքին թեքման գոյականների հոգնակի թեք ձևերը. *աստեղ* - *աստեղաց, դստերց* - *դստերաց, յաստեղ* - *յաստեղաց, ի դստերց* - *ի դստերաց, աստեղք* - *աստեղօք, դստերք* -

դաստերօք և այլն: Հավելավոր հարացուցային ձևեր ունեն ցուցական դերանունները՝ *այսր - այսորիկ, այսմ - այսմիկ, յայսմ - յայսմանէ, այսու - այսուիկ, այսց - այսոցիկ, զայս - զայսոսիկ, ամենեցուն - ամենեցունց* և այլն:

3. Համակարգային որոշ ձևեր կանոնավոր հարացույցներից շեղվում են և փոխարինվում այլ միավորներով: Այսպես, արդի հայերենում բայի խոնարհման համակարգում որոշ բայեր չունեն անկատար դերբայաձև՝ համապատասխան -ում վերջավորությամբ, ինչպես *տալ, գալ* և *լալ* բայերը: Սրանց անկատար դերբայի կազմությանը մասնակցում է -իս մասնիկը (տալիս, գալիս, լալիս): Այլ կերպ ասած՝ նորմը պարտադրում է, որ համակարգային ձևերը լրացվեն այլ կազմություններով:

Այս երևույթն ավելի լայն տարածում ունի լեզուներում: Որպես օրինակ՝ դիտարկենք բայի խոնարհման համակարգում (երկրորդ հիմքից կազմվող ձևերում) հարացուցային ձևերի փոխարինումը լեզվական այլ միավորներով, որ կատարվում է նորմի պարտադրականության հետևանքով: Այսպես, մի շարք բայեր գրաբարի անցյալի հիմքը կազմում են լեզվական այլ միավորներով: Ինչպես՝ երթալ - *չոգ*, ուտել - *կեր*, գալ - *էկ*, ըմպել - *արբ*, առնել - *արար*, լսել - *լռ*, լինել - *եղ* և այլն:

Անգլ. *to be-was/were, go-went, eat-ate*, լատիներենում՝ *esse* օժանդակ բայի անցյալ կատարյալը՝ - *fui, fuisti, fuit, fuimus, fuistis, fuerunt*, գերմաներենում *sein* օժանդակ բայի ներկան՝ - *bin/bist/ist, sind*:

4. Համակարգային որոշ ձևեր ունենում են ձևակազմական փոփոխություններ:

Այսպես՝ գրաբարի Ե լծորդության պարզ բայերի անցյալի հիմքը ունենում է ցոյական կազմություն՝ -եաց հիմնային ածանցով, ինչպես՝ *գրել - գրեաց, երգել - երգեաց, շարժել - շարժեաց* և այլն:

Նորմի պարտադրականության հետևանքով որոշ բայեր ստանում են -աց հիմնային ածանց, ինչպես՝ *ասել - ասաց, գիտել - գիտաց, մերկել - մերկաց, մարթել - մարթաց, կարել - կարաց*: Կամ՝ ՈԻ լծորդության պարզ բայերն անցյալ կատարյալում ստանում են պարզ (արմատական) հիմք, ինչպես՝ *կիզուլ - կէզ, հեղուլ - հեղ* և այլն: Նույնատիպ մի շարք բայեր, ըստ նորմի, անցյալ կատարյալում իրացվում են ցոյական հիմքով. *լնուլ - լից, խնուլ - խից, զգենուլ - զգեց, ընկենուլ - ընկեց* և այլն: Լեզվի նորմը լեզվի համակարգի ամենից կայուն, ավանդական տարրերի ամբողջությունն է, որոնք պատմականորեն ընտրվել և ամրապնդվել են հանրության լեզվական պրակտիկայում:

ՆՈՐՄԻ ՏԵՄԱԿՆԵՐԸ - Լեզվի նորմավորումը և կանոնարկումը լեզվում գործող կանոնների գիտակցված դասակարգումը, մշակումը և միօրինականացումն են՝ բառարանների, ուղեցույցների, տեղեկատուների, քերականական ձեռնարկների և դասագրքերի միջոցով:

Կարելի է ասել, որ լեզվական, մասնավորապես գրական նորմն արտացոլված է լեզվի կառուցվածքային բոլոր ոլորտներում (ուղղագրություն, ուղղախոսություն, հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն), ըստ այդմ, գրական նորմը ներառում է գրական լեզվի բոլոր իրողությունները և համապատասխանաբար կարող է լինել՝

-*ուղղագրական նորմ*. սահմանում է համընդհանուր միասնական գրություն լեզվի բառերի համար,

-*ուղղախոսական նորմ*. սահմանում է լեզվի հնչյունների և հնչյունակապակցությունների արտասանության միասնական կանոններ,

-*բառային նորմ*. սահմանում է գրական լեզվի այս կամ այն բառական միջոցների գործածությունները՝ դրանք սահմանազատելով տարածքային և հասարակական տարբերակների բառային միավորներից,

-*տերմինաբանական նորմ*. սահմանում է լեզվի պետական տեսչության կողմից հաստատված տերմինների գործածություն,

-*քերականական նորմ*. սահմանում է բառաթեքական (խոնարհման, հոլովման, անվանական սեռի համաձայնության) և նախադասությունների մեջ բառերի կապակցության կանոնները,

-*կետադրական նորմ*. սահմանում է լեզվում ընդունված կետադրական կանոնների կիրառման դեպքերը,

-*ռճական նորմ*. սահմանում է խոսքարվեստի միջոցների կիրառման կանոնները:

ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ - Ժամանակակից լեզվաբանության կենտրոնական հարցերից է լեզվի և հասարակության կապերի բացահայտումը: Լեզվի և հասարակության փոխհարաբերության հարցերով զբաղվում է հանրալեզվաբանությունը (սոցիոլինգվիստիկա), որ ուսումնասիրում է՝

ա) լեզվի ծագումը և հասարակական բնույթը,

բ) լեզվի հասարակական տարբերակները,

գ) լեզվի հասարակական բազմագործառույթ դրսևորումները,

դ) լեզվի գործառույթները բազմալեզու հանրություններում,

ե) ազգամիջյան լեզու դառնալու պայմանները,

զ) միջազգային լեզու դառնալու պայմանները,

է) լեզվի վրա հասարակության գիտակցական ազդեցության ձևերը և այլն:

Մարդկային հասարակության և լեզվի ծագման գործընթացների միջև ակնհայտորեն կապ գոյություն ունի. ըստ այդմ՝ լեզվի և հասարակության կապերի էության ու նրանց բնութագրերի վերաբերյալ լեզվաբանական տարբեր ավանդույթներում առաջացել են տարբեր տեսակետներ:

1) Որոշ մասնագետներ կարծում են, որ լեզվի զարգացումն ու գոյությունը առարկայապես արտացոլում են հասարակության զարգացումն ու կենսակերպը (Պ. Լաֆարգ, Ա. Մեյե, Ժ. Վանդրիես):

2) Ումանք նկատում են, որ լեզուն զարգանում և իր գործառույթները իրականացնում է սեփական օրենքներով. այս դեպքում լեզվի զարգացումը հասարակական օրենքներով մեկնաբանելը ճիշտ չէ (Ե. Կուրիլովիչ):

3) Ամերիկյան և արևմտաեվրոպական որոշ մասնագետներ էլ ընդունում են *Մեյի-Ուորֆի վարկածը*, որ հայտնի է «լեզվաբանության հարաբերականության տեսություն» անվանումով, համաձայն որի՝ լեզվի կառուցվածքը որոշում է լեզվակիր տվյալ հանրության մտածողության կառուցվածքը և արտաքին աշխարհի ճանաչման եղանակը: Այլ կերպ ասած՝ լեզվի առանձնահատկությունը պայմանավորում է տվյալ ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման մակարդակը:

4) Խորհրդային լեզվաբանները ելնում են ինչպես լեզվի զարգացման ներքին գործոններից, որ պայմանավորված է նրա համակարգի յուրահատկություններով, այնպես էլ արտաքին գործոններից, որոնք առնչվում են հասարակական երևույթներին. վերջիններս էլ ազդում են լեզվի զարգացման և նրա գործառույթների բնութագրերի վրա: Ընդ որում՝ այդ ազդեցությունը լինում է ոչ թե ուղղակիորեն, այլ անուղղակի կերպով (հատկապես՝ բառային կազմի բնագավառում). այն կարող է արագացնել կամ դանդաղեցնել լեզվի զարգացման ընթացքը, բայց ոչ թե փոխել նրա ուղղությունը (Ե. Պոլիվանով):

Հասարակությունը, անշուշտ, որոշակի ազդեցություն ունի լեզվի վրա ընդհանրապես: Այդ ազդեցությունը տարատեսակ դրսևորումներ ունի, որի ձևերից մեկն է լեզվի *հասարակական տարբերակումը* (տարբերակների ձևավորումը), որ պայմանավորված է հասարակության ոչ միատարր կառուցվածքով: Հասարակության լեզվական պրակտիկայում հանդիպող *ծածկալեզու, արգո, ժարգոն, սլենգ, արհեստական լեզու* տարբերակները այդ փոխազդեցությունների անմիջական հետևանք են (Տե՛ս համապատասխան բառահոդվածները):

Այդ կարգի փոխազդեցությունների դրսևորում է նաև այն, որ ժամանակակից ազգային լեզուներում գոյություն ունեն *տարածքային (բարբառային) տարբերակներ և գրական լեզու*. վերջինս՝ որպես հասարակական և գործառական առավել նշանակալի ձևավորում (Տե՛ս համապատասխան բառահոդվածները):

Լեզվի և հասարակության կապի մյուս ձևը *լեզվական միավորների գործածության կախվածությունն է* լեզվակիրների հասարակական բնութագրերից (տարիքային առանձնահատկություն, կրթական մակարդակ, մասնագիտություն և այլն), հաղորդման մասնակիցների հասարակական դերից, հաղորդման իրադրությունից և այլ գործոններից:

Մյուս կողմից՝ լեզուն սպասարկում է հասարակության կարիքները ամենատարբեր բնագավառներում, ինչպես՝ գիտություն, գրականություն, ՁԼՄ –ներ, գործնական ու կենցաղային իրադրություն և այլն: Գործածվելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ լեզուն ենթարկվում է այս կամ այն բնագավառի «ագրեսիային» և կրում է որոշակի փոփոխություններ, որի հետևանքով էլ ձևավորվում են գործառական տարբերակները՝ *լեզվի ոճերը*:

Լեզվի և հասարակության կապի խնդիրն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում *բազմալեզու հանրության լեզվական պրակտիկայում*: Այս ոլորտում ուսումնասիրվում են հանրությունների և նրանց սպասարկող լեզուների փոխհարաբերությունները, տարբեր լեզուների փոխադեցությունները (տարալեզու հանրության պայմաններում), ինչպես նաև այն գործընթացները, որոնք որևէ լեզվի նպաստում են դառնալու *ազգամիջյան հաղորդակցման գործիք*, որոշ լեզվի (կամ լեզուների) էլ՝ ձեռք բերելու *միջազգային լեզվի կարգավիճակ* և այլն:

Տարբերակում են նաև լեզվի վրա հասարակության ունեցած *ինքնին (սպոնտան) ազդեցության ձևը և լեզվական քաղաքականությունը*: Դա արտահայտվում է հասարակության կողմից նպատակաուղղված գիտակցական վերաբերմունքով, որ կոչված է նպաստելու լեզվի գործառույթների արդյունավետությանը հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում. այն ունի իր դրսևորումները՝

ա) գիր չունեցող լեզուների համար գրային համակարգի և այբուբենների ստեղծում,

բ) ուղղագրական և կետադրական բարեփոխումների անցկացում,

գ) ուղղախոսական նորմերի կանոնարկում,

դ) փոխառյալ բառերի գործածության սահմանների հստակեցում,

ե) մասնագիտական տերմինաբանների ստեղծում,

զ) լեզվաբանական բառարանների ստեղծում,

է) մայրենի լեզվի նկատմամբ վերահսկողական աշխատանքների իրականացում և այլն:

ԽՈՍՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ - Լեզվի և հասարակության կապերի բազմազան դրսևորումներից մեկն էլ այն է, որ *լեզվի միջոցով է իրականացվում հասարակության խոսողական գործունեությունը*: Խոսողական գործունեությունն ունի երկու կողմ՝ անհատական և հասարակական:

1. Անհատական – հոգեբանական - Խոսողական գործունեությունը մարդկանց հաղորդակցման ակտ է, իսկ դա ենթադրում է ընդհանուր բնագրի և խոսքային իրադրության, լեզվի և անհատական հաղորդման առկայություն: Հաղորդման ակտը բարդ է. ունի բանավոր կամ գրավոր երկխոսության ձև: Հաղորդումը՝ որպես հոգեկան գործունեության դրսևորում,

ենթադրում է խոսքի սերում և ընկալում. դրանք խոսքի հոգեֆիզիկական մեխանիզմներն են:

Խոսքի սերման չորս մակարդակներ կան.

1. հիմնավորվածություն,
2. իմաստաբանական,
3. քերականական,
4. հնչյունական:

Հիմնավորվածության մակարդակը նախապատրաստականն է: Սա խոսողին տրամադրում է որոշակի նպատակների համար միջոցներ ընտրելու, այն ապահովում է ոչ միայն խոսքի սերումը, այլև ընկալումը:

Իմաստաբանականը կապված է քերականականի հետ և արտահայտում է ընդհանրացման և հաղորդակցման միասնությունը: Խոսողն ընտրում է բառերի և կառույցների այնպիսի տարբերակներ, որոնք անհրաժեշտ են տվյալ հաղորդման համար:

Քերականականը մտքի ձևավորումն է՝ քերականական ձևերի և խոսողի գիտելիքների համապատասխան:

Հնչյունական մակարդակը ձևավորված միտքը արտահայտում է հնչյունական համապատասխան միջոցներով:

2. Հասարակական - Խոսքի հասարակական բնույթը պայմանավորված է նրանով, որ ենթադրում է տիպային խոսքի իրադրություն, տիպային բնագրեր: Լեզուն տիրապետողները յուրացնում են լեզվի քերականական կառուցվածքը, բառային կազմը, իսկ այս հանգամանքն էլ ստեղծում է խոսողական գործունեության հասարակական բնույթը:

Լեզվի և հասարակության փոխադարձ կապերը բնութագրվում են ինչպես լեզվի զարգացման համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա կտրվածքներում:

ԼԵԶՈՒ ԵՎ ՊՍՏՄՈՒԹՅՈՒՆ - Լեզվի զարգացման ընթացքում նրա կառուցվածքային միավորները մշտապես ենթարկվում են փոփոխությունների: Այդ փոփոխություններն արտահայտվում են ինչպես նրա համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա կտրվածքներում: Լեզվի միևնույն փուլի շրջանակներում և նրանից դուրս կատարված փոփոխությունները լինում են տարբեր բնույթի: Ըստ այդմ՝

ա) լեզվի նույն գոյավիճակի սահմաններում փոփոխության հիմնական գործընթացը լեզվական-քերականական միջոցների *փոփոխայնությունն ու քանակական փոփոխությունների կուտակումն* է՝ նրա կառուցվածքի ու նորմայի մեջ,

բ) լեզվի տարբեր գոյավիճակների սահմաններում փոփոխության հիմնական գործընթացը լեզվական-քերականական միջոցների *փոխարինումն ու որակական տեղաշարժերն* են՝ նրա կառուցվածքի ու նորմայի մեջ:

Փոխարինումը՝ որպես լեզվական գործընթաց, հանգում է նրան, որ եղած միջոցներից մեկը դուրս է մղում մյուսներին, կորցնում է կապը նրանց հետ՝ գործածվելով որպես լեզվի նոր միավոր: Այսպես՝ հայերենի պատմության ընթացքում կառուցվածքային բազմաթիվ միավորներ վերախմաստավորվել են որպես խոնարհման ձևեր, հոլովամասնիկներ:

Օրինակ՝ գործիականի *աւք - օք - ոք - բ*, սեռականի և տրականի *ոց, աց, ից*, բացառականի *է* հոլովակերտ մասնիկները վերախմաստավորվել և այլ կիրառություն ունեն. այժմ դրանք չեն կապվում նշված հոլովների հետ. հմմտ. գործիականի *հարկավ, իրավ, մասամբ, իրոք, իրավամբ*, բացառականի *իհարկէ, ի սրտէ, ի լրո, սեռական - տրականի հայոց, վրաց, պարսից* և բայական *կեցցէ, կարծես, գուցէ, համարյա* ձևերը և այլն:

Սրանք չեն դիտվում հոլովման կամ խոնարհման ձևեր, քանի որ փոխվել են այս հոլովների (և եղանակային ձևերի) դրսևորման միջոցները, իսկ նշված ձևերը վերախմաստավորվել են: *Հայոց* չի նշանակում *Հայքի*, այլ՝ *հայկական, իրոք* չի նշանակում *առարկաներով*, այլ՝ *իսկապես*:

Վերախմաստավորումը հիմք է դարձել ձևաբանական արժեքի տեղաշարժերի:

Լեզվի պատմության ողջ ընթացքը ձևերի փոփոխության, վերախմաստավորման գործընթաց է, ընդ որում՝ ձևերի փոփոխությունը և վերախմաստավորումը տեղի չեն ունենում միանգամից, այլ՝ աստիճանաբար. ամեն մի նոր իրողություն իր սաղմերն է ունենում հնի մեջ:

Օրինակ՝ այն հանգամանքը, որ գրաբարի ներկան և անցյալի անկատարը հետագայում վերածվեցին ըղձական եղանակի ապառնիի և անցյալի, իր սաղմերն ուներ 5-րդ դարում, երբ ներկան և անցյալի անկատարը երբեմն գործածվում էին այդ իմաստներով: Հմմտ.

Յորժամ *արգելու* և *փակես* զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց (Եղ., 9): *Արգելես* և *փակես* սահմանական եղանակի ձևերը գործածվել են ստորադասական եղանակի (ըղձականի) իմաստով:

Այդ ընթացքում առաջացավ ներկայի և անցյալի անկատարի դրսևորման նոր միջոց, իսկ ստորադասական եղանակի համար էլ առաջացավ մի եղանակիչ՝ *կու*. ըստ ոմանց՝ *կամ* բայից, ըստ ոմանց՝ *կամիւ* բայից, ըստ Ա. Այտընյանի՝ *կայ+ու* ձևից: Սակայն փաստ է, որ մինչև միջին հայերենը *կայ* բայը հաճախ էր գործածվում ներկայի և անցյալի անկատարի հետ:

Բազմաթիվ են օրինակները, երբ բառը վերածվել է մասնիկի. *պիտի* երթամ-*տի* երթամ-*տ'*երթամ (ինչպես լիիմաստ բազմաթիվ բառեր վերածվել են ածանցի՝ օտար – տար, ներս – ներ, հակառակ – հակ, արդ – արդ, վերն – վեր...) և այլն:

Պատմական փոփոխությունների ընթացքում լեզվական որոշ միավորների իմաստներ կարող են վերանալ. այդպես է եղել անվանական սեռի

հետ (չնայած այդ իմաստն զգացվում է հատուկ գոյականներից՝ Հայկ-արական, Հայկուհի-իգական, սակայն անվանական սեռի մնացորդներ գրա-բարը պահպանել է. ո-ա խառը հոլովման պատկանող գոյականները եղել են իգական սեռի (այգի, քրմուհի, ծերունի, ցնցոտի):

Հայերենը կորցրել է նաև երկակի թվի գաղափարը, կոչական հոլովը, որոշ իմաստներ էլ նոր ձև են ստացել, ինչպես, օրինակ, *ը* հոդը նոր ձև է:

ԼԵԶՎԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ - Լեզվի գործածությունը և զարգացումը փոխադարձաբար կապված են. լեզուն չի կարող զարգանալ առանց գործա-ծության, և գործածվելով այն չի կարող չզարգանալ: Այստեղից էլ լեզվի մեջ այդ երկու կողմերի փոխհարաբերության պրոբլեմը՝ *համաժամանակյա (սինխրոնիկ) և տարժամանակյա (դիսինխրոնիկ) ասպեկտների* ուսումնա-սիրության անհրաժեշտությունը:

Համաժամանակյա կտրվածք - Լեզվի պատմության որևէ ժամանակա-հատվածի պայմանական առանձնացումն է՝ առանց այն համեմատելու այլ գոյավիճակի կամ գոյավիճակների հետ: Համաժամանակյա կտրվածքով լեզվի ուսումնասիրություն՝ նշանակում է նկարագրել այն (լեզուն) որպես համակարգ՝ տվյալ լեզվափուլին հատուկ բնութագրական գծերով: Այդ պատճառով էլ լեզվաբանության մեջ համաժամանակայնությունը հաճախ անվանում են *նկարագրական լեզվաբանություն*:

Օրինակ, համաժամանակյա մոտեցումով կարելի է ուսումնասիրել 5-րդ դարի լեզվավիճակը. գոյականի հոլովման համակարգը, բայի խոնարհ-ման համակարգը, շարահյուսական կառուցվածքը, ոճական հնարները, բա-ռակազմական կաղապարները և այլն: Նույն մոտեցումով կարելի է քննել միջին հայերենի հնչյունաբանությունը, բառային կազմը և քերականական կառուցվածքը՝ առանց այն համեմատելու գրաբարյան լեզվական իրողու-թյունների հետ: Համաժամանակյա մոտեցումով առավելաբար ուսումնա-սիրում են լեզվի արդի վիճակը՝ նրան հատուկ բնութագրական հատկանիշ-ներով:

Համաժամանակյա կտրվածքում ուշադրություն են դարձնում լեզվա-կան միավորների փոփոխությունների գործընթացին և արձանագրում լեզ-վում նկատվող *քանակական կուտակումները*:

Տարժամանակյա կտրվածք - Ուսումնասիրության առարկան լեզվա-կան համակարգի կամ նրա միավորների քննությունն է՝ պատմական զար-գացման ընթացքում: Այս կարգի մոտեցման դեպքում լեզվական իրողու-թյունները մեկնաբանվում են կրած պատմական փոփոխությունների հա-մատեքստում:

Օրինակ, ժամանակակից հայերենի գոյականի հոլովական համակար-գի տարժամանակյա նկարագրությունը ենթադրում է այդ իրողությունը դիտարկել գրաբարի (և միջին հայերենի) նույն իրողության հետ և բնու-

թագրել հոլովական համակարգի կրած փոփոխությունները՝ որպես *որակական տեղաշարժերի* հետևանք:

Այսպես, եթե *համաժամանակյա մոտեցումով* ցույց ենք տալիս, որ գրաբարում գոյականն ունի *սյարգ և խառը հոլովումներ, ներքին և արտաքին թեքման* կանոնավոր համակարգ, ապա *տարժամանակյա մոտեցումով* արձանագրում ենք, որ արդի հայերենում գոյականը ձերբագատվել է խառը հոլովումներից, բացարձակապես պահպանել է արտաքին թեքման համակարգը և այլն:

Ֆ.Սոսյուրը որոշակի տարբերակեց սինխրոնիկ և դիսխրոնիկ կտրվածքները: Նա նկատել է, որ տարբեր լեզուների համաժամանակյա գոյավիճակներն իրար ավելի մոտ են, քան միևնույն լեզվի տարժամանակյա գոյավիճակները: Ըստ այդմ *հին հունարենի, լատիներենի և գրաբարի* քերականական կառուցվածքները համաժամանակյա դիտվածքում իրար ավելի մոտ են, քան հայերենի *գրաբար, միջին հայերեն և արդի հայերեն* լեզվափուլերի տարժամանակյա կտրվածքները:

ԼԵԶՎԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐ- Մարդկային ընդհանրությունները շատ քիչ են մեկուսացած լինում, սովորաբար դրանք շփման մեջ են գտնվում: Ժողովրդի շփումներն առաջացնում են լեզվական շփումներ, որոնք երեք տեսակի հետևանք են ունենում.

ա) շփման հետևանքով կատարվում է փոխառություն,

բ) խաչավորում,

գ) խառը լեզուների կազմավորում:

-Փոխառություն - Փոխառության ենթակա է լեզվի բառային կազմը. քերականական տարրերը քիչ են փոխառվում (մասնավորապես փոխառվում են ածանցները՝ -իստ, -իզմ, -իադա):

Փոխառությունները կարող են լինել անմիջական և միջնորդավորված:

Անմիջական փոխառություն. Լեզուն բառեր է վերցնում մեկ այլ լեզվից անմիջականորեն: Այսպես՝ անմիջական փոխառություն են իրանական լեզուներից հայերենին անցած բազմաթիվ բառեր (դժոխք, բանակ, պարկեշտ, պատգամ, աշխարհ, մարգ, հրավեր, պարս, պարսիկ, բժիշկ, կոշկակար, ժամանակ և այլն), ինչպես նաև լատինական ամսանունները (հունվար, փետրվար, մարտ ...):

Միջնորդավորված փոխառություն. Այս դեպքում փոխառություն է կատարում միջնորդ լեզվի միջոցով. հայերենն ունի *գոհար* ձևը, հետո արաբներից վերցրել է *ջուհար* ձևով. վերջինս միջնորդավորված փոխառություն է: Հմմտ. նաև *գունդի-ջունդի, թագ-թաջ, բուրգ-բուրջ, լազվարդ-լաջվարդ* և այլն:

Եվրոպական լեզուներից հայերենին են անցել բազմաթիվ փոխառու-

թյուններ՝ ռուսերենի միջոցով՝ *կոմս, կանցլեր, տուրնիր, բանկ, բրիգադ, գազ, բենզին, ավտոմեքենա, կոմիտե, պողոտա, կինո, զարած, միրած, դուետ, ապարտամենտ, բոքս (սպորտ.), բոքս (բժշկ.), գազոն, գրանիտ, դիզայն, դիզայներ, դիզել, բյուրո* և այլն⁷:

- **Խաչավորում** - Լեզուների խաչավորման ընթացքում սովորաբար հաղթում է լեզուներից մեկը, պարտվող ժողովրդի լեզուն կորչում է, սակայն կարող է հակառակը պատահել. հաղթած ժողովուրդն ընդունի պարտված ժողովրդի լեզուն:

Մեծ մասամբ հաղթած ժողովրդի լեզուն հաղթել է. հմմտ. լատիներենի տիրապետությունն սկսած մ.թ.ա. առաջին դարից՝ Հուլիոս Կեսարի ժամանակներից: Հակառակը լինում է այն դեպքում, երբ հաղթած ժողովուրդը մշակութապես ցածր է լինում պարտվածներից (այդպես Վոլգյան թաթարները ընդունեցին սլավոնական լեզուն):

Լեզուների խաչավորման ընթացքում հնարավոր են երեք կարգի իրողություններ. սուբստրատ (ենթաշերտ), սուպերստրատ (վերնաշերտ) և ադստրատ (մակաշերտ):

- **Ենթաշերտ (սուբստրատ)** - Սա պարտված ժողովրդի լեզվի տարրն է հաղթող ժողովրդի (հաղթող) լեզվի մեջ: Դրանք այնպիսի տարրեր են, որոնք չեն մեկնաբանվում տվյալ լեզվի ներքին օրենքներով և տարածված են նրա լեզվաաշխարհագրական տարածքներում: Ենթաշերտի տարրերը, ի տարբերություն փոխառությունների, ենթադրում են եկվորների լեզվատարրերի հնագույն ձուլվածություն երկլեզվության միջանկյալ օղակով: Ենթաշերտի երևույթը կարող է դրսևորվել լեզվական համակարգի տարբեր մակարդակներում:

Օրինակ, այդպիսին է գալլերենի թվային համակարգում հաշվարկային քսանյակների տիպը, որ անցել է ֆրանսերենին. հմմտ. հին ֆրանս. *Six-vingt* - $6 \times 20 = 120$, կամ ժամ. ֆրանս. *quatre-vingt*. $4 \times 20 = 80$: Լատիներենում 18-ը արտահայտվում էր՝ *duo de viginti* (20-2), 19-ը՝ *uno de viginti* (20-1). Սուբստրատային այս իրողությունը գործում է արդի ֆրանսերենում և այլն:

Սուբստրատային տարրերն առավել ցայտուն դրսևորվում են տեղանուններում, հմմտ. Ռուսաստանի Դաշնության տարածքում՝ *Վոլոգդա, Օնեգա, Կոստրոմա* և այլն, Հայաստանի Հանրապետության ներկայիս Գավառի տարածքում՝ *Փաշաքենդ, Քյարիմքենդ, Աղիյաման, Ղշլադ, Ուչթափա* և այլն (ներկայումս այդ անվանումները փոխվել են):

- **Վերնաշերտ (սուպերստրատ)** - Սա հաղթած ժողովրդի լեզվի համակարգի այն հատկանիշների ամբողջությունն է, որ չի բխում տվյալ լեզվի զարգացման ներքին օրինաչափություններից և բացատրվում է որպես հե-

⁷ Փոխառությունների մասին տե՛ս «Լեզվաբանության հիմունքներ» դասընթացի «Բառապաշարի շերտերը» բաժնում:

տևանք էթնիկական խմբի լեզվի ազդեցության: Այդպիսի տարրեր ունի բուլղարերենը. բուլղարները Վոլգայի թաթարներն են, որոնք նվաճել են Բալկանյան սլավոններին, բայց հաղթել է սլավոնական լեզուն, քանի որ ինքը մշակութապես բարձր էր նվաճողների լեզվից:

Վերնաշերտը, ինչպես սուբստրատը, դրսևորվում է ամենից առաջ լեզվի հնչյունական և քերականական մակարդակներում, քանի որ լեզվական ազդեցության այդ երկու տեսակները դժվար է տարբերել փոխառություններից:

-Մակաշերտ (ադստրատ) - Որևէ լեզվի համակարգի այնպիսի իրողությունների ամբողջությունն է, որ չի բացատրվում տվյալ լեզվի օրենքներով և դիտվում է որպես հետևանք՝ մի լեզվի ազդեցության մյուսի վրա: Դա տեղի է ունենում այն պայմաններում, երբ տարբեր լեզվակիր հանրություններ (ժողովուրդներ) երկարատև շփման մեջ են գտնվում: Այլ կերպ ասած՝ ադստրատը եկվոր ցեղի լեզուն է, որ որոշ շրջանում գոյակցում է բնիկների լեզվի հետ. այն շատ չի տարբերվում սուպերստրատից:

Ի տարբերություն վերնաշերտի և ենթաշերտի՝ լեզվական փոխազդեցության այս տեսակը համարվում է չեզոք տիպ, որի դեպքում տեղի չի ունենում էթնիկական խմբերի միաձուլում, և լեզուն չի խառնվում մյուսի հետ:

Մակաշերտ եզրույթը հաճախ գործածվում է *միախառնված երկլեզվություն* հասկացության փոխարեն:

-Խառը լեզուների կազմավորում - Սրանք առաջանում են այն վայրերում, որտեղ բազմազգ բնակչություն կա: Օրինակ՝ իդիշը հրեաների լեզուն է՝ կազմված հրեերենի և գերմաներենի տարբեր բարբառներից: Կան արհեստական հիբրիդ լեզուներ՝ *պիջինինգլիշ*, միջերկրածովյան *սաբիր* լեզուն, որ անգլերենի և արաբերենի խառնուրդ է: Այդ կարգի լեզուները սահմանափակված են լինում իրենց աշխարհագրական տարածքներով և դրանցից դուրս այլ գործածություն չունեն:

ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ - Լեզվի զարգացմանը նպաստում են տարբեր կարգի գործոններ, որոնք բաժանվում են երկու տեսակի՝ արտաքին և ներքին: Այդ գործոնները համակարգային բնույթ ունեն և լեզվի զարգացման գործընթացում օրենքի ուժ են ստանում: Մի դեպքում գործ ունենք այնպիսի օրենքների հետ, որոնք կախված չեն արտալեզվական հանգամանքներից, այլ պայմանավորված են լեզվի կառուցվածքով, մյուս դեպքում՝ այնպիսի օրենքների հետ, որոնք կախված են արտալեզվական հանգամանքներից:

Լեզվական օրենքները կանոնավոր կերպով և հետևողականորեն գործում են լեզվի պատմության ընթացքում՝ հանդես գալով նրա համակարգի առանձին միավորների միջև: Ժամանակակից լեզուներում գործում են

մշտական և օրինաչափ միտումներ, որոնցից են տնտեսման օրենքը, համաբանության օրենքը, կապակցելիության օրենքը, կրճատման օրենքը և այլն, որոնք համարվում են լեզվի փոփոխության և կատարելագործման պատճառներ:

Այդ օրենքները դասակարգվում են որոշակի սկզբունքով և, ըստ այդմ, տարբերակվում է լեզվի զարգացման օրենքների երկու տեսակ՝ ներքին և արտաքին:

ՆԵՐՔԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ - Գործածության ընթացքում լեզվի ներսում ստեղծվում են նրա զարգացման դինամիկ կայունություն և հարաբերական ինքնուրույնություն, որն ստացել է լեզվի զարգացման *ներքին օրենք անունը*:

Երիտքերականները այդ օրենքը համարում էին ուսմունք հնչյունական օրենքի և համաբանության մասին: Ժամանակի ընթացքում լեզվի ներքին օրենքները սկսեցին ըմբռնել իբրև պատմական զարգացման միտումներ, որոնց գործողությունը սահմանափակված է առանձին լեզուներով կամ լեզվի խմբերով և որոշակի ժամանակով: Ներքին օրենքների դրսևորումը բազմազան է. դրանք բաժանվում են ընդհանուրի (բոլոր լեզուներին հատուկ) և մասնավորի (մեկ լեզվի հատուկ):

- **Ընդհանուր օրենքներ** - Վերաբերում են բոլոր լեզուներին և լեզվական կառուցվածքի բոլոր մակարդակներին:

Այսպես, ընդհանուր օրենքներ է դիտվում լեզվական արտաքին և ներքին ձևերի անհամապատասխանությունը (լեզվական նշանի անհամաչափությունը): Հայտնի է, որ բոլոր լեզուներում նրա միավորների հնչյունական թաղանթը չի համապատասխանում նրանով արտահայտվող բովանդակությանը (ներքին ձևին):

Ընդհանուր օրենքներից է լեզվի կառուցվածքի օրինաչափությունների և առանձին մակարդակների փոփոխության տեմպերի տարբերությունը, ինչպիսին է լեզվի բառային կազմի և քերականական կառուցվածքի անհամաչափ զարգացման հակասությունը: Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվի բառային կազմ զարգանում է (հարստանում) նորանոր միավորներով, որ պայմանավորված է մի կողմից՝ լեզվի ներսում կատարվող համալրումներով՝ բառակազմական միջոցներով, մյուս կողմից՝ փոխառություններով: Մինչդեռ լեզվի քերականական կառուցվածքը համեմատաբար կայուն է և փոփոխությունների է ենթարկվում բավական զգալի ժամանակահատվածում՝ լեզվի մի գոյավիճակից մյուսն ընկած ժամանակաշրջանում (ինչպիսին են հայերենի գոյականի հոլովման և բայի խոնարհման համակարգերում կատարված փոփոխությունները՝ գրաբար-արդի հայերեն կտրվածքներով):

Վերջին շրջանում ընդհանուր օրենքների պրոբլեմը դուրս է մղված հանրության (ունիվերսալիաների) խնդրով: Այլ կերպ ասած՝ այլևս լեզվի զարգացման ընդհանուր օրենքներ չեն փնտրում, այլ ուշադրություն են

դարձնում այն հանգամանքին, թե ինչն է ընդհանուր աշխարհի լեզուների համար, և աշխատում են կառուցել լեզվական համընդհանուր կադապարներ (միտում դեպի ռացիոնալիստական քերականությունը):

- Մասնավոր օրենքներ - Գործադրվում են միայն առանձին լեզուների ու խմբերի և լեզվական առանձին մակարդակների նկատմամբ:

Օրինակ՝ գերմանական լեզուների համար մասնավոր օրենք են համարում բաղաձայնների 1-ին և 2-րդ տեղաշարժերի՝ Գրիմի օրենքը: Կամ հայերենի համար ձևաբանական օրինաչափություն են համարում հոլովման և խոնարհման հարացույցների միատեսակության ձգտումը: Օրինակ՝ գրաբարում բայի *ա, է, ի, ու* չորս լծորդությունների դիմաց արդի հայերենում առկա է երկու լծորդություն (ա,ե), գրաբարի գոյականի արտաքին և ներքին հոլովումների, ինչպես նաև պարզ և խառը հոլովումների առկայության դեպքում արդի հայերենում գոյականի հոլովման համակարգը զգալիորեն պարզվել է. հայերենում *-ի* հոլովումը արդեն ձգտում է տիրապետող դառնալ (հոգնակի թվում այն արդեն հաղթել է):

ԱՐՏԱՔԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ - Եթե ներքին օրենքները սահմանափակված են լեզվի մակարդակների օրինաչափություններով, ապա արտաքին օրենքները արտակառուցվածքային են և ընդգրկում են նրա նորման ու կառուցվածքի բովանդակային կողմը՝ հաճախ դառնալով ներկառուցվածքային օրինաչափությունների փոփոխության պատճառ: Ներքին և արտաքին օրենքների փոխազդեցությունը շատ բարդ է, իսկ ներկառուցվածքային օրինաչափությունների կապը հասարակության գործունեության հետ իրագործվում է արտաքին օրենքների միջոցով: Այդ օրենքների մեջ էլ կան ընդհանուր և մասնավոր:

Ընդհանուր օրենքներ - Վերաբերում են բոլոր լեզուներին, իսկ մասնավորները՝ առանձին լեզուների կամ լեզուների խմբերի:

Ընդհանուրի մեջ նշվում է լեզվի *պատմական զարգացման կախվածությունը տարածական-աշխարհագրական պայմաններից*: Եթե որևէ լեզվով խոսող հանրությունը մեկուսացած է, նրա զարգացումը այլ ընթացք կստանա (դանդաղ): Օրինակի համար վերցնենք եվրոպական լեզուները, որոնք մշտապես շփման մեջ են գտնվում, որ նրանց զարգացման խթան է դառնում. դա կարող է վերաբերել առաջին հերթին՝ բառային մակարդակին (բառային փոխներթափանցումներ), այնուհետև՝ ոճաբանության բնագավառին (լրագրային ոճերի ներթափանցումներ) և այլն:

Մասնավոր օրենքներ - Նշվում է լեզվի կառուցվածքային միավորների կապի տարբեր աստիճանները արտալեզվական բնագավառների հետ:

Արտալեզվական բնագավառներ են դիտվում տարբեր գիտություններ կամ միջգիտակարգեր, որոնց նվաճումներն իրենց արտացոլում են գտնում լեզվի մեջ՝ ստանալով որոշակի բառային արտահայտություն:

Այդպես լեզվում առաջացել են մի շարք նորակազմություններ կամ բառային պատճենումներ, ինչպես՝ *ջրէջք /приводнение/, լուսնէջք /прилунение/, ռեակտիվ շարժում, մոլէկուլ, էլէկտրոն, պրոտոն, պոզիտրոն* և այլն:

Լեզվի կառուցվածքային տարրեր կան, որոնք քիչ են ազդվում արտալեզվական գործոններից, այդպիսին են հնչյունական համակարգի տարրերը: Թեև լինում են բացառություններ. Օրինակ՝ *Ֆ* հնչույթը հայերենին անցավ փոխառյալ բառերի միջոցով (արաբական փոխառությունների շրջանում, քանի որ արաբերեն բառերն ունեին այդ հնչույթը, ինչպես՝ *ֆալաք, խալիֆաթ* և այլն):

ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ - Որոշ լեզվաբաններ նման պատճառներ չեն էլ փնտրում, սակայն լեզուն՝ որպես հասարակական գիտակցության ձև, ունի պատմական զարգացման իր պատճառները:

Դրանցից են՝

1. **Լեզվի համակարգի շարժունություն** - Շարժունությունը հնարավորություն է տալիս, որ լեզուն մտքի արտահայտման նորանոր միջոցներ գտնի. սա, միաժամանակ, լեզվի համակարգի բաց լինելու նշան է:

2. **Հարմարության ձգտում** - Այս սկզբունքի դրսևորումներն են.

ա) ամեն մի իմաստի համար լեզուն ընտրում է մեկ ձև. դրա վկայությունն այն է, որ լեզվում մենիմաստ բառերն անհամեմատ ավելի շատ են,

բ) լեզուն կարող է խուսափել խրթին կամ դժվար արտասանելի հնչակումալեքսներից (բարդ հնչյուններից), օրինակ, գերմաներենում այդպիսի բարդ հնչյուն է pf-ն, հմմտ. pferd (ծի), kampf (պայքար) և այլն:

3. **Համաբանության սկզբունք** - Այս սկզբունքը դրսևորվում է լեզվի գրեթե բոլոր մակարդակներում՝ հնչյունային, բառային, ձևաբանական և շարահյուսական: Սովորաբար առավել կենսունակ տարածված կադապարները ազդում են ոչ կենսունակ և սահմանափակ գործածություն ունեցող միավորների վրա: Այսպես, ռուսերենում որոշ բարդ հապավումների սեռը որոշվում է ոչ թե հիմնական (գերադաս) բաղադրիչի սեռով, այլ նրանց ձևով նման գոյականների համաբանությամբ, հմմտ. БАК, ЖЭС դիտվում են արական սեռի (ինչպես знак, кулак, нос, бас), роно, горно չեզոք սեռի (ինչպես окно, звено, зло) և այլն:

4. **Համառոտման սկզբունք** - Այս սկզբունքն առավելաբար գործում է բառակազմության բնագավառում. բառակազմության եղանակ է՝ առանց ածանցի, որի դեպքում բառակապակցության բաղադրիչների համառոտման եղանակով կազմվում են նոր բառեր:

Հմմտ. *ԻԼԻՊ-ական, ռազմաբազա, զինուժ, գորաջոկատ, կոսմոհրդեհ, եվրոլիդեր, ճեմանալ* և այլն: Խոսակցական լեզվում համառոտումը կատարվում է ածանցման միջոցով, ինչպես՝ *телик /телевизор/, велик /велосипед/* և այլն:

5. **Կապակցելիության սկզբունք** - Կապակցելիությունը շարահյուսական մակարդակում բառերի հարաբերությունների դրսևորման եղանակ է, որ պայմանավորված է նրանց բառական և քերականական նշանակություններով: Ժամանակակից պայմաններում ընդլայնվում են բառերի կապակցելիության սահմանները, որոնք վերաբերում են քաղաքական, մշակույթի, համացանցի, լեզվաբանության, տնտեսագիտության և այլ ոլորտների: Ի հայտ են գալիս նորագույն կապակցություններ, որոնք կենսունակ գործածություն են ստանում ԶԼՄ-ներում, ռադիոհեռուստատեսության բնագավառում և այլն: Հմմտ. *մշակութային տարածություն, միջմշակութային հաղորդակցում, էլեկտրոնային հաղորդակցում, լեզվական անհատ, կարգավորող հաղորդակցում, հիպերտեքստային տեխնոլոգիա, հիպերտեքստային ծրագրի ստեղծում, համակարգչային ալգորիթմի մշակում, գիլիոտին ծրագիր, հումանիտար օգնություն* և այլն, և այլն:

6. **Տնտեսման սկզբունք** - Այս սկզբունքի համաձայն՝ լեզուն ձգտում է քիչ միջոցներով շատ բան արտահայտել: Նրա դրսևորումներն են՝

ա) Մի մասնիկը կարող է դրսևորել մի քանի նշանակություն:

Օրինակ, գրաբարի հոլովման համակարգում –ու հոլովիչը հանդես է գալիս եզակի սեռական (ծովու), տրական (ծովու) և գործիական հոլովներում (ծովու)՝ արտահայտելով համապատասխան հոլովական նշանակություններ:

բ) Եթե մրցակցում են երկար ու կարճ ձևերը, ապա հաղթելու միտում ունի կարճ ձևը:

Այս սկզբունքի դրսևորումն է համաբանությունը, ինչպես՝ աշխարհահայացք – աշխարհայացք, պատանեկական – պատանեկան և այլն: Երկար ու կարճ ձևերի մրցակցությունը դրսևորվում է նաև հրամայական եղանակում, հմմտ. *նստե՛ք* և *նստեցե՛ք*, *գրե՛ք* և *գրեցե՛ք*. այստեղ ևս հաղթելու միտում ունեն կարճ ձևերը (*նստե՛ք*, *գրե՛ք*):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:

Խաչատրյան Լ.Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:

Խաչատրյան Լ.Մ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:

Ֆերդինանդ դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2008:

Զահուկյան Գ.Բ., Լեզվաբանության պատմություն, հհ. 1-2, Ե., 1960-1962:

Баранов А.Н. Корпусная лингвистика// Баранов А.Н. Введение в прикладную лингвистику. М., 2003. С. 112–137.

Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.

Березин Ф.М., История лингвистических учений, М., 1984.

- Брутян Г. В. Гипотеза Сепира-Уорфа.-Ереван: Луйс, 1968.
- Блек М., Лингвистическая относительность (*Теоритческие* воззрения Бенджамена Л. Уорфа) // Новое в лингвистике.-Вып. I-М.: Изд-во иностр. лит-ры, 1960.-С. 199-212.
- Гамкрелидзе Т.И., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы, тт.1-2, Тбилиси, 1984.
- Головин Б.Н., Введение в языкознание, М., 1973.
- Джаукян Г.Б., Общее и армянское языкознание, Е., 1978.
- Захаров В.П. Корпусная лингвистика: Учебно-метод. пособие. – СПб., 2005. – 48 с. Доступно для скачивания по адресу: <http://vp-zakharov.narod.ru/publications.htm>.
- Звегницев В. А., Язык и лингвистическая теория.- М.: Изд-во Моск. ун-та, 1973.
- Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
- Кодухов В.И., Введение в языкознание, М., 1979.
- Карамышев Т. В., Компьютерная лингводидактика, СПб, 2000.
- Кашкин В. Б., Введение в теорию коммуникации, Воронеж, 2000.
- Кравченко А. В., Поляков В., Когнитивная парадигма в языкознании и новые вызовы // Когнитивное моделирование в лингвистике: сборник докладов – Варна, М., 2003.
- Кацельсон С. Д. , Типология языка и речевое мышление.-Л.: Наука, 1972.
- Коссериу Э., Синхрония, диахрония и история // Новое в лингвистике.-Вып. III.-М.: Изд-во иностр. лит-ры, 1963. -С. 143-347.
- Лайонз Дж., Введение в теоретическую лингвистику, М., 1978.
- Лайонз Дж., Общее языкознание, М., 2005.
- Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.
- Пищальникова В.А., Сонин А.Г., Общее языкознание, М., 2017.
- Плунгян В. А. Зачем нужен Национальный корпус русского языка? Неформальное введение // Национальный корпус русского языка: 2003-2005. М.: Индрик, 2005. [http:// ruscorpora.ru /sbornik2005/02plu.pdf](http://ruscorpora.ru/sbornik2005/02plu.pdf).
- Солнцев В. М. Уровни языка // Лингвистический энциклопедический словарь / Под ред. В. Н. Ярцевой. - М.: Советская энциклопедия, 1990.-С. 539.
- Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.
- Широков О.С., Введение в языкознание, М., 1985.
- Campbell, Lyle, Historical linguistics. 3-rd edn., Edinburgh, 2013.
- McEnery T. and Wilson, A. Corpus Linguistics. (2nd Ed.) 2001. Edinburgh: Edinburgh University Press.
- Ringe, Donald A. and Eska, Joseph F, Historical linguistics: towards a twenty-first century reintegration, Cambridge University Press, 2013.

8. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Լեզվաբանական մեթոդները հետազոտության մշակված համակարգեր են, որոնք գործադրվում են տարբեր նպատակներով՝ ելնելով ուսումնասիրության խնդիրներից: Լեզուների ուսումնասիրության խնդիրները ներառում են հետևյալ հարցադրումները. բացահայտել լեզուների ծագումնաբանական ընդհանրությունները՝ առանձնացնելով լեզվաընտանիքները, ուսումնասիրել լեզվաընտանիքների մեջ մտնող լեզվաճյուղերն ու առանձին լեզուները, կատարել լեզուների ձևաբանական դասակարգումներ՝ անկախ լեզուների ցեղակցությունից, բացահայտել լեզվաընտանիքներից դուրս մնացած լեզուներն ու մեկնաբանել դրանց յուրահատկությունները, վեր հանել լեզվաընտանիքների մայր լեզուների ցեղակցական ընդհանրություններն ու բնութագրել նոստրատիկ լեզուները և այլն:

Լեզվաբանական մեթոդներն ունեն մեկնաբանության եղանակներ ու սկզբունքները, որոնց գործադրումը կարող է համալիր լուծումներ տալ առաջադիր խնդիրներին. այդ եղանակները գործադրվում են ինչպես լեզվական իրողությունների՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունները բացահայտելու, այնպես էլ լեզվական իրողությունների և արտալեզվական երևույթների կապերը մեկնաբանելու նպատակներով:

Ժամանակակից լեզվաբանության մեջ գործադրվում են հետևյալ կենսունակ մեթոդները՝ *համեմատական- պատմական, պատմահամեմատական, համեմատական-գուգադրական, նկարագրական, կառուցվածքային, լեզվաաշխարհագրական, վիճակագրական* և այլն:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԹՈԴ – Գործադրվում է լեզուների ծագումնաբանական կապերը բացահայտելու, նրանց ցեղակցական ընդհանրություններն ու կրած պատմական փոփոխությունները մեկնաբանելու նպատակով: Համեմատական - պատմական մեթոդը հենվում է ծագումնաբանորեն ընդհանուր, ազգակից լեզուների լեզվաընտանիքների առկայության վրա: Այս մեթոդի խնդիրներն են՝

ա) իմաստակիր միավորների և հնչյունների ծագումնաբանական նույնության սահմանում,

բ) հնագույն ձևերի վերականգնում,

գ) բացարձակ և հարաբերական ժամանակագրության սահմանում,

դ) ստուգաբանական վերլուծություն:

Ա. Իմաստակիր միավորների և հնչյունների ծագումնաբանական նույնության սահմանում – Այստեղ նույնությունը հնչյւնների ու ձևւոյթների ծագումնաբանական համապատասխանությունն է: Նման կարգի նույնությունը սահմանելիս հարկ է լինում հետևել հնչյունական համապատասխանությունների օրենքին, երբ հիմք լեզվի այսինչ հնչյունի դիմաց ցեղակից

լեզուներն ունեն այս կամ այն հնչյունը: Այլ կերպ ասած՝ հնդեվրոպական հիմք լեզվի հնչյունները ցեղակից լեզուներում տալիս են տարբեր արտացոլումներ:

Այսպես, հիմք լեզվի *gv բարդ հնչյունը որոշակի լեզուներում տվել է g, իսկ որոշ լեզուներում էլ՝ v: Հմմտ. սանսկ. Veda, զենդ. Vaeda, լատ. video, գոթ. vitan (գիտենալ), գերմ. Wissen (գիտենալ), ռուս. ведать (գիտենալ), հայ. գետ (գիտ-են-ալ):

Հմմտ. նաև՝ Գ- Օ. հնիւ. *gen, լատ. genus («ծնունդ, սերունդ»), gnatus («ծնվել»), genitor («ծնողներ»), հուն. gene-zis («ծնունդ»), genos («ցեղ, սերունդ»), հայ. - ծին:

Դ-Տ. հնիւ. *dom-, սանսկ. dam-, հին զենդ. dam-, հուն. do'mos, լատ. domus, ռուս. домъ, հայ. տուն:

Կ-Ս. հնիւ. *dek'm, սանսկ. da'can, հուն. deka, լատ. decem, հայ. տասն, հնիւ. *k'erdi, լատ. c*ord. սեռ. h. c*ordis, հուն. kordia, հայ. սիրտ,

Վ-Գ. հնիւ. *vedo, գոթ. wato, գերմ. Wasser, անգլ. Water, հւլ. voda, բուլգ. vada, ռուս. вода, հայ. գետ (ջուր):

Պ-Հ. սանսկ. pitar, լատ. pater, հուն. fate'r (ph-f), հայ. հայր և այլն:

Իմաստակիր միավորների ծագումնաբանական նույնությունը չի ենթադրում նրանց հնչյունական լրիվ համընկնում: Հմմտ. հին. լատ. пинкве, լատ. квинкве, ռուս. пять, հին. հուն. пенте, սանսկ. панча, հինդի. पञ्च, իրան. پنجاه, հայ. հինգ և այլն:

Ծագումնաբանորեն ընդհանուր միավորներ կարելի է ցույց տալ ոչ միայն ցեղակից լեզուներում, այլև ցեղակից և ոչ ցեղակից լեզուներում: Այդ կարգի միավորներ են փոխառյալ բառերը:

Փորձենք կատարել ռուսերեն абрикос բառի ձևաիմաստային համեմատությունը ցեղակից և ոչ ցեղակից լեզուների նույնիմաստ բառերի հետ:

Այսպես, абрикос բառը ծագում է լատիներեն praecoquum բառից, որ նշանակում է «ավելի վաղ». այդպես էին կոչվում մրգերի որոշ վաղահաս տեսակներ: Երբ որևէ բառ լեզվից լեզու է փոխանցվում, որևէ հնչյուն փոխվում է այլ հնչյունի՝ հարմարվելով փոխառու լեզվի հնչյունական համակարգին: Ինչպե՛ս է առաջացել Ա ձայնավորն այդ բառի սկզբում: Նախապես այդ բառն անցել է հունարենին, որտեղ լատինական վերջավորությունը փոխարինվել է հունականով. прэкоквион, այնուհետև հույներից այն վերցրել են արաբները: Արաբերենում չկան Պ և Օ, և արաբները դրանք փոխարինել են Բ և Ու հնչյուններով: Բացի դրանից, արաբերենում բառը չէր կարող սկսվել երկու բաղաձայնով, հետևաբար Բ և Բ բաղաձայնների միջև հայտնվել է (Ա) ձայնավոր հնչյունը, իսկ բառի հունական վերջավորությունները դուրս են մնացել նրա հնչյունական կազմից: Այնուհետև բառի սկզբում ավելացել է արաբերենի аль հոդը, և բառն ստացել է альбаркык ձևը: Շարժվելով Միջերկրական ծովի արևելքից դեպի արևմուտք՝ արաբներն այդ բառն իրենց հետ

տարել են Իսպանիա: Իսպանացիներն այդ բառից ստեղծել են իրենցը՝ *albaricoque* (альбарикокэ), հետո այն անցել է Ֆրանսիա՝ *abricot* (абрикко), Հոլանդիա՝ *abrikoos* (абрикоос): Հոլանդերենից այն անցել է ռուսերենին՝ *абрикос* ձևով:

Այսպիսով, ցեղակից և ոչ ցեղակից լեզուներում արձանագրվում է վերոբերյալ բոլոր բառերի ծագումնաբանական նույնությունը (որպես փոխառության հետևանք) և հաստատվում, որ դրանք ծագումնաբանորեն հանգում են լատիներեն *praecoquum* ձևին:

Բ. Հնագույն ձևերի վերականգնում - Իմաստակիր միավորների և հնչյունների ծագումնաբանական նույնության սահմանումը թույլ է տալիս հետևողականորեն վերականգնել նրանց հնագույն ձևերը, արմատական ընդհանրությունները:

Հինգ թվականի հին. լատ. *пинкве*, լատ. *квинкве*, ռուս. *пять*, հին. *հուն. πεντε*, սանսկ. *पञ्चा*, հինդի. *पान्च*, իրան. *پنجد*, հայ. *հինգ* արմատները հանգում են հիմք լեզվի **penkve* նախաձևին:

Հմմտ. նաև՝ *եղբայր* և *գղալ* բառերի հնագույն ձևերի հնչյունական փոփոխությունները. բրատար-բրատեր-բլայեր-բլայր-լբայր-դբայր-եղբայր: Տարգավ-տարգավ - տրգավ-դգավ-գղալ և այլն:

Հայերեն *առատ* բառի նախաձևի վերականգնումը ցույց է տալիս, որ այն հետագայում ձևավորվել է Ա ձայնավորային աճականով: Հմմտ. պիլ. *Rat* - զնդ. *Rata* -իռլ. *rath* - գալլ. *rhad* և այլն:

Նախաձևերի վերականգնումն սկսվում է հնչյունականի օրենքների բացահայտումով: Լատ. *hostis*, հին ռուս. *гость*, գոթ. *gasts* արմատների համեմատումից բացահայտվել է լատ. *h* հնչյունի համապատասխանությունը հին ռուս. և գոթերենի *g* հնչյունին: Լատ. *o*, հին ռուս. *o* համապատասխանում են գոթերենի *a* ձայնավորին (հմմտ. լատ. *nox*, ռուս. *ночь*, գոթ. *nahts*). ընդ որում՝ ավելի հին է *o* ձայնավորը: Հաշվի առնելով վերոբերյալ հնչյունական համապատասխանությունները՝ մասնագետները վերականգնել են այդ բառի նախաձևը՝ **ghost*:

Հնարավոր է վերականգնել նաև բառակազմական և բառափոխական մասնիկների նախաձևերը՝ համապատասխան նույնությունների բացահայտման դեպքում: Հին ռուսերենում *гость* բառի -*ѣ* ձևությամբ զարգացել է անշեշտ -*i* ձայնավորից, գոթերենում -*i* կարճ ձայնավորն ընկել է -*s*- ից առաջ: Հետևաբար, լատ *is* -, գոթ. -*s* և հին ռուսերենի -*ѣ* համապատասխանությունները օրինաչափ են: Եզակի ուղղականի ձևը վերականգնվում է **-is* մասնիկով: Այդ բառի ուղղական հոլովի վերականգնված լրիվ ձևն է՝ **ghostis*:

Հին հայերենի եզակի բացառականի -*է* հոլովակերտը ծագում է հնդեվրոպական հիմք-լեզվի մակբայակերտ **-tes* (**-tos*) ձևից, որի տարբերակներն են՝ սանսկ. -*tah* (*mukha-tah* «Բերանից»), լատ. -*tus* (*fundi-tus* «խորքից»), հուն. -*tos* (*entos*. «ներս, այս կողմ») և այլն:

Հնագույն ձևերի վերականգման եղանակը հաստատում է, որ հին հայերենի -է հոլովակերտի նախատիպը համապատասխանում է հիմք-լեզվի *-tes (*-tos) ձևին:

Գ. Բացարձակ և հարաբերական ժամանակագրության սահմանում - Ցեղակից լեզուները պահպանում են ոչ միայն հնագույն ձևերը, այլև ստեղծում են անալոգիկ նորակազմություններ: Հնագույն ձևերի բացահայտման նպատակով նախ հաստատում են հնչյունական օրինաչափ համապատասխանությունները, որից հետո ուշադրություն են դարձնում նրանց հարաբերական ժամանակագրությանը՝ պարզելու՝ ո՞ր տարրերն են առաջնային, նախնական, որո՞նք են հետագա գոյացություններ: Վերոբերյալ օրինակներում՝ Hostis, roctb, gasts և nox, noch, nahts, առաջնային է օ ձայնավորը, որ գերմանական լեզուներում դարձել է a:

Ցեղակից լեզուների ընդհանրությունների բացահայտումը պահանջում է նրանց տարածքի ու ժամանակագրության որոշում: Կարևոր պայմաններից մեկն է որոշել, թե երբ է տվյալ լեզուն գրի առնվել: Գրավոր ավանդված լեզուները պահպանում են ոչ միայն հին փաստեր, այլև ուշ առաջացածներ, միաժամանակ ուշ գրի առնված լեզուներում էլ հանդիպում են արխաիկ ձևեր: Հարաբերական ժամանակագրության եղանակի էությունն այն է, որ լեզուների մեջ տարածված համանման երևույթների ծագումնաբանական ուսումնասիրությամբ սահմանում է մեկի հնությունը մյուսի նկատմամբ:

Այսպես. հնի. *k' erdi ձևը արիսիկ է *սիրտ* բառի նկատմամբ, սանսկ. Pitar ձևը՝ *հայր* բառի նկատմամբ, Hostis ձևը՝ gasts-ի նկատմամբ, пенкве ձևը՝ пять-ի նկատմամբ, *տարգալ* ձևը՝ գղալ-ի նկատմամբ և այլն:

Բացարձակ և հարաբերական ժամանակագրության սահմանումը հնարավորություն է տալիս նաև զատելու բառապաշարի փոխառյալ շերտերը: Այսպես, «դժվար» բառն անգլերեն հնչում է difficult, ֆրանսերեն՝ difficile, լատիներեն՝ difficile, ռուսերեն՝ дефицит (իմաստափոխված՝ «դժվար (-ություն)» - «պակասություն, պակասորդ»): Անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն բառերը ժամանակագրորեն հաջորդում են լատիներեն բառին, որ կազմված է dis-facile ձևայիններից և նշանակում է «ոչ հեշտ, դժվար»: «Թշնամի» բառը անգլերենում՝ enemy, ֆրանսերենում՝ ennemi, լատիներենում՝ inimicus. Ժամանակագրորեն հին է լատիներենով ավանդված բառը, որ կազմված է in-amicus ձևայիններից և նշանակում է «ոչ ընկեր, ոչ բարեկամ, հակառակորդ» և այլն:

Այս եղանակով միաժամանակ պարզվում է՝ այդ բառերը լատինական կազմություններ են և փոխառյալ լեզուներում բառակազմորեն տրոհելի չեն:

Դ. Ստուգաբանական վերլուծություն - Ստուգաբանությունը քննում է բառի կամ ձևային ծագումը, նրա նախնական իմաստը, կազմը (կառուցվածքը, ձևը), գործառությունը, ինչպես նաև դրանց հետագա զարգացման պատմությունը: Ստուգաբանորեն վերականգնում են բառի նախնական՝

սկզբնական իմաստը՝ բնիմաստը: Ըստ «ներքին ձևի» առկայության, բառերը լինում են իմաստով պատճառաբանված և չպատճառաբանված. հմմտ. *մարդ* և *մարդկություն* բառերը, որոնցից առաջինը բառակազմորեն անտրոհելի է, հետևաբար նրա իմաստը չպատճառաբանված է, երկրորդը բառակազմորեն տրոհելի է, բարդության իմաստը բխում է բաղադրիչների իմաստներից, հետևաբար նրա իմաստը պատճառաբանված է: Ստուգաբանում են իմաստով չպատճառաբանված բառերը: Այն դեպքում, երբ վերջանում է բառակազմությունը, այսինքն՝ երբ տվյալ լեզվի միջոցներով հնարավոր չի լինում ստուգաբանել բառը, անհրաժեշտություն է զգացվում դիմելու ցեղակից լեզուների օգնությանը:

Այսպես, *մարդկություն* բառը կազմված է *մարդ-իկ-ություն* ձևույթներից, *-իկ* և *-ություն* մասնիկները երկրորդական ձևույթներ են, տվյալ դեպքում կարևորը *մարդ* արմատի ստուգաբանությունն է. այն բնիկ հայերեն բառ է, և նրա ստուգաբանության բանալին տալիս են ազգակից լեզուները:

Այն ծագում է հնիւ. *mer արմատի *mr. ձայնդարձով տարբերակից՝ -to մասնիկով. հմմտ. սնսկր. ma' rta-, ma' rtya- «մահկանացու, մարդ», marta' «մեռյալ», «մահ», զենդ. marata «մահկանացու», հին պրս. martiva «մարդ», պրս. mard «մարդ», լատ. mors, mortis «մահ», mortuus «մեռյալ», հուն. mortos «մահկանացու, մարդ» և այլն: Հետևաբար *մարդ* ստուգաբանորեն նշանակում է «մահկանացու»՝ հնդեվրոպական mer – mar արմատից՝ Դ աճականով (հմմտ. մեռ – ան – ել):

Ստուգաբանության ժամանակ պետք է հաշվի առնել համեմատվող ձևույթների հնչյունական համապատասխանությունը, բառակազմական պատճառաբանվածությունը, իմաստային հավանականությունը և այլն:

ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴ - Գործադրվում է մեկ լեզվի պատմությունն ուսումնասիրելիս, կիրառում է մի շարք եղանակներ:

1. Ներքին վերականգնում և ժամանակագրություն - Եթե միևնույն լեզվում առկա են միևնույն բառի տարբեր արտացոլումներ, ապա այդ եղանակով վերականգնում են ավելի հին ձևերը՝ նույն լեզվում ունեցած տարբեր արտացոլումների համեմատությամբ: Այս եղանակը հնարավորություն է տալիս բացահայտելու ձևերի ու հնչյունների շարժման դինամիկան որոշակի լեզվում, ինչպես նաև բացահայտելու հին ու նոր փաստերի ու միտումների հակասությունները: Սրա էությունն այն է, որ առավել հին ձևերը վերականգնվում են զուգադրության ճանապարհով, երբ հակադրվում են այդ ձևի տարժամանակյա վիճակները:

Ներքին վերականգնումը կարելի է դիտարկել լեզվի տարբեր մակարդակներում՝ հնչյունային, բառային, ձևաբանական և այլն:

Արդի հայերենի *խելոք*, *իրոք* բառերի նախնական ձևերը հանգում են գրաբարի խել-աւ-ք, իր-աւ-ք հոլովաձևերին, որոնք պատմական հնչյունա-

փոխության ուղիով ստացել են *խելօք* և *իրօք* ձևերը, որոնցից էլ՝ արդի հայերենի վկայված բառերը: *Աղբյուր*, *հարյուր*, *այյուր* և այլ բառեր հանգում են գրաբարի *աղբիւր* (*աղբէր*), *հարիւր* (*հարէր*), *ալիւր* (*ալէր*) ձևերին, որոնք ապրել են *իւ* (*էւ*) – *յու* հնչյունափոխության գործընթաց: Նմանապես՝ արդի հայերենի *հօգուտ*, *հանուն*, *յանձին(ս)* բառերը հանգում են գրաբարի նախդրավոր՝ *ի+օգուտ*, *ի+անուն*, *ի+անձին(ս)* կառույցներին՝ *ի-յ-հ* հնչյունափոխական անցումներով:

Ներքին վերականգնումը հնարավորություն է ստեղծում բացահայտելու բառական տարբերակների ժամանակագրությունը, որի հիմքում ընկած են հնչյունական օրենքները: Այսպես, *ջիլ* – *ջիդ*, *գոլ* – *գաղջ*, *մառախլապատ* – *մառախուղ*, *դալ(ուկ)* – *դեղ(ին)* տարբերակներից նախնականն է – *Լ* ձայնորդով տարբերակը, նախ՝ լիլ հնչյունները լծորդ հնչյուններ են, երկրորդ՝ *Լ* հնչյունով բառերը նախնական են մյուս տարբերակների համեմատությամբ, քանի որ հունարենից փոխառյալ բառերը, որոնք ունեն *Լ* ձայնորդ հնչյուն, հայերենում արձանագրվել են Ղ հնչյունով, ինչպես՝ *էկլէսիա* – *էկեղեցի*, *լամբար* – *դամբար*, *կաթոլիկ* – *կաթողիկե*, *Ալեքսանդր* – *Աղեքսանդր*, *Դիոկլետիանոս* – *Դիոկղետիանոս* և այլն:

Վերահասու լինել, *մտադրվել* բառերը հանգում են գրաբարյան *ի վերայ հասանել* և *ի մտի դնել* հարադրական կառույցներին՝ նախդիրների անկումով, *ընթերցել* անորոշ դերբայը և *դարձել* (է) վաղակատար դերբայների նախնական ձևերը հանգում են *ընթերնուլ* և *դառնալ* բայերի երկրորդ հիմքից կազմված անցյալ դերբայներին՝ *ընթերցեալ*, *դարձեալ*, *ընկեցիկ* բառի նախնական ձևը հանգում է *ընկենուլ* բայի երկրորդ (ցոյական) հիմքին՝ համապատասխան ածանցով. *ընկեցիկ* և այլն:

Արդի հայերենի *առաքյալ*, *հանգուցյալ*, *կորուսյալ* և այլ բառերի նախնական ձևերի վերականգնումը հանգում է գրաբարի նույնափմբ բայերի անցյալ դերբայաձևերին՝ *առաքեալ*, *հանգուցեալ*, *կորուսեալ*: *Դիտմամբ*, *անձամբ* մակբայների նախնական ձևերը հանգում են գրաբարի *դիտումն* և *անձն* գոյականների գործիական հոլովաձևերին, իսկ *ի սրտե*, *ի ծնե*, *ի սկզբանե* մակբայների նախնական ձևերը՝ գրաբարի համարմատ գոյականների բացառական հոլովաձևերին՝ *ի սրտե*, *ի ծնե*, *ի սկզբանե* և այլն: Վերականգման այս եղանակով միաժամանակ կարելի է մեկնաբանել դրանց գրանցման ժամանակագրությունը: Ներքին վերականգնումը կարևոր դեր ունի բայական բառույթի և ոչ բայական բառույթի (թառել – *թառ*, գրել – *գիր*), ինչպես նաև համադրական բայերի և դրանց հիմքերի հարաբերակցության որոշման հարցում. *կաքավել* – *կաքավ*, *ասֆալտել* – *ասֆալտ*, *ցեմենտել* – *ցեմենտ* և այլն:

Բառական տարբերակների կամ դրանցից մեկի ներքին վերականգնման հիմքում կարող է ընկած լինել գործողության և նրա հետևանքի տրամաբանական կապի բացահայտումը: Այսպես՝ *չոր* – *չիր*, *կեռ* – *կոր* գույքերի

երկրորդ բաղադրիչը ժամանակագրորեն հաջորդում է առաջին բաղադրիչին և հանդես է գալիս որպես նրա հիմքով բայական գործողության հետևանք (չոր-անալ – չիր դառնալ, կեռ-ել – կոր դառնալ) և այլն:

2. *Պատմական նույնության և տարբերության սահմանում* – Այս եղանակով սահմանվում է հնչույթների, բառաձևերի և բառերի պատմական նույնությունը, հաշվի է առնվում այն հանգամանքը, որ պատմական զարգացման ընթացքում մի շարք ձևեր նույնացել են արտաքուստ կամ նույն ձևը տվել է տարբեր արդյունք: Հմտ. գրաբարյան անցյալ դերբայի դրսևորումներն արդի հայերենում. տուեալ – տվյալ (ած., գոյ.) – տվել (վաղակատար դերբայ), մեռեալ – մեռյալ (ած.) – մեռել – (վաղակատար դերբայ), անկեալ – անկյալ (ած.) – ընկել (վաղակատար դերբայ), բեկեալ – բեկյալ (ած.) – բեկել (վաղակատար դերբայ) և այլն:

Միտք, ձեռք, ոտք, կառք, կուռք, պարտք, կարծիք և այլ բառերի տար-ժամանակյա համեմատությունը վեր է հանում դրանց պատմական նույնությունը և տարբերությունը: Նույնությունն այն է, որ այդ բառերը և՛ գրաբարում, և՛ արդի հայերենում արտահայտության պլանում ունեն թվակազմական –ք ձևույթը, տարբերությունն այն է, որ գրաբարում այդ բառերն անեզական գոյականներ են, իսկ արդի հայերենում հանդես են գալիս եզակի թվի արժեքով և ունեն հոգնակի թվակազմություն. *միտք – մտք-եր, ձեռք – եր, ոտք – եր, կուռք – եր, կառք – եր, պարտք – եր, կարծիք – ներ* և այլն: Մյուս կողմից՝ գրաբարում –ք ձևույթը թվակազմական ցուցիչ է, իսկ արդի հայերենում նրա թվակազմական դերը չեզոքացել է, որի հետևանքով այդ բառերն ստանում են թվակազմական –եր կամ –ներ մասնիկները:

Պատմական նույնության և տարբերության սահմանումը կարելի է դիտարկել բառաձևերի և բառերի դիտվածքով: Ժամանակակից հայերենում *հայոց, վրաց և պարսից* միավորները բառեր են, սակայն պատմական նույնությունը սահմանում է, որ դրանք համընկնում են գրաբարյան *Հայք, Վիրք* և *Պարսք* անեզական գոյականների սեռական հոլովաձևերին՝ *Հայոց, Վրաց, Պարսից*: Տարբերությունն այն է, որ գրաբարում դրանք գոյական են, արդի հայերենում՝ ածական անուններ. առկա է ձևի նույնություն, իմաստի տարբերություն: Այդպես նաև՝ գրաբարում *մասունք* միավորը *մասն* գոյականի հոգնակի ուղղականի բառաձև է. արդի հայերենում այն անկախ բառական միավոր է՝ «սրբի նշխար(ներ)» իմաստով. նույնությունը հանգում է բառաձևի և բառի արտահայտության պլանին, տարբերությունը՝ իմաստին (նշանակությանը): Նմանապես՝ գրաբարում *սան* բառաձև է՝ *սուն* (սուն-ունդ – սնունդ) բառի սեռական հոլովաձևը, արդի հայերենում *սան* նշանակում է «հոգեզավակ, հոգևոր սնունդ ստացող»: Ըստ այդմ՝ գրաբարի *սան* բառաձևի և արդի հայերենի *սան* բառի ձևաիմաստային համեմատության ուղիով կարելի է սահմանել դրանց պատմական նույնությունն ու տարբերությունը:

Ներքին վերականգնումը պայմանավորված է նաև գրաքարյան բառի-մաստի բացահայտման գործոնով: Օրինակ, արդի հայերենում գործածական մի շարք բառեր՝ *խնդիր* բայահիմքով՝ *արկածախնդիր*, *քինախնդիր*, *բախտախնդիր*, *վրեժխնդիր*, *շահախնդիր* և այլն, առաջին հայացքից մնում են չմեկնաբանված, եթե չվերականգնենք դրանց բայահիմքի նախնական իմաստն ու նշանակությունը՝ «փնտրել, որոնել» (ենթակայական դերբայի նշանակությամբ). *արկած փնտրող*, *բախտ փնտրող* և այլն:

3. Տիպաբանական բնութագրի սահմանում – Պատմահամեմատական մեթոդի խնդիրներից մեկը լեզվի տիպաբանական բնութագրի սահմանումն է, քանի որ պատմական զարգացման ընթացքում լեզուն ապրում է տիպաբանական բնութագրի փոփոխության գործընթաց. հետևաբար անհրաժեշտ է բացահայտել և տարբերակել լեզվի համաժամանակյա և տարժամանակյա դիտվածքների տիպաբանական հատկանիշները: Միննույն լեզվի տարժամանակյա կտրվածքները հիմք են տալիս կարծելու, որ գործ ունենք երկու տարբեր լեզուների հետ. թեև լեզուների տիպաբանական բնութագիրը տրվում է համեմատական-պատմական մեթոդի եղանակներով, այնուամենայնիվ, ելնելով այն բանից, որ գործ ունենք միննույն լեզվի զարգացման երկու գոյավիճակների հետ, ուստի դրանց տիպաբանական բնութագրերը որոշում են պատմահամեմատական մեթոդի եղանակներով:

Լեզվի տիպաբանական հատկանիշները բնութագրական են քերականական համակարգին՝ ձևաբանական և շարահյուսական մակարդակներին, թեև առավել ցայտուն դրանք դիտարկելի են ձևաբանական մակարդակում:

Գրաբարի ձևաբանական տիպաբանության բնութագիրը միանշանակ չէ. այն ունի կցականության, թեքականության, տարահիմքության, սպասարկու բառերի գործածության լեզվաքերականական միջոցներ, և կարելի է ասել, որ այդ միջոցների համակարգում գերիշխում է կցականությունը (մասնիկավորումը)՝ հոլովման և խոնարհման համակարգերում. մյուս միջոցները լրացուցիչ-օժանդակ դեր ունեն քերականական իմաստներ արտահայտելու տեսակետից (տե՛ս *Համաժամանակյա տիպաբանություն* բառահոդվածը): Հայերենի տիպաբանական բնութագրի ամբողջական նկարագրությունն ստանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ նաև արդի հայերենի տիպաբանական բնութագիրը: Քերականական իմաստների արտահայտման առումով հայերենը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է ձևաբանական տիպի փոփոխությունների. եթե հին հայերենը *կցական կառուցատիպի լեզու է՝ զուգակցված թեքականությամբ, արդի հայերենը, խորացնելով կցականությունը, պահպանել է թեքականության որոշ տարրեր* (տե՛ս *Պատմական տիպաբանություն* բառահոդվածը):

Հայերենի զարգացման գոյավիճակների տիպաբանական բնութագրերի ամբողջացման առումով կարևորվում է շարահյուսական տիպաբա-

նության ուսումնասիրությունը. այն է՝ շարահյուսական կառույցների գործառական արժեքի բացահայտումը՝ քերականական իմաստներ արտահայտելու տեսակետից (տե՛ս *Շարահյուսական տիպաբանություն* բառահոդվածը):

4. *Բարբառագրություն* – պատմահամեմատական լեզվաբանությունը 19-20-րդ դարերում ոչ միայն հանգեց հին և գրավոր ավանդված լեզուների բացահայտմանը, այլև կենդանի խոսվածքների և բարբառների ուսումնասիրությանը: Բարբառագրությունը դարձավ լեզվաբանական աշխարհագրության (իզոգլոսների) տարածվածությունն ուսումնասիրող գիտակարգ: Բարբառագրության եղանակը բարբառային նյութերի հավաքման, մշակման մեթոդիկայի ամբողջությունն է: Բարբառագրական ատլասի կազմումը, բարբառագիտական նյութի հավաքման ծրագիրը և բարբառագիտական բառարաններն ըստ մեծի մասին խարսխվում են բարբառագրական եղանակի տվյալների վրա: Այս եղանակի էությունն է հավաքել բարբառային նյութը, ամբողջացնել, ցույց տալ մեթոդիկան ու դրանք մշակելու եղանակները: Դրանք գործադրվում են բարբառային նյութը մշակելու և բանասիրական վերլուծության ժամանակ, նաև գործադրվում են բարբառային բառարանների կազմման ընթացքում, որոնցից են «Խոսվածքների բառարան» (մի խոսվածքի բառային կազմի ամբողջական նկարագրություն), «Ռեգիոնալ-տարածաշրջանային բառարան» (լրիվ կամ տարբերակված), «Լեզվի բարբառային բառարան», որն ուսումնասիրում է լեզվի բոլոր խոսվածքները, նկարագրում բարբառային բառերի արեալները և իմաստները: Այդպիսին է Սահակ Ամատունու «Հայոց բառ ու բանը», Հր. Աճառյանի «Գավառական բառարանը», ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կողմից հրատարակված բազմահատոր «Հայոց լեզվի բարբառային բառարանը» և այլն:

Բարբառագրությունն ուսումնասիրում է բարբառային տարածվածության գոնաները, որը համընկնում է լեզվաբանական աշխարհագրության հետ, ցույց է տալիս գրական լեզվի բարբառային տարբերակները՝ ըստ տարածվածության շրջանների: Հմմտ. *աքաղաղ* -աքլոր (Արարատ., Խոյ.) - ճետ (Մուշ, Ալաշկերտ) – որձակ (Շատախ) և այլն, *ականջ* (Մոկս, Վան) – ակոնձ (Խարբերդ, Ուրմիա) անգոձ (Ակն) – անգոձ (Դրբ.) – անգաչ (Հմշ.) – հանգաձ (Մուշ) – օնգոձ (Նոր Բայազետ, Ալաշկ.) – ականոջ, անջակ (Կիլիկիա, Զեյթուն) և այլն:

Բարբառագրությունն օգտվում է հատուկ գրային նշաններից՝ համապատասխան հնչումներ ապահովելու համար: Բարբառագրական նյութի արձանագրման համար կարևոր են բարբառագրական ատլասները և բարբառային նյութի քարտագրումը: Վերջինս ծառայում է նաև որպես լեզվի աշխարհագրության ուսումնասիրման մեթոդիկա. դրա տիպը պայմանավորված է լեզվաբանական ատլասով՝ ազգային, տարածաշրջանային, նահանգային, ազգակից լեզուների, լեզվամիությունների: Բարբառագիտական

ատլասները ամենից առաջ արձանագրում են լեզվական իրողության տարածվածության սահմանները:

5. Պատմամշակութային մեկնաբանություն – Լեզվի պատմության, ժողովրդի պատմության և նրանց հետ հոգևոր մշակույթի ունեցած կապերի հարցը առաջադրում է լեզվական իրողությունների պատմամշակութային մեկնաբանության պահանջ: Այս առումով սերտ է լեզվական տվյալների կապը ազգագրական տվյալների հետ:

Լեզվական փաստերը ենթարկվում են ազգագրական մեկնաբանության: Այս մեկնաբանության եղանակներից է գրական լեզվի պատմության շրջանաբաժանումը և գրական գրավոր լեզվի ու գեղարվեստական լեզվի պատմության կապերի բացահայտումը:

Առանձին բառերի պատմական մեթոդիկան հանգում է նրան, որ արդի լեզվի որևէ բառի իմաստի պատմությունը հետազոտվում է այդ բառերով արտահայտվող առարկաների պատմությամբ: Օրինակ, որոշ գունանուններ սիմվոլներ են. *սպիտակ ագռավ* և *սև ագռավ*, *կարմիր հեղափոխություն* և *կարմիր արյուն* բառակապակցությունների իմաստային բացատրությունը կապվում է որևէ ժամանակաշրջանում մարդկանց գիտակցության մեջ տվյալ գունանվան ունեցած պատմական նշանակության հետ:

Բառի հետազոտման մեթոդիկայով վեր են հանում պատմամշակութային որոշակի շերտեր, հատկապես պետական կառավարման բառապաշարի ոլորտում, երբ հասկացությունը բխեցվում է իրավունքից, պարտականությունից, հմմտ. *դատաւոր, թագաւոր, իշխան, սպարապետ, արքայից արքայ, տիկնանց տիկին* և այլն:

Բառերի իմաստներով կարելի է ցույց տալ լեզուն կրողների կուլտուրայի պատմությունը: Օրինակ, *սպարապետ, զորավար, հազարապետ* և նմանատիպ բառերով բնորոշվում է ռազմավարական արվեստի առկայությունը հին հայերենում, *գրիչ, մագաղաթ, դպիր, մատյան, դիվանապետ* բառերով՝ դպրության արվեստի առկայությունը, *եկեղեցի, կաթողիկոս, քահանա, աբեղա* բառերով՝ հոգևոր, մշակութային (քրիստոնեական) կյանքը և այլն:

6. Տեքստագիտություն – Որպես պատմական գիտակարգ՝ ուսումնասիրում է բնագիրը, բացահայտում հեղինակին, պարզում է գրության ժամանակը և բնագիրը պատրաստում հրատարակության: Տեքստագիտությունը հին գիտություն է. լեզվաբանության զարգացման դեռևս վաղ շրջաններում բանասիրական նպատակներով ուսումնասիրում էին բնագրերը, որոնք կարող էին աղավաղված լինել. պետք էր համեմատել և ճշգրտել գրչագրական տարբերակները, շատ դեպքերում կորած է լինում հեղինակը: Տեքստագիտական հետազոտությունները սկսվել են դեռևս Ալ. Մակեդոնացու ժամանակաշրջանում, երբ վերականգնվում էր Հոմերոսի պոեմի տեքստը: Ռուս իրականության մեջ այն վերաբերում է «Ասք Իգորի գնդի մասին» բա-

նահյուսական երկի տարբերակների ուսումնասիրությանը, հայ իրականության մեջ՝ Գր. Նարեկացու «Մատենանոց երկի գրչագրական տարբերակների հետազոտությանը և այլն: (Պ.Խաչատրյան և Ա.Ղազինյանը բազմաթիվ տեքստերի հիման վրա վերականգնեցին Գր. Նարեկացու Մատենանի ամբողջական բնագիրը): Տեքստաբանը պետք է լինի պատմաբան, լեզվաբան, բանասեր:

Ժամանակակից տեքստագիտությունը լրացուցիչ պատմաբանասիրական ճյուղ է, որ նպատակ ունի ուսումնասիրել տեքստի պատմությունը, վերականգնել հին տեքստը, հեղինակին ու ժամանակագրությունը և տեքստը պատրաստել հրատարակության:

Այդ կարգի հարցերի լուծումը ենթադրում է պատմահամեմատական մեթոդի գործադրում: Տեքստաբանության հիմնական եղանակներից են *գրաքննադատությունը և ձեռագրերի դասակարգումը*: Պետք է նկատել, որ պատմական հուշարձանների և գեղարվեստական ստեղծագործության հրատարակությունը չի ենթադրում պահպանել բոլոր լեզվական իրողությունները, ինչպես դրանք եղել են տեքստերում: Տեքստագիտական աշխատանքներին մեծապես օգնում է *աղբյուրագիտությունը*, որի էությունն է բացահայտել, ծանոթագրել, դասակարգել աղբյուրները՝ ըստ նրանց լեզվաբանական բովանդակության ու տրված տեղեկության, և մշակել նրանց գործածության մեթոդները: Աղբյուրների օգտագործումը լայնացնում և խորացնում է աղբյուրագիտության փորձագիտական բազան, որն էլ տեքստի տեսական կառուցվածքը դարձնում է առավել համոզիչ:

Ցանկացած լեզվի պատմության ուսումնասիրությունն իրականանում է պատմահամեմատական մեթոդի գործադրման միջոցով:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ - զուգադրական մեթոդով ուսումնասիրվում են ոչ ցեղակից լեզուների և ազգակից լեզուների ոչ ցեղակից փաստերը. դա լեզվի ուսումնասիրություն և նկարագրություն է այլ լեզուների կառուցվածքների հետ համեմատության միջոցով, որ նպատակ ունի բացահայտելու տվյալ լեզվի տիպաբանական բնութագիրը, նրան բնորոշ առանձնահատկությունները: Այդ մեթոդն առաջին հերթին ուղղված է երկու համեմատվող լեզուների տարբերությունները բացահայտելուն, այդ պատճառով էլ այն կոչվում է նաև *հակադրությունների մեթոդ* և ընկած է զուգադրական լեզվաբանության հիմքում:

Զուգադրական մեթոդով վերականգնում են լեզուների հանրույթների և տիպաբանական նմանությունների բնույթն ու էությունը, որ ի հայտ է գալիս լեզվական կառուցվածքի տարբեր մակարդակներում (ինչպես՝ լեզուների հնչյունական համակարգի տիպաբանությունը, շեշտի և հնչերանգի տիպաբանությունը, բառերի շարադասության տիպաբանությունը, բառային

համակարգի տիպաբանությունը, ձևաբանական ու շարահյուսական հանրությունների տիպաբանությունը և այլն):

Ելնելով ան բանից, որ տիպաբանական հետազոտություններում լայնորեն գործադրվում են զուգադրական և համեմատական մեթոդների տարրերը՝ տիպաբանական մեթոդը հաճախ անվանում են նաև *համեմատական-տիպաբանական*:

Զուգադրությունը՝ որպես լեզուների համեմատական ուսումնասիրության դրսևորում, տարբերվում է լեզվաբանական համեմատության այլ մեթոդներից: Այն առանձնապես արդյունավետ է ազգակից լեզուների նկատմամբ կիրառելիս, այն առումով, որ լեզուների հակադրական, ներհակ հատկանիշներն ավելի հստակ երևում են համանման հատկանիշների համեմատության ֆոնի վրա: Այդ առումով զուգադրական մեթոդը կարելի է դիտել իբրև պատմահամեմատական մեթոդի հակադարձ դրսևորում: Եթե պատմահամեմատական մեթոդը հենվում է լեզուների նմանությունների և ընդհանրությունների բացահայտման վրա, ապա զուգադրական մեթոդը՝ տարբերությունների վրա:

Լեզուների միջև գոյություն ունեցող տարբերությունները, ըստ լեզվական մակարդակների հարաբերության, արտահայտվում են մերթ իբրև դիաֆոնիա (տարբերություններ հնչյունաբանական մակարդակում), մերթ իբրև դիամորֆիա (ձևաբանական տարբերություններ), մերթ իբրև դիատակսիա (շարահյուսական տարբերություններ), մերթ իբրև դիասեմիա (իմաստաբանական տարբերություններ), մերթ էլ իբրև դիալեքսիա (բառությային տարբերություններ):

Զուգադրական մեթոդն ունի իր եղանակները՝ զուգադրական հիմունքի սահմանում, զուգադրական մեկնաբանություն, տիպաբանական բնութագրություն:

Զուգադրական հիմունքի սահմանում - Այս եղանակով առաջադրվում է զուգադրման առարկան, այսինքն՝ որոշվում է լեզվական այն իրողությունը, որը պետք է դիտարկել ոչ ցեղակից լեզուներում՝ զուգադրական նմանությունների և տիպերի բացահայտման նպատակով: Զուգադրական հիմունքը սահմանում է, որ համեմատվող լեզուներում որքան շատ են նման իրողությունները, այնքան էլ շատ են նաև տարբերությունները: Եթե համեմատվող լեզուներում իրար նման երևույթներ չկան, ապա զուգադրական մեթոդը բավարարվում է դրանց բացակայությունն արձանագրելով:

Զուգադրական հիմունքը սահմանվում է *լեզվական և հատկանշային զուգադրմամբ*: *Լեզվական զուգադրման* էությունն այն է, որ զուգադրման հիմունք է դիտվում մեկ լեզու, որը և դառնում է համեմատության չափանիշ: Լեզվի ընտրությունը պայմանավորված է կա՛մ հետազոտության խնդիրներով, կա՛մ զուգադրվող լեզվի ուսումնասիրվածության աստիճանով: Միջին դարերում եվրոպական լեզուների քերականությունների ստեղծման

օրինակ էր դիտվում լատիներենի քերականությունը: Հետագայում այդպիսի դեր ստանձնեցին ֆրանսերենն ու գերմաներենը, այնուհետև՝ անգլերենն ու ռուսերենը: Լեզուն, որպես համեմատության հիմունք, կարող է դիտարկվել կա՛մ որպես ինքնին, կա՛մ որպես լեզվախմբի (լեզվաճյուղի) ներկայացուցիչ: Օրինակ, լեզուների ձևաբանական դասակարգումը կատարելիս գերմաներենը դիտարկվեց որպես թեքական լեզուների ներկայացուցիչ, իսկ նրա հետ ոչ թեքական լեզուների համեմատությունը բերեց կցական, անջատական և բազմահամադրական լեզուների բացահայտմանը: Ամերիկյան լեզվաբանության մեջ հնդկացիական լեզուների հետազոտության ոլորտում անգլերենը դիտվում է որպես եվրոպական լեզուների չափանիշ: Լեզվական զուգադրման եղանակով պարզում են, թե աշխարհի լեզուները լեզվաթեքականական ի՛նչ միջոցներով են արտահայտում քերականական այս կամ այն իմաստը:

Հատկանշային զուգադրման էությունն այն է, որ իբրև զուգադրման հիմունք նկատի է առնվում լեզվական որևէ իրողություն կամ այդ իրողության որևէ հատկանիշ: Որպես հատկանշային զուգադրության օրինակ՝ դիտարկենք *գիրք* բառի հոգնակի թվի արտահայտման միջոցները տարբեր կառուցվածքի լեզուներում՝ անկախ նրանց ծագումնաբանական ընդհանրություններից. հմմտ. գիր - գիրք, գր-եան (գրք.), գրքեր (արդի հայ.), книга - книги (ռուս.), book - books (անգլ.), das Buch - die Bücher (գերմ.), Liber - Libri (լատ.), kitab - kitablar (թուրք.), kitab - kutub (արաբ.) և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, որոշ լեզուներում հոգնակի թիվը կազմվել է մասնիկավորմամբ (հայերեն, ռուսերեն, գերմաներեն, թուրքերեն), որոշ լեզուներում՝ ներքին թեքմամբ (արաբերեն), որոշ լեզուներում՝ արմատի կրկնությամբ (ճապոներեն) և այլն: Որոշ լեզուներում հոգնակի թիվը կազմվում է թե՛ մասնիկավորմամբ և թե՛ ներքին թեքումով, հմմտ. անգլերենում՝ map (քարտեզ) - map-s (քարտեզներ), foot (ոտք) - feet (ոտքեր) և այլն:

Հր.Աճառյանի «Լիակատար քերականության հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատությունը գրվել է զուգադրական մեթոդով. հեղինակը հայերենի լեզվական իրողությունները մեկնաբանել է այլ լեզուների համեմատությամբ՝ հատկանշային զուգադրման եղանակով:

Զուգադրական մեկնաբանություն - Լեզվական և հատկանշային հիմունքներով կատարված ուսումնասիրության արդյունքները ենթարկվում են զուգադրական մեկնաբանության: Զուգադրական մեկնաբանությունն իրագործվում է կառուցվածքային մեկնաբանության մեթոդիկայի օգնությամբ, այդ թվում՝ տիպաբանական բնութագրման և տիպաբանական մեկնաբանության: Համեմատվող լեզուների փաստերն ուսումնասիրվում են՝ օգտագործելով նկարագրական մեթոդի արտաքին և ներքին մեկնաբանության

եղանակները, ապա ստացված արդյունքները համեմատվում են իրար հետ, որ մեկնաբանվում է *գուգահեռ ուսումնասիրվող մեթոդիկայի* օգնությամբ:

Լեզվական փաստերի գուգահեռ ուսումնասիրությունը կարելի է կատարել լեզուների կառուցվածքային տարբեր մակարդակներում: Օրինակ, իմաստաբանական մակարդակում ինչպիսի՛ն են որոշչային բառակապակցության բաղադրիչների ստորադասական հարաբերությունների արտահայտման միջոցները տարբեր լեզուներում: Այն լեզուները, որոնց բնորոշ է անվանական սեռի քերականական կարգը, ընդգծված տարբերություն են ցուցաբերում այդ կարգը չունեցող լեզուների համատիպ կառույցների նկատմամբ:

Այսպես, ռուսերեն *любовь матери, материнская любовь* կապակցությունները որոշչային բառակապակցություններ են, որոնց լրացական անդամներն արտահայտված են մի դեպքում՝ գոյականի սեռական հոլովով (*матери*), երկրորդ դեպքում՝ ածականով (*материнская*): Ածականական բառակապակցության լրացական անդամը (*материнская*) սեռով, հոլովով և թվով համաձայնել է լրացմանը (եզակի թիվ, իգական սեռ, ուղղական հոլով): Արդի հայերենում *մոր սեր* և *մայրական սեր* համատիպ կապակցություններում ածականական բառակապակցության բաղադրիչների միջև այդ կարգի համաձայնություն չի գործում, քանի որ հայերենը չունի անվանական սեռի քերականական կարգ: Զուգադրական մեկնաբանությունն արձանագրում է համեմատվող լեզուներում անվանական սեռի դրսևորման տիպերը և լեզվական տվյալ իրողության հարցում առկա տարբերությունները:

Զուգադրվող լեզուների լեզվական միավորների գործառական յուրահատկությունը դիտարկենք բառակազմական մակարդակում: Գրաբարում իբրև իգական սեռի ածանց հանդես է գալիս *-ուհի* ձևույթը. *թագ-ուհի, իշխան-ուհի, քրմ-ուհի, Տաճատ-ուհի* և այլն, գերմաներենում նույնպես մեկ ածանց է գործում՝ *-in*. *die Wissenschaftler-in, die Schuler-in, die Schullehrer-in* և այլն: Ռուսերենում իգական սեռի ածանցները համեմատաբար շատ են, ինչպես՝ *-к* (*-анк-, -енк-*), *-иц* (*-ниц-, -шиц-, -чиц-*), *-их-, -ух-, -ш-* և այլն. *речка, американка, француженка, певица, ученица, учительница, мачиха, старуха* և այլն: Զուգադրելով ռուսերենի իգական սեռի ածանցների գործառական արժեքն այլ լեզուների համատիպ ածանցների հետ՝ կարելի է ցույց տալ ռուսերենի ածանցների կենսունակությունը բառակազմական մակարդակում, որ դիտվում է նրանց զուգադրական տիպաբանության (մեկնաբանության) չափանիշ և այլն:

Որոշ լեզուներում իգական սեռի ածանցի բացակայությունը լրացվում է բառային տարբերակներով, որոնք արտահայտում են իգական սեռի նշանակություն, հմմտ. *писательница* – *woman writer*: Գերմաներենում իգական սեռի *-in-* ածանցին գուգահեռ գործածվում է *frau* ածանցակերպը՝

իզական սեռի նշանակությամբ, հմմտ. Ehefrau – ամուսին (կինը), Zeitungsfrau – թղթակից (կին) և այլն:

Բառակազմական մակարդակում գերմաներենի տիպաբանական յուրահատկությունն այն է, որ հայերենի և ռուսերենի ոչ ստացական բաղադրիչով *բառակապակցությունների փոխարեն ունի բարդություն*, հմմտ. die Hauptbewegung – հիմնական ուղղություն - главное движение, die Hochschule – բարձրագույն դպրոց - высшая школа, die Hochschulgemeinschaft – բարձրագույն դպրոցի խորհուրդ - коллектив высшей школы, das Sonnenkult - արևի պաշտամունք - культ солнца և այլն: Զուգադրական մեկնաբանությունը բացահայտում է բառակազմական տիպերի տարբերությունները լեզուներում՝ բառաքերականական ընդհանուր իմաստներն արտահայտելու տեսակետից:

Այս կարգի բառակապակցությունների բաղադրիչների շարադասական կաղապարները տարբերվում են նշված լեզուներում: Գերմաներենում և հայերենում հատկացական բաղադրիչները (հատկացուցիչները) նախադասվում են հատկացյալներին, ռուսերենում դրանք հետադաս դիրք են գրավում: Հմմտ. das Sonnen + kult - *արևի* պաշտամունք, բայց культ *солнца*, die Hochschule + gemeinschaft – *բարձրագույն դպրոցի* խորհուրդ, բայց коллектив *высшей школы* և այլն:

Միադիմի բայով կառույցների լեզվական միջոցները գրաբարում, ռուսերենում և գերմաներենում միմյանցից տարբերվում են: Գրաբարում միադիմի բայերի ենթական արտահայտվում է տրական հոլովով, իսկ խնդիրը՝ անորոշ դերբայի հայցականով, հմմտ. *պարտ է ինձ խօսել, պարտ է քեզ խօսել, պարտ է նմա խօսել*, ռուսերենում և գերմաներենում համատիպ բայերի պահանջով ենթական արտահայտվում է ուղղականով, հմմտ. я должен говорить... мы должны говорить, ich muss sprechen ... wir müssen sprechen և այլն: Ռուսերենում *պարտ է, պետք է, հարկ է* և նմանատիպ այլ կառույցների պահանջով ենթական արտահայտվում է նաև տրական հոլովով, ինչպես գրաբարում, հմմտ. мне надо уйти... нам надо уйти և այլն, իսկ արդի հայերենում այդ կառույցների ենթական արտահայտվում է ուղղական հոլովով, ինչպես գերմաներենում, հմմտ. *ես պետք է գնամ ... մենք պետք է գնանք* և այլն:

Գերմաներենում և անգլերենում հատկացուցչի քերականական իմաստն արտահայտվում է *նախդիրներով* (das Buch - der Buch, the book - of the book). Գրաբարում, արդի հայերենում և ռուսերենում՝ *հոլովական մասնիկներով* (որդու-ոյ, որդու-и, сын-а) և այլն:

Բզաֆետային կառույցով ստորադասական հարաբերություններ դրսևորվում են թուրքական, իրանական և սեմական լեզուներում. այդպիսի կառույցներում իզաֆետը դրվում է գերադաս բառի (լրացյալի) վրա՝ ցույց տալով, որ իրենից կախված է այլ անդամ: Հմմտ. պրսկ. taj-e Arshak. Արշակի թագը (բառացի՝ թագ – նրա – Արշակ), թաթար. Казан институты (Շազան-ի

համալսարան). Բառացի՝ *Կազան - համալսարան - նրա*, որտեղ *Կ* ածանցը, որ արտահայտում է երրորդ դեմքի պատկանելության իմաստ, դրվում է առանցքային բառի վրա: Հմմտ. տաջիկ. *kitob-i xub. լավ գիրք* (բառացի՝ գիրք – նրա – լավ), թուրք. *aslan balas-i. առյուծի որդի* (բառացի՝ առյուծ – որդի – նրա) և այլն: (Տե՛ս *Քերականական կարգեր* ենթաբաժնի բառահոդվածները):

Ձուգադրական մեկնաբանությունը բացահայտում է շարահյուսական տարբեր կառուցատիպերի առկայությունը լեզուներում՝ միևնույն քերականական իմաստներն արտահայտելու տեսակետից:

Տիպաբանական բնութագրություն - Լեզուների ձուգադրական ուսումնասիրության նպատակն է բացահայտել լեզուների տիպաբանական խմբերը, այդ նպատակի իրագործումն առնչվում է մեկ այլ խնդրի՝ լեզվաբանական հանրույթների մեկնաբանման հետ: Լեզուների տիպաբանական դասակարգումը համալիր խնդիրներ է լուծում, որ բարդ գործընթաց է, քանի որ ներառում է տիպաբանական մի շարք չափորոշիչներ, որոնք իրացվում են տարբեր լեզուներում՝ անկախ ցեղակցության աստիճանից կամ անկախ ցեղակցությունից ընդհանրապես:

Լեզվաբանության մեջ ընդունված է լեզուների տիպաբանական դասակարգումը կատարել ըստ առաջնային (գերիշխող) հատկանիշների, որոնք են՝ ձևաբանական և շարահյուսական հատկանիշները:

Ձևաբանական դասակարգումը հենվում է որոշակի հատկանիշների վրա. ինչպես՝ բառի կառուցվածքը, ձևույթի բնութագիրը և նրա գործառական արժեքը բառակազմության և բառափոխության գործընթացներում, ածանցի և արմատի միացման տեխնիկան, համադրականության աստիճանները (համադրական, վերլուծական և բազմահամադրական): Ձևաբանական դասակարգման հիմնական գործոն է համարվում լեզուներում քերականական իմաստների արտահայտման միջոցներից մեկի գերակայությունը: (տե՛ս *Լեզուների ձևաբանական (տիպաբանական) դասակարգում* բառահոդվածը):

Շարահյուսական դասակարգումը հենվում է նախադասության կառուցվածքի վրա՝ այն դիտարկելով համալեզվական իմաստների այնպիսի հարաբերությունների համատեքստում, ինչպիսին են *գործողությունը, սուբյեկտը, օբյեկտը և հատկանիշը*: Այս կարգի դասակարգման ընթացքում առանձնացվում են լեզուներում գործողությունն արտահայտող բառերի սեռադասային (սեռային) տարբերակումները, մյուս կողմից՝ գործողություն կատարողի և գործողության ոլորտ ընդգրկված առարկաների հոլովական արտահայտությունները: (տե՛ս *Լեզուների շարահյուսական դասակարգում* բառահոդվածը):

Լեզուները պայմանականորեն են զետեղվում այս կամ այն տիպաբանական խմբի մեջ. մաքուր տիպ ոչ միշտ կարելի է գտնել: Տիպաբանական դասակարգումներն արձանագրում են լեզուների ընդհանրությունները,

մինչդեռ նրանց միջև եղած բազմաթիվ տարբերություններ հաճախ մնում են չբացահայտված. լեզվական տիպաբանության խնդիրն է ցույց տալ նաև լեզուների միջև նկատվող տարբերությունները:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՄ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ - Կառուցվածքային կամ նկարագրական լեզվաբանությունը ձևավորվել է XX դ. 20-30-ական թվականներին. դա լեզվի նկատմամբ աշխարհայացքային մոտեցումների և հետազոտության մեթոդների յուրահատուկ համակարգ է, որ լեզուն դիտում է որպես *նշանային համակարգ*, որոշակիորեն առանձնացված կառուցվածքային տարրերով (լեզվի միավորներով, նրանց խմբերով և այլն): Նշանային այդ համակարգն ընդգրկում է լեզվի բոլոր մակարդակները, որոնք դասավորված են կազմահարկային հաջորդականությամբ, ու նրանց միավորները՝ յուրաքանչյուր մակարդակի ներսում:

Կառուցվածքային լեզվաբանության ձևավորման վրա մեծ ազդեցություն են գործել Ի. Ա. Բոդուեն դե Կուրտենեն, Ֆ.Ֆ. Ֆորտունատովը, Օ. Յեսսերսենը, Է. Սեպիրը, Լ. Բյումֆիլդը և հատկապես Ֆ. դե Սոսյուրը և Մոսկվայի լեզվաբանական խմբակը (1915):

20-40-ական թվականներին ձևավորվեցին կառուցվածքաբանության դպրոցները, (Պրահայի, Կոպենհագենի, Ամերիկյան նկարագրական, Լոնդոնի դպրոցները, Պետերբուրգի և Մոսկվայի հնչյունաբանական դպրոցները), որոնք վճռական դեր խաղացին կառուցվածքաբանության մեթոդների և լեզուների գիտական նկարագրության սկզբունքների վերմաշակման գործում:

Կառուցվածքային (նկարագրական) մեթոդը համաժամանակյա վերլուծական մեթոդ է, որ կիրառվում է լեզվի ժամանակակից վիճակը նկարագրելու համար:

Վերլուծության քայլեր են համարվում՝

- 1) բնագրի անդամատումը երկու նվազագույն միավորների,
- 2) լեզվի կառուցվածքային միավորների բաշխումների վերականգնում և դրանց միավորում բաշխումնային խմբերի մեջ,
- 3) լեզվի որոշակի կաղապարի կառուցում՝ նրա համակարգի որոշակի մակարդակում,
- 4) լեզվի նկարագրությունը պետք է ավարտվի լեզվի համակարգի ընդհանուր կաղապարի կառուցումով, որտեղ պետք է արտացոլվեն տարբեր մակարդակների լրացական (կախումնային) հարաբերությունները:

Կառուցվածքային (նկարագրական) մեթոդն ունի երկու կարգի մեկնաբանություն (եղանակ)՝ արտաքին և ներքին մեկնաբանության եղանակներ:

Ա. Արտաքին մեկնաբանության եղանակներ - Գործադրման երկու ուղղություն ունեն. ա) լեզվական միավորների մեկնաբանություն նրա ոչ լեզվական, արտալեզվական իրողությունների հետ ունեցած կապի տեսանկ-

յունից, բ) լեզվական միավորների մեկնաբանությունն և տարբերակում լեզվական մյուս միավորների հետ ունեցած կապի տեսանկյունից:

Լեզվական և ոչ լեզվական միավորների մեկնաբանությունը կատարվում է սոցիոլոգիական եղանակներով, որոնք գործադրվում են լեզվի կառուցվածքի նկարագրության ժամանակ, հատկապես բառային կազմի ուսումնասիրության ընթացքում: Այդ եղանակներից տարածված են *բառի (իմաստի) և իրի (առարկայի), թեմատիկ խմբերի, իմաստային դաշտերի, լեզվաբանական աշխարհագրության* և այլ եղանակներ:

1. **Բառի և իրի եղանակ** - Ուսումնասիրում է բառիմաստի և առարկայի հարաբերակցության հարցերը. այլ կերպ ասած՝ պարզվում է՝ բառիմաստը պատճառաբանված է, թե ոչ, հմմտ. ձյուն և ձնծաղիկ, սար և սարալանջ, արծաթ և արծաթե, գյուղ և գյուղական: Արմատական բառերի իմաստները պատճառաբանված չեն, իսկ նրանցով բացադրված բառերի իմաստները պատճառաբանված են:

2. **Թեմատիկ խմբերի եղանակ** - Ուսումնասիրում են բառերի իմաստային-թեմատիկ խմբերը. թե այս կամ այն հասկացությունն ի՞նչ բառերով է արտահայտվում: Օրինակ, *տուն* հասկացությունն ինչպիսի՜ և ինչքա՜ն բառերով կարելի է արտահայտել, կամ լայն իմաստով՝ *բնակավայր* հասկացությունը ինչպիսի բառերով կարելի է արտահայտել: Այդ նպատակով ստեղծվում են թեմատիկ բառարաններ:

3. **Իմաստային դաշտերի եղանակ** - Բացահայտում են մերձիմաստ բառերի հոմանշային շարքերը, հականշային գույգերը և այլն:

4. **Լեզվաբանական աշխարհագրության եղանակ** - Զբաղվում են լեզվական իրողությունների ուսումնասիրությամբ՝ նրանց աշխարհագրական տարածվածության սահմանները որոշելու և համապատասխան լեզվաբանական քարտեզներ ու ատլասներ կազմելու միջոցով:

Բ. **Ներքին մեկնաբանության եղանակներ** - Լինում են երեք կարգի.

ա. **Պասակարգման և համակարգման եղանակ** - Կոչված է առանձնացնելու լեզվական միավորների կամ կարգերի տարբեր խմբեր: Օրինակ, բառախմբերի դասակարգում ըստ խոսքի մասերի, բառատեսակների դասակարգումն ըստ կազմության, անցողական և անանցողական սեռադասի բայերի դասակարգումն ըստ խնդրառության հատկանիշի և այլն:

բ. **Առանձնացված միավորների կամ կարգերի կազմությունը բացահայտող եղանակներ** - Դրանց վերաբերում են հարացուցային և շարակարգային եղանակները (տե՛ս *Հարացույց* և *Շարակարգ* բառահոդվածները):

գ. **Փոխակերպումների եղանակներ** - Զբաղվում է լեզվական միավորների փոխակերպման հարցերով և առանձնացնում է փոխակերպվող և չփոխակերպվող լեզվական կառույցները: Ուսումնասիրում է, օրինակ, *երկ-աստիճան փոխակերպական կառույցները* (նախադասությունների ներգործածն - կրավորածն, դրական - ժխտական, հրամայական - ըղձական փո-

խակերպումներ և այլն), *եռաստիճան փոխակերպումները* (երկրորդական նախադասություն - բառակապակցություն - բարդության - ածանցավոր բառ և այլն):

Կառուցվածքային (նկարագրական) մեթոդը գործադրում է նաև *հակադրության, դիրքային, վիճակագրական, գործիքային, լեզվաբանական հետազոտության ավտոմատացման* և այլ եղանակներ:

1. ***Հակադրության եղանակ*** - Մեկնաբանվում է տեսակների մասին *հակադրական և ոչ հակադրական բաշխումների հիմնադրույթը*:

- ***Հակադրական բաշխումը*** տալիս է լեզվի կառուցվածքի ինքնուրույն միավորների (անփոփոխականների) արժեքը ցանկացած մակարդակում. այս դեպքում լեզվական տարրերը հանդիպում են նույնական միջավայրում և փոխադարձ փոփոխության դեպքում հանդես են բերում տարբեր իմաստներ:

- ***Ոչ հակադրական բաշխումը*** (ազատ փոփոխություն և լրացուցիչ բաշխում) վերաբերում է միևնույն միավորի տարբերակներին: *Ազատ փոփոխության դեպքում* հակադրվող միավորները ընդունվում են նույն միջավայրում, սակայն միմյանց փոխարինելիս իմաստներ չեն տարբերակում: *Լրացուցիչ բաշխման* միավորները չեն հանդիպում նույնական դիրքերում, և նրանց տարբերությունները պայմանավորված են դիրքերի տարբերությամբ:

Հակադրության եղանակով առանձնացնում են լեզվական ցանկացած գույգ՝ ծավալուն կամ նվազագույն: Լեզվական *ծավալուն* գույգի հակադրություն է համարվում երկու պարբերությունների հակադրությունը, գլխավոր և երկրորդական նախադասությունների հակադրությունը և այլն: *Նվազագույն* գույգի հակադրություն է համարվում, օրինակ, երկու հականիշ բառի, հիմքի և վերջավորության, արմատի և ածանցի, երկբարբառի և ձայնավորի հակադրությունը և այլն: Հակադրության մեջ կարող է լինել ուժեղ և թույլ անդամ, օրինակ, կատարյալի կերպն ուժեղ է, անկատար կերպը՝ թույլ:

2. ***Դիրքային եղանակներ*** - Գործադրվում են հնչյունաբանության մեջ, մասնավորապես հնչյունափոխական իրողությունները մեկնաբանելիս՝ պայմանավորված հնչյունի դիրքով. այդ եղանակով մեկնաբանում են բառակցի, բառամիջի, բառավերջի հնչյունափոխական երևույթները (հնչյունի անկում, հնչյունի հավելում, հնչյունի փոփոխությունը և այլն):

3. ***Վիճակագրական եղանակներ*** - Լեզվաբանության մեջ վաղուց ուշադրություն են դարձրել լեզվական միավորների քանակական բնութագրմանը, նրանց տարածման չափերին: Լեզվական միավորների քանակական բնութագրումը, սակայն, սահմանափակվել է շատ կամ քիչ բառերով: Նման նշումները հիմք են ծառայել սահմանազատելու կանոնը և բացառությունը, նորմատիվ և ոչ նորմատիվ երևույթները: Այս մոտավոր քանակական մեթոդիկայի հետ միասին լեզվաբանության մեջ կառուցվածքաբանները ներառեցին վիճակագրական մեթոդիկան, որ հենվում է

հավանականության տեսության և մաթեմատիկական վիճակագրության վրա:

Վիճակագրությունը լեզվական երևույթների դասավորության ուսումնասիրության նպատակով վիճակագրական եղանակների գործադրումն է: Վիճակագրությունն ուսումնասիրում է ոչ թե անհատական (եզակի) փաստեր, այլ իրողությունների ամբողջություն: Ընդ որում՝ մասնակի ուսումնասիրության հիման վրա տրվում են եզրակացություններ ամբողջի մասին:

Վիճակագրական եղանակներից տարածված են *բառարանավիճակագրությունը, բառավիճակագրությունը, ոճավիճակագրությունը, տեքստի չափման եղանակները* և այլն:

Բառարանավիճակագրություն - Ցույց է տրվում բառերի գործածության հաճախականությունը լեզուներում: Այդպիսի բառարան է Հայերենի հաճախականության բառարանը, որտեղ ցույց է տրված, թե տարբեր բնույթի ոճերում (գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական և այլն) բառերը կիրառական ի՞նչ հաճախականություն ունեն:

Բառավիճակագրություն - Ձբաղվում է միևնույն հեղինակի գործածած բառերի վիճակագրությամբ. այդպիսի վիճակագրություն տրվում է հեղինակային համաբարբառների կազմման ժամանակ, օրինակ, հայերենում տրված են Մ. Խորենացու, Եղիշեի, Եզնիկ Կողբացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի գործածած բառերի վիճակագրությունը՝ հատուկ և հասարակ անունների բաժանումներով: Այդպես լեզվաբանությանը հայտնի են Հովերոսի (9000 բառ), Պուլկինի (21.290 բառ), Հովհ. Թումանյանի (9000 բառ), Պ.Սևակի (14.200 բառ) հեղինակային բառագործածության վիճակագրությունը:

Ոճավիճակագրություն - Ցույց է տալիս լեզվի գոծառական ոճերի կիրառական հաճախականությունը լեզուներում: Ոճավիճակագրությունը կիրառելի է նաև որևէ հեղինակի երկի վերաբերյալ՝ պարզելու՝ լեզվական այս կամ այն ոճի գործառական հաճախականությունը: Օրինակ, կարելի է պարզել, թե Խորենացու երկում ոճական հնարները (սեռականով ավելադրություն, վերացականը թանձրացականի փոխարեն, պեսպիսություն և այլն) գործառական ի՞նչ հաճախականություն ունեն: Նույնպիսի վիճակագրություն կարելի է կատարել՝ համեմատություն անցկացնելով հինգերորդ դարի պատմիչների գործածած ոճական միջոցների միջև: Այդպիսի ուսումնասիրությունը կարող է ամբողջացնել ոճագիտության համալիր նկարագրությունը լեզվի որևէ գոյավիճակում:

Տեքստի չափման եղանակներն են՝ կառուցվածքային, ծավալային, կաղապարային և այլն:

Կառուցվածքային եղանակով որոշում են տեքստի կառուցատիպերը՝ *գծային (շղթայական) և զուգահեռ*.

- *գծային (շղթայական) կառուցատիպն* արտացոլում է մտքի, գործողության կամ եղելության հաջորդական զարգացումը. այդպիսի տեքստե-

րում յուրաքանչյուր նոր նախադասություն համապատասխանում է նախորդ նախադասության բառերին կամ բառակապակցություններին, հաճախ գործածվում են դերանուններ և թերի նախադասություններ և այլն,

- *զուգահեռ կառուցատիպի* նախադասություններն ունենում են եղանակով ու ժամանակով նույնական բայ-ստորոգյալներ, իրականության փաստերն ու երևույթները հանդիպադրվում են, նկարագրվում կամ թվարկվում:

Տեքստի ծավալի չափման եղանակներով բացահայտվում են տեքստի ծավալային ընդգրկման շրջանակները. ըստ այդմ՝ առանձնացնում են՝

- *համառոտ տեքստ* - պարունակում է փոքր ծավալի տեղեկություն. այդպիսին են, օրինակ, կոչերը, հայտարարությունները, իմաստալից խոսքերը, առածները, ասացվածքները և այլն,

- *միջին ծավալի տեքստ* - պարունակում է համեմատաբար ընդարձակ տեղեկություն, այդպիսին են, օրինակ, պատմվածքը, նորավեպը, հեքիաթը, հոդվածը, ակնարկը և այլն,

- *ընդարձակ կամ ծավալուն տեքստ* - պարունակում է ավելի ընդարձակ տեղեկություն, այդպիսին են, օրինակ, վիպակը և վեպը:

Տեքստի կադապարման եղանակով առանձնացնում են *հիպերտեքստը*: (Տե՛ս *Տեքստի ներկայացման հիպերտեքստային տեխնոլոգիաները* բառահոդվածը):

4. *Գործիքային եղանակներ* - Արդի լեզվաբանությանը բնորոշ է մասնագիտական-տեխնիկական միջոցների և նորագույն բարձր տեխնոլոգիաների գործածությունը: Դա առաջ է բերել տեխնիկական միջոցների լեզվաբանական ուղղվածություն. ըստ այդմ՝ առաջացել են այնպիսի գիտակարգեր, ինչպիսին են ինժեներական լեզվաբանությունը, համակարգչային լեզվաբանությունը և այլն: Բարձր տեխնոլոգիաները կիրառվում են լեզվի գրեթե բոլոր մակարդակային միավորների ուսումնասիրության նպատակով:

Հնչույթաբանության մեջ գործածում են գործիքային հնչույթաբանական եղանակներ, որոնցով բնութագրվում են լեզվի հնչույթները. դա էքսպերիմենտալ կամ փորձարարական հնչույթաբանությունն է: Հնչույթների այս կարգի հետազոտությունը կատարվում է տարբեր եղանակներով.

ա) ***Սոմատիկ եղանակ*** - Այս եղանակով հնչյունական իրողությունների մասին եզրակացություններ են արվում խոսելու ֆիզիոլոգիական գործընթացների՝ սոմատիկ (մարմնական) արտահայտության ուսումնասիրությամբ (թեև տվյալ հնչյունի արտասանությունը մարմնի տեսակետից քիչ արտահայտություն ունի): Գործադրվում են քիմքագրությունը, արտասանական օրգանների լուսանկարումը, խոսքային ապարատի ռենտգենահարումը, խոսքային շնչառական ճնշման չափումը և այլն:

բ) **Պենմատիկ եղանակ** – Այս եղանակը հանգում է հատուկ թմբուկների միջոցով մրոտած թղթերի վրա գծեր քաշելուն, որոնք գրանցում են խոսքի օրգանների արտաբերական շարժումները. հիմնականում՝ ձայնի և աղմուկի փոխհարաբերությունն առաջանում է օդի ճնշման հետևանքով:

գ) **Էլեկտրասկոստիկական եղանակ** – Այս եղանակը հենվում է հնչյունային հատկանիշների էլեկտրական տատանումների վերածման վրա. այդ նպատակով գործածում են օսցիոլոգրաֆ և սպեկտրոգրաֆ: Լայն առումով՝ խոսքի էլեկտրասկոստիկական հատկանիշների ուսումնասիրման նպատակով գործածում են էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ:

5. **Լեզվաբանական հետազոտության ավտոմատացում** – Այս խնդիրներով զբաղվում է *համակարգչային լեզվաբանությունը*: (Տե՛ս *համապատասխան բառահոդվածը*)::

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ադայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
Խաչատրյան Լ.Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
Խաչատրյան Լ.Մ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:
Апресян Ю.Д., Идеи и методы современной структурной лингвистики, М., 1966.
Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.
Джаукян Г.Б., Сравнительная грамматика армянского языка, Е., 1982.
Засорина Л.Н., Введение в структурную лингвистику, М., 1974.
Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
Лайонз Дж., Общее языкознание, М., 2005.
Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.
Общее языкознание, Методы лингвистических исследований, М., 1973.
Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.
Широков О.С., Введение в языкознание, М., 1985.
Hock, Hans Henrich and Joseph, Brian D., Language history, language change and language relationship: an introduction to historical and comparative linguistics. Berlin and New York, 1996.

9. ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տիպաբանությունը լեզվաբանական գիտակարգ է, որ զբաղվում է լեզուների գործառական և կառուցվածքային ընդհանրությունների զուգադրական քննությամբ՝ որոշելու նրանց կիրառության ոլորտները, հասարակական գործառույթները, իմաստակառուցվածքային ընդհանրություններն ու տարբերությունները, ինչպես նաև նրանց տիպաբանական խմբերը և այլն:

Տիպաբանական քննություն կատարում են անկախ լեզուների ծագումնաբանական (ցեղակցական) հատկանիշից. դա լեզուների ուսումնասիրության հիմնական ասպեկտներից մեկն է, ինչպես պատմահամեմատական ասպեկտը, սակայն նրանից տարբերվում է հետազոտության առարկայի դրվածքով, ինչպես նաև հետազոտական եղանակների ու սկզբունքների միասնականությամբ: Տիպաբանությունը հենվում է առանձին լեզուների ուսումնասիրության վրա. ըստ այդմ՝ նա սերտ կապերի մեջ է ընդհանուր լեզվաբանության հետ և կիրառում է նրա կողմից մշակված ուսումնասիրության սկզբունքները՝ լեզվի (լեզուների) գործառույթներն ու կառուցվածքը տիպաբանորեն նկարագրելիս:

Տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուները ծագումնաբանորեն միմյանցից տարբերվում են, սակայն իրենց քերականական կառուցվածքով, մասնավորապես շարահյուսական կարգերով և քերականական իմաստների արտահայտման միջոցներով ցուցաբերում են զգալի ընդհանրություններ: Տարբեր կառուցատիպերի լեզուների ընդհանրական հիմքերի մեջ կարևորվում են լեզվական-քերականական միջոցները, որոնք տարբեր լեզուներում տարբեր կարգի դրսևորումներ ունեն, և այդ դրսևորումները վճռական դեր են խաղում տվյալ լեզվի տիպաբանական բնութագիրը որոշելու հարցում:

Ցեղակից և ոչ ցեղակից լեզուների կառուցվածքային ընդհանրությունների հիման վրա կատարվում են լեզուների շարահյուսական և ձևաբանական դասակարգումներ, և, ըստ այդմ, աշխարհի լեզուներն ընդգրկվում են տիպաբանական տարբեր խմբերի մեջ: Տիպաբանությունը, միևնույն թե տարբեր լեզուների շրջանակներում, ունի իր ժամանակագրական կտրվածքները, համաձայն որի՝ տարբերակում են տիպաբանության համաժամանակյա, պատմական և տարաժամանակյա դրսևորումները:

Տիպաբանական մոտեցումով որևէ լեզու տեղակայում են տիպաբանական այս կամ այն խմբի մեջ. սակայն դա կարող է պայմանական բաժանում լինել, եթե հաշվի ենք առնում լեզվի պատմական զարգացման ընթացքը և այդ ընթացքում նրա կրած փոփոխությունների միտումները: Լեզվի տիպաբանական բնութագիրը տրվում է՝ ելնելով նրա որևէ ժամանակահատվածի՝ գոյավիճակի լեզվաքերականական ընդհանուր վիճակից. այլ կերպ ասած՝ լեզվի զարգացման գոյավիճակները համընկնում են նրա տիպաբանական

բնութագրին կամ հակառակը. լեզվի տիպաբանական բնութագիրը համապատասխանում է նրա զարգացման այս կամ այն գոյավիճակին:

Հետևաբար, յուրաքանչյուր լեզու զարգացման որևէ գոյավիճակում բնութագրվում է **համաժամանակյա տիպաբանությամբ**, որ ներառում է լեզվական տվյալ փուլում տվյալ լեզվի քերականական համակարգի կառուցվածքն ու նրա մակարդակային միավորների գործառական հնարավորությունները՝ քերականական իմաստներ արտահայտելու տեսանկյունից:

Օրինակ, ի՞նչ տիպի է պատկանում հայերենը: Այս հարցին պատասխանելու համար պետք է նկատի առնենք հայերենի զարգացման գոյավիճակները:

Եթե հին հայերենը դիտարկում ենք 5-րդ դարի շրջանակներում՝ իր քերականական կառուցվածքով և քերականական իմաստներն արտահայտելու լեզվական-քերականական միջոցների համալիրով, ապա գործ ունենք **համաժամանակյա տիպաբանության** հետ:

Համաժամանակյա տիպաբանության շրջանակներում ուսումնասիրվում են 5-րդ դարի հայերենի լեզվավիճակը՝ ձևաբանական և շարահյուսական համակարգերի տիպաբանական հատկանիշները և, ըստ այդմ, որոշում են նրա տիպը: Մինչ այժմ կատարված ուսումնասիրություններում հին հայերենը համարվել է թեքական լեզու՝ կցականության տարրերով: Մեր կատարած ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերանայելու այս մոտեցումը և հին հայերենը համարել **կցական լեզու՝ զուգակցված թեքականությամբ**:

Որևէ լեզվի՝ այս կամ այն տիպին պատկանելը համարվում ոչ թե բացարձակ իրողություն, այլ հարաբերական հատկանիշ, քանի որ զարգացման միևնույն գոյավիճակի ենթափուլերում լեզուն կարող է տիպաբանական նոր գծեր ձեռք բերել:

Լեզվական տիպերի փոփոխության ընթացքում լեզուն կարող է փոխել իր տիպաբանական բնութագիրը և անցնել նոր տիպի: Այս հարցերի ուսումնասիրությամբ զբաղվում է **պատմական տիպաբանությունը**. նա ուսումնասիրում է լեզուների միևնույն գոյավիճակի շրջանակներում լեզվական տիպի պատմական փոփոխությունների ընթացքը և, ըստ անհրաժեշտության, տիպաբանորեն կարող է վերականգնել լեզվի (կամ լեզուների) նախնական կառուցվածքային վիճակն ու տիպը:

Եթե հարցին մոտենանք հին հայերենի 5-11-րդ դարերի կտրվածքով, կարող ենք ասել, որ զարգացման ենթափուլերում հին հայերենն ապրել է **տիպային հատկանիշների փոփոխության գործընթաց**, որոնց քանակական կուտակումները հանգեցրել են որակական փոփոխությունների:

Պատմական տիպաբանությունն զբաղվում է հին հայերենի հետդասական շրջանի և նախամիջին հայերենի ենթափուլերի լեզվավիճակի նկարագրությամբ և այն միտումների բացահայտմամբ, որոնք հին հայերենը

հեռացրել են դասական շրջանի վիճակից՝ նախապատրաստելով նրա անցումը միջին հայերենին: Դա վերաբերում է ձևաբանական և շարահյուսական (այլև հնչյունաբանական և բառագիտական) մակարդակներում կատարված փոփոխություններին, որոնք լեզվի օրինաչափ զարգացման հետևանք են, և որոնք որոշ հետազոտողներ, ինչպես կոտեսենք հաջորդիվ, զարմանալիորեն համարել են շեղումներ ու բացառություններ՝ այդպիսով զանց առնելով լեզվի բնականոն զարգացումն ու պատմական փոփոխությունների տրամաբանությունը:

Լեզվի տիպաբանությունը փուլից փուլ կարող է փոփոխվել. այդ դեպքում լեզուն ձեռք է բերում տիպային նոր հատկանիշներ. դրանով տրվում է լեզվի տարժամանակյա փոփոխությունների բնութագիրը: Ցանկացած լեզու կարելի է դիտարկել տիպային փոփոխությունների համատեքստում՝ որպես մի տիպից մյուսին անցնող երևույթ:

Լեզվական տիպերի փոփոխության ընթացքում լեզուն կարող է փոխել իր տիպաբանական բնութագիրը կամ խորացնել ու ընդլայնել նախորդ փուլում ունեցած տիպաբանական հատկանիշները:

Այս հարցերով զբաղվում է *տարժամանակյա տիպաբանությունը*. նա ուսումնասիրում է տվյալ լեզվի (կամ լեզուների) տիպերի տարժամանակյա փոփոխությունների ընթացքը և, ըստ անհրաժեշտության, տիպաբանորեն վերականգնում է նրա գրային գոյավիճակի նախնական կամ նախորդ փուլի կառուցվածքն ու տիպը:

Հայերենի տարժամանակյա տիպաբանությունն զբաղվում է հին հայերենի տիպաբանական բնութագրի փոփոխության ընթացքի նկարագրությամբ՝ ընդհուպ ժամանակակից հայերեն. տիպաբանական ի՛նչ փոփոխություն է կրել հայերենը լեզվի զարգացման ընթացքում՝ սկսած գրաբար գոյավիճակից մինչև արդի փուլը, տիպաբանական ի՛նչ հատկանիշներ են վերացել, ի՛նչ նոր հատկանիշներ են ի հայտ եկել, փոխվել է, արդյոք, լեզվի տիպը, թե խորացել են նրա ունեցած տիպաբանական հատկանիշները և՛ այլև, և՛ այլն:

Այդ հարցերի պատասխանը տալիս է հին հայերենի և արդի հայերենի լեզվական տարբեր մակարդակների և նրանց միավորների գործառական հնարավորությունների համեմատական ուսումնասիրությունը:

Ելնելով այն հանգամանքից, որ մեր ուսումնասիրության առարկան հին հայերենի քերականական համակարգի համաժամանակյա տիպաբանությունն է, մենք տարժամանակյա տիպաբանության ուսումնասիրության շրջանակներում համեմատական խարիսխ կնետենք լեզվի տարբեր փուլերի ձևաբանական և շարահյուսական մակարդակների տարժամանակյա վիճակների միջև՝ ապացուցելու, որ հին հայերենը *կցական կառուցատիպի լեզու է՝ զուգակցված թեքականությամբ, արդի հայերենը, խորացնելով կցականությունը, պահպանել է թեքականության որոշ տարրեր*:

Շարահյուսական տիպաբանություն – Շարահյուսական տիպաբանության բնագավառում կարևոր հատկանիշ է համարվում նախադասության հիմնական շարահյուսական հարաբերությունների ձևավորումը, այսինքն՝ գործողություն կատարողի և գործողության ոլորտ ընդգրկված առարկաների հարաբերությունը: Այստեղ կարևորվում են մի կողմից՝ գործողություն արտահայտող բառերի սեռադասային (սեռային) տարբերակումները, մյուս կողմից՝ գործողություն կատարողի և գործողության ոլորտ ընդգրկված առարկաների հոլովական արտահայտությունները:

Ըստ շարահյուսական տիպաբանության՝ առանձնացնում են լեզուների կառուցվածքային երկու հիմնական տեսակներ՝ էրգատիվ և անվանական:

Էրգատիվ կառուցվածք - (հուն. ergates -«գործող անձ»), լեզվի տիպաբանական հատկանիշ է, որ ընդգրկում է լեզվի բառային, ձևաբանական և շարահյուսական բնագավառները: Էրգատիվ կառուցվածքը բառայնորեն արտահայտվում է բայերի անցողական և անանցողական սեռադասերով: Շարահյուսորեն արտահայտվում է նախադասության էրգատիվ և բացարձակ կառուցվածքների հարաբերությամբ: Էրգատիվ կառուցվածքի նախադասություններում գործողությունն անմիջապես իր վրա կրող խնդիրը (ուղիղ խնդիր) դրվում է ուղիղ ձևով (ուղղական հոլովով), իսկ տրամաբանական ենթական՝ էրգատիվ հոլովով (բացառական կամ գործիական): Հմմտ. վրացերենում՝ monadirem iremi mohklaj - «Որսորդից (որսորդի կողմից) եղջերու մահացավ (սպանվեց)»:

Ձևաբանորեն էրգատիվ կառուցվածքը բնութագրվում է էրգատիվ հոլովի առկայությամբ, որ հակադրվում է բացարձակ հոլովին. երկու հոլովներն էլ սինկրետիկ ձևով արտահայտում են ելակետային-խնդրային հարաբերություններ. էրգատիվն ունի ելակետի և անուղղակի խնդրի (հաճախ՝ գործողության միջոցի) գործառույթ, իսկ բացարձակը՝ ենթակայի և ուղիղ խնդրի գործառույթ: Եթե լեզվում բացակայում է հոլովման համակարգը, այդ գործառույթները կատարում են բայական խոնարհման դիմային երկու կարգի ցուցիչները՝ էրգատիվ և բացարձակ:

Էրգատիվ կառուցվածքի են իբերո-կովկասյան լեզուները, բասկերենը, մեռած շումերերենը, հին տիբեթերենը, Ավստրալիայի և Ամերիկայի մի շարք լեզուներ, ամերիկյան հնդկացիների լեզուները և այլն:

Աշխարհում ավելի շատ տարածված են անվանական կառուցվածքի լեզուները:

Անվանական կառուցվածք - Լեզուների տիպաբանական հատկանիշ է, նման լեզուների կառուցվածքային բաղադրիչները հենվում են սուբյեկտի և օբյեկտի իմաստային հակադրության վրա: Բառային մակարդակում անվանական կառուցվածքը դարձյալ արտահայտվում է բայերը անցողականի և անանցողականի բաշխելով, որոնցից առաջինն ընդգծված ունի խնդրային

ուղղվածություն, երկրորդը՝ սուբյեկտային (ենթակայի): Շարահյուսորեն անվանական կառուցվածքն արտահայտվում է նախադասության միասնական անվանական համակազմով, ինչպես նաև ուղիղ և անուղղակի խնդիրների հստակ տարբերակվածությամբ: Ենթական ունի հոլովական միատեսակ արտահայտություն՝ անկախ այն բանից՝ բայ-ստորոգյալն անցողական, թե՞ անանցողական սեռի է, և կամ այն արտահայտված է ներգործական, թե՞ կրավորական սեռով: Անվանական կառուցվածքի լեզուներում բայ-ստորոգյալը սովորաբար համաձայնում է միայն ենթակայի հետ:

Ձևաբանորեն անվանական կառուցվածքը դրսևորվում է ենթակայի՝ ուղղական և ուղիղ խնդրի՝ հայցական հոլովներով արտահայտությամբ: Դեմքի ձևաբանական կարգի խոնարհումը ներկայանում է կա՛մ միասնական սուբյեկտային ցուցիչների շարքով, կա՛մ երկու շարքով (սուբյեկտային և խնդրային): Որոշ լեզուներում (ինչպես, ռուսերենում, գերմաներենում) անցողական բայերի խմբերում գործառում է ներգործական և կրավորական բայաձևերի սեռային հակադրության սկզբունքը և այլն:

Շարահյուսական տիպաբանությունը կարող է կառուցվել նաև այլ հատկանիշների վրա, օրինակ՝ շարադասության. նախադասության անդամների կայուն շարադասություն ունեցող լեզուները (օրինակ՝ արևմտահայերենը) հակադրվում են այն լեզուներին, որոնց նախադասության անդամներն ունեն բառերի ազատ շարադասություն (օրինակ՝ արևելահայերենը), կամ՝ ածական-որոշիչների նախադաս շարադասություն ունեցող լեզուները (օրինակ՝ ռուսերենը, արդի հայերենը) հակադրվում են այն լեզուներին, որտեղ ածական-որոշիչներն ունեն թե՛ նախադաս և թե՛ վերջադաս շարադասություն (օրինակ՝ գրաբարը) և այլն:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ (ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ –

Լեզվաբանության հետազոտական ուղղություն է, որ առաջացել և զարգացել է 19-րդ դարի առաջին կեսին: Նախապես այն զբաղվել է լեզուների ձևաբանական դասակարգման հարցերով, ապա ընդլայնելով իր հետազոտության շրջանակները՝ փորձել է բացահայտել լեզուների նմանություններն ու ընդհանրությունները, որոնք հենվում են լեզուների առավել ընդհանուր և առավել էական առանձնահատկությունների վրա՝ անկախ նրանց ցեղակցական կապերից: Լեզուների ձևաբանական դասակարգումը որոշում է լեզուների խմբերը (տիպերը), որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է տվյալ խմբի լեզուների կառուցվածքի բնորոշ գծերով:

Ուսումնասիրելով որևէ լեզու ձևաբանական որոշակի խմբի շրջանակներում՝ կարելի է բացահայտել տվյալ լեզվի այնպիսի առանձնահատկություններ, որոնք չեն բացահայտվել լեզվաբանական այլ հայեցակետերով:

Լեզուների ձևաբանական դասակարգումը հիմնվում է բառի կառուցվածքում առկա արմատի ու մասնիկի և նրանց արտահայտած իմաստների հակադրության վրա:

Լեզուների ձևաբանական դասակարգման հիմքում ընկած է այն հատկանիշը, թե տվյալ լեզվում քերականական իմաստների արտահայտման համար ո՞ր միջոցն է գործադրվում: Իհարկե, բացարձակ տիպի լեզու լինել չի կարող. պետք է նկատի ունենալ, որ նման դասակարգումը կատարվում է լեզուների համաժամանակյա կտրվածքով. լեզուն իր զարգացման ընթացքում կարող է փոխել իր տիպաբանական բնույթը:

Ըստ այդ դասակարգման՝ առանձնացնում են անջատական (արմատական), կցական և թեքական լեզուների տիպերը:

Անջատական (արմատական) կամ անձն լեզուներ – Այդպիսին են այն լեզուները, որոնցում քերականական իմաստները հիմնականում արտահայտվում են սպասարկու բառերի միջոցով, որոնք դեռ չեն կորցրել իրենց կապը նյութական բովանդակության հետ, կարևոր դեր ունեն երաժշտական շեշտը, հնչեբանգը և բառերի շարադասությունը: Այդ լեզուներում բառերը սովորաբար մասնիկներ չեն ստանում, բառերը քերականական փոփոխությունների չեն ենթարկվում, խոսքի մասերի ձևաբանական տարբերակում չկա. բացակայում են բառափոխական կարգերը, շարադասությունը քերականական նշանակություն չունի: Դրանք կոչվում են նաև արմատական, քանի որ նրանցում բառերը հենց արմատներ են (մեծ մասամբ՝ միավանկ): Այդ լեզուները հատկանշվում են նյութական բովանդակություն ունեցող միավորների և սպասարկու բառերի թույլ արտահայտված հակադրությամբ:

Դրանցից են չինարենը, բիրմայերենը, գլխավորապես Հարավարևելյան Ասիայի լեզուները, արդի անգլերենը:

Կցական լեզուներ – Կցական կոչվում են այն լեզուները, որոնց մեջ բառերի քերականական ձևերը կազմվում են բառին ավելացնելով առանձին մասնիկներ, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է քերականական մեկ իմաստ: Այդ լեզուները բնութագրվում են բառակազմական և բառափոխական մասնիկավորման զարգացած համակարգով, քերականական մասնիկների մենիմաստությամբ, հերթագայության բացակայությամբ և այլն:

Կցական են թյուրքական, դրավիդյան և ուգրա-ֆիննական լեզուները, ինչպես նաև արդի հայերենը, բանտու լեզուն, ճապոներենը և այլն:

Թեքական լեզուներ – Թեքական են կոչվում այն լեզուները, որոնց մեջ քերականական կարգերն արտահայտվում են ներքին թեքումով ու մասնիկավորումով:

Այդ լեզուները բնութագրվում են քերականական մասնիկների բազմագործառնությամբ, արմատի՝ հնչյունաբանորեն չհիմնավորված փոփոխությամբ, խոնարհման և հոլովման համակարգերի՝ հնչյունաբանորեն և իմաստաբանորեն չհիմնավորված տիպերով և այլն:

Մասնիկավորումը թեքական լեզուներում այլ բնույթ ունի, քան կցական լեզուների մեջ. այստեղ մասնիկներն ավելի սերտ են միացած արմատին, և հաճախ բառն առանց մասնիկի չի կարող հանդես գալ, հմմտ. ռուս. семья (ընտանիք) և дерево (ծառ) բառերը, որոնք չեն կարող семья-, дерев- ձևերով հանդես գալ: Մյուս կողմից՝ թեքական լեզուներում մի մասնիկն արտահայտում է մեկից ավելի քերականական իմաստներ: Հմմտ. գրաբար *գաւառաց* բառաձևի մեջ *-աց* մասնիկը արտահայտում է թվի (հոգնակի) և հոլովի (սեռական) քերականական իմաստներ:

Թեքական են առաջին հերթին հնդեվրոպական լեզուները (արդի ռուսերենը, գերմաներենը, հին հունարենը, հին հայերենը և այլն), ինչպես նաև սեմական լեզուները (թեև վերջիններս որոշ չափով ունեն կցականության հատկանիշներ):

Ներմարմնավորյալ (ինկորպորատիվ) կամ բազմահամադրական (պոլիսինթետիկ) լեզուներ - Այս լեզուներին հատկանշական է մասնիկների լայն գործածությունն ոչ միայն բառերի, այլև բառակապակցությունների և նախադասությունների ձևավորման համար:

Բնութագրվում են բայ-ստորոգյալի կազմում նախադասության այլ անդամների ներառումով (հատկապես ուղիղ խնդիր), երբեմն՝ հիմքի ձևաբանական կառուցվածքի փոփոխությամբ և այլն: *Բազմահամադրական* անվանումը հաճախ նշանակում է լեզուներ, որոնց բայը միաժամանակ կարող է համաձայնել նախադասության մեկից ավելի անդամների հետ:

Նախադասությունը կազմվում է բառերի ու քերականական մասնիկների համադրությամբ, ձուլումով մեկ ամբողջության մեջ, որի հետևանքով էլ ամբողջ նախադասությունը դառնում է երկար բառ:

Այսպես, չուկոտերեն հետևյալ նախադասությունը՝ Т-ы-каа-нм-ат-ы-ркыи կազմված է երկու արմատից каа/кора *–եղնիկ* և нм (нмлы/тым, тым-лык) *– սպանել*, երկու միավորիչ ձայնավորից՝ ы, եզակի թվի առաջին դեմքի դերանուն՝ т, և ածանցներից. -ат բայական գործողության ածանց և -ркыи ներկա ժամանակի առաջին դեմքի բայական ածանց. բառացի՝ «Իմ եղջերասպանությունը, ես + եղջերու + սպանել + հիմա» (В.И.Кодухов):

Այդպիսին են Չուկոտկայի և Կամչատկայի լեզուները, Հարավային Ամերիկայի հնդկացիական ցեղերի և Աֆրիկա մայրցամաքի որոշ լեզուներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:

Խաչատրյան Լ.Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:

Խաչատրյան Լ.Մ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:

Ֆերդինանդ դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2008:

- Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.
Головин Б.Н., Введение в языкознание, М., 1973.
Кодухов В.И., Введение в языкознание, М., 1979.
Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.
Пищальникова В.А., Сонин А.Г., Общее языкознание, М., 2017.
Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.
Ульман С. Дескриптивная семантика и лингвистическая типология // Новое в лингвистике.- Вып. II. - М.: Изд-во иностр. лит-ры, 1962.- С. 17-44.
Широков О.С., Введение в языкознание, М., 1985.
New Challenges in Typology, Transcending the Borders and Refining the Distinctions, edited by Patience Epps, Alexandre Arkhipov, Berlin / New York, 2009.

10. ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԵՂԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԵՂԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նախալեզու – Հնագույն լեզու, որի բարբառային հիմքի վրա առաջացել են ցեղակից լեզուները, որոնք կազմում են մեկ լեզվաընտանիք: Նախալեզվի կառուցվածքային հիմնական միավորները (բառային կազմ, հնչյունական համակարգ և քերականական կառուցվածք) տարատեսակ փոփոխություններով գործառվում են նրա դուստր լեզուներում, թեև ժամանակի ընթացքում կրել են զանազան կարգի փոփոխություններ: Դուստր լեզուների և նախալեզվի ծագումնաբանական ընդհանրությունները բացահայտվում են պատմահամեմատական մեթոդի ներքին մեկնաբանման եղանակներով, մասնավորապես ստուգաբանական եղանակի գործադրմամբ: Լեզվաբանությանը հայտնի տարբեր լեզվաընտանիքներ, անշուշտ, ունեն իրենց նախալեզուն, որի վերականգման հարցերով զբաղվել են տարբեր մասնագետներ: Օրինակ, պատմահամեմատական մեթոդի հիմնադիրները (Ֆ. Բոպպ, Յակոբ Գրիմ, Ա. Շլայխեր, Ֆ. Շլեգել) աշխատանքներ են տարել վերականգնելու Հնդեվրոպական լեզվաընտանիքի նախալեզուն (մայր լեզուն): 19-20-րդ դարերում առաջ քաշվեց այն տեսակետը, որ բոլոր լեզվաընտանիքների նախալեզուներն իրենց հերթին սերում են մեկ ընդհանուր *նախալեզվից*: Ըստ այդմ, որոշ լեզվաընտանիքներ իրենց լեզուներով հանդերձ համարվեցին Նոստրատիկ լեզվաընտանիքի լեզուներ: Այլ կերպ ասած՝ Նոստրատիկ մակրոընտանիքի կամ Բորեալային լեզուների տեսության հիմնադիրները ձևակերպում են ոչ թե լեզուների, այլ *լեզվաընտանիքների ցեղակցության իրավիճակը*, մասնավորապես՝ ուրալյան, ալթայան, հնդեվրոպական և աֆրոասիական (Հ. Պետերսոն): Այնուհետև կատարելով հնդեվրոպական, կովկասյան, ուրալյան, ալթայան, դրավիդյան, սեմական լեզուների պատմահամեմատական քննություն՝ փորձեր են կատարվում վերականգնելու նոստրատիկ մակրոընտանիքի *նախալեզուն* (Վլադիսլավ Իլիչ-Մվիտի):

Ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրություններում տարբեր նախալեզուների նշանակությունների համար գործածում են այնպիսի կապակցություններ, ինչպիսիք են՝ *նոստրատիկ նախալեզու*, *հնդեվրոպական նախալեզու*, *հինսլավոնական նախալեզու*, *հինգերմանական նախալեզու* և այլն (տե՛ս «Համեմատական-պատմական մեթոդ» բառահոդվածը):

Լեզվաընտանիք – Լեզվաընտանիքներն առանձնացնում են լեզուների ծագումնաբանական դասակարգում կատարելիս. դա կատարվել է ամենից առաջ հնդեվրոպական լեզուների նյութական ընդհանրությունների հիման վրա: Պատմահամեմատական մեթոդի տվյալներով հաստատվել է, որ մի շարք լեզուներ ունեն ցեղակցական ընդհանրություններ: Ցեղակից կոչվում են այն լեզուները, որոնք, ծագած լինելով միևնույն աղբյուրից (մայր լեզվից),

պահպանում են հնագույն ընդհանուր արմատներ ու մասնիկներ և մյուս ցեղակից լեզուների հետ ունեն հնչյունական կանոնավոր համապատասխանություններ: Լեզուների ցեղակցությունը չի հանգեցնում բացարձակ նույնության. այն ներկայանում է իբրև ընդհանուր նախալեզվի օրինաչափ զարգացման հետևանք ու դրսևորում: Ելնելով լեզուների ցեղակցությունից՝ առանձնացնում են լեզվաընտանիքներ, ելնելով ցեղակցության աստիճանից՝ լեզվաճյուղեր, խմբեր կամ ենթախմբեր:

Լեզվաընտանիքի մեջ մտնում են ծագումնաբանորեն ընդհանուր բոլոր լեզուները: Միևնույն լեզվաընտանիքի մեջ մտնող լեզուները, ըստ ցեղակցության աստիճանի, կազմում են ճյուղեր կամ խմբեր: Լեզվաճյուղերի և ցեղակից առանձին լեզուների ընդհանրությունը կոչվում է մեկ լեզվաընտանիք:

Լեզվաբանական գիտությունը առանձնացրել է հետևյալ լեզվաընտանիքները (լեզուները)՝ *հնդեվրոպական, կովկասյան, ուրալյան, ալթայյան, հնասիական, չին-տիբեթական, ավստրոասիական, դրավիդյան, ավստրոնեզիական և պապուապան, ամերիկյան (հնդկացիական), աֆրոասիական լեզուներ* և այլն:

Երկրի երեսից բազմաթիվ լեզուներ վերացել են. դրանք նույնիսկ դասակարգված չեն ըստ լեզվաընտանիքների: Այսպես, Քր.Կոլումբոսի ժամանակներում (15-րդ դարավերջ – 16-րդ դարասկիզբ) Ամերիկայի հնդկացիական ցեղերի լեզուների թիվը հասնում էր շուրջ հազարի: Մասնագետները կարծում են՝ այդ լեզուները կարելի էր խմբավորել մոտավորապես յոթանասուն տարբեր լեզվաընտանիքների միջև:

Ժամանակակից լեզվաբանությունն զբաղվում է նաև մի շարք լեզվաընտանիքների ցեղակցության հարցերով և, ըստ այդմ, մշակել է նոստրատիկ լեզուների տեսությունը:

Լեզվամիություն – Աշխարհագրական միևնույն արեալում գտնվող լեզուների խումբ, որ բնութագրվում է բառային և դարձվածային կազմի ընդհանրությամբ, հնչյունական և քերականական իրողությունների նմանությամբ: Լեզվամիության և լեզվաընտանիքի լեզուներն ունեն այն տարբերությունը, որ լեզվամիության մեջ ընդգրկված լեզուների բառային, հնչյունական և քերականական ընդհանրությունները հետևանք են միևնույն արեալում երկարատև փոխազդեցությունների՝ պայմանավորված մշակութային, էթնիկական, քաղաքական, ռազմական, տնտեսական գործոններով և որ, կարևոր է, լեզվական շփումներով: Լեզվամիության արեալում գործում են երկու կամ ավելի լեզուներ, որոնցով ազատորեն հաղորդակցվում են տարբեր լեզվակիր հանրություններ: Այդ կարգի ընդհանրությունները ծագումնաբանական (ցեղակցական) հիմքեր չունեն, մինչդեռ միևնույն լեզվաընտանիքի լեզուների հնչյունական, բառային և քերականական ընդհանրությունները կրում են ծագումնաբանական բնույթ, որ մեկնաբանվում է

պատմահամեմատական մեթոդի ներքին մեկնաբանման եղանակներով: Այդպիսի ընդհանրություններ կարելի է ցույց տալ ցանկացած լեզվաընտանիքի լեզուների միջև: Լեզվամիության շրջանակներում, սակայն, լեզվական ընդհանրությունների հարցում վճռական դեր ունի տարածքային ընդհանրությունը (աշխարհագրական արեալը): Լեզվամիության դասական օրինակ է համարվում *բաշկանյան լեզվամիությունը*, որ ներառում է բուլղարերեն, մակեդոներեն, ալբաներեն, նոր հունարեն և ռումիներեն լեզուները, ինչպես նաև հարավային սերբական խոսվածքները:

Լեզվախումբ և լեզվաճյուղ - լեզուների ամբողջություն, որի մեջ մտնող բոլոր լեզուներն ունեն ծագումնաբանական (ցեղակցական) ընդհանրություններ, ծագել են մեկ հիմք լեզվի պատմական զարգացման և տրոհման հետևանքով: Այդ կարգի լեզուները ցուցաբերում են հնչյունական, բառային, ձևաբանական և շարահյուսական բնույթի ընդհանրություններ:

Պատմահամեմատական մեթոդով ապացուցվել է, որ ֆրանսերենը, իսպաներենը, պորտուգալերենը, իտալերենը ծագել են լատիներենից. Ծագումնաբանական այդ գործոնով պետք է բացատրել լատիներենի և այդ լեզուների բառային ու կառուցվածքային ընդհանրությունները. հմմտ. աստված, լատ. Deus, ֆրանս. Dieu, իսպան. Dios, պորտ. Deus, իտալ. Iddio, *աշխարհ*. լատ. mundum, ֆրանս. monde, իսպան. mundo, պորտ. mundo, իտալ. mondo, *միածին* - լատ. unigenitum, ֆրանս. unique, իսպան. unigenito, պորտ. unigenito, իտալ. unigenito, *սվեց* լատ. daret, ֆրանս. donne, իսպան. dado, պորտ. deu, իտալ. dato և այլն: Այս լեզուները, որոնք ծագումնաբանական և նյութական (մերձավոր) ընդհանրություններ ունեն, կազմում են մեկ լեզվախումբ, որ կոչվում է *ռոմանական ճյուղ*:

Ռուսերեն, բուլղարերեն, ուկրաիներեն, հին սլավոներեն, չեխերեն, սլովեներեն, սլովակերեն լեզուների նմանությունն իր հերթին հետևանք է այն բանի, որ դրանք բոլորը ծագել են մեկ ընդհանուր մայր լեզվից՝ սլավոներենից: Դիտարկենք որոշ բառեր ու բառաձևեր. աստված՝ ռուս. Бог, բուլղ. Богъ, ուկրաին. бог, հսլ. богъ, չեխ. Buh, սլովեն. Bog, սլովակ. Boh, *սիրեց*՝ ռուս. возлюбил, բուլղ. възлюбил, ուկրաին. полюбив, հսլ. возлюбил, չեխ. miloval, սլովեն. ljubil, սլովակ. miloval, *որդուն*՝ ռուս. сына, բուլղ. сина, ուկրաին. сина, հսլ. сѣна, չեխ. syna, սլովեն. sina, սլովակ. syna և այլն:

Այս լեզուները՝ ռուսերեն, բուլղարերեն, ուկրաիներեն, հին սլավոներեն, չեխերեն, սլովեներեն, սլովակերեն և այլն, իրենց հերթին կազմում են մեկ լեզվախումբ, որ կոչվում է *սլավոնական ճյուղ*:

Այդպես նաև գերմաներեն, անգլերեն, հոլանդերեն, ֆրիզերեն, դանիերեն, նորվեգերեն, շվեդերեն, իսլանդերեն լեզուները ցուցաբերում են բառային կազմի և քերականական կառուցվածքի ընդհանրություններ և դիտվում են առանձին *լեզվախումբ*: Ելնելով այն հանգամանքից, որ այդ լեզու-

ները ծագել են մեկ ընդհանուր հիմքից՝ հին գերմաներենից, դրանք մտնում են մեկ ընդհանուր լեզվաճյուղի մեջ, որ կոչվում է *գերմանական ճյուղ*:

Միննույն լեզվախմբի մեջ կարող են մտնել միննույն լեզվի տարժամանակյա դրսևորումները և տարածքային-արեալային լեզուները: Այսպես, ժամանակակից հնդկական լեզուները, որպես առանձին խումբ, բաժանվում են ենթախմբերի՝ հյուսիսային (սինդհի, լահնդա, փենջաբի), արևմտյան (հուջարաբի, ռաջասթանի), կենտրոնական (արևմտյան հինդի), արևելյան (արևելյան հինդի, բիհարի, բենգալի, ասսամի), հարավային (մարաթի): Հնդկական լեզուները մտնում են *հնդկական ճյուղի* մեջ և այլն:

Լեզվախմբեր և լեզվաճյուղեր կարելի է ցույց տալ բոլոր լեզվաընտանիքներում. օրինակ, *հնդեվրոպական լեզվաընտանիքում*՝ սլավոնական, ռոմանական, հնդկական, իրանական և այլն, *իբերո-կովկասյան լեզուներում*՝ քարթվելական, արխագ-ադրդեական և նախյան-դադստանյան, *թուրք-թաթարական լեզվաընտանիքում*՝ ալթայան և այլն:

Լեզվաընտանիքում լեզվաճյուղը կարող է ներկայանալ առանձին (մեկ) լեզվով, օրինակ, հնդեվրոպական լեզվաընտանիքում առանձին լեզվաճյուղ է *հայերենը*:

Դուստր լեզու – Լեզվաբանության մեջ ընդունված է *դուստր լեզուներ* անվանել այն լեզուները, որոնք ծագում են մեկ ընդհանուր աղբյուրից: Այդ մոտեցումով՝ դուստր լեզուներ են մեկ ընտանիքի մեջ մտնող լեզուները, որոնք ծագել (առաջացել) են այդ ընտանիքի «մայր լեզվից»: Այսպես, հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ մտնում են որոշակի լեզուներ, որոնք ծագել են հին նախալեզվից, ինչպես՝ *սանսկրիտ, հին պարսկերեն, լատիներեն, հին հունարեն, հայերեն, ալբաներեն, գերմաներեն* և այլն, որոնք համարվում են *դուստր լեզուներ*:

Դուստր կարող են համարվել նաև միննույն ընտանիքի լեզվաճյուղի մեջ մտնող լեզուները, որոնք առաջացել են մեկ ընդհանուր հիմքից: Օրինակ, հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ է մտնում *ռոմանական ճյուղը*, որի լեզուները ծագել են լատիներենից: Այդ լեզուներն են՝ *ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, պորտուգալերեն*, որոնք համարվում են դուստր լեզուներ (լատիներենի նկատմամբ):

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ – Լեզուների ծագումնաբանական դասակարգումը կատարվում է լեզուների ցեղակցական – նյութական ընդհանրությունների հիման վրա: Պատմահամեմատական մեթոդի եղանակների գործադրումով հաստատվել է, որ մի շարք լեզուներ, անկախ տարածվածության շրջանակներից, ի հայտ են բերում ծագումնաբանական ընդհանրություններ և, ըստ այդմ, համարվում են *ցեղակից լեզուներ*: Լեզվաբանական գիտությունը, ելնելով լեզուների ցեղակցական – նյութական ընդհանրություններից, առանձնացնում է լեզուների որոշակի

խմբեր, որոնք կոչվում են *լեզվաընտանիքներ* (Տե՛ս **Լեզվաընտանիք** բառահոդվածը):

Լեզվաբանությանը հայտնի են հետևյալ լեզվաընտանիքները (լեզուները)՝ հնդեվրոպական, կովկասյան, ուրալյան, ալթայան, հնասիական, չին-տիբեթական, ավստրոասիական, դրավիդյան, ավստրոնեզիական և պապուասյան, ամերիկյան (հնդկացիական), աֆրոասիական և այլն:

1. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Ամենից ավելի խոր և համակողմանիորեն ուսումնասիրված են հնդեվրոպական լեզուները, որոնք տարածված են Եվրոպայի մեծ մասում, ինչպես և Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի, Ավստրալիայի և Օվկիանայի զգալի մասում: Հնդեվրոպական լեզուների մեջ մտնում են՝

1.1. ԱՆՍՏՈՒԿԱԿԱՆ (ԽԵԹԱ-ԼՈՒՎԱԿԱՆ) ԼԵԶՈՒՆԵՐ - Մ.թ.ա. 2-րդ հազարամյակում Փոքր Ասիայում տարածված են եղել հին անատոլիական լեզուները՝ սեպագիր խեթերենը, սեպագիր և գաղափարագիր լուվիերենը, պալայերենը:

Խեթերենով գրված են եղել թագավորական արձանագրություններ, օրենքներ, ծիսական և դիցաբանական տեքստեր, թաղման երգեր, արևին նվիրված ներբողներ և այլն: Մ.թ.ա. 14-13-րդ դդ. խեթական տեքստերում հանդիպում են խոսակցական լուվիերենի ազդեցության հետքեր: Լուվիերենը հայտնի է նախ սեպագիր տեքստերով (առավելաբար ծիսական բնույթի), ապա հիերոգլիֆային արձանագրություններով (Փոքր Ասիայի հարավում և Հյուսիսային Սիրիայում): Պալայերենը հանդիպում է խեթական պահպանված սեպագիր արձանագրությունների պատառիկներում, որոնք առավելապես դիցաբանական և ծիսական տեքստեր են եղել:

1.2. ՀՆԴԿԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Հնդկական լեզուների հնագույն լեզուն հին հնդկերենն է, որով գրվել է ամենահին հուշարձաններից մեկը՝ «Ռիգ-վեդան»՝ հնդկական վանկագրությամբ, մ.թ.ա. 1-ին հազարամյակում: Արխաիկ վեդայական լեզուն հին հնդկերենի նախնական ձևն է ներկայացնում, նրանով գրվել է նաև «Աթհարվավեդան»: Գրական հին հնդկերենի ավելի ուշ վիճակը հայտնի է սանսկրիտ անվամբ (հին հնդկ. «արհեստական, մշակված»): Լայն առումով սանսկրիտական գրականությանը հարում են նաև կրոնա-փիլիսոփայական արձակ տեքստերը, որոնք ստեղծվել են ավելի ուշ, քան վեդայական գրականությունը, ինչպես «Բրահմանները» և «Ուպանիշադները»:

Սանսկրիտը շարունակում է գործածվել իբրև գրականության լեզու միջին հնդկերենին (պրակրիտներին) զուգահեռ, որից ավելի ուշ զարգացան

Ժամանակակից հնդկական լեզուները (հինդի, բենգալի, փենջաբի, սինդհի և այլն):

Ժամանակակից հնդկական լեզուները բաժանվում են ենթախմբերի՝ հյուսիսային (սինդհի, լահնդա, փենջաբի), արևմտյան (հուջարաթի, ռաջասթանի), կենտրոնական (արևմտյան հինդի), արևելյան (արևելյան հինդի, բիհարի, բենգալի, ասսամի), հարավային (մարաթի):

1.3. ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Իրանական լեզուները բաժանվում են հին, միջին և նոր շրջանների: Հին պարսկերենով գրվել են «Ավեստա» հուշարձանի ներբողները մ.թ.ա. 2-1-ին հազարամյակում, որոնք մեզ են հասել համեմատաբար ուշ՝ փոխադրված այբբենական գրության (մ.թ.ա. 6-րդ դարում): Հին պարսկերենը հայտնի է Աքեմենյան թագավորության շրջանի (մ.թ.ա. 6-4-րդ դդ.) սեպագիր արձանագրություններում:

Միջին պարսկերեն լեզուները բաժանվում են արևելաիրանական (սողդիերեն, խորեզմերեն, բակտրիերեն) և արևմտաիրանական խմբերի (միջին պարսկերեն, պահլավերեն, պարթևերեն):

Նոր պարսկերեն լեզուները բաժանվում են երկու մասի՝ արևմտյան և արևելյան:

Արևմտյան իրանական լեզուներն են՝ նոր պարսկերենը (Իրանում, գրական լեզուն է դարձել IX դարից և իբրև այդպիսին մնում է նաև մեր օրերում), թաջիկերենը (Թաջիկստանում), քրդերենը (Հայաստանում, Իրանում և Թուրքիայում), բելուջերենը (Բելուջստանում և Թուրքմենստանում), թալիշերենը, թաթերենը, գիլաներենը (մերձկասպյան շրջաններում): Արևելյան իրանական լեզուներն են՝ աֆղաներենը կամ փուշտուն (Աֆղանստանում), շուգնաներենը (Պամիրում), յաղոթերենը (Պամիրում), օսերենը (Կովկասում) և սակերենը:

1.4. ՀԱՅԵՐԵՆ - Հայերենը բաժանվում է երեք շրջանի՝ հին հայերեն կամ գրաբար, որ գրավոր կերպով ավանդված է 5-րդ դարից, միջին հայերեն, որ ավանդված է միջնադարյան, հատկապես կիլիկյան շրջանի մատենագրությամբ, և ժամանակակից հայերեն՝ իր երկու գրական ճյուղավորումներով՝ արևելյան և արևմտյան, որոնցից առաջինը՝ արևելյանը, 20-րդ դարում հասավ պետական լեզվի աստիճանի:

Երբ հիմնադրվեց պատմահամեմատական լեզվաբանությունը, եվրոպական մի շարք արևելագետներ (Պետերման, Վինդիշման, Գոշե և այլն) հայերենը համարեցին հնդեվրոպական լեզու, սակայն նկատելով հայերենում առկա իրանական զգալի բառամթերքը՝ սխալմամբ համարեցին իրանական ենթաճյուղի պատկանող մի բարբառ: Այդ սխալ տեսակետը ընդունվեց մինչև 1875 թվականը, երբ լույս տեսավ Հայնրիխ Հյուբշմանի «Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen» («Հայերենի

դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում») աշխատությունը: Այդ աշխատության մեջ Հ. Հյուբշմանը, ճիշտ կերպով կիրառելով հնչյունափոխական օրենքները հայերենում, ապացուցեց, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ է, և նրանում առկա իրանական բառաշերտը փոխառությունների հետևանք է:

1.5. ՀՈՒՆԱՐԵՆ - Հին հունարենի բարբառներից մեկի հնագույն վիճակը հայտնի է կրետե-միքենյան հուշարձաններից (մ.թ.ա. 15-13-րդ դդ.): Լեզվի զարգացման հետագա փուլի առավել հնագույն հուշարձան են համարվում Հոմերոսի «Իլիական» ու «Օդիսական» պոեմները:

Հունարենը բաժանվում է երեք շրջանի՝ ա) հին հունարեն (մ.թ.ա. 14-րդ դ. – մ.թ. 4-րդ դ.), անցել է զարգացման հետևյալ փուլերը՝ արխաիկ (14-12-րդ դդ. – 8-րդ դ. մ.թ.ա.), դասական (8-4-րդ դդ. մ.թ.ա.), հելլենիստական (4-1-ին դդ. մ.թ.ա., երբ ատտիկական բարբառի հիման վրա ձևավորվեց ընդհանուր հունարեն գրական լեզուն՝ կոյնե): Հին հունարենում առանձնացնում են բարբառների հետևյալ խմբերը՝ հոնիական - ատտիկյանը (հոնիական և ատտիկյան բարբառներ), աքայական, որի ներսում տարբերակում են հարավ-աքայական (արկադա-կիպրական) և հյուսիս-աքայական (էոլիական) բարբառները, դորիական: Բ) Միջին հունարեն կամ բյուզանդական հունարեն (V–XV դար), գ) ժամանակակից հունարեն, (կազմավորվել է XVI դարում):

1.6. ՓՈՅՈՒԳԵՐԵՆ – Փոյուգերենը հայտնի է մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերից Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում հանդիպող արձանագրություններով: Հանդիպում են ոչ մեծաքանակ արձանագրություններ, որոնք կատարվել են արխաիկ գրությամբ. այն բավական մոտ է հունարենի հին շրջանի այբուբենին: Պահպանվել են նաև ավելի ուշ՝ հռոմեական շրջանի նոր փոյուգերենով արձանագրություններ՝ այն ժամանակվա հունարենի ընդունված գրությամբ:

1.7. ԹՈՒԱՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Թոխարական լեզուները հայտնի են մ.թ. 1-ին հազարամյակի գրավոր հուշարձաններից, այդ լեզուները տարածված են եղել Եվրասիայի ծայր-արևելյան հատվածում: Դրանք պայմանական կերպով կոչվում են թոխարերեն Ա (արևելաթոխարական) և թոխարերեն Բ (արևմտաթոխարական) կամ քուչերեն: Թոխարերեն տեքստերը հիմնականում բուդդայական (սանսկրիտական) հուշարձաններից կատարված թարգմանություններ են:

1.8. ԱԼԲԱՆԵՐԵՆ - Տարածված է Բալկանյան թերակղզում 16-րդ դարում: Ալբաներենը բաժանվում է երկու բարբառի՝ հյուսիսալբանական և հա-

րավալբանական: Համաձայն մի տեսակետի՝ ալբաներենը հնում պատկանել է իլլիրիական ճյուղին:

1.9. ՄԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Բաժանվում են երեք ենթաճյուղի՝ արևելյան, արևմտյան և հարավային:

Արևելասլավոնական լեզուներն են ռուսերենը, բելոռուսերենը և ուկրաիներենը, որոնցից ռուսերենը գրավոր հիշատակարաններ ունի IX դարից, իսկ մյուսները՝ XI դարից: Արևմտասլավոնական լեզուներն են լեհերենը (ավանդված XIV դարից), կաշուբերենը, չեխերենը (ավանդված XIII դարից) և սլովակերենը, լուծիերենը, պոլաբերենը (մեռած XVIII դարում): Հարավասլավոնական լեզուներն են սլովեներենը, սերբերենն ու խորվաթերենը (Հարավսլավիայում), բուլղարերենը և մակեդոնական խոսվածքները: Այս ենթաճյուղի մեջ է մտնում հին սլավոներենը, որի հնագույն գրական հուշարձանները հունարեն տեքստերի թարգմանություններ են մ.թ. 11-րդ դարում, հանդիպում են Ավետարանի կիրիլիցա և գլագոլիցա գրությամբ ձեռագիր տարբերակներ:

1.10. ԿԵԼՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Բաժանվում է երկու ենթախմբի՝ մայրցամաքային և կղզիների:

Մայրցամաքային կելտական տարածված լեզու է գալլերենը (հին Գալլիայում և Իտալիայի հյուսիսում): Կղզիների կելտական լեզուները բաժանվում են երկու մասի՝ գաելյան և բրիտական: Գաելյան լեզուներն են հին իռլանդերենը (Իռլանդիայում), շոտլանդերենը (Բրիտանիայի հյուսիսում) և մեններենը (Մեն կղզում): Բրիտանական լեզուներն են վալլիերենը կամ կիմրերենը (Ուելսում), բրետոներենը (Բրետանում և կորներենը (մեռած՝ XVIII դարում):

1.11. ՌՈՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Ռոմանական լեզուների մեջ մտնում են իտալերենը (Իտալիայում), պորտուգալերենը (Պորտուգալիայում և Բրազիլիայում), իսպաներենը (Իսպանիայում, Հարավային ու Կենտրոնական Ամերիկայում), կատալաներենը (Իսպանիայի արևելքում), պրովանսերենը (Ֆրանսիայի հարավում), ֆրանսերենը (Ֆրանսիայում, Բելգիայում, Կանադայում և ֆրանսիական գաղութներում), ռետոռոմաներենը կամ լադիներենը (Շվեյցարիայում), սարդիներենը (Սարդինիա կղզում), ռումիներենը (Ռումինիայում) և մոլդովերենը (Մոլդովայում):

Ռոմանական լեզուների մայրն է հին լատիներենը: Այն բաժանվում է մի քանի շրջանի. 1. Արխաիկ շրջան, որով պահպանվել են մ.թ.ա. 6-4-րդ դարերի արձանագրություններ, հին օրենքների և սրբազան հիմների հատվածներ: 2. Մինչդասական շրջան (3-2-րդ դարեր, մ.թ.ա.), գրական լեզվի ձևավորման շրջանն է, որի հիմքում ընկած է Հռոմի բարբառը: 3. Դասական

շրջան (1-ին դար, մ.թ.ա.), ներկայանում է հարուստ բառապաշարով, գիտական, փիլիսոփայական, քաղաքական, տեխնիկական տերմինաբանությամբ, քերականական կուռ կառուցվածքով (Ցիցերոն, Հուլիոս Կեսար, Վերգիլիոս, Հորացիոս, Օվիդիոս): 4. Հետդասական շրջան (1-ին դար, մ.թ.), վերջնականապես ձևավորվեցին գրական լեզվի հնչյունական և ձևաբանական նորմերը, սահմանվեցին ուղղագրության կանոնները: 5. Ուշ լատիներենի շրջան (2-6-րդ դդ.), առաջանում է խզում գրական և խոսակցական տարբերակների միջև:

5-րդ դարում՝ Հռոմեական կայսրության անկումից հետո, լատիներենը ձեռք է բերում տարածաշրջանային գործառնություն, որ հանգեցնում է ռոմանական լեզուների ձևավորմանը, որոնք վերջնականապես տարանջատվեցին 9-րդ դարում:

1.12. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Բաժանվում են երեք ենթաճյուղի՝ արևելյան, արևմտյան և հյուսիսային կամ սկանդինավյան:

Արևելյան գերմանական լեզուներն են գոթերենը, վանդալերենը և բուրգունդերենը. բոլորն էլ մեռած լեզուներ են: Գոթերենով հանդիպում է Աստվածաշնչի հնագույն թարգմանությունը մ.թ. 4-րդ դարում. գոթերենը տարածված է եղել Եվրոպայի արևելյան և հարավարևելյան հատվածում, որը գտնվել է Բյուզանդիայի ազդեցության տակ: Արևմտյան գերմանական լեզուներն են հին անգլերենը (անգլոսաքսոներենը, տեքստերը հանդիպում են մ.թ. 7-րդ դարից), հին ֆրիզերենը, հին վերին գերմաներենը (տեքստերը՝ մ.թ. 8-րդ դարից) և հին սաքսոներենը (տեքստերը՝ մ.թ. 9-րդ դարից):

Հյուսիսային գերմանական (սկանդինավյան) լեզուներից է հին իսլանդերենը, որը մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին քայքայվեց, և նրա հիմքի վրա առանձնացան արևմտասկանդինավյան (նորվեգերեն, իսլանդերեն) և արևելասկանդինավյան (շվեդերեն, դանիերեն) լեզուները:

Գերմանական լեզուների զարգացման հետագա փուլերում ձևավորվեցին անգլերեն, գերմաներեն, ֆլամանդերեն և հոլանդերեն լեզուները:

1.13 ԲԱԼԹԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Բալթյան լեզուները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ արևմտյան և արևելյան: Արևմտյան բալթիական լեզու է պրուսերենը (Պրուսիայում, գործածվել է 14-18-րդ դարերի գրավոր տեքստերում, հետագայում միաձուլվել է գերմաներենի հետ), արևելյան բալթիական լեզուներն են լիտվաներենը (Լիտվայում), լատիշերենը (ավանդված XVI դարից) ու լատհալերենը (Լատվիայում՝ ավանդված XVIII դարից):

2. ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Մերձավոր արևելքում մ.թ.ա. 3-1-ին հազարամյակում գործածվել են հաթերենը, շումերենը, էլամերենը և խուռա-ուրարտական լեզուները:

1. Հաթերենը Փոքր Ասիայի հյուսիս-արևելքի հնագույն լեզուներից է, որ հետագայում դուրս է մղվել հնդեվրոպական լեզուների (խեթերենի և պալայերենի) կողմից: Մեփական գիր չի ունեցել, պահպանվել են աստծուն ուղղված աղոթքները, որոնք հանդիպում են խեթական սեպագիր արձանագրությունների պատառիկներում: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին արդեն մեռած լեզու էր: Վյաչ. Վս. Իվանովը վերականգնել է հաթերենի և հյուսիսարևմտյան կովկասյան (աբխազ-ադըղեական) լեզուների նյութական ընդհանրություններն ու ապացուցել նրանց ծագումնաբանական կապերը:

2. Շումերերենը Միջագետքի հարավի հնագույն ժողովրդի՝ շումերների լեզուն է, որ գործածվել է մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակում և հայտնի է հին պատկերագիր ու սեպագիր արձանագրություններից: Մեռած է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին: Թեև շումերերենի և մյուս լեզուների ցեղակցական կապերը դեռևս չեն բացահայտվել, այնուամենայնիվ տեսակետ կա, որ շումերերենը հնդեվրոպական լեզու է:

Շումերերենի գրավոր հուշարձանները բաժանվում են մի քանի շրջանի. հին շումերերեն (մինչև մ.թ.ա. 25-րդ դար), դասական շումերերեն (մ.թ.ա. 24-22-րդ դդ.), նոր շումերերեն (մ.թ.ա. 21-րդ դար), ուշ շումերերեն (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկիզբ) և հետշումերերեն (ձևավորվել է այն ժամանակ, երբ շումերերենը մնաց Միջագետքում արդեն որպես երկրորդ գրքային լեզու՝ աքքադերենին զուգահեռ):

3. Էլամերենը գործածվել է Իրանական բարձրավանդակի հարավային հատվածում հին Էլամի թագավորության ժամանակաշրջանում: Տարբերակում են Էլամերենի զարգացման հետևյալ շրջանները. հին Էլամերեն (մ.թ.ա. 30-24-րդ դդ.). վկայված է գաղափարագիր և սեպագիր արձանագրություններով: Միջին Էլամերենի շրջանում (մ.թ.ա. 14-12-րդ դդ.) գործածվում են հին Էլամերենի գրության վանկագծային տարբերակը և աքքադական սեպագրերը, պահպանվել են աքքադա-Էլամական երկլեզվյան արձանագրություններ: Նոր Էլամերենի շրջանին (մ.թ.ա. 8-6-րդ դ.դ.) վերաբերում են հիմնականում թագավորական արձանագրությունները, տնտեսական բնույթի գրությունները, գտնվել է նաև գրական տեքստ՝ նոր Էլամերենով: Մ.թ.ա. 1-ին դարում Էլամերենը դուրս է մղվել հին պարսկերենի կողմից:

4. Խուռա-ուրարտական լեզուները վկայված են մ.թ.ա. 3-1-ին հազարամյակում, տարածված են եղել Հայկական բարձրավանդակի հարավային շրջաններում, Հյուսիսային Միջագետքում, Հյուսիսային Սիրիայում, Հարավային Կովկասում, Հյուսիսարևմտյան Իրանում): Խուռիերենը ներկայացված է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսից մինչև մ.թ.ա. 12-րդ դարը՝ հին աքքադական սեպագրերով: Խուռիերենը ծաղկում է ապրել հատկապես մ.թ.ա. 16-15-րդ դարերում՝ Միտանի պետության հզորության ժամանակաշրջանում: Մ.թ.ա. 14-րդ դարում խեթական թագավորությունը կործանիչ

հարված է հասցնում Միտանիին, և վերջինս աստիճանաբար դուրս է գալիս պատմության ասպարեզից:

Ուշ խուռիական բարբառներից է ուրարտերենը, որ գործածվել է Հա-րավային Կովկասում Վանի թագավորության ժամանակաշրջանում. հայտ-նի է մ.թ.ա. 9-6-րդ դդ. պատկանող սեպագիր (ասուրական) արձանագրու-թյուններով:

Լեզվաբանության մեջ հավանական է համարվում խուռա-ուրարտա-կան և հնդեվրոպական լեզուների ցեղակցության տեսակետը:

3. ԿՈՎԿԱՍՑԱՆ (ԻԲԵՐՈ-ԿՈՎԿԱՍՑԱՆ) ԼԵԶՈՒՆԵՐ - Կովկասյան (իբերո-կովկասյան) լեզուները գրեթե բացառապես տարածված են Կովկա-սում, որտեղ գործածվում են նաև թյուրքական և հնդեվրոպական լեզուները: Կովկասյան լեզուները դրսևորում են ոչ միայն արեալային համախմբվա-ծություն, այլև ունեն ծագումնաբանական կապեր և տիպաբանական ընդ-հանրություններ: Համակովկասյան տիպաբանական ընդհանրություններ են համարվում. հարուստ բաղաձայնական համակարգը (շուրջ 82 բաղաձայն), եռաշարք պայթական բաղաձայններն ու պայթաշփականները (ձայնեղ, խուլ և պայթական-կոկորդայիններ), մասնիկավոր-կցական կառուցվածքը և այլն:

Ըստ տարբեր դասակարգումների՝ Կովկասյան լեզուների թիվը հաս-նում է շուրջ 40-ի: Ըստ պատմա-ծագումնաբանական գործոնի՝ բաժանվում են երեք խմբի.

1) Քարթվելական լեզուներ. հարավկովկասյան լեզուների խումբ է, որ ներառում է նաև սերտ ազգակցություն ունեցող բարբառները. նրա մեջ մտնում են վրացերենը, մեգրելերենը, լազերենը, զաներենը և սվաներենը:

2) Աբխազ-ադրդեական լեզուներ. Կովկասի հյուսիսարևմտյան լեզու-ներն են, որի մեջ մտնում են աբխազերենը, աբազիներենը, ադրդեերենը, կա-բարդիներենը, ուրփիներենը:

3) Նախյան-դաղստանյան լեզուներ. Կովկասի հյուսիսարևելյան լե-զուներն են. ներառում են հետևյալ լեզվախմբերը. դաղստանյան. ավարերեն, անդիերեն, ցեզերեն, կարատիներեն և այլն, լեզգիական. լեզգիերեն, թաբա-սարաներեն, ռուտուլերեն, ծախուրերեն, ագուլերեն, կրիզերեն, ուտիերեն և այլն, վայնախական. չեչեներեն, ինգուշերեն, բացքիերեն (ծովա-թուշիներեն) և այլն:

Կովկասյան լեզուների մեծամասնությունը գիր չունի, մյուսները գիր ստացել են վերջին ժամանակներս, ինչպես՝ աբխազերեն, աբազիներեն, ադրդեերեն, կաբարդիներեն, չեչեներեն, ինգուշերեն, ավարերեն, լազերեն, դարգիերեն, լեզգիերեն, թաբասարաներեն լեզուները:

Կովկասյան հնագիր լեզուներից է վրացերենը: Հին վրացական գիրը ստեղծվել է 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցի կողմից: 11-րդ դարի կեսերին առաջանում է վրացական նոր գիրը: Գրական վրացերենը բաժանվում է

կա՛մ երկու շրջանի՝ հին (5-11-րդ դդ.) և նոր (12-րդ դարից սկսած), կա՛մ երեք շրջանի՝ հին (5-11-րդ դդ.), միջին (12-18-րդ դդ.) և նոր (19-րդ դարից սկսած): Հին վրացերենի հիմքում ընկած է քարթվելական խոսվածքը:

Նոր վրացերենը վերջնականապես ձևավորվել է 18-րդ դարում, կցական տիպի լեզու է: Վրացերենի հնագույն գրավոր հուշարձանները հանդիպում են Պաղեստինի վրացական մենաստանում (մոտ 433 թ.), Բոլնիսյան Սիոնում (493-94 թթ.), այնուհետև՝ Մցխեթում (6-7-րդ դդ.): Հին վրացերենի ձեռագիր հուշարձանները՝ այսպես կոչված «խանմթական» կրկնագիր մագաղաթները, պատկանում են 5-7-րդ դարերին:

4. ՈՒՐԱԼՅԱՆ ԼԵզՈՒՆԵՐ - Ուրալյան լեզուները բաժանվում են երկու խմբի՝ ուգրաֆիննական և սամոդիական:

Ա. Ուգրաֆիննական լեզուները բաժանվում են չորս խմբի. 1. Ուգրական, որի մեջ մտնում են՝ հունգարերենը (Կենտրոնական Եվրոպայում), մանսիերենը, խանտիերենը (Արևմտյան Սիբիրում), 2. ֆիննական, որն իր հերթին բաժանվում է ֆիննա-պերմական (ուդմուրդերեն, կոմի-զիրյաներեն, կոմի-պերմերեն) և մերձբալթյան-ֆիննական ենթախմբերի (ֆիններեն, էստոներեն, կարելերեն, վեպսերեն, իժորերեն, վոդերեն, լիվերենը և այլն), 3. վոլգյան, որի մեջ մտնում են՝ մարիերենը, էրզյա-մորդովերենը, մոկշա-մորդովերենը, 4. սաամյան լեզուներ (Նորվեգիայում, Շվեդիայում, Ֆինլանդիայում և Կոլա թերակղզում):

Բ. Սամոդիական լեզուները տարածված են Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ափերին (նենեցերեն, նգանասաներեն, էնեցերեն, սելկուպերեն):

Ուրալյան հնագիր լեզուներ են ֆիններենը և էստոներենը: 20-րդ դարում՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո, գիր ստացան մարիերեն, ուդմուրդերեն, կոմիերեն, խանտիերեն և մանսիերեն լեզուները, մնացած լեզուները գիր չունեն: Ուրալյան լեզուները պատկանում են կցական տիպին, չնայած մերձբալթյան-ֆիննական որոշ լեզուներում զարգացել է թեքականությունը: Նրանց հատուկ է ձայնավորների ներդաշնակության օրենքը:

5. ԱԼԹԱՅԱՆ ԼԵզՈՒՆԵՐ - Մի շարք լեզվաբաններ Ալթայյան խմբի մեջ գետեղում են թյուրքական, մոնղոլական և տուգուս-մանջուրական լեզուները:

Ա. Թյուրքական լեզուները հայտնի են մ.թ. 7-րդ դարից Արևմտյան Սիբիրի (ենիսեյյան-օրխոնյան արձանագրություններ) և Միջին Ասիայի գրավոր տեքստերից գրված հին թյուրքերենով (հին ույղուրերեն). թյուրքերեն հին գրերը ծագում են սողոթականից: Թյուրքական լեզուները բաժանվում են հինգ ճյուղի.

1. Հարավարևմտյան (թյուրքմեներեն, ադրբեջաներեն, թյուրքերեն և գագաուզերեն):

2. Հարավարևելյան (ուզբեկերեն, նոր ույղուրերեն, չաղաթայերեն):

3. Հյուսիսարևմտյան (ղազախերեն, կիրգիզերեն, թաթարերեն, բաշկիրերեն, ալթայերեն, կարաչայերեն, կարակալպակերեն և այլն):

4. Հյուսիսարևելյան (օրխուներեն, ույղուրերեն, թուվիերեն, յակուտերեն, սագայերեն և այլն):

5. Չուվաշական (արդի չուվաշերեն և բուլգարերեն. վերջինս եղել է Կամայի բուլգարների լեզուն 8-14-րդ դարերում):

Բ. Մոնղոլական լեզուները բաժանվում են երկու խմբի.

ա) հյուսիսային, որի մեջ մտնում են՝ մոնղոլերենը, բուրյաթերենը, կալմիկերենը, բ) հարավարևելյան, որի մեջ մտնում են՝ դագուրերեն, դունչյաներեն, մոնգոլերեն, բաոներեն լեզուները: Հյուսիսային լեզուները գիր ունեն, իսկ լեզուները գուրկ են գրային համակարգից:

Գրավոր մոնղոլերենը ձևավորվել է 13-րդ դարի սկզբին և ապրել է զարգացման երեք շրջան՝ հին (13-14-րդ դդ.), միջին (15-17-րդ դարի առաջին կեսը) և դասական (17-20-րդ դարի առաջին քառորդ): Ինչպես հին, այնպես էլ դասական գրավոր լեզուները տարբերվում են մոնղոլական բոլոր ցեղերի բարբառներից ու խոսվածքներից, ժամանակակից լեզուներից ու բարբառներից: Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության ձևավորման ժամանակ ազգային լեզուն զարգացավ խալխալական բարբառի հիման վրա և օգտագործեց այն ամենը, ինչ ստեղծված էր հին գրությամբ:

Գ. Տունգուս-մանջուրական լեզուները բաժանվում են երկու խմբի. ա) տունգուսական, որի մեջ մտնում են՝ էվենկերենը (տունգուսերեն), էվեներենը (լամուրերեն), նեգիդալերենը, սոլոներենը, բ) մանջուրական, որի մեջ մտնում են՝ մանջուրերենը, չժուրչժեներենը (ջուրջեներեն), նանայերենը (գոլդերեն), ուդեգեյերենը, օրոչերենը, ուլչերենը:

Տունգուս-մանջուրական լեզուներով խոսում են Արևելյան Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Հյուսիսարևելյան Չինաստանում և այլուր: Ըստ տիպաբանական դասակարգման՝ այդ լեզուները պատկանում են մասնիկավորկցական տեսակին:

Գրավոր մեռած լեզուներ են համարվում մանջուրական գրական լեզուն և չժուրչժեներենը: Մանջուրական գրական լեզուն ստեղծվել է 16-րդ դարում մոնղոլական գրի հիման վրա. նրա բառային կազմի վրա ուժեղ ազդեցություն են ունեցել մոնղոլերենն ու չինարենը: Այնքանով որ հասարակության կրթված շերտը և ֆեոդալական վերնախավը խոսում էր չինարեն, գրական մանջուրերենն աստիճանաբար մղվում է հետին պլան, նրա գործառույթները սահմանափակվում են, և նա դառնում է գրքային-գրասենյակային լեզու:

20-րդ դարի 30-ական թվականներին գիր է ստեղծվում էվենկերենի, նանայերենի և ուդեգեյերենի համար, ստեղծվում են դասագրքեր, քաղաքական, գեղարվեստական (ազգային և թարգմանական) գրականություն:

6. ՀՆԱՍԻԱԿԱՆ (ՀԻՆ ՍԻՔԻՐԱԿԱՆ) ԼԵԶՈՒՆԵՐ - Հնասիական լեզուները Սիբիրի փոքր ազգերի լեզուներն են, որոնք ծագումնաբանորեն միմյանց հետ կապ չունեն և տիպաբանորեն անհամասեռ են: Ըստ ընդունված տեսակետի, այդ ժողովուրդները Սիբիրի հնագույն բնիկների մնացորդներն են, որոնք թուրք-թաթարական հարձակումների ժամանակ կա՛մ ձուլվել, կա՛մ մասամբ գաղթել են Հյուսիսային Ամերիկա, և միայն նրանց մի փոքր մասն է կարողացել գոյատևել Սիբիրում: Այդ լեզուների միջև նկատելի են նաև տիպաբանական տարբերություններ. կցականությունը մի խումբ լեզուներում վերջամասնիկավոր է, մյուսներում՝ նախամասնիկավերջամասնիկավոր, հանդիպում է նաև ներմասնիկավոր տեսակը: Հնասիական որոշ լեզուներ բազմահամադրական են, մյուսները՝ ոչ, մի մասն ունի երգատիվ նախադասություններ, մյուսները՝ ոչ, և այլն:

Հնասիական լեզուները բաժանվում են չորս խմբի՝ **ա) չուկոտյան-կամչատկյան** (չուկոտերեն, կոլյակերեն, կերեկերեն, ալյուտորերեն, իտելմերեն) **բ) էսկիմոսա-ալեուտյան** (էսկիմոսերեն, ալեուտերեն), **գ) յուկագիրյան-չուվանյան** (յուկագիրերեն), **դ) կետա-ասանյան** կամ ենիսեյյան (ներառում է Ենիսեյ գետի վերին և միջին հոսանքներում գործածվող կետերեն լեզուն, ինչպես նաև Արևմտյան Սիբիրի՝ 17-19-րդ դ.դ. մեռած մի շարք լեզուներ. կոտտերեն, արիներեն, ասաներեն և այլն):

7. ՉԻՆ-ՏԻԲԵԹԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Չին-տիբեթական լեզուները խոսողների թվով զբաղում են երկրորդ տեղը (հնդեվրոպականից հետո). այդ լեզվուները հիմնականում տարածված են Չինաստանում և Հնդկաչինում: Ըստ ձևաբանական դասակարգման՝ այդ լեզուները տիպաբանորեն պատկանում են անջատական տեսակին, նրանց ծագումնաբանական կապերը բավարար չափով դեռ ուսումնասիրված չեն:

Չին-տիբեթական լեզուները բաժանվում են երկու խմբի. **ա) թայչինական**, որի մեջ մտնում են՝ չինարեն, թայ (սիամերեն), լաոսերեն և այլն, այս լեզվախմբին է հարում նաև վիետնամերենը, **բ) տիբեթա-բիրմայական**, որի մեջ մտնում են՝ տիբեթերեն, բիրմայերեն, բալտի, գուրուն, մուրմի, կուկուչին և մանիպուրյան լեզուները:

Տիբեթա-բիրմայական լեզվախմբի ներսում առանձնացնում են նաև հիմալայան, կաչինական, իցու և կարենական ենթախմբերը:

Չին-տիբեթական լեզուների մեջ կան մեծ ու փոքր լեզուներ, կան գիր չունեցող լեզուներ, կան նաև լեզուներ, որոնք պատմական դարավոր ավանդույթներ ունեն: Ամենից շատ տարածված են չինարենը, բիրմաներենը, թայը (սիամերեն): Հայտնի են չինարեն գաղափարագիր տեքստեր՝ գրված մ.թ.ա. 2-րդ հազարամյակում Հյուսիսային և Կենտրոնական Չինաստանում: Չինարենն անցել է զարգացման երեք շրջան՝ հնագույն (մ.թ.ա. 5-րդ դարից), հին

(մ.թ. 5-րդ դարից) և նոր (14-րդ դարից): Չինարենն ունի բարբառային բազմաթիվ տրոհումներ և գրի (գաղափարագրերի) դարավոր պատմություն:

8. ԱՎՍՏՐՈԱՍԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Հարավ-արևելյան Ասիայում տարածված են ավստրասիական լեզուները. դրանք են՝ **1. Մոն-քմերական լեզուները**, որոնք բաժանվում են վեց խմբի. ամենից շատ տարածված են՝ քմեր կամ կամբոջերեն (ավանդված 8-րդ դարից), մոն (ավանդված 10-րդ դարից) և չամ: **2. Մունդա լեզուները**, որոնց պատկանում են հյուսիս-արևելյան Հնդկաստանի լեզուները, ինչպես՝ սենտալի, մունդա, նագա և այլն: **3. Կասի-նիկոբարյան լեզուները**, որոնց պատկանում են՝ կասի, պալոնգ, ռիանգ, նանկաուրի: **4. Մալակայի հնագույն բնակիչների լեզուները**, որոնք կազմում են այսպես կոչված **նախամալակյան խումբը**:

9. ԴՐԱՎԻԴՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Ասիայում չին-տիբեթական լեզուներից հետո խոսողների թվով երկրորդը դրավիդյան լեզուներն են (քսաներեք լեզու): Այդ լեզուները հիմնականում տարածված են Հնդկաչին թերակղզու հարավային մասերում: Առավել տարածված լեզուներն են՝ թելուգու, թամիլի (թամիլյան), մալայալամ, կաննարա, կուրուխ, թուլու և այլն: Դրանցից թելուգու, թամիլի, կաննարա և մալայալամ լեզուներն ունեն հնագույն գրային ավանդույթներ, որոնք վերագրվում են մեր թվականությունից առաջ ընկած ժամանակաշրջանին: Հարավային Հնդկաստանի ազգային լեզուն է թելուգուն, որով խոսում է բազմամիլիոն բնակչություն, այն տրոհված է տարբեր բարբառային միավորների (խմբերի): Հնագույն արձանագրությունները պատկանում են մ.թ. 2-րդ դարին. թելուգու լեզվի հնագույն գրական հուշարձանը «Մահաբհարաթայի» թարգմանությունն է 11-րդ դարում: 19-րդ դարի վերջերից սկսվում է ազգային լեզվի շրջանը: Թելուգուն այժմ դրավիդյան լեզվաընտանիքի զարգացած լեզուներից է:

Մինչև հնդեվրոպացիների ներթափանցումը Հնդկաչին թերակղզի, դրավիդյան լեզուները բավական ընդարձակ տարածություններ են զբաղեցրել՝ ներառյալ Հնդկաչին թերակղզու հյուսիս-արևմտյան մասերը, բայց հետագայում նրանք դուրս մղվեցին հին հնդկերենի գերակայության պատճառով, որի հետ երկար ժամանակ ունեցել են անմիջական շփումներ :

10. ԱՎՍՏՐՈՆԵԶԻԱԿԱՆ ԵՎ ՊԱՊՈՒԱՍՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Ավստրոնեզիական լեզվաընտանիքին պատկանում են այն լեզուները, որոնք տարածված են Ավստրալիայում և Օվկիանիայում (Խաղաղ օվկիանոսի կենտրոնական և հարավ-արևմտյան կղզիներում): Աշխարհագրական և ազգագրական առումներով Օվկիանիան բաժանվում է չորս մասի՝ Մելանեզիա (նրա կազմում է գտնվում աշխարհի խոշորագույն կղզիներից մեկը՝ Նոր Գվինեան), Միկրոնեզիա, Պոլինեզիա և Նոր Զելանդիա: Ավստրալիայի և Օվ-

կիանիայի բնակչությունը բաղկացած է երեք խմբից՝ եվրոպացիներ, ասիացիներ և բնիկներ: Բնիկների լեզուների հիման վրա այդ լեզուները բաժանվում են երկու հավասար ընտանիքների՝ ավստրոնեզիական (մալայա-պոլինեզյան) և պապուաայան:

Ա. Ավստրոնեզիական լեզուները միավորում է լեզուների չորս խումբ.

1. Ինդոնեզյան (մալայան), որի մեջ մտնում են Ֆիլիպինյան, Բորնեո, Մալակա, Մադագասկար, Սումատրա և մի քանի այլ կղզիների լեզուները: Հիմնական լեզուներ են՝ ճավայերենը կամ կավի լեզուն (Ճավա կղզում), մալայերենը (Մալակայում և Սումատրայում), մալգաշերենը (Ֆրանսերենի հետ միաժամանակ պետական լեզու է Մալգաշյան Հանրապետությունում (Մադագասկար): Դրանց շարքում զարգացած լեզու է Սումատրա կղզում գործածվող մալայերենը. մինչև 13-րդ դարը մալայերենն ուներ այբուբեն, որ ծագում էր հնդկականից, 13-րդ դարում մալայացիներն ընդունեցին մահմեդականություն և անցան արաբական այբուբենի, 19-րդ դարի առաջին կեսին նրանք անցան լատինագիր այբուբենի: Բառային կազմը հարուստ է հին սանսկրիտերենի և ժամանակակից հնդկական լեզուների, ինչպես նաև չինարենի, վիետնամերենի, հոլանդերենի և ռուսերենի փոխառություններով:

2. Մելանեզյան, որի մեջ մտնում են Սոդոմոնյան, Խաղաղության, Նոր Հիբրիդյան, Ֆիջի և մի քանի այլ կղզիների լեզուները՝ մալո, մարովո, մոնո և այլն:

3. Պոլինեզյան, որի մեջ մտնում են Սամոայի, Թահիթիի, Նոր Զելանդիայի և Մարքիզյան կղզիների լեզուները՝ սամոերեն, թահիթի, տոնգա, տաբու, մաորերեն և այլն:

4. Միկրոնեզյան, որի մեջ մտնում են Մարշալյան և Կարոլինյան կղզիների լեզուները:

Բ. Պապուաայան լեզվաընտանիքի մեջ մտնում են Նոր Գվինեայի բնիկների պապուասական ցեղերի լեզուները, ինչպես նաև Արևմտյան Իրիանայի (Ինդոնեզիայի մի մասը) և Մելանեզիական որոշ կղզիների բնակիչների լեզուները: Բոլոր պապուասական լեզուները գիր չունեն, դրանք մեծ թիվ չեն կազմում, լեզուները և բարբառները հստակ տարբերակված չեն միմյանցից: Շատ դեպքերում այդ լեզուներով խոսող մարդկանց թիվը չի անցնում հազարից: Առավել տարածված պապուասական լեզուներից են՝ հագեն (մեդլպա), չիմբու (կուման), կամանո, աբելամ (մապրիկ), նգալում, սիանե և այլն:

11. ԱՄԵՐԻԿԱՆ (ՀՆԴԿԱՅԻԱԿԱՆ) ԼԵԶՈՒՆԵՐ - Ամերիկայի բնակչության ճնշող մեծամասնությունը խոսում է հնդեվրոպական լեզուներով՝ անգլերեն, իսպաներեն, պորտուգալերեն: Դրանք Ամերիկա թափանցած եվրոպացի նվաճողների լեզուներն են, որոնց զուգահեռ պահպանվել են նաև տեղաբնիկների՝ հնդկացիական ցեղերի լեզուները: «Հնդկացի» անվա-

նումը կապված է Ք.Կոլումբոսի «սխալի» հետ, որ կարծում էր՝ հայտնաբերել է Հնդկաստանը. հետևաբար տեղաբնիկներին անվանեցին «հնդկացիներ»։ Հնդկացիական լեզուներն իրենց բառային կազմով և քերականական կառուցվածքով միմյանցից էականորեն տարբերվում են. հանդիպում են ներմաքսավորյալ լեզուներ (ուտո-ացտեկյան լեզուները), կցական (օտոմի լեզուն), թեքական (յումա, սալինա և այլ լեզուներ)։

Ամերիկյան (հնդկացիական) լեզուները բազմաթիվ լեզուների և լեզվախմբերի խառնուրդ են։ Լեզվաբաններն առայժմ դրանք բաժանում են 169 խմբի (ըստ Վ. Շմիդտի՝ գոյություն ունի 109 խումբ)։ Ամերիկյան բազմաթիվ լեզուների ցեղակցության հարցերը դեռևս լուծված չեն նույնիսկ ամենամոտավոր ձևով։ Դրանց դասակարգումը կրում է խառը՝ ծագումնաբանական-աշխարհագրական բնույթ։

Ամերիկյան (հնդկացիական) լեզուները բաժանվում են երեք խմբի՝ հյուսիսամերիկյան, կենրոնական-ամերիկյան և հարավամերիկյան։

1. Հյուսիսամերիկյան լեզուները բաժանվում են ենթախմբերի՝ աթապասկյան (ապաչների, նավահո, պուեբլո լեզուները), ալգոնկինյան (ալգոնկինյան, օջիբվե, օտտավա լեզուները), սիուսյան (դակոտա, օֆո լեզուները), իրոկեզյան (իրոկեզյան, չիրոկի, տուսկարորա լեզուները), մուսկոգյան (կրիկերեն, սեմինոլերեն և այլն)։ Առավել տարածված են ապաչիների և իրոկեզների լեզուները։

2. Կենտրոնական Ամերիկայի լեզուները բաժանվում են հետևյալ ենթախմբերի՝ մայա (մայա, կիչե, մեմ, չոլ լեզուները), օտոմի (օտոմի, սապոտեկերեն, միշտեկյան և այլն), ացտեկյան (ուտո-ացտեկյան լեզուներ)։ Ացտեկները և մայա ժողովուրդները ունեցել են նախակոլումբոսյան քաղաքակրթություն, այդ թվում՝ հիերոգլիֆային գրություն (գաղափարագրություն), որի հետ է կապվում Մեքսիկայի ժողովուրդների գրային համակարգը։

3. Հարավամերիկյան լեզուների ենթախմբերն են՝ կեչուա (15-րդ դարում եղել է ինկերի պետության լեզուն, իսպանական նվաճումների ընթացքում ինկերի պետությունը կործանվել է, ինկերը բնաջնջվել կամ ձուլվել են այլ ցեղերի հետ, իսկ նրանց լեզուն մահացել է), տուալի-գուարանի, այմարա, արաուկանյան (Չիլիի հնդկացիական ցեղերի լեզուները), արավակյան և պանո (Պերուի և Կոլումբիայի հնդկացիների լեզուները), չիբչա (թալամանկների, մուիսկների և այլ լեզուներ)։

12. ԱՖՐՈԱՄԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ - Աֆրոասիական լեզուները միասին կազմում են մակրոդնտանիք. դրանք տարածված են Աֆրիկայի հյուսիսային մասում՝ Ատլանտյան օվկիանոսի ափերից և Կանարյան կղզիներից մինչև Կարմիր ծովի ափերը և ձգվում են մինչև Արևմտյան Ասիա ու Մալթա կղզին։ Ըստ էության, Առաջավոր Ասիան և Հյուսիս-Արևելյան Աֆ-

րիկան դիտվում են Աֆրոասիական լեզուների աշխարհագրական բնօրրան: Դրանց նախահայրենիքի և լեզուների տրոհման ու տարածվածության հարցերը, ըստ գիտական ընդունված վարկածի, վերաբերում են մ.թ.ա. 8-9-րդ հազարամյակին:

Աֆրոասիական լեզուները բաժանվում են 5 հիմնական ճյուղերի՝ սեմական լեզուներ, հին եգիպտերեն, բերբերո-լիբիական լեզուներ, չադյան լեզուներ և քուշյան լեզուներ (օմոտյան լեզուներ մտցնում են ավելի վաղ անջատված *քուշյան* լեզվաճյուղի մեջ):

Ա. Սեմական լեզուների գրավոր հուշարձանները վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակին: Կենդանի լեզուներից է արաբերենը. դասական արաբերենին զուգահեռ Արաբական թերակղզում գոյություն ունեն բազմաթիվ բարբառներ, ինչպիսին են՝ *եգիպտական, սիրիական, սուդանական, իրաքյան* և այլն, ինչպես նաև *մալթայերենը*: Սեմական կենդանի լեզուներից են՝ իվրիտը, Արաբական թերակղզու և Սոկոտրա կղզու փոքրաթիվ հանրությունների լեզուները, Սիրիայի տարբեր շրջաններում գործող նորարամեական բարբառները, ժամանակակից ասորերեն լեզուն և այլն: Սեմական մնացած լեզուները մեռած են, ինչպես՝ աքքադերենը, փյունիկերենը, արամեերենը, հին հրեերենը:

Մ.թ. 3-րդ դարից սկսած՝ հին հրեերենը (իվրիտ) համարվում է մեռած լեզու. գործածվում էր որպես աղոթքների և կրոնական արարողությունների լեզու: 19-20-րդ դարերում բացառիկ պայմանների հետևանքով այն ծիսական լեզվից վերածվեց խոսակցական լեզվի՝ պայմանավորված հասարակական - քաղաքական նախադրյալների և անհատական գործոնների ազդեցությամբ: Խոսակցական եբրայերենի վերակենդանացման նախաձեռնողն ու իրականացնողը համարվում է հրեա նշանավոր հասարակական գործիչ և մտավորական Էլիեզեր Բեն-Շիուրան:

Սեմական լեզուները ծագումնաբանորեն բաժանվում են երեք խմբի՝ արևելասեմական, արևմտասեմական և հարավ-սեմական:

1. Արևելասեմական լեզուները տարածված են եղել Միջագետքում և նրա հարակից շրջաններում: Այդ լեզուներից է աքքադերենը՝ բաբելական և ասորական բարբառներով: Տարբերակում են աքքադերենի զարգացման հետևյալ հիմնական փուլերը. հին աքքադերեն (24-22-րդ դարեր, մ.թ.ա.), հին բաբելերեն և հին ասորերեն (2-րդ հազարամյակի սկիզբ, մ.թ.ա.), միջին բաբելերեն և միջին ասորերեն (16-11-րդ դարեր, մ.թ.ա.), ուշ բաբելերեն և նոր ասորերեն (10-8-րդ դարեր, մ.թ.ա.): Աքքադական տեքստերը գրառելու համար օգտագործվել են շումերական սեպագրերը, որոնք հետագայում վերաձևավորվել են և օգտագործվել աքքադական բարբառներում:

2. Արևմտասեմական լեզուները տարածված են Միջերկրական ծովի արևելյան տարածքներում (պատմական Պաղեստինում և Սիրիայում): Դրանց են պատկանում քանանյան ենթախմբի լեզուները. հին քանաներեն

(տաքածված է եղել Սիրիայի հյուսիսում, վկայված է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին վերագրվող սեպագիր արձանագրություններում), մոաբիտերեն (մ.թ.ա. 11-րդ դար), փյունիկերեն (վկայված է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի երկրորդ կեսերից), հին հրեերեն (վկայված է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերից), արամեերեն (վկայված է մ.թ.ա. 1-ին հազարամյակի բազմաթիվ արձանագրություններում): Տարբերակում են արևմտաարամեական (նաբատյան, պալմիրյան, հրեա-պաղեստինյան, սամարական) և արևելաարամեական (սիրիական, մանդեական) բարբառներ:

Արևմտասեմական լեզուների մեջ առանձին ենթախումբ է կազմում ուգարիտերենը (հին Ուգարիտում, Սիրիայում). նրանով արձանագրված տեքստերը գրվել են բաղաձայնա-վանկագրային սեպագրերով և պատկանում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակին:

3. Հարավ-սեմական լեզուներն ընդգրկում են հարավ-արաբական բարբառները (մ.թ.ա. 1-ին հազարամյակից) և նրանց հիմքի վրա ձևավորված ժամանակակից լեզուները՝ մեխրի, շխաուրի, քարսուսի, սոկոտրական, ինչպես նաև դասական արաբերենը, գեեզը (հին եթովպերենը) և ժամանակակից եթովպական լեզուները՝ եթովպերեն, տիգրայ, տիգրե, ամհարերեն, քարարի, գվայ և այլն:

Բ. Եգիպտական ճյուղի մեջ մտնում է հին եգիպտերենը՝ Հին Եգիպտոսի լեզուն, որ ավանդվել է մ.թ.ա. 4-րդ հազարամյակից՝ հիերոգլիֆային արձանագրություններով: Իր պատմության ընթացքում հին եգիպտերենը կրել է նշանակալի փոփոխություններ, նրա զարգացման հիմնական փուլերն են՝ հին եգիպտերեն (մ.թ.ա. 32-22-րդ դարեր), միջին եգիպտերեն (մ.թ.ա. 22-14-րդ դարեր), նոր եգիպտերեն (մ.թ.ա. 14-7-րդ դարեր), դեմոտիկական (մ.թ.ա. 7-րդ դ. – մ.թ. 5-րդ դ.): Եգիպտերենի շարունակություն է կազմում դպտիերենը՝ Եգիպտոսի քրիստոնյա դպտիների լեզուն, որ գոյություն է ունեցել մ.թ. 3-17-րդ դարերի ընթացքում և եղել է պաշտամունքային լեզու:

Գ. Բերբերո-լիբիական ճյուղը ներառում է բազմաթիվ լեզուներ ու բարբառներ, որոնք տաքածված են Հյուսիսային Աֆրիկայում և Սահարայում: Այդ ճյուղի հիմնական լեզուներն ու բարբառներն են՝ թաշելիտ, զենեսերեն, նեֆուսա, գադամես, սիվա և այլն, տուարեգերեն, զենագա: Այդ ճյուղին են պատկանում (լիբիական) արևմտանումիդական և արևելանումիդական մեռած լեզուները:

Դ. Չադյան ճյուղն ընդգրկում է շուրջ 150 լեզու և բարբառ, որոնք տաքածված են Կենտրոնական Սուդանում, Չադ լճին հարող տաքածքներում, Հյուսիսային Նիգերիայում, Հյուսիսային Կամերունում և Չադ Հանրապետությունում:

Չադյան լեզուները բաժանվում են երեք խմբի՝ 1. արևմտյան (Նիգերիա) – հաուսա, անգաս, սուրա, ռոն, բոլեվա, կարեկարե, տանգալե, կանակուրու, բադե, իգիգիս, 2. Կենտրոնական (Նիգերիա և Կամերուն) – տերա,

գահանդա, բուրա, մարգի, բատա, մանդարա, գիսիգա, գիդեր, կոտոկո, մուս-գում, բանանա և այլն, 3. արևելյան (Չադ) – կերա, կվանգ, սոմբայ, սոկորո, մուրի, ջեգու և այլն:

Ե. Քուշյան ճյուղին պատկանում են Աֆրիկայի հյուսիս-արևելյան տարածքների լեզուները, որոնք գործածվում են Սուդանում (մի մասում), Եթովպիայում, Սոմալիում, Ջիբութիիում, Քենիայում, Տանզանիայում: Այդ ճյուղի ամենախոշոր լեզուներն են՝ օրոմոն և սոմալին: Քուշյան ճյուղը բաժանվում է հինգ խմբի. 1. հյուսիսային - բեջա, 2. արևելյան - սախո, աֆար, սոմալի, ռենդիլլե, օրոմո, տոնսո և այլն, 3. սիդամական - սիդամո, խադիա, կամբատտա, բուրջի, 4. հարավային - իրաքվ, բուրունգվե և այլն, 5. Ագավական - բիլին, խամիր, խատմանգա, աունգի և այլն:

Աֆրոասիական մակրոընտանիքի մեջ են մտնում նաև այլ լեզվախմբեր, որոնք տարածված են միայն Աֆրիկա մայրցամաքում: Այդպիսի խոշոր լեզվախումբ են կազմում *բանտու լեզուները*, որոնցով խոսում է Աֆրիկայի գրեթե քառորդ բնակչությունը: Դրանք կցական լեզուներ են՝ թեքականության տարրերով:

Բանտու լեզուներ - Բաժանվում են յոթ ենթախմբի. 1. *հյուսիս-արևմտյան* (դուալա, ֆանգ), 2. *հյուսիսային* (լուգանդա, ռուանդա), 3. *Կոնգո գետի* (կոնգո, մոնգո, լինգալա), 4. կենտրոնական (լուբա, բեմբա, տոնգա), 5. *արևելյան* (նյամվեզի, սուախիլի), 6. *հարավ-արևելյան* (զուլու, կոսա, սոտո), 7. *արևմտյան* (մբունդու, սոլի և այլն):

Բանտու լեզուներին է հարում այսպես կոչված *բանտոյիդ լեզվախումբը*, որ տարածված է Սուդանի մեծ մասում (մյուս մասում գործածվում են քուշյան ճյուղի լեզուները): Այդ լեզուները բաժանվում են երեք ենթախմբի՝ 1. արևելյան (մունգի, նսո, քատաբ և այլն), 2. կենտրոնական (սենուֆո, լոբի, մոսի, գրուսի, գուրմա և այլն), 3. արևմտյան (վոլոֆ, ֆուլա, քիսի և այլն):

Աֆրիկյան լեզուների մեջ առանձնացնում են նաև հետևյալ լեզվախմբերը՝

ա) գվինեական (կվա լեզուներ) - կրու, բաուլե, իբո, էվե, յորուբա և այլն,

բ) նեդոսյան – նուբիերեն, դինկա, նուէր, բարի, սուկ, տուրկանա և այլն,

գ) արևելասուդանական - զանդե, բանդե, բահիրմ, բետո, ազանդե և այլն,

դ) մանդե կամ մանդիգո – ունի մանդե-տան և մանդե-ֆու ճյուղերը,

ե) կանուրի – տեդա - կանուրի, տեդա, զագավա, սոնգայի և այլն,

զ) հոտենտոտ-բուշմենական - բուշմեներեն, հոտենտոտերեն, աուէն, կունգ, նամա և այլն:

ՆՈՍՏՐԱՏԻԿ ԼԵԶՈՒՆԵՐ - Նոստրատիկ լեզուները կազմում են մեկ մակրոընտանիք, որ միավորում է հնդեվրոպական, կովկասյան, ալթայան, ուրալյան, դրավիդյան և աֆրոասիական լեզուները: Նոստրատիկ լեզուներ անվանման փոխարեն առաջարկվում էին «բորեական (հյուսիսային) լեզուներ» կամ «եվրասիական լեզուներ» եզրույթները, որոնք, սակայն, ընդունելություն չգտան:

Նոստրատիկ եզրույթը ծագում է լատիներեն *nos* (մենք) դերանվան *noster* (մեր) սեռական հոլովաձևից. նոստրատիկ՝ այսինքն «մերային»:

Նոստրատիկ լեզուները դասակարգվում են արևելյան-նոստրատիկ (ուրալյան, դրավիդյան, ալթայան) և արևմտյան-նոստրատիկ խմբերի (հնդեվրոպական, կովկասյան, աֆրոասիական): Այս դասակարգման հիմքում ընկած է համանոստրատիկ լեզուների ձայնավորների զարգացման օրենքը դուստր լեզուներում. արևելյան նոստրատիկ լեզուները պահպանել են արմատի նախնական կայուն ձայնավորը, արևմտյան լեզուներում այն ենթարկվել է ձայնդարձի (*ablaut*):

Նոստրատիկ մակրոընտանիքի ճշգրիտ սահմանները դեռևս որոշված չեն. ենթադրվում է՝ նրա մեջ մտնում են նաև էսկիմոսյան-ալեուտյան լեզուները: Վերջնականապես լուծված չէ նաև այն հարցը, թե նոստրատիկ լեզուների հետ ինչ հարաբերություն ունեն այլ «մակրոընտանիքներ», ինչպիսին են մի կողմից՝ «հնաեվրասիական» (*палеоевразийский*)՝ (չին-կովկասյան), որ միավորում է չին-տիբեթական և հյուսիս-կովկասյան լեզուները, մյուս կողմից՝ ամերիկա-հնդկացիական (*американский*) լեզուները: Այդ երեք «մակրոընտանիքները» (էսկիմոսա-ալեուտյան, չին-կովկասյան, ամերիկա-հնդկացիական) միմյանց նկատմամբ ունեցել են լեզվական շփումներ, որ արտահայտվում է փոխառությունների առկայությամբ, որոնք «հնաեվրասիական» կամ առանձին լեզուներից անցել են նոստրատիկ լեզուներին՝ ավելի ուշ շրջանում: Չի բացառվում ավելի խոր ցեղակցական կապերի առկայություն այդ երեք ընտանիքների միջև: Ավելի բարդ է մի կողմից՝ նոստրատիկ լեզուների, մյուս կողմից՝ աֆրիկյան ու ավստրալիական լեզուների հարաբերակցության հարցը:

Նոստրատիկ լեզուների ծագումնաբանական ընդհանրություններն ի հայտ են գալիս նրանց ազգակից ձևույթների համընդհանուր կաղապարներում, որոնք արտահայտվում են ինչպես արմատների, այնպես էլ մասնիկների ընդհանրությամբ (շուրջ 1000 միավոր): Այդ ընդհանրությունները երևում են նաև բառային կազմում. Ընդհանուր են տարրական հասկացություններն ու մարմնի մասերի, բնության երևույթների, կենդանիների և բույսերի, տարածության ու ժամանակի, գործողության ու հատկանիշների անվանումները: Այդ ընդհանրությունները երևում են նաև քերականական ձևույթների համակարգում, այդ թվում՝ բառակազմական և բառափոխական: Դա ամենից առաջ վերաբերում է անձնական, ցուցական և հարցական

դերանուններին և անվանական բառաթեքական մասնիկներին: Այդ ընդհանրությունները վերաբերում են նաև հնչյունական համակարգին. ինչպես, արևելյան նոստրատիկ լեզուներում երկար ձայնավորների առկայությունը մի շարք դեպքերում բացահայտում է համապատասխան արմատներում կոկորդային ձայնավորների գոյությունը, որ սահմանվում է աֆրոասիական և հնդեվրոպական լեզուների տվյալների հիման վրա:

Նոստրատիկ նախալեզվի հնչյունական համակարգը, ըստ էության, ունեցել է 7 ձայնավոր և մեծ թվով բաղաձայններ, եռավանկ արմատներ եղել են հազվադեպ, քերականական միավորների շարահյուսությունը եղել է համեմատաբար ազատ: Նախադասության անդամների շարահյուսությունը եղել է համեմատաբար կայուն և ունեցել է SOV կառուցվածքը (ըստ Ջ.Գրինբերգի. ենթակա-խնդիր-ստորոգյալ): Ընդ որում, եթե ենթակայի դերով հանդես է գալիս անձնական դերանունը, նա դրվում է ստորոգյալից հետո, որ հաստատվում է նոստրատիկ բազմաթիվ լեզուներում վերջադաս խոնարհման առկայությամբ: Նոստրատիկ լեզուները, ըստ հետազոտողների, տիպաբանորեն պատկանում են կցական տեսակին:

Նոստրատիկ լեզուների անջատման (տարածման) ժամանակաշրջանի հարցը մնում է գիտական վարկածի շրջանակներում. այն տեղի է ունեցել մ.թ.ա.11-8-րդ հազարամյակում: Ելնելով նոստրատիկ մակրոընտանիքի լեզուների շարժման ուղղությունից և նրանց հետ կապված հնագիտական ու մշակութային ուսումնասիրություններից՝ հետազոտողները նոստրատիկ լեզուների նախահայրենիքը համարում են Մերձավոր Արևելքը:

Լեզվաընտանիքների հնագույն ազգակցության հարցերը, որոնք մտնում են նոստրատիկ մակրոընտանիքի մեջ, ծագել են այդ լեզուների պատմահամեմատական ուսումնասիրության սկզբնական շրջանում: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները բաժանվում են երեք շրջանի: Առաջին շրջանում տեղի է ունենում հետազոտական նյութի կուտակում՝ գույգ լեզվաընտանիքների համեմատության ուղիով՝ ուրալյան-ալթայյան (Վ. Շոտտ), հնդեվրոպական-սեմական (Գ. Մյուլլեր), հնդեվրոպական-քարթվելական (Ֆ. Բոպպ): Այս շրջանն ավարտվում է Ա. Տրոմբետիի աշխատանքներով, որտեղ կատարվում են աշխարհի լեզուների լայնածավալ համեմատություններ: Երկրորդ շրջանը բնութագրվում է համեմատվող լեզվական նյութի առավել ընդգրկուն ծավալով և նախալեզվի վերականգնման փորձերով: Հայտնի են Բ. Կոլլինդերի աշխատությունները ուրալյան-հնդեվրոպական ցեղակցության, Օ. Սովաժոյի աշխատությունները ուրալյան-ալթայյան ցեղակցության վերաբերյալ: Առաջին անգամ ձևակերպվում է ոչ թե լեզուների ցեղակցության իրավիճակը, այլ լեզվաընտանիքների, մասնավորապես՝ ուրալյան, ալթայյան, հնդեվրոպական և աֆրոասիական (Հ. Պետերսոն. նա է առաջարկել «նոստրատիկ լեզուներ» եզրույթը 1903թ.): Երրորդ շրջանին բնութագրական է նոստրատիկ լեզուների նախալեզվի վերա-

կանգնումը: Խորհրդային լեզվաբան Վլադիսլավ Իլլիչ-Սվիտիչը (1934-1966) կատարեց նոստրատիկ լեզուների (հնդեվրոպական, կովկասյան, ուրալյան, ալթայյան, դրավիդյան, սեմական լեզուների) պատմահամեմատական քննություն, ընդհանրացրեց հավաքված լեզվական տվյալները և փորձեց վերականգնել նոստրատիկ մակրոընտանիքի նախալեզուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
Խաչատրյան Լ.Մ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
Խաչատրյան Լ.Մ., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2017:
Березин Ф.М., Головин Б.Н., Общее языкознание, М., 1974.
Головин Б.Н., Введение в языкознание, М., 1973.
Климов Г.А., К взаимоотношению генеалогической. и ареальной классификации языков //Теоретические основы классификации языков мира /Отв. ред. В. Н. Ярцева.-М.: Наука, 1980. -С.6-24.
Кодухов В.И., Введение в языкознание, М., 1979.
Кодухов В.И., Общее языкознание, М., 2013.
Маслов Ю.С., Введение в языкознание, М., 1975.
Степанов Ю.С., Основы общего языкознания, М., 1975.
Теоретические основы классификации языков мира / Отв. ред. В. Н. Ярцева.- М.: Наука, 1980.
Широков О.С., Введение в языкознание, М., 1985.
Campbell, Lyle, Poser William J., Language Classification. History and Method. Cambridge University Press, 2008.
Greenberg J.H., Genetic Linguistics: Essays on Theory and Method, Oxford, 2005.

ՏԵՐՄԻՆԱՑԱՆԿ

ԼԵԶՈՒ – 13

- Լեզվամտածողություն – 15
- Աշխարհի լեզվական քարտեզ – 16
- Լեզվի փիլիսոփայություն – 18
- Լեզվաքաղաքականություն – 18
- Լեզվական կրթություն – 18
- Լեզվական ճաշակ – 19
- Լեզվագործածություն – 19
- Լեզվախառնություն – 20
- Լեզվական իրադրություն – 20
- Լեզվավիճակ – 20
- Լեզվական միջավայր – 22

***Լեզվի ծագման տեսությունները – 22**

- դիցաբանական տեսություն – 22
- աստվածաշնչյան տեսություն – 22
- բանահյուսական տեսություն – 23
- բնագիտական տեսություն – 25
- աշխատանքային ճիշերի տեսություն – 25
- բնաձայնական տեսություն – 26
- հասարակական դաշինքի տեսություն – 26
- ձայնարկությունների տեսություն – 26
- հասարակական գործոնի տեսություն – 27

***Լեզվի գործառույթները – 27**

- հաղորդակցական գործառույթ – 28
- արտահայտչական գործառույթ – 28
- ճանաչողական գործառույթ – 29
- կուտակողական գործառույթ – 29
- կառուցողական գործառույթ – 30

***Լեզվի տիպերն ըստ գործածության – 30**

- կենդանի և մեռած լեզուներ – 30
- ծիսական լեզու – 31
- ազգամիջյան լեզու – 31
- միջազգային լեզու – 32
- *արհեստական լեզու – 33
 - վոլապյուկ – 34

- Էսպերանտո – 34
- ալգոլ – 35
- բնական լեզու – 36
- տոհմային լեզու – 38
- ցեղային լեզու – 38
- էթնիկական լեզու – 38
- միջցեղային լեզու – 39
- միջէթնիկական լեզու – 39
- ազգային լեզու – 39
- ազգամիջյան լեզու – 39
- փոխատու լեզու – 39
- փոխառու լեզու – 40
- միջնորդ լեզու – 41
- պետական լեզու – 42
- աշխատանքային լեզու – 42
- տոտալիտար լեզու – 43
- շարժումների լեզու – 43
- միայնակ լեզու – 44
- վանկային լեզու – 45

***Լեզվի տարբերակներ – 46**

- *տեղական տարբերակ – 46
- բարբառ – 46
- խոսվածք – 47
- *հասարակական տարբերակ – 48
- ժարգոն – 49
- արգո – 49
- մասնագիտական լեզու – 50
- սլենգ – 50
- *խոսակցական և գրական տարբերակներ – 51
- խոսակցական տարբերակ – 51
- գրական տարբերակ – 51

***Լեզվական ոճեր – 52**

- առօրյա-խոսակցական ոճ – 53
- վարչագործառական ոճ – 53
- գիտական ոճ – 53
- հրապարակախոսական ոճ – 53
- գեղարվեստական ոճ – 53

ՀԱՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԱՐԳ – 55

Հնչյունաբանություն – 55

- ընդհանուր հնչյունաբանություն – 55
- մասնավոր հնչյունաբանություն – 55
- նկարագրական հնչյունաբանություն – 55
- պատմական հնչյունաբանություն – 56
- պատմահամեմատական հնչյունաբանություն – 56
- փորձառական հնչյունաբանություն – 56

Հնչույթաբանություն – 56

- հնչյուն և հնչույթ – 57
- հնչյունական օրենք – 58
- հնչյունական լծորդություն – 60
- հնչյունատարբերակիչ նշան – 61
- հնչյունական շղթա – 62
- հնչյունի դիրք – 63
- հնչյունի հատկանիշները – 63
- հնչյունի ակուստիկա – 63
- հնչյունի բարձրություն – 64
- հնչյունի ուժգնություն – 64
- հնչյունի տևականություն – 64
- հնչյունի հնչեղություն – 65
- հնչյունի լարվածություն – 65
- հնչյունի երանգ (տեմբր) – 65
- * Հնչյունների գործառույթները – 66
 - ընկալման գործառույթ – 66
 - նշանակողական գործառույթ – 66
 - իմաստատարբերակիչ գործառույթ – 66
- * հնչույթային հակադրություն – 66
- * հնչարտաբերություն – 67
- * հնչարտաբերական ունակություն – 68

***Հնչյունների դասակարգումը – 69**

***Ձայնավոր հնչյուններ – 69**

- լեզվի դիրք – 70
- լեզվի բարձրացում – 70
- շրթունքների դիրք – 70
- առաջնային շարքի ձայնավոր – 70
- միջին շարքի ձայնավոր – 70
- հետին շարքի ձայնավոր – 71

Երկար և կարճ ձայնավորներ – 71

***Բաղաձայն հնչյուններ – 72**

*Բաղաձայնների դասակարգումն ըստ ձայնի և աղմուկի հարաբերության – 72

- քառաշարք բաղաձայններ – 72

- եռաշարք բաղաձայններ – 73

- երկշարք բաղաձայններ – 73

*Դասակարգումն ըստ արտաբերման եղանակի – 73

- հպական հնչյուն – 73

- շփական հնչյուն – 73

- հպաշփական – 74

* Դասակարգումն ըստ արտաբերման տեղի – 74

*Շրթնային բաղաձայն - 74

- երկշրթնային բաղաձայն - 74

- շրթնատամնային բաղաձայն – 74

* Լեզվային բաղաձայն – 74

*առաջնալեզվային բաղաձայն – 74

- լեզվատամնային բաղաձայն - 74

- լեզվաքմային բաղաձայն - 74

- առաջնահետնալեզվային բաղաձայն - 74

- ատամնային բաղաձայն - 75

- միջատամնալեզվային բաղաձայն – 75

* միջնալեզվային բաղաձայն – 75

* հետնալեզվային բաղաձայն – 75

- կոկորդային բաղաձայն - 75

Ձայնորդ հնչյուն – 75

Երկբարբառ – 75

Եռաբարբառ – 76

***Շեշտ – 76**

- միատոն շեշտ – 77

- բազմատոն շեշտ – 77

- բառային շեշտ – 77

- դարձույթային շեշտ – 77

- տրամաբանական շեշտ – 77

- ազատ շեշտ – 77

- կայուն շեշտ – 78

- հիմնական և երկրորդական շեշտ – 78

- անշեշտություն – 78

- նախահար անշեշտ բառ – 78
- վերջահար անշեշտ բառ – 78

***Վանկ – 79**

- վանկի գազաթ – 79
- միավանկ բառ – 79
- բազմավանկ բառ – 79
- գաղտնավանկ – 79
- բաց վանկ – 80
- փակ վանկ – 80
- սքողված վանկ – 80
- ոչ սքողված վանկ – 80
- վանկատում – 80

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ – 81

***Դիրքային և շեշտափոխական հնչյունափոխություն – 82**

- առնմանություն – 83
- տարնմանություն – 84
- ներդաշնակում – 84
- ամփոփում – 85
- համաբանություն – 85
- դրափոխություն – 86
- հնչյունների պարզեցում – 86
- հնչյունների բարդացում – 87
- ձայնդարձ և հերթագայություն – 87
- հնչյունի անկում – 88
- հնչյունի հավելում – 89
- աճական – 89

***Ընդհանուր - պատմական հնչյունափոխություն – 90**

- ձայնավորների հնչյունափոխությունը – 91
- բաղաձայնների հնչյունափոխությունը – 91
- փոփոխություն բառավերջում – 91
- փոփոխություն բառասկզբում – 91
- երկբարբառների և եռաբարբառների հնչյունափոխությունը – 91

ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – 92

***Գիր – 92**

- պատկերագրություն – 93
- գաղափարագրություն – 94

- հնչյունագրություն – 95
- վանկագրություն – 95
- * Այբուբեն – 95
- * Մեսրոպյան այբուբեն – 96
- * հայկական գրատեսակներ – 97
- գրչագիր – 97
- երկաթագիր – 97
- բոլորագիծ – 97
- բոլորագիր – 97
- նոտրգիր – 97
- շղագիր – 97
- զարդագիր – 98
- փակագիր – 98
- Գրադարձություն – 98
- Տառադարձություն – 98

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – 103

- * **Բառ** – 103
- ձևախմբատային միավոր – 103
- ձևային տարբերակ – 103
- կապակցելիություն – 104
- անընդմիջարկելիություն – 104
- ինքնուրույն կիրառություն – 104
- բառային շեշտ – 104
- *Բառի ներքին ձև – 104

*** Բառիմաստ – 107**

*** Ներբառային իմաստներ – 107**

- մենիմաստ բառ – 107
- բազմիմաստ բառ – 108
- ուղղակի իմաստ – 108
- *Փոխաբերական իմաստ – 108
- փոխանունություն – 108
- համըմբռնում – 109

*** Միջբառային իմաստներ – 109**

- * Հոմանիշ բառեր – 109
- նույնանիշ – 109
- համանիշ – 109
- հասկացական հոմանիշներ – 110

- ոճական-գործառական հոմանիշներ – 110
- հուզական-գնահատողական հոմանիշներ – 110
- համատեքստային հոմանիշներ – 110
- Հոմանշային շարք – 111
- Հոմանշային կառույց – 111
- * Հականիշ բառեր – 112
- հակադրական հականիշներ – 112
- ժխտական հականիշներ – 112
- * Համանուն բառեր – 113
- լիակատար համանուններ – 113
- մասնակի համանուններ – 113
- համահունչ համանուններ – 113
- համագիր համանուններ – 113
- համաձին համանուններ – 113
- տարածին համանուններ – 114
- բառական համանուններ – 114
- բառաքերականական համանուններ – 114
- քերականական համանուններ – 114
- * Հարանուն բառեր – 114
- իմաստային հարանուններ – 114
- ձևային հարանուններ – 115

- **Իմաստափոխություն** – 115
- * բառիմաստի ընդլայնում – 115
- ապասրբայնացում – 116
- * բառիմաստի նեղացում – 117
- սրբայնացում – 118
- * բառիմաստի անցում (շրջում) – 119
- * իմաստների փոխհաջորդում – 120

- **Բառային կազմ** – 120
- հիմնական բառաֆոնդ – 121
- իմաստային-թեմատիկ խմբեր – 121
- **Բառային կազմի շերտերը** – 122
- * Համահայերենյան բառաշերտ – 123
- գրաբարյան բառաշերտ – 123
- միջինհայերենյան բառաշերտ – 123
- բարբառային բառաշերտ – 123
- արևմտահայերեն բառաշերտ – 123
- ժողովրդական բառաշերտ – 124

***Փոխառյալ բառաշերտ – 124**

- անմիջական փոխառություն – 124
- միջնորդավորված փոխառություն – 124

***Հնաբանություն – 125**

- հնաբառ – 125
- պատմաբառ – 125

***Նորաբանություն – 126**

- բառային նորաբանություն – 126
- իմաստային նորաբանություն – 126
- ընդհանրացող նորաբանություն – 126
- անհատական նորաբանություն – 127

***Տերմին - 127**

***Պատճենում – 128**

- բառակազմական պատճենում – 128
- կիսապատճենում – 129
- իմաստային պատճենում – 129

Դարձվածաբանություն – 129

- ազատ կապակցություն – 129
- կայուն կապակցություն – 130

*** Դարձվածք – 130**

***դարձվածքի ձևաբանական արժեք – 131**

- տարարժեք դարձվածք – 131

***դարձվածքի իմաստաբանությունը – 131**

- մենիմաստ – 131
- բազմիմաստ – 131

*** դարձվածքների ձևաիմաստային խմբեր – 131**

- հոմանիշ – 131
- հականիշ – 131
- համանուն – 132
- հարանուն – 132

*** դարձվածային տարբերակներ – 132**

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ – 132

Բառակազմության պատմական հայեցակետ – 133

Բառակազմության ստուգաբանական հայեցակետ - 133

***Բառակազմական հիմք - 133**

- պարզ հիմք - 134
- բաղադրյալ հիմք – 134

- սերող հիմք – 134
- բաղադրող հիմք – 134
- Տիպաբանական տարբերակներ - 134
- Հնչյունական տարբերակներ – 134
- Բառակազմական փունջ - 134
- Բառակազմական բուն - 135
- Բառակազմական քայլ – 135
- Բառակազմական նշանակություն – 135

• **Ձևույթ** - 136

- հիմնական ձևույթ – 136
- ձուլված ձևույթ – 137
- *երկրորդական ձևույթ – 137
- բառակազմական ձևույթ – 137
- բառահարաբերական ձևույթ – 137

• **Արմատ** - 137

- անվանական արմատ - 137
- բայական արմատ – 137
- ստուգաբանական արմատ – 137
- փոխառյալ արմատ – 137
- բնիկ հայերեն արմատ – 137
- ձայնդարձով արմատ – 138
- կախյալ արմատ – 138

• **Ածանց** - 138

- նախածանց – 138
- միջածանց – 139
- վերջածանց – 139
- համածանց – 139
- *ածանցակերպ – 139
- վերջածանցակերպ – 139
- նախածանցակերպ – 140

* **Բառակազմական կաղապար** – 140

- * Բարդության կաղապար - 140
- հոդակապով բարդություն – 142
- անհոդակապ բարդություն – 144
- * Ածանցման կաղապար – 145
- նախածանցման կաղապար – 145
- վերջածանցման կաղապար – 146

*** Ձևաբանական կաղապար – 148**

- գոյականի հոլովական հարացույցի կաղապարներ – 149

- բայի խոնարհման հարացույցի կաղապարներ – 150

ԲԱՌԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ – 155

*** Բառարան – 155**

* Բառարանի կառուցվածքը – 155

* Բառացանկ – 156

- այբբենական – 156

- հակադարձ – 157

- փնջային – 157

- թեմատիկ-իմաստային – 157

* Բառահոդված – 157

* Անդրլեզու – 158

* Բառիմաստի բացատրություն – 159

- իմաստային սահմանում – 159

- հոմանշային սահմանում – 159

- բառակազմական սահմանում – 160

* Բառի քերականական բնութագիրը – 160

- ոճական նշում – 160

- դարձվածային միավոր – 161

- պարզաբանող օրինակ – 161

*** Բառարանների դասակարգում – 162**

*** Հանրագիտական բառարան – 162**

• Ընդհանուր հանրագիտական բառարան – 162

• Մասնավոր (ճյուղային) հանրագիտարան – 163

- անձնանունների բառարան – 166

- ազգանունների բառարան – 166

- տեղանունների բառարան – 168

* Տարածաշրջանային հանրագիտարան – 169

*** Լեզվաբանական բառարան – 169**

* Բանասիրական բառարան – 170

• Ընդհանուր բառարան – 170

• Մասնագիտական բառարան – 170

• Ճյուղային բառարան – 170

- տերմինաբանական բառարան – 171

- բարբառային բառարան – 171

Պատմական բառարան – 172

- Ստուգաբանական բառարան – 172
- Բացատրական բառարան – 174
- մեծ բառարան - 174
- միջին բառարան – 175
- փոքր բառարան – 175
- Թարգմանական բառարան – 176
- երկլեզվյան բառարան - 176
- բազմալեզվյան բառարան – 179
- պատկերազարդ թարգմանական բառարան – 179
- Համեմատական-գուգադրական բառարան – 180
- Տեղեկատու-գործնական բառարան – 181
- ուղղագրական բառարան – 181
- ուղղախոսական բառարան- 181
- ընդհանուր բառարան – 181
- մասնավոր բառարան – 182
- հոմանիշների բառարան - 182
- համանունների բառարան – 183
- հականիշների բառարան - 183
- բառակազմական բառարան – 184
- դարձվածաբանական բառարան – 185
- թևավոր խոսքերի բառարան – 186
- շրջասությունների բառարան – 187
- համեմատությունների բառարան – 187
- շարժումների լեզվի բառարան - 188
- Համաբարբառ կամ հեղինակային բառարան – 188
- Հանգաբառարան (հակադարձ բառարան) – 190
- Ուսումնական բառարան – 191
- ուսումնական-գործնական բառարան – 191
- թեմատիկ բառարան – 191
- կետադրական բառարան – 192
- Քերականական բառարան – 192
- Բառացանկով բնութագրվող բառարան – 193
- մեղմասության և խոսքային վարքականոնի բառարան – 193
- հապավումների բառարան – 193
- օտար բառերի բառարան – 194
- նորաբանությունների բառարան – 194
- հնացած բառերի բառարան – 195

ԼԵԶԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ – 197
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – 197

***Բառաձև – 197**

- համադրական բառաձև – 198
- վերլուծական բառաձև – 198

***Հարացույց – 199**

- հնչույթաբանական հարացույց – 199
- բառակազմական հարացույց – 199
- բառիմաստային հարացույց – 199
- ձևաբանական հարացույց – 200
- շարահյուսական հարացույց – 200
- լրիվ հարացույց – 200
- ոչ լրիվ հարացույց – 201
- հավելավոր հարացույց – 201

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ – 201

***Լիիմաստ խոսքի մասեր – 202**

- * Գոյական անուն – 202
- հատուկ գոյական – 202
- հասարակ գոյական – 203
- թանձրացական գոյական – 203
- վերացական գոյական – 204
- նյութական գոյական – 204

*** Ածական անուն – 204**

- որակական ածական – 205
- հարաբերական ածական – 205

*** Թվական անուն – 206**

*** Քանական թվական – 207**

- բացարձակ թվական – 207
- բաշխական թվական – 208
- կոտորակային թվական – 208

***Դասական թվական – 208**

*** Դերանուն – 209**

- անձնական դերանուն – 209
- ցուցական դերանուն – 209
- փոխադարձ դերանուն – 209

- որոշյալ դերանուն – 210
- անորոշ դերանուն – 210
- հարցա-հարաբերական դերանուն – 211

*** Բայ – 212**

- համադրական բայ – 213
- վերլուծական բայ – 213
- դիմավոր բայ – 213
- * դերբայ – 213**
- կախյալ դերբայ – 215
- անկախ դերբայ – 215
- երկարժեք դերբայ – 215

*** Մակբայ – 216**

- տեղի մակբայ – 216
- ժամանակի մակբայ – 216
- ձևի մակբայ – 216
- չափ ու քանակի մակբայ – 217
- ընդհանրական մակբայ – 217

***Մպասարկու խոսքի մասեր – 217**

***Քերականական իմաստ ունեցող բառեր – 217**

*** Կապ – 217**

- իսկական կապ – 218
- անիսկական կապ – 218
- կապական բառ – 218
- նախադրություն – 218
- հետադրություն – 218
- երկդրություն – 218

*** Պարագայական կապ – 218**

- տեղի կամ տարածական կապ – 218
- ժամանակի կապ – 219
- հիմունքի կապ – 219
- պատճառի կապ – 219
- նպատակի կապ – 219
- չափ ու քանակի կապ – 219
- ձևի կապ – 219

*** Խնդրային կապ – 219**

- բացառման կապ – 219
- վերաբերության կապ – 219

- միասնության կապ – 219
- ընդդիմության կապ – 219
- բացահայտման կապ – 219
- սահմանափակման կապ – 219

*** Շաղկապ – 219**

- մենադիր շաղկապ – 220
- կրկնադիր շաղկապ – 220
- զուգադիր շաղկապներ – 220
- * Համադասական շաղկապ – 220

- միավորիչ շաղկապ – 220
- ներհակական շաղկապ – 220
- տրոհական շաղկապ – 220

*** Ստորադասական շաղկապ – 221**

- մեկնական – 221
- ժամանակի – 221
- պայմանի – 221
- պատճառի և հիմունքի – 221
- զիջական – 221
- նպատակի – 221
- համեմատության – 221
- մակաբերական – 221
- բացահայտման – 221

***Վերաբերմունքային իմաստ ունեցող խոսքի մասեր – 221**

*** Վերաբերական – 221**

- հաստատական վերաբերական – 221
- ցուցական վերաբերական – 221
- երկբայական վերաբերական – 221
- սաստկական վերաբերական – 222
- սահմանափակման վերաբերական – 222
- կամային վերաբերական – 222
- զիջական վերաբերական – 222
- ժխտական վերաբերական – 222
- բաղձանքի վերաբերական – 222

*** Ձայնարկություն – 222**

- զգացական ձայնարկություն – 222
- կամային (կոչական) ձայնարկություն – 223
- նմանաձայնական (բնաձայնական) ձայնարկություն – 223

*** Համեմատության աստիճան – 223**

*** դրական աստիճան – 224**

*** բաղդատական աստիճան – 224**

- առավելական – 224

- նվազական – 224

- հավասարական – 224

*** գերադրական – 224**

- բացարձակ – 224

- համեմատական – 224

ՇԱՐՄԱՅՈՒՄԻԹՅՈՒՆ – 225

*** Բառակապակցություն – 225**

- ազատ բառակապակցություն – 226

- ոչ ազատ բառակապակցություն – 226

- կայուն բառակապակցություն – 227

*** Ստորադասական կապակցության տեսակները – 227**

- համաձայնություն – 227

- խնդրառություն – 228

- առդրություն – 229

- ներառում – 230

- իզաֆետ – 231

- ներմարմնավորում – 231

*** Նախադասություն – 231**

- նախադասության միջուկ – 233

- ստորոգում – 234

- հնչերանգ – 235

- շարադասություն – 235

*** Նախադասության տեսակներն ըստ կազմության – 236**

*** Պարզ նախադասություն – 236**

- Երկկազմ նախադասություն – 236

- Միակազմ նախադասություն – 236

*** դիմավոր միակազմ նախադասություն – 236**

- ձևական դիմավոր նախադասություն – 237

- անորոշ դիմավոր նախադասություն – 237

- ընդհանրական դիմավոր նախադասություն – 237

*** անդեմ միակազմ նախադասություն – 237**

*** անդեմ նախադասություն – 237**

- բայական անդեմ նախադասություն – 237
- անվանական անդեմ նախադասություն – 237
- Բառ-նախադասություն – 27

Բարդ նախադասություն – 238

- *Բարդ համադասական նախադասություն – 238
- միավորական – 240
- ներհակական – 240
- տրոհական – 240
- հավելական – 240
- *Բարդ ստորադասական նախադասություն – 241
- Գլխավոր և երկրորդական նախադասություններ – 241
- Երկրորդական նախադասությունների գործառնությունները – 242
- * Բազմաբաղադրիչ բարդ ստորադասական նախադասություն – 244
- համաստորադասություն – 244
- տարաստորադասություն – 244
- ենթաստորադասություն – 244
- հանրաստորադասություն – 245

Շարահյուսական կառույցներ – 245

- դերբայական դարձված – 245
- շարույթ – 247
- շարակարգ – 249
- * պարբերույթ – 249
- համադասական – 250
- ստորադասական – 251
- պարբերություն – 251

***Խոսքիմասային տեղաշարժեր – 252**

- խոսքիմասային փոխանցում – 252
- միջխոսքիմասային փոխանցում – 252
- ներխոսքիմասային փոխանցում – 252
- խոսքիմասային փոխանցման աստիճաններ – 254
- * խոսքիմասային տարաբեկություն – 255
- երկարժեք բառ – 255
- եռարժեք բառ – 256

***Փոխակերպում – 256**

- նախադասությունների փոխակերպում – 256
- փոխակերպում բառակապակցության – 258

- փոխակերպում բաղադրությունների – 258

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ – 262

***Քերականական իմաստ և ձև – 262**

- մասնիկավորում – 263
- կրկնություն – 264
- ներքին թեքում – 264
- սպասարկու բառերի գործածություն – 266
- տարահիմքություն – 267
- բառերի շարադասություն – 268
- շեշտ և հնչերանգ – 268

***Քերականական կարգ – 270**

***Ձևաբանական կարգ – 271**

- բառափոխական կարգ – 271
- դասակարգողական կարգ – 272

***Շարահյուսական կարգ – 272**

Անվանական քերականական սեռ – 272

***Թվի քերականական կարգ – 274**

***Գոյականի թվի քերականական կարգը – 274**

- անհոգնական գոյական – 274
- անեզական գոյական – 275
- հավաքական գոյական – 275
- թվանիշ վերջավորություն – 275

***Թվակազմական հիմք – 276**

Թվակազմական մասնիկներ – 278

Թվակազմական զուգաձևություն – 278

Անկանոն հոլովման բառերի թվակազմությունը – 279

Ձայնորդահանգ հիմքով գոյականի թվակազմությունը – 280

Ածականի թվի քերականական կարգը – 280

Թվականի թվի քերականական կարգը – 282

Դերանվան թվի քերականական կարգը – 284

Բայի թվի քերականական կարգը – 287

***Հոլովի քերականական կարգ – 289**

Գոյականի հոլովի կարգը – 289

Ածականի հոլովի կարգը – 293

Թվականի հոլովի կարգը – 294

Դերանվան հոլովի կարգը – 295

Դերանվանական հոլովում – 296

Հոլովի կարգը լեզուներում – 299

*** Առկայացման քերականական կարգ – 301**

- որոշյալության ենթակարգ – 301

- հոդառություն – 301

- ստացականության ենթակարգ – 303

*** Բայի քերականական կարգերը – 304**

* Եղանակի կարգ – 304

* Ժամանակի կարգ – 306

- բացարձակ ժամանակներ – 306

- հարաբերական ժամանակներ – 308

* Թվի կարգ – 310

* Սեռի կարգ – 310

* սեռադաս – 310

- անցողական բայ – 310

- անանցողական բայ – 311

- ներգործական սեռ – 311

- կրավորական սեռ – 311

- չեզոք սեռ – 313

* սեռային առում – 313

- պատճառական սեռային առում – 314

- միջին – անդրադարձ սեռային առում – 314

* կրկնասեռություն – 314

* Կերպի կարգ – 315

- անկատար կերպ – 315

- կերպային գույգ – 315

- կատարյալի կերպ – 315

*** Ղեմքի քերականական կարգ – 317**

- դերանվան ղեմքի կարգը – 317

- բայի ղեմքի կարգը – 318

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ – 320

- ընդհանուր լեզվաբանություն – 320

- մասնավոր լեզվաբանություն – 320

Լեզվաաշխարհագրություն – 322

Լեզվաքարտեզագրություն – 322

Լեզվաապագայագիտություն – 323

Լեզվաագագրություն – 324

Լեզվավիճակագրություն – 324

Էկոլեզվաբանություն – 325	
Լեզվաերկրագիտություն – 326	
Հոգելեզվաբանություն – 326	
- նյարդալեզվաբանություն – 327	
Մաթեմատիկական լեզվաբանություն – 327	
Լեզվամշակութաբանություն – 328	
- մշակույթ – 328	
- մշակույթի կոնցեպտ – 329	
Հաղորդակցական լեզվաբանություն – 329	
- հաղորդակցական ակտ – 329	
- լեզվական հաղորդակցում – 330	
- լեզվական անհատ – 330	
- տեղեկատվական հաղորդակցում – 330	
- կարգավորող հաղորդակցում – 330	
- արտալեզվական հաղորդակցում – 330	
- էլեկտրոնային հաղորդակցում – 330	
- միջմշակութային հաղորդակցում – 331	
Ճանաչողական լեզվաբանություն – 331	
- կոնցեպտ – 331	
- գեղարվեստական կոնցեպտ – 331	
Համակարգչային լեզվաբանություն – 332	
- հաղորդակցության կադապարավորում – 332	
- մեքենական թարգմանություն – 332	
- համակարգչային բառարան – 332	
Քաղաքական լեզվաբանություն – 333	
- քաղաքական խոսույթ – 333	
- խոսույթի լեզվական-քերականական միջոցները – 333	
- խոսույթի ոճական միջոցները – 333	
Հանրալեզվաբանություն – 333	
- լեզվի հասարակական տարբերակում – 334	
- լեզվի և մշակույթի կապեր – 334	
- երկլեզվություն – 334	
- լեզվի հաղորդակցական գործառույթ – 334	
- լեզվաքաղաքականություն – 334	
Կիրառական լեզվաբանություն – 334	
- տերմինաբանական խոսքային մշակույթ – 335	
- լեզվական կառուցվածքների ավտոմատ վերլուծություն – 335	
- պրագմատիկ լեզվաբանություն – 335	
- ինժեներական լեզվաբանություն – 336	
- հաշվողական լեզվաբանություն – 336	

- կոմբինատորային լեզվաբանություն – 336
- Հարալեզվաբանություն – 336
- հնչյունային միավոր – 336
- կինետիկական միավոր – 336
- գրաֆիկական միավոր – 336
- Տեքստի լեզվաբանություն – 337
- տեքստ – 337
- հիպերտեքստ – 337
- խոսույթ – 339
- Կորպուսային լեզվաբանություն – 339
- տեքստերի կորպուս – 340
- դիախրոնիկ կորպուս – 340
- մետատեքստային ծանոթագրություններ – 341
- բաց համակարգ – 341

ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ - 341

- *Լեզվական միավոր - 342
- *Լեզվական իմաստներ - 343
- բառական իմաստ - 343
- քերականական իմաստ – 344

***ՆՇԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ - 345**

***ԼԵԶՎԱԿԱՆ ՆՇԱՆ - 345**

- բնական նշան - 346
- արհեստական նշան - 346
- ազդանշան - 346
- խորհրդանշան - 346
- լեզվական նշան – 346
- նշան-փոխարինիչ - 346

ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – 347

***ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ – 349**

- ընտրականություն – 349
- կայունություն – 350
- պարտադրականություն – 351

***Նորմի տեսակները – 352**

- ուղղագրական նորմ – 353
- ուղղախոսական նորմ – 353
- բառային նորմ – 353
- տերմինաբանական նորմ – 353
- քերականական նորմ – 353

- կետադրական նորմ – 353

- ոճական նորմ – 353

ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ – 353

Սեպիր-Ուորֆի վարկածը – 354

* Խոսողական գործունեություն – 355

* Անհատական-հոգեբանական մեխանիզմ – 355

* խոսքի սերման մակարդակներ – 356

- պատճառաբանվածություն – 356

- իմաստաբանական – 356

- քերականական – 356

- հնչյունական – 356

* Հասարակական մեխանիզմ – 356

ԼԵԶՈՒ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ – 356

* Լեզվական միավորների փոփոխություն – 356

- քանական կուտակում – 357

* Լեզվական միավորների փոխարինում – 357

- որակական տեղաշարժ – 357

ԼԵԶՎԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ – 358

- համաժամանակյա կտրվածք – 358

- տարժամանակյա կտրվածք – 358

***Լեզվական շփումներ - 359**

- փոխառություն - 359

- ինչափոխում - 360

- ենթաշերտ - 360

- վերնաշերտ - 360

- մակաշերտ - 361

- խառը լեզուների կազմավորում – 361

***Լեզվի զարգացման օրենքներ - 361**

*Ներքին օրենքներ - 362

- ընդհանուր օրենք – 362

- մասնավոր օրենք – 363

* Արտաքին օրենքներ - 363

- ընդհանուր օրենք – 363

- մասնավոր օրենք – 363

***Լեզվի զարգացման պատճառներ - 364**

- լեզվի համակարգի շարժունություն - 364
- հարմարության ձգտում - 364
- համաբանություն - 364
- համառոտում - 364
- կապակցելիություն - 365
- տնտեսում - 365

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ - 367

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԹՈԴ - 367

- իմաստակիր միավորների ծագումնաբանական նույնության սահմանում - 367
- հնագույն ձևերի վերականգնում - 369
- բացարձակ և հարաբերական ժամանակագրություն - 370
- ստուգաբանական վերլուծություն - 370

ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴ - 371

- ներքին վերականգնում և ժամանակագրություն - 371
- պատմական նույնության և տարբերության սահմանում - 373
- տիպաբանական բնութագրի սահմանում - 374
- բարբառագրություն - 375
- պատմամշակութային մեկնաբանություն - 376
- տեքստագիտություն - 376

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ-ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ - 377

- զուգադրական հիմունքի սահմանում - 378
- զուգադրական մեկնաբանություն - 379
- տիպաբանական բնութագրություն - 382

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ) ՄԵԹՈԴ - 383

***Արտաքին մեկնաբանության եղանակներ - 383**

- բառ (իմաստ) և իր (առարկա) - 384
- թեմատիկ խմբեր - 384
- իմաստային դաշտեր - 384
- լեզվաբանական աշխարհագրություն - 384

***Ներքին մեկնաբանության եղանակներ - 384**

- դասակարգում և համակարգում - 384
- միավորների կազմությունը բացահայտող եղանակներ - 384

- փոխակերպումների եղանակներ – 384
- հակադրություն – 385
- հակադրական բաշխում – 385
- ոչ հակադրական բաշխում – 385

***Դիրքային եղանակներ – 385**

***Վիճակագրական եղանակներ – 385**

- բառարանավիճակագրություն – 386
- բառավիճակագրություն – 386
- ոճավիճակագրություն – 386

***տեքստի չափման եղանակներ – 386**

- կառուցվածքային եղանակ – 386
- գծային (շղթայական) – 387
- զուգահեռ – 387

***տեքստի ծավալի չափման եղանակներ – 387**

- համառոտ տեքստ – 387
- միջին ծավալի տեքստ – 387
- ընդարձակ կամ ծավալուն տեքստ – 387

***տեքստի կադապարման եղանակ – 387**

***Գործիքային եղանակներ – 387**

- սոմատիկ եղանակ – 387
- պնևմատիկ եղանակ – 388
- էլեկտրաակուստիկական եղանակ – 388

***Լեզվաբանական հետազոտության ավտոմատացում – 388**

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - 389

- պատմական տիպաբանություն - 390
- համաժամանակյա տիպաբանություն - 390
- * շարահյուսական տիպաբանություն - 392
- էրգատիվ կառուցվածք - 392
- անվանական կառուցվածք - 392

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ - 393

- անջատական լեզուներ – 394
- կցական լեզուներ - 394
- թեքական լեզուներ - 394
- ներմարմնավորյալ լեզուներ - 395

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԵՂԱԿՑՈՒԹՅՈՒՆ – 397

Նախալեզու – 397

Լեզվաընտանիք – 397

Լեզվամիություն – 398

Լեզվախումբ – 399

Լեզվաճյուղ – 399

Դուստր լեզու – 400

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ - 400

***Հնդեվրոպական լեզուներ – 401**

- անատոլիական լեզուներ – 401

- հնդկական լեզուներ – 401

- իրանական լեզուներ – 402

- հայերեն – 402

- հունարեն – 403

- փյոյուզերեն – 403

- թոխարական լեզուներ – 403

- ալբաներեն – 403

- սլավոնական լեզուներ – 404

- կելտական լեզուներ – 404

- ռոմանական լեզուներ – 404

- գերմանական լեզուներ – 405

- բալթյան լեզուներ – 405

*** Մերձավոր Արևելքի հնագույն լեզուներ – 405**

- Հաթերեն – 406

- Շումերերեն – 406

- Էլամերեն-406

- Խուռա-ուրարտական լեզուներ -406

***Կովկասյան (իբերո-կովկասյան) լեզուներ - 407**

- քարթվելական լեզուներ – 407

- աբխազ-ադրդեական լեզուներ – 407

- նախյան-դաղստանյան լեզուներ – 407

***Ուրալյան լեզուներ - 408**

- ուգրաֆիննական լեզուներ – 408

- սամոդիական լեզուներ – 408

***Ալթայյան լեզուներ - 408**

- թյուրքական լեզուներ – 408

- մոնղոլական լեզուներ – 409

- տունգուս-մանջուրական լեզուներ – 409

*** Հնասիական լեզուներ - 410**

- չուկոտյան-կամչատկյան լեզուներ – 410

- էսկիմոսա-ալեուտյան լեզուներ – 410

- կետա-ասանյան լեզուներ – 410

*** Չին-տիբեթական լեզուներ - 410**

- թայ-չինական լեզուներ – 410

- տիբեթա-բիրմայական լեզուներ – 410

*** Ավստրոասիական լեզուներ - 411**

- մոն-քմերական լեզուներ – 411

- մունդա լեզուներ – 411

- կասի-նիկոբարյան լեզուներ – 411

- նախամալակյան խմբի լեզուներ – 411

*** Դրավիդյան լեզուներ – 411**

*** Ավստրոնեզիական և պապուաայան լեզուներ - 411**

* Ավստրոնեզիական լեզուներ – 412

- ինդոնեզյան լեզուներ - 412

- մելանեզյան լեզուներ - 412

- միկրոնեզյան լեզուներ - 412

- պոլինեզյան լեզուներ - 412

* Պապուաայան լեզուներ – 412

*** Ամերիկյան (հնդկացիական) լեզուներ - 412**

- հյուսիսամերիկյան լեզուներ – 413

- Կենտրոնական Ամերիկայի լեզուներ – 413

- հարավամերիկյան լեզուներ – 413

*** Աֆրոասիական լեզուներ - 413**

- սեմական լեզուներ – 414

- եգիպտական լեզուներ – 415

- բերբերո-լիբիական լեզուներ – 415

- չադյան լեզուներ – 415

- քուշյան լեզուներ – 416

* Բանտու լեզուներ – 416

*** Նոստրատիկ լեզուներ – 417**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարանի կառուցվածքն ու նպատակը -----	5
1. Լեզու -----	13
2. Հնչյունական համակարգ -----	55
3. Բառագիտություն -----	103
4. Բառարանագիտություն -----	155
5. Լեզվի քերականական կառուցվածքը -----	197
6. Քերականական իմաստ և քերականական կարգ -----	262
7. Լեզվաբանություն -----	320
8. Լեզվաբանական մեթոդներ -----	367
9. Լեզվաբանական տիպաբանություն -----	389
10. Լեզուների ցեղակցություն և ծագումնաբանական դասակարգում -----	397
ՏԵՐՄԻՆԱՑԱՆԿ -----	420

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼԱԼԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԻ

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Սրբագրիչներ՝

Մարիամ Մելքոնյան

Ասյա Հակոբջանովա

Համակարգչային էջադրումը և ձևավորումը՝ Վերա Պապյանի

ISBN 978-5-8080-1461-9



9 785808 014619

Հրատ. պատվեր № 1117

Ստորագրված է տպագրության՝ 06.09.2021թ.:

Չափսը՝ 70 x 100 ¹/₁₆, 28 տպագր. մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: